

ԵՐՈՒԱՆԴ ՔՈԶԵԱՆ

ՀՈՂԸ
ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ

(ԷԶԵՐ ՀԱՅԱԶԻՆՁ ՍԱՐՍԱՓՆԵՐԷՆ)

ՓԱՐԻԶ

1986

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՂԵ ՓԼՍԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Այս գործը գրուած է 1919ին, Պոլիս, Օրբաֆէոյ :

Սրբագրուելով վերջացած 1923ին, Փրակա :

Մինչև 1938 կարգի սպասեց ՀԱՅՐԵՆԻՔ

Ամսագրի խմբագրութեան մէջ :

1938ին հրատարակեց ՅԱՌԱՋ, Փարիզ :

5 - 5 - 1967

ԵՐՈՒԱՆԻ ԲՈՋԵԱՆ

Փարիզ

ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԵԱՆ

ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ

(ԷՋԵՐ ՀԱՅԱՋԻՆՋ ՍԱՐՍԱՓՆԵՐԷՆ)

Փարիզ
1986

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՆԱԿ



Հեղինակին ծնողքը

ԳՐԱԳՈՒՅՑ
6634



Հեղինակին ծերուքեան օրերու

«Պահապան Հրեշտակները»

Փարիզարնակ Տիրուհի Եւ Վահրամ

Ծնած Խուռնախոզիկներէն, Երբեք զոչ չեն

Ինքնինքն բզազը շնչի, Երբեք զոչ չեն

Ինքնինքն

Սարսուռն յիշատակին
անոնց բոլորին, բոլորի՛ն,
որ անհետացան
մահուան
և.
գարիուրանքի
մուայլ գիշերին մէջ:

Այն ինչ որ ունիմ, հետու կը բուի,
և ինչ որ չկայ, ինն պարզ կ'երեւի:
ԿԷՕԹԷ

ՅԱՌԱԶԱԲԱՆ

ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԵՈՒՆ — Երուանդ Քոչեանի Օրագիրը —
իր բացառիկ տեղը պիտի ունենայ տարագիր Հայ գրականութեան
մէջ:

Մեր ազգի նորագոյն պատմութեան ու Հայկական կեանքի մեծ
կառուցուածքի մէկ կտորն է այս, կտրուած ու ինկած՝ բայց միշտ
մնայուն ու կենդանի:

Չնայած որ այդ Օրագիրը հակառակ է գնում իր ձեւով ու լե-
զուով գրականութեան ընդունած կանոններին, նա յափշտակութեամբ
կարգացում է, վասնզի Քոչեանի Օրագրից կեանքն է շնչում, եւ
ո՛չ գրականութիւնը: Ոչխարի մտից կաշիին հոտը չէ որ պէտք է գայ,
ասում են, այլ մտի բուրմունքը, որ համ ու հոտ է տալիս նրան: Նոյն-
պէս կենդանի գրուածքից պէտք է կեանքի շունչը բուրէ, եւ ո՛չ մե-
ծապատիւ գրականութիւնը... Ու ի՞նչ հեզնող օրինակ մըն է այս Օ-
րագիրը հանդէպ գրութեան մը, որտեղ լեզուն էլ շինծու, մտքերն
էլ փոխ առած ու մաշուած, ոճն էլ արհեստօրէն խճողուած ու «Էամ-
չաքկայօրէն» գրուած, թէեւ յաւակնոտ, որ գեղարուեստական երկ
է ներկայացնում հեղինակը...

ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԵՈՒՆ խորագրեալ սոյն երկը, չնայած իր
անպաճոյճ ձեւին, կրկնութիւններին, պատանեկան միամտութիւննե-
րին, յուզում է. իր տեսակի աշուղական պատմուածք մըն է: Կրկնում
եմ, Հայկական կեանքի կտրուած ու մէկ կողմը ձգուած կտորն է
այդ պատմութիւնը, բայց մշտապէս կենդանի եւ ծնեցնող մեր մէջ
ապրող յոյզեր: Նման այն փաթափազմին, որի բջիջները չնայած
կտրուած ու պոկուած վիճակին, ապրում են, բազմանում ու չեն
մեռնում:


Յաճախ այս տեսակ գրուածքները յիշեցնում են միջին դարե-
րի անպաճոյճ գրականութիւնը, որ սակայն կենդանի է մնացել մին-
չեւ մեր օրերը, մինչդեռ պատահում է որ արդիական ոճով գրական
երկերը, մի քանի տարի անցած, ընկզմւում են մոռացութեան փոշիի
տակ:

Արդեօք պատճառը այն չէ՞, որ մէկից կեանք է շնչում, մի-
տից՝ Գրականութիւն...

Ձերդ անկեղծ յարգանքներով

ՌՈՒԲԷՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Լափավիւտ




Լուսանկար՝ Գրիգոր Խոփկեանի, Օտուրցի, որ Ջուղիցիսայէն վերադարձաւ հայրենիք,
Մահմանադարութենէն յետոյ եւ 1915ին ճշունցաւ չարտերու հեղեղէն:

ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ

Այս տողերը գրուած են անկեղծութեամբ: Ամէն բան եղածին պէս պատմուած է: Անոնց մէջ ոչ միայն սիրտս, այլ մեր երկրի հողը կը բաբախէ: Ամէն անգամ որ ձեռք կ'առնեմ սրբագրութիւն մը ընելու համար, սարսուռ կու գայ վրաս ու կը տծգունիմ: Ամէնէն սարսափելին շարքը եւ ցոհերը չեն, այլ արդիւնքը: Վրայ տրուած հայրենիքը: Եթէ հող ունենայինք, նորէն կ'աճէինք ու կը բարգաւաճէինք:

Իսկ հիմա...: Անոր համար կը տծգունիմ ու կը սարսում...



ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ

Ա. ՄԱՍ

Մեր գեղը, Խուռնափուլա, կը դանուէր Փոքր Ասիոյ մէջ, Տիվրիկի քաղաքէն տասնհինգ քիլոմեթր հիւսիս, լեռներու գիրկը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ վանքէն գատուած էր ժայռերու պարով մը, որուն մէջէն գետակը կ'անցնէր: Հարիւր քսան նահապետական տունէ բաղկացած եւ զուտ հայաբնակ էր, կիներու առանձնայատուկ տարազով եւ հին ու ընտիր գաւառաբարբառով:

Իր բնակչութիւնը մօտ հազար հոգի էր: Ամենամեծ գեղը մեր շրջանին մէջ: Փշրանք մը հին Հայաստան, հոն մոռցուած ու մնացած անազարտ: Մեր դրացիներն էին, Տիվրիկէն ետք, Քոչկիրի մեծ եւ միատարր քուրտ աշիրէթը, Պէյտաղիի ձորերուն մէջ ցրուած իր բազմաթիւ գիւղերով: Անոնց հետ քիւլաշական կապերով բարեկամաբար միացած էինք: Անոնք մեր գիւղը, իրենց ծանօթներուն տուները կը վերելէին Տիվրիկի գացած-եկած ատեն: Մեր գեղացիներն ալ անոնց տուները կ'իջնէին, երբ ազի, չամի համար ան կողմերը երթային: Մեր մեծ հօտերն ալ անոնց անտառները կ'արածէին ձմեռները: Աշիրէթէն գատ մենք շրջապատուած էինք Սառզու, Նորչէն, Տողան, Հաւնա, Չնսիի, Մրվանայ, Խարակապան, Գամշուվանք, Փոնձոր, Ղըլպաշ թուրք գիւղերով: Սառզու՝ զուտ թուրք, Սիւննի: Ասոնցմէ շատերը, ինչպէս անուաներէն ալ յայտնի է, հայութենէ դարձած էին: Մինակ Մրվանայ փոքր գեղին կէսը Հայ էր: Ասոնց հետ երեսանց բարեկամութիւն, ներքնապէս խոր ստեղծութիւն ունէինք: Նորչէնի քով աւերակ մը կար, որուն Պաթուխ Քիլիսէ կ'ըսէին: Չնսիի, Գայլ գետի վրայ, կը բաժնուի երկու թաղի, որուն մէկը Կեափուր Մահալլէսի կը կոչուի: Հոն «թէքքէ» մը կայ՝ նախկին Ս. Յակոբ եկեղեցիին տեղին վրայ: Եկեղեցիին պատերն ալ տակաւին 1908ին քակեցին, Տիվրիկ-Սվազ խճուղին նորոգելու: Չնսիցիներուն շատերը մինչեւ այսօր հայ անուն ունին, ինչպէս Քօչողլու(*), Ղեմպէրօղլու (Խամպարենք):

(*) Չնսիի վրայ, Եգիպտոյ գեղը, իմ սգակաճննքս կամ, բրբացած, 1915էն շատ առաջ:

Հին ատեն, կը պատմէին մեր հարիւրը անց մամերը, (էճէլ-նէնէն, 1915ի դոհ), «Տէլուներ» օր-ցերեկով մեր գեղը կողոպտելու հու դան եղեր: Գիւղացիները կը պահուին, Քարը փախչելով: Ասոր համար ալ գեղը, նախապէս բաց դաշտի մէջ շինուած, եկեր ու ժայռերուն ծոցն էր մտեր, որոնք բարձր էին, անառիկ, բազմաթիւ քարայրներով լեցուն: Տուներէն շատերն ալ խոշոր եւ ընդարձակ հորեր ունէին գաղտնի շուր կը պահէին իրենց ունեցածը փտանդի ատեն: Ամենէն մեծերը կոճանենց եւ ձլլոյինց հորերն էին, որոնք 1915ին վերջին անգամ լեցուեցան:

Մեր գեղացիները կը զբաղէին հողագործութեամբ եւ անասնաբուծութեամբ: Կ'արտադրէին երկաթ, երկաթ քարէն, սեւ, թուխ, որ մեր կողմերը առատ էր: Փայտ կը տանէին Տիվրիկի ծախելու: Հեռաւոր եւ անտառաշատ լեռներու գիրկը, փուռերու մէջ փայտը կը ջարդեն ու կը դիրկեն: Վրան երկաթ քարը փշրելով կը լեցնեն ու կը վառեն: Երկաթը, հլուսը, պողպատը զատ-զատ կը հալին: Այրերը կը մնային լեռներուն մէջ մինչեւ յետին աշուն: Ու կիները, կարօցած գանոնք, կ'երգէին գեղին մէջ.

Փշէ հովեր, փշէ, լեռները ձուռ բեր,

Փուռն ու ֆուրան ֆակէ, իմ եարք սառն բեր...

Ետքէն անոնք լքեր են երկաթահանութիւնը, աւելի շահաւոր դտնելով պանդխտութիւնը: Պսլխ, Բերա, Թարլապաշի, փողոց մը մինչեւ այսօր իրենց անունով Խուանափուլա փողոց կը կոչուի: Բարձրահասակ ու քաջառողջ լեռնահաններ, անոնք հոն գլխաւորաբար բեռնակրութիւն, ծառայութիւն եւ դռնապանութիւն կ'ընէին:

Կ'երթային այրերը: Ու կիները տարիներով, տասնեակ տարիներով անոնց ճամբան կը սպասէին, որոնցմէ ոմանք ալ ընաւ ետ չէին վար: Ու իրենց սէրն ու վիշտը կ'երգէին անոնք, պարզ ու սրտաբուխ շեշտերով.

Թը նուշ ուտիմ, թը շաֆար,

Ղարիպին ձանը կու գար,

Վախնամ թը դարիպ մեռնիմ,

Ո՛չ ֆուր, ո՛չ ախպար կու գար:

*

Քանի քեզ չեմ տեսեր, չեմ եղեր բանի,

Սիրուտ չեմ դիմանար, կու կանչիմ մանի:

Բարսր օտան ելայ, ցուրտ է, կու մնիմ,

Իմ եարս սիլա գայ, ես կու հավասնիմ:

*

Ողորմած Տէր Ասված, փոքրամատ քարիկ,

Վերտեղ դարիպ մի կայ, իր տեղը դրկէ:

*

ես ալ չեմ երթար, վարդեմուն տակը,
կոյեցաւ իմ մատնուս քեզայիք ալը:

*

Փլեր է աշխարհը, կ'երթայ պարի պէս,
Մէյ մի չիկայ որ լուր բերէ դարբայէս:

Իննսունական թուականներուն մեր դեղը միւտիւրութեան վերածուած էր ու Խաչկոնց տան մեծն ալ միւտիւր, որուն կ'ենթարկուէին նաեւ շրջակայ գիւղերը: Ան ճերմակ մօրուքով խոհեմ մէկն էր:

Իննսունեւհինգի ջարդերուն միայն երկու մարդ զոհ տուինք մենք, ան ալ Պոլիս: Ձիթի աշիրէթին պետը, Ալիշան պէկ, կ'ազատէ մեզ: Ձին հեծած կը կենայ դեղին գլուխը ու կը ձայնէ:

— Զիս սիրողը ետեւէս քող գայ:

Գեղացիները կը թափին լեռները եւ Քուրտերուն մէջ, ու կ'ազատին: Յեղափոխութիւնը մեզի բերած էր արդէն Արմատնցի Գէորդը, եւ մեր երիտասարդութիւնը մարթին մը ճարած էր: (*)

Անոնք բուրբի մը կողքին պահուած կը հսկէին լքուած գիւղին վրայ, երբ քուրտ կողպատիչներու վոհմակ մը կը յայտնուի, աւագակապեա Ղայիշի հրամանին տակ: Մօրեղբայրս զնդակ մը կ'արձակէ, որ Ղայիշի ոտքերուն տակ հողը կը խրի: «Լօ, լօ մարթին հէյէ» կը մուտայ Ղայիշ ու կրօնկի վրայ ետ կը դառնան իրենց վախէն: Այդ օրերուն Բէնկա, աւելի վտանգուած, օդնութիւն կ'ուզէ մեզմէ, ու մեր սղաքը կը փութան հոն մարթինով:

Ալիշան պէյ մեր դեղը գգուչացնելէ վերջ, ձին Տիվրիկ կը քշէ: Քաղաքին մօտ խումբ մը զինուորներու կը հանդիպի, որոնք մեր գեղը ջարդելու համար ճամբայ ելած են եղեր: «Պարտապ տեղը մի՛ յողնիք, ես գայն իմ մարդերովս մոխիրի վերածեցի» ըսելով, գունդը քողաք կը վերադարձնէ:

Ալիշան պէյ ջարդերէն յետոյ հայ ուսուցիչ մը վարձելով իր երեք տղոցը հայերէն ու Փրանսերէն սորվեցնել կու տայ: Լսած ըլլալով Պուլիարիոյ ազատագրումը, կը հաւատայ եղեր նաեւ Հայաստանի փրկութեան: Տեսնելով որ այս փրկութիւնը կ'ուշանայ, պէյը շատ զղջացեր է իր ըրած բարիքին համար, ինչպէս յետոյ կը պատմէր այդ ուսուցիչը: Իր սղաքն էին Մահմուտ, Իզդէթ եւ Հայտար պէյերը:

Ջարդերէն ետք ճամբաները դոցուեցան եւ մեր դեղը բոլորովին աղքատացաւ: Ոմանք մուրալու, ուրիշներ ծառայութեան կ'եր-

(*) Յիշել մօրեղբայրս կարապետը, այդ մարքիմի սէրը, որ մեր տնեցիք, Գօթցիք, գողցած էին ժամաքումայէ մը: Ուրեմն Գօթցիք, գեղին առաջին յեղափոխականները:

Թային Տիվրեկ: Թուրք հարկահաւաքն ու հայ վաշխառուները կը տանէին աման եւ անկողին ու կը քշէին վերջին կողմն ու եզր: Ու թշուառները, ձեռքերը ծոցը, կը նայէին անգոր ու դառնօրէն կ'արտասուէին: Այս վաշխառուներուն ամենէն նշանաւորներն էին Տիվրեկցի Հայրանեանը եւ Խարբերդցի Սիմոն էֆէնտին:

Սահմանադրութեան, մեր այրերը թափեցան Պոլիս ու Ամերիկա, եւ դիւզը սկսաւ բարգաւաճիլ դուրսէն զրկուած դոմարներով: Այդ թուականին մենք Պոլիս գաղթեցինք: Շուտով կարօտցայ սահայն ծննդավայրս, եւ 1914ի դարոցական արձակուրդին թոայ ու հոն ինկայ:

Մեր դիւզը շատ փոխուած էր: Քարայրներու պէս մութ, մեծ եւ գեանափոր տուներու վրայ շիներ էին լայն պատուհաններով լուսաւոր սենեակներ: Արտասահմանէն դարձող աղաքը «ալաֆրանկա» կը հազնէին ու փողկապ, նոյնիսկ դլխարկ կը դնէին: Մանկամարդ հարսները տօն օրեր կօշիկ ու ֆրստան կը հազնէին առայլի տեղ, որ մեր դեղին տարազն էր եւ հնօրեայ լեզուն ալ կ'աղձատէր Պոլսէն փոխադրուած բառերով:

Գիւղ դարձած էին 10-20 տարիէ ի վեր պանդուխտ մարդեր, որոնց անունները լսած, բայց զիրենք տեսած չէինք: Անոնք գաւաղ էին թողեր օրօրոցի կամ սաղմի մէջ ու հիմա կը դտնէին հարս ու թոռ...: Իրենց պանդխտութեան մէջ սորվածները կ'ուզէին արժեցնել: Կ'ուզէին ծաղկեցնել հայրենի օրհնեալ բոյնը, որուն կարօտէն տապկուեր էին այնքա՛ն տարի օտար հողերու վրայ: Անոնցմէ մին դիւզն դուրս ամայի տափաստան մը այգիի վերածեց ու չէնցուց: Իր մեղունները կը շատնային: Այգին կ'ուռճանար: Տուն էր շիներ կոկիկ: Ժայռերն ու քարերը կը ծաղկէին իր ձեռքերուն տակ: Հօտերն ու նախիրը բազմացեր էին անհաւատալի աստիճան չուտ:

Մեր դիւզին երիտասարդութիւնը անուանի էր իր քաջութեամբ եւ ամենէն յանդուզն կարաւաններն անգամ վախով եւ դժուշութեամբ կ'անցնէին մեր սահմաններէն, որ ծեծ չուտեն: Իսկ որքա՛ն նորեւուկ, որքա՛ն ծիւ ու ծաղիկ... Անշափահասներով լեցուեր էր դիւզը: Նոր սերունդ մը կը հասնէր, եւ ի՛նչ սերունդ: Ու դիւզը, հին առեն 20-25 տնուոր, հիմա 120 տուն էր եզեր, ու երթալով կ'աճէր:

*
**

...երանութիւն կը հոսէր աչքերէս, երբ դիւզ դարձայ ու քալեցի նորէն մանկութեանս տեղերուն վրայէն: Մեր դիւզը, մեր գետը, սօսեստանն ու լեռները, մեր տուները, ծնած օրէս տեսած, ճանչցած դէմքերս, մամերը, հարսանները, հօրեղբայրներս ու եղբայրներս, ու անոնց սիրած ու տուն տարած հարսները, որոնք անկեղուէին հետս եւ նշանով ու շշունջով միայն կը խօսէին: Անոնց ամէն մէկը երկու, երեք եւ աւելի գաւաղ էր պարգեւեր տունին...

Երբ պանդուխտը դեղ դառնայ, տունէ տուն կոշուներ կը հրա-
ւիրեն զայն: Ինձմէ առաջ Պոլսէն ու Ամերիկայէն ուրիշներ ալ էին
եկեր ու մեր խումբը կը հրամցուէր օդի խմելու՝ «կենաց»ներու, եղ
ու մեզը ուտելու:

Հրաւերը պարզ էր ու սրտագին.

— Վազը մեզի հրամմէ... .

Պաղաղ էր դեղը եւ դաշտի աշխատանքներուն ետեւէն: Շա-
բաթ օրերը բոլոր թոնիրները կը ծխային: Հաց կ'եփէին, լուացք կ'ը-
նէին ու կը լողնային: Կիրակին հանգիստ կ'ընէին, պահենի լաթեր
հագած: Կ'երթային նոյնիսկ ժամ, Քրիստոսին երկրպագելու...

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՕՐԱՇԱՐԺ

... Թերթերուն մէջ չար շուկներ կային, երբ կը մեկնէի Պոլ-
սէն, բայց բան չէի հասկնար: Աւելին չէր դիտեր նոյնպէս հայրս,
թէ եւ դէմ էր երթալուս, զեղէն տրեխով Պոլիս հասած ու ինքնիրեն
դիրք ու կարողութիւն չինած մարդ: Ան կ'ուզէր զիս Պոլսոյ մօտ տեղ
մը օդափոխութեան զրկել: Մայրս հայրենի կարօտէն յոգնած՝ աչ-
քերը փակեր էր: Տունը կը մնային պառաւ մամս, «իցցուն էստուն
տարու» (80) եւ անչափահաս եղբայր մը եւ պզտիկ քոյր մը:

— Բոլորդ կ'երթաք, իս մինակ կու թողուք, մարերնիդ ալ
չկայ, — ըսաւ հայրս, բաժնուած ատենս լալով:

— Զէ՛, չեմ ուզեր որ երթաս, — կ'ըսէր թշուառ որբ քոյրս,
ուժով զիս դրկած, որուն հոգ տանողը ես էի միայն:

Ինչպէ՞օ չհեռանալ սակայն: Այնքան տկարացեր էի ու քայքա-
յուեր: Պէտք էր մոռնալ, հեռանա՛լ ու մոռնալ, ... տէրտէրին ան-
սիրտ ազջիկը, Մառին: Յետոյ, բաժնուիլը այնքան կարճ պիտի տե-
ւէր: Ազդ. Կեդրոնական վարժարանի դասախօսութիւնները կը սկսէին
Սեպտեմբեր 1ին, ու այդ թուականին պէտք է վերագարձած ըլլա-
յի...

Հարցումներուս թէ երկրէն ի՞նչ նուէր կ'ուզեն որ բերեմ, ու-
սուցիչներէս մին, Զէյթունցի, անթառամ ծաղիկ փափաքեցաւ: Միւ-
սին, Բալուցի Հրանդին, ուխտեր էի եղ ու մեզը բերել: Իսկ այն եր-
րորդն ալ, որ թէ եւ ուսուցիչս չէր, բայց ծանօթ եւ անոնց չափ պաշ-
տելի, լուր կը զրկէր, որ իր ապսպրանքը չմոռնամ.

— «Ինձի թող սեր բերէ, որ (ե)ը (է)ի փոխեմ եւ իր սէրը եր-
դեմ...» (Դանիէլ Վարուժան):

Թուսական «Ձարից» շոգենաւը մեզ Կիրասոն նետեց: Շապին-
Գարահիսարցի դեղադորձական ուսանող մ'ըն ալ Եւրոպայէն տուն կը
դառնար: Միասին ջորիները վարձեցինք:

Յեամիջօրէ էր, երբ, երրորդ օրը Թամգարս մտանք: Բարտի-
ներ, ուղիղ բուսած, ճամբուն երկու կողմերը, տուներուն հետ կ'ե-

րագէին: Յորենի արտին մէջ եղէգնահատակ Հայուհի մը, որ տարա-
դէն կը ճանչցուէր, ջրտուք կ'ընէր: Գարահիսար դառնիկեր տեղ մըն
էր, դէպի բերդը մազլցած: Երբ հոն մտանք, Հայեր, Հայեր, Հայ-
եր, երկար տառատոկներով քողուած՝ անուշ Հայուհիներ, դիմա-
ւորեցին մեզ այնքա՛ն բաղմունքեամբ: Դպրոցին տարեկերջի հանդէ-
սին կ'երթան եղեր: Պանին մէջ եկաւ եւ դիտ դառա դասընկերս Կեդ-
րոնականէն: Տիրան Հիւսեանը ու խօսեցանք: Յաջորդ կէսօրին Ար-
թովա դիւզը իջանք: Հայ երիտասարդ մը քովս եկաւ, որ գեղին ու-
ղոնցիէն է եղեր: Մօտիկ հայրենակից ենք, Բեկկաջի: Ըսաւ որ հոն
ամուսնացեր է: Ամուսնացեր է՝ փրկելու համար հայազօրիկ մը: Գոր
Թուրք մը փախցնել կ'ուզէ եղեր: Մեր քով ճերմակ մօրուքով մարդ
մը ջրեպաններուն պղտիկ սափորով թան կը ծախէր: Ինք կ'ուզէր
վաթսուն, անոնք կու տային քառասուն փարա: Վարժապետը կան-
չեց զայն ու ամբողջ թանը բռնի ինծի խնցուցին:

— Դուն Հայ ես, խմէ՛, մատաղ, — կը ստիպէր ծերունին:
Յետոյ՝ կ'անցնինք կարճ անտառներ: Բոժոժաւոր հօտեր:
Լեռք՝ Քրտական ցած դիւղեր ու գոմեր: Լաճեր, ճամբուն վրայ մու-
րացող՝ նորէն լեռ: Անպառ: Ահա հեռուն կանանց ուխտիս մը: Տիւ-
րիկի՛: Ահա սօսեստանն ու ժայռը: Սուսնալուլա: Ահա մեր գեղին
առաջին ուլարածը: Ճանչցա՛ւ դիտ, մանկութեան ընկե՛րս:

Հարցուց թէ ո՞վ եմ:

— Դուն Քոչէնց Երուստանդն ես, — ճշաց:

Արջենց Բուզանդն էր ինքը:

Ահա կը փազեն, կը վազեն ընդառաջ, հօրքուր, հօրեղբայր,
եղբայր, ազգական, կարօտի ու համբոյրի ղեղումով:

Երոտան բռնկեցաւ: Թուրքը չէր քնանար: Քանի մը սպա-
ներ մեր գեղին բլուրներն ու լեռները չափեցին, զճեցին ու դային:
Իսկ ղիբեզապետին քով կառավարութեանէն ամիսներ առաջ ղրկուած
նամակ մը կար, մեծ եւ անսովոր նամակ մը, որ պէտք է դո՛ց մնար:
Չայն բացողին պատիժը մահ էր: Գիւղը շատ կը խօսէր այդ ծալլուած
դազանի հրէշի մասին, որ յետոյ, ծալ-ծալ քակուելով, պիտի մեծ-
նա՛ր, երկարէր, մեկ խայթելով թունաւորելու ու մահացնելու հա-
մար:

Օր մըն ալ երկու ժանտարմա գեղ պալով բացին այդ պահա-
րանը, որուն մէջէն մեծ թուղթ մը ելաւ: Ընդհանուր պօրաշարժի
հրամանագիրն էր: Կո՛ւ՛ւ: Զօ՞րք: Պաղաղ գեղը իրար անցաւ: Բո-
ւ՛րքը դող ելան: Մուտ չէ՞ր, երազ չէ՞ր: Ափսո՛ս, իրաւ էր: Չայն
ժամուն դուռը փակցուցին որ ամէն մարդ տեսնէ: Անսովոր թուղթ՝
Վրան: Ո՛չ խոչ կար, ո՛չ Քրիստոսի պատկեր, այլ թուրքերէն գիրեր,
սուր, հրանցան, թնդանութ, մահելը՝ բոլորը կարծիր:

Մեր գեղին համար զինուորութիւնը նոր էր: Հազիւ քանի մը
երիտասարդներ ունէինք, որոնք երեք տարուան զինուորութեան նոր
դարձած էին: Մեր արտասահմանի զինուորացուներն ալ արձանագրե-

ցին: Ու թեւադրեցին զրեւ անոնց, որ Թուրքիա վերադառնան փութով, զինուոր ըլլալու: «Այլապէս, — ըսին, — անոնց Թուրքիա մուտքը պիտի արգիլուի ընդմիջաւ»:» Ձինուորացուները կտաւէ ճերմակ պարկերու մէջ ուտելիք եւ հագուստ լեցուցած Չարա դացին:

Քաղի ժամանակ էր: Ու ահա ան մնաց դանդաղ: Շուտով բուրն ալ փախան ետ եկան: Չարա այնքան զօրք լեցուած է եղեր, որ կառավարութիւնը զանոնք համրելով արձանագրելու անգամ ժամանակ չէ գտեր: Բուրն զինուորներն ալ փախեր են՝ օգտուելով այս վիճակէն: Անոնք սկսան զիշերը ցերեկին խառնելով քաղի եւ հունձքը տուն կրել, որովհետեւ մեր արտերէն շատերը զեղէն հեռու էին:

... Գեղին հարթ կալերուն վրայ ցորենի եւ վարիի դէզերը կը բարձրանային: Կը լճէին կալերը: Խուրձերը կը քակէին ու կ'օրնէին: Կը լճէին եզները եւ կը կամնէին: Յորենի մեքենաներն ալ անդադար կը դառնային՝ յարգն ու ցորենը պատելով: Մրեղը դեղը ծածկեր էր ճերմակ քողով, ձիւնի պէս: Մանուկներն ալ դէզերն ու մալամդան կը պահէին անառակ հաւերէն, խուրձերուն զաւաթէն կանչելով բարձրաձայն ու եղանակով:

— Գարշեմց ըզըտերը, ըզըտերը:

— Օպեյեմց ըզըտերը, ըզըտերը...

Գեղին ամառն էր:

Ատեն մը վերջ ճիւղերներու խումբ մը հասաւ Վէլի չափուշի հրամանին տակ ու փախտատականները պահանջեց: Բուրնը յանձնուեցան՝ խոստանալով նորէն Չարա մեկնիլ: Բացի մէկէն, Գալիոնց Ակոյէն, որ կ'ընդդիմանար երթալ: Ակոյն մեր ամենէն կարիճ եւ քաջ երիտասարդն էր: Առասպելական ոյժի տէր, դեռ պատանի, ան մինակը ծեծեր էր մեծ կարաւան մը, որ յանդուներ էր մեր արտերը արածել ուղտերը: Ու կ'ըսէր որ եթէ ուրիշ կարաւաններ ալ ըլլային... քիչ էին եկեր իրեն: Ակոյն երեք տարուան զինուորութենէ վերադառնալով՝ նոր ամուսնացած էր: Աղքատ ընտանիքի դուստկ, կ'ապրէր որսորդութեամբ: Եղնիկի պէս կը պարտէր մեր մեծ ու անառիկ Քարերը եւ կը հաւաքէր Քարի աղանի (վայրի): Տանը քով մեծ աղանեատուն մը ունէր, ուր ընտանեցած թռչունները կ'երգէին ու դաշտ կը թռչէին արածելու: Ու նորէն բոյն կը դառնային:

Ակոյն կը մերժէր երթալ. ժանտարմաները ամենէն առաջ զինքը կ'ուզէին, իբրեւ մարդուած զինուոր: Ու երբ զինքը բռնած, կալերուն վրայէն կը տանէին, յանկարծ, դիւթուած սարերուն վայրի հրապոյրէն, մէկ ցնցումով զինք բռնողը կը փոէ գետին ու կը թռչի: Քա՛րը: Ան մնաց հոն, օրերով, ու դուրս չերաւ պաշարուած Քարէն, քարայրի մը մէջ, զոր յետոյ, իր անունով, Ակոյին մագարան մկրտեցին զեղացիները: Ո՞վ կրնար հոն երթալ բռնել զինքը: Անոր կինը ուզեցին, չարչարելու համար, փախցուցինք: Ճարահատ, տանը դուռը չոր խոտ լեցուցին, ու կ'ուզէին վառել, եթէ չյանձնուէր: Տէր-

տէրն ու քոյրը պաղատելով բերին յանձնեցին զինքը: Գնաց ան եւ
ա՛լ ետ չեկաւ:

Մեր տղաց վախուտաբ կրկնուեցաւ: Հակառակ դործողութիւնը
նմանապէս: Վարժուեր էինք առտուն արթննալով զեղը պաշարուած
տեսնել: Անոնք մարդ դուրս չէին ձգեր: Ու տուները խուզարկելով
զինուոր կը փնտռէին: Այս փնտառութիւնները երթալով կը խստանային:
Անոր համար ալ մեր զինուորները զեղէն դուրս, լեռներու եւ քարայրներու մէջ կը պահուէին: Իրենց ներկայութիւնը նոյնիսկ ազգական
ու զրացիէ գաղանի պահելով:

Աշնան հարկահաւաք Շէվքէթ գեղ եկաւ: Ան չափազանց խիստ
ու շնական էր այս անգամ, սահմանադրութեանէն առջի տարիներուն
պէս: Այդ տարուանէն զատ, ամենահին տուրքի մնացորդներն ալ ամբողջովին
զանձեց: Լսելով որ ես գեղն եմ, պապերէս մնացած հաշիւ մը հանելով
պահանջեց: Ես մերժեցի տալ, քանի որ մեր արտերն ու տունը հօրեղբայրներս
կը շահագործէին ձրի: Շէվքէթ կը սպառնար զիս բանտարկել:
Գեղին մեծերն ալ ինձի խորհուրդ տուին լեզուս կարճեցնել
ու վճարել: Շարք մը մնաց ան: Կերաւ, խմեց, հայհոյեց,
փակեղեթը դրամ լեցնելով մեկնեցաւ: Զի հեծած տսեն գեղին
մեծերուն ըսած էր.

— Ես այս գեղին տեղը մոխիր պիտի ցանեմ:

Կ'ուզէի վերադառնալ Պոլիս: Գրաստները կառավարութիւնը
գրուած էր: Ծածրանները անապահով էին: Մանաւանդ Սեւ ծովէն
չոգենաւ չէր բաներ: Գեղացիներն ալ, որոնց մօտ հիւր էի, կը սիրէին
զիս, ու խորհուրդ տուին սպասել մինչեւ որ աշխարհը խաղաղի:
Սուանց ատոր ալ, սէր մը, այնքան քնքո՛յշ, կը դամէր զիս տեղս:
Խարտեաչ էր Մարան ու կապուտաչուի: Որ ձիւնածաղիկ պէս ճերմակ
ու մաքուր, փթթեցաւ հոգիիս մէջ: Խարտեաչ, հասուն արախ
մը քիստերուն նման: Ու մատակ ուռիի պէս ճկուն ու բարակ: Մարա՛նը:
Գեղին մէջ մէկ-հատիկ էր ան: Կը մեղքնա՛ր որ կը տառապիմ
իրմով: Եւ կը ժպտէր ու կ'ըսէր.

— Դաշա կ'երթամ վաղը հերկելու, հո՛ն եկուր: Այժմերուն քով
կ'երթամ, գո՛մ եկուր: Քաղհանքի կ'երթամ, ա՛րտ եկուր: Զուրի կու
դամ, տո՛ւնն եղիւր:

Ոտքերս չէին բաժնուեր իրմէն, եւ կ'երթային հո՛ն, ուր ինքն
էր:

... Գարս՛ւն հեռակայ, Ի՞նչ ըրիր սէրերս: Հառաչներս, հովե՛ր,
Ի՞նչ ըրիք: Թուփե՛ր, գաղանիքս ո՞ւր թողուցիք: Սօսինե՛ր
գետափի, դուք յիշատակս Ի՞նչ ըրիք, Ի՞նչ ըրիք...

**

Երբեմն Տիվրիկ կ'երթայի, տեսնելու հոն ամուսնացած քոյրս՝
Վարդանոյշն ու Կեղրոնականցի ընկերս՝ Արսէն Սուքիասեանը, որ,

ինծի պէս, չէր կրցեր վերադառնալ Պուլիս: Ան Կեղրոնականի վերջ-
ընթեր կարգը լրացուցած էր: Աշնան օր մը Արսէնի տունն էի, երբ
ան շուկայէն վերադարձաւ, տրտում եւ տժգոյն: Ու իր խօսքն եղաւ,
մօրը ուղղելով.

— Մայրի՛կ, ա՛խ, մայրի՛կ, մենք ինչո՞ւ Ամերիկա չզայինք
ու երկիր եկանք: Թուրքերը մեզ պիտի ջարզեն:

Ու սկսաւ հեծկլտալ: Յայտնեց թէ Թուրքիա պատերազմ հռչա-
կած է Ռուսիոյ դէմ: Այդ տարին Տիվրիկի ազգային դպրոցին (7 մեծ
կարգերով) տեսուչ եղաւ ան: Կ'ուզէր որ ես ալ Փրանսերէնի դասերը
ստանձնեմ: Մերժեցի: Ժամանակները դէչ էին, պէտք չէր երեւալ:
Կասկածոտ էի, եւ իրաւամբ: Մեր դեզը եկող-դացող Վէլի չաւուչ օր
մը կառավարչատան ճամբուն վրայ դիս քովի ընկերոջ՝ Սիւլէյման
չաւուչի ներկայացուց, բռելով.

— Երուանդ պ'ու տըր:

Երկար չսպասուցին: Տիվրիկի ազաներէն Համբարձում Պո-
ղոյեան եւ Սարբերզցի Սիմոն աղա, որոնք Թուրքին հետ հայ դիւ-
ղացիին արիւնը կը ծծէին, թշնամի էին իմ գերդաստանիս: Սիմոն
ազան կառավարութեան խորհրդատուն էր, պոչը: Ամենէն ազգեցիկ
մարդը Տիվրիկի մէջ, որմէ գայմագամները կ'ակնածէին: Իր եւ մեր
տան միջեւ արեան վրէժ կար: Արիւնը միայն արիւնով կը մաքրուի... :
Ան իմ ուսումնական հօրեղբորս, մեր շրջանին մէջ հանրածանօթ Դա-
ւիթ պատուելիին մահուան պատճառ եղած էր: Հօրեղբայրս մեր մեծ
նահապետական տունին վրայ, որ վաթսուն հոգիէ կը բաղկանար,
կը դուրբուրար: Կ'ուզէր պահել տան մեծութիւնն ու միութիւնը: Ու
սովի տարիներուն անհնարին ճիգեր կ'ընէր՝ այդքան հոգիի հաց
հայթայթելու համար: Ան Սիմոն էֆէնտիէն քանի մը ոսկի փոխ ա-
ռած էր, ու յետոյ անկէ զաղտնի, Քուրտ վէլետի մը առաջնորդու-
թեամբ ուսուսական սահման մեկնած էր ուրիշ 15 Հայերու հետ, Ա-
մերիկա անցնելու մտադրութիւնով:

— Զեզի՛ համար, հոգեհատորներս, ձեզի՛ համար, — ըսաւ ան
մեկնած ատեն տնեցիներուն, լալով, — եթէ հոգիս ողջ տեղ հաս-
նիմ...

Ու դրկեց պղտիկ եղբայրը ու կուրծքին սեղմեց (1906):

Սիմոն ազան կ'իմանայ: Կը բարկանայ որ հօրեղբայրս ո՛չ ա-
նասուն մը տալով պարտքը կը հատուցանէ, ոչ ալ իրմէ հրաման կ'առ-
նէ մեկնելու համար: Հեռագրով կը մատնէ դանոնք: Եւ կրքրումի
ոահմանին վրայ հսկողութիւնը խոտացուցած ըլլալով՝ կը բռնեն: Եւ
ոտքերն ու ձեռքերը շղթայակապ, եւ վիզէն Ռայլէ (ծանր երկաթ) կա-
խած, բանտէ բանտ, ճիւն ու բուքին, ոտքով, ետ բերին հօրեղբայրս
կիսամեռ, եւ մնացած 14 հոգին: Հօրեղբայրս եւ տիվրիկցի երկտա-
սարդ մը՝ Յովսէփ, որը շատ կը գովէին, հիւանդ տեղ հասան ու
մեռան: Անոր մահով մեր տունը փլաւ ու հինգ տունի բաժնուեցաւ:

Ինչքան խելահաս եղայ, նոյնքան մէջս մեծցաւ հօրեղբօրս կսկիծը: Կ'ուզէի պատժել դաւաճանը: Իսկ աղուէսը կը հասկնար զիս...

Օր մը, երբ նորէն քաղաքն էի եւ շուկայ կ'երթայի, ծանօթ Հայ մը, որ այս անցուգարձերուն տեղեակ էր, ճամբան ինձի հանդիպեցաւ եւ ըսաւ.

— Տղա՛ս, ե՛տ դարձիր, շուկայ մի՛ երթար, քեզ կը փնտռեն որ բանտարկեն: Գնա՛ մեր տունը եւ սպասէ՛ ինձի:

Ազնիւ մարդը, Աւետիս Էֆէնտի Գուգանեան, Մէծլիսին անդամ, ազդեցիկ եւ ունեւոր, տուն դալով շարունակեց.

— Տղա՛ս, դուն կառավարութեան դէմ խօսեր ես: Ձեռ ուզեր տուրք վճարել: Հայհոյեր ես... Խմացեր են: Կ'ուզեն քեզ բանտարկել: Ձգոյ՛: Գնա՛՛ գեղը ու ա՛լ քաղաք մի՛ դար: Իսկ եթէ բան մը պատահի, ես հոս եմ:

— Ա՛հ, այդ Պողոսեան շունը, աղուէս Սիմօնը, ասոնց արարքն է, — ըսի անմիջապէս: — Նորէն առիթ դատն չարաշահութեան, ու ժամանակը նպաստաւոր է իրենց:

— Գիտեմ, աղաս, գիտեմ, — ըսաւ ան: — Այդ մարդիկը չեն ամչնար, ի՞նչ օգուտ...

Ու ա՛լ չկրցայ Տիվրիկի ոտք դնել: Գեղն ալ աչքի չէի երեւար, եւ մոռցուեցայ հետզհետէ:

... Տիտը էր գեղը: Հարսնիք եւ խնջոյք չկար հոն: «Օղափոխութեան եկար, համը բերանդ մնաց», կ'ըսէին գիւղացիները: Ու կը պատմէին նախորդ տարիներու ուրախութիւններն ու հարսնիքները: Իրօք ալ այն տարին մէ՛կ հարսնիք ունեցանք: Տիվրիկի հարաւային կողմի բազմաթիւ հայ գիւղերուն մէկէն, Օտուռէն, եկան ու մեզմէ աղջիկ մը տարին: Օտուռ Վարդան Շահապօի ծննդավայրն էր (Մուրատի եւ Անդրանիկի գէնքի ընկերներէն): Վարդան Օտուռ էր եւ իր խորհուրդով բոլոր արբունքի հասած աղջիկները կ'ամուսնացնէին, սրպէսգի, դալիք գէջ օրերուն, Թուրքը չկրնայ աղարտել կոյսերուն պատիւը:

Գեղի աշուն էր: Հովը սօսիները կը ծեծէր ու կը թօթուէր: Հովը սօսեստանէն կը ճչար ու ժայռերու խոռոչներուն մէջ կ'անհետէր: Շաքիլները ոսկի էին գետափերուն վրայ: Եւ խոյերն ու մաքիները, արթնցած ու բուրմամաւէտ, առանձին արօտ կը տարուէին: Ու կ'ուռնկներուն երամները՝ կրկուարով, բարձրէն, կը մեկնէին հարաւ:

Աչնան օր մը Բէնկայի բոլոր փախստական զինուորները բռնուելով կը տարուէին ու մեր գեղը կը գիշերէին: Անոնք մեր զինուոր ազոցը եռապատիկն էին: Ուրկէ կը հետեւի թէ Բէնկա մեր գեղէն երեք անգամ մեծ ըլլալու է, ունենալով 3000 բնակիչ:

Մենք մինչեւ դարուն հանգիստ չեղանք բնաւ: Կիները անդամադար ձեռնոց ու գուլպայ կը հիւսէին բանակին համար: Կառավարութիւնը գեղէն ամէն տեսակ ուտեստ եւ ալիւր ու արմտիք կը հաւա-

քէր : Գեղացիները էշերով Երզնկա կը փոխադրէին թէ՛ մեր գեղէն , թէ՛ ուրիշ տեղերէ ամբարուած մթերքները , որ մեզմէ երեք օր կը քաշէր : Գարունը սղութիւն ինկաւ : Ու մեր հարուստ գեղն ալ , որուն ամէն տունէն դուրսը մարդ կար եւ առատ դրամ կը ստանար , նեղութիւն քաշել սկսաւ :

Զմեռը թեթեւ էր այդ տարին : Ու մեր փախտտականները չնեղուեցան շատ : Երբ օդը տաքցաւ , անոնք տնակներ յարդարեցին իրենց համար անտառներու եւ ժայռերու գերկը : Ոմանք խլուրդի պէս գետնայարկ տուներ շինած էին աչքի չզարնող հարթ տեղեր : Կիներ ու տղեկներ ամենէն ազնիւ ուտելիքները կը տանէին անոնց : Բոլորին խորհրդատուն եւ վերակացուն էր Զարմանեց Կարօն , ազնիւ ու կարիճ երիտասարդ մը : Երբ մէկը փախչէր գեղ դար , իր կնոջմէն ու մօրմէն առաջ Կարոյին կը յայտնուէր , որպէսզի զինքը տեղաւորէ : Կարօն գաղտնիքի դերեզման էր :

Քաղաքը միշտ պատերազմական լուրեր կու դային՝ թրքական յաղթանակներ աւետելով : Թուրք մը , որ այդ լուրերուն հիման վրայ գերի բռնուող ուսու զօրքերուն հաշիւը կը բռնէր , օր մը ինքնիրմէ ելած կը պոռայ .

— Գործակալութեան տուած հաշիւներուն եթէ նայինք , Ռուսիոյ մէջ մարդ չմնաց , բոլորը գերի բռնեցինք : Ուրեմն սրո՞ւ դէմ կը կռուինք :

Այս տեսակ խօսքեր կ'ընէինք աւելի շատ մե՛նք , Հայերս , անխոհեմաբար , քիչ մը ամէն տեղ , Թուրքերուն ալ երեսին , որոնք կը զրդուէին մեզի դէմ : Կը հաւատայինք թէ Ռուսիա հզօր պետութիւն մըն է : Զէինք հաճիր սակայն տեսնել թէ Թուրքիան ալ , նուազ հզօր , բան մըն է վերջապէս , մանաւանդ մեզի համար : Թշնամին արհամարհելու այդ թեթեւութիւնը մեր գլխուն պայթած աղէտին մէջ ահագին դեր ունեցաւ : Կը պաշտէինք Ռուսիան : Ան մեր «Քեռի»ն էր , մեր ազատարարը : Ռուսիա սակայն քսան տարի առաջ Հայաստանը առանց Հայու ուզած էր , եւ՝ իրե՛ն համար : Իր քաղաքական ծրագիրներուն գործադրուելուն մէջ ի՞նչ կարեւորութիւն ունէր թէ պղտիկ հայ ազգը ջնջուեր է կամ ոչ : Մենք կը սպասէինք անոր բանակներուն ներխուժումին : Հայ զինուորները իրենց նամակներուն մէջ կը գրէին . «Քեռի եկաւ , կու գայ , պիտի գայ» : Թուրքը կը կարդար նամակները , եւ զիտէր թէ ո՞վ է Քեռին :

Գարնան հազար տեսակ զրոյցներ շրջան կ'ընէին խաւարակուռ Անատոլուի մէջ : Մէկը շատ սարսուղագեցիկ էր : Գիրքը գրած է , կ'ըսէին Թուրքերը , թէ այդ տարին ազգ մը ամբողջովին պիտի բնաջնջուի ու անհետանայ երկրի երեսէն : Վախնալով հանգերձ մեզի համար , կը խորհէինք թէ կործանողը կրնայ ըլլալ մի՛այն Թուրքը , ենթակայ՝ ուստական արշաւին :

Մարտին Աղապապ անուն զարացի յեղափոխական մը գեղ դալով՝ քանի մը օր մնաց , երեւութապէս իբրեւ օղիի վաճառական :

Մակայն կ'ըսուէր թէ զէնքի փոխադրութեամբ կը գրազի: Իմանալով որ Աղապապ Զիմառա կ'երթայ, ընկերացայ անոր: Կ'ուզէի տեսնել ողբացեալ Դաւիթ Տօրեղբօրս կէնը, որ հոն ամուսնացած էր, Արաքսին ալ, աղջիկը, միտսին տանելով: Հոն կը բնակէր ծանօթ հայդուկ Բիծան, որմէ կ'ուզէի զէնք մը զնել: Այդ նպատակով հեռագրեցի Տօրս. — «Ծանր հիւանդ եմ, դեղի ու բժիշկի դրամ հասցուր»: Հայրս նամակով պատասխանեց. — «Քու հիւանդութիւնդ քեքեւ եւ անցողակի է»: Եւ դրամ չդրկեց: Իմ հեռագիրս ջարդերու վախը կ'արտայայտէր, հայրս կը հասկցնէր թէ Թուրքերը նահանջի ատեն հապճեպ պիտի աւերեն, ջարդեն, վախնալու չէ:

Ինչքա՛ն ուրախ էի: Պիտի տեսնէի նաեւ Եփրատը ու Բենկան, Միսաք Մեծարեանցի զեղը: Ճամբան օդափոխութեան գացող զինուորներու հանդիպեցանք: Մեր զեղէն ալ շարունակ հիւանդ եւ փախստական զինուորներ կ'անցնէին, մեր քով գտնելով ամէն տեսակ ինամք եւ հիւրասիրութիւն: Անոնք կը պատմէին ու կը նկարագրէին մեզի պատերազմի արհաւիրքները:

Պարակապանէն ետք, մտանք Էօրէնիկ զիւղը՝ թէքքէի մը մէջ, ուր Ղզլապաները գերեզման մը ծանր կարպեաներով ծածկած էին ու բնա՛ւ մարդու ցոյց չէին տար: Եւ կ'ըսուէր թէ ան հայ ազնուականի կամ իշխանի-կղերականի գերեզման եղած ըլլայ, զոր հայութենէ դարձած զեղը կը պաշտէր ու կը պահէր դեռ:

Զիմառա բոլորովին դաշտային էր, շուրջը կապոյտ քարէ քաններ ու բլուրներ: Պարտէզներ զեղին մէջն ու բոլորտիքը՝ պողատու ծառերով: Հոն Հայ եւ Թուրք խառն էր: Զիմառացիները բարեկիրթ եւ ուշիմ էին՝ աւելի քան Տիվրիկցիները: Մենք անոնց քով կոշտ լեռնցիներ էինք: Անոնց լեզուն ո՛չ մեր զեղին շեշտը, (թէեւ ամենաընտիր ու հին հայկական), ոչ ալ Տիվրիկցիներուն եղանակը եւ կոպիտ «ի՛ն ունէր՝ «կոր»ի փոխարէն: Ան նուրբ եւ մաքուր էր, շա՛տ վեր Պոլսոյ Թուրքերէնով աղճատուած հայերէնէն: Ու մինչ մեր զեղացիները ծառայ եւ բեռնակիր կ'ըլլային պանդխտութեան մէջ, Զիմառացիները արհեստներու եւ վաճառականութեան կը հետեւէին՝ հասնելով բարձր դիրքերու: Ան Ալինայ հայ զեղերուն, հայրենի՛ք անման մանիներուն եւ շերերուն, որոնք բիւրեղանալով ու կատարելագործուելով Մեծարեանցը տուին մեզի, — վերջնթեր օղակն էր, վերջինը հաշուելով կասման: Մեզմէ վեց ժամ, երեսուն քիլոմետր հեռու էր:

Ես ուղղակի հարսայիս տունը գացի, որ զիս տեսնելուն վրան լոյս իջաւ: Ապրանք գտած, գող դարձայ ես ալ, երբ դրկեցի որբուկ քուրիկս, ու իր քնքոյշ, խարտեաշ գլուխը կապոյտ աչուկներով, սեղմեցի կուրծքիս: Որքա՛ն անմեղ եւ անուշ էր ան: Յետոյ լացինք, նստած քովէ քով, յիշելով Տօրեղբօրս կսկծալի նահատակութիւնը, տակաւին շատ երիտասարդ, որուն հետեւանքով, հարսաս, մեր մե՛ծ տան երբեմնի թագուհին, օտար տան նորէն հարս դացած էր:

Երբ Բիծան հարցուցի, հարուստ պաղ շուր լեցուց գլխուս, քսելով թէ տունը չէ, գինուոր դացած է: Յուսախաբ եղայ: Իրեն ըսի որ դէնք մը գնել կ'ուզէի անկէ: Հարստ քթին տակէն խնդաց: Մեր ոտքերը տաք քուրսուն^(*) դրած կը խօսէինք: Գիշերը, Արաքսիին քնանալէն վերջ, հարստ ձեռքս ճրագ մը տալով՝ ըսաւ որ իրեն հետեւիմ: Իջանք ախոս: Պատին մէջ քարնա մը կար, ուր ամանով հաւու կուս ու ծլած սոխեր նետուած էին: Հարստ վերցուց գանոնք ու տախտակ մը դուրս քաշեց: Այն ատեն հոր մը բացուեցաւ, որ պատին մէջ կը խորանար: Զեռքը հոն երկնցուց ու ժպտելով մեծ հրագէն մը դուրս հանեց: Աչքերուս չէի հաւատար: Անմիջապէս զրկելով համբուրեցի գայն: Նորէն ձեռքը խոթեց ան, ու հինգ գէնք դուրս հանեց, որոնք խնամքով իւզոտած ու փամփշտակալները քուրջերու մէջ փաթթուած էին: Հարստ ըսաւ որ Բիծայի դէնքերն են ասոնք: Մէկը մանլիխէր էր, միւսը թուրք մաւզէր, երկուքը մոսին: Մոսիններէն մէկը թրքական փամփուշտի յարմարցնել տուած էր ան, որպէսզի երբ կռիւի ընթացքին ձեռքը ռազմամթերք անցնի, կարենայ գանոնք արժեցնել: Զէնքերը տեղը դնելով, քարնան նորէն առջի պէս սոխ ու կուս լեցուցինք:

Յաջորդ գիշեր, ուշ ատեն, երբ նորէն թոնիրը նստած էինք, ձիւս խրխինջ մը լսուեցաւ դուրսէն: «Ո՛ւյ, — ըսաւ հարստս, — Բիծային ձիուն ձանն է, ձանին մեռնիմ» ու դուրս ելաւ: Այդ պահուն ես տեսայ թէ հարստս ո՛րքան նուիրումով ու սիրով կապուած է Բիծային ու իր ընտանիքին: Քիչ վերջ սանձէն բռնած կարմիր ձին իր ախոսը բերելով՝ կապեց:

— Ճամբայէ եկած ձին մէկէն ախոսը չեն կապեր: Սանձէն բռնած կը պտտացնեն գայն ատեն մը, որպէսզի քրտինքը ժողվէ ու շունչը կանոնաւորուի:

Մական հայ յեղափոխականի ձիուն կարելի չէր այդ պատիւը ընել:

«Հիմա մուրատիդ հասար», — ըսաւ ինծի հարստս, ու դիս միասին Բիծային տունը տարաւ: Աւխտի՞: Անշուշտ: Որովհետեւ սուրբերը ինծի համար այն բրնձոյ քարերը չէին գեղին շուրջ, որոնց փաղաքուշ անուններ տալով մոմ կը վառէինք ու մատաղ կ'ընէինք: Այլ անոնք, ցեղին դաւակները, որոնք նետուեր էին կրկէս, բղկաւու թշնամին, որ փակած մեր կուրծքին, արիւննիս կը ծծէր, եօթն դար է ահա: Սուրբերը անոնք էին դեռ, ողջ կամ նահատակ, որոնք ուզեր էին մեռնիլ, որպէսզի ուրիշները ապրին, հագար ապրին: Որ հայրենիքը յառնէ:

Բիծան միջահասակ, թիկնեզ ու լեցուն մէկին էր, մօրուքով մը, ուր ձերմակ էր ինկած:

— Խե՛ր ըլլայ, բարի՛ եկար, — սկսաւ հարստս:

(*) Թոնիր:

— Բարին ձեր արեւին, — պատասխանեց Բիծան, — սակայն փախայ ու եկայ :

Ու հանելով փակեղէթէն չամիչ ու լէպլէպի, ճանկերով մեզի եւ իր տիկնոջ՝ Մանուշ ապւային տուաւ, եւ շարունակեց :

— Կացութիւնը գէշ է : Կառավարութիւնը զիս կը հեռապնդէ : Կովտուն էի, Մուրաաի քով, ուր Ալիսի շամբերուն մէջ վայրի բազեր կ'որոսայինք, երբ լուր եկաւ թէ Բիւրքի գէպըն է պայթեր ու կը փնտուռիմ : Թուրքերը զիս հարիւրապետ էին ըրած ու Սվազէն Չարա գորք կը փոխադրէի : Բոլորը կը փախչէին ճամբան : Անդամ մը 200 հոգի տարի, որոնց յիսունը տեղ հասաւ : Ու ես ցաւ դըպցի թէ ինչո՞ւ այդ յիսունն ալ չփախան : Կովտունէն դադանի հեռացայ ձիուս վրայ, սակայն Թուրքերը զիտեն որ աս կողմերն եմ : Որովհետեւ Ախաբախի ետին, Էֆէնդու ձորին մէջ հանդիպեցայ արվրիկցի ժանտարմաներու : «Թէփրէնմէն, օ գրաւ» որ պոսացի՝ մոսինս քաշած, իրենց վախէն կեցան բոլորը : Լսեցի որ, ըսի, բացակայութեանս տունս խուզարկեր էք : Հիմա հե՛տս չափուեցէք, որ ձեր հասակը տեսնեմ : Անոնք ինծի աղաչեցին որ իրենք մեղաւոր չեն, եւ աւամայ, հրամանի տակ կատարեր են : Այս խօսքերուն վրայ զիրենք աղատ ձգեցի :

Ուրեմն հիմա փախստական էք : Բիծայէն խնդրեցի որ մեր գեղը դայ եւ մեր լեռները պահուի : Զիմառա դաշտային էք ու պահուելու յարմարութիւններէ զուրկ : Ատկէ դատ ան միւսիւրբէ էք ու միշտ սաքի տակ : Բենկայի կամուրջն ալ գիշեր-ցերեկ հսկողութեան տակ էք : Զէնք ալ չկրցայ գնել, որովհետեւ դրամս շատ քիչ էք :

Բիծան լուսադէմին քանի մը զիմառացի տղոց հետ հեռացաւ գեղէն :

Բիւրք Շապին-Գարահիսարի հայ գեղերէն մին էք : Գարնան, ճակատ դրկուած թուրք զինուորներ հոն կը գիշերեն : Անոնց մէկը քանին զիրենք հիւրասիրող տան գեղանի հարսը բռնաբարել կ'ուզեն : Կինը կը ճչայ եւ օգնութիւն կ'աղաղակէ : Ամուսինը, որ զինուորական փախստական էք եւ տունը պահուած, կնոջ ճիշերէն Մանլիխէր հրացանն առած դուրս կը նետուի թաքստոցէն եւ կը կրակէ : Բռնաբարիչները կ'իյնան : Կոխը կը պայթի գիւղին եւ զինուորներուն միջեւ : Կառավարութիւնը Գարահիսարէն օգնական ոյժ ստանալով, գեղացիները կը ձերբակալէ եւ գէնքերը կը գրաւէ : Գիւղ մը այսքան անթերի զինուած : Եւ ուրիշ՞ էին այս գէնքերը : Կասը քակուելով կը յանդի Բիծային, որ, լուր առած ըլլալով, կը հեռանայ :

Բիծան ըսաւ թէ վարունը, երբ խոտերը ձի կշտացնելու չափ ածին, ոռոտական բանակը պիտի արշաւէ : Այդ շրջանը շատ վտանգաւոր է մեր գոյութեան համար : Ուստի պէտք է մեր շրջանի հայութիւնը Ախաբախ քաջուի, չկոտորուելու համար : Լեռը անառիկ է, ու երեք կէտէ կարելի է գիւրին պաշտպանել քիչ կոռուղներով ու գէնքերով : — Զիմառա նոր գէնքերով, տասնոց, մաւղէք, լաւ զինուած էք :

Զիմառայի երիտասարդ ուսուցիչը զիս դպրոց հրաւիրեց, ուր տղոց դասերուն հետեւեցայ ու ճառ մը խօսեցայ: Յետոյ ինձի ի պատիւ երգել տուաւ ան տղոցը: Հոն, անոնցմէ, «Արագն եկաւ»ին (Յ. Յովհաննէսեան) եղանակը սորվեցայ ես: Ու Զիմարացի մըն ալ, խոշոր քիթով Վարդան աղան, աղբիւրին քովի իր տան մէջ հիւրասիրեց զիս: Ու պատմեց Պոլիսէն, ուր վաճառականութիւն ըրած էր: Ու պարագուց իր տան պարտէզը, լեցուն ծիրանի ծառերով: Հոն քովքովի ցած թուփեր կային: Վարդան աղան ըսաւ որ անոնց պտուղէն կարմիր ներկ կը հանէին, սակայն հիմա դադրած են այլեւս, քանի որ ներկը Եւրոպայէն շատ աժան կու գայ:

Երկար ու լայն դաշտին վրայ տեղ մը, անդին, կը ցուցնէին թէ Եփրատն է ու Բենիան: Բայց ըսին որ հիմա վտանգաւոր է հոն երթալ, կամուրջին վրայ պահակը զիս կը բռնէ ու կը ձերբակալէ, քանի որ վԷսիբա չունիմ: Ըսին ուրիշ ատեն կ'երթաս հոն ու կարօտը կ'առնես, երբոր աշխարհը խաղաղի...

Աղապապ կը վերադառնար: Ստիպուած էի ես ալ հետը երթալ, ետքէն մինակ չմնալու համար: Յետոյ ճամբան փոխն ի փոխ անոր ջորին կը հեծնէինք: Աղապապ հոն օդի դնեց, ամենէն ընտիրը, որ թուփէն կը պատրաստեն: Զայն Զարա կը տանէր... ծախելու: Որպէսզի կարենայ ըսել թէ ինչո՞ւ կը ճամբորդէ: Օդի լվաճառական է...

Երբ մեր դաշտերը հասանք, դեղացիք, որ ցանք կ'ընէին, անհամբեր պոռացին հեռուէն.

— Ի՞նչ լուր, ի՞նչ լուր, օրբընից ի՞նչ կայ-չկայ: Արդեօք ցանե՞նք թէ ոչ: Զեռքերնիս առաջ չ'երթար:

Նոյն հարցումները նաեւ դեզը: Ի՞նչ լուր տայի, ի՞նչ տեսայ եւ լսեցի:

— Ապրի՛ս, — հեզնեց անոնցմէ մէկը զիս (Մսաք քեռին), — տեսա՞ք ուշիմ աղան. ի՞նչ լուրեր բերաւ մեզի: Ասկէ վերջ երբեմն հոս-հոն ասանկ մարդ զրկելու ենք՝ անցած-դարձածէն տեղեակ մնալու համար...

Շարաթ մը վերջ լուր առի որ Բիծան մեր լեռներն է: Ան տէրտէրին տունն է իջեր վաղանի, ու անոր եղբորը աղուն, Մկրչին հետ, որուն ետքէն գարատաղ ատրճանակ մըն ալ նուէր տուաւ, լեռ է ելեր: Միս եւ օդի առած, Ախտախի քարայրներէն մէկուն մէջ այցելեցի իրեն: Կերանք, խմեցինք, երգեցինք: Ան կ'երգէր «Արագն եկաւ, ափիւն տարով»ը, թրթռուն յուզումով: «Երուանդ, կը մեռցնե՛ս», ըսաւ, երբ «Կանչէ կուռնկ»ը երգեցի:

Մեր դեզին ինքնակոչ մեծաւորը, Քէհեցի Մանուկ աղան, Գահիրէի Հայոց Առաջնորդարանին նախկին բարապանը, որ եզիպտական իշու մը յամառ յատկութիւններն ալ միասին բերած էր, կը դանդատէր Բիծայի ներկայութենէն ու կը վախտէր զայն:

— Թող երթայ կորսուի, աղտեղութիւնը մեզ ալ կու պլլուի,—
կ'ըսէր:

Ան մէկ ուլը դրամով ծախեց Բիծային, մէկ մէճխախ, մարդ
մը, որ ամէն օր ուլ կը մորթէր թէ՛ Թուրքերուն, թէ՛ իր հաճոյքին
համար: Բիծան զրացուած էր:

— Երբ այս օրերը անցնին, առաջին գործս թող ըլլայ Մանուկ
աղային դասը տալ,— ըսաւ ան:

Գառնացած այս ընդունելութենէն, ան լքեց մեր լեռները ու
Բենիկայի Քարը քաշուեցաւ: Ըսինք որ դէշ տեղ: Հոն իրեն հաց տա-
նողները հետապնդելով՝ զինքը գտան ժանտարմաները: Պահանջեր էին
որ յանձնուի: Ան առջեւին մէճիտ մը գնելով՝ կ'ըսէ.

— Օ՛ղրաչներ, դուք ո՞վ էք որ Բիծան ձեզի յանձնուի: Հեռա-
դրեցէք այս դրամով Տիվրիկի, գայժաղամը թող դայ, որպէսզի ա-
նո՛ր յանձնուիմ:

Գայժաղամն ու Տիվրիկի զինուորական հրամանատարը կ'եր-
թան բաղմաթիւ ժանտարմաներով ու զինքը գերի կ'առնեն բոլոր գէն-
քերով: Չայն ջորի, ոչ թէ ձի նստեցնելով, Տիվրիկ տարին ու բան-
տարիեցին: Յետոյ Սվազ զրկեցին դատուելու: Ինչո՞ւ յանձնուեցաւ
Բիծան: Չէ՞ր կրնար փախչիլ: Անչո՛ւշա: «Կը յանձնուիմ, ըսած էր,
որպէսզի իմ Երեսէս Թուրքերը մեր ժողովուրդը չանհանգստացնեն,
նեղելով ու չարչարելով»: Գէպքերը ցոյց տուին որ սխալած էր:

Չատկին Բ. օրը սովորութիւն էր ամենէն կարիճ երիտասարդ-
ներուն իրարու հետ բո՛րջամարտութեան բռնուելը: Իմ ալ թուղթերս
եկան, ուրիշ երկու տարեկիցներս, Տօռսիսենց Արսէնին ու ձերանենց
Համաղառային հետ: Գեղին մեծաւորը (քէհեան), որ Վարդերես հօ-
րեղբայրս էր, Չարս զինուոր, տօներուն առթիւ արձակուրդով տուն
եկած, զիս պահեց ու չյանձնեց՝ «ան շատոնց Պոլիս վերադարձած
է» բախով: Այդ օրէն ես ալ զինուորական փախստական եղայ պաշ-
տօնապէս, ընկեր՝ մեր տղոց, որոնց արկածախնդիք կեանքին լեռ-
ներուն վրայ այնքան կը նախանձէի:

Ապրիլի սկիզբները սարսաղըեցիկ բաներ լսեցինք: Թուրք ջո-
րեպան մը, Սեւերցի Հասան, որ մեր պանդուխտները տարիներով
Կիրասոն տարած էր ու բերած, եւ ծանօթ էր մեր դեղին, Կարինէն
կու դար, ուր զինուոր տղաքը փնտռելու պացեր էր, եւ մեր դեղը
հիւր եղաւ: Ան պատմեց Կարինի Հոյերուն լամբական աքսորը, այ-
րերուն կիներէն անջատուելով զնդակահարուելը, բռնաբարումները,
առեւանդումները, կողոպուտը, շատերուն ջրամոխ ըլլալը, ջա՛րդը:
Բարի մարդը ասոնք պատմած ատենը լացեր էր: Մեր գեղացիները
չաւատացին Հասանի, ու բարկանալով սկսան հայհոյել անոր, որ
ստանկ տղեղ սուտեր կը յօրինէ:

— Ըսենք թէ կը ստէ: Բայց ինչո՞ւ լացաւ,— հարցուցի:

— Չաւակները չէ գտեր, անո՛ր համար լացաւ անչուշա:

«Իսկ եթէ բան մըն ալ պատահի, ան կողմի Հայերուն յատուկ պիտի ըլլայ, որովհետեւ անոնք յեզափոխական եւ անհանդիս տարրեր են: Մենք մէկուսն հաւին քի՛շտ ըսած չենք մինչեւ այսօր, որ պէսզի կառավարութիւնը մեզ ալ պատժէ»: (Պետեց չեւեւը):

ՓՈԹՈՐԻԿԻՆ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ...

... Եւ սակայն բանտարկութիւնները Տիվրիկէն ծայր տուն: Առաջին անգամ Խորհրդայի Սիմոն ազան բանտարկեցին: Անոր յաջորդեց մեծահարուստ Հայրանեան, որ Սուլթան Համիտէն սուր մը նուէր ստացած էր ու դայն կը կապէր տօնական օրերուն՝ համազդեատին վրայէն: Վերջին տօնը եղաւ սահմանադրութեան տարեդարձը քաղաքին մէջ, 1914ին, ուր անոր ժընեւ ուսած տղան, բժիշկ Հայրանեանը ճառ մը խօսելով՝ սահմանադրութիւնը ոսկի ափսէի մը նմանցուց: Ան ալ Պերլինէն այցի եկած էր, ու չկոչուաւ դառնալ: Յետոյ նշանակուեցաւ Սեբաստիոյ գինուորական բժշկապետը: Եղբայրը, Թաթուլն ալ, մնաց, (Լոզան ուսած իրաւարան): Յետոյ ըսին թէ դանոնք Սվազ են դրկեր: Տարածայնուեցաւ թէ Հայրանեան Սվազէն նամակ մըն ալ դրեր է, ուր իր դո՛հ եւ հանդիստ տեղ հասնիլը յայտնելով, բոլորին կը յորդորէ կառավարութեան հնազանդիլ: Այս իմաստով շրջաբերական մըն ալ Պատրիարքարանէն դրկուած էր դաւառները, ժողովուրդը յորդորելով որ հնազանդին կառավարութեան եւ դժգոհութեան առիթ չտան: «Տուէ՛ք կառավարութեան բոլոր պահանջածները, դրամ թէ նիւթեղէն, մի՛ դիմադրէք: Այդ առթիւ ձեզի տրուած մուրհակները պահեցէ՛ք»: — Թուրքերը սերիչներու կարգին Վարդան Ծահապազն ալ ուզեցին ձեռք անցընել: Բայց հեռառես կորիւնը պահուած էր թուրք բարեկամի մը քով:

Կը խօսուէր խմբական աքսորի մը մասին: Տիվրիկի մէկ բաղնիքին մէջ Թրքուհիներ Հայուհիներու հետ կուսելով՝ կը պոսան անոնց երեսին.

— Ծուտով ձեզ կ'աքսորեն, կեալուրմեր, եւ ձեր երեսէն կ'ազատենք:

Կառավարութիւնը խտորէն կը ստատէ այդ կիները, ու կը սպառնայ յետադային նման խօսքեր տարածողին լեզուն կտրել: Հայերը պաշտօնապէս դայմադամին դիմելով լուսարտնութիւն կը պահանջեն: Հանդարտեցուցիչ պատասխան կու տայ: Կ'ըսէ թէ սուս խօսքեր են ատոնք: Հայերը կը դիմեն իրենց թուրք բարեկամներուն, պաղտնի բան մը հասկնալու համար: Կ'առնեն հանդստացուցիչ պատասխան:

Երբ մեր դեղին դղիրը սակայն կալերէն կանչեց թէ ամէն տուն նորածին դառնուկ մը պէտք է տայ կառավարութեան, մեր սիրտը բզկտեցաւ: Ո՛չ դառնուկին համար: Երանի բոլոր հօտերը տանէին,

ու գիտնայինք թէ բան պիտի չպատահի: Այլ անոր համար որ, առ ալ մեր կասկածները կը խորացնէր: Ինչքան կու տայինք, կառավարութիւնը այնքան աւելի պահանջկոտ կը դառնար:

Գեղացիք արտերը ցաներ էին, բայց շատ ընկճուած, ու կը հարցնէին թէ ցանածնին քաղելու պիտի հասնի՞ն: Ծանր ձեռքերով նետուեր էր սերմը: Կոյիքը ծներ էին: Մաքիները ծներ էին: Այծերը կը ծնէին լեռներուն վրայ, դոմերուն մէջ: Հոյիւնները բամպոսի փունջերով ու խորճնայի կապոցներով դեղ կը դառնային: Սեղանիս վրայ ամէն իրիկուն ծաղիկ ու խորճնայ կը լեցուէին, որոնք զարմիկներս՝ Շաւարշը, Միքայէլը եւ Պաչօն կը բերէին.

— Երուանդ աղբար, քո՛ւկդ է աս:

Եղբայր էի ես ալ, ու տաղը, ու թու: Էի սիրահար ու գաղտ-



Հեղինակին մեծ մայրը, 90 տարեկան
Վառիկ Քոչեան, ծնեալ Սարք Մարտոյեան
լուսանկարուած 1919-ին Պոլիս, Օրքաբէօյի
իրենց տան ֆաշարանին մէջ:



Հեղինակին մեծ մայրիկը՝ Վառիկ Քոչեան
եւ հայրը՝ Մովսէս

նի նշանած աղջիկներու, որոնք կ'ուղէին զիս առնել : Էի քուկդ, Մարա՛ն . . . :

Ազգական ու դրացի՝ դոմերը կը հրաւիրէին զիս : Կը ցատկէինք ուլերուն ետեւէն ու հօտերը արօտ կը տանէինք : Ամփոփ ու կլոր թուփերուն մէջ կ'որսայինք կաքաւն ու իր հաւկիթը : Եւ դիշերը, երբ հօտը մակաղէր ու դամփոնները տանիքին վրայ հսկէին, կը նստէինք ինճիկին մէջ, կրակին առջեւ : Ու մինչ կաթնազուրն ու դալը կ'եփէին, մենք կը լսէինք հէքեաթներ ու դէպքեր, որոնք պատահեր էին երբեմն, մեր լեռներուն վրայ, աւազակներու կամ զազաններու հետ : Թէ լ՞օնչպէս արջը հովիւի մը հետ կը մենամարտի ու զաչն տիւնլով արիւնլուայ դետին կը նետէ : Ու դողեր, հովիւները կապելով կը քչեն ամբողջ հօտեր ու կ'անհետանան : Ու աշունը, երբ հօտ ու անասուն դիրնան, Տէրսիմցիք մեր լեռները կ'անցնին : Ու անոնց վախէն, լեռ ու ճամբայ կ'ամալանան :

Կու գար Մայիս: Երկինք կը խոթոռէր ու կը գոռար: Կայծակ կը դարնէր, բանալով ձապարածեւ խոր հորեր:

Յետոյ յայանի եղաւ որ անոնք երկնաքարի բացած հորեր էին, երկու հատ, մեր գեղին մօտերը, ոչ թէ կայծակի:

Անձրեւը կը թափէր օրհնութեան պէս ու հունձքը պուկ տալով կը բարձրանար, այնքան առատ, որ շատեր գլուխ ուտող հունձք կ'անուանէին դայն: Ու հեղեղները մեր սարերէն կը պոսթիային՝ քշելով անասուն ու մարգ: Մեր լեռները այնքան աղուոր էին, ամէն քար ու ամէն մէկ բուռ հող խոտ ու ծաղիկ կտրած կը ժպտէին:

Միրտերը սակայն տխուր էին, եթէ չըլլար անուշ հայրենիքն ու դիւթիչ ծննդավայրը, որ իր հմայքներով մեր վիշտերը կը մեղմէր ու կը փայտայէր մեզ: Ես լեռներն էի շարունակ ու տուն չէի մտնէր, եւ կ'այցեկէի միշտ մեր գինուոր տղոց, որոնք կ'ապրէին անյայտ անակներու մէջ, հոս-հոն, խուճբերով:

Այլ օրերուն դիւղին բոլոր գէնքերը հաւաքուելով յանձնուեցան կառավարութեան: Եղածները քանի մը ատրճանակ ու որսի հրացան էին: Միայն ժամն ու դպրոցը յունական «կրա» մաւղէր մը եւ դարատաղ ատրճանակ մը ունէին, որոնցմով կը յուսացուէր գիւղը պաշտպանել, երբ ջարդը կրկնուէր: Քանի մը քաջ երիտասարդ այդ գէնքերով նշանառութեան փորձեր կ'ընէին գաղտնի, խոր ձորերուն մէջ:

Մեր գիւղը մոռցուած էր, հակառակ իր արժէքին, որովհետեւ մտաւորական չունէր: Զէնք գնելու իմ յորդորներուն ոչ ոք լսեց, նոյնիսկ քեռայրս, որուն քով կը բնակէի: Ունեւորներ շատ կային հոն, որոնց մէկը միայն, եթէ ուզէր, կրնար ամբողջ գիւղը գինել: Սակայն անոնք դեռ արթնցած չէին ու խողիտողուեցան քնացող մէկու մը պէս:

Մեր գիւղին չփոցած հարուստը, Քէյհենց Մանուկ ազան, որ դիտէր թէ որո՞ւ քով ի'նչ գէնք կայ, բոլորը անձամբ հաւաքելով յանձնեց այդ նպատակով իր տունը իջած գոյլ ժանտարմաներուն, գայլերը վախցնելու սահմանուած ատրճանակ մը անպամ հովիւներէն առնելով:

— Տուէ՛ք, ա՛յ օղուլ, տուէ՛ք, — կ'ըսէր ան, — էմմէն բան տալով պիտի անցնի...

Զէնք հաւաքելը մեզ իրար անցուց: Շուարեցանք: Ինչո՞ւ կը ժողովին այս անպէտ գէնքերը: Իր բոլոր գէնքերը վրայ տուած ըլլալով, կառավարութիւնը մեր գէնքերը կը հաւաքէր, որպէսզի անոնցմով պատերազմը շարունակէ: Ա՛յս էր մեր կարծիքը: Ու կը խօսուէր թէ Հ. Յ. Դաշակեցութիւնը ինքնապաշտպանութեան համար հազարներով տասնոց հրացան գնած ըլլալով Գերմանիայէն, այս վերջինը թուրք կառավարութեան լուր տուած է, ու ան այդ տասնոցները կը հաւաքէ:

... Ժանտարմաներու պէտ Վէլի չափուշ, որ փախտական գի-

նուոր բռնելու համար գեղ կու դար, չա՛տ բարի մարդ էր: Այդպէ՛ս կը հաւատացնէր մեզ Կօշկրենց Վաղարշակը: Այս սղան թէեւ աղքատ էր առաջ, սակայն հիմա բարեկեցիկ էր, շնորհիւ Ամերիկայէն բերած տոլարներուն: Ու քանի որ դրամ ունէր, կրնար այլեւս գեղին դործերուն խառնուիլ: Ան Մանուկ աղային մրցորդն ու զայն քննադատողն էր: Ու Վէլլի չափուշի ալ մարգը, որմէ տեղեկանալով՝ չափուշը մեր բոլոր փախստականներէն լուր ունէր: Ու ամէն գեղ դաւուն՝ դրպանը գեղին ոսկիներ լեցնելով քաղաք կը դառնար, առանց մէկը բռնելու: Ուրեմն դործը կարգին էր, ու Վաղարշակ՝ հպարտ...

... Մայիսի ի՛նչ անուշ օր էր ան: Հէ՛յ, օրերը տարբե՛ր, տարբե՛ր էին այն ատեն, եւ ես ու դուսն ալ տակաւին մարդ՝ ու մերիներուն միջեւ: Ա՛խ, երանի՛ր այն օրերուն: Պայծա՛ռ օրը կը համբուրէր գեղն ու բլուրները: Բղէզներ արելին տակ կը հեշտանային ու կ'երգէին թռչելով: Մուխ կ'ելլէր բուխերիկներէն ու հաւերը կը կրկնային աղբանոցներուն վրայ: Ու աղբիւրներն ալ դուռերուն ահանջին միշտ նոյն եղանակը կը զարնէին: Երբ... յանկարծ... ճիջ մը սողաց գեղին փողոցներէն պաղ օձի պէս ու սարսուռով լեցուց գայն:

— Տղաքը բռնե՛ր ըն... ո՛ւլ... տղաքը բռնե՛ր ըն... կու գա՛ն... Քարէ կարմունճ անցա՛ն... գեղը կտխեցի՛ն... մարիկ անա՛... մարիկ անա՛...

Ու այս ճիջին հետ ժանտարմաներուն ձիերուն պաղ խրիինջները գեղը լեցուցին, իրենց առջեւը ձգած մեր սղոցմէ քսան հատը, որոնց վրայ գեղ ու զօյն չէր մնացեր: Ու այդ օրէն սաղին ալ ուրախութիւն չտեսաւ գեղը:

Անոնք մեր վերի թաղին տղաքն էին, որ միասին հեռաւոր անտառներու մէջ կը բնակէին: Քուրտ մը անոնց տեղը գիտէր եւ կը մատնէ Վէլլի չափուշին, որ իր ժանտարմաներով մութնուլուսուն կը պաշարէ անոնց թաքստոցը, երբ քուն էին գեռ, եւ պոռալով որ անձնատուր ըլլան, կը սկսին դնդակ տեղալ անոնց վրայ: Մերիները դէնք չունէին: Կը կանչեն թէ յանձնուած են: Սակայն նորէն փամփուշտ կ'որոտայ անոնց վրայ, դիտամօր, սպաննելու մտքով:

Երբ զանոնք կը բռնեն, կը սկսին սաստիկ ու անխնայ ծեծել, պահանջելով որ միւս փախստականներուն տեղն ու թիւը յայտնեն, ու կ'իմանան ալ: Միւս զինուորները իրենք-իրենց եկան յանձնուեցան իրենց վախէն, որովհետեւ մատնուած էին արդէն ու փրկութիւն չկար: Այդ ծեծերն ու չարչարանքները մեր տղաքը մեռել էին դարձուցեր: Ժանտարմաները անոնցմէ պահանջեր էին իրենց կիները, միասին պառկելու համար, կամ, ըսեր էին, դ՛ուք եկէք...

Այդ օրը զինուորական տարիքը անցուցած չափահաս այրերը գիւղին տակը, Պետենց ձէտէնին սենեակը հաւաքելով սկսան տանջել: Կը ծեծէին ու կը տաղէին զանոնք չիկացած երկաթներով, պահանջելով դէնք ու զինուոր: Տանջուողները կը ճչային ու կ'աղաղա-

կէին: Անոնց հետ կը ճչային կին ու աղջիկ ու տղայ՝ Պետենց կա-
լերը լեցուած: Եւ գիւղն ու Քարը այդ ճիշերէն կը թնդային: Ժան-
տարմաները յաճախ իրենց զէնքերը առած ժողովուրդին մէջ կ'իյնա-
յին, զանոնք վախցնելով ցրուելու համար: Անօգուտ: Գիւղացիները
նորէն կը խուժէին հո՛ն, ուր այրերը կը տանջուէին: Անգամ մըն ալ
ժանտարմաները գեղին պատանիներուն ետեւէն ինկան ու անոնց վրայ
կրակելով ցիրուցան փախցուցին: Մեր գեղը շնագայլերու յարձա-
կումին ենթարկուած փարախի մը կը նմանէր: Կու լային բուրբ ու
կը ճչային, ձէտէնին օտայէն եկած հեծեծանքներուն հետ: «Մարիկ
անա՛, մեռցուցի՛ն:»

Ու իրենց կուրծքերը կը ծեծէին, մագերը կը փետտէին: Այդ
օրը դադաղի կափարիչի նման զոցուեցաւ վրանիս: Օրը միջեց լացի
ու սուգի մէջ: Ու մուժը վրանիս թափեցաւ՝ գերեզմանի հողի պէս:
Բոլո՛ր այրերը արձակեցին, եւ անոնք իրենց տուները դարձան: Մին-
չեւ առտու զինուորներն ամբողջ յանձնուեր էին, թիւով 45 հոգի:
Անոնք տունէ տուն պարտելով հրաժեշտ կ'առնէին պանդխտութեան
դացողի պէս, որովհետեւ այս անգամ փախչիլ-գալը անհնար կը
թուէր:

Առտուն ժանտարմաները տղաքն առած տարին: Կիները մինչեւ
գետակ զանոնք ճամբու ղնելու վացին: Բաժանումը շատ եղբրական
էր այս անգամ ու բոլորն ալ բան մը գուշակելով կու լային: Ու երբ
այդքան անգէն կտրիճ, անտէր ցեղին սրբերը, ճիւղոր ժանտարմա-
ներու առջեւն ինկած կ'երթային, վշտահար կիներ հայ մօր հեծքը
ողբալով, բաժանումի շերեր կը կանչէին: Ու անորոշութեան դացող
տղաքը կ'ուզէին ետ նայիլ, անգամ մըն ալ տեսնելու ղէմքը մօր,
կնոջ ու սիրելիներու: Տեսքը սիրուն ծննդալայրին: Սակայն մտրա-
կը կ'իջնէր անոնց գլխուն, ու հրամանը կ'որոտար:

— Զապո՛ւգ իլերի, միլլէթ վէ վաթամ իսայիմլերի...

— Ի՛նչ աղուոր հունձք,— ըսեր էին ժանտարմաները, մեր
արտերուն նայելով:— Կը կարծեն թէ պիտի քաղեն զանոնք...

Ու կիներուն ալ, ճի հեծած ատեն,

— Սպասեցէք, քածեր, միւս անգամ ալ ձեզ պիտի տանինք...

Մեր տղաքը Տիվրիկ կը բանտարկեն այդ գիշեր: Անոնցմէ
դրպանի զմեկներն ալ հաւաքելով, ձեռքերը իրար կը կապեն: Յե-
տոյ Սվազի կողմը ճամբայ կը հանեն...

Յաջորդ օրը հարկահաւաք Շէվքէթ գեղ եկաւ: Քանի մը օր
մնալով հաւաքեց 1915ի տուրքերը ու մեկնեցաւ: Ան խորհուրդ տուած
էր որ մնացած փախստականներն ալ, եթէ կան, երթան յանձնուին,
քանի ուշ չէ: Այլապէս անոնց տուները պիտի հրկիզեն եւ իրենք ալ
բռնուելու պարագային պիտի գնդակահարուին: Այդ վախէն, լեռնե-
րէն իջնելով, դացին յանձնուեցան տարեց զինուորացուները: Այնքա՛ն
ազատ էին անոնք այդ օրերուն...

Շէվքէթ բարեհաճեր էր անգամ մըն ալ զիս հարցնել, թէ ար-

դեօք իրա՞ւ ղեզը չեմ, մեկնած եմ Պոլիս: Մենք քանի մը պատանիներ լեռ ելանք անոր վախէն, Ախտախ: Ու մեր փախտաական տղոց մէկ խումբին լքուած տնակն անցուցինք օրերով: Վարը, ձորին մէջ, ղեզը մեր անջիւ կ'երեւէր: Եւ աքաղաղներու ու շուներու ձայնը յատակ կը լսուէր սարին վրայ:

— Տղա՛ք,— ըսի ընկերներուս,— հոս պէտք է միս խորովել: Պէտք է մէկ-մէկ ձեռք արեխ կարել: Խարակապանցի Թուրքերուն դոմերն ու նախիրը լեռան ետին են: Զեղ տեսնեմ, ձեր քաջութի՛ւնը ցոյց տուէք:

Անոնք մէկ խօսքը երկուք ընել չտուին: Անմիջապէս առաջ նետուեցաւ տարեկիցս, Թաթրեհնց բրդոտ ու թխազմ Բարդէնը, միւսները ետեւէն: Ի՞նչ հրաշքի ընդունակ չէին մեր տղաքը, եթէ միայն տէր ու զէնք ունենային: Իրիկուան ընճուղի մը թարմ միսն ու կաշին առած դարձան: Գողին կրակը վառեցինք ետեւի կողմէն, ու միս խորովեցինք: Յետոյ արեխ կարեցինք: Մկրտուեցանք արկածին հետ:

... Ու ահա Կօչլրենց Վաղարշակը քաղաք կանչեցին: Ա՛լ ետ չեկաւ ան: Տարին նաեւ Քէլէյենց Ղազարը, ան ալ ունեւոր: Ղազար ամուն 1895ի ջարդերուն Պոլսէն Մարտիրոս փախած էր ու հոն կարողութիւն չինած: Երիտասարդ կիներ կը սպասէր ղեզը: Մահմանադրութեան վերադառնալով՝ երեք տղայ ունեցեր էր, բոլորն ալ դեռ պղտիկ: Զանոնք կ'առնէր ծունկերուն վրայ ու կը դնէր սրտին: Կինն ալ հպարտօրէն ճորճորալով ջուր կը կրէր աղբիւրէն տուն: Ան կը ցանէր հօրեանական արտերը: Կորստար երէններ ու կաքաւ: Կը սիրէր տունը, կիներ, զաւակները: Ու աշխարհը իրն էր...

Յունիս եկաւ: Ու Յունիսի գաղջ իրիկուն մը նորէն երկու ժանտարմա Քէլէյենց օտան իջան: Անոնք արհեստով ժանտարմա չէին, այլ Տիվրիկից ծանօթ Թուրքեր, որոնք նոր համազգեստ հագնելով զինուեր էին, մեզմէ հաւաքուած տեսակ-տեսակ զէնքերով: (*) Ու վերջը մեր գլխը, Թօփալ Մատօն, ցաւի հովիտին մէջ վայոզ կասկա՛մ, (**) կանչեց ժամուն կալէն.

— Լսեցէ՛՛ք, վաղը պէտք է 15-70 տարեկան էրիկ մարդիկը քաղաք երթա՛ն: Թագաւորէն Փէրման եկած է, իրենց պիտի կարգացուի: Իրիկունը նորէն տուն պիտի գա՛՛ն:

Նոր յուզումներ: Իրարանցում: Այս անգամ աւելի գարհուրելի: Մեր սիրտը կը ճմլուէր, մեր մորթը կը կծկուէր: Շունչներնիս կը բռնուէր: Կը տփուռնէիք: Կը դողայինք: Կը պղտիկնայինք, դառնալով աննշան բաներ: Ի՞նչ էր աս: Շատ մտածեցինք, սակայն մեր խելքը չհասաւ: Ի՞նչ էր աս նորէն, ի՞նչ...

(*) Ասկի դուրս բանտերը դատարկեցին՝ մարդասպան ու գող-աւագակ ազատ արձակելով, եւ անոնցմէ չէրէշական խումբեր կազմեցին՝ Հայերը բնաջնջելու համար: Թէ այս կրէշները ի՞նչ վայրագութեամբ գործի լծուեցան, կարելի է երեւակայել:

(**) Բու:

Երբ լուսցաւ, Քէյճենց Մանուկ աղան արտորանքով գործի պիտաւ: Հոս-հոս կը վազէր, կը հաւաքէր, կը ճամբէր բոլորը: Երբ արտնջային ու բարկանային՝ կը սառաէր.

— Եսն՝ ճագեր, ի՞նչ կու վախնաք, իշուր գացէք, վաղը ես ալ կու գամ...

Ժանտարմաները բնաւ անհանգիստ չեղան: Մանուկ աղան ողջ ըլլար: Մարդը փայլուն սոկեղօժ կոճակներով բարապանի համապետ սենէր, ու կանանց հովանոց կը բռնէր գլխուն՝ արեւէն պաշտպանուելու: Եւ մեծ հասակ ունէր... Ժողովուրդը սարսափով եւ անկարգ, նախիրի պէս զնաց, ինքնիրեն քաղաք լեցուեցաւ, հարիւր փաթտունըճինդ հողիէն աւելի: Ոմանք տխուր էին: Ուրիշներ կատակելով կը խնդային: Մէկը միայն, Կիրեղենց Կիրամուն, ըսեք էր մեկնած պահուն.

— Խնտացե՛ք: Իմմե՛նու ալ ետքի խնտայն է առ...

Երբ զեղին քով կիններ այրերուն վիզը պլլուած կու լան, ժանտարմաներէն մէկն ալ կու լայ, եւ զանոնք իրարմէ բաժնելով կ'ըսէ.

— Մի՛ վախնաք, մայրիկ, մի՛ լաք, նորէն ետ պիտի գան...:

Իմ հօրեղբորորդիս, Մանուկը, որ գինուտրութենէ աղատելու համար գեղին դպիր բրած էին, սենեակս գալով անկողնիս վրայ երկնցաւ եւ աչքերը դոցեց: Կը յիշեմ, ձմրան, անօթի ու ցրտահար ճնճղուկներ, կը մտնէին տուն եւ ա՛լ չէին ուզեր դուրս թոջիլ: Անոնց պէս, քովս ինկաւ ան, ինծի ապաւինած: Թերեւս կ'ուզէր մնալ ինծի հետ: Թերեւս միասին երթալ:

Մեր տան առջեւ, Խնկենց կալերուն վրայ ժանտարմա մը կեցած էր: Միջհաստակ էր ան, որսորդի տարազով, մինչեւ ծոռնկերը տողախ փաթթած: Գլխուն դրած էր ենկէրիցէ, եւ կոճակէն մաւղէրը կախ: Կուրծքին փամփշտակալը: Լուսն եւ հանգարտ էր ան: Քոփը կեցած էր մեր դրացին, Տոտոյենց Նիկողոսը, ու բոլոր ուժովը կը պոռար.

— Ա՛լ դպիր-մպիր չմնաց: Քոչենց Մանուկը ուր է, ա՛ն ալ թող գայ: Զէ նը ե՛ս ալ չեմ երթար:

Եղբայրս կը լսէր զայն, կը պզտիկնար ու կը կծկուէր:

— Թող գայ երթա՛յ, — կը պոռային անդիէն հարսները, որոնց տունը կը բնակէր ան, — ընտր համար մեր տո՛ւնը պիտի երին...

Նիկողոս կը ճշար դեռ՝ ձայնը մարելու աստիճան: Սպասելով որ անպայման մէջտեղ ելլէ Մանուկը: Ես կը վախնայի որ ժանտարմային հետ մեր տունը կորսէ:

— Մանուկ աղբար, կու կանչին, քեզ կ'ուզին:

Մէկ կողմէն միւսը դարձաւ, աչքերը դոց:

— Տոտոյենց Նիկողոսն է, աէյհա, Խնկենց կալերուն վրայ կայներ ժանտարմային հետ, ոտքը կոխեր քեզ կ'ուզէ: Զէ նը ե՛ս ալ չեմ երթար, կ'ըսէ:

Ա՛լ ճար չկար ուրեմն: Ա՛խ, չկար: Ելաւ կեցաւ իր մեծ հա-
սակով, չոր բարտիի պէս վտիտ ու զեղեւուն: Տնեցիներուն եւ Նի-
կողոսին պողտուքները կը մեծնային տակաւ: Գուռ ուղղուեցաւ՝
մեռած քայլերով: Ու չնչաց, ցածէն, սրտաբեկ.

— Մնաս բարո՛ւ... (*)

Ու այդ օրէն ասդին ա՛լ չտեսայ զինքը: Սպասեցի իր լուրե-
րուն: Յուսացի որ մէջտեղ ելլէ օր մը՝ փախտական: Բայց այլեւս
երբեք չերեցաւ ան...

ԶՕՐԱԿՈՉ, ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐ

Յիսունէն աւելի զինուոր տարած էին, նախապէս դացող ու
ա՛լ չդարձողներէն գատ: 165ի մօտ ալ տարեց ու պատանի դացին քա-
ղաք, ու ա՛լ չեկան: Գեղը կը մնային դեռ քառասունի մօտ տարեց
ու չափահաս, սմանք ծեր, միւսները պահուած, ու շատ մը պատա-
նիներ: Հարիւրի չափ այր ալ Պոլիս, Ամերիկա ու Եզրպոստ ունէինք:

Գեղին մարդաթափութիւնը, դացողին ու մնացողին անորոշ
բախտը, եւ զափթիյէներու կասկածելի յայտնութիւնները բոլորս
ահուզողի մասնած էին: Ծուարած վեր-վար կը պտտէինք դեղին
մէջ, մէկս միւսէն մխիթարութիւն եւ յոյս մուրալով:

— Ազրա՛ր, ի՞նչ պիտի ըլլանք, — հարցուց Աննա քուրուկս:

Բերդին քարը (**), ցոյց տալով իրեն, ըսի որ աչքն առնէ վար
թռչելով մեռնիլ, եթէ չուզեր շուններուն ձեռքն իյնալ: Ան Արաբկիբ
չհասած՝ մեռեր էր ճամբան, յողթանդամ թէեւ ու քաջառողջ:
Քուրս հովիւները փախած ըլլալով, լերան հօտերը դեղ բերուեցան:
Հօտ ու նախիր դեղին բոլորաթէն չէին հեռանար: Գեղացիները ա՛լ
չէին համարձակեր դեղէն դուրս ելլել: Մինակ Տոտոյեց հարսները
իրենց մէկ խոտաբը քաղեցին, եւ իրենց հարիւրը անց պտպը խո-
տը իշուն բռնալով տուն կրեց: Խոտերը կը չորնային: Քաղի ատենը
կ'անցնէր:

— Ինչո՞ւ պէտք է քաղէք, — ըսաւ զինուոր Օպէն, տարօրի-
նակ, սեւոնուա (թխադէմ) տերվիշ մը: — Եթէ մեր սպասածը ըլ-
լայ, (Ռուսը դայ եւ դրակ) Թուրքին քաղածը մեզի պիտի մնայ:
Հակառակ պարագային, մերինը անոր պիտի մնայ (մեզ պիտի ջար-
դեն): Հետեւաբար պէտք չէ քաղել:

Օպէյեց Օվակըր մեր ամենէն ինքնատիպ փախտականն էր:

(*) Ձմալի կարսները ուլ մը եփեցին տարին Մանուկ եղբորս: Պատառ մը
չառած՝ ետ տուեր է: Քեռայրս ալ լուր կը դրկէ անկէ հօրհորիս, որ կովերը փո-
խի իշու ենա, քանի որ ախար պիտի երթայ:

(**) Գեղին դիմացը, ժայռին տակը, երկաթէ շղթայ մը կայ եղեր, իբրեւ
թէ բերդի մը աւերակն էր ան: Կըսուէր թէ անկէ ֆարին միւս կողմը կար կա-
մուրջ մը, եին ատեն, երբ մեր տեղերը շէն են եղեր հոծ հայուքիւնով:

Նախ մինակ կը պահուէր : Դաշտերու մէջ, ճամբաներու քով, չյուսացուած տեղեր, խլուրդի նման իրեն տնակ շինելով հողին տակ : Լսած ըլլալով որ բոլորը դացած են, գեղը մարդ չէ մնացեր, չուղեց ամենէն խելացին ինք ըլլալ : Ու ահա գեղ իջեր էր, ու կ'երթար քաղաք : Ուրեմն հիւր էր : Դրացի մեղի : Հօրաքոյրս, որուն մօտ կը բնակէի հօրենական տանս մէջ, դայն տուն հրաւիրեց եւ հաւելիթէ պատառ եփեց : Օպէն քանի մը թուշ կերաւ : Ու կեցաւ : Ախորժակ չունէր : Խօսակցութեան ընթացքին իրեն յայտնեցի թէ այլեւս չեմ ուզեր գեղը մնալ, ու լեռ պիտի ելլեմ : Նպատակս էր Ընկերսը երթալ, կաղնի անտառներու մէջ, ու հոն տնակ մը շինել հողին տակ : Օպէն ինծի ուրիշ խրատ տուաւ, քանի որ մեր սարերուն վճուղին էր : Ինծի քարայրի մը տեղ բացատրեց Ախղախի ետին : Խրատեց որ հոն փոխադրուիմ : Ըսաւ որ երբ նորէն փախչի, պիտի դայ հոն եւ դիս գտնէ : Այդ ոյժ տուաւ ինծի :

Գացի դայս այն քարայրը, երկար փնտռելէ ետք, հեռուն, մեր ամալի լեռներուն ետին : Յած, նեղ, խոնաւ : Հաղիւ քանի մը հողի կ'առնէր : Ամէն օր կ'երթայի կը փորելի դայն ու կը լայնցնէի : Շուրջը կաղնիի եւ գիի անտառ էր : Փոքրիկ ու ցած, նեղ եւ կ'որ դուն ալ ամբողջութեամբ ծածկուած էր կուռ մասրենիով մը : Պէտք էր սողալով ներս մտնել : Կ'ուզէի հոն ուտելիք եւ ալիւր ալ ամբարել : Բայց տուն եւ դրամ չունենալուս համար չկրցայ :

Տիվրիկի Արսէնն ալ կը հալածեն ու կը փնտռեն եղեր : Ան փոխանակ փախչելով ինծի գալու, լուր զրկած էր որ տեղ պատրաստելով իրեն իմացնեմ : Ահա քարայրը : Բայց ան ալ չէ կրցեր սպասել : Եղրակացնելով որ իրեն նման ուտեալ մէկուն շատ-շատ քարտուղարի պաշտօն պիտի տան բանակին մէջ տեղ մը, դացեր յանձնուեր էր : Խեղճ Արսէն :

Մեր գեղը այլեւս գեղ չէր, այլ ցաւի, հեծեծանքի ճոր : Առտու-իրիկուն կոչնակը ժամէն կը կանչէր ու բոլորը հոն կը թափէին : Կու լային, գուլաները պատին կը ծեծէին : Կը համբուրէին գետին, պատ, դուռ, սիւն, խորան, ճաղ, ամէն ինչ : Քահանայ չկար : Ոչ ալ տիրացու : Ոչ ալ աղօթատոց : Բոլորը տարած էին : Ու Տիվրիկի մէջ գանոնք չիկացած երկաթներով կը տաղեն, կը շարշարեն ու կը մեռնեն եղեր :

Քաղաքէն դարձած ծերունի մը, որ հոն դացած էր Շարաթ, դործի, պատմեց թէ բանտէն հիւանդանոց պատգարակներով մարդ կը փոխադրեն եղեր : Հիւանդանոց թէ հանրային փոս . . . Անցնելով չուկայէն, անոնցմէ տկար հեծք ու տքալու ճայն կը լսուի եղեր միայն : Մէկուն համար Թուրքերը ըսեր են թէ Խուռնայիլ գիւղի Գամբէյիգն է : Կը տաղէին մարմնին բոլոր մասերը, այնպէս որ ենթական չկարենայ նստիլ, ո՛չ կայնիլ, ո՛չ պառկիլ : Ի՛նչ ալ որ ընէ, ո՛ր կողմ որ դառնայ, մինակ ցաւ դգայ ու տառապի, միայն մէկ փրկութիւն ունենալով, — աչքերը բաց հող մտնել : Ու գանոնք կ'լսամեռ փոսերը

կը թափէին: Այս տանջանքները թրջական հաճոյքէ եւ քինախնդրութենէ զատ զէնքի տեղ եւ զաղանիք իմանալու համար էին: Չանոնք կը կատարէր ԹԱՍՎԻՐԸ ԷՖՔԵԱՐԻ աշակերտ, Քէօր Ատիլ հարիւրապետը անձամբ, ծանօթ հայակեր, հինէն ի վեր, գիշերները, բանտին մէջ, ձեռքին կաշիէ ձեռնոց անցուցած: Ան Տիվրիկի զինուորական հրամանատարն էր: Յետոյ հազարապետ, փոխադրուելով Գանկալ: Հոն ալ սատկեցաւ շատ չանցած:

...Արեւը որ կը ցաթէր ամէն առտու սարերէն, եւ արեւը որ մարը կը մտնէր ամէն երեկոյ գեղին կոնակէն, մեզի տիրութիւն կը բերէր միայն: Գացողներէն մէկը ետ չեկաւ, ու մնացողներս ալ անորոշութեան մէջ էինք: Շշմած ու գլխիկոր, արօտէն փարախ դարձող մաքիներու նման, ուրուականներու պէս աննպատակ կը շրջէինք գեղին փողոցներէն վեր ու վար: Շուարած եւ մտայրիւ կը նայէինք անձկութեամբ Քաղքձորի ճամբան, ուրկէ ժանտարմաները կու դային: Անոնք ձիերը գետակն ի վեր կը քշէին անդամ մը, որպէսզի սմբակները լուացուին: Յետոյ ամուներուն մէջէն սուր խրխնջալէն, որ ասեղի պէս մեր սիրտը կը ծակէր, գեղ կը մտնէին:

Կը նայէինք դեռ գեղին դէմի սարերուն, ուրկէ կրնար խուժանը մութ ամպի պէս մեր վրայ թափիլ, ջարդելու մեզ: Ու կը նայէինք գեղին կոնակի կապոյտ քարէ քոսներուն, ուրկէ կրնային դրացի այլազգ գեղերը խուժել ու յարձակիլ: Ու գիշերներն ալ գեղին բոլորտիքը պահակ կը կենայինք պատանիներս, առաջին կսկծալի յայտնութիւններուն վտանգի աղբանջանը տալու:

Ու մինչ այս վիճակին մէջ յոյս մը եւ ապաւէն մը սպասելով երկինքէն կամ գետինէն, կը սատանէինք, յանկարծ, գեղին ըովի իր մենաւոր տունէն, հողվրտիքին տակ, ոստումով մը մէջտեղ նետուեցաւ դուշակ Մըջօն:

Անոր դորը ու առատ մազերը կոնակէն եւ ուսերէն կը թափէին անխնամ: Ու տարօրինակ դէմքը կը նմանէր ստոպապանքի յուշարձանին, որուն վրայ վհուկի պէս կը պլպլային սուր եւ տարօրինակ աչքերը: Ամէն գիշեր ան հողվրտիք կ'ելլէր՝ մեռելներուն հետ գրոյց ընելու, ու տեղեակ էր բոլոր Անդիի զաղանիքներուն: Ան կը մեկնէր ամէն երազ: Ու ինչ երազ որ տեսնէր՝ կը դառնար իրականութիւն:

— ... Երածս է տեյի, — ըսաւ ան, — երածս է տեյի, բոց մի մտաւ գեղին տկէն, Օլմիշենց տներէն առաւ, վառեց գեղը, քալեց վեր, Օվկոնց տներէն դուրս ելաւ գնաց... երածս է տեյի...

Մըջօնին երազը բռնի պէս գեղին վրայ վայեց: Գետին գարկաւ ու փշրեց ամէն ճղակոտոր յոյս...

Այսպէս սպասումով ու հատնումով, օրերը զացին իրարու ետեւէ եւ եկաւ Յուլիս ինը: «Ճարն Աստուծոյ մնաց» կ'ըսէին գեղացիները: Ու խօսք մէկ ըրին ողորբել անոր քէնը, որպէսզի պատիժը վերցնէ մեր վրայէն: Անոնք որոշեցին, մէկ-մէկ մատաղ առած, բոպիկ ոտքերով, գեղին ամենէն նուիրական սուրբին ուխտի երթալ:

Այդ Ախդիսու ամենէն բարձր կատարն էր, անունը Վերի Ռաք: Համակ ժայռ, շէկ ու կործր, ուղղաձիւղ ու անջրգի, ոտքով երկու ժամ: Յաջորդ օրը Կիրակի էր: Առտուն կանուխ բոլորը հոն պիտի երթային:

Մեր գեղացիները սովորաբար Շարաթ օրերը քաղաք կ'երթային տուտուրի համար: Այդ Շարաթ իրիկուն, շատ տարեց գեղացի մը, որ անկէ կու գար, նամակ մը բերու ինձի: Մեր գեղը Տիվրիկցի Թիւթիւնճի Սէրգիոսի տղան, Գրիգորը կը պահուէր: Փախստական սպայ: Ան իր թուրք ընկերներուն վերաբերումէն կասկածելով, Սվաղէն Կարին ճամբէն փախեր էր: Նամակը գրողը անոր պզտիկ եղբայրը՝ Խորէնն էր: Ան կը գրէր.

«Քաղաքէն ու գիւղերէն այր ու տղայ բանտերը կը լեցնեն ու գիշերները անձամօք ուղղութեամբ քամայ կը համեն: Այլ տուներէն դուրս չենք կրնար ելլել՝ բռնուելու վախէն: Կացութիւնը գարեհարսի է: Քառասուն ժամատարմա, որոնք քանի մը օր առաջ Օտուտ գացած էին, այսօր դարձան աւարով: Լսեցի որ անոնք այս գիշեր իսկ ձեր գեղը պիտի գան: Նորօրս հետ լեռ ելէք փութով:»

յը՛ կորէն

Նամակը կարդալուս պէս Գրիգոր էֆէնտիին վագեցի, որ յայտնեց թէ ճիշդ նոյնը իրեն ալ գրած է Խորէն, թելադրելով ինձի հետ լեռ ելլել: Որոշեցինք միմեկուն պէս հեռանալ: Ես անոր ըսի որ մեր ընկալարանը պատրաստ է լեռներուն վրայ:

Մեր տան դռներուն եւ դարակներու կոկիկ տախտակներուն վրայ, որոնք հայրս շինել տուած էր, մինչեւ այդ օր պատահածները գրեցի, որպէսզի երբ մենք կ'ատորուինք, եւ ուրիշներ դան Ռուսերուն հետ, կարդալով իմանան մեր անցուցածները: Որովհետեւ կը խօսուէր թէ Ռուսը առաջ կը քալէ, եւ ատոր համար ալ թուրքը մեզ կը տեղափոխէ: Իր վախէն՝ որպէսզի նախ ոտքի չելլենք, յետոյ՝ թուրքերը չկատորենք: Ու Սառգուի կողարածն ալ, Թէլպիս Մահմատ, պատմեր էր թէ Ռուսը կու գայ, կը կատորէ թուրքը, կ'իններուն ստիւքները ողջ-ողջ կը կտրէ, եւայն:

Ամէն մարդ ունեցածին լաւագոյնը հորերու մէջ պահած էր: Ես ալ հոր մը փորեցի մեր ախոտին մէջ, ուր հարսներս իրենց խութնի խուճաշները լեցուցին: Մեր տան հտեւի պատին մէջ ծակ մը կար, որ մինչեւ դպրոցին տակը կ'երկարէր: Չէինք գիտեր ո՞վ շինած է դայն, ե՞րբ, ինչո՞ւ: Հօրաքոյրս իր խանութին կտանները լեցուց անոր մէջ ու ծեփեց: Առջեւն ալ փայտ շարեց: Եւ որովհետեւ գեղացիք ամէնն ալ իրենց պահած դոյքերուն առջեւ փայտ կը դիպէին, թուրքերը յետոյ իմանալով դազանիքը, բոլորը գտան դիւրութիւնով:

Ու գեղ ինկայ, մնացածներուն, մասնաւորապէս Չարմանեց Կարոյին թախանձելով՝ որ լեռ ելլեն: Բոլորը մերժեցին: Բնաւ մէկը


չէր ուզեր իր հողահատորները լքելով հողին առնել-փախչիլ: Չէին ուզեր իրենց տունները վառել առլ: Ես կը յիշեմ որ հողս չէր՝ եթէ հօրենական տունս վառէին: Կեանքը անկէ առաջ էր:

ԳԵՂԻՆ ԱՔՍՈՐԸ

Յունիսի դեղեցիկ օրուան իրիկունն էր: Վերջին անգամ հօրենական տանս դուռը բաց արեցի մէջ նստայ ուռիին դէմ, ի լուր արբիւրին երգին: Հօրաքոյրս ճմուռ եփեց ինծի ու 15 օրուան պաշար դրաւ, հաց, պանիր ու ձուագեղ: Առի ատրճանակներս, ճերմակեղէն, ու ծածկոցներ՝ պակեկու համար: Երբ որ շալկեցի գանոնք ու դուռը ելայ, հօրաքոյրս, որ տարի մը վրաս գուրգուրացած էր, լացաւ, ու վիզս փաթթուելով ըսաւ.

— Քեռայրդ տարին, դուն ալ կ'երթաս: Ես երկու պրտիկներովս ի՞նչ պիտի բնեմ, եթէ վաղը բան մը պատահի:

Բացատրեցի իրեն քարայրիս տեղը, եւ ըսի որ եթէ բան մը պատահի, հոն դայ եւ գիտ կանչէ: Ես կը լսեմ ու կը տանիմ քովս: Համբուրեցի հօրաքոյրս աղջիկներն ալ, Արշալոյսն ու Նուարդը, եւ հեռացայ: Հօրաքոյրս կալին վրայ կայնած՝ հանէս կը նայէր ու կու լար: Փողոցը կանոն ու կուլիզար հարսաներու հանդիպեցայ,



Պալսոյ մէջ ծառայող

1. Տարիկեցի Օվակիմ պապան, հեղինակին մօրքուրին ամուսինը
2. Կակոյեցի Մաղաբելին հայրը, Մանասէին տէտկն

որոնք գիւղեգերը հօտը կթելէն կը դառնային, կաթով լեցուն կսլաւհներով :

— Ո՞ւր կ'երթաս, — հարցուց Պանոս հարսաս :

— Լեռ կ'ելլեմ : Ըս դիշեր ժանտարմաները գեղը պիտի կոխին :

— Հա՛, հա՛, հա՛, հա՛, վախկոտ, — ըսին անոնք ինծի ու ախորժակով խնդացին վրաս :

Ու այդ ժպիտով բաժնուեցանք իրարմէ : Իրենց քուրս քիրվան ալ, Սլօն, Տիվրիկէն վերադարձին, քանի մը օր առաջ, ըսեր էր որ իրենց ինչքերը առնեն ու բոլորը իր գեղը երթան միասին : Բայց անոնք Սլօն ալ ծաղրեր էին :

Ես շիտակ վարի ձերանենց տունը դացի, ուր կը կենար մեր սպան : Անոնք պանիր բռներ էին : Սեղանի մը վրայ կը ջարդէին պանիրին խոշոր դունտերը լեսեփ-լեսեփ (կտոր կտոր) ու զանոնք աղելով կարասը կը դնէին : Յետոյ վրան ջուր կը լեցուէր, ու ան կը դիմանար երկար ատեն : Պնդեցին ու պանիր տունին ինծի որ ուտեմ : Բայց ես կուշտ էի, պահեցի դայն ճանկիս մէջ ու զաղտնի նետեցի : Յետոյ, լեռներուն վրայ, ամէն անգամ որ անօթեհայի, այդ պանիրը կը յիշէի : Գրիգոր էֆէնտիին հետ հեռացանք գեղէն : Հասանք լեռ, ու թուրիերուն մէջ երկար փնտռելէ վերջ, քարայրը գտանք ու ներս մտանք : Մեզմէ վերջ կասկամ մը եկաւ ու սկսաւ քարայրին գլուխէն կանչել : Պառկեցանք դեռինը ու սկսանք մրափել : Ընկերս ինձմէ տարեց ու լաւատես, կը յուսադէր զիս շարունակ : Եղածները տեղափոխութիւններ են, կ'ըսէր, ռուսական արշաւին առջեւ : Ծուռով ռուս բանակները կը հասնին ու կը փրկեն մեզ : Ու հետուն, Տէրսիմի լեռներուն վրայ գոռացող ամպերը թնդանօթ կը կարծէր ան :

Ատունն կանուխ գողուցութեամբ քարայրէն ելլելով մտանք քովի թուփերը : Այդ ամայի տեղերուն վրայ մարդ-մարդատանք չկար : Վարը ձորերէն անցնող ջուրերուն աղաղակը կու գար մեզի ու հոգիերուն քնքոյշ ձայները : Դիտակով փոխն ի փոխ Վերի Ուղը նայեցանք մինչեւ կէսօր : Մէկը չէր երևար : Հետեցուցինք որ ժանտարմաները գեղը կոխած ըլլալու են : Իրիկուան շուքերը երկարելով ձորերը թափեցան : Քարայրին կռակի բլուրը ելլելով՝ սկսանք մեր շուրջը նայիլ դիտակով : Գրիգոր ժանտարմա մը նշմարեց, որ ձին վազցնելով դրացի Սառզու գեղը կ'երթար : Սառզու բուն սիւննի թուրք էր, մեզմէ կէս ժամ հեռու : Ուրեմն պարզ էր որ ժանտարմաները դեղն էին : Ատոր համար ալ ուխտի չկրցան երթալ :

Յաջորդ գիշեր կրկին նոյն տեղ թուփերը մտած կը խօսէինք ցածէն, երբ ընկերս ձայն մը առաւ : «Մարդ կու դայ», շշմոյց ան ու ե՛մէմիները ձեռքը, որպէսզի ազմուկ չհանեն, սկսաւ քարայր փախչել : Կանակ դարձուցի որ իրեն հետեւիմ : Հօրաքոյրս միաքս եկաւ : Ու կեցայ հոն, ականջս այն կողմը : Անո՛ւշ ձայն մը կոծկոծելով սարերը կը լեցնէր : Լացի, հեծքի ու ողբի շեշտով : Ինձի կը

Թուէր թէ անունս կու տայ : Սպասեցի , մինչեւ աւելի մօտեցաւ : Այն ատեն յտակ լսեցի . « Երո՛ւա՛նդ , եալրո՛ւմ . . . » : Զիս կը կանչէր : Հօրքուրս էր : Սարսուռ մը անցաւ մարմնէս : Այն կողմը վագեցի : « Հօրքո՛ւր , հոս ըմ , մի՛ վախնար , հոս ըմ , ըս քարափը եկօր » կը պոսայի , որպէսզի լսելով դանձ դիս : Երբ իրարու հանդիպեցանք , տեսայ որ ան բեռ չալկած է , փոքրիկները նոյնպէս :

— Խե՞ր է , հօրքուր , — հարցուցի անհամբեր :

— Ա՛խ , մեզ կու հանին , դա՛ռս , — հեկեկաց ան , ու վիզս պլլուելով սկսաւ հեծկլտալ :

Զիրենք դեղը պաշարող ժանտարմաներու շղթայէն փախցնելով բերած էր Պետեհնց Հաշաշ ամուն , որ անդապահ էր : Ան քարայրը չեկաւ միասին :

— Պիտի երթամ ըսաւ , տղաս , հազըք ըլլանք , վաղը ճամբայ պիտի ելլենք :

Երախտագէտ , հօրքուրէս գատ մէկ մէճիտ ալ ես իրեն տուի : Զեռքերը պազի , ծեր էր ան , ու դեղին ու դեղացիներուն բարեւ զրկեցի : Երբ կը բաժնուէր , կանչեցի ետեւէն .

— Հաշա՛շ ամու , ոտքդ պաղնիմ , քեզի հետ մինչեւ դեղին քով դամ , Մարանը փախցուր բեր , շան ձեռք չմնայ :

— Զ՛ըլլար տղաս , չեմ կրնար : Պաշարումը շատ խիստ է դեղին շուրջը : Մէ՛կը դուրս չեն ձգեր : Հօրքուրդ որ բերի , բախտ մըն էր յաջողեցաւ : Ա՛լ չեմ կրնար :

— Հաշաշ ամու , — ըսի ես հեծկլտուքներու մէջ խեղդուած , — երթաս բարով , Աստուած հետդ ըլլայ : Նորէն բարեւ խօսէ դեղին ու դեղացիներուն : Բարեւ Մարան հարսին , չմոռնա՛ս . . .

— Մնաք բարով , Աստուած հետերնիդ , մենք ալ երթանք տեսնինք դուռինիս ի՞նչ պիտի դայ . . .

— Բարի երթաս , բարի երթաս . . .

Ու թուփերուն մէջ շուտով անհետացաւ թշուառ ծերունին :

Հօրաքոյրս պատմեց թէ մեր դեղէն ելած գիշերը յիսուն ժանտարմա պաշարեր են դայն : Հոն մնացած այրերը իրենց են կանչեր ու անոնց յայտներ որ պէտք է փութով դեղը ճամբայ ելլէ , պաղթէ : Ու դգիրը , ցաւի հովիտին մէջ վայոզ կասկամ , այդ բոթն ալ կանչեր էր կալերուն պատին վրայէն : Սարսափահար բնակիչները սկսեր էին իրարու տուն երթալ , եւ մէկզմէկու վիզ պլլուելով կանչել ու լալ , ճիշդ ինչպէս մեռելի ատեն : Կաշառք տուեր էին ժանտարմաներու մեծին ու երկու օր մըն ալ մնալու արտօնութիւն տուեր : Ու երկու օր եւս հիւր էին եղեր իրենց հին բոյներուն մէջ՝ դանոնք յաւիտեան լքելէ առաջ :

Ժանտարմաները թէեւ կ'առաջարկեն որ դեղը խաւամանայ եւ չգաղթէ , բայց բոլորը մերժեր են այս բանը :

Գիւղին մնացած այրերն ու պատանիները դպրոց կը լեցնեն եւ կը բանտարկեն : Ու Տիվրիկի լուր կը զրկեն՝ թէ դանոնք տեղին

վրա՞յ սպաննեն թէ ճամբան: Պատասխան կու գայ որ ճամբայ հանեն: Ասոր վրայ աղաա կը ձգեն: Մեր տղաքը այս հարցումն ու պատասխանը կը լսեն, բայց չեն ուզեր փախչիլ: Հապա ինչպէ՞ս կարելի էր մայր ու քոյր անտէր թողուլ թուրքին ձեռքը եւ փախչիլ:

Մեր գեղին ամենէն մեծ եւ խառնտան տունը Պաշկոնք էին: Այս տունը ինքիւր մէջ պզտիկ գիւղ մըն էր, եւ ա՛յնքան բազմանդամ ու ճիւղաւորուած, որ մէկ տան մէջ իրարու աղջիկ կու տային: Մեր գեղին մէջ տարինե՛ր Պաշկոնց մեծերը միւտիւրութիւն բրած էին: Վերջին միւտիւրն էր եղած Ներսէս ամուսն, որ զեռ ողջ էր, թէեւ ծեր: Ու իրօք ալ Ներսէս ամուսին դէմքէն ազնուակամութիւն ու մեծութիւն կը կաթէր: Երկար տարիներու ընթացքին նոյնիսկ հեռաւոր չըջաններու վրայ չկար թուրք մը եւ Քուրտ մը, որ Պաշկոնցը իջած եւ անոնց հացը կերած չըլար:

Ու ճիւղ այս պատճառով Տիվրիկի կառավարութիւնը կը հրամայէ ժանտարմաներուն, որ խնայեն Ներսէս ազային: Թուրքերը անոր կը բացատրեն թէ արսոր չէ, այլ ջարդ, ու կը ստիպեն որ իսլամանալով իրենց հետ Տիվրիկ փոխադրուի: քանի որ զեզը պիտի ամայանար: Ազնուական մարդը ծանր սրտով կ'ընդունի առաջարկը: Հոն ետքէն թլփատելով Նուրի կը դնեն անունը: Թուրքերը կը փափաքին որ անոր զաւակներն ալ, (կինը նոր մեռած էր) երեք ամուսնացած աղջիկ, իրենց ընկերանան: Բայց Հերիքբան, Եւան ու Մարանը մեռելիւր կը նախընտրեն թրքանալէն ու կը միանան կարաւանին:

— Ձեր տեղափոխութիւնը միայն քանի մը օրուան համար է: Շուտով ետ պիտի դառնաք: Անոր համար մի՛այն քանի մը օրուան բաւելիք պաշար առէք միտսին: Մնացած դոյքերը եկեղեցի լեցուցէք: Երբ վերադառնաք, նորէն ետ կը ստանաք,— կ'ըսեն ժողովուրդին:

Ինչ իրեղէն որ նախապէս պահուած չէր, եկեղեցի կը լեցուի: Կարասնեն հօտ ու նախիր յանձնել որի՛ որ կ'ուզեն: Գեղացիները նախիրը իշու հետ կը փոխեն: Սառչու դիշեր-ցերեկ ցորեն, ալիւր, ձաւար, կորկոտ կը փոխադրէ: Նաեւ անասուն ու հօտ: Բայց մեր հօտերը անհաշիւ էին: Ու մեծ մասը կառավարութեան կը մնայ:

Հարսներն ու աղջիկները իրենց երեսները մուր ու մոխիր կը քսեն ու ցնցոտիներ կը հագնին՝ ազեղ երեւալու համար: Ժանտարմաները կը հարցնեն հետաքրքիր.

— Ո՞ւր են հարս ու աղջիկները, որ մեր վերջընթեր անդամ դալուն այնքան բազմաթիւ էին...

Գիւղը կային շարժելու անկարող ծերեր ու կոյրեր: Անոնց քով առատ հաց ու դուրբերով լեցուն ջուր կը դնեն եւ կը թողուն տուներուն մէջ: Կը մորթեն խատուաթիկ ուլերն ու սպիտակ գառնուկները: Կը մորթեն եղներ ու ընձուղներ՝ միտի ու կաշիի համար: Շուտաւարձ զեղին մէջ վեր-վար կը թափառին՝ արցունքը իրենց աչքերուն:

Կ'երթան հողվրաիք՝ մեռելներուն մնաք բարով ըսելու: Կը քրքրեն գերեզմանները ու կը կանչեն պառկողներուն.

— Մեռելներ, ելի՛ք, ելի՛ք, ելի՛ք, մե՛նք կ'ուզինք տեղերնիդ պառկիլ...

Յունիս 12ին պիտի դադրէր գեղը: Թէեւ պատրաստ, սակայն տուներէն դուրս չեն ելլեր. չեն ուզեր լքել զանոնք: Փանաւարմաները հրացաններու կոթով գանոնք կը ծեծեն, կը հայհոյեն, ու դոներէն դուրս կը վռնան բռնի: Ու դաշտէն, Ախալքի տակ, ուրկէ օրհնութիւն ու ընթաց տուն կը կրէին, դաշտի լայն ու քարոտ ճամբէն, ուրկէ երբեմն կարաւանները կ'անցնէին բոժոժներու զօղանջով, գեղը, անհուն կարաւան մը կաղմած, դէպի մահ կ'երթայ: Մէկ ծայրը Գարուս կը հասնի, լեռները, միւս ծայրը գեռ գեղն է: Հեծեալ ժամաւարմաներ կը հսկեն անոնց վրայ, որպէսզի չհախչին:

Մենք սիրտ չըրինք քարայրէն դուրս ելլել՝ անոնց դադրը տեսնելու: Կը ճմուռէր մեր սիրտը: Մեր գլուխները քարայրին պատերուն կը վարնէինք լալով ու ա՛խ քաշելով:

... Եկան սասանեան, հոռոճեական ու բիւզանդական բռնակալութիւնները ու վացին: Ու անոնք հոն մնացին: Եկան Արաբները ու դացին: Ու անոնք հոն էին գեռ: Եկան բռնակալ սուլթանները կարմիր: Ու անոնք դարձեալ մնացին: Մինչեւ եկաւ Գերմանիա ուսած եւ զերման փրկստոյիսութեամբ սնած մտաւորականութիւնը իշխանութեան գլուխ: Ու Գերմաններու գիտութիւնով եւ անոնց աչքերուն տակ, ըսան դարերը գերազանցեց: Ու մեր կիները դացին արիւնի ճամբաներէն, նորէն կանչելով, տուն տուած իրենց երեւակայութեան.—

«Պիպուլ մ'եկեր, ինչեր տներնուս վրայ,

Ըս ի՞նչ ցաւ է եկաւ ցախեղնուս վրայ.

Նէ՛ եկեր է, նէ՛ պիտի գայ մեր վրայ,

Թուրքէն կրակ մ'եկաւ, ինկաւ մեր վրայ...»:

ՄԵՐ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Տասը օր հոն, քարայրը մնացինք: Ջուր կը բերէինք իրիկունները վարը, ձորէն, մոշաներուն մէջի ջերմուկներէն: Կը սնանէինք օրական մէկ-մէկ չոր հացով եւ աղի իւղով: Յերեկները մերթ զգուշութեամբ դուրս կ'ելլէինք, թուփերը մոնելով արեւ առնելու: Դրան մասրենին իր ծաղիկները թափեց ու կանանչ մասուր կապեց: Գիշերները լուսնիայ լոյս էր: Արան արագալագ ջուրերը մոշաներուն մէջէն կ'անցնէին դոռուճ-գոշուճով: Սարի հովերը անոնց ձայները մեղի կը բերէին: Քարայրին շուրջ դիւրն ու կաղնիները կը սօսափէին: Կասկամ մը ամէն դիշեր անոր դուռէն կը կանչէր: Կասկամին ե՛րբը, սր կը յիշեցնէր ինձի մանկութեանս իրիկունները գեղին մէջ,

ուր մայրս հեքեաթ կ'ըսէր ինձի, որ քնանամ: Հիմա ամէն ճայն այդ ամայի ձորին մէջ մեզի վախ եւ տրամուլիւն կը բերէր, ու մենք հոն արդէն մեռելներ էինք:

Ու կը սպասէինք որ դեղէն դալով մեզ ետ կանչեն: Անշուշտ չար երազ մըն էր պատահածը, որ հիմա անցած ըլլալու էր: Պաղատեցանք հօրաբնոյն, որպէսզի Քրտուհիի տարազ մտած անգամ մը դեղ երթայ՝ լուր մը բերելու: Ան բաւական մօտեցեր էր դեղին: Հանդիպեր էր կորսուած աշծերու: Տեսեր էր որ հօտերը մինակ վերի թաղն էին դարձեր իրիկուան, ուր քանի մը տունէ ծուխ կ'ելլէ եղեր: Լսուեր է անկէ աղմուկ եւ թուրքերէն խօսքեր: Ուրեմն դեղը իրօք այլեւս չկար:



Շապին-Գարահիսարի ինֆնապաշտպանութեան կոխմերուն գլխաւոր դերակատարներէն մէկն է վահան Հիւսեան: Միւս երկու վահաններուն հետ կատարած իր յեղափոխական գործի մասին իբրեւ թերթօն հրատարակուած է ՅԱՌԱՋի մէջ «Երեք վահանները» խորագրին տակ:

Չախլէն աջ նստողները՝ վահան վարդանեան, վահան Հիւսեան, վահան Մեծատուրեան:

Ոտքի կեցողները՝ Արսեմակ Մեծատուրեան, Ոսկան Երկանեան, Հայկ Հապուլեան, Գառնիկ Ղուկասեան, որոնցմէ Ոսկան Երկանեան եւ Հայկ Հապուլեան ողջ են:

Օր մը մարդերու խումբ մը հաւաքուեցաւ քարայրին տակ, ձորին մէջ, ուր շուրի կ'երթայինք: Վերէն կը տեսնէինք դանոնք: Ու դող ելանք: Դժուար չէր մեր հետքը քշելով դանել մեզ: Բարձրաձայն կը խօսէին ու կը վիճէին: Բայց պայրին առանց մեզ դանելու: Քուրս էին:

Մեր հացը կը հասնէր: Հունձքը ահաս էր դեռ: Մտատանջուիլ սկսանք: Դրացի Սառու թուրք պիղին հօտը կու դար-կ'անցնէր մեր վրայէն: Գամփոռները կը հոտոտէին քարերը ու երկար կը հաջէին: Կ'ուզէինք հօվիւէն հաց գնել: Ծար մը կը մտածէինք:

Հօրաքոյրս Տօղանի մէջ քիրվայ մը ունէր: Որոշեցինք անոր երթալ: Եւ որպէսզի շատուոր չըլլանք, Գրիգոր առայժմ քարայրը պիտի մնար ուտելիքներով միասին: Ու իրիկուն մը հինգս մէկ քարայրին կոնակը, մեր գեղին կողմը, Ուլուն Փուղարին աղբիւրը իջանք: Հօրաքոյրս ըսաւ.

— Ա՛խ, բախտ: Ազատէինք սա ցաւէն, գայի հոս, կաթսաները դնէի ու մատաղ խաչէի: Հոս միասին ընթրէինք:

Ես ըսի Գրիգորին.

— Եթէ հիւրասիրուինք, քանի մը օրէն կու գամ քեզ ալ կը տանիմ: Եթէ բնաւ չդառնամ, գիտցիր որ սպաննուած եմ ու գլխուդ ձարը նայէ:

Գրիգոր այնքան յուզումով լացաւ, որ բնաւ պիտի չմոռնամ:

Մթնեց: Ու ճամբայ ելանք: Հասանք ճամբան, ուրիշ դեղացիները անցած էին: Հոն ալիւր թափած էր: Փղձկեցանք ու սկսանք արտասուել: Քաւեցինք վախով արտէ ու դաշտէ, հունձքը ճեղքելով: Հօվերը մեղի կը բերէին դիակի հօտեր ու մեր քիթերը բռնած կ'երթայինք: Տօղանի եւ մեր գեղին սահմանը Խարալլուի անտառները հասանք: Ատտուան սղոխները ելան: Լուսնկային կոտորը փայլիլ սկսաւ: Թուփերը մտանք ու մրափեցինք:

Երբ լուսցաւ, Հօրաքոյրս Քրտուհիի տարազ մտած, պզտիկ աղջկանը հետ դեղ իջաւ: Երկար սպասեցինք լուրի մը: Գեղեցիկ ու թարմ կաղնիները մեր վրայ շուք կու տային: Իրիկուն ղէմ ձայն մը առի, որ վարը, ձորէն, մեղի կը կանչէր.

— Տէ կելիմ հա, տէ կելիմ հա, տէ կելիմ հա՛՛՛, պէն պուրտալըմ, գորգուլըմ, կելի՛՛՛ն...

Ուրախացանք: Կարծես երկինքէն լոյս իջնէր վրանիս: Հօրաքոյրս պահելըգին, Մէրճանի ձայնն էր: Փրկուեցանք: Անմիջապէս մեր դոյքերը առած արազ ձոր իջանք: Հոն երկու հօգի, խոշոր սուրբեր իրենց ափերուն մէջ, վրաս յարձակեցան: Զանոնք կ'ուզէին սիրտս մխել, ես ճշարով դէպի Մէրճանը կը վազէի, աղաչելով որ զիս աղատէ անոնց ձեռքէն: Մէրճան սուտէն սաստեց զանոնք, որպէսզի արիւնս չմանեն, «քանի որ անա՛նկ ալ ողջ պիտի չմնայի, անա՛նկ ալ»: Սակայն ամէն դնով զիս մորթել կ'ուզէին: Յետոյ դոհացան մեր գոյքերը առնելով, եւ ինծի ըսին.

— Ագլլար՛դ, ինչո՞ւ պարապ տեղը փախչիս ու հոս-հոն իյնաս : Կը յուսածս փրկուելի : Կառավարութիւնը տարածը կը ջարդէ ու ջուրը կը թափէ (կէօթիւրտիւղիւնի դըռար), դո՞ւն պիտի ապաստիս :

Այս խօսքերուն վրայ աչքերս մթազնեցան եւ ապուշցայ : Առաջին անգամ էր որ հաստատապէս ջարդ ըլլալը կը լսէի :

— Զեր գեղին բնակիչները ամբողջ Եփրատ թափեր են : Հիմակ ալ Տիվրիկը կը հանեն : Գացէք Տիվրիկի յանձնուեցէք, ուրիշ փրկութեան ճամբայ չկայ ձեզի համար :

Ես խոտացայ որ այդպէս կ'ընենք, մինակ զիս չմորթեն : Ու կը դողայի : Մէրճան՝ հօրաքրոջս հին մէկ շրջագրեստը հազցուց ինծի, պիտուս ալ լաթ մը փաթթեց ու գեղ տարաւ մեզ, որպէսզի այր մարդ ըլլալս չգիտցուի :

Մեր քով, անտառին տակ, ցորենի արտերն էին : Ջուրը անոնց մէջ մագնլով կը ջրէր : Տաք եւ անուշ օր մըն էր . . . Ա՛խ, ի՛նչ տաք եւ անուշ ու պայծառ ամառ օր մըն էր : Ուրիշ տարիներ այս եզանակին գեղին դեռ կը լողնայինք տղաքս : Հիմա արեան դետեր . . . կը քշէին մեր յօշոտուած դիակները . . .

Հօրաքոյրս Մէրճանի տան մէջ անձկութեամբ եւ անհամբեր մեզի կը սպասէր :

— Ո՞ւր մնացիք, դառս, — հարցուց ան :

— Ա՛խ, հօրքուր, ըստեք իս կու դարնին, — ըսի, եւ հեծկլտալ սկսայ :

Ան զիս զրկեց ու սիրտ տուաւ : Այդ պահուն կին մը կար հոն, մանուկ մը դիրկը : Մեզ մեղքցաւ . . . ետ-ետ դնաց, ու սեմին վրայ ձեռքը դետին քսելով երեսը տարաւ, փառք տալով որ ինք մեր վիճակը չունի : Ու մեկնեցաւ : Մէրճան մեզի սեր եւ կակուղ հայ հրամացուց : Մերը մեր գեղը ամենէն յարզի բանն էր : Թէեւ անօթի, բայց չկրցանք ուտել : Մէրճանի պնդումներուն վրայ մէկ պատառ առինք :

Մէրճանի դեղը, Տօղան, 16 տնուօր էր, շինուած Ծապկան Չայ դետակին վրայ, անտառին դիրկը : Անոնք աղքատ էին եւ մեր գեղը մուրալու կու գային յաճախ :

Այդ գիշեր անօր տղան, Զէյնալը, քաղաքէն դարձաւ քանի մը էշ բեռցած Հայու կողպուլաներով : Ամուսինը, Պայրան, ժամտարմա էր : Գեղը խնջոյքի մէջ էր : Մեզ մոռցան եւ կողպուլար կը բաժնէին իրարու մէջ :

Գիշերը Մէրճանի տունը պառկեցանք : Մութնուլուսուն ան մեզ անտառ զրկելով ըսաւ որ յետոյ ուտելիք կը բերէ : Հօրաքոյրս խորհուրդ տուաւ որ փախչինք : Ու Հաւնա դացինք : Հաւնա քուրա էր : Ան իր արօտներով, անտառներով ու լեռով, Գոհանամ՝ ծախու էր : Եւ իմ փափաքս էր դայն գնել : Գեղին ճիշդ մէջտեղէն ստոի պէս պաղ ու առատ աղբիւր մը կը հոսէր, անմահական ջուրով : 1895ի կոտորածներուն մայրս, միւս-մինակ, ընտանիքէն մոլորելով, հոս կ'ապաստանի լեղապատառ, մէկ ամսուան խանձարուրս զրկած : Զիս օ-

բորոց դրած կ'օրօրէ: Կը դստնայ որ երեսուրթս դողցեր են: Արցունքով կը հեռանայ անկէ, երթալ մեր պապերուն միանալու համար: Հիմա, անկէ քսան տարի ետք, մայրս թաղած օտար հողերու մէջ, նորէն շարգերէն, Հաւնա կ'ապաստանէի: Տողանէն կէս ժամ հեռու էր ան: Ես թուփերուն մէջ մնացի, ու հօրաքոյրս դեզ իջաւ պղտիկներով: Գեղացիները կ'ուղեն գինքը բռնել, բերելով որ հետը էրիկ մարդ կայ անպայման: Եթէ ոչ կիւն մը ի՞նչպէս մինակ լեռները պիտի իյնար երկու անշափահասներով: Ան լացեր, աղաչեր է որ մինակն է: Աւ քիչ մը հաց ու չորթան առած, փախչելով ինծի եկաւ:

— Ըստնք ալ ըն պտուղն ըն, դառս, — ըսաւ ան: — Ետ երթանք, Գրիգորին քով, մաղբրան: Ըստնէ խեր չկայ:

Իողահար Շապկան Չայ իջանք ու սկսանք ետ-ետ նայելով անտաններէն փախչիլ ցերեկով: Երէկուան դէպքին ազդեցութեան տակ դեռ անդամներս թուլցեր էին, եւ վախէս չէի կրնար իսկ քալել: Շուրջս մարդ կը տեսնէի, ու մեր շունչին ու քայլերուն ձայնէն կը դողայի: Մերթ կեցած ականջ կու տայի՝ թէ արդեօք մեր ետեւէն եկող կա՞յ:

— Հօրքո՛ւր, կու դա՛ն, մեզ կու բռնին...

— Ձէ, գառս, չէ, բան չկայ, մի՛ վախնար: Հովն է ան: Թուփերուն չչնկոցն է ան, — կ'ըսէր: Աւ ձեռքէս բռնած՝ քաջութեամբ կ'առաջնորդէր զիս, պղտիկները մեր ետեւէն:

Գրիգոր դողով եւ կսկիծով տեղեկացաւ անցուկարձին:

Յաջորդ աւտուն քարայրին շուրջէն ստնաձայներ լսեցինք: Մեր վախէն դեղնեցանք ու մեր շունչերը բռնեցինք: Մեր տեղը դիտցեր էին: Ա՛լ ըմպանք: Հաւնացիները մեզ հետապնդելով մեր տեղը գտեր էին: Աւ հիմա պաշարուած էինք: Մէկը մինչեւ մօտ դալով՝ քարայրին քով կեցաւ: Ձէր կրնար դուռը դռնել: Այնքան անյայտ էր ան:

— Երուանդ, — կանչեց յանկարծ:

Մենք մեր վախէն քար կտրած՝ իրարու երես կը նայէինք:

— Երուանդ, — կանչեց դարձեալ:

Արդեօ՞ք: Ծանօթ ձա՞յն: Այս, Դանէլին, Արզեհց Դանէլինք: Խնամիխ տղան: Դրացիս: Մանկութեանս ընկերը: Անմիջապէս ձայն տուի ներսէն: Ան մօտեցաւ: Իուռը բացի, եկաւ ներս: Ան ԱՅ տարեկան, կայտառ ու կորովի հովիւ մըն էր: Մինակ: Մերկ, բոպիկ, դեղնած, գլխաբաց, երեսները իրարու միանալու չափ ներս գացած: Աչքերը թաղուած խոր փոսերու մէջ: Դանիէլ անճանաչելի դարձած էր: Աւրուական: Անմիջապէս հաց ու ջուր տուինք իրեն: Աւ երբ կերաւ ու քիչ մը կազդուրուեցաւ, սկսաւ պատմել Խուռնափիլի բարբառով: (*)

— Մեզ գեղէն համեցին: Այդ օր կառմառ Չայը հասաւմ, հոն

(*) Չայն կու տամ մեր աշխարհարարով:

մնացին գիշերը: Պագոյենց Թեյնեյի կնիկը կամնա գնաց՝ իր քրքացած քրոջը (շատուց քրքացած էր): Յետոյ ան եկար մեր գեղին աղուոր հարս աղջիկները ուզեց, որ կամնա տանի քրքացնէ, անոնք չգացին: Միւս օրը արեւն առաւ քամրայ ելանք եւ Բենկա հասանք: Այնտեղ, կամուրջին վրայ, ժամատարմաները էրիկմարդիկը, անպիտ աղաքը կիներէն գատեցին, Բենկայի ժամը լեցուցին: Քելէյենց Օսէվի ամուն, որ հիւանդ էր, իշուն վրայ կծկտած, չհանչցան, էրիկմարդ ըլլալով միայն ա՛ն անդին անցաւ: Ժամատարմաները կիներուն ըսին,— Դուք գացէ՛ք, անոնք վերջը կու գան, ձեր ետեւէն կը հասնին:

Ժամուն մէջ բոլոր էրիկմարդիկը, երեսուն հոգի, մեզմէ գատեցին: Առաջ լաւ մը կը խուզարկէին, կը կողոպտէին: Ետքը բոլոր լաքերը կ'առնէին, ամենէն վերջն ալ չուանալ ձեռքերը իրարու կը կապէին եւ ետեւէ-ետեւ կը շարէին: Ժամատարմա մը անոնց կանաչէն մարքիւնի գնդակը կը սեղմէր, մէկ գնդակով բոլորը մէկ (8 հոգի) կ'իյնային: Դեռ չմեռած, սոքերէն քաշելով ջուրը կը նետէին:

Այսպէս երեսուն հոգին ալ տարին զարկին: Ո՛վ որ պիտ չուներ՝ չզարկին: Մինա՛կ Զարմանեց կարօն, որ պիտ ուներ, չզարկին, որովհետեւ ժամատարմաներուն շատ բարեկամ էր, անոնց օղի կը հրամայէր անընդհատ:

Երբ կարգը Թաքթեց Նագար ամին եկաւ, ան քուստ տեղէն ելաւ, տղան Զարէն գրկեց պագաւ, ըսաւ որ մայրիկին բարեւ խօսի, մեզի ալ մնաք բարով ըսաւ եւ դուքս ելաւ: Իսկ համպարեց Մատամուն շատ լացաւ, աղաչեց որ զինքը չտանին զարնէն:

— Աման, Աստու սիրուն, իս մի զարնէ՛ք:

— Քալէ՛, Աստուածդ ալ... քեզ ալ,— ըսաւ ժամատարման,— հրացանի բունով ետեւէն հրեց՝ դուքս տարաւ: Այն ատեն հօնա մը ժամուն մէջ ծնրադիր նամագ կ'ընէր: Մեզի վախցուցին որ չլանք, եւ կիներուն ալ ըսին որ ձայն չհանեն, այլապէս սպառնալով որ զիրենք ալ կը զարնեն: Եղինձով փիլաւ եփեր էին, ամենուս ալ տուին: Մենք չէինք կրնար ուտել: Բռնացան քէ պիտի ուտենք, մենք ալ վախէն կեքանք... (*)

Մենք սարսափահար կը լսէինք այս պատմութիւնը: Զարդն էր սա, որու մասին ա՛լ կասկած չունէինք:

Զարդէն վերջ տղաքը կ'երթան կը հասնին կիներուն: Անոնք կը հարցնեն թէ ո՞ւր են այրերը: Տղաքը կը պատասխանեն թէ ես տարին զանոնք, Տիվրիկի: Սակայն երբ Թաթրենց Զարեհին մայրը կը հարցնէ տղուն,

— Տղա՛ս, հայրիկդ ո՞ւր է,— Զարեհ մօրը վիզը կը փաթթուի ու կու լայ...

Օղիի չիշերն ու գաւաթը ձեռքը, աղանդերը գրպանը, կարօն,

(*) Եղինձը մեր տեղերը հոգեհացի համար կ'եփէին մեռելի տէրերը:

Զարմանեց զարմանալի՛ Կարօն, կարծիր մագերով տղան, «Սանճի-նըն օղլի» ծանօթ անունը, կը դիտուցնէ, կը սիրաշահի, կը մեղմէ դադանութիւնը ժանտարմաներուն, որպէսզի հարսի ու աղջկան պատիւը չաղարտեն: Ա՛խ, հրաշալի՛ տղայ: Մահուան կամուրջներէն ողջ անդին կ'անցնի, ետին ձգած դիակները ուրիշներուն: Երէկ պահապան հրեշտակը դիւզին երիտասարդներուն, այսօր հրեշտակն ու աստուածը երիտասարդուհիներուն:

Բենկայէն Ակն երեք օրէն կը հասնին: Ճամբան, Տամարեց Եայլան իր ամուսնին, Պիսթիին դիակը կը ճանչնայ ջուրերուն մէջ: Քանի մը կրներ իրենք-դիրենք Եփրատ կը նետեն, որ կը յորդէր հայկական դիակներով: Բենկայէն անդին, ճամբուն վրայ, կը տեսնեն ու կը ճանչնան դիակը Բիծայի հօր, Նարինին:

Ակնայ կամուրջին վրայ մեր աղաքը կը դատեն որ սպաննեն: Տիվրիկցի ժանտարմաները կը մեղքնան ու կ'արգիլեն: «Թող, — կ'ըսեն, — քիչ մըն ալ առաջ երթան, յետոյ սպաննենք:»

Ժանտարմաներէն մին մեր աղոց խորհուրդ կու տայ որ ետ չփախչին, այլ առաջ երթան: Բոլոր թուրք դիւղերուն հրաման տրուած է եղեր բռնել սպաննել, ո՛ւր որ Հայ մը տեսնեն: «Դէպի առաջ աւելի ապահով է՝ քան դէպի ետ», — ըսեր է ան:

Եւ սակայն հայրենիքի կարօտը խրատին կը յաղթէ: Ակն չհասած, մեր աղաքներէն խումբ մը ետ փախած է եղեր: Բենկայի Քարը անոնք կը հանդիպին բենկացի փախստական աղոց, որոնք Եփրատի մէկ ափէն միւսը չուան կապելով՝ մեր աղաքը կ'անցընեն դեռտէն: Հիմա կը սկսին ուրիշներ ալ խումբ-խումբ ետ փախչիլ:

Երբ Ակնը կ'անցնին, Զարմանեց Կարօն ալ կ'ուզէ փախչիլ: Ան, Արզեց Դանէլը, Խնկեց Վահանն ու Առաքէլը եւ Թաթրեց Զարեհը միասին կը փախչին:

Անօթի ու ծարաւ կը քալեն անոնք Ակնայ ամայի ու անջրգի քարերէն, տաք արեւին տակ, մեր դեղին ուղղութեամբ: Բոլորովին ուժաթափ կը հասնին Զալթայի Զայր: (Տիվրիկէն անցնող Գայլ դետը, որ Եփրատ թափած տեղ այս անունը կ'աննէ):

Հոն թուրք քաղուորներ գիրենք կը հալածեն ու կը բռնեն: Ու կ'ուզեն կապել անոնց ձեռքերն ու ոտքերը: Կեանքի ու մահուան ոգորումն է որ կը սկսի անօթի, հիւժած ու անզէն մեր աղոց ու թուրքերուն միջեւ:

Դանիէլ ամենէն առաջ փախչելով՝ դիմաց կ'անցնի: Թուրքերը Խնկեց եղբայրներուն մէջքի դօտիովը գանոնք իրարու կը կապեն, կը խողխողեն ու ջուրը կը նետեն: Կարօն ու Զարեհը կը պարզարին եղեր թուրքերուն հետ, երբ Դանիէլ փախեր-հեռացեր է, «բայց, — աւելցուց, — անոնք ալ անպայման սպաննուած ըլլալու են, քանի որ չեկան ու չհասան ինձի»:

Մեր քարայրը ախ ու վախով լեցուեցաւ:

Հարցուցի իրեն թէ մեզ ինչպէ՞ս դռաւ:

— Ես լեռն էի, — ըսաւ, — մեր հորէնին եւ ուրիշ տղոց հետ, երբոր գիւղը համեցին: Մենք գիտէինք որ դուռն Ուլուն Փուղարին ետին փարայր մը պահուած ես, եկանք փնտոեցինք քեզ՝ չգտանք: Ու գացինք ժողովուրդին հասանք ու յանձնուեցանք: Միւս օրը մեր հորէնն ալ զարկին Բենկայի՛ մէջ:

Պորէն Ամերիկայէն գիւղ դարձաւ, երբ ամէն մարդ զինուոր էր այլեւս: Անոր հայրը, Պուլուն, յանդուզն սրտորդ, երբ խմացաւ տղուն գալը, հրացանը շալկած Ախգախ բարձրացաւ սրսի, ու վայրի երէ՛ մը շալկած տղուն ճամբուն վրայ իջաւ: Գիչերը գոյն գիւղ մտցուց զաղոնի եւ երէի խորովածով զալուստը տօնեց: Յետոյ տղան զրկեց իր լերան գոմը պահուելու, առանց զեղին մէջ երեւալու: Կառավարութիւնը լուր չունեցաւ իրմէ ու ան մինչեւ աքսոր փախստահան լեռները մնաց: Եթէ զիս գտնէր, պիտի չձգէի որ երթայ յանձնուի անչուշա:

Հարցուցի Դանիէլին թէ հիմա՞ ինչպէս եղաւ որ քարայրը գտաւ:

— Ուլուն Փուղարին աղբիւրը ջուրի գացած էի, անկէ՛ ձեր հետեւերը փշելով մինչեւ դուռ բերի ու հաս կորսնցուցի:

Դանիէլէն խմացանք որ մեր Քարը, Սխտորին Քոան, բաւական փախստական տղայ ունինք եղեր:

Խորէնը, — ըսաւ Դանիէլ, — մեծ գարատաղ ատրնանակ մը ունէր եւ գայն պահեց Ախգախի փարերուն մէջ, երբ-ալ յանձնուելէ առաջ: Շատ խնդրեցի որ երբանք ատրնանակը գտնենք: Ան հաւանեցաւ, քանի որ խնամի էինք ու իրարու հետ այնքան սիրով: Յաջորդ առաւուն իսկ Ախգախ ելանք գեմքը փնտոելու: Զեմքը պահած տեղին վրայ ասդի՛ն դարձուց, անդի՛ն դարձուց զիս Դանիէլ, բան մը չգտանք: Չկայ, տարած ըլլալու եմ կ'ըսէր: Զարմանեց Կարօն ազատած ու գեմքը անկէ՛ առած-գացած է, որովհետեւ պահած տեղը անոր ալ բացատրած է եղեր: Մինչ ես ծռած անգամ մըն ալ կ'ուզէի փարերը քրքրել, մէյ մըն ալ գլուխս վերցուցի որ Դանիէլ քովս չկայ: Դանիէլ, Դանիէլ, կանչեցի, ոչ մէկ պատասխան: Նորէն կանչեցի, հոս-հոն նայեցայ, մա՛րդ չգտայ: Մեր գեղին խառն հոտն ալ այդ պահուն ինձմէ՛ քիչ մը վար կ'արածէր: Թուրք հովիւներուն եւ անոնց ընկերացոյ գինեալ ժամտարմային ձայները կը լսէի: Վախէս սկսայ ստակալի գողալ ու կոնակս դարձուցած փարայր գացի: Ի՞նչ անխոհեմութիւն: Գոնէ՛ տեղ մը պահուելի ու մքնելէ ետք փարայր դառնայի: Հապա եթէ՛ մէկը զիս տեսնէր ու մեզ բոլորս բռնէ՛ր: Օր-ցերեկով փարայր դարձայ, բայց Դանիէլ հոն չկար: Հասկցայ որ ան իր բուրս փրկային, Վարամանի գացած ըլլալու էր: Որովհետեւ հոն երբ-ալու խօսք կ'ընէր: Ես կ'ուզէի որ մեզ ալ տանի, ան պարզապէս երեսը առած փախաւ, մեզ լքելով լեռան վրայ:

Ի՞նչ ընել: Մենք քարայրին մէջ խորհուրդ ըրինք եւ սրուեցինք

որ Գրիգորն ու ես մեր Քարը երթանք՝ աղաքը փնտռելու: Եւ եթէ գտնենք, բոլորս ալ անոնց քով փոխադրուինք:

Նոյն դիշերն իսկ ճամբայ ելանք մենք՝ հօրաքոյրս ու աղջիկները քարայրը ձգելով: Քարը մեր եղած տեղէն բաւական հեռու էր, ճամբան դժուար ու ժեռուտ: Ի՞նչ գէշ դիշեր մըն էր ան, առանց լուանկայի: Քանի մը քայլ անդին հնար չէր տեսնել:

Եթէ յանկարծ մեզ բռնէին, Գրիգոր էֆէնտիին անունը Ալի, իմինս Նուրի, Թուրք էինք մենք: Իրար ալ ճամբու ընթացքին այդ անուններով պիտի կանչէինք:

Անցանք մեր գեղին մօտէն, ուր վերի թաղը լոյսեր կը վառէին: Գեղին դուրսը շուները սկսան երկար-երկար հաջել:

Երբ Քար հասանք, վարէն ջուրերուն գոռում-գոչումը լսեցինք: Ու մեծ դժուարութեամբ ու գլորելով ջուրին վրայ իջանք լուսադէմին: Հոն տեսանք քարի քիւերուն տակ սաղին-անդին փոքր խումբերով աղաք, որոնք կը քնանային: Երբ մէկ-քանին արթնացան, ըսին թէ երեսուն հողի են եւ մեզ տարին Սրապեան Մանուկ աղային, որ ազատեր հոն ինկեր, եւ հոն ալ մեծաւոր էր եղեր: Տղաքը բոլորն ալ աղտի եւ ոջիւի մէջ կը լողային: Տժգոյն ու սարսափահար, կը նմանէին մեռելներու: Սմէն մէկը ընտանիքի մը մնացորդն էր: Աննք դիշերները գեղ կ'երթային՝ ալիւր բերելու եւ քանի մը կիներ ալ հոն հաց կ'եփէին:

Կիներուն մէջ էր Հաճիենց Նունիան, տունը մնացած աղջիկ մը, տարեց: Ո՛չ տղիկ էր ան, ոչ ալ անխելք, միայն շատ պահանջկոտ, եւ ատոր համար ալ չէր ամուսնացեր: Անոր սիրահարած էր վերջերս Օվկոնց հովիւ Սաչօն, որ տարին հաղիւ երկու անգամ լեռնէն գեղ կ'իջնէր: Սաչօն ի վերջոյ խելքն ալ կորսնցուց, սրովհետեւ Նունիան անոր քիւն կը խնդար:

Շատ գուարթ էր Նունիան: Վիղէն աղուոր օդեր կախած, գլխուն ալ կարմիր եազմա, նոր հարսի կը նմանէր: Ու կը մտնէր շարունակ ձերանենց Մարտիրոսին քովիկը, որ երիտասարդ էր, նոր եկած Ամերիկայէն, դրամի ալ տէր: Հիմա Մարտիրոսին կիներն ու գաւակները կորսուած էին, եւ ան Նունիայինն էր այլեւս...

Չարմանենց Կարօն ազատած ու Քարը հասած էր, մէջքին կապած Արդենց Խորէնին գարատաղը, որ իրօք մեզմէ տաաջ հաներ էր Ախալաբէն: Կարոյին հետ ազատեր ու հոն հասեր էր Թաթրենց Չարեհը, փոքրիկ սուր մը ձեռքը, տակաւին արիւնյուտայ: Այդ սուրով Թուրքերը կ'ուզեն եղեր սպաննել զինքը: Այդ սուրը խլեր է անոնց ձեռքէն ու իրարու հետեւ երկու Թուրքերն ալ շանտատակ գետին տապալեր, մխելով սուրը երկուքին ալ սիրար: Չարեհ սակայն իր հօրը կսկիծէն ու տեսածներէն ապուշցած էր ու կու լար շարունակ: Ան իր ծնողքին մէկհատիկն էր եւ անոնք իր վրայ շատ կը գուրդուրային:

Բայց ուրի՞ց ուր Մանուկ աղան հոս, եւ մի'միայն Մանուկ

աղան, որ Տիվրիկի գացած յանձնուած էր: Ան ալ կը բանտարկուի ուրիշ մեր զիւղացիներուն հետ: Գիշեր մը բանտէն կը հանեն զինքը մեր զիւղէն քանի մը մեծաւորներու եւ ուրիշ շատերու հետ ու կառավարութեան շէնքին դահլիճը կ'առաջնորդեն: Կառավարական շէնքին տակի՛ յարկն էր բռնաւ, եւ այս առանց նշանակութեան չէր թուրքին տիրապետութեանը համար:

Դահլիճին մէջ իրենց կը սպասէր Քէօր Ատիւ հարիւրապետը, հայտատեաց ու մարզակեր հրէշ մը: Ան ճառ մը կը խօսի, ուր կ'ապացուցանէ Հայերուն Խայրիմ տարր մը ըլլալը: «Ձեզի սահմանադրութիւն ալ շնորհեցինք, բայց դուք նորէն օձ եղաք եւ մեզ՝ թուրքերս խայթեցիք: Հիմա ժամանակն է որ հաշիւ տաք»:

Այս ճառէն ետք ջորեպաններ զանոնք դռնքերով միասին ճամբայ կը հանեն՝ Սվազ երթալու համար: Անոնց կ'ընկերանայ ոստիկաններու շոկատ մը եւ Տիվրիկի ոստիկանապետը, Սիւլէյման չափուշ: Տիվրիկի կոնսկը, խոր ճորի մը մօտ վար կ'առնեն զանոնք անասուններէն ու ճորը կ'առաջնորդեն: Հոն ոստիկանապետը անոնց կ'ըսէ թէ փատիշահը Փէրման հանած է, որ հայ ազգը բնաջնջուի թուրքիոյ մէջ, եւ իրենք հրաման ունին զիրենք սպաննելու: «Ուստի, ձեզի քիչ մը ստեն կու տամ ձեր վերջին աղօթքը ընելու»: Մէկէն ժողովուրդը կը սկսի լալ, աղաչել, հայհօյել եւ աղօթել: Անոնք արդէն իրարու կապուած էին:

— Աքէ՛շ... — կ'որոտայ հրամանատարը ու մտուղէքները կը կրակեն եւ բոլորը մէկ թուփի պէս գետին կը թափին: Յետոյ սուրնահար կ'ընեն կիսամեռները, ու երբ ամէն աղմուկ կը դադրի դիակներէն, քաղաք կը վերազառնան: Ջորեպաններն ալ դիշերով նոյնը կ'ընեն եւ քանի մը օր կը պահուին, մինչեւ որ Սվազէն վերադառնալու ատեն ըլլայ, նորէն մէջտեղ ելլելով ուրիշներ տանելու:

Մանուկ աղան ուշքի կու գայ գիշերը եւ կը զգայ որ ողջ է: Ձեռքին կապերը կը քակէ ու քաղաքին կոնսկի լեռը կը բարձրանայ եւ յաջորդ գիշերը դեղ կու գայ:

Առտու մը մեր գիմացի ժայռերուն վրայ տեսանք երկու հոգի, որոնք կը մաքառէին ժայռերուն հետ, փորձելով ջուրին վրայ իջնել: Մենք անոնց ողորումը կը դիտէինք սուանց ձայն հանելու: Բաւական դիտելէ յետոյ, «Մի՛ վախնաք, — ըսին տղաքը իրարու, — մի՛ վախնաք, անոնք մեզմէ են: Սա մէկը Քոստապետոյենց Տիրանն է, մէկալը Քոչենց Ղեւոնդը:»

Քոչենց Ղեւոնդը, աչքերուս լոյսը, իմ եղբայրս, ինքզինքէս ելայ ես, եւ

— Եկէ՛ք, եկէ՛ք, վա՛ր եկէք, ջուրին վրայ իջէք, — պոսացի:

Ղեւոնդ ձայնս ճանչցաւ ու քաջութիւնս առած, սուրձ կտրեցաւ: Իր ամբողջ գէմքէն ուրախութեան ցոլք մը անցաւ: Կը զանէր թէ՛ տղաքը, թէ՛ եղբայրը: Ան հօրաքրոջմէս խնդրեր էր առաջուրնէ որ զինքը միասին առնէ, բայց հօրաքրոյս մերժեք էր:



Պոլիս կեդրոնական վարժարանի Ա. Գասարան, Յունիս 1913:

Չախէն աջ նստողներ (ուսուցիչներ) — Գրիգոր Շահրավեան (աշխարհագրութիւն), երկրորդին անունը մոռցուած, Ստեփան Կուրտիկեան (քրեքէն լեզու), կեդրոնը՝ Տնօրէն Մարտիրոս Նալպանտեան (գիտութիւն), Պետրոս Ասրունի (ուսողութիւն), վեցերորդին անունը մոռցուած, եւ Լեւոն Շանք (պատմութիւն):

Անոնք ողևորուած մեր մօտ իջան. արդէն մեզ կը փնտռեն եղեր: Արարկիրէն փախած էին: Երբ հարցուցի Ղեւոնդին թէ ինչո՞ւ աւելի առաջ չփախաւ եւ մինչեւ Արարկիր դնաց, սն պատասխանեց.

— Ե՛ղբայր, շատոնց կ'ուզէի փախչիլ, բայց ճէճէն ու մայրս չէին թողուր, որովհետեւ, կ'ըսէին, «*Եթէ դուն փախչիս, ո՞վ պիտի մեր էջը բեռնայ:*» Արարկիր էջը առին մեր ձեռքէն, եւ ալ փախայ: Ի՛նչքան վար գացիմք, ա՛յնքան մեռնողներուն ու խեղներուն թիւը կը շատնար, — *կ'ըսէր Ղեւոնդ*, — այնքա՛ն առատ, բութի ծառի մը տակ թափուած ու թնկուած հասուն բուրբերուն պէս: Արարկիրի բոլոր այրերը տարած են եղեր, ու հայ կիները սեւերու մէջ: Անոնք

խալամանալով առայժմ իրենց տեղերն էին մնացեր: Արաբկիրցիները խանդաղատամեով կը գուրգուրան մերիմներուն վրայ ու կը խնամեն: Մակայն շուտով գանոնք ալ կը սկսին ափսոսել ու մահուան խորշակներուն բերանը տալ: Մեր գեղէն քանի մը պատանի, որոնք Թուրքերուն քով ծառայ կը մնային, նոյնպէս զարնուած են հոն:

Ղեւնդ պատմեց նաեւ Կարնոյ ժողովուրդին մնացորդներէն, որոնք հոս-հոն, ճամբուն եզերքները թափթփած եւ ելլելու անկարող, ձեռք կ'երկարեն ու մերիմներէն հաց կը մուրան: Մեր դիւղացիք սակայն անոնց հաց չեն տար, առարկելով որ վաղը իրենք ի՞նչ պիտի ընեն: Այն ստեն Կարնեցիք մերիմներուն կը պատասխանեն.

— Մե՞նք ձիւ կառքերով ոսկի, գոհար ու գորգերով քամբայ ելանք եւ ոչ քէ ձեզի պէս մէյմէկ իշու բեռով, եւ այսպէս եղանք, ինչո՞ւ մեզի չէք օգներ...

Քարին տղաքը սկսան խումբերով բաժնուիլ իրարմէ: Ալիւր ունեցողները հեռացան, մեզ Քարը թողլով վեց հոգի, բոլորս ալիւր չունեցողներ: Գրիգոր էֆէնտին ամենէն ուժով խումբին հետ դնաց, եւ չէր ուզեր զիս տեսնել:

Մեր Քարը հասնելուն հինգերորդ օրը, եւ երկրորդ օրը մեր հոն առանձին մնալուն, առտու մը, թիւղաց ան մաւզէրի որտաներով, որոնք իրարու յաջորդեցին եւ ժայռերը գոռացին ու արձադանդեցին անոնց ձայներէն: Կը լսէինք մարդու խօսակցութիւն, որ տակաւ կը մօտենար մեզի: Մենք սարսափահար ժայռի մը քիւին տակ քաշուեցանք, ժամանակ չգտնելով մէջտեղէն վերցնել պիտի՞նք ամանները, որոնք արեւին տակ կը փայլէին: Ու ահա մեր դիմաց, Քարին երեսը պարտող երկու ժանտարմա տեսանք, որոնք մարդ կը փնտռէին հոն ու երբեմն դէնք կ'արձակէին: Մենք մասնուած էինք, Քարը պաշարուած էր: Կը սպասէինք որ ժանտարմաները մեր ետեւի կողմէն ալ ուղղակի վրանիս իջնեն: Ու երանի կու տայինք միւս տղոց, որոնք աւելի անառիկ տեղեր փոխադրուած էին: Չարե՞հ դանակը պինդ բռնած, կ'ուզէր առաջին եկողին վրայ ոստնուլ եւ անոր սիրտը միւսի դայն: Ես միւս ատրճանակս, որ քարայրը թողած էի, բռնած, կը սպասէի: Մենք մեր շունչը թշնամիին դալտեան աղմուկը կը կարծէինք ու կը դողայինք: Ու կ'ուզէինք անոնց վրայ կրակել, եթէ մեզ տեսնէին եւ ճարահատ մենք մեզ ջուրը նետել ու ժայռերէն վար դահալիժիլ: Օրը սարսուռով անցաւ: Անոնք մեզ չտեսան ու դացին:

Երկու անչափահաս աղջնակներով, որոնց պզտիկը շարունակ պէտք էր շալակով փոխադրել, դժուար էր տեղափոխութիւնը: Ես հօրաբորձս դէմ դառնալ սկսայ: Կ'ուզէի որ ան երթայ Թուրքերուն յանձնուի, քանի որ մինչեւ այդ օրուան փորձառութիւնը ցոյց կու տար որ այրերը կը սպաննէին ուղղակի եւ կիները մեծ մասով կը թողուին երեսի վրայ: Հօրաբորձս չէր ուզեր ինձմէ բաժնուիլ:

— Գոնէ սա պղտրիլը չըլլար, — կ'ըսէի ես, — մենք զա՞յն պիտի շարկենք՝ թէ ուտելիք:

— Աչքէս հետու տարէք ու սպաննեցէք, կը տեսնեմ որ ճար չկայ, — ըսաւ ան:

Ու թաթրենց Զարեհը, դանակը պատրաստ, ինձի.

— Տէ', բե'ր, մի' վախնար, սադի'ն բեր, ես կը մորթեմ...

Ու Նուարդ, անո՛ւչ ու աղուոր աղջնակ մը, իր պայծա՛ռ ու անմեղ աչքերով կը նայէր մեզի, առանց շատ բան հասկնալու:

Մենք որոշեցինք Քարէն հեռանալ: Նոյն գիշերը Հօրքուրս խմոր թխեց ու ապի վրայ հաց եփեցինք: Կէս գիշերին Քարէն ելանք: Հօրքուրիս փոքրիկները շարկած, դանդա՛ղ-դանդա՛ղ Քարէն հանեցինք: Լուացաւ, ու մենք հագիւ Քարին պապաթն էինք հասած: Ծարահատ Նորանհոր մտանք, որ մեծ ու անյայտ քարայր մըն է դետնին տակ: Ծայեկներու (ճայ) բոյն էր ան: Բոլոր թռչունները ճչալով փախան՝ երբ ներս մտանք: Զմբան պէս ցուրտ էր, մթին, բարձր եւ ընդարձակ խորշերով: Վերէն շիթ-շիթ ջուր կը կաթէր եւ մէջը գուռ մը ձեւացած էր: Մենք դուրս ելանք եւ դուռի լայնատերեւ անուշահոտ խոտերը քաղելով ներս տարինք՝ դետինը փռելու: (Անունը Թառլա-խնձոր էր): Յոգնած եւ անքուն էինք: Ինկանք պառկեցանք: Գլուխս Հօրաքորջս ծունկին վրայ դրի ու աչքերս գոցեցի: Յա՛նկարծ զիս արթնցուց.

— Գա՛նս, ելիր, դուռը մարդ եկաւ: Զան կու գայ:

Դրան կողմ նայելով տեսայ որ մարդիկ քարայր կ'իջնեն մապղցելով, ու կը խօսին անհասկնալի լեզուով մը: Քաշեցի արթնահալս եւ անոնց ուղղեցի: Հօրաքորջս ձեռքէս կը բռնէր որ չկրակեմ: Բայց եօթը փամփուշտներէն բնաւ մէկը չպայթեցաւ(*): Ուրիշ ալ չունէի: Յուսահատ գէնքը դետին նետեցի եւ Հօրքուրիս աղաչեցի որ անոնց դէմ երթայ ու ուրքէ: Որովհետեւ ժանտարմա չէին:

— Մի' վախնար, — ըսին անոնք Հօրքուրս տեսնելով ուրախացած, — մենք ձեզի բան չենք ըներ: Ով որ կայ, թող գայ յանձնուի:

Մինչ այդ եկան ու բռնեցին զիս: Ես կ'աղաչէի որ զիս չսպաննեն: Միւս ընկերներս ժայռի մը տակ կողք-կողքի կը քնանային: Արթնցան ազմուկէն եւ անձանօթները տեսան: Ու աւելի տժգունեցան, բան ինչ որ էին արդէն: Այդքան բան տեսած կարճ ժամանակի մէջ:

Եկողները Քուրտեր էին, գինուած կայծքարաւոր նախնական հրացաններով ու կեռ սուրերով, որոնք մանդաղի կը նմանէին: Խուրդրկեցին քարայրը: Երբ դետցան որ մեզմէ գատ մէկը չկայ հոն,

— Տուէ՛ք, — դոտացին մէկէն դաժանացած, — ինչ որ ունիք, եթէ ոչ ձեզ կը մորթենք հոս տեղին վրայ:

(*) Փամփուշտները Տիվրիկի հայ զինագործները կը լեցնէին, որոնք գաղտնի մեղքաւոր կը քիւտէին, որպէսզի կրակ չտանէ...

Չէնքերը մեր կուրծքերուն կը գնէին, սուրերը մեր մխերուն կը մխէին, «տուէք» պոռալով, «եթէ ոչ կը սպաննենք»:

Ի՞նչ տայինք: Իմ քանի մը սակիս Տօղան ձեռքէս առին: Ղեւնդն ու Չարեհն ալ բան մը չունէին:

— Չունինք, — ըսի, — Ասասուծոյ սիրոյն, բան մը չունինք, եթէ չէք հաւատար խուզարկեցէք մեզ:

Եւ սկսան խուզարկել: Հօրաքոյրս ամենուս ձեռքը մէյրէկ մէճիտ դրաւ եւ մենք անոնց տուինք, որովհետեւ անպայման դրամ կ'ուզէին: Երբ խուզարկութեան կարգը Նուարդին եկաւ՝ մենք ալ դարձացանք, Քուրտերն ալ: Անոր շրջագրեալին մէջ վերէն վար դեղին սակի կարուած է եղեր: Քուրտերը շրջագրեալը կարտեցին ու սակիները համբելով կը խնդային.

— Մէկ, մէկ եւս, երկուք, չորս, տասը... քսան... յիսուն...

Մեր բոլոր հագուստներն ալ կողոպտեցին: Մեր ոտքերէն հանել տուին ու առին տրեխները, իրենց հիները մեզի տալով: Մեզ ձգեցին բոպիկ, գլխաբաց, մէկ-մէկ կապայով, չալվար ու չապիկ վարտիքով: Ըսին թէ առջի օր ժանտարմաները գեղին մօտէն այր մը եւ քանի մը կին բռնած են: Այդ մարդը մեր գեղին մեծաւորը, Քէյհենց Մանուկ աղան է եղեր, որ մեզ մտաներ ու ժանտարմաները Քար դրկեր էր...

— Ուլա՛մ, ձեր ազդը չկայ, լմնցաւ, փճացաւ, ա՛լ Հայ չմնաց: Եկէք Քուրտ եղէք: Կ'ըլլա՞ք, — կը հարցնէին:

Ինչպէ՞ս չէինք ըլլար, եթէ մեզ չսպաննէին: Աղաչեցինք որ մեզ ողջ ձգեն, խոստանալով որ գիշերը միասին գեղ կ'երթանք, եւ իրենց շատ մը մալ կու տանք անկից: Քուրտերուն ուզածը մալ էր, հողի չէր: Թուրքը երկուքն ալ կ'տոնէր: Անոնք համաձայնեցան: Ըսին որ հիմա իրենք Քարը կ'երթան՝ ուրիշ մարդ փնտռելու: Պատուիրեցին որ հոն սպասենք, որպէսզի գիշերը միասին գեղ երթանք՝ սպրանք հանելու, անկէ իրենց գեղերը, որ մեզ պահեն: Սպառնալիք ըրին որ չփախչինք: Ու գացին:

Անոնք դացին, մենք իրենց ետեւէն «փա՛յ ձեր գլխուն» ըսինք: Մեր տղոց տեղը այնքան անտոիկ էր, որ չէին կրնար դանել: Կը տխրէինք սակայն որ անոնք ազատեցան, մենք ծուղակին ինկանք:

Քարայրը ցուրտ էր, կը մսէինք: Մեր քով կանեփէ մեծ պարկ մը կար, ուր հաց լեցուցած էինք: Չայն երկուք ըրինք մէջտեղէն ու ծակեցինք՝ գլխու տեղ բանալու համար: Հօրքուրս մէկ-մէկ թեւ անցուց ու Ղեւնդին հետ հագանք, ամենէն մերկերը ըլլալով: Մեր մէջքն ալ դօտիի տեղ մարաս (մազէ կապ) կապեցինք:

Որոշեցինք փախչիլ անկէ: Հօրքուրիս պղտիկները մեր ոտքերը կը կապէին: Անոնք կին էին, ու անոնց համար մեծ վտանգ չկար: Հօրքուրէս խնդրեցինք որ պղտիկներովը հոն մնայ, երբ Քուրտերը դան, գիշերը միասին հանեն իր խանութին սպրանքները, ու Քուրտերուն գեղը երթան: Ան համաձայնեցաւ: Այդ Քուրտերը մեզի ծա-

նօթ էին: Մեր կողմը մեծ անիշխանական մը կար, Մէմօ: Կառավարութիւնը չէր կրնար դայն բռնել: Իր եղբայրը քարայրին մէջ գլուխը ածիւլած ասան վիզը կը կարէ ու կը մեռցնէ զայն: Թուրքերը անոր գլուխը բերին մեր գեղէն անցուցին 1906ին: Ահա ասոնցմէ մին՝ եղբօրը գլուխը կտրող Իսմայիլն էր, միւսն ալ Մէմօյի տղան, ձանօն, արդէն մեծցած: Միւսն ալ հօրքուրիս քերվան էր: Խեղճ մարդ մը, զոր կը ծաղրէինք: Մեր գեղը մայրի կը բերէր ծախելու եւ զայն դեռնախնձորով կը փոխէր: Ու հօրքուրիս տունը կը գիշերէր:

Մինչեւ կէսօր դուռ ելանք քանի մը անգամ, տեսնելու թէ Քուրտերը պահակ դրած են որ չփախչինք: Մարդ կա՞ր: Ձայն կու գա՞ր: Վերջին անգամ, իրիկուան դէմ, Ղեւոնդը դուրս ելաւ ու կանչեց.

— Ծա'նճ չի թո՛իր մեր շուրջը: Շո'ւտ բռէք, փախչինք: Հիմա Քուրտերը կու գան:

Համբուրուեցանք հօրքուրիս հետ: Դուրս թռանք: Հօրքուրս ետեւէս ըսաւ.— Վա՛յ Երուանդ: Ու սկսանք փախչիլ մեր գեղին գլխէն: Մարդ մեզ չտեսաւ: Գեղին մօտը մեր գինուոր տղոց մէկ անակը մտանք: Հոն կը սպասէինք որ մարդ գայ, մեզ բռնէ, ու վախէն կը դողայինք: Մթնեց: Եկող չեղաւ: Փրկուեցանք: Շատ դարմացանք այս բանէն:

Ես ու Ղեւոնդը դատ դացինք, միւս ընկերը գատ: Ան մեզի կ'ազատէր որ միասին գայ: Մինակ պիտի մնար: Մութը վրայ էր: Մերժեցինք: Մենք կ'ուզէինք երթալ մեր քերվաներուն: Ինք ալ Սարգուն թող երթար, իր քերվային:

Ան կ'ազատէր.

— Մա՛նչ, ի՞նչ կ'ըլլայ, իս ալ հետերնիդ տարէք...

Ու մինակ ու շուարած, մթնշաղին, դաշտերուն վրայ կ'երեւար ու կը դեղեւէր...

Մենք բռնեցինք անտաներուն ճամբան:

ԴԷՊԻ ՔՈՒՐՏ ԱՇԻՐԷԹՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Ղեւոնդ տարիքով փոքր, խօսքս մտիկ կ'ընէր միշտ: Նաեւ երբ դեռ գեղն էինք: Մենք իրար կը սիրէինք հիմա ա՛յն զեղումով, որ այդ տառապալիքն վիճակը կը պարտադրէր մեզի: Ես Պոլսէն նոր գացած, մեր քերվաներուն ծանօթ չէի անձնապէս: Թէեւ քեռայրս ըսած էր որ անգամ մը Քուրտերուն երթանք, բայց պատերազմը շուտ ծագելուն ա՛լ չկրցանք: Ես կը յիշէի մինակ մեր Մահմուտ քերվան, որուն մեծ հայրիկ կ'ըսէինք՝ երբ մեր տունը վար: Ան յաղթանգամ էր եւ սպիտակամօրուս: 1895ի ջարդերուն երբ մեր տունը անտառուտ ձոր մը ապաստանած է եղեր, յա՛նկարձ վերէն ձայն մը կը լսեն, որ իրենց կը կանչէր: Մահմուտ անուն Քուրտ մըն էր, որ բալորը իր

տունը տանելով կը խնամէ ու կը պահէ, մինչեւ ջարդը անցնի: Բայց Ղեւոնդ կը ճանչնար մեր բոլոր քերվաները: Կը թուէր անոնց անունները: Մահմուտ տէտէն մեռած էր: Ուստի ան յոյս ունէր ձինտի քերվային վրայ, որ ամէն դալուն ուզած կերակուրը պատրաստել կու տայ եղեր մեր տուները: Ուրեմն ձինտին մեր յոյսն էր: Անոր գեղը մեզմէ վեց ժամ կը քաշէր:

Երկու եղբայրներ քով-քովի կը քալէինք հօրենական դաշտերէն: Կը փախչէինք մահէն, որ հոն իջնելով տեղաւորուած էր: Ու կը նայէինք մեր շուրջը անձկութեամբ եւ կարօտով, վստահ որ անդամ մըն ալ պիտի չտեսնէինք այն տեղերը: Եւ կը ծռէինք ու կը խմէինք ո՛ւր որ աղբիւր մը հանդիպէր, խորհելով որ այլեւս վերջին անգամն է որ անկէ կը խմենք:

Յաջորդ առտու Արակա քուրտ գիւղին գլուխը հասնելով պահուեցանք անտառներուն մէջ: Տէլուտազի կատարին անդիւի կողմն էր ան, որուն սողել կը բացուէր Պէյտազի կանանչ հովիտը՝ իր մէջի բազմաթիւ գիւղերով: Մենք ուսումնասիրեցինք անկէ դիշուրուան երթալիք ճամբանիս: Հեռուն, Ղեւոնդ ինծի մատով ցոյց կու տար տեղերը ու կը բացատրէր գիւղերը: Միւսեց: Արակայի կոնակը իջանք: Գեղացիք անատունները կը կլթէին եւ կաթսաներով լեցուն կաթերը բացօթեայ խարոյկներու վրայ կ'եռացնէին: Իջանք գետակ, որուն վրայի առաջին գիւղն էր մեր երթալիքը: Հանդիպեցանք եայլաններու: Գամփոնները մեզ հալածեցին ու հօտը խրաչեցաւ: Հովիտները իրենց պառկած տեղերէն «օ՛ւ, օ՛ւ» կանչեցին շուներուն, առանց ելլել նայելու թէ ի՞նչ էր: Հասանք ցածկեկ գոմերու: Ու մինչ կը կարծէինք թէ դեռ պիտի երթանք: Ղեւոնդ ըսաւ.

— Գեղը ա՛յն է:

Վարի Չամուռնին էր ան: Գեղացիները կը քնանային տանիքներուն վրայ: Մեր քերվային դուռը այր մը եւ կին մը պառկած էին: Արթնցուցինք դանոնք: Երբ մարդը դող ելած աչքերը կը շփէր,

— Պրան տո՛ւնն է,— հարցուց Ղեւոնդ:

— Հօրեղբա՞յրս, կակազեց ան, հօրեղբայրս եայլան է, տունը չէ: Իսկ դուք ո՞վ էք:

— Մենք ճամբորդ ենք:

Ճամբորդ, գիշերուան այս պահուն, երբ կա՛մ դողեր, կա՛մ փախստականներ կրնան գեղ մտնել:

— Ձէ, դուք ո՞վ էք,— կրկնեց ան,— ճամբորդ չէք: Թերեւս Հայ էք... Խուռնալուլիի չըլլաք: Շխաակն ըսէք: Անօթի՞ էք:

Մենք իրմէ խնդրեցինք որ մեզ Պրային տանի: Ան չթողուց: Յատկեց ելաւ անկողնէն ու կրակ վառեց: Բռնի հանեց կինը, որ խմոր թխէ ու հաց եփէ: (*)

(*) Քիւրտերը ամէն օր իրենց հացը կ'եփեն սահի վրայ: Անոնք անտառներու մօտ կը բնակին, ու փայտի առատութեմէն կրնան այնպէս ընել: Տիւրիկցիք որ փայտ չառնէին, տարին Վի՛այն երկու անգամ հաց կ'եփէին:

— Ա՛խ, — ըսաւ, — կը ներէջ որ պատրաստ հաց չունիմ ձեզի հրամցնելու համար :

Կինը կը դժկամակէր : Ան կը ստիպէր : Ղեւնոյ քիչ մը քրտերէն հասկնալուն, անոնց խօսածները կ'ըսէր ինծի : Մինչ կինը խմոր կը թխէր, ան կորսուեցաւ : Ու ահա ներս մտաւ դրացիներու հետ : Մեզ կը ծանօթացնէր անոնց այս խօսքերով .

— Լօ, լօ, Խօսնուլին է :

Անոնք մեզի հարցուցին թէ Խուռնալուլա որո՞ւ տունէն ենք : Ըսինք որ Քոչենց : Անոնք հարցուցին թէ Քոչենցմէ որո՞ւ տղաքն ենք : Ըսինք որ Մոսխէսին ու Սարգիսին : Երբ իմացան որ մեծ տունէ ենք,

— Մալ ունի՞րք, — հարցուցին փութով :

Անմիջապէս Ղեւնոյին նշան ըրի որ լռէ, ու պատասխանեցի .

— Զէ, չունինք, բան մը չունինք : Կը տեսնէք որ կողոպտուած ենք, — մեր վրայի պարկերը ցոյց տալով :

Այն ատեն անոնք ըսին որ եթէ գոյք ունենայինք, մեզ կը պահէին, կը փրկէին : Իմ նպատակս էր այս մարդոց բուն ինքնութիւնը հասկնալ անգամ մը, ըստ այնմ շարժելու համար : Եթէ գոյքի համար պահէին, ուրեմն գոյքը հատնելուն ա՛լ պիտի չպահէին : Տեսնէինք իրենց վերաբերումը ի՞նչ պիտի ըլլար, եթէ բնաւ բան մը չունենայինք :

Առտուն մեզ գոմին մէջ պահեցին : Գիւղին կիները սկսան մեր քով գալ : Անմիջապէս աչքիս դարկաւ անոնց տարազը, Հայէն ու Թուրքէն տարբեր : Անոնք մեզ իրարու ցուցնելով կ'ըսէին .

— Լաուքի Սէրքօ, լաուքի Մոսխէսըն է : Ու կ'աւելցնէին .

— Կաւաֆօ, կաւաֆօ (մե՛ղք, մե՛ղք) :

Մինչեւ իրիկուն ժողովուրդը մեզ տեսնելու կու գար, թան եւ հաց բերելով միասին :

Անոնք չեն սպասեր եղեր որ մենք այսքան խեղճ ու այսքան խելօք իրենց կու գանք : Ընդհակառակն, կը սարսափին եղեր, ենթադրելով որ, այսքան աղէտէ ու զարհուրանքէ ետք, հայ փախտահաններ պիտի բռնէին լերան ճամբաները՝ անցորդները կոտորելու : Իրենց վախէն ատեն մը նոյնիսկ չեն ճամբորդեր : Ծառ կը դարձանային որ մինչեւ այդ օր մեր դեղէն մէկը չէ եկեր իրենց : (Մեր Քարին տղաքը կ'ուզէին, բայց չէին վստահիր) : Իսկ մենք ալ եկանք, ամենէն անճարները ըլլալով տղոցը մէջէն : Կը նայէին մեզի հետաքրքիր աչքերով, կարծես անտառէն բռնուած վայրի կենդանի ըլլալինք : Հարցումներ կ'ընէին ջարդի մասին : Կ'ուզէին դիտնալ թէ ի՞նչպէս եղաւ որ մեծ եւ չէն գիւղը այնքան շուտ աներեւութացաւ ծուրի նման : Ու մանաւանդ կ'ուզէին մեր կարծիքը լսել ջարդերու մասին, թէ ողջ մնացող Հայը ի՞նչ կը մտածէր : Կը ցաւէին մեր վրայ : Մեզ կը մեղադրէին որ դէնքերը յանձնեցինք եւ գառնուկներու պէս դիւրին մորթուեցանք : Ամէն մէկը իր քրիվաները կը հարցնէր մեր

դեղէն : Ու բոլորը նոյն պատասխանը կ'առնէին՝ թէ չկան , սպաննուած են : «Թէ Հոս դային , զանոնք կը պահէինք» , կ'ըսէին :

Պրան ուշացաւ : Իրիկուն եղաւ , ու չեկաւ դեռ : Գիշերը եզբորորդին Ալին բացատրեց մեզի անոր եայլային տեղը ու մենք հոն գացինք : Հօտերը մահազեր էին : Պարոյկները կը վառէին : Անոնց շուրջ Քուրտերը հաւաքուեր կը խօսէին : Պրան դտանք : Ան մեզ տեսնելուն զրեթէ լացաւ յուզումէն : Իրարու մէջ շարունակ կարեկցութեան խօսքեր կը փոխանակէին՝ նայելով մեր վրայ : Պրան միշտ կ'ըսէր .

— Հէյֆա ԽօնՅօլուլի (մեղք Պուռնալիլի) : Լօ՛ , Լօ՛ , Լօ՛ , — կ'ըսէր ան , մեր պարկէ գրեստներուն նայելով :— Լօ դուք աս աղաքը առաջ տեսնէիք , անոնք փաշայի պէս էին : Ի՞նչ են եղեր հիմա : Զէրչի չկայ որ լաթ կարել տանք : Լօ , Լօ , Լօ . . .

Եւ սահայն յայտնի եղաւ որ Պրան կրնար հարիւր անդամ մեզի եկած ըլլալ : Կինը , էլէ Պաթուն , մեզի իւզով հակիթ եփեց , առատ հաց ու թան դրաւ եւ մենք կշտացանք : Հոն էր , խարոյկին քով , Թուրքերուն քովէն նոր եկած , մեր հօրենական ծանօթը , Քէօր Հէմօն , աչքերը տկար , տարօրինակ տիպար մը : Անոնք մէկըբերան կը պատմէին մեր նահապետական տան անցեալէն : Կը թուէին մեր պապերուն անունները , Ակօ քէհեա , Մինաս քէհեա , Պաչօ քէհեա , Բարսղ քէհեա : Կը պատմէին թէ Ի՞նչպէս մեր ահագին հօտը ձմեռը այս անտառները կը փոխադրուէր , որոնք , առաջ շատ խիտ , նօսրացեր են , ջորդուելով անոնց կերցնելու համար : Կը պատմէին մեր տան մեծութեան մասին , ու առատութենէն : Մանրամէսեր մեր պապերուն կեանքէն : Ու կ'աւելցնէին .

— Ա՛խ , մենք ձեր երեսէն կ'ապրէինք : Զէր զեղը գնաց , մեր հացը հատաւ :

Ծնած ջարդերուն , մեծցած թշուառութեան տարիներուն , մենք տեսանք մեր տունը դեռ , ուր 60 հոգի կը բնակէին : Ուր փայտէ դպալները ճողփալով կ'իջնէին թանապուրին մեծ լականին մէջ , ազմկալից , երբ լուսնկան դաւիթէն ներս ցաթէր : Բայց մեր տան բուն փառաքանութիւնը ահա հիմա է որ կը լսէինք , երբ ան ա՛լ չկար իր հին փառքի տեղերուն վրայ : Այս անշուք ձորին մէջ , խարոյկին առջեւ , անոր երկու վերջին փխրուն մնացորդները , կծկուած կէս-կէս պարկի մէջ , աւելի խղճայի , քան անոր յետին հովիւն ու ծառան : Ու որեւէ սորուկ աշխարհի վրայ . . .

Երբ բաւական հանգստացանք , Պրան մեզի յայտնեց թէ եայլան ճամբու վրայ է ու վտանգաւոր հոն մնալը : Ու մեզ ձինտիին , իր հօրեղբորը , մեր մեծագոյն բարեկամին , մեր յոյսին զոմը տարաւ : Ան դետակին միւս ափը , լերան լանջին , դարուարի արտի մը վրայ էր , անտառներու դիրկը : Զայն մեր պապերը շինած ու հոն երկար տարիներ բնակած էին :



Հեղինակին հորեղբայրը՝
Պօղոս Քոչեան
(Յունուար 1925)

Պատկած էր Ճինտին դոմին դուռը, ամբողջովին մերկ, կնոջ
ծոցը: Արթնցաւ: Գլուխը վերցուց ու մեզի նայեցաւ: Յանկարծ՝

— Լօ, լօ՛, վաճառքի՞ն է,— ստուաց Պրոսին երեսին բուռն
բարկութեամբ,— ասոնք ո՞վ են:

Ու սկսաւ տրանջալ ու յանդիմանել դոսին: Պրան մեղմութեամբ
բացատրեց անոր թէ եայլան ճամբու վրայ է, իսկ դոմը ապահով:
Մեր հացը ինք կու տար, միայն թէ հոս ապահով ըլլայինք: Անոր
թախանձանքները օգուտ չըրին: Ճինտին մեզ տեսնել չէր ուզեր:

— Հոս կը կենաք, վաղը Ղալատիպցի թուրքեր անտառ կու
զան կացինի կոթ կտրելու, ձեզ կը բռնեն կը տանին, չեմ խառ-
նուիր, — ըսաւ մեզի :

Մենք դողալ սկսանք սա խօսքերէն : Մանաւանդ ես : Ղեւնոյ
ամուր էր : Ու դարձանք կրկին եայլան : Պրան ձինտիին կը հայհո-
յէր, ըսելով որ դուրս, տիւն-իւնաւ չունի : «Ձաւակ չունի որ խիղճ ալ
ունենայ» :

Քէօր Հէմօն ալ սկսաւ ձինտիին հայհոյել ու զայն վար դար-
նել, ինք ալ ազգական անոր : Իսկ մենք յուսախար եղանք : Ձէ՞ որ
մեր յոյսը ձինտին էր :

— Լօ, լօ, — ըսաւ յանկարծ մեզի Քէօր Հէմօն, — դուք ինչո՞ւ
Ձնսկի ձեր ազգականներուն չէք երթար :

Ձնսկի՞ : Ազգակա՞ն : Ան ալէվի թուրք դեղ մըն էր, ուր ոչ մէկ
Հայ կը բնակէր : Մենք հոն ուրկէ՞ ազգական ունենայինք :

— Հա՛ւպա, Ձնսկիի Քէօջ Օղլուները ձեր ազգականներն են :
Անոնք թէեւ թրքացած են, բայց անունները նոյնն են՝ ինչ որ ձե-
րինները, չեն փոխուած :

Ես լսած էի որ Ձնսկի առաջ Հայ եղեր է : Թուրք ամբողջը գի-
շեր մը զայն սլաշարելով կը ջարդէ ու կ'իսլամացնէ : Որբեւայրի կին
մը միայն իր եօթն դաւակներով Խուռնափուլա կ'ապաստանի : (*) Ու
հոն կը կազմուի այդ որբերէն Քոչնոց մեծ տունը, որուն զեզացի-
ները Որբերէնք կ'ըսեն եղեր : Ու Տիվրիկի շուկային մէջ իրարու
հանդիպելով՝ կը հաշտուին ու կ'ողջադուրսին, տարիներ ետք,
Ձնսկիցի Ասլան տէտէն, թուրք, Խուռնափուլցի Դաւիթ տէտէին հետ,
Հայ, բայց հօրեղբորորդիներ : Ու Ասլան տէտէ Խուռնափուլ դալով՝
դիշեր մըն ալ Քոչնոց տունը հիւր կ'ըլլայ : Դաւիթ տէտէի կիներն ալ
Ասլան տէտէի քոյրն է եղեր, որուն «քաղցքի նէնէ» կ'ըսեն մերոնք,
Ասլան տէտէն քաղաք փոխադրուած ըլլալով հոն բնակելուն համար :
Այս ամէնը մէկ դարու պատմութիւն էր : Բայց թէ անոնք դեռ հոն
են, ու մեր անունը կը կրեն, չէինք գիտեր : Ուրեմն ճիշդ էր Քէօր
Հէմօն : Բայց մենք կը վախճայինք : Ձէ՞ որ անոնք թուրք էին : Եթէ
մեզ սպաննէին, կամ տանէին Տիվրիկ յանձնէին, որ նոյն բանն էր :

— Ես ձեզ կը տանիմ անոնց, — կ'ըսէր Քէօր Հէմօն, որ թե-
րեւս դնաց մեր մասին պատմեց ալ : Ան հետը աւար ու պղտիկ պղինձ
ամաններ բերած էր, որոնց վրայ Սերաստիոյ Հայ վանքերուն ար-
ձանադրութիւնները կային : Ան տեսեր էր Սիվադի Հայերուն մէկ կա-
րաւանը : Փանտարմաները հայ մայրերը կեցնելով, անոնց վրայ նշա-
նառութեան փորձեր կ'ընեն եղեր... Ձնսկիի մէջ :

Պրան մեզ եայլաներուն քով խոշոր ձոր մը դրկեց, ուր թու-
փերուն մէջ կը սահուէինք : Էլէ Խաթուն ալ օրը երեք ժուռ գարե-

(*) Ոչ, Ձնսկիի Ղեմպեր Օղլուները համպարեմ էն, մեր գիղէն : Ուրեմն
միմալ Քօթցիք չեն ազատած ամիէ՛ Խուռնափուլա փայտչիւով, այլ ուրիշներ եւ :

Հաց եւ թան կը զրկէր մեզի: Յորեն չէին կրնար դնել, սուղ ըլլալով: Քանի մը օր վերջ դեղ փոխադրուեցան անոնք, ու մենք ալ միասին իրենց գոյքերը փոխադրեցինք: Գեղացիները սկսան ծուռ նայիլ մեզի ու կը յանձնարարէին որ ետ, մեր լեռները երթանք կրկին: Նոյնպէս Պրան մեզ կը ճամբէր վախէն: Հրաման կայ եղեր կառավարութեանէն, որ եթէ մէկուն քով Հայ գտնուի, ամբողջ ընտանիքը բնաջնջելով տունը հրկիզուի: Միայն աղքատ կին մը, Օրտէն, որ ամուսնին հետ մեր տունը ծառայ է եղեր, մեզ քաջալերեց որ տեղ չերթանք ու սպասենք դիւղապետին, որ քաղաք դացած էր:

— Միայն ա՛ն կրնայ ձեզի վերջնական խօսքը ըսել՝ թէ երթալով կամ մնալու էք: Ես որք աղջնակ մը, ձեր տունը եւ ձեր Հացովը մեծցած եմ, — կ'ըսէր Օրտէն: Կուլօն, ամուսինս ալ, ձեզի հովիւ էր այն ատեն: Մենք ձեր տունը ամուսնանալով տեղափոխուեցանք մեր դիւղը:

Մենք այն օրերուն տակաւին ծնած չըլլալով, լուր չունէինք այս բաներէն: Ամուսինը, Կուլօն ալ, որ հիմա Թուրքերուն մօտ հովիւ էր, օր մը դիւղ դալով տեսաւ մեզ:

— Գլխուս մագերուն համբանքովը ձեր Հացը կերեր եմ, կուրնային աչքերս, ձեզ այս վիճակին մէջ չտեսնէի — ըսելով լացաւ ան:

Մենք բարի Օրտէ խաթունին ձեռքերը կը համբուրէինք հազար տեսակ շնորհակալութիւններով: Ան ձեռքերը ետ կը քաշէր՝ «ուլա՛ն, ուլա՛ն, վա՛խ, վա՛խ» ըսելով արդահատանքէն:

Երբ Վէլին դեղ դարձաւ, առտուն կանուխ Օրտէն մեզ անօր զրկեց, ըսելով:

— Ես իրեն պէտք եղածը խօսած եմ: Գացէք, աղաչեցէք, պաղատեցէք, ձեռքը պագէք, սոքը պագէք: Ա՛ն է ձեր յոյսը:

Պատկած էր Վէլին իր ասն դուռը, փայտէ բարձր դահաւորակի մը վրայ, երբ իրեն դացինք: Ան դեղին մօրուքով մէկն էր: Մենք մօտենալով իրարու ետեւէ ձեռքերը համբուրեցինք, ու թնծկալով ու լալով մեր վիճակը բացատրեցինք:

— Մի՛ վախնաք, օղուլ, — ըսաւ ան, — ճար մը կը խորհիմ ձեզի: Հիմա դեղ մի՛ մնաք, վտանգաւոր է: Անտառ դացէք, ես ձեր Հացը կը զրկեմ: Յետոյ կը խօսինք միասին:

Քանի մը օր վերջ, իրիկուն մը, Վէլին մեզ պաշտօնապէս բնդունեց իր նորաչէն հիւրասենեակին մէջ, որուն ճարտարապետը ինք էր: Լայն ակաւթին մէջ եղեւինի ռետնոտ ճիւղեր վառելով սենեակին լոյս կու տային, որովհետեւ քարիւղ չկար պատերազմին հետեւանքով: Անոր մեծ տղան, Հէսօն, կը հսկէր լոյսին, միշտ նոր փայտ դնելով վրան, սուր եւ հետաքրքիր աչքերը մեզի յառած: Բաւական խօսելէ ետք մեզի Հաց ու «սիո» հրամցուցին, որ իրենց ամենէն յարգի ուտեստն է: (*) Մինչ մենք մեծ ախորժակով կ'ուտէինք, ան սկսաւ

(*) Զայն կը պատրաստեն՝ սառ քօմպէն կը փշրեն ամանի մը մէջ, վրան քամ, յետոյ հալած իւղ լցնելով:

Հարցուփորձ ընել մեզ: Նիհար էր ան ու բարձրահասակ, տակաւին երիտասարդ, հակառակ ամուսնացած տղայ ունենալուն: Այդ 12 տնուոր զեղին պեան էր: Քուրտերը վարժուած են պետի դադափարին ու կը հնազանդին անոնց, ու թոյլ կու տան որ անոնք զիրենք կառավարեն: Ան կը խօսէր կորովի եւ լուրջ, փառքի տիրացած մարդու ինքնավստահ շէշտով: Վերջապէս բուն նիւթին դալով Հարցուց.

— Մալ ունի՞ք:

— Այո՛, — պատասխանեցի, — Վէլի աղա, զեղը պահուած շատ մալ ունինք: Ամբողջ ձեզի, հէլալ ըրէք: Միայն թէ մեզ փրկէք:

Որովհետեւ ատկէ առաջ բան չունինք ըսած էինք, չհաւատացին: Ու մեզ զեղ զրկեցին, որ այդ մալէն մաս մը բերենք, տեսնեն: Այդ իրիկունն իսկ ճամբայ կ'ելլէինք զէպի զեղ, զէպի մեր լեռները: Գեղացիները երբ լսեցին մեր միտքը, սկսան անունդ հասցնել մեզի: Կը բերէին հաց, կարագ, չէօգէլիկ:(*) Բոլորն ալ օգտուելու յոյսով մեզ սիրաշահիլ կ'ուզէին: Փոխուեցան...

Առինք հացերը ու ճամբայ ելանք:

Գիշեր: Լուսնկայ չկար: Կորսնցուցինք ճամբան: Մենք մեկ սար մը զարկինք ու սկսանք վեր մագլցել ժայռերէն: Մեզի համար ատ խաղ էր, քանի որ մեր Քարերը կը պտըտէինք: Մասնք անտառ ու մօտիկ փոս տեղէ մը շան հաջոց ու կովի բառաչ լսեցինք: Ղեւնդ ըսաւ թէ Կոպտուն թուրք զեղն է: Հոն հերու ձմեռ հօրեղբորը, Զաւէնին հետ իրենց հօտը ձմեռելու բերած են եղեր: Քալեցինք, քալեցինք, հասանք քարաղբիւրի մը, որուն ջուրերը բազմաթիւ ակերով ապառաժն ի վար կը թափէին ձայնեղ: Ղեւնդ աղբիւրն ալ ճանչցաւ, ուր հօրեղբորը հետ հաց կերած էին: Ա՛լ ճամբան շտկեց ան: Կոպտունի դուռին ելանք, լեռը, ու կատարներէն, լուսնի բարակ եղջիւրին տկար ցուքերով անցանք մեր լեռները:

Մեր զեղէն ժամ մը դուրս անձրեւներէն ու ժամանակէն կրճուած կարմիր քարեր կան: Անոնց հողը վար էր եկեր ու տեղը կը մնային խիտ, կողք-կողքի անվերջ ու բարձր խոռոչ քարայրներ: Անոնք քարի աղաւնիի եւ ուրիշ թռչունի բոյներով լեցուն են: Մենք անոնց «Շարուկներ» անունը կու տայինք, այլազգները՝ «Շէյթան չէհրի»: Հոն խոռոչ մը մտնելով քնացանք: Երբ արթնցանք, արդէն լոյս էր: Հովեր կ'անցնէին մեր ձորերէն, ու միայն հովեր: Ու լուսթիւն, ամայութիւն: Հոն, ուր բազմաթիւ բերրի արտեր կային, եւ ամէն տարի այս եղանակին ձայնն ու երգը չէին պակսիր: Երբ հաց ուտել ուզեցինք, տեսանք որ ան համակ մագ է: Հացն ալ, եղն ալ, չորթանն ալ: Ու դշուրի պէս սեւ: Երբ հաց կտրէինք, մագերն ալ միասին կը կտրէինք: Վեր առինք դանոնք, ու եղածին պէս նետեցինք:

Յուսահատած Քուրտերէն, որոշեցինք երթալ մեր Քարին

(*) 'Բրտեբեկ' տորախ:

տղաքը գտնել: Գիշերը Քար դացինք: Ես տղոցը ամենէն մեծ ու ճարպիկ խումբին տեղը գիտէի: Ան շատ դժուար էր: Մաղլցելով իջանք հոն: Ու գտանք ջուրերուն աղմուկը եւ անոնց արձագանքը ժայռի խոռոչներուն մէջ: Բայց տղաքը չկային: Իրենց տեղին վրայ խոշոր խարար (պարկ) մը կորկոտ ու քանի մը կտոր իրեղէններ կը մնային: Ո՛չ արիւն, ո՛չ դիակ: Բռնուելով տարուած էին: Փախչելով տեղափոխուած: Վախը մեզ առաւ: Ուրեմն վտանգաւոր էր հոն, ու նոյն գիշերն իսկ պէտք էր անկէ հեռանալ: Փութով մաղլցեցանք դառիթափէն վեր, ու հոն ուր հողը կը սկսի, խոշոր խարարներով մեր գեղի մաքուր ալիւր գտանք: Ուրեմն մերն էր ան հիմա: Անկէ ալիւր առնելով նորէն անտառ վերադարձանք ու հաց եփեցինք:

Գիշերը գեղ իջանք՝ գոյք հանելու: Կը քայլէինք ջաղացքին առուէն, Ղեւնդը առջեւէս: Յանկարծ կեցաւ ան քարացած: «Քայլէ», ըսի: Չլարժեցաւ: «Քայլէ»: «Մա ճերմակնե՛րը», կակաղեց ան, ցոյց տալով առուն, ուր ճերմակ լաթեր նետած էին: Բարկանալով ես առաջ անցայ: Տունէ մը աման, սաւան, անկողնի երես եւայլն հանելով՝ շարկեցինք: Կը քայլէինք գեղին լուռ փողոցներէն: Չնստոր, չոռչոռալէն, առուին ջուրը ջորդաններէն կը թափէր: Աժուները կանանչ էին, եւ ուռիներն ու բարտիները առջի պէս:

Սղիկ աղբիւր Ղեւնդենց արտէն գետնախնձոր հանեցինք, որ կաղինի չափ հազիւ մեծցեր էր, ջուրի եւ խնամքի պակասէն: Տընկովիկ ձոր մը մտնելով՝ քնացանք ծորենիներուն տակ:

Հարցուցի Ղեւնդին թէ գիշերը ինչո՞ւ վախցաւ:

— Ախրար, չտեսա՞ր, հոտ չառի՞ր...

— Ի՞նչ հոտ, ի՞նչ բան...

— Դիակնե՛րը եւ անոնց հոտը: Ես մարդու դիակին հոտը կը ճանչնամ: Ճամբան շատ դիակ կար, վարժուեցայ անոնցմէ...

Այս խօսքերուն վրայ, գիշերը բարկացած ըլլալուս, քիչ մնաց խղճահարութենէս լայի: Մենք վերջէն լսեցինք որ գեղին երած օրն իսկ հոն մնացած եւ շարժելու անկարող ծերերն ու կոյրերը գնդակահարելով այնտեղ թաղեր էին: Մինակ Օվկոնց Տանօն, յաղթանգամ եւ իմաստուն կոյրը, որ աշխարհ տեսեր էր ու կը խօսէր օտար լեզուներ, որպէս թէ Մառզու կը տանին, ճամբան գարնելով ձոր մը կը ձգեն: Ան չի մեռնիր, ու կ'աղաչէ.

— Ղուրպան ըլլամ, դեռ չմեռայ, գնդակ մըն ալ արձակեցէք...

Ու երկրորդ գնդակին կու տայ հոգին:

Գիշերը գոմ իջանք՝ հաց եփելու:

Տընկովիկ: Շալակ-չալակ անոր դուռը կը մնային հարսներուն կրած չոր կաղնիները: Վառեցինք սկուլթը: Ղեւնդենց հօտը այս գարնան հող էր, ու այս սկուլթը անոր մայրը, ձերան հարսան չինսած էր: Մենք փղձկեցանք ու լացինք: ձերան հարսը, հարսներուն մէջ ամենէն տաքարիւնն էր: Սալ քարերուն վրայ Ղեւնդ խմոր կը թխէր: Ու աճա ալիւրին մէջէն թուղթ մը ելաւ, երկտող մը վրան:

Գրողն էր Քօթանենց Գրիգորը, մեր զինուոր ազոցմէն, որ փախեր-
եկեր էր, Չարմանենց Կարոյին: Ու կ'ըսէր որ Կարօն Խարալլու եր-
թալով զինքը դանկ: Ղեւնդ բազարջ ու քամա եփեց, օճախն ե-
րեսին վրայ, մաղմաղին մէջ:

Յաջորդ իրիկուն նորէն գեղ կ'երթայինք, ցրդի պտուղ ուտե-
լով ցրդիններուն վրայ: Դեռ լոյս ըլլալուն Առջուն փոսը՝ Պետենց գո-
մը մտանք:

— Լաչի հո՛տ, մարդո՛ւ լաչ է... — ճշաց Ղեւնդ:

Ու դուրս թռանք, առանց ստուգելու որո՞ւ գիտի ըլլար:

Դեղնեցանք: Մեր սիրտերը կը զարնէին: Կը դողայինք:

Մեր տունը դացինք գեղ մտնելով: Գուռը պոց էր: Կ'ուզէինք
նայիլ թէ մեր պահած գոյքերը գտնուա՞ծ են: Հրեցինք որ բանանք:
Ահա իմ ննջատենեակէս մարդ մը հազաց: Վեց դիշեր, վրայէ վրայ,
գոյք թէ ալիւր կրելով պահեցինք անտառներուն մէջ: Քնտա եւ ու-
ժաթափ էինք: Քայլ մը կ'առնէինք, տասն հեղ կ'իջնայինք: Վախէն
մեր ջիգերն ու անդամները թուլցեր էին: Առանց Ղեւնդին ես տեղ
մը կ'իջնայի կը մնայի ու բռնուելով կը սպաննուէի: Բայց ան զիս
կը հանէր: Կ'ըսէր որ աճապարեմ: Կը լուսնայ ու կը բռնուինք: Կ'օղ-
նէր իմ բեռանս ալ, իր բռնէն դատ...

Գիշեր մը Նազկոնց Մանուկին Խուլթուի գոմը անցնելով՝ լա-
ցինք այդ ազնիւ մարդուն յիշատակին համար: Խուլթուի հունձքերը
այնքան առատ էին, որ մարդ կը խեղդուէր անոնց մէջ: Խաչկոնց
ու Տնաւերենց արտերուն զարինքը յորդելով գեղներ էին:

Մեր լեռներէն ցերեկը անդադար կարաւաններ կ'երթեկէին:
Անտառներուն մէջ հրացաններու որոտը կը դղրդար շարունակ: Եւ
հօտէն մոլորած աջեր, կաղ ու որդնոտած, անաէր՝ կը թափառէին
մայելով ամայի դաշտերուն ու արօտներուն վրայ, փախչելով մեզ-
մէ: Տեղ մը տեսանք որ Նորչնցի Թուրքեր մեր արտերը կը քաղեն:
Բայց իրենց վախէն մեր վրայ չեկան: Հաճոնց Ծառ գեղը մեծ սուրբ
մը ունէր: Աքացին տալով փլցուցինք գայն, գլխուն հայհոյանքներ
տեղալով: Գեղին շուրջն ալ բոլոր սուրբերը քարուքանդ ըրինք: Մի-
նակ Ս. Թորոսը չկրցանք քանդել, կիրով շինուած ըլլալուն համար:

Շաբաթ մը ետք, մեր ունեցածներէն մէկ-մէկ շալակ շալկած,
մնացածը անտառներուն մէջ պահեցինք նեղ օրուայ համար: Չամուռ-
ճի, ուղղակի Վէլիին տունը դացինք: Ան շա՛տ ուրախացաւ: Յաջորդ
օրն իսկ գեղացիները գրաստներով ճամբայ ելան մեզի հետ՝ Խուռ-
նափիլ սպրանք բերելու: 18 հոգի էինք: Բարի Պրան հէքամ է ըսե-
լով չեկաւ: Սակայն ձինտին, յաղթանդամ լեռնական, բերը կոնս-
կին տուած ու մօրուքն հովերուն, ամենէն առաջ կը քալէր...: Մայ-
րամուտին մեր գեղին սահմանը հասնելով, աղբուրի մը վրայ ընթ-
րիքի նստանք: Քուրտերը ուրախ էին եւ ախորժակով կ'ուտէին: Մեզ
կը յարգէին ու բոլորը մեզի պատաններ՝ կը հրամցնէին: Նոյնիսկ
ձինտին ալ: Ղեւնդն եւս քիչ մը անգիտակցօրէն ուրախ էր: Տրտու-

մը ե՛ս էի: Ինձի կը թուէր թէ մեր գեղին յուղարկաւորութեանը կ'երթայինք...

Անասունները մեր ջրարբի արտերուն մէջ ճոպնեցին ու քովերը պահապաններ թողին: Վէլին պահապաններուն պատուիրեց որ եթէ գիրենք տեսնող ըլլայ, ըսեն թէ կարաւան են, աղ բերելու կ'երթան: Մենք գեղ առաջացանք: Քուրտերը վարպետ էին ու զգուշութեամբ կը քայլէին կատուի ոտքերով: Վէլին շէշհանէ հրացանը ձեռքը, Դեւոնդին եւ ինձի հետ առջեւէն կ'երթար: Գեղին մէջ տեղ-տեղ ճրաղ կը վառէր: Գեղին տակը, Օխմիչենց տունը լոյս կար, ու հարս մը սո՛ւր կը ճշար:

— Մարիկ անա՛, մարիկ անա՛... .

Ան մեր հարսներէն էր: Անոնք փախչելով ետ եկած էին մասամբ ու Թուրքերը անոնց արտերը քաղել կու տային, թէեւ մեծ մասը թնդուած էր հօտերէն: Մեր սպրանքի տեղը հասանք, բայց դուռը մեղրամտով կնքուած էր: Վէլին կնիքը քակեց ու ներս մտանք: Բայց պարապ էր: Թուրքերը տարեր էին: Առանց ուրիշ տեղ նայելու, շուտով ետ դարձանք: Գեղին շուները հաջեցին մեզի ու Քուրտերը խուճապով փախան:

Հասնելով մեր արտերը, խարոյկ վառեցինք ու սկսանք ցորեն աղնօնելով ուտել: Քուրտերը փոխուեցան: Ա՛լ մեր վրայ չէին նայեր: Ոմանք մեզ կը ծաղրէին ըսելով.

— Զէնքերը յանձնե՛լ: Հարկաւ անկէ վերջ Թուրքը ձեզ պիտի կոտորէր: Մեզմէ ալ զէնք ուղեցին՝ տուի՞նք: Տէրսիմէն ալ ուղեցին՝ ան պատասխանեց. «եկէք առէք»: Դուք դառնուկի նման ջարդուեցաք: Ասանկ ժողովուրդ էք: (Ու ծիծաղելով) Եւ դեռ պէյլիօֆ(*) կ'ուզէք...

— Չո՛ւ, չո՛ւ, չո՛ւ, չո՛ւ, — սասկիք կ'ըսէին էշերուն, — բեռան ծանրութենէն չեն կրնար քալել...

Անոնց մէկուն հետ կռիւի բռնուեցայ, բայց միւսները մեզ իրարմէ դատեցին:

Առտուն իրենց գեղը հասանք: Ամէն մարդ իր տունը գնաց: Մենք դեռսակին վրայի թուփերուն մէջ մինակ մնացինք: Դեւոնդ նշմարեց ձիւնտին, որ Ղարատիպի գնացած էր փորը կշտացնելու եւ գեղ կը դառնար: Կանչեցինք, մեր քով եկաւ: Իրեն կ'աղաչէինք, պապենական բարեկամութեան անունով, որ մեզ չըքէ: Ան կ'ըսէր.

— Գացէք, ա՛յ պապա՛մ, այս տեղերէն զացէք ձեր լեռները: Վէլին ստախօս է: Հոս ձեզի նայող չ'ըլլար ու կը սպաննեն:

Իրմէ խնդրեցինք որ գեղ երթալուն գոնէ քիչ մը ուտելիք դրկէ: Ան խօսք տուաւ, բայց բան մը չըրկեց: Ուշ իրիկուան միայն, բարի Քրտուհիներ, մեզ յիշելով հաց բերին:

Քանի մը օր եւս Չամուսճիի անասունները մնացինք: Մեզի նա-

(*) Ամկախութիւն:

յողը նորէն Վէլին էր : Օր մը ան մեզի թի ու փետառ տուաւ : Ու դիւզին դիմաց , խոշոր ձորի մը մէջ , կաղնիներուն տակ , հեղեղին վրայ , տեղ մը ցուցնելով՝ ըսաւ որ հոն մեզի համար տնակ մը շինենք : Սկսանք շինութեան ու յաճախ կ'ըսէինք .

— Արդեօք աս մեր դերեղմա՞նը պիտի ըլլայ . . .

Ղեւնդը ինձմէ ուժով , դրեթէ մինակը կ'աշխատէր : Ես ալ վրան կը խօսէի ու կը բարկանայի : Անգամ մըն ալ դէմս սկսաւ լեզուին տալ՝ չզիմանալով ցուցմունքներուս : Ու կռիւ մըն է փրթաւ մեր մէջ : Սկսանք հայհոյելով մէկգմէկ տփել .

— Շա՛ն տղայ :

— Շան տղան դո՛ւն ես :

— Պապայիդ մեռելը . . .

— Հօրդ դանկը . . .

Երբ յոգնեցանք , կռիւը դադրեցաւ : Որովհետեւ մեզմէ դատ ուրիշ մէկը չկար մեր քով՝ մեզ իրարմէ բաժնելու համար : Իրարու քէն ըրինք : Ու սկսանք մտածել մէկ-մէկ կողմ քաշուած : Վէլին հարսը մեզի հաց բերելով քիչ մը զուարթացուց : Իրիկուններն ալ Վէլինն տունը ընթրելով ձոր կը վերադառնայինք : Սակայն մեր աչքերը անօթեցեր էին ու չէինք կշտանար : Թուփերը մտած կը դիտէինք դեղը՝ սպասելով հացի :

Քուրտերը մեր տունը տեսնելով հիացան :

— Լօ , լօ , եթէ դուռ մըն ալ կախէք , աս մեր տուներէն աւելի աղէկ կ'ըլլայ ,— կ'ըսէին :

Գիշերները եղեւինի հաստ ու չոր կոճղերով կրակ կը վառէինք , ու անոր դիմաց կը մրափէինք հաղուսաներով , քանի որ ծածկոց չունէինք : Գեղին հօտերը յաճախ մեր քովէն կ'անցնէին : Ու հովուուհիներ կաթ կը կթէին մեզի : Չամուռճիի լեռները խիտ անտառներով ծածկուած էին : Հսկայ եղեւիններ , լայնատարած կաղնեստաններ , ցրդի , տօռուխ , ալոճի , մասրենի , վայրի տանձենի ու ինձորենի , ցարասիներ , լուսնտերեւենի , արջի ծառ , հաւկուտենի , սերկեմիչ , կ'աճէին հոն : Ու ջուրերը հազար ձայներով ձորերն ի վար կ'երթային : Կը թափառէինք այնտեղ ու մերթ Կիլիկի լեռը կ'երթայինք , ուր մեր Մահմուտ Տէտէին մենաւոր տունը կար : Անոր կիճն ու տղաքը հոն էին : Անոր տղան , Ալին , որ տան տէրն էր , կը հիւրասիրէր մեզ : Ու մենք երբեմն անոր հօտը արածելու կը տանէինք :

Տիվրիկ երթեւեկող Քուրտեր կը պատմէին այնտեղի կոտորածը : Քաղաքին հայութիւնը մէջտեղէն վերցուած : Դեռ արտերուն մէջ պահուած Հայեր գտնելով , դանոնք կը սպաննեն՝ դեռ կը նետեն եղեր : Անոնք մեզի կ'ըսէին որ փառք տանք Խըզըրին(*) ատանկ տեղ մը ինկած ըլլալուն , ուր հանդիսա կ'ապրինք պաղ ջուրերու վրայ : Ուրիշներ իրենց ծանրութիւնով սփի կու տան ու չեն կրնար փրկուիլ :

(*) Խըզըր = քրտերէն Աստուած կը նշանակէ :

— Ե՛ղբայր, արդեօք այս ցաւէն պիտի ազատի՞նք, — (*) կ'ըսէր Ղեկննդ, ու սփռուեալին իրարու աչքի մէջ կը նայէինք:

Քուրտերը մեզի կը պատմէին դեռ Տիվրիկի լքուած վիճակի մասին: Տուները ամայի, հայ անունը մէջտեղէն վերցած: Փողոցներէ հաւաքուած դիրքեր կը բերէին մեզի: Ու կ'ըսէին թէ քաղաքին վարի ջաղացքին մօտ, հոն ուր դետը ժայռ կը մանէ, հազարներով դիակ լեցուած են իրարու վրայ, որոնց հօտէն քաղաքը չի կրնար շնչել: Մաս մը Հայեր իսլամացուցած էին: Հիմա զանոնք ալ սպաննելով ջրհորները թափեր են: Մտադործի դանակներով ոչխարի պէս սպանդանոցին մէջ Հայերը կը մորթեն եղեր: Քաղաքին բոլորափքը, դաշտերուն մէջ, լեցուն դիակներ արեւին տակ կը հոտին:

Քաղաքին մէջ հանդէս եւ լուսավառութիւն են կատարեր՝ Հայերու բնաջնջումը աւարտած ըլլալով: Թուրքերը ուրախ: Թուրքերը դո՛ւ: Բոլորը պարծանքով իրենց ըրածները կը պատմեն: Մրցում կայ եղեր օրական քանի՞ Հայ սպաննած ըլլալու պատիւին շուրջ: Թուրք մտադործ մը իր արհեստակից Հայը, ծանօթ դասաւս Արթինը, այս խօսքերով կը սպաննէ.

— Եկո՛ւր նայինք, Արթին, վրադ փորձեմ, տեսնեմ թէ դուն ոչխարները ինչպէ՞ս կը մորթէիր:

Ու ազիտութեան եւ ապականութեան օրրան այդ Փոքր Ասիոյ մէջ տեսակներով զրոյարտութիւն ու տարածայնութիւն հաներ էին, զո՛հը դահիճ, դահիճը ամբասիր ներկայացնելու: Հայերը Ամերիկայէն մարդ սպաննելու մեքենայ մը բերել տուած են եղեր, որուն մէկ կողմէն ողջ մարդը բերանը կու տան, միւս կողմէ մորթը վրայէն քերթելով դուրս քաշելու համար: Եղունգ քաշելու, միս փրցնելու գործիքներ դանուած են Հայերուն քով: Ձէնք: Ռուսք: Եթէ երկու օր եւս Թուրքերը չյարձակէին Հայերուն վրայ, Հայերը պիտի սկսէին Իսլամները ջարդել: Հայը Փէսառ, Հայը Խայիւն, հայերե՛նքի դաւաճան: Երկրին հարստութիւնը ձեռքը ունենալով հանդերձ՝ Իսլամներուն դէմ ապերախ դանուեցաւ եւ ուզեց զանոնք կոտորել:

Ու յետոյ, քաւ լիցի՛, ա՛լ Օսմանի բարերար կառավարութիւնը անոնց արիւնը մանել չուզեց: Ան հրամայեց Հայը եօթը ազգերուն, բայց անոնք չընդունեցին դայն, ըսելով որ չեն կրնար պղծել իրենց հողը: Ու ստիպման տակ միայն Թուրքը բնաջնջեց Հայը: Եթէ Թուրքը չըլլար, ձեր յեղափոխականները մեզի ինչե՛ր պիտի ընէին: Ծիչդ է որ բոլորդ ալ մեղաւոր չէիք: Բայց կարելի չէր զանազանել աղէկը գէշէն: Այսպէտով, թացը չորին հեռ այրեցաւ, անմեղը յանցաւորին հեռ ջարդուեցաւ:

Այս տեսակ խօսքերով Թուրքը կը թունաւորէր Քուրտն ալ մեզի դէմ, եւ ինքզինքը անոր առջեւ կ'արդարացնէր: Ես Քուրտերուն կը պատասխանէի թէ ատոնք սուտ են, չինձու: Մեր ուզածը արդա-

(*) Ա՛յսպար, բերք ըս ցաւէն պիտ ազատի՞նք:

բութիւն էր, բարենորոգում, հաւասարութիւն, երկրին յառաջդիմութիւնը, բոլոր տարրերուն բարօրութեանը համար, մէջն ըլլալով Քուրտը:

— Ձեզի պէշ լուրեր ունիմ, — ըսաւ ուրիշ Քուրտ մը, որ քաղաքէն կու գար: — Քաղաքէն մէկ ժամ հեռու, Փոնձոր թուրք գեղին մօտ, Չախձորի մէջ գիղուած Հայերու դիակներ կան: Գնդակի վէրքերէն անոնց իւղերը հալելով դուրս կը վազեն, ու մարմինները արեւին տակ կը սեւնան ածուխի պէս: Անկէ անցայ ու ձեր գեղին մօտ տեսայ չորս ժանտարմաներ, որոնք Պալենց Չաւէնին զիղէն պախուրց մը անցուցած՝ այդ ձորը կը տանէին սպաննելու համար: (*) Ան գիտեսնելուն, լալով հարցուց. «Ա՛լի, ի՞նչ կ'ընես»: Չձգեցին որ հետը խօսիմ:

Ու իրիկուն մըն ալ քաղաքէն եկող Քուրտ մը մեզի գուժեց Պոլսոյ Հայերուն տեղահանութիւնը: Ըսաւ որ այրերը զատելով կը սողաննեն եղեր՝ անոնց ոսկիները յափշտակելով, կիներն ալ Անատոլու կը քշեն: Ես այս բօթէն շանթահար եղայ, մտաբերելով հայրս, մամս եւ անչափահաս քոյրս ու եղբայրս: Բուռն կսկիծ մը չորցուց աչքերս եւ տեւեց մինչեւ յաջորդ օրը, երբ Ղեւոնդ անտառին մէջ երգել սկսաւ: Երգեցի ես ալ, եւ յուզուած, երկուքիս ալ աչքերը պոթկացին: Ու լացինք, բարձրաձայն հեկեկալով: Մինչեւ որ մեր ձայնը մարելով, արձագանգն ալ հատաւ:

Երբոր տունէն կ'ելլեն եղեր, Ղեւոնդին մեծ մայրը, Սառա նէնէն, շեմին վրայ կը կենայ ու այսպէս կ'երգէ, բոլոր անեցիներն ալ լացնելով.

Տէմիզի կէօրտիւքնէ տուրտըմ աղլատըմ,
Այրբլբէ չերվէսի պաշա պաղլատըմ.
Տիւնեսա ֆէնա իմիշ, շիմտի անլատըմ:

Թարգմանութիւն. —

Երբոր ծովը տեսայ, կեցայ ու լացի,
Բաժանումի այլուղը գլխուս կապեցի.
Վա՛տ է եղեր աշխարհ, նոր բմբռնեցի:

Կը հեծեծէինք այս շիրը կանչելով միտին...

Երբ գեղ գացինք, Օրտէն մեր աչքերուն նայեցաւ: Ու գթութեամբ՝

— Ի՞նչ է, լացե՞ր էք, աղա՛ք: Պոլսոյ Հայերուն տեղահանութեան համա՞ր է: Սուտ է այդ լուրը: Ես գայն յօրինողը յանդիմանեցի...

Ինչ աչքիս առջեւ է այդ կարմիր մագերով կինը, որ հաւերուն կուս կու տար: «Ճո՛ւ, ճո՛ւ, ճո՛ւ» կանչելով զանոնք կը ժող-

(*) Զաւէն 18 տարեկան էր:

վէր իր տան մէջ: Ու կեցած երկա՛ր անոնց կը նայէր, մինչեւ որ կշտանային: Յետոյ կատուն կը կերակրէր: Իր ամբողջ ունեցածն ու տան բնակիչներն էին ասոնք: Մենք կը տխրէինք այս տեսարանէն: Քանի որ հաւն ու կատուն ազատ էին ու խնամքի ենթակայ, մինչդեռ մենք անոնցմէ ալ դէշ էինք...

Աշուն էր: Քուրտերը մեր դեղացիներուն պէս տեւ(°) ջարդելով լեռներուն վրայ տեւոց կը դնէին: Զմեռը տեւով քօռիտները(°°) կը սնուցանէին: Աւտոնդին հետ անոնց կ'աշխատէինք, ա'յսօր մէկին, վա'ղը միւսին: Անոնք մեզի կարագ, թան, մածուն կը հրամայէին: Գարիէ հացը անգամ (գարին մեր դեղացիները չէին ուտեր, իշուն կու տային) չէին գտներ: Ու շատ անգամ մեզի կ'ըսէին.

— Պա'պօ, պա'պօ, ի՞նչ ընենք, հաց չունինք որ ձեզի ալ տանք:

Անոնք խաչնարած էին: Հագիւ ամէն տունի արտ մը բաժին կ'իյնար: Պէտք էր դնէին դուրսէն դարին ու ցորենը:

Մեր Ալիպէկ ջերվան, Պրային պզտիկ եղբայրը, գինուորութեան մէջ կորսուած էր: Մանկամարդ կինը երկու անշափահաս զաւակներով տունն էր: Մէկը չունէր որ աշխատի, ուստի անոր տեւը Աւտոնդ կը ջարդէր: Ես ալ տքալով գանոնք կը կրէի որ տեւոց դիզենք:

Օր մը նէ մեզի ըսաւ խնդալով.

— Տղա՛ք, իմ հօրս տունն ալ ձեր դեղացի մը կայ:

Մենք շատ ուրախացանք: Ու երկար հարցուփորձէ ետք կուտահեցինք որ Զաթալին Արմէնն է: Արմէն Պարբերդէն ետ փախեր է մեր ժողովուրդին մէկ մասին հետ: Մեր դեղացիները միշտ ետ դառնալու յոյսով առաջ գացեր են: Երբ Պարբերդի մօտ եփրատը կը տեսնեն, իրենց վախէն թէ անգամ մը անկէ անցնելէ ետք ա'լ չեն կրնար դեղ դառնալ, կը փախչին անմիջապէս: Անոնք որ գետէն անցեր էին, անհետ կորսուեցան: Փախչողներուն մէկ մասը, հարս ու աղջիկ, գեղն էին հիմա: Ես մեր ջերվային կնոջը հետ Արմէնին երկտող մը դրելով, պազատեցայ որ մեր ժողովուրդին ու Մարանին մասին տեղեկութիւն տայ ինձի: Զպատասխանեց: Ան Գարատէրէ, անառիկ ձորին վրայ, իրենց քաջութեամբ եւ անդթութեամբ նշանաւոր, աւազակ Գուլագորգներու տունն էր: Երկու եղբայր էին անոնք, Մահմուտ՝ ծերը, եւ Իսմայիլ՝ պզտիկը: Բայց աւազակութիւնը Քուրտերուն մէջ սղամարդութիւն եւ կտրիճութիւն կը սեպուէր, ամօթ չէր:

... Գիշեր մը, երբ այդ հարսին տան դուռը սպուկեր կը քնանայինք, Աւտոնդ գիտ մշտեց: Արթննալով, տեսայ սպիտակ մօրուքով մէկը, ծոած մեր վրայ, որ ցուցամատը չրթներուն՝ մեզի «սո՛ւս, ձայն չելէ» կը հրամայէր: Ես սաստիկ վախցայ, ու կը հարցնէի թէ ի՞նչ կ'ուզէ, մինչ Աւտոնդ հետը կը խօսէր հանդարտութեամբ:

(°) Տեւ = կաղնիի տերեւով ֆիւլ:

(°°) Քօռիտ = մոյճ տարուամ ուլ:

— Շիաակն ըսէք, — սկսաւ ան ցած ձայնով, — թէ ոչ հի՛մա ձեզ կապելով քաղաք կը տանի՞մ ու կառավարութեան կը յանձնեմ : Իմ մօտս եղած Հայուն ի՞նչ գրեցիք որ ան փախաւ քովէս : Զինքը կը փնտռեմ ու չեմ կրնար դանկել : Ո՞ւր է ան : Շուտով տեղը յայտնեցէք ինձի, ապա՛ թէ ոչ . . .

— Բայց դուք ո՞վ էք, ո՞ր Հայու մասին . . . — կը կահաղէի :

— Լո՛ւս, կամաց, — սաստեց ան, — աղժուկով մի՛ խօսիր : Հոս որ կը պառկիք, իմ աղջկանս տունն է : Հի՛մա հասկցա՞ք . . .

— Քիրվա՛, ձեռքերդ ու սաքերդ պաղնեմ, մեզ մի՛ բռներ : Մի՛ քաղաք տանիր, Թուրքին յանձներ : Յանուն Խըզըրին, քեզի ճշմարտութիւնը պիտի յայտնեմ ամբողջովին :

— Ուրեմն շուտ, շիտակն ըսէ . . .

— Ղեւոնդ բնաւ լուր չունի : Նամակը գրողը ե՛ս էի : Բայց կ'աղաչեմ, ես անոր գրելով տեղեկութիւն ուղեցի մեր ժողովուրդէն :

— Ուրի՞շ : Ուրիշ ի՞նչ գրեցիր : Այդքա՞ն միայն :

— Ուրիշ ոչինչ : Կ'երզնում որ ոչինչ : Ուրիշ բա՛ն չգրեցի :

— Զգրեցի՞ր որ փախչի . . .

Կաղերսէի թէ ոչ, ու կը թնձկայի փախէս, ուղելով լալ, պոռալ, որպէսդի գեղը արթննայ եւ մեզ փրկէ : Ու կը պնդէի որ ուրիշ բա՛ն չգրեցի : Բայց ան շարունակ լուսթիւն կը հրամայէր, ցուցամատը շրթներուն, եւ կը սատէր ու կը սպառնար, վհուկի աչքերը մեր վրայ : Վերջապէս հաւատաց :

— Ահա կ'երթամ, այս անգամ ձեզի ներեցի, — բաւ : — Բայց մտիկ ըրէք, եթէ այդ տղան ձեր քով դայ, ինձի դադտնի իմացուցէք որ բռնեմ-տանիմ : Եթէ ոչ, հետեւանքը դո՛ւք խորհեցէք : Որովհետեւ ձեր հոգին իմ ճանկին մէջն է : Իմ ձեր քով դալս ալ ոչ մէկուն մի՛ յայտնէք գեղը : Մանաւանդ Վէլին չիմանայ, հա՛ :

Կոնակ դարձուց : Ու սաքի ծայրերուն վրայ անչըռիկ, հեռացաւ գիշերին մէջ : Անկէ՛ վերջն է որ Ղեւոնդ ինձի ըսաւ թէ ան Գուլագորդին Մահմուտն էր, որ առջուրնէ կը ճանչնայ եղեր, մեր գեղը գալ-երթալուն : Գուլագորդինք Չաթալինց քերվան էին : Անոր համար Արմենակը փախչելով անոնց դացած էր : Սակայն կոահելով դիտուն դալիքը, փախեր էր անոնց քովէն :

Յաջորդ օրը նորէն այդ կնոջ տեւ ջարդելու դացինք : Բայց մեր փախէն բան չըսինք իրեն : Այդ օրը էշկէլ Աղըլ անուն հրաշալի՛ անտառամասն էինք : Բարձր անտառներ էին չորս դի, ու անոնց մէջ, ձորին դլուխը, հարթ տեղի մը վրայ կը մնար մեր պապերուն գոմը, ուր հի՛մա Քուրբանուն այծերը կու դային ձմեռը արածելու : Անոնք ձիւնին վրայ քայելով կաղնիի ճիւղերուն ծայրերը կ'ուռէին : Էշկէլ Աղը՛լ . . . : Հոս փախեր էր մեր տունը սոջի գէպքին, վե՛ր, Կիլիկիլի, Մահմուտ տէսէի տունը հիւրասիրուելէ առաջ : Ու մայրս այդ արեան թելերով էր հիւսած մանկութիւնս ու մեծցուցեր պիս : Իրի-

կունը ես հաց եփելու համար Կիլիկիի ճամբով մեր ձորին տնակը դարձայ: Անտառին մէջ քարտանձենի մը գտայ, որուն տերեւները թափեր էին ու միայն սեւ եւ հասուն տանձերը կը մնային ճիւղերուն վրայ: Զանոնք թօթուելով հետս առի: Ու Կիլիկի, Վէլիին պզտիկ աղջկան հանդիպեցայ, որ արագ հոն կ'երթար, իր քեռայրին, Ալիին լուր տալու, որ տունէն հեռանայ: Ան ըսաւ որ գեղը ժանտարմաներով լեցուած է, որոնք եկած էին դիրենք ալ աքսորելու Հայերուն պէս: Իսկոյն վազեցի Ղեւոնդը փնտռելու, որ արդիւեմ գեղ երթալէ: Բայց ան արդէն դացեր էր: Անտառ քաշուած՝ սկսայ գեղը դիտել: Ու սարսափով կապոյտ համազգեստաւոր ժանտարմա մը տեսայ, որ գեղին շուրջը կը պտտէր: Քար կտրեցայ վախէս, ենթադրելով որ Ղեւոնդ բռնուած է: Մարդ դուրս չէր ելլեր գեղէն: Յուսահատ, Օրտէին տունը դացի, երբ մթնեց, գաղտագողի: Ու Խոնջ տեսնեմ: Ղեւոնդ հոն էր, կը խօսէր ու կատակելով կը խնդար քուրտ երիտասարդ հարսներուն հետ, որոնք այնքա՛ն մարդամօտ էին...

Եկողը մէկ հողի մըն է եղեր, Տիվրիկցի Նատիր, հիմա ժանտարմա: Ան գարացի հարուստ Հայու մը պզտիկ աղջիկը հեռը կը տանի եղեր: Ասանկ լեզուանի ու աղուոր աղջիկ տեսած չունէինք, կ'ըսէին Քրտուհիները: Կը խօսի եղեր եւրոպական լեզուներ: Ու կ'ըսէ Նատիրի:

— Նատի՛ր, դուն շատ տարեց ես, ես փոքր եմ, մեղքեր ինձի: Դուն մի՛ առներ, աղո՛ւգ տուր...

Այս երկու զէպքերը զիս շատ վախցուցին: Անդունդին բերնէն վար կախուած կ'երթայինք: Ու փրկութեան ճար մը կը խորհէինք: Խոնջ ընել: Վերջապէս մեր քուսուրցի(*) քիրվաները մեր միտքն ինկան: Անոնք շատ ունեւոր էին ու մեծ հողաւոր՝: Ու մեր հօրեղորօր տունը տանիլ-պահել ուզած էին, բայց մերինները չէին դացեր: Ու Չամուռձի ըլլալինս լսած ըլլալով, եկած մեզ ալ փնտռած ու չէին գտած: Ու պատուէրեր էին մեզի լուր տալ, որ իրենց երթանք:

Վէլիին ներկայանալով անոր յայտնեցինք մօրուսաւորին խորհրդաւոր այցելութիւնն ու սպանալիքը: Մեր վախը: Եւ արտօնութիւն ինդրեցինք, որ մեզ Քուսուր զրկէ: Ան թէեւ ոչ առանց այլեւայլի, բայց արտօնեց, չուղելով մեր յոյսերը կաշկանդել: Ու դիշեր մը Իոմայիլ անուն դեղացիի մը հետ մեզ Քուսուր ճամբեց: Դէպի փրկութիւն...

Քուսուր Չամուռձիէն երկու ժամ հեռու է: Ծամբան ամէնը անտառ էր: Բարձունքի մը վրայ հանդիպեցանք խոշոր ու երկնաբերձ կաղնիներու, որոնց համար սուրբեր են ըսաւ Իոմայիլ: Անոնք սուրբին Խըզըր կ'ըսէին: Իջանք Քուսուրի ձորը: Ամբողջ ճամբու ընթացքին Իոմայիլ կ'աղաչէր որ իրեն տանք երկար փէշերով կապայ մը, որ մեզի պահած էինք՝ ձմրան համար: «Ա՛յ, — կ'ըսէր ան, —

(*) Քուրտ գեղ:

կինս հագնի, կինս հագնի» : Վերջապէս մեր ձեռքէն առաւ զայն , խնդրելով որ մարդու բան չըսենք , մանաւանդ Վէլլին :

Ան մեղ կը խաբէր թէ Քուսուր դեռ շատ հեռու է : Կը ցուցնէր բարձր լեռներու գագաթներ , որոնց ճակտին լուսնկային մանգաղը կը փալփէր , ու կ'աւելցնէր . «Քուսուր դեռ այն լեռներուն ետեւն է :» Յանկարծ , սակայն , առանց մեզի բան մը ըսելու , ձորամէջէն շեղելով կալ մը մտաւ , ուր մալանդա եւ ցորենի դէզեր կային : Ու մտեանալով անոնց տակի անկողիններուն՝ ձայնեց . «Մսոս , Մսոս» : Դեռոնդ ըսաւ որ մեր քերվաններուն մեծ սղուն անունն է այս : Ելան երեք եղբայրներ ու անկողիններու մէջ նստան : Սիկար հրամցուցին մեզի : Հաց հանեցին , սերով ու մածունով : Յաւ յայտնեցին որ մեղ չէին կրցած դանել , հակառակ իրենց փնտռուքներուն : Մարազին մէջ անկողին ձգեցին մեզի , քնացանք : Մենք ուրախ էինք : Ա' փրկուած կը կարծէինք մենք մեղ :

Իսմայիլ ետ գնաց :

Տասնը՛հինգ օր մեղ պահեցին անոնք : Ու մեզի առատ սնունդ տուին : Երբ մ'թնէր՝ անոնց կալի աշխատանքներուն կ'օգնէինք : Դեռոնդ տոկուն կ'աշխատէր : Շատ հաճելի եկաւ առ իրենց , եւ ուզեցին Դեռոնդը պահել ու զիս ճամբել : Մսոսն շարունակ մեր քով կու դար , մեր պահուած տեղը , ու մեր բերանը կը փնտռէր թէ դրամ ունի՞նք : Կ'ըսէր որ եթէ դրամ ունենայինք , կրնար մեղ իսլամացնել ու փրկել : Ան Տիվրիկէն իրեն բարեկամ ժանտարմայի մը հետ մինչեւ Արարկիւր իբրեւ ժանտարմա ղինուած , ընկերացեր էր Տիվրիկի ժողովուրդին , ու այդ մասին կը պատմէր .

— Երբ որ Տիվրիկի հայութիւնը տեղահան քրիմ , ես ալ իբրեւ ժանտարմա անոնց հետ էի : Տրիժան քուրտ աշիրէրիմ մօտերը որ հասանք , ժանտարմաները ժողովուրդին ըսին .

«Քուրտերը այս լեռները կտրեր են՝ ձեզ կողպտելու համար : Ձեր դրամները եւ գարդեղէնները բերե՛ք մեզի պահ տուե՛ք , որպէսզի Արարկիւր հասած առեն վերադարձնենք :»

Յորենի դէզի պէս ոսկեղէն եւ արծաթեղէն կուտակուեցաւ հոն : Երեք շորի բեռցան գտնուեց ու ետ , Տիվրիկ ղրկեցին : Հասանք Արարկիւր : Անկէց անդին անցրդի դաշտ մը կար : Ժողովուրդը ծարաւէն հոն քափքփեցաւ : Հայրանեանի կինը Արարկիւր չհասած սաւրան մեռաւ : Շատեր քոյն ունէին իրենց քով ու անձնասպան կ'ըլլային : Ես չէի երեսակայեր որ մահն ալ այդքան դիւրին է : Ժողովուրդին մէկ քառորդը հազիւ մնացած էր , երբ Մալաքիա հասանք : Այնտեղ ծանօթացայ Թուրքի մը հետ , որ իր գոհարեղէնները Սվազ ծախելու կը տանէր : Հարցուցի անոր քէ ուսկի՞ց էին ատուեք : Մարդը պատասխանեց , «Եփրատի վրայ մակուկալար էի : Հոն բերին Կարնոյ եւ Երզնկայի Հայերուն մնացորդները : Կարաւանը կանգ կ'առնէր գե-

տափին վրայ: Տեսնելու բան էր անոնց խեղճութիւնը: Կարելի չէր որ անկեղծ միւսլիւման մը չհրճուէր ասոնք տեսնելով: Երբ սպաննելու ժամը գար, ոստիկանապետը կը հրամայէր որ մնացած այրերը, ծերունիները մէկ-մէկ սիկար վառեն: Անոնք կը հնազանդէին: Յետոյ բոլորին ալ հրաման կ'ընէր, որ աղօթեն: Աղօթքի պահուն կը գոռար, «Աթէ՛շ»: Ու ժողովուրդը շղթայոյ ժանտարմաները կը սկսէին գնդակ քափել անոնց վրայ: Բոլորը ինկած կը հռնուային: Այն ատեն ժանտարմաներու ետեւը սպասող խուժանը կը յարձակէր անոնց վրայ, ֆարերով, մահակներով, կացիներով ու մանգաղով: Քիչ վերջը դիակներուն ջարդաւիշուր կոյտը արուստի վրայ արուստելով՝ կը սեւցնէր գայն: Մեմք, բազմաքիւ մակուկավարներ, ջուրին վրայէն այս բոլորը կը դիտէին մեր սովորութեան համեմատ, մինչեւ որ մեր գործելու կարգը գար: Այդ բոլոր դիակները մակուկներով կը տանէին գետին մէջտեղը ու կը քափէին ջուրը: Այս գոհարեղէնները, ահա, այդ դիակներուն վրայէն հաւաքած եմ:»

Մեր այս ջիւղաները մեզ փնտռած էին մալի համար: Չունէինք: Ըսին թէ կը վախճան մեր ներկայութենէն: Մտտոն մեզ համոզեց որ քաղաք տանի եւ իսլամացներով փրկէ՝ իր թուրք ծանօթներուն շնորհիւ: Համաձայնեցանք: Ճամբայ ելանք որ քաղաք երթանք միասին: Երբ Չամուռնի դադարի լեռը հասանք, սուտ հիւանդ ձեւացաւ ան: «Ո՛ւշ, փորս կը խոցտէ՛» կը պոռար: Ըսաւ որ Չամուռնի երթանք առայժմ, ինք աղէկնալէն ետք կու գայ մեզ կը տանի Տիվրիկ: Ինք ետ դնաց, մենք Չամուռնի: Վէլին սիրով ընդունեց ու նորէն առջի նման հոգ տարաւ մեզի:

Ան ալ քաղաքէն երեսունի մօտ մաքի տուն բերած էր: Ու իր տղաքը անոնց համար տեւ կը ջարդէին: Անոնց մէջ մեր գեղին մաքիներէն ալ կային: Ղեւոնդ կը ճանչնար դանոնք իրենց ականջի նշաններէն ու կը ցուցնէր ինծի: Մենք սկսանք օգնել Վէլին տղոցը: Ղեւոնդ, գեղը մեծցած ու կայտառ, կ'աշխատէր եռանդով՝ առանց յոգնելու: Երբ կեռ յօտոցը ձեռք առնէր, արագ-արագ կը ղլխատէր կաղնիի թուփերը, ճիւղերը կը թափթփէր ու կ'անցնէր: Ես կը ժողովէի ջարդուած ճիւղերը (տեւ), դերկ կը գնէի, կամ դերկերը տեւոցին մօտ կը կրէի: Մէկը տեւոցին վրայ կ'ելլէր, ուրիշ մը դերկերը կ'երկարէր վարէն, ու ան կը շարէր գանոնք ու կը թնդէր: Ու տեւոցը կը մեծնար ու կը բարձրանար:

Կը սիրէի լեռը, կը սիրէի դիշերը: Գիշեր ատեն, լեռը ծնած...: Տղայ կեանքէս կը թափառէի դաշտերն ու անտառները: Մարերուն վրայ, հովերուն ու ջուրերուն երզը խմելով: Կը գոռայի ժայռերուն մէջ, եւ արձագանդը կը յափշտակէր զիս: Միշտ աւելի հեռուն, նոր տեսարան: Այս բլուրէն անդին, այն լեռան ետեւ, այդ անտառին մէջ ի՞նչ կար...: Ղեւոնդ ալ նոյնը կը պատմէր տղայութենէս: Ես կը փափաքէի նաեւ փախստական ապրիլ: Հեռու գեղէն, լեռներու



Հեղինակին ֆոյրը՝
Վարդամուշ
(1922, Պալիս)

վրայ, բացօթեայ քնանալ ու արթննալ: Կը տենչայի արկածներու պէսպիսութեան: Այս կեանքը ստիպեց, շատ ծանր էր, սոսկալի:

Կը թափառէինք անտառներուն մէջ, միտթարիչ ու ընկեր ծառերը ունենալով: Խարոյկի վրայ բիր կը շինէինք՝ գեղացոնց նուէր տալու:

Երբ անձրեւները սկսան, մեր լեռը պահած ալիւրը բերելով՝



Հեղինակը ֆոյրերուն հետ՝
Զարմուհի (իւր աջից)
Վարդանոյշ (իւր ձախից)

Կիւլիլի, Ալիին տունը տարինք: Ան քաղաքէն հարիւր ուլ բերած էր: Անոր ալ շատ տեւ ջարդեցինք: Մեր ալիւրէն մաս մըն ալ Վէլիին տունը գրինք, որ մեզի հաց եփեն: Մեր վրայ կը դուրգուրար Վէլիին հարսը, Հասանի կինը: Կիւլիգար Արտակացի էր, նուրբ, բարի ու պեղեցիկ: Նուրբ, եղէզի ու մատղաշ՝ սօսիի նման: Ան տկանջներէն ու քիթէն օդեր կախած էր: Կիւլիգար, թէեւ շատ դեռահաս, մեզի մայրիկ եղաւ: Ան միայն կը խորհէր մեր վրայ: Կ'եփէր ու հաց

կը հասցնէր մեզի: Երբ ձեռքը թօլօշ^(*) ունենար ու մեզ տեսնէր, իսկոյն խղճալով դայն մեզի կու տար: Ամուսինն ալ նոյնպէս բարի էր:

— Կիւլիզա՛ր, խանկէ՛ (քոյրիկ), — կ'ըսէինք իրեն, — եթէ մենք այս աղէտէն ազատինք, քեզի ի՞նչ նուէր ընելու ենք որ քիչ չըլլայ:

— Լօ, լօ, — կը պատասխանէր ան, — երանի թէ դուք բարով ազատիք, իմ փափաքս ու նուէրս այդ է:

Չարամիտ զեղացիներ անոր բարութիւնը ուրիշ նպատակներու վերադրեցին: Ու Կիւլիզար ահամայ քաշուեցաւ մեզմէ, ու կը տառապէր չկարենալ օգնելուն համար: Ու կ'ըսէր.

— Լօ, լօ, ի՞նչ կրնամ ընել, կը բամբասեն զիս...

Աշունը քաղցր էր, աշունը աղուոր, լեռներուն վրայ: Աշունը մոռացութեան թմբիբի բաժակն էր, որ ցաւը կ'երկարէր ծիրանի ափսէի վրայ: Վայրի պտուղները կը հասուննային: Տերեւները շարունակ դոյն կը փոխէին ու ձայն: Անտառը անհուն նուազարան մըն էր հովերու ճպտին տակ թրթռուն: Ջուրեր կը վազէին ձորերէն ու թոշուններ կը խմբերգէին: Արեւը կը թռէր բարձրէն: Ու արջը կը խաշաձեւէր մեր ճամբան, պղծելով հոս-հոն: Մերթ ալ կը սպառնար հօտերուն:

Ամառը չոր է, ամառը տաք, մեր երկրին մէջ: Հո՛ն, որ այլեւս մեր երկիրը չէ: Բայց աշնան անձրեւները առատ կը թափին, հեղեղներ դոյացնելով: Ամպերը կը դոտան ու կաթմակ կը վարնէ, սպաննելով հովիւ ու հօտաղ:

Թէեւ կորոնցուցեր էինք ամիսներուն ու օրերուն հաշիւը, սա-կայն աշունը կէս եղած ըլլալու էր: Այդ յայտնի էր անձրեւներէն, որոնք անպակաս էին: Գեղին դետակը յորդած էր ու զժուար էր անցնիլ: Այդ օրերուն Քոչկիբիի աշիբէթը ժանտարմաներով լեցուեցաւ: Մինչեւ այն ատեն Քուրտերը առանձնաշնորհեալ դիրք ունէին: Փախտական քուրա զինուորները ազատօրէն ամէն տեղ կ'երթային: Հարցնող-փնտռող չկար: Օգտուելով այս առիթէն, անոնք լեռներուն վրայ հայ փախտականներու բնաջնջումին սկսան: Եթէ չսպաննէին ու մինակ կողոպտէին իսկ, անոնք, մերկ ու անօթի, թուրքին դիւրին որս կը դառնային: Անոնց այս ազատութիւնը Հայերուն բնաջնջումին հետ կանգ առաւ: Ժանտարմաները ա՛լ անգործ էին: Ծաւկատը զինուորի, թուրքն ալ Քուրտը նօսրացնելու պէտք ունէին: Ուստի անոնք սկսան հիմա Քուրտերուն վրայ ձի քշել: Սակայն Քուրտը Հայու նման կահուղ պատառ չէր: Ան չէր թմրած երկար դարե-րու ընթացքին, քրիստոնէական ներող ու ստրկամիտ մօլորութեան մէջ: Այլ՝ կռթնած լեռներուն, իր աղաթին նկարագիրը եւ անոր տիրապետող գիծը, ինքնիշխանութիւնը պահած էր: Ու տեսնելով մեր

(*) Պիրուած լուսչ հաց, մէջը պանիր կամ ուրիշ բան:

վախճանը, ամուր դրկած զէնքը, մեր վիճակին ենթարկուելու վախէն: Չէ՞ որ զրոյցներ կային քրտական աքսորի մը մասին ալ: Ու ամառը չէ՞ր դեռ, որ Տիվրիկի մէջ Հայերէն ապրանք կորզել ուզող Քուրտի մը երեսին ժանտարմա մը ըսած էր.

— Ի՞նչ յոգնութիւն, աղա': Շատ չի տեւեր, կարգը ձերն է...

Անա քէ ինչո՞ւ Քուրտերը շատ անգամ ա՛յս կը քաշէին, մեզի միանալով Թուրքը այդ հողերէն մագրած չըլլալնուն համար:

Եկող ժանտարմաները Չամուռճիի բոլոր զինուորացուներն ու վէլին տարին: Վէլին մեր քսակէն դնաց, ու մնացինք լքուած: Չամուռճիի գլուխը, լերան վրայ, Եկար անուն դեզ մը կար: Նշանաւոր անիշխանական Մէնկուշներուն տեղն էր ան: Հարիւրնոց հայր մը, քանի մը սողոցմով: Մեր ձորէն տեսանք որ Եկար կ'այրի: Մէնկուշին տղաքը չէին յանձնուած, ու ժանտարմաները անոնց տունները կ'այրէին: Իսկոյն մեր անակը լքելով անտառ երանք, վախնալով որ մեզ ալ կրնան մասնել: Ղեւնդը ինձմէ առաջ Կիլիկիի զրկեցի, որպէսզի Ալիին տունը դիտէ: Եթէ հոն Թուրք չըլլար, անոր երթալինք: Ես ալ իրմէ ետք հոն երթալու համար ճամբայ ելայ: Շուարած ու մտաւանջ, կը քալէի անտառէն: Ու ձայն մը առի.

— Թէփրէմէ', վուրուրմ: (Մի' շարժիր, կը սպաննեմ):

Վար նայեցայ, ձայնին կողմը: Ու տեսայ որ մէկը ինձի նշան տներ է հրացանով: Եղած տեղս քարացայ, կեցայ: Ան եկաւ զիս բռնեց: Ու տեսաւ որ շատ կը դողայի վախէս ու տժգուներ էի, սկսաւ մեղմութեամբ խօսիլ հետս: Ու խնդալով այս անօրինակ որսին համար, սկսաւ ինձի սիրտ տալ.

— Մի' վախմար, քեզ պիտի չսպաննեմ: Ես Մենկուշին Ալիին եմ: Ընկերդ ո՞ւր է, կանչէ ա'ն ալ թող գայ: Ձեզ կը զինեմ ու միասին կը պտըտինք լեռները:

— Ի՞նչ ընկեր, ես միմախ եմ հոս:

— Ձեր Չամուռճի դալու առաջին օրն իսկ ինձի լուր տուին, որմէ՞ կը պահես հիմա, երկու հոգի էք: Կանչէ' ընկերդ, — սնդեց:

Մենք Ղեւնդին հետ համաձայնած էինք՝ որ եթէ մէկերնիս բռնուի, ու միւսը ազատ ըլլայ, իբրեւ վտանգի ազդանշան երեք հեզ կանչէ, «բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ» ու շարունակաբար, որպէսզի չբռնուողը փախչելով ինքզինքը ազատէ: Իսկ եթէ վտանգ չըլլայ, ու մեզմէ մէկը վտանգ ենթադրելով փախչի, միւսը, հասկցնելու համար որ բան չկայ, երեք հեզ, ու շարունակաբար կանչէ, «ղա՛, դա՛, դա՛»: Ուստի ես բոլոր ձայնովս ձոր ու անտառ լեցուցի.

— Բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, — բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ...

Անշուշտ ա՛լ եկող չեղաւ:

— Նորէ՛ն պոռա, ուժով կանչէ, — հրամայեց ան:

Այն ստեն ելայ խոշոր տանձենիի մը վրայ, ու բամբ ձայնով դռնացի.

— Բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ, — բո՛ւ, բո՛ւ, բո՛ւ...

Ալ սիրտս հանգստացաւ՝ որ Ղեւոնդ պիտի փրկուի, քանի որ չէր կրնար ձայնս չլսելու չափ հեռուները դանուիլ: Ու աւագակիրն դառնալով ըսի:

— Ալի՛ տխար, դուն ի՛նչ աղէկ մարդ ես, մենք քու քովդ գանք, միտսին լեռները պառտինք, մեզի ալ դէնք կու տաս, չէ՞: Կեցիր երթամ ընկերս ալ բերեմ: Թերեւս քիչ անդին է ու վրս չի լսեր:

Ու առանց իր հաճութիւնը ասնելու՝ ճամբայ ինկայ: Մտայ թուփերուն ետեւ ու սկսայ վազել: Մինչեւ որ ան մտածեց հետս դալ, ու ետեւէս կանչեց որ կենամ, ու սկսաւ դէպի դիս վազել, ա՛լ աւելի ուժով վազեցի ես: Ու կորսուեցայ անտառներուն մէջ: Միշտ փախչելով դէպի գեղ: Կէս ճամբան հանդիպեցայ Վէլին պղտիկ տղուն, Ղճէին, որ հօրը չէջհանէն շալկած կը շտապէր դէպի Կիլիկիա:

— Ո՞ւր, Ղճէ, — ձայնեցի:

— Լօ, լօ, հէստիս պովէ դէննիոյ (անոր հօրը սուրբ...), թեղ ձեռքէն ասնել կու գայի:

Ղեւոնդ տեսած է եղբր բռնուիլս, ու կայծակի պէս գեղ հաննելով լուր տուած որ ինծի օգնութեան գան: Մէնկուչին Ալին ասկէ առաջ Չամուռնի եկած է եղբր՝ ուղեւով մեզ բռնել-տանիլ: Վէլին իմանալով, երկու ապտակ կը զարնէ ու դէնքը վրայէն ասնելով կը վրնտէ:

Տխուր աշունին հետ, մեր լեռներէն երկու տխուր տղայ Չամուռնի եկան: Ու տխու՛ւր, շատ տխուր լուրեր բերին մեզի: Մէկը Քոստայտոյեանց Տիրանն էր (Քոչեան), միւսը Ճերանենց Սիմոն, 29 տարու: Սակայն 12 եւ 13 տարեկան երկու տղայ ունէր, կանուի կարգուած ըլլալով: Գեղին ամենէն ունեւորներէն էր, շատ պահպանողական ու ինայոդ: Անոնց պատմածը մեր լեռան տղոց մասին շատ մութ էր: Լեռ, ձոր Քուրտ ու Թուրք կտրած է եղբր՝ Հայ որսալու: Ասոնք բռնածնին կողոպտելով կը սպաննեն եղբր: Իրենք պահուեր են Ախաղաի մէջ, դետնին տակ, խորունկ փոս մը: Ու գիշերները երկու ժամուան հեռաւորութեամբ ջուր խմել կ'երթան ու նորէն իրենց թաքտոցը կը դառնան: Իրենց ճարը հատած էր եւ ա՛լ չէին կրցեր վիմանալ: Ատոր համար Քուրտերուն եկեր էին, Տիրանենց քիրվային: Ան երկար մօրուքով մէկն էր, ու Չամուռնիի դէմ, անտառին մէջ առանձին տուն մը կը բնակէր՝ պահուելու յարմար: Բայց զանոնք մեզի էր դրկեր, չուղեւով փորձանքի ենթարկուիլ:

Սիմոն մեր լեռներուն վրայ զանազան տեղեր դիակի հանդիպեր է, բայց գիշեր ըլլալուն չէ կրցեր ճանչնալ զանոնք: Քէյհենց Մանուկ տղան, Քարէն մեզմէ բաժնուելէն ետք, գեղին տակ հին ջաղացք է աղաստաներ երկու կիներու հետ: Ու գիշերները գեղէն հաւ բերելով կ'եփեն ու կը զուարճանան եղբր: Երբ թուրք ուլարած մը տեսնելով՝ ժանտարմաներուն կ'իմացնէ: Իր բռնուելէն ետք երեք օր չեն սպաններ դայն: Ո՛ւր որ փախստականի տեղ գիտէր, ժանտարմաներուն հետ վրանին դացեր է, որ բռնել տայ: Ո՛ւր գաղտնի ապրան-

քի տեղ գիտէր, հանել կու տայ: Թերեւս կը կարծէր որ այս անգամ ալ զինքը ազատ պիտի թողուն, ինչպէս Տիվրիկի մօտ, երբ ուրիշները զարկին: Սակայն գիշեր մը Թաթրենց փախտատական տղաքը, բրդոտ Բարգէնը, Երուանդը, Էւայն, տուն երթալով իրենց հօրը կը բանան դոյճ հանելու: Կը զարնեն փետատը, ան կակուղ բանի մը կը հանգիպի:

— Ո՛ւյ, ո՛ւյ, Մանուկ ամին դիակն է...

Կը ճչան, կը ձգեն կը փախչին:

Մեր տղոցմէն քսան հոգի, ճարահատ, քաղաք երթալով կը յանձնուին: Կառավարութիւնը քանի մը շաբաթ զիրենք օրավարձով կ'աշխատցնէ ու ազատ կը թողու, հաւատացնելով թէ ամէն ինչ անցաւ: Այն նենգամտութեամբ՝ որ ուրիշներ լսեն, եւ իրենք ալ պան յանձնուին: Վերջէն սուիսներով անոնց փորերը կը պատուեն եւ ողջ-ողջ ջրհորները կը թափեն: Քաղաք մտած տեղը, Հայոց դպրոցին քովի մեծ ջրհորը դիակներով լեցուն է եղեր:

Կին ու աղջիկ շատ էին մեր գեղը: Հոն ձերան հարսան, Ղեւոնդին մայրիկը: Քանի անգամ Ղեւոնդ ինզրեց որ գիշեր մը զաղա-նի երթանք, մայրը տեսնեմք: Չգացի վախէս, թէեւ անոնք գեղէն դուրս, հողվրափքին տակ, Ղափտանին մինակուկ տունը կը բնակէին: Հոն են եղեր Սանուս եւ Կիւլիգար հարսաներս, մէկը իր չափահաս աղջիկն ու պղտիկ տղան, միւսը իր տղոցմէ մին վրայ տուած: Աղ-ջիկը Տիվրիկի ձեռքէն խլելով ցայլատօնէ ցայլատօն կը պտըացնեն եղեր: Բերսո՛ն, քոյրս, սեւ մազեր ունէր, պեղանի էր, թարմ, ու հետս անխօս: Սանուս հարսաս այս կակիծներէն կը մեռնի: Հարս-ները զինքը լողցնելով թաղեր էին հողվրափքին մէջ: Ախաղաղի ետին, խոր ձորերուն մէջ, քուրտ չէթէներ Քաքնան Կարոյին Մկրչը (Քո-չեան) կը բռնեն: Ան ցնցելով դանոնք կը փախչի, բայց անյայտ էր: Տարիներ ետք քարայրի մը մէջ կմախքը դտան: Գեղին դիմացի սա-րերէն ժանտարմաները բռնեւ էին հիւժած ու անօթի կորիւնը, Օխ-միշինց Սերոբը: Ու պայն գեղին մօտ, գետափին վրայ, հարս ու աղ-ջկան աչքերուն առջեւ կը զնդակահարեն: Սերոբ բոլորովին խոր-տեաշ էր:

Մեր տղաքը առաջ Քարէն հեռանալով, Ախաղաղի լանջին վրայ Հաւքուրին Ձորը քարայր մը ապաստաներ են: Այլուր, այլուր, կոր-կոտ, պանիր, չոքալիք,^(*) ամէն ինչ լեցուցեր են հոն: Մեղուներուն փեթակները ջուրը գնելով, սպաններ են գանոնք ու մեզրը հոն կրեր: Քսան հոգի: Քուրտ չէթէներ անոնց տեղը գտնելով կը պաշարեն եւ կրակի կը բռնեն: Մերիները անգէն, կը փախչին ու կը ցրուին մէկ-մէկ կողմ: Արդենց Սաջօն, լաւ երիտասարդ մը, խելօք, խոտմնա-լից ու համակրելի, լերան կողերուն վրայ զնդակահար կ'իյնայ: Բա-

(*) Չոքալիք:

րեկամ քուրտ հովիւ մը ետքը դիտակին վրայ քար շարելով կը թաղէ : Այս դէպքին Միմոնն ու Տիրանը միասին փակեր էին :

Անոնք ջանի մը օր մեր մօտ կեցան : Բախտէն մեր ունեցածը միասին կ'ուտէինք : Մինչ այդ Քուրտերէն ոմանք զինուորութենէ փախչելով եկեր էին : Ու մեզի դէմ , մեզ կը բամբասէին թէ Քլաները շատցեր են : Վէլիին տունէն մեզի թելադրեցին որ աղոյժէն բաժնուինք եւ ուրիշ տեղ տնակ չիենք : Մենք Տիրանը իր քերվային կը զրկէինք : Միմոնն ալ Գար Տէրէ Ղօլլօ անուն քերվա մը ունէր , բայց չէր համարձակեր քովը երթալ : Թէեւ կ'ըսէր թէ Հետը աղէկ են եղեր : Իր մոզիները անոր անտառը կը զրկէ եղեր արածելու : Ու Հերուան ալ եզը փոխ տուեր է՝ որ վարէ :

— Եթէ ես այդքան լաւ ծանօթ քերվա մը ունենայի , — ըսի իրեն :

Մրտապնդուելով ան Ղօլլոյին զնայ : Տիրան ալ նորէն իր քերվային : Բայց Տիրանի քերվան զայն չէր ընդուներ : Ու ան դացեր Մրվանայ(*) հովիւ եղեր էր սիւննի Թուրքերուն քով , ուր ուրիշ երկու-երեք տղայ ալ կան եղեր մեր դեղէն : Որսորդ Ադոյին , որ Ամերիկա էր , աննման տղաքը , Միհրանն ու Չմոն : Երկուքը երկու ծաղիկ : Ժանտարմաները Հինդն ալ զարկեր էին Հոն :

Մենք մեր Հին տնակին մօտերը ուրիշ մը փորեցինք գետնին մէջ , մեծ եղելինի մը բունին մօտ : Ան աղուէսի բոյնի կը նմանէր : Չորնալուն կը սպասէինք , փոխադրուելու համար . . .

Իրիկուն մը անօթի նստեր կը մտմտայինք մեր տնակին դուռը : Մինչդեռ անդին Կիլիլի Ալին , մեր իր քով պահ տուած ալիւրը կ'ուտէր կը հատցնէր : Քուրտը մերինին նման մաքուր ու սպիտակ ցորենի ալիւր դանէ ու չուտէ՝ : Քանի՜ անգամ աղաչեցինք որ զայն մեզի յանձնէ : Մերժեց : Այդ իրիկուն ելանք որ Կիլիլի երթանք՝ ալիւրը անկէ առնելու :

Չորն իվեր հասանք Կիլիլի ճամբուն վրայի աղբիւրը , որուն ջուրերը մեր տնակին առջեւէն կ'անցնէին : Նստանք Հոն : Խմեցինք : Կաթի համ ունէր : Բայց անխնամ : Փորեցինք զայն : Սալ քարեր բերինք բոլորաբէն : Ղեւնդ մեր լեռներու աղբիւրներուն նման աղուոր մը շինեց զայն սալերով : Ու կ'ըսէր .

— Անպիտաններ , ասանկ ճամբու վրայի կարեւոր աղբիւրի մը անգամ հող չեն տանիր : Քուրտեր են վերջապէս : Յետամնաց :

Կը քալէինք դէպի Կիլիլի : Ղեւնդ առջեւէն , ես ետեւէն : Նայեցայ հուժկու հասակին : Մեր լեռ ելլէին ասդին աւելի երկարեր էր կարծես : Յուզուեցայ եւ աչքերս լեցուեցան : Ամբողջ դերդաստանէս , որ դեղին քառորդէն աւելի էր , մինակ ան մնացեր էր քովս : Մինակ ան կենդանի : Ան ալ յայտնի չէր թէ մինչեւ ե՞րբ . . .

(*) Մր - վանայ = Մեր վանայ : Սեմեֆերիմ Արծրունիի ետս վամէն եկած բանի մը տնուր հայ գիւղ մը :

— Ա՛խ, հասակիդ մեռնիմ, Ղեւոնդ, — ըսի անոր: — Գիտեմ թէ մեզի ազատում չկայ: Երանի թէ ես քենէ առաջ զարնուիմ, քու ըստ հասակովդ զարնուիլդ չտեսնիմ...

Դէպի Կիլիկի կը քալէինք:

Ան ճերմակ բուրդէ լայն շալվար մը հագած էր, մօրը կարածը: Վրայէն կարմիր կտաւէ կարճ կապայ մը, նո՛րէն մօրը կարածը: Մէջքը հին կարմիր գօտի մը, կապային վրայէն: Գլխուն հին եւ իւրոտ Փէս մը:

Կը քալէինք դէպի Կիլիկի...

Ալիին մայրը դուրսը նստած բուրդ կը մանէր: Պահանջեցինք մեր ալիւրը: Զուգեց տալ: Ներս մտնելով բռնի առինք զայն: Ղեւոնդ շալիկեց եւ դուրս ելանք: Ի՞նչ ընել: Անօթի էինք: Մեր ետեւէն կնիկը սկսաւ պոռալ: Ալիին խենթ եղբայրն ալ սկսաւ անտառէն պոռալ: Ան հօտին քով էր: Ալին ինքն ալ քիչ մը շարուկ էր: Մենք հետի հետ, վախով ու դժուար, մեր անակը հասանք: Ուրախ էինք սրբանի մը օրուան ալ ապաւէն ունեցանք: Ուրա՛խ...

... Մթնշաղ էր: Վայրի աղմուկ մը եւ խշրուք, արա՛ւ, անտառներէն վար: Մեր սիրտը դող ելաւ: Իրարու նայեցանք ստգոյն:

— Արջ կու գայ:

— Ալին է, — ըսաւ Ղեւոնդ:

Առիթ չեզաւ փախչելու: Որոտումի պէս Ալին ներս մտաւ տնակէն ու սկսաւ հայհոյել ու ծեծել մեզ:

— Դուք օր-ցերեկով տունս կողոպտէք, իւզս տանիք: Գալուրմա տանիք: Հայտե՛՛ դեղ տեսնեմ: Զեզի հի՛մա կը ցուցնեմ:

Ու հարուածները կը տեղային մեր վրայ, ո՛ւր որ հանդիպէր: Մենք կ'աղերսէինք եւ մեր ձեռքերը իր հարուածներուն դէմ կը բերէինք: Ան լուրջ էր: Մեզի գեղին ճամբան բռնել տուաւ, ինք ետեւէն, ծեծելով: Կը զարնէր մեռցնելու մտքով: Մենք կը վազէինք, խուսափելու համար հարուածներէն: Ինք մեր ետեւէն, գոռալով ու հայհոյելով: Ծիւրած, վախէն ու անօթութենէն, կը տրորէինք լեռներու բիրտ հսկային ծանր թաթին տակ: Ղեւոնդ առջեւէն կ'երթար ու կը հեռանար: Ալին զիս անխնայ կը տրորէր, որ շտապեմ եւ անոր մօտենանք, որպէսզի չփախցնէ:

Երբ դեռ հասանք, խնդրեցի որ թոյլ տայ տրեխներս հանել: Զարկաւ ջուրը ձգեց զիս: Ղեւոնդ մտրուկի պէս կը սուբար: Դիմաց անցաւ, ելաւ անտառ: Եւ կա՛Փ կու տար (կը յոխորտար) Ալիին, պոռալով:

— Կեցիր, երթամ Տիւրիկ յանձնուիմ: Ու յայտնեմ որ գուն զիս կը պահէիր մինչեւ այսօր: Տեսնես թէ մեզ բռնելը ի՞նչպէս կ'ըլլայ:

Ու կ'ուզէր բացուիլ, հեռանալ, կորսուիլ: Սակայն Ալիին ազգակներէն գեղացիները վաղելով առջեւը կտրեցին: Ու պտըտցնե-

լով բերին դեզ խոթեցին զայն: Բայց չկրցան բռնել: Ան ազատ հոս-
հոն կը ցատկէր:

Գեղն իրար անցաւ: Վէլիին տղաքը, Հէսօն ու Ղճէն, մեզի օգ-
նութեան վազելով՝ օձիք-օձիքի եկան Ալիին հետ:

Ժողովուրդը զուրս թափեցաւ՝ կալերուն վրայ: Կռիւ: Աղ-
մուկ: Թոհ ու բոհ: Ամէն գլուխ իր հաշուին կը պոտար: Կրները կը
ճշային խելացնոր: Կ'ուզէի Ղեւոնդին միանալ: Ալին մէկ ձեռքով օ-
ձիքս բռնած՝ չէր ձգեր, միւս ձեռքով կը կռուէր:

Հոն էր ձինտին, մեր պապերուն ընկերը: Պաղատեցանք անոր
որ միջամտելով մեզ փրկէ: Ան լուռ եւ չէզոք կը դիտէր: Յա՛նկարծ
սկսաւ պոռալ.

— Վանան չը՞պէլանէ, յօ, կրետըն, լեխընը... (*)

Ղեւոնդ ինձի կանչեց.

— Փախչինք: ձինտին կապեցէք, զարկէ՛ք, — կ'ըսէ:

Ու սուրաց: Ուզեցի հետեւիլ իրեն: Ալին օձիքս չէր թողուր:
Բոլոր ուժովս ցնցեցի զայն: Այդ պահուն վզիս վրայ հարուած մը
պայթեցաւ մեծ աղմուկով: Գնդա՞կ: Թոայ Ղեւոնդին ետեւէն: Գե-
ղին տակի արտերէն դիմացը, անտառ կը փախչէինք: Ան գառիվեր
էր ու ցից: Ու հայելիի պէս գեղին առջեւ: Մեր ետեւէն աղմկալից կը
ճշար գեղը.

— Փախա՛ն: Բռնեցէ՛ք:

Գեղին տակ կեցուցի Ղեւոնդը.

— Աղբար: Ալին իս զարկաւ: Նայէ չլիս (վիզ), արուն կու
վաղէ՞:

— Չէ, չէ, արուն չկայ: Բան չկայ: Ծուռ ըրէ: Վազէ: Ետը-
նուս կու դան: Կու հասնին մեզի:

Մենք մեզ անտառ զարկինք: Ա՛խ, որքա՛ն ցից էր ան: Կը հե-
ւայի: Ծունչս կը կտրէր: Ան զիս ետեւ թողուլ չէր ուզեր: Կրնար
թռչի՛լ նոյնիսկ: Բայց կ'ուզէր փրկել զիս: Ու կը խրախուսէր.

— Ծուռ ըրէ, չո՛ւտ: Հասա՛ն մեզի...

Ես ուժասպառ ինկայ: Չառիվերին գլուխը, երբ քանի մը քայ-
լէն դուր (տափարակ) տեղ կը հասնէինք: Ա՛խ, եթէ կարենայի պա-
հիկ մըն ալ դիմանալ... Մութը իջած էր: Կը մտնէինք անտառ: Ու
փրկուած:

Բայց ես տապալեցայ դետին: Ան կեցաւ: Ես աղերսեցի իրեն.

— Դուն փախի՛, քե՛զ ազատէ: Ես ա՛լ չեմ կրնար: Գնա՛, դնա՛,
մի՛ կենար: Ես ի՞նչ կ'ուզիմ ըլլամ: Ի՞նչ օգուտ, որ երկուքս ալ զար-
նուինք: Ես հոս թուփը կու մտնիմ: Ընոնք իս չեն տեսնիր: Ետքը
կու դամ քեզ կու գտնիմ:

Բայց ո՛ւր գտնել: Այդ չըսի: Ան դնաց, ետ-ետ նայելով, հե-
ռացաւ: Ես թուփ մտայ:

(*) Ասոնք ի՛նչ փորձանք են, յօ, կապեցէք, զարկէք:

Գեղէն կը պոռային .

— Ահա, մէկը թուփը մտաւ : Հո՛ն է :

Ու տեղս հալածողներուն նշմար կ'ընէին : Շուրջս շուկներ լսեցի : Կ'ուզէի հող մտնել : Թուփ դառնալ : Իսկոյն երկու մարդ վրաս ցատկեցին : Զիս հանեցին տեղէս : Ուժով բռնեցին թեւերս : Ու ըսին .

— Հա՛, այսպէ՛ս : Հիմա փախի՛ր տեսնենք :

Մէկը՝ Ալին էր, միւսը՝ անոր թուրքերուն քով ծառայող թուհաւոր եղբայրը : Կը դողայի : Սիրտս կը գարնէր : Սկսայ պաղատիլ :

— Լեւը սահուած ինչե՛ր ունիմ : Ոսկի, արծաթ : Գանձեր : Մի՛ սպաննէք զիս, բոլորը ձեզի կու տամ :

— Ձե՛նք ուզեր ,— կ'ըսէին անոնք ,— բա՛ն մը չենք ուզեր :

Կ'աղերսէի նորէն : Անողուտ :

— Ա՛րս ,— ըսի ,— գիտեմ որ դուք զիս պիտի զարնէք : Ի՞նչ կայ, հի՛մա, շուտով սպաննեցէք : Շատ չտառապիմ գոնէ :

— Ոչ ,— ըսին անոնք ,— մենք քեզ չենք սպաններ : Քեզ Տիվրիկ տանելով կառավարութեան կը յանձնենք :

— Ի՞նչ կ'ըլլայ, դո՛ւք գարկէք զիս : Թուրքի ձեռքով մեռնիլ չեմ ուզեր : Կրկին մեռնիլ է ան ինձի համար : Թուրքը իմ քջաւախս է : Դո՛ւք գարկէք : Քուրտը թող սպաննէ զիս :

— Ո՛չ ,— կ'ըսէին անոնք , այնքան պինդ բռնած թեւերս , որ սկսան ցաւիլ ,— մենք քեզ կառավարութեան կը յանձնենք : Ձե՛նք սպաններ :

Անողո՛ք : Վճռական :

... Աչնան շաքիլները խշրտացին մեծ աղմուկով : Ռտնաձայներ՝ վազող մարդու : Ու ահա մէկը յարձակեցաւ անոնց վրայ, հսկայ սուր մը ձեռքը : Զիս ազատ թողած, հրէչները եկողին հետ կուռիլ սկսան : Ան կը զարնէր : Միւսները անոր ձեռքերը կը բռնէին, որ հարուածները վրիպին : Ո՛չ թէ զարնել-զարնուիլ, այլ պաշտպանուիլ կ'ուզէին :

Հասանն էր ան, Վէլիին տղան :

Շուարումս կարճ եղաւ : Փախայ, աներեւութացայ իրենց քովէն : Մութը սկսած էր թանձրանալ : Մօտիկ մեծ ձոր մը թուփը մտայ ու կեցայ հոն, որ շունչս եւ հեւքս կանոնաւորուի եւ անոր ձայնէն չգտնեն զիս : Բաւական մնացի հոն : Ականջ տուի դեղին : Հանդարտ էր ան : Լոյսեր կը վառէին հոն : Ծոեցայ ջուրին վրայ ու կուշտ ու կուռ խմեցի : Մեր դեղը վախցողներուն ջուր կը խմցնէին, որպէսզի լեղին չպառուի (չպատռի) :

Մինակ մնացի : Ես որ գիշեր ատեն վախէս մէ՛կ քայլ չէի կրնար առնել առանձին : Սակայն մէկ վախը զօրաւոր եղաւ միւսէն : Ու չորս ոտքի վրայ սկսայ լեռ բարձրանալ : Ելայ Չամուռճիի դիմացի բարձր սարը : Եւ ցուրտին ու հովերուն՝ մինա՛կս կեցայ հոն : Բոպիկ : Կիսամերկ : Գլխաբաց : Տրամաբանեցի որ այս գէպքէն վերջ այլեւս

Քուրտերուն մէջ մնալ հնար չէ: Հաշուեցի որ Ղեւոնդ չիտակ մեր լեռը դացած է: Ու բռնեցի անոր ուղղութիւնը:

Աշնան երկար, տամուկ ու ցուրտ գիշեր: Թափառումս մեծ եղաւ կատարներուն վրայ՝ մինչեւ մեր լեռները հասայ: Ու ճանչցայ պապերուս աւերակ դամբ, Ախմինչատ, որուն քով էի: Լուսնկան՝ խոշոր: Է՞ր: Չե՛մ գիտեր: Տեսայ հոն ալսճի մը, ճերմակ, մեծ եւ ընտիր արջի ալսճներով լեցուն: (*) Ու վրան ելայ: Կերայ ու դրպաններս ու ծոցս լեցուցի՝ Ղեւոնդին տանելու համար: Ան հիմա Տընկովիկ Քէյհենց աղբիւն գլուխը, ծորենիին տակ ըլլալու էր, ուր ամառը մեզի տեղ շինած էինք: Հոն գացի ու կանչեցի զինքը.

— Ղեւոնդ... աղբա՛ր... եկո՛ւ... ես հոսը՛մ... Ղ...դ...

Հոգիները կանչերս առին ու տարին:

Բայց պատասխան չբերին: Իջայ մեր տեղը: Թաց: Գլուխս հողին դրի, որ քնանամ: Յուրա էր: Կը մտէի: Կրակ վառել ուղեցի: Անհնար: Փայտերը թաց, քանի մը լուցկիս թաց, ու հատան: Ելայ անկէ ու բռնեցի Քարին ճամբան, Ղեւոնդը հոն գտնելու յոյսով: Ես Քարը հասայ, լոյսը ծայր տուաւ: Իջայ կէսը, լուսցաւ: Վանքը կ'երեւէր: Հոն Թուրք կար: Չէի կրնար շարժիլ: Տեսնուելու վախէն, լայնարաց անձաւ մը մտայ: Արեւը եկաւ հոն, դրկեց զիս ու տաքցուց:

**

Քարին ամենէն բարձր տեղին վրայ, անառիկ ժայռերուն ետեւն էր այդ քարայրը, Բաղէին Քարին տակ: Բաղէներն անկէ օգին մէջ կը բարձրանային վե՛ր, վե՛ր, պզտիկնալու ու կորսուելու շտի, յետոյ նորէն վար կ'իջնէին:

Նոյն օրը, կէսօրէ վերջ, այդ տեղէն մարթին մը գոռաց, որուն յաջորդեցին խուժողով խօսքեր: Ժայռերն ու խոռոչները ահաւոր աղմուկով արձագանգեցին ու վայրի աղանչներն ու թռչունները ճշարով իրենց բոյներէն թռան: Մարդու ձայներ կ'առնէի ա՛յտեղէն, ուրկէ մենք վար կ'իջնէինք: Բիրերու ու չուաններու օգնութիւնով անոնք կ'ուղէին իջնել սարէն: Բայց դժուար էր ան: Մարդ պէտք էր կա՛մ վարժ ըլլար, եւ կամ կեանքը աչք առնէր, որովհետեւ սխալ քայլէ մը կրնար վար գահավիժիլ եւ ցրեխ-ցրեխ ըլլալ: Ես բարձրացայ քարայրին առաստաղը եւ այնտեղի խոռոչներուն մէջ մտայ: Ինձի կը թուէր թէ մարմինս կը բարակնար ու ներս կը սողար, թէեւ գիտէի որ թերեւս ալ չկրնայի ազատել ինքզինքս ու ձերպերուն մէջ լռնուած մեռնէի հոն: Գլուխս մութ խոռոչ մը մտաւ ու ժամերով շնչասպառ շարշարուեցայ, մինչեւ որ դուրս հանեցի դայն:

Պո՛ւ... դուռն մը եւս: Ինչպէ՛ս կը վախնայի: Ու ինչպէ՛ս

(*) Երկու տեսակ ալոն կար: Արջի ալոն, եւ ըմտամի ալոն:

կ'ըսէի թէ այլեւս մեռած—մնացած եմ : Զայներն ալ կը մօտենային : Անոնք վար կ'իջնէին :

Պո՛ւմ... դռու՛մ մը եւս : Ու հատ մըն ալ, ու հատ մըն ալ, ու այտղէս մինչեւ մայրամուտ : Մակայն յայտնի էր որ չկրցան վար իջնել :

Զայները դադրեցան : Գիշեր եկաւ : Ես մնացի հոն՝ ծուղակին մէջ :

Յաջորդ օր՝ նո՛յն գիճակը : Մարթիններու որոտը Բազէին Քարէն : Մարդագայլերու աղմուկը Քարն ի վար : Ես նո՛յն անձակն առաստաղը, նո՛յն խոռոչներուն մէջ, միեւնո՛յն սարսափն ու վախը :

Երկու օր արձններով սնանեցայ հոն, եւ շատ ծարաւ էի, թէեւ վարէն գետ մը կ'անցնէր :

Որոշեցի փախչիլ այդ ծուղակէն, քանի դեռ ոյժ կար վրաս, եւ անօթութիւնն ու ծարաւը չէին աղարացուցեր զիս : Լեռներուն վրայ կ'ընայի պտուղ ուտել : Իսկ ժայռերուն մէ՞ջ...

Երբ երկրորդ օրը մթնեց, կատուի մը պէս թեթեւ ու խլէզի պէս անաղմուկ սկսայ վեր ելլել Քարէն : Սիրտս կը դարձէր : Կը կենայի եւ ականջ կու տայի՝ թէ արդեօք ձայներ կա՞ն, դէտ՝ սարին վրայ : Որովհետեւ փախչելու մէ՛կ ճամբայ կար միայն, ու եթէ գայն ալ բռնած ըլլային, իմ վերջս էր : Ելայ միշտ վեր : Մարդ չկար, ոչ ալ ձայն : Ու երբ ոտքս կակուղ հողի վրայ դրի, Քարը ետեւ մնաց : Բարձրացայ բլուրի մը կտտարը, աչքերս լեցուեցան : Հովերը դրկեցին զիս ու աչքերս սրբեցին :

Ո՞ւր, ո՞ւր էին այն օրերը, ուր հոս, մեր տունը օպա կ'ելլէր, ու դուարճանալով իրիկուան խարոյկին շուրջ, կ'ըսէին իրարու .

«Չուխի՛ն փոք փո՛ս է,

Ի՛նչ խե՛նք որ կայ, հո՛ս է» :

Անտառ ուղղուեցայ : Ու ձորի մը մէջ ծռեցայ ջուրին վրայ եւ կուշտ ու կուռ խմեցի : Ու Մառզուի մօտ մեր Չօլախին փոսի արտը գացի եւ թուփերը մտայ՝ որ քնանամ : Գետինը թաց էր, հովերը պաղ, ցո՛ւրտ, ցո՛ւրտ, ցո՛ւրտ :

Կը դողայի ու կու լայի կսկիծէս :

Չկա՛ր Աւետոյը, հո՛ն ալ չկար...

Լուսոյաւ : Անտառներուն մէջ, Մառզուն, իր հօտն ու նախիրը դիտելով իրիկուն ըրի : Ջուր կը խմէի ու մասուր կ'ուտէի : Արեւամուտին հետ Չօլախին փոսի մէկ բլրան մատին վրայ նստայ : Անկէ դեղը աղէկ կ'երեւէր : Հօտերը դարձան հոն : Նախիրը՝ բառաչով : Կալերէն ու բուխրիկներէն ծուխերը սիւն-սիւն ելան աժդոյն երկինքն ի վեր : Սկսայ լալ, օրս անխճեւ : Երնէկ տալով բոլորին, որ օճախ մը եւ թուչ մը հաց ունին : Երնէկ տալով դեղի շուններուն եւ կատուններուն...

Յո՛ւրտ, ցո՛ւրտ, ցո՛ւրտ ու եղեամբոտ յետին աշուն : Ելայ չմթնած թաւ թուփ մը փնտռեցի, դիշերը հոն անցընելու համար :

Ու նշմարեցի կուռ թուփերու կոյտ մը՝ այծերու ամառուան լեռնա-
յին ցանկապատի նման: Հոն առաջացայ, ու ի՞նչ տեսնեմ: Յորենի
խուրճեր, որոնց ցորենը անձրեւներէն ծլեր էր ու ծղօտը դեղներ:
Անկողլինի ծածկոց մը: Զինկէ պնակ մը, մէջը հալած ճարպ ու խառ-
լօզին: Նստայ անոնց քով՝ առանց բարակ հաշիւի: Ու յա՛նկարձ շշուկ
մը առի: Այն կողմ դարձայ ու տեսայ չորրցած մարդ մը, թուխ դոյ-
նով, գլխուն պղակ մը, բարակ վիզը երկնցուցեր ինձի կը նայի: Երբ
աչքերս իրենինին հանդիպեցան, ճչաց, ու կրունկը վերցնելով սկսաւ
փախչիլ՝ կոնակը դարձուցած: Ինձմէ ալ վախնա՛լ: Անմիջապէս թռայ
հտեւէն, ու կանչեցի:

— Մի՛ փախչիր, դուրպա՛ն, ես Հայ եմ: Եկո՛ւր, ինձի՛ եկուր,
մի՛ փախչիր: Ես Քոչինց Երուանդն ըմ, կեցի՛ր...

Ան կանդ առաւ: Մօտեցանք: Փուլթով ճանչցանք իրար: Ու
խանդազատանքի զեղումով մը, որ վիշտը եւ մահուան մօտիկութիւ-
նը կու տան մարդուն, իրարու շլլի (վիզ) դրկելով լացինք:

— Երուա՛նդ, դո՞ւն ըս,— ըսաւ ան:

Մեր գեղացի ձերանենց Սէնօն էր ան: Բայց ա՛լ այն կայտառ
ու կարմրերես հովիւր չէր, որ լեռներուն վրայ, այծերուն հետ կ'ան-
ցընէր, եւ այծերուն համար: Ու տօներս՛ւն մի՛նակ գեղ կու դար, եւ
թափա կապա եւ շալփար հագած, Ժամուն կալը, աղջիկներու հտե-
ւէն կը պտըտէր: Բարակցեր էր ան ու երկնցեր: Բայց այդ օրերուն
մենք բոլորս ալ հասակ նետեր էինք: Նիհարցած ըլլալով, երկար
կ'երեւէինք:

Գացինք Սէնոյին բոյնը, որ դտած էի:

— Ինտո՞ր էգաւ որ ըս կողմը եկիր,— հարցուց ան:

Ան դիտէր մեր Չամուռնի ըլլալը: Ես պատմեցի Քուրտերուն
մեզ հալածելը, փախուստը եւ մեր իրար կորսնցնելը Ղեւոնդին հետ:
Եւ հարցուցի թէ Ղեւոնդը տեսա՞ւ: Լուր ունի՞:

— Զի տեսայ, ըս կողմը չեկաւ,— ըսաւ ան:

Սիրտս մորմոքեցաւ այդ խօսքերուն վրայ: Մութ աշխարհը
աւելի մթնեց աչքերուս: Ո՞ւր էր Ղեւոնդը հիմա: Ո՞ւր դանէի զին-
քը: Սէնոյին հետ իրարու գլխին եկածը պատմեցինք: Սուրճերուն
տակ մտանք, քնացանք:

Հազիւ թէ լոյսը ծայր տուած էր, քայլերու ճայն առի եւ խօ-
սակցութիւն լսեցի: Մշտեցի Սէնօն ու արթնցուցի: Ականջը դետին
դրաւ.

— Ժանտարմա ըն, փախչինք,— ըսաւ:

Ու սկսանք վաղել: Անոնք մեզմէ միայն քանի մը քայլ հեռու
էին: Բայց թուփերէն շտեսան մեզ: Մեր տեղը դտեր էին ու տեսեր
որ խուրճերը դեռ տաք են, ինչպէս Կուլօն պատմեց: Հասանք խոր
ու խիտ Աղլճուի անտառները:

— Ա՛լ մի վախնար,— ըսաւ Սէնօն,— ընոնք մի՛նչեւ հօս չեն
դար:

Ջուրերը կը վազէին անկէ : Տերեւները դեղին : Պտուղները հասուն : Մասրենիները կարմիր մասուրներով կքած : Մորենիները այգիներու պէս , մորերը սեւ ու կարմիր : Մենք կը սնանէինք մասուրով միայն : Արջերը ընտիր մասուրները կերեր ու ճիւղերը կտորեր էին : Մեզի կը մնային փշոտ ու կտուտ , անհամ տեսակները :

— Մատկի՛ք , հա , — կը տրանջար Սէնօն , — ազուորները կերեր ըն : Մեզի բան մի չեն թողեր . . .

Կշտանալու եւ մասուր դտնելու համար շատ տեղ կը քալէինք : Երբ ջուր խմէինք , կը տեսնէինք որ նորէն անօթեցեր ենք : Որովհետեւ նոյն սնունդը ունէինք հոտ , մեր աղտեղութիւնն ալ արջերու աղտեղութենէն բնաւ չէր զանազանուեր :

Լեռներուն վրայ ցուրտ էր ու դետինը թաց : Առտուները շաղը ձիւնի պէս ամէն կողմ ճերմկցուցած կ'ըլլար : Գիշերները կը վազէին ու կը փչէին հովերը : Մենք կ'ապրէինք Սառզուի լեռներուն վրայ , որովհետեւ մեր լեռները շարունակ պաշարման եւ խուզարկութեան կ'ենթարկուէին : Իսկ թուրքերը իրենց միտքէն չէին անցըներ թէ մենք իրենց լեռները կրնանք ըլլալ :

Գիշերները կը բանայինք Սարզուի տեւոցները եւ անոնց մէջը կը քնանայինք : Ու կը մտէինք մինչեւ լոյս՝ մեր ակռաները իրարու զարնելով : Առտուն Սէնօն նորէն տեւերը իրենց հին ձեւին մէջ կը շարէր , որ կասկածի տեղի չտանք : Ու կը վազէինք իսկոյն հո՛ն , ուր արեւ առեր էր , իյնալով անոր թաթին տակ՝ տաքնալու համար :

Սէնօն կ'ըսէր թէ շապիկը մարդուս կաշին է , իսկ մենք շապիկ չունէինք : Անօթի մարդը շատ կը մտի , կ'ըսէր ան դեռ , իսկ մենք ուտելիք չունէինք : Ան վարժ էր ցուրտի՛ ալ , հովի՛ ալ եւ կը տոկար քաջութեամբ : Իսկ որովհետեւ շատոնց միմեկին էր լեռներուն վրայ , վարժուած էր նաեւ ճուղումուկ տալու(*) ժանտարմաներուն : Թօփալ Կուլօն ալ , որուն կը հանդիպէր , Սառզուէն լուր կը բերէր իրեն՝ թէ յաջորդ օրը ժանտարմաները ո՞ր լեռնամասը պիտի պաշարեն ու խուզարկեն , եւ մենք ալ ըստ այնմ մեր տեղերը կը փոխէինք : Կուլօն երբեմն մէկ-երկու հաց ալ կու տար Սէնոյին : Բայց այդ գլխուն մագերուն համրանքով մեր հացը կերած կաղը այլեւս զիւ տեսնել չէր ուզեր : Սէնօն կ'երթար թուրք հովիւներու եւ հօտերու մէջէն զարմանալի ճարպիկութեամբ , առանց նշմարուելու , Կուլօն կը զանէր , որուն լուրերը հացէն աւելի կարեւոր էին մեզի համար : Երբ թուրք հօտերը մեր վրայ դային , ես կը շուարէի : Սէնօն զիս առած թուփերը կը մտնէր ու կը հրամայէր որ լաւ տափիմ : (**)

Ու այսպէս երբեք չտեսան մեզ :

Քանի մը շարաթ անցուցինք Սէնոյին հետ լեռներուն վրայ , ուր

(*) Ճակումուկ տալ = մէկուսն առջեւէն դարձադարձիկ ուղղութեամբ փախչիլ , շուարեցնելով գայն :

(**) Տափիլ = գիտնիմ կափիլ , տափակնալ գետնիմ վրայ :

հալածանքն ու հրացանաձգութիւնները անպակաս էին, ինչպէս ամառը Չամուռճիի անտառներուն ամառի տեղերը, ուր կ'ըսէին թէ թուրքերը Գարահիսարի Հայերը կը հալածեն: Ժանտարմաները դիչերով կը պաշարէին լեռները եւ ցերեկները շուներով ու հրացանաձգութիւններով մեզ որսալու կ'ելլէին:

Իրիկուն մը, ուշ առեհ, Սառլուի շատ մօտ, կով մը տեսանք: Չայն քշեցինք եւ անառու տարինք խնդալով: Կենդանին չէր կրնար քալել անտառներէն, ուստի դուրեցինք ձոր մը եւ մորթեցինք, քերթեցինք, կաշին առինք վրայէն: Մէնօն վարժ հարուածով մը կուրծքը բացու եւ սիրտը դուրս հանեց ու մենք տաք-տաք զայն կերանք հում-հում: Մեր կրցածին չափ ալ միս առինք միասին ու հեռացանք: Ըամբան Մէնօն ինձի ցոյց կու տար ժանտարմաներու մոյկերուն հեռքերը, դամբուն տեղն ալ գտնելով՝ ու կ'ըսէր.

— Ժանտարմայի իզ(*) է, ամու, աղէկ որ հոս չեն ըրաստ եկեր մեզի... (**)

Մենք այդ միսերը եփեցինք առանց աղի եւ կերանք օրերով: Ես դիչերները կաշիին մէջ կը պտակէի, ցերեկներն ալ կը պառացնէի զայն՝ պոչէն ուսս նետած: Կովին ոտքերուն կաշիէն անմիջապէս մէկ-մէկ արեւի կարեցինք ամէն մէկս:

Ոտքերը յարզի էին, որովհետեւ արեւին դուխը կը լայնար, առանց կարի, եւ նուազ ջուր կ'առնէր:

Յաջորդ օրը զեղացիները կսվը կը փնտռէին: Մենք անտառէն կը դիտէինք դիրենք: Անոր մնացորդները դտան ու սկսան հայհոյել:

Մենք կ'ապրէինք վայրի կենդանիներու նման: Պտիկութեանս, երբ իրիկունները զեղ կը դառնայինք գոմերէն, աղուէսները մեզ կը դիտէին: Երբ իրենց կողմ վազէինք, իրենք ալ կը վազէին: Երբ կենայինք, իրենք ալ կը կենային: Մենք հիմա այդ աղուէսներուն պէս էինք: Ամայի տեղեր ընտրել, մարդէ փախչիլ ու կարելին դողնալ՝ ապրելու համար:

Հեռուէն կ'երեւէր մեր գեղը: Կը նայէինք անոր եւ կը տխրէինք: Մէնօն կը պատմէր Ծնունդի, Չատիկի, Բարեկենդանի եւ ուրիշ օրերու ուտելիքներէն եւ բերնին ջուրերը կը վազէին: «Ա՛խ, — կ'ըսէր ան, — անգամ մըն ալ դեզ երթայինք, ըս օրերը տեսնէինք ու մեռնէինք»:

Ձմեռը կը մօտենար: Լեռներուն վրայ հեղահեղ աւելի ցուրտ կ'ընէր: Բարձր գագաթներուն վրայ ձիւնը նստեր էր արդէն: Ես միշտ Ղեւոնդին համար մտահոյ էի: Կ'ուզէի զաղտնի Չամուռճի դառնալ՝ անկէ լուր մը առնելու համար: Իսկ Մէնօն ալ Կուլօն Խարակապան պիտի տանէր եւ իբրեւ Քուրտ հովուութեան տար այնտեղ, ուր խօսած էր առաջուրէն: Անոր մաղերը ա՛յնքան երկարեր էին որ այլան-

(*) իզ = հետք:

(**) Ըրաստ եկեր = կանգնալ:

դակուեր էր դէմքը: Զմեւիւով մը շինեցի մաղերը՝ բաժնուելէ առաջ: Ու խոստացայ իրեն, որ եթէ երթամ Ղեւոնդն ալ դռնեմ, անպատճառ կու գամ կը տանիմ զինքը եւ միտսին կ'ըլլանք: Մեր հարստութիւնը, կովուն կաշին ալ ձողակեցինք ու բաժնեցինք իրարու մէջ:

Կէսօրէ հօք մըն էր, երբ ուղեցի ճամբայ ելլել, որպէսզի տակաւին չմթնած դռնեմ Քուրտերուն լեռները: Եթէ ոչ կրնայի կորսուիլ եւ բոլորովին ուրիշ կողմ երթալ: Երբ իրար համբուրեցինք ու բաժնուեցանք, Սէնոն ըսաւ թնծկալով.

— Իշտը աւ չեղաւ, ախա...

Գիշերը սյնքան մութ էր, որ մատդ աչքդ տանէիր չէր տեսուեր: Արձակուած զնդակի պէս մխրճուեցայ անոր մէջ ու կ'երթայի կատարէ-կատար: Հովերը թեւերս մտած կը թռցնէին զիս:

**

Կ'անձրեւէր: Մութ ամպեր լիցած էին բարձունքներուն վրայ: Հովերը երեսիս կը փչէին, անձրեւը մարմինս կը ծեծէր: Կը կորսնցնէի լերան նեղ արահեար, ինքզինքս մերթ դեղերու մօտ, մերթ պարեխներու մէջ գանձելով: Անցայ լերան մը վրայ երկու հողիի քովէն, որոնք թուփ մը մտած սիկար կը ծիւղէին: Մենք դերթէ իրար քուրեցանք, սյնքան մօտ պացի, առանց զիրենք տեսնելու, եւ ճշացի ու փախայ հովի պէս: Ետեւէս ոչ մէկ ձայն: Արդեօք անոնք ալ Հայկ'ը էին, թերեւս մեր գեղացի...: Հովէն ու անձրեւէն նեղուած, մերթ թուփերը կը մտնէի յագնասպառ՝ քնանալու համար: Յուրտը զիս կը հանէր նորէն ու ճամբու կը դնէր: Կու լայի եւ ծնունդս կ'անիծէի: Ու կը մաղթէի որ թշնամի'ս իսկ իմ վիճակս չունենայ:

... Զամուռնի աքաղաղները կը պոսային լուսադէմին, երբ հոն հասայ: Մարտու եկաւ վրաս, ու վէլիին դոմը մտայ: Միտս զարնել սկսաւ: Ի՞նչ եղած էր Ղեւոնդը, ո՞ր էր: Առտուն վէլիին կէնը գոմ մտաւ, աթերը կ'թելու: Քանի մը լաւ այծեր դեռ միշտ կաթ կու տային, թանձր կաթ մը, թէեւ քիչ: Զիս տեսնելուն՝ վախէն ճշալով սկսաւ ետ-ետ երթալ:

— Սման, — պոսացի, — մի՛ վախնար, ե՛ս եմ, ե՛ս եմ...:

Տեսա՛ ու ճանչցաւ զիս:

— Ղօթիք տը դեռս կրօ, (*) դո՞ւ ես, — ըսաւ, այնքա՛ն դարմացած՝ որ ես ողջ իրենց եմ եկեր նորէն: Վէլին ալ ինձմէ մէ՛կ դիշեր առաջ զինուորութենէ փախեր-եկեր էր: Ան կը ցաւէր պատահածներուն համար ու նորէն կը պահէր զիս:

Ղեւոնդին մասին զանազան զրոյցներ կը պատմէին: Ծինտին կ'ըսէր թէ պացեր Մրվանայ՝ հովիւ եղեր է: Ուրիշներ կ'ըսէին թէ Քուրտերուն մէջ տեղ մը պահուած է: Ու Ծինտիի կէնն ալ, Շահ-

(*) Ղօթիք տը դեռս կրօ = խոստուիլ քիչ մտնել:

սէնէմ, ցաւով կը գոժէր ինծի՝ թէ Ալին բռներ-սպաններ է Ղեւոնդը...

Մեր փախած գիշերը Ղեւոնդ իմ ենթադրութեանս հակառակ, Չամուռնի անտառներուն մէջ կը մնայ: Մտահոգ ինձմով, որ զինքը չզտայ, ուրեմն բռնուած էի: Իսկ ես առանց այս մասին անդրադառնալու, հասցնելով մեր լեռները սուրացի: Առանց ստուգելու իր մեկնած կամ մնացած ըլլալը: Լուսնալուսն կը քաշուի զեղին նայող ցից անտառամասը, կանկաճոտ եւ տխուր իմ մասիս: Կը դիտէ գեղը: Կը դիտէ մեր ձորի տնակը, զոր Ալին կու դայ հիմնայատակ կ'ընէ: Կէսօրը կ'անցնի: Իրիկուան շուքերը կ'երկարին: Ծփուն ստուերներուն հետ անտառին մէջ կը սկսի շրջադայիլ մօլորուն քայլերով: Հոն տեւ ջարդող Մէջուացի Քուրտեր կը տեսնեն զինքը: Կը կարեկցին: Հաց կու տան: Կը հարցնեն թէ ինչո՞ւ տխուր է:

— Եղբայրս բռնեցին ու ա'լ երեւան չելաւ, — կ'ըսէ, ու կու լայ:

Անոնք Ալիին կը պատմեն: Ան ընկերներ կը հաւաքէ ու կու դան: Կը հետապնդեն զինքը անտառին մէջ ու կը բռնեն: Մէջքին հին կարմիր դօտիով ձեռքերը կ'անակին վրայ կը կապեն ու կ'առնեն կը տանին:

Ալիին տունին մօտ աղբուր մը կայ, որ եօթն աչքերով փայտէ դուռին մէջ կը հօսի: Անոր անունը Կաղէ Թէքերի է: Լերան դադաթ մը, լեցուն թաւ ու խոշոր դիերով ու միակ անցքը: Հինէն հոն աւազակներ կը պահուէին՝ ճամբորդներ կողոպտելու: Վախով ամէն մարդ Թէքերէն կ'անցնէր:

Կապուած ու ծեծէն ուժասպառ Ղեւոնդը հոն կը տանին երեք ընկերները, — Մահմուտ տէտէին տղան, Ալին, մեր ամենամօտ քերվան, Պրայի տղան, Ալին, եւայլն: Կը պահեցնեն զինքը ու վրան կը չոքին: Կիլիկիէ Ալին խոռ յօտոցով կը սկսի մօրթել: Արիւնը կը Փշայ: Կը ցնցուի ան ջղածիւր ու կը մռնչէ: Կը սարսափին ու զինքը ճամբուն քով ձգելով կը փախչին:

Երկա՛ր, ըսին, ան կը տապալակի գետինները՝ կիսամեռ վիճակի մէջ: Արիւնը կը կաթկթի վիզէն՝ առանց դադրելու: Ուժասպառ, քարի մը կը կռթնի: Գլուխը մէկ քովէն կախ, աչքերը մարած, կը հեծէ տկար ձայնով՝ ձեռքերը կապած: Պատահամբ անկէ կ'անցնի աւազակ Կէնճոյէ Ռնտէ: Կը տեսնէ զայն: Կը կարեկցի: Աւազակներն ալ իրենց խիղճն ունին: Գնդակ մը կ'արձակէ կուրծքին՝ զինքը փրկելու համար: Դիակը կը մնայ հոն անշարժ ու անթաղ: Քուրտը կը հեռանայ: Կ'երթայ, կը պատմէ...

... Ու կը պատուի: Ու կը լսուի: Զգայուն Քրդուհներ տաղեր կը հանեն դեղեցիկ, երիտասարդ ու սիրահար Փլային վրայ: Կը կանչեն զանոնք եղբօրը քով, առա՛նց դիտնալու, անուշազի՛ր անոր պոռթկացող աչքերուն...

ՄԻՆԱԿ...

Ձմեռը դուռն էր եկեր: Ցուրտ էր այնքան, պիտի ըսէի՝ հսկող Աստուծոյ խղճին չափ: Չլուսցած անտառ կ'երթայի՝ վրաս սեւ կապերտ մը առած, որ ինծի անկողին ու հաղուտ էր: Մութին կը դառնայի դեղ, Վէլին դամբ, քնանալու այծերուն մէջ, որոնք ցնցոտիներս կը կրծէին: Գեղին քով, առէն ջուր կը խմէի: Գոմ չհասած ան կը սառէր պիտիս վրայ: Լալկան էի եղեր Ղեւոնդին համար ու կ'ըզձայի շուտով ես ալ վերջանալ: Վէլինք կ'ուզէին որ երթամ Ալին հովիւ ըլլամ...

Օրտէն պատմեց որ Սիմոն կողոպտուելով իր Ղուլօ քերվայէն, շապիկ-վարտիկով փախեր իրեն եկեր է: Ջարդերէն առաջ Օրտէի ամուսինը Սիմոնի հովիւն էր: Ան ալ դուրս ըրեր է զինքը, ու Սիմոն յուսահատ նորէն Ղուլոյին կ'երթայ, որ այս անգամ զինքը սպաննելով հեղեղատի մը տակ կը թաղէ:

Վէլին ըսաւ որ Օվկոնց չորս տղաքը մեր լեռներն են եղեր: Մահճուտ պէկ գիրենք տեսեր ու կրակեր է:

— Փաշա'ս, դուն ալ որ մեզի գնդակ նետես, մենք ո՞ւր երթանք,— ըսեր են իրեն:

Մեր երիտասարդութեան մէջ նշանաւոր քաջեր էին անոնք: (*) Մանաւանդ Բարթօն:

Կովտուն մօտակայ արէվի թուրք դեղին մէջ Թօփալ Պօղոս անուն փերեզակ մը կար: Ջարդը սկսելուն ան հոն լաթ կը կարէ եղեր, ու մնացեր է: Տիւրիկցի հայ գերձակները կոնակով կամ էջով կերպաս առած գեղերը կ'երթային: Ու ամիսներով մէկ գեղ մնալով լաթ կը կարէին, դրամէ զատ իւղ, պանիր, ցորեն, փայտ, ամէն բան հաւաքելով: Այդ օրերուն դաւազանով ականջին տակ զարնելով սպաններ էին դալն:

Ու լուր եկաւ հօրաքրոջմէս: Երազիս յարդ ու ճերմակ հաւկիթ տեսած էի: Գէ՛չ երազ: Օրտէն պատմեց որ հօրքուրս իրօք մեկ բռնող Քուրտերուն հետ դուքերը հանելով անոնց գեղը, Ղար Տէրէ դացած էր: Քուրտերը տեղէ մը մեզը կը զողնան: Հօրքուրս բերնէն կը փախցնէ թէ ո՛վ զողցաւ: Երեսէ կ'իյնայ: Կը կասկածի: Գիշեր մը պատիկներով կը փախչի: Քուրտերը հարածելով ետեւէն կը հասնին: Անոնք կը պահուին: Քուրտերը կը կրակեն: Մայրն ու պառիկ աղջիկը կը սպաննուին: Մեծը կը վիրաւորուի: Մօտակայ աղահանքերուն փարիչ Սվազցի ծեր Թուրք մը դայն իր քով կ'առնէ: Ու զաւակն հեծուցած՝ հեռը Սվազ տանելով կ'ամուսնանայ:

(*) 25 հոգի են եղեր անոնք, որոնք զինուորաբեկ փախեր եւ կիւր են Ղար Տէրէ, Ղալպկաւոնիքուն հով սպաստամելու համար, բայց 25ն ալ կ'անհետացուին են: Անոնք կերտան՞ք էիմ:

Այդ օրերուն լսուեցաւ թէ Հայ մը եկեր է անտառները: Մարդէ կը փախչի եղեր: Ղեւո՞նդը: Ան է, կ'ըսէին ինձի: Ու ելայ փնտռուաւքի: Սէնճն էր ան, որ Կուլճն միասին բերած էր: Քանի մը օր ետք Ճինախին կինը գայն իր եղբօր տարաւ վերի Մէջուտ, որովհետեւ Սէնճն առաջնակարգ հովիւ մըն էր:

Գիշեր մը արթնցայ գոմին մէջ, որ այժերը մայելով դուրս կ'ելլեն, ու կ'իները լըյս բռնած գոմ կու գան: Զիս որ տեսան սղջ, կարեկցութեամբ՝

— Լօ, լօ, բան չկայ, բան չկայ,— ըսին, այժերը նորէն ներս ըրին ու գացին: Մէկը եկած էր հոն՝ զիս սպաննելու: Բայց մութին մէջ չէր գտած դիս ու հեռացեր էր: Ալին էր անշուշտ:



Վահան Հիւսեան
Շապին-Գարահիսարի 1915 Յունիսի
հերոսամարտի ղեկավարներէն

ՓԱՆՈՒՍ

Կըսէին թէ Յունուարի կէսը անցեր է: Վէլին զիս զեղէն հանելով էջքէլ Աղլ դոմը զրկած էր հովիւներուն քով, Ալիին տան մօտ: Ան ինձի վիկի ալիւր կը զրկէր, դարիէն ալ դէշ, եւ ես հացս կ'եփէի: Օր մը, երբ տակաւին հօտ ու հովիւ գոմ չէին դարձած, զեղէն պղտիկ աղջիկ մը եկաւ հոն, իր հովիւ եղբօր ալիւր բերելով: Ան ինձի լուր տուաւ որ գեղացիները եւ Վէլին որոշեր են զիս մէջտեղէն վերցնել: Կ'ուզեն եղեր Ալիին յանձնել, որ տանի սպաննէ: Անմիջապէս դոմը ձգեցի, պղտիկ աղջկան ըսելով որ զեղ կ'երթամ, Վէլիին:

Ձիւներուն մէջ ինկայ ու սկսայ փախչել: Ելայ լերան մը վրայ, մթնեց: Հոն լացի: Ազօթեցի: Գացի, գացի, ձոր մը հանդիպեցաւ: Կրակ տեսայ, ու ան կողմը բռնեցի: Ձաղացք մըն էր ան: Դուռը բացին, զիս ներս տռին: Կաղնիի ահագին կոճղեր լայն սալէ օճախին մէջ իրար կռթներ կը վառէին, լոյս ու տաքութիւն տալով ջաղացքին: Ձաղացպանները մեղքցան եւ ինձի քամմա տուին: Ըսին որ հոն Չամուռճիա Օրթէ (Միջին Չամուռճի) է, եւ զիս զեղին ամենէն հարուստ տունը, Մէհմէտ Ալիենց զրկեցին:

Շուներու հալածանքներէն նեղուած, ու գեղացիներու ցուցմունքներով, գացի եւ այդ տունը դտայ: Չհարցուցին ո՛վ ըլլայր: Հիւր էի, զիս ներս տռին: Երբ մօտեցայ ակութին լոյսին, յանկարծ լալով ու ճշալով կին մը վրայ փաթթուեցաւ ու հարցուց հայերէն.

— Մասա՞ղ ըլլամ քեզի, աղբարդ ս՞ըր է:

Ի՞նչ տեսնեմ: Թաթրենց Մազրը, Ղեւոնդին նշանածն էր: Բուրը պահ մը քարացած սկսան մեզ ղիտել: Յետոյ փութով անկողին ձգեցին օճախին քով ու նստեցուցին զիս: Ու սկսան ինձի պատմել տալ քաշածներս ու տեսածներս: Մազր գլխուս վրայ կեցած, աչքերը մութին՝ կու լար շարունակ: Տանտէրը կը սաստէր որ դալբեցնէ լացը: Բայց ան գեռ կու լար, ինչպէս ես, պատմելու առեն: Որովհետեւ լսեր էր որ Ղեւոնդին հետ էի, ու ահա գտաւ զիս մինակ:

Երբ աւարտեցի, Մազր քովս նստաւ ու միասին հայերէն խօսեցանք: Ան պատմեց որ փախեր ետ եկեր է, ու լեռը մնացեր: Հոն զինքը գտեր ու առեւանդեր է Կէնճոյէ Ռնտէն, ու օրերով միասին պտըտցուցեր: Ու բերեր Մէհմէտ Ալիենց աղուն, Քաղսյին կնութեան տուեր է: Ան պատմեց որ Ռնտէն յետոյ իր հօրեղբօրորդին, Չարեհն ալ բռներ ու պտըտցուցեր է հետը: Անգամ մը մարթինը գլխուն տակ դրած հաւքուն կ'ըլլայ: Չարեհ գէնքը կը քաշէ որ զինք սպաննէ, բայց ան չի թողուր եւ ցատկելով ինք կը սպաննէ դայն: Ու պատմեր է Մազրին, որ ա՛լ յոյսը կտրէ, նշանածն ալ չկայ, չկա՞յ...: Հոն, Թէքլիի կատարին վրայ, աղբիւրին քով, վայրի դազաններ ու գիշակերներ կը բզբտեն զիսկը...

Անոնք քանի մը օր վար դրին զիս: Լուացին վրասագլուխս եւ

խաչեցին՝ բազմահազար ոջիւններէ մաքրելով: Քաղօ լաթերս առած ախոռին մէջ կեցաւ, ու ճո՛ւ, ճո՛ւ կանչելով հաւերը շուրջը հաւաքեց, ու սկսաւ առատութեամբ ոջիւներս թափել, մինչ անոնք ախորժակով կը կտցէին: Ու կը մեղքնար զիս: Վերկի ալիւրէ հացս ալ հոտոտեց, գէշ կը հոտէր, ցոյց տուաւ ասոր-անոր, հայհոյեց Վէլիին, որ շան չկերածը մարդու տուեր է, ու բռնեց զայն շունին առջեւ նետեց, որ չկերաւ:

Քաղոյի հայրը, Սլօ, գինուորութեան մէջ կորսուած էր: Ինք հազիւ քսանը անց, աւելի պղտիկ եղբայր մը եւս ունէր: Պահ մը մտածեց զիս անտառ զրկել հովիւին քով, դոմը, ու պահել: Բայց վախցաւ որ դեղացիները կը մատնեն ու տուն-տեղ, ստացուածք, կեանք վրայ կու տայ: Անոր համար զիս հեռացուց: Ըսաւ թէ Չամուռճիա ժուռն (Վերի Չամուրճի) Կօզէլ անուն բարի քուրս ժանտարմա մը կայ, որ հայ ծառայ մը կ'ուղէ, որովհետեւ ինք ժանտարմայական արհեստին հետեւելուն՝ գործերը երեսի վրայ կը մնային: Ժանտարմայի երթա՛լ: Զիս համոզեց որ չվախնամ, չի դարնէր: Ու հոն զրկեց:

Քալելով ճիւնի արահետէ՝ դեղին ափը հասայ, Վերի Չամուրճի: Շուները ինծի եկան: Մէկը, որ հոն անտեսանելի կերպով կեցած էր,

— Էվ քի՞ է, լօ՞, — կանչեց: (*)

— Էզ ըմ, — պատասխան տուի: (**)

Ու չխտակ քովը երթալով՝ ժանտարմա Կօզէլը հարցուցի: Ան հոն կը սպասէ եղեր, որ եկողը կրնայ իր գինուոր եղբայրը ըլլալ, որուն փախուստը ուշացեր է: Յայտնեց թէ ինք Կօզէլի տղան է, ու զիս տուն տարաւ:

Կօզէլ բարձրահասակ, դեղին մօրուքով, չափահաս մարդ մըն էր:

Ան ալ իր տղուն կը սպասէ եղեր, ու զարմացան այս տարօրինակ որսին վրայ: Մօրուքը բռնեց ու գլուխը ճօճեց:

— Չվախցա՞ր քովս եկար, ես ժանտարմա եմ, — ըսաւ:

— Քեզի նման բարի մարդ մը կը փնտռէի, ու հազիւ թէ դասայ: Ինչո՞ւ վախնամ քեզմէ:

Այս պատասխանէս հաճոյացած, Կօզէլ խնդաց, եւ սկսաւ իր ժանտարմայական բարեգործութիւնները թուել: Ըսաւ թէ երբ Հայերը կոտորելու կը տանէին, ինք զնգակը միշտ ծուռ կը նետէր, որ չզպչի անոնց:

— Մեմք Քուրտեսս արիւն չեմք քափեր, հէրամ է ամ, — ըսաւ:
— Դեռ քանի մը օր առաջ Բեմկայի քարէն տասը տղայ բռնեցինք: Անոնց քափտոցը գտած էինք, բայց դուրս չէին ելլեր: Քարայրին

(*) Աս ո՞վ է, լօ՞:

(**) Ես եմ:

դուրս խոտ լեցնելով այրեցիմք: Ծուխէն կիսահեղձ՝ դուրս ելլելով յանձնուեցան: Չամոնք Տիվրիկ տարինք ու հոն զարկինք: Բայց ես բնա՛ւ մէկուն չդպայ:

Անգամ մը կամուրջի՛ մը վրայ Հայեր սուխմահարելով գետ կը նետէինք, որովհետեւ մէ՛կ Հայը գնդակ մը չէր արժէր, ըստ հրամանի: Հայ մը շատ պաղատեցաւ որ ժամտարման զինք գնդակով սպաննէ եւ անոր քանի մը կարմիր ոսկի խոստացաւ: Համաձայնեցան: Հայը ոսկիները վնարեց: Ժամտարման նորէն սուխմով զարկաւ ու գետ նետեց զայն: Թուրքերու քով ձեր գեղէն շատ հարս ու աղջիկ կայ...

Կօղէլ կ'ուզէր որ զիս ծառայ աննէ, բայց տղան կ'ընդդիմանար: Ան կը պնդէր: Տղան կը մերժէր: Յաջորդ օր հայրը մեկնեցաւ: Ես անոնց ախոռը կը պահուէի: Երբ մթնեց, տղան լոյս մը բռնած՝ քրօջը եւ փոքր եղբորը հետ դոմ եկաւ քովս:

— Դուն դրամ ունիս, դրամներդ տուր, — ըսաւ:

— Չունիմ, բա՛ն չունիմ:

— Ունիս: Վէլլին քով էիր: Կողոպտուած չես տակաւին, մենք գիտենք:

— Չունիմ, — ըսի, — ինձրեմ, ահա՛, խուզարկէ:

Ու թեւերս վեր վերցնելով կեցայ:

— Կ'երզնում: Չունիմ:

Ան լոյսը քրօջը տալով՝ սկսաւ զիս վերէն վար խուզարկել ու բան չգտաւ: Քոյրը անյաղ աչքերով վրաս կը նայէր, դրամի սպանելով: Ու պզտիկ եղբայրը, թարմ ու անուշ, թոթով պատանի մը, կը գթար վրաս ու կը մեղքնար, շարունակ կրկնելով խղճալի ձայնով:

— Լօ, լօ, մե՛քէ, կոմսէ... (*)

Մուզարկութենէն վերջ ըսաւ որ ա՛լ ինձի բան պիտի չընեն, եւ զիս աղատ կը թողուն: Խնդրեցի որ Մէջուտ գեղին ճամբան ցոյց տան: Անոր մեծերէն թօփալ Ալի պէկ զիս հարցուցած է եղեր, տակաւին Չամուռնի օրերէն: Ան հետս մինչեւ գեղին քով եկաւ ու Մէջուտի ճամբան բացատրեց: Ու ըսաւ որ զգոյշ ըլլամ, ճամբուն մօտ Պալէենց տունը շատ կատղած չուներ կան, կրնան զիս փարատել: «Չաղպաքէ մը որ անցնիս, անկէ ետք Մէջուտ կու գայ»:

(*) Լօ, լօ, մի՛ ըմբռնե՛ք:

ՄԷՋՈՒՏ

Չմեռ գիշեր: Չոր ցուրտ: Լիալուսին: Ձիւներուն մէջէն իյնալ-ելլելով գացի՛, գացի՛: Ու մտայ տուներով շրջապատուած տեղ մը: Բազմաթիւ շուներ աղմուկով վրաս եկան: Բոլոր ուժովս պոռացի բարձրաձայն:

— Լօ՛, Լօ՛, Բուտիան բեպըկըրըն:(¹)

Այդ պահուն պատանի մը դուրս գալով՝ շուները վռնտեց: Անկէ խնդրեցի, քրտերէն, որ ինձի Մէջուտի ճամբան ցոյց տայ:

— Մէջուտ վա՛ է, — պատասխանեց:(²)

Այս խօսքին վրայ մէկէն շուարեցայ, թերեւ տխրելով որ աւելի երկար չեղաւ ճամբան: Ուրեմն Մէջուտը աս է, եւ ես հոն: Բայց ո՞ւր երթամ, ո՞ր դուռ դարնեմ: Մարդ չեմ ճանչնար: Մինչ պաղելով կեցած էի մէջտեղը, առանց գիտնալու թէ ո՞ր կողմ շարժիմ, թերեւ ետ, նոյն տունէն երիտասարդ մըն ալ դուրս գալով, սկսաւ հարցնել թէ ո՞վ էի, ո՞ր աշխարհէն եւ ո՞ր ժողովուրդէն, ուրկէ՞ կու գայի եւ ո՞ւր կ'երթայի: Սկսայ անկատար քրտերէնով բռտերը ճամձմել՝ առանց գիտնալու թէ ի՞նչ բռեմ, երբ ան՝

— Հասկցայ՛, հասկցայ՛, նե՛րս հրամմէ, — ըսաւ:

Մտանք տունէն ներս: Տո՞ւն: Մեծ սրահ մըն էր ան, որուն մէկ անկիւնը, քարէ աիւլթին մէջ քրտական առատ կրակը ճարձատելով տաքութիւն եւ լոյս կու տար: Ակութին շուրջ այրեր, կիներ ու կիսամերկ աղեկներ բոլորուելով նստեր կը ճուպոցնէին:(³) Ոտքի ցատկելով, ինձի ճիշդ կրակին քով տեղ տուին՝ որ տաքնամ: Սառած ըլլալու էի: Եւ տեսքս ու լեզուս հազիւ կասկած կը թողուին թէ ո՞վ կրնայի ըլլալ: Ծուռով հաց բերին ինձի: Ու սկսան քաշածներս եւ մանաւանդ ո՞ւր պահուած եւ ի՞նչպէս իրենց, Մէջուտ եկած ըլլալս հարցնել: Ու կ'ըսէին թէ ես Վէլլիին պահած Հայն եմ: Ես կ'ուրանայի:

— Գիտենք որ դուն ան Հայն ես, մեղմէ ինչո՞ւ գաղտնի պահել — ըսին:

— Վէլլին չեմ ճանչնար: Այդ անունը ձեզմէ լսեցի: Այս գիշեր, ուղղակի լեռներէն, առաջին անգամ աշիրէթ մտայ ու դուք զիս ներս առիք: Մինչեւ հիմա առանձին կը պահուէի: Եթէ սակայն նոյնիսկ մէկն ու միւսը զիս պահած ըլլան, պէ՞տք է տարաձայնեմ այդ բանը: Իսկ զիտեք խիստ հրամանը Հայ պահողներուն դէմ, որուն համաձայն ամբողջ զեղ մը պիտի կոտորուի ու հրկիզուի, եթէ հոն Հայ մը գտնեն: Այսօր ձեզի հիւր եմ, շէն մնաք: Պիտի ուզէի՞ք որ վաղը մեկնելէ վերջ ամէն տեղ տարաձայնէի թէ զիս հիւրասիրեցիք:

(1) Լօ, Լօ, շուները բռնեցէ՛ք:

(2) Մէջուտը ա՛ս է:

(3) ճուպոցնել = խապտ լեզու խօսիլ չհասկցուելիք:

Անոնք այս խօսքերէն խանդավառուելով ուրախացած, գովեցին պաղտնապահութիւնս, որ իրենց մէջ շատ դնահատուած յատկութիւն մըն է, ու ա'լ նոյն հարցումը չըրին ինծի:

Ձիս ներս առնողը կիւլ Հասան անուն պաւակներու տէր, բարձրահասակ երիտասարդ մըն էր: Տանտէրս, Էղիզ, բարձրահասակ ու թիկնեզ, բարի, խոհեմ, պանդխտութիւն ու աշխարհք սեռած մարդ մըն էր: Հիմա թշուառութեան մէջ իր բազմանդամ ընտանիքին ու մօրը հետ՝ բայց դեռ քէրիմ: (*)

Էղիզ շատ ցաւ կը զգար ջարդերուն համար, ու մեր գեղէն իր քրիվաները կը հարցնէր, որոնք եկած չէին որ պահէր: Անոնք իմ կնքահայրերս էին, Խնկենք, որոնցմէ մէ'կը մէջտեղ չկար:

Ես անկէ խնդրեցի որ զիս դեղին ազդեցիկներէն դրել-կարգալ դիտող Թօփալ Ալի պէկին տանի, որ զիս Չամուռնի հարցուցած֊ փնտռած է եղեր: Քուրսերու մէջ իմ մասին կը խօսուէր թէ տասներկու լեզու գիտեմ, որ անոնց ըմբռնումով մտաւորական ըսել է: Ան զիս իր տան մէջ բոլորովին դադանի պահեց գեղէն, եւ յաջորդ իրիկուն մթնելուն պէս Ալի պէկին պացինք: Ալի պէկ տունին առջեւ կեցած էր, ու մեզ տեսնելուն Էղիզի հարցուց.

— Լօ, վա քի՞ է: (**)

Աղիզ անոր ահանջին ցած ձայնով քանի մը խօսք փսփսաց: Ալի պէկ շատ մեծ դոհունակութիւն դգաց որ ուղղակի իրեն եւ իր անունին եկեր եմ, եւ յարզանքով մեզ ներս հրամցուց: Ալի պէկ յաղթանդամ, դեղին մօրուքով, վաթսուն տարեկան մէկն էր: Մտանք փոքրիկ սենեակ մը, ուր թիթեղէ վառարան կը վառէր, եւ դեղացիներն ու իր աղաքը հաւաքուելով նստած էին: Անմիջապէս մեզի թարմ հաց, պահածոյ միս եւ խաւ չեօգէլիկ բերին: Աղիզ մերժեց ուտել: Ես ալ ըսի որ ընթրած եմ, բայց ստիպեցին որ ուտեմ:

Ընթրիքին վրայ օտքի ելայ եւ թուրքերէն, խօսքս Ալի պէկին ուղղելով ըսի.

— Էֆէնտի, Ձեր Վսեմութեան ծանօթ է այն գորհուրելի կոտորածը, որուն ենթարկուեցաւ ձեզի բարեկամ մեր խեղճ ազգը, բարբարոս Թուրքերուն կողմէ: Անոնցմէ շատերը դեղակահարելով Եփրատ թափեցին, եւ մաս մըն ալ փճացուցին լեռներուն ու ճամբաներուն վրայ: Բան մը որ Ձեր Վսեմութիւնը ինձմէ լաւ գիտէ: (Ան «Այո՛, այո՛, գիտե՛մ, գիտե՛մ» բառերով եւ դլխու համակիր շարժումներով ընդմիջեց զիս, հրաւիրելով որ նստիմ եւ անանկ խօսիմ): Անոնցմէ էի նաեւ ես, Ձեր յետին ծառան, Պուլէն եկած մեր գեղը՝ օդափոխութեան, ու հոն ալ մնացած կրակին մէջ: Ես փախայ, ինկայ լեռ ու ձոր, եւ ապաստան գտայ Ձեր բարեկամ եւ ազնուական Ժողովուրդին մօտ: Սակայն վերջերս, յուսահատ բոլորէն, ամէն գուն իմ առջեւ գոց տեսնելով, դուրսը ձիւներուն վրայ մնացի

(*) Կառավարութեան մօտ չարձանագրուած:

(**) Ծօ, սս ո՞վ է:

լքուած : Էֆէ'նտի, որսորդին գնդակներէն փախչող Թռչունը ծառի մը սաղարթներուն մէջ կը պահուի . Թուրքին սարսափէն հալածական Հայն ալ մեծ մարդու մը հովանիին կ'ուզէ ապաստանիլ : Զկայ այս կողմերը, ինչքան տեղ որ քրտերէն կը խօսուի, Զեր Վսեմութենէն բարձր ու մեծ մէկը : Ուստի ես Զեղի կը դիմեմ իբրեւ իմ փրկիչս : Ազատելու ուրիշ ճար չունիմ : Ահա վիզս Զեղի' կ'երկարեմ : Կտրեցէ՛ք դուրսն կամ ապրեցուցէ՛ք զիս : Կը նախընտրեմ բարեկամ Քուրտի ձեռքով մեռնիլ, քան սխերիմ Թուրքի սուրով :

Իմ խօսքերս լաւ տպաւորութիւն գործեցին Ալի պէկի վրայ, որ պատասխանեց ինծի նոյնպէս Թուրքերէն : Ան այդ ճառս չէր մոռցեր, ու յետագային ալ միշտ կը յիշէր զայն :

Պարզելէ ետք Քուրտին բարեացակամութիւնն ու Թուրքին դազանութիւնը Հայուն հանդէպ, շարունակեց .

— Մեղք որ մինակ դուն եկեր ես ձեր շէն ու մեծ գեղէն, ուր կը յաճախէինք մեր տուներուն պէս : Շատ կը ցաւիմ, որ չկրցանք մարդ ազատել : Դուն գիտես այդ մասին եղած խիստ հրամանը : Մեր ապրուստը ձեզմով էր, ու մենք առանց Հայու մերկ մնացինք այսօր : Ուշիմ եւ աշխատասէր էր ձեր ազգը, եւ ատոր համար նախանձեցան ու փճացուցին զայն : Ես տեսնուեցայ Տիվրիկ ու Սվազ Թուրք երեւելիներու հետ եւ անոնց դադափարն ալ այս էր : Վաղը ես կրկին Երզնկա պիտի երթամ, մեր աշիրէթին զինուորներուն դուրսն անցած, որովհետեւ տեղակալ եմ : Քեզի անկէ լուրեր կը բերեմ : Կը ցաւիմ որ մեկնուածիս նախօրեակին եկար : Սակայն հոգ չէ, քեզի համար կարգադրութիւն մը կ'ընեմ : Այս գիշեր նորէն Էղիզին մօտ կեցիր, վազն առտու կանուխ իմ տղաս, Տըն, քեզ միասին այժերուն դամը կը տանի լեռներուն վրայ, ուր մարդ քեզ չի տեսներ : Ես գեղէն ուտեստք կը գրկեմ եւ կը մնաս հոն մինչեւ դարուն : Եթէ մինչ այդ աշխարհը փոխուի, քեզ փրկած կ'ըլլամ ու բարեքս չես մոռնար : Այլապէս նորէն կ'անցնիս ճամբադ կ'երթաս, եւ ո՛չ ես քեզ տեսած կ'ըլլամ, ոչ ալ դուն զիս :

Այս պատասխանին վրայ աչքերս տամկացան, եւ ես ցատկեցի անոր ձեռքը համբուրելու, բայց ան ետ քաշելով մերժեց : Գեղացիները ապշահար մեզի կը նայէին :

Ալի պէկ ինծի հարցուց թէ Տիվրիկցի Սենեքերիմ Քիւրքճեանը կը ճանչնա՞մ : Ուշիմ եւ ինքնօգնութեամբ ուսման տիրացած, Տիվրիկի հայ երեւելիներէն, Սվազի դանձապահն էր :

— Այո՛, — պատասխանեցի, — շատ մօտէն կը ճանչնամ, հօրս բարեկամն էր :

— Քիւրքճեանը իսլամացուցին եւ ան կրօնաւոր եղաւ ու մզկիթի մէջ քարոզ կու տար : Ընտանիքն ալ իրեն հետ իսլամացուելով փրկուած էր : Սակայն յետոյ Թուրքերը նախանձեցան եւ «անհաւատին ներկայութեան յարմար չէ ազօթել» ըսելով սպաննեցին : Կինն ու դուստրներն ալ աքսորուեցան :

— Խնդրեմ, — Հարցուցի անոր, — քանի որ այդքան լաւատեղեակ էք, Սվազի գինուորական բժշկապետ Տոքթ. Հայրանեանը ի՞նչ եղած է: Լսելովս խալամացուելով փրկուեր է:

— Չկայ, — պատասխանեց ան, կարուկ ու չոր, — Մուսմէք կերաւ անոր գլուխը: Երբ Սերաստիոյ մէջ առաջին անգամ Դաշնակցականները ձերբակալել սկսան, Հայրանեան վալլիին դիմելով կը բողոքէ: «Եթէ անոնց յանցանքը Դաշնակ ըլլալն է, ե՛ս ալ Դաշնակ եմ, գի՛ս ալ ձերբակալելու էք» կ'ըսէ: Ասոր վրայ վալլին անոր խիստ ոճով կը պատասխանէ թէ՛ ձեզի ազատութիւն եւ սահմանադրութիւն ալ շնորհեցինք, բայց դուք երես առնելով շատ առաջ դացիք եւ չափը անցուցիք: Հիմա սպասեցէք եւ տեսէք թէ ձեզի ինչե՛ր պիտի ընենք: «Թէ որ մարդկութիւնը եւ քաղաքակրթութիւնը մէկ կողմ թողուք, կրնաք շատ բան ընել» պատասխանելով, բարկացած կը մեկնի բժիշկը: Սվազի երեւելի Հայերուն հետ, թիւով 150 հոգի, Հայրանեանն ալ ճամբայ կը հանեն՝ կառքերու մէջ նստեցուցած, իբրեւ թէ Կեսարիա զրկելով վատուելու համար: Գիշերանց, քաղաքէն հեռու, ժանտարմայի խիտ ցանցի մը մէջ առած զանոնք, Մուսմէք, մուսկէրով, բոլորն ալ անձամբ կը գնդակահարէ: (*)

Այս բոթը զարհուրելի տպաւորութիւն գործեց վրաս:

Ան դուժեց նոյնպէս Չիմառացի Բիծային Սվազի մէջ կախուիլը: Կախաղանին առջեւ ըսեր է Բիծա. — Սուրը Օսմանցիին, անկախութիւնը Հայուն է:

Այլ պէկ խրատեց որ երբեք չյայտնեմ գրել-կարգալ գիտնալս, այլ ըսեմ թէ պարզ արհեստաւոր եմ, որոնց հանդէպ պէտքի բերումով քիչ մը մեղմութիւն կար:

Յաջորդ օր ան աշիրէթէն 200 գինուորով մեկնեցաւ: Սակայն իր խոստումը չյարգեց: Այլ պէկ չէր կրնար ինծի նման փորձանքը իր դոմը զրկել, պարզ այն պատճառով որ իր տղան, գինուորական փախստական, հոն կը պահուի եղեր: Անիկա յետոյ, դողութեան մը առթիւ կը սպաննուի: Բայց սպաննողները չճանչցան անոր ո՞վ ըլլալը: Տլօն մէջտեղ չելաւ զիս տանելու: Գեղն ալ իրարանցումի մէջ էր: Շատեր կ'երթային: Էջիզ, տանտէրս, տխրօրէն կը հարցնէր ինձի.

— Միզ այս ձիւն-ձմրան զօրք կը տանին, դուն այս բանին ի՞նչ կ'ըսես:

Ու վնաց: Տունը կը մնային կիներն ու զաւակը: Անոնց վիտուն պատուհաս էի: Ինձմէ շատ խնդրեց որ վիտուն ճարը նայիմ ու հեռանամ իր տունէն:

ՎԵՐՁ Ա.: ՄԱՍԻ

(*) 1954ին Պեդիսի մէջ տեսնուեցայ Բժիշկ Հայրանեանի կնոջը հետ, որ ինձի ըսաւ թէ ամուսինը մինչեւ 1916ի սկիզբը ողջ է եղեր: Յետոյ «փախուստի ընթացքին» կը սպաննուի: Անշուշտ որ կրնար փախչիլ: Բայց ո՞ր:

Բ. ՄԱՍ

ԷՋԵՐ ՀԱՅԱԶԻՆՁ ՍԱՐՍԱՓՆԵՐԷՆ

Ինչո՞ւ, ան ալ իրենք-իրենց, դացին յանձնուեցան շատերը: Գոնիա նստող Ղըղըրպաշներուն կրօնապետը, Հաճի Պէքթաշ, Ռուսին դէմ կրօնական պատերազմ հռչակած էր: Ու իր քուրտ հաւատացեալները սուրբ պատերազմի կը հրաւիրէր: Սվազ եկած էր ան եւ էրզրում կը մեկնէր, անձամբ քուրտ բանակին գլուխն անցնելու համար: Բոլոր հրամանատարներն ալ անխափ՝ մի՛այն Քուրտ պիտի ըլլային: Անոր մասին հազար գրոյց չըջան կ'ընէր: Հրաշագործ է եղեր: Առանց կրակի կաթսաներ կ'ետացնէ: Իրեն դացող հիւանդը կը հպի զդանցքին ու կ'աղէկնայ: Նստած է ան կ'ըսէին, բարձր բազմոցին վրայ: Ժողովուրդը կը խուժէ գէպի զինքը ու դրամ կը նուիրէ, որ կը դեղուի անոր քով: Սահաւապետ է ան, ու օրը մի՛նակ փոքրիկ ճնճուկով մը կը սնանի:

Վէլին ալ, երբ դեռ Չամուռճի էի, օր մը զիս սենեակ կանչել տուաւ եւ Հաճի Պէքթաշի մասին խորհուրդ հարցուց:

Քուրտերը բոլորն ալ դացին ու դեղերը դատարկուեցան: Մինակ Տէրսիմ ըմբոստ մնաց ու մէ՛կ մարդ չըրկեց: Գացողներուն մէկ մասը փախչելով վերադարձաւ, զուրաէն ստոած անդամներով: Թուրքերը զանոնք ուռսական թնդանօթներուն բերանն էին տուեր: Հաճի Պէքթաշ ալ ամօթահար անցաւ՝ նո՛րէն Գոնիա դնաց, Կարինէն ետ դառնալով:

... Գեղացիները սկսած էին էջիզի տունը խուժել, Հայր տեսնելու համար: Կարծես Հաճի Պէքթաշ Մէջուտ եկած ըլլար: Անոնք ուզեցին դպրոց բանալ, որ իրենց տղաքը կարգացնեմ: Մերժեցի: Նոյն բանը ուզեր էին մեր գեղացիներն ալ, բայց զգուշութեան համար՝ չէի ըրած, հակառակ փափաքիս:

Բարի եւ հարուստ Քուրտ մը, Հասան աղան, զիս քովը ծառայ տուաւ: Բալխիբով անոր փայտ կը բերէի անտառէն: Ու շարակով: Օր մը երբ փայտ չալկած կու դայի, ցնցոտիներու մէջ, Մարան զիս այդ վիճակին մէջ տեսաւ: Այն կապուտաչուի հարսը, որուն ամբողջ դեղը սիրահարուած էր: Ան փախչելով իր քերվաններուն եկած էր: Բայց համ չտուին: Ու մեկնեցաւ Թուրքերուն մօտ, Տօղան, ու հոն

ալ մնաց : Մարանէն դատ Խաչկոնց ուրիշ մէկ հարսը ապաստանած էր Մէջուտ, երկու պզտիկ տղաքներով ու Հասան աղային տունն էր : Շատ կ'անարգէր զիս, «փիս»ը ըսելով, ու կը վռնաէր Քուրտին տունէն... Ան մնաց միշտ Մէջուտ ու երկու տղաքն ալ փրկեց :

Օր մը ինծի լուր տուին թէ Քուրտ մը գեղ եկեր է եւ զիս տեսնել կ'ուզէ : Ան ժամանակին մեզի հովուութիւն ըրած է եղեր ու հայերէն գիտէ : Հաճոյքով քովը դացի : Կը ճանչնար հայրս եւ բոլոր մեր տնեցիները : Ղառ Տէրէցի էր, գեղ մը, որուն Քուրտերը արիւն-արբու էին եւ Հայ կ'որսային լեռներուն վրայ : Ան ինծի «մալ» հարցուց : Երբ չունիմ ըսի, դայրացաւ : Գերի առաւ զիս եւ ա'լ չժողուց որ մեկնիմ : Ծուղակն ինկայ : Կ'ուզէի հեռանալ :

— Կը նստի՞ս թէ չէ, — գոռաց՝ ղէնքը կուրծքիս ղնկելով :

— Ո՛չ, — ըսի ես, — այս տունէն չեմ ելլեր, միասին չեմ դար : Հո՛ս գարկ զիս, եթէ կրնաս :

Այդ պահուն տանտիրոջ տղան, Մստօ, խնդարով զիս դուրս կանչեց : Մինչ ետեւէն կ'երթայի՝ տան հարսը զիս բռնելով ճչաց .

— Մստօ՛ :

— Ի՞նչ կ'ըլլայ, — պատասխանեց ան, — Փլայի մը համար այդքան աղմուկ :

Ես տեսայ որ ան թեզանիքին մէջ դանակ մը պահած է եւ զիս դուրս կը տանի չորցնելու : Հայրն ալ բարկացաւ տղուն ու սկսան վիճիլ : Թո՛հ ու բո՛հ : Առիթէն օգտուելով փախայ փողոց եւ կորսուեցայ :

Սկսայ փախչիլ դէպի Ագսու, հանդիպողին հարցնելով զայն : Ագսու Մէջուտի քով մեծ ձոր մըն է հարուստ անտառներով : Հոն կը բնակին Ալթօղլու եղբայրները : Հին ու համբաւուոր աւաղակներ, որոնց անունը պզտիկութեանս լսած էի մեր գեղին մէջ, երբ անոնք մեր լեռները կը պարտէին : Ու, բռներ էին անգամ մը մեր յանդուգն որսորդ Ագօն : Ագօ դիչերով անոնց ձեռքէն փախած էր : Քաջ եւ աստղնջական էին անոնք : Ամբողջ աշիրէթին մէջ մի'նակ իրենք երկու Հայ ունէին իրենց քով : Իրենց ջիւղաներուն տղաքը, մեր գեղացի Արդենց Գառնիկն ու Բիւզանդը : Այս տղաքը հոն տան մարդու աչքով կը նայուէին, ոչ թէ գերիի՝ ճիշդ ինչպէս Հայերը Տէրսիմի մէջ : Անգամ մը հոն հասնէի, ա'լ զիս Ալթօղլուներուն ձեռքէն ոչ մէկը կը համարձակէր առնել :

Սլօ Ալթօղլուի տունը դացի ես, ձորին խորը, անտառին դիրկը : Գրկարաց զիս ներս առին : Հոն էր Բիւզանդը : Ան Սլոյի հօտը կ'արածէր ձիւներուն վրայ, ու իրիկուններն ալ խոշոր բալխիրով փայտ կը բերէր միասին : Զիւնին վրայ երկաթուղիի դիժի պէս բալխիրը իր ճամբան պնդացուցած էր : Ու Բիւզանդ անոր առջեւը նստած, թող կու տար զայն ու ահռելի արագութիւնով տուն կը հասնէր, լեռներէն վար սուրալով :

Նոյն իրիկունն իսկ մէջտեղ ելաւ Սլօն, ուրիշ Քուրտի մը հետ: Ան գրնուոր չէր դացեր, ու կը պահուէր: Գեղը կը կարծէր թէ գացած է: Ինծի պատուիրեց որ դադանապահ ըլլամ:

Իրիկունները Սլոյի տան մէջ հաճելի էր: Հսկայ կաղնիի կոճղերը ճարճատելով սալէ լայն ակութին մէջ կը վառէին: Մենք դուրպայ ու արեւի անոր դիմաց կը կախէինք՝ որ չորնան: Ու բոլորուեալով կրակին շուրջ կը նստէինք:

Քուրտը կը սիրէ երգը, կը սիրէ երաժշտութիւնը: Ամէն տուն սազ մը ունի կախուած պատէն, որպէսզի երբ Սէյիտը գայ, դայն զարնէ ու երգէ: Կրօնական արարողութիւն է սա:

Սլօ կը վարնէր սազը ու կը կանչէր: Կը գոռացնէր Տէրսիմի ռազմեղբար, տիմիլիերէն, Տէրսիմի լեզուով, ջաղուած Տէրսիմի կեանքէն: Անոր բամբ ձայնը սաղին բարակ թրթիռին հետ անուշ կը դաշնաւորուէր:

Տէ հայտի, տէ հայտի, տէ հայտի, տէ հայտի,
Տէ հայտի, տէ հայտի, տէ հայտի, տէ հայտի... (*) (փշրանք միայն):

Ու կը բացատրէր թէ ցեղային կոիւրի մը տտեն յաղթուող կողմը այս կոչը կ'ուզէր բարեկամ ցեղի մը, որ օգնութեան պիտի դար, բայց կ'ուշանայ: «Հասէ՛ք, հասէ՛ք, կը պարտուինք: Մեր ուժը սպանեցաւ»: Եղանակը իր մէջ ունէր վայրի թափ, ու մեղի կը թուէր տեսնել մարտիկներու արագ անցքը Տէրսիմի լեռներէն եւ լսել անոնց ոտքերուն սուրացող դոփիւնը: Սլօ անոր մէջ կը դնէր առնական ոյժ, մեռնիլ-մեռցնելու կորովի կամքը: Եւ անոր պզտիկ տղան՝ Տէրվիշ, վեց տարու կորիւն, մորթէ բրդոս փափախ մը դլիտուն, որ գայն աւելի կը մեծցնէր, խոշոր աչքերը լայն բացած կը նայէր հօրը: Ու կը մեծնար, թծելով ռազմերդին ու հերոսութեանց առնականութիւնը: Ինչպէս կաղնիներ, լեռներուն պլուխը, բուքին ու ցուրտին մէջ: Ըլլալու հերոս, ըլլալու ասպատակ, իսկական Ալթօղլու, արժանի հօրն-ու հայրերուն: Ու ձմրան երկար գիշերը կ'անուշա՛ր ու կոիւր կը մօտենար մեզի...

Սլօ կը փոխէր սաղին շունչը, զարնելով սիրոյ տաղեր: Տաղեր կրօնի եւ խրատի:

Նալպանտ օլսամ տէրլէր նալլա գաթըրը, գաթըրը, գաթըրը.
Համամնը օլսամ տէրլէր խայգա խաթունը, խաթունը, խաթունը.
Վալլահի պէն հիշ պիբիմին հագգրնտան կելեմէմ, կելեմէմ, կելեմէմ:

*

Փաթէ էյրի եօլսամ կիթմէ,
Տօղրու եօլսա նագար իյլէ:

(*) Գէն եկուր, եկուր, դէն եկուր, եկուր:

Հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ,
Ես պէն քիմէ՞ Խալվարայքմ,
Ես պէն քիմէ՞ չաղըրայքմ,
Մէտէք, մուրաս, իմաստ սէնտէն,
Հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ,
Հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ, հիւ տէ:

Ան երգել կու տար մեզի ալ: Բիւզանդ կ'երգէր.

Առնել պագնելս կու գայ,
Առնել պառկիլս կու գայ.
Եկաւ անցաւ շան աղջիկ,
Առնել փախչիլս կու գայ:

*

Էմինէմ օքուրմուշ, չօրայ Էօրիյօր,
Կէօգլէրի Բէօր օլսուն, պէնի կէօրմէօր:

Եէշիլէմիշ գաքշը տաքն էֆինի,
Թուփ-թուփ օլմուշ էմինէմին Բէնֆիլի:

*

Էկին վերան օլմուշ, պիւպիւ Էօքմէօր.
Տէտիմ սայը տուքամ, սայը կիթմէօր.
Փոստալար տուքուլմուշ, մէֆքուպ կիթմէօր.
Եարիմ ուզագտա տըր, էլիմ եէքմիօր:

*Ահնայ եղանակն էր աս, որ մեր դեղին ձորերուն ու դաշտե-
րուն մէջ կը թրթոար, կը կոծկոծէր, կը լացնէր, կանացի բերնէ,
հայերէն ու թուրքերէն բաղմաթիւ փոփոխակներով: Ու մեր տեղե-
րէն անցնող ճամբորդներ, բիրը նետելով կը նստէին պահ մը, Խուս-
նափուլի էկիմը լսելու:*

Կանչէ, կռունկ, կանչէ, ճանդ բարակ է,
Եարիս լեզուն քամա մեռալած կարագ է...

*Երգէ, կը պնդէր Սլօ ինծի: Բերանս չէր բացուեր: Գլուխս
կախ, կը խորհէի շարունակ: Ամբողջ ազգ մըն էի կորսնցուցեր: Բիւ-
զանդի հօրիզանը մեր դեղն ու Տիվրիկն էին: Խեղք չէր հասներ:
Սլօ կը միտիթարէր զիս, ու կը թելադրէր որ անվախ ըլլամ: Մեռնի-
լը, կ'ըսէր ան, մէ'կ անգամ է, կ'արժէ՞ անոր համար ընկճուիլ: Մին-
չեւ այդ օրը չուքէս վախցող, ահա հող սկսաւ քաջութիւն դալ վրաս:
Ե'ս ալ անոնց նման մարդ էի: Բայց ժայռի պէս ամուր էին անոնք:
Նոյնիսկ պղտիկ Տէրվիշը: Օր մը, երբ հայրը զիս կ'ածիլէր, ան
կսկորդս ցոյց տալով ըսաւ անոր.*

— Հայրի'կ, կարէ', կարէ':

— Լօ, Տէրվիշ, — պատասխանեց հայրը խնդալով, — Էրմանին մեղք է, ինչո՞ւ կարեմ խեղճին վիզը:

— Կարէ՛, կարէ՛, — հրամայեց Տէրվիշ...

Կը մտաբերէի հայ յեղափոխականներու գիւցազնութիւնները: Ոյժ կու գար վրաս; Տոկալու եւ ապրելու: Թշնամիին դէմ ծառանալու: Սլոյի տան մէջ ուրիշ մարդ դարձայ: Քրիստոնէական բորոտութեան հեաքերը կը սպիանային վրայէս, տեղի տալով վայրի առնականութեան: Սլօն կը քաջալերէր ու կը մկրտէր զիս, ինչպէս կնքահայր, քաջութեան աւագանին մէջ:

Օր մը իր տունը փախտական Քուրտի մը հետ ըմբշամարտ բռնել տուաւ ինծի: Վերցուցի զայն ու դետին զարկի: Սլօ ուրախութենէն ծափ զարնելով վեր ցատկեց: Աս չեղաւ, ըսաւ դիմացինս, հա՛տ մըն ալ: Նո՛րէն զայն դետին զարկի: Սլոյի հրճուանքը չափ չունէր:

Սլոյի քոյրը անտանին ներսը, խոշոր սուրբ կաղնիներուն քով, Կուլապիներու տունը հարսնացած էր: Անոնք բոլորը հիւանդ էին եւ գործերը երեսի վրայ: Սլօ զիս անոնց զրկեց: Բայց նախ չէի կրնար աչխատել: Յետոյ ես ալ անոնց նման հիւանդացայ: Անոնց փորը չէր ելլեր, ու արիւն կու դար: Նոյնը իմինս: Ձիս վնասեցին: Թանձք էր այդ հիւանդութիւնը:

— Ի՞նչ կու գայ արդէն ձեր ձեռքէն, — անարգեց զիս Կուլապին: — Խելքերնիդ—միտքերնիդ մէ՛կ բան էր. աղջիկ, աղջիկ, աղջիկ, (այս բառերով) հիմա տն ալ ձեռքէ զնայ, տեսնեմ այսուհետեւ ի՞նչ պիտի ընէք:

Ալիպազ անուն քաջ երիտասարդ մը փախտական, Կուլապիներու քով կը սպանէր, որոնց ազգական էր: Ու անոնց հօտը կ'արածէր: Օր մը ան ինծի ըսաւ.

— Երման, (չկրնալով ըսել Երուանդ), Էրզրում գինուոր էի, երբ ձեզ ջարդել սկսան: Բանակին մէջէն տաաջին անգամ Հայերը գատեցին, ու զինաթափ ընելով մեզի դնդակահարել սուրին: Յետոյ Էրզրումի Հայերը աքսորեցին: Շատեր փախած էին: Շուներով գանոնք կը հալածէինք լեռներուն վրայ ու բռնելով կը սպաննէինք: Ա՛խ, սա անխճած եղիս^(*) Թուրքերը: Ինչպէ՛ս կը սպաննէին ձեզ: Թե՛ւս կոտորի, եթէ մէկուն չիտակ գնդակ մը արձակեցի: Միա՛յն երեք վիրաւոր, որոնք տակաւին մեռած չէին, ստիպման տակ սուրինահար ըրի: Որովհետեւ Թուրքերը սպառնացին զարնել զիս, եթէ անոնց չգպէի:^(**)

(*) Քուրտը Թուրքին վրայ խօսած ատեն գանձմէ միշտ եղիս կ'անուանէ, որ գազան, անգուքի իմաստ ունի: Քուրտ կիներն ալ իրենց դէմքը Թուրքի ցոյց չէին տար, հաւատալով թէ ետէն վերք կ'ելլէ վրան: Մեզի ցոյց կու տային: Տուներուն մէջ, ընտանիքին մէջ Հայր կը պատկեցնէին, բայց երբեք Թուրքը:

(**) Աս ա՛յն սրիկան է, որ յետոյ Փէլիվանը սպաննեց, ինչպէս պիտի տեսնենք:

Կուլապիներու քովէն վոնաուելէ ետք, նո՛րէն Սլոյին դացի : Ան զիս վար դրաւ, մինչեւ աղէկնալս : Անկէ յետոյ ինծի ըսաւ .

— Ես զինուորական փախստական եմ : Վիճակս մէջտեղն է : Եթէ զիս բռնեն, զինուոր կը տանին : Բիւզանդին համար կ'ըսեմ որ տղաս է, կը փրկեմ, որովհետեւ բնաւ յայտնի չէ Հայ ըլլալը : Բայց ես քեզի ի՞նչ ըսեմ, ո՞ւր դնեմ : Երեսէդ կը կաթի որ Հայ ես : Զինուորի տարիք սուիս : Մեկնէ եւ գլխուդ ճարը նայէ :

Իրաւ ալ Բիւզանդ հոն տան տղու պէս էր : Սլո աղջիկներ ունէր, որոնց գոհհարկէն կը հայհոյէր, քածերու տեղ դնելով : Անոնցմէ մեծը Բիւզանդին դուստր կը քթուէր (ոջիլ որոնել) ու քոյր-եղբոր պէս էին : Մեր գեղն ալ Արգենց Քուրս կ'ըսէինք, որովհետեւ սեւոնուտ էին : Անոնք կուրծքը բաց կը պարտէին եւ մարդ պարկած էին : Շարունակ որսի կ'երթային : Ունէին անհամար հօտեր : Ժամ չէին սիրեր, ու մինակ մեծ տօներուն, ան ալ ակամայ, աղօթել կու դային : Քուրսի ձե՞տ, ու սոհաւօրէն այգպէ՞ս . . .

Բիւզանդ Սլոյի կ'աղաչէր որ զիս ճամբու չդնէ : Խնամիրս տղան էր ան : Իրացիս : Մանկութեան ընկերս : Իրենց բուխերիկը մեր պատուհանին առջև կը մ'իտար : Մեր դռնէն դուրս ելլէինք, սոքերունիս իրենց կալն էր :

— Այս ձիւն-ձմրան ո՞ւր կը զրկես, որ երթայ մեռնի՞ : Հիւանդ ալ է : Քու ինծի տուած հացդ մէջերնիս կը բաժնենք մենք ու միտսին կ'ապրինք մինչեւ վարուն : Պէտք չունիս անոր հաց տալու : Մի՛ ճամբեր :

Սլո անդրդուելի մնաց : Գեղը ժանտարմա իջած էր : Եթէ մատնէին . . . : Իր դրացին, Չափուշ, ժանտարմաներու ներքինին, կասկածելի տիպար էր : Բիւզանդ տեսնելով որ ճար չկայ, որոշեց ինք ալ ինծի հետ հեռանալ : Ըսաւ որ հարուստ Քուրս մը, Ղարա Ֆէրօ, զինքը հովիւ ուզած է, ինծի հետ հոն կ'երթայ ու անոր հօտը կ'արածենք ու կ'ապրինք : Ստեփան Սլո կ'ըսէր որ Ղարա Ֆէրօ, թէեւ պարկեշտ, բայց թուլամորթ է ու վախկոտ : Ան ինքզինքը չի կրնար պաշտպանել, ո՞ւր մնաց ձեզ :

— Ո՛չ, — ըսի Բիւզանդին, — դուն մի՛ դար, հոս ապահով է : Կեցիր այստեղ : Ի՞նչ շահ եթէ երկուքս ալ մեռնինք : Թո՛ղ երթամ : Ի՞նչ կ'ուզէ, ա՛ն ըլլայ :

Սլո ինծի Մէջուտի մօտ, գեղէն դուրս, առանձին տունի մը տեղը բացատրելով, ըսաւ որ հոն երթամ .

— Քովը երկու Հայ սնի, բարի մարդ է, քե՛ղ ալ ներս կ'առնէ :

— Ու երբ շորհակալութիւն յայտնելով մնաք բարով ըսի եւ ճամբայ ելայ, ահայ որ Բիւզանդ, հեռքերուս վրայ թնդելով կը հետեւի ինծի :

— Ո՞ւր, Բիւզանդ :

— Ե՛ս ալ կու դամ : Ա՛լ ըսոր քով չեմ կենար :

— Զէ, մատա'ղ, դուն մի' դար, ե'տ դնա, մե'ղք է քեզի:

Չորի հեղեղատը հասանք:

— Լօ, Մէմմէտ (Բիւզանդին անունը), լօ, ե'տ եկուր, ո՞ւր կ'երթաս, դուն ալ անոր պէս կը սատկիս, ե'տ եկուր, շա'ն ոսկոր, — կը կանչէր Սլօն տան դռնէն: — Երմա'ն, ե'տ զրկէ դայն:

— Դուն ան կու զրկես, ես ալ կ'երթամ, երկուքս մէկ կու մեռնինք, — կը կանչէր անոր Բիւզանդ, լալով:

Սլօ կը պոտար որ դառնայ:

Ես կեցայ:

— Բիւզանդ, մատա'ղ, ե'տ դնա, պիտի երթա'ս: Զէ նը հոս կու կոյնիմ, եղած տեղերնիս երկուքս ալ կու պաղինք:(¹) Գնա': Ինչքան քիչ մեռնինք, լ'նքան աղէկ է:

Ճար չկար: Սկսաւ լալ նորէն, երթաս բարով բռնով: Գլուխը կախեց ու ետ դարձաւ, բարձրաձայն հեկեկալով: Կը կենար, ետետ կը նայէր, աչքերը կը սրբէր: Նորէն կը քալէր: Ու ձորամէջի ուռիներուն տակ կայնած՝ կը դիտէր ետեւէս ու կու լար, մինչեւ հեռանալով կորսուեցայ իր տեսողութենէն:

*
**

Չամուռճիէն Մէջուտ պացող ճամբուն վրայ, աջին, ձորերու եւ բլուրներու մէջ, մեկուսի տուն մը կայ: Շուրջը կաղնի, աղբիւր ու արտեր: Փոքրիկ ուռիներ: Անոնց տակ հողվրտիքը տունին: Համբաւը անոր Իպէ Պալէ անունը կու տայ անոնց: Ողջ էր Իպոյի տղան, Թէմիր, 60 տարեկան:

Հիւանդկախ, ճիւղերը ճեղքելով, հասայ տան տակի ձորը: Հոն ինծի հանդիպեցան քանի մը մարդեր: Անոնց հարցուցի.

— Թէմիր լը մա՞լ է:(²)

Կեցան անոնք: Ու դատուեցան իրարմէ: Ետ դարձաւ մէկը: Միջահասակ, մօրուսուոր: Առջիս ինկած գիտ տուն առաջնորդեց, բռնով.

— Վա'րէ:(³)

Ուրիչ ոչ մէկ խօսք: Ան Ար Թէմիրն էր: Երբ տուն հասանք, կանչեց որ շունները բռնեն: Շատ մեծ եղաւ դարմանքս, տեսնելով որ Մէնօն հոն է ու խոշոր դամփոռներէն մէկը զսպելու զբաղած՝ որ վրաս չդայ: Ուրիչ Հայ տղեկ մըն ալ միւս դամփուր բռնած էր: Թէմիրի կատաղի շունները անուանի էին: Ու կը խոռխոջային ինծի:

Երբ դաւիթէն տուն մտանք, շուրջը, դեռնի վրայ, հիւանդներով լեցուն անկողիններ միայն տեսայ: Ամբողջ ընտանիքը պառկած էր, բացի Թէմիրէն ու պառաւ մօրմէն: Երգիքին ծակին տակ

(1) Պաղել = սառիլ՝ մեր լեզուով:

(2) Թէմիր տա՞ւնն է:

(3) Եկա'ւր:

նստած էր պառաւ մայրը, Բիրէն, ու տաշտին մէջ դադջ ջուրով չորթան կը ճմլէր՝ թան շինելու համար:

— Աս Հայ է, մայրիկ, հիւանդ է, նայէ, խնամք տար: Թե-
րեւս անոր պատճառով մերիններն ալ աղէկնան,— ըսաւ ան մօրը:

Պառաւը երեսը ծռեց, ու քրթմնջեց:

— Քուլի դեմ վրա: (*)

Ինծի քանի մը ցնցոտի տուին, որոնց մէջ փաթթուելով կը պառկէի ցուրտ հիւրասենեակին մէջ, միւս աղեկն ու Մէնօն ալ միա-
սին: Մէնօն հովիւն էր Թէմիրի եղբօր, որ ժանտարմա էր ամառը: Ու Մէնօյին հագուստ էր տուեր: Վարտիք մը, երկու զնդակի ծակե-
րով եւ արիւնտա, Հայու դիակէ կողոպտուած: Ան չար մարդ ըլլա-
լուն՝ չարչարէր էր աղան: Ու Թէմիր մեղքնալով իր քովը բերած էր
զայն: Միւս աղեկը Տրապիզոնցի էր, մայրն ալ Մէջուտ: Թէմիր իմ
զալէս ետք զայն իր մօրը քով դրկեց, ըսելով որ աղան թող հոգայ,
քեզ ս'ըր կրնամ ճամբել, մէկը չունիս: Անոնք ետքը միասին Մէջու-
տէն հեռացեր էին:

Մէնօյին հետ անոնց տան զօրծերուն կը նայէինք: Բալխիրով
փայտ կը բերէինք անտառէն: Ախոռը կը պողէինք ու նախիրին կեր
ու ջուր կու տայինք: Թէմիր ալ Տիվրիկէն 40 դրուս նախիր բերած
էր իր թուրք քերվայէն, հոգալու: Անոնց մէջ մեր դեղէն կովեր կա-
յին, ինչպէս Մէնօ կը ճանչնար:

Տնեցիները ոտքի ելան: Փաթիմէն, Թէմիրի բարի կինը: Այլ
Բիզա, բարձրահասակ, թիկնեղ, հուժկու, հօրմէն շատ խոշոր, անոր
բարի աղան: Բիզայի կինը (Թէմիրի եղբօր աղջիկը), եւ Բիզայի աղ-
ջիկը՝ Շահրիպան, պզտիկ: Թէմիրին աղջիկները՝ Կիւլիզար, Ձէօհ-
րէ, Կիւլազ: Թէմիրի հարսը (Փաթիմէի եղբօր աղջիկը) Կիւլիզար,
եւ Թէմիրի պզտիկ աղան, 12 տարու Ձէյնալ: Ամբողջ ընտանիքը:

Թէմիր ուրիշ աղայ մըն ալ ունէր, մեծը, ձանօն: Ան հօրմէն
դատ կը բնակէր, ամուսնացած շատոնց: Երբ Թէմիր Փաթիմէն, սեւ-
աչեայ դեղուհին իբրեւ երկրորդ կին տուն կը բերէ, ձանօյլ մայ-
րը, Թէմիրին առջի կինը, վիշտէն ինքզինք կը կախէ: Ձանօ շարու-
նակ մօրը կսկիծին ազդեցութեան տակ էր:

Թէմիրին միւս աղան, 20 տարու Սիւլէյման, աշունը մեռած
էր: Կինը վար դրած էին՝ որ Ձէյնալին տան, երբ ան մեծնայ: Եղ-
բօր կին առնելը անոնց մօտ սովորութիւն է: Ձէյնալ Կիւլիզարը չէր
ուզեր տեսնել ու կը վաճառէր կուպիս հայհայութիւններով, երբ ան
քովը պառկէր կամ հագուեցնէր զինք:

— Հօրքո՛ւր, չ'ուզեր, կը վաճառէ,— կը դանդառէր Կիւլիզար:

— Կորսուէ՛, քա՛ծ,— կը բարկանար Ձէյնալ:

— Բերանդ քեզ ժողովէ,— կը դրդարար Փաթիմէն աղուն,—

(*) Բոլորը հաս կու գան:

Կիւլիզարը քու անուշիկդ է, քու սիրունիկդ է: Պէտք է քաղցր վարուիս հետը եւ զինքը սիրես...

Թէ՛միր այս տեսարանին նայելով տղուն վրայ կը խնդար...

Եկաւ գարուն: Զիւնները սկսան փախչիլ: Ապաքիներ էի ես ալ: Թէ՛միր աղքատ էր: Երկու օտար բեռ էր վրայ:

— Պրա՛, (եղբայր)— ըսաւ օր մը Բիզան ինծի, — ծնողքս քու աշխատութենէդ շատ դո՛ւ են: Թէ՛եւ Սէնօն քեզմէ աւելի արագ կ'ուտէ հացը, բայց դուն աւելի լաւ կ'աշխատիս: (*) Կ'ուզե՞ս: Կեցիր միշտ մեր տունը: Միասին կ'աշխատինք, միասին կ'ուտենք, միասին կը հաղինք մեր ունեցածը: Եթէ ժանտարմա դայ, հետդ կը փախչինք: Ես ալ զինուորացու եմ: Մինչեւ տեսնենք աշխարհը ի՞նչ կ'ըլլայ:

— Հապա Սէնօն: Ես ետքէն եկայ: Չեմ ուզեր որ Սէնօն իմ պատճառովս տեղէն զրկուի եւ երեսի վրայ մնայ: Ես կ'երթամ:

— Մի՛ վախնար Սէնոյին համար: Հայրս անոր շատ լաւ տեղ գտած է: Ան մեր Մահճուտ հօրեղբօրը քով հովիւ պիտի ըլլայ: Ահա՛, վերը լերան գլխին է անոնց դոմը: Այնպէս որ միշտ Սէնոյին հետ միասին պիտի ըլլաս նորէն:

Անոնց Մահճուտ հօրեղբայրը Մէջուտի պեան էր, ինչպէս Վէլին Չամուռճիի: Ունեւոր ու յարգուած մարդ: Աչուներ ժանտարմադէ մեռած էր: Կին մը եւ երեք չափահաս տղայ ունէր: Հէսօն, Կիւլ Հասանը, եւ սպարիկն ալ Քրմանճ: Ես համաձայնեցայ:

Սէնօն եղաւ հովիւ, ես մնացի Թէ՛միրենց: Իրօք ալ ամէն օր իրարու հետ էինք: Անասուններս անոր քով կը տանէի ու ինծի արածել կը սորվեցնէր, ինչպէս գազ ու փայտ ընել, որ ես չէի գիտեր:

Մէջուտի մեր աղսց անունները զգուշութեան համար փոխեր էին: Մի՛այն անունները: Ո՛չ Թլփատութիւն, ո՛չ բոնութիւն: Բիւզանդին Մէհճէտ կ'ըսէին, Գառնիկը եղած էր Ազիդ, Սէնօն՝ Միւլէյման: Ե՞ս: Այնքան կ'ատէի թրքական անունը: Գիւղապետին տղան Քրմանճ կը յորջորջէր: Չուտ քուրտ անուն: Թէ՛միրենք համաձայնեցան: Ու ես եղայ հովիւ (չվան), ու կոչուեցայ Քրմանճ:

Արդէն գարուն: Թուրքերը հանդիստ չտուին մեզի հոն ալ: Կ'ըսէին թէ Կարին ինչեր է: Ռուսը կը յառաջանայ: Թուրքերը տենդով զօրք կը ժողվէին ու քուրտ դեղերը միշտ վտանգի տակ էին: Բիզային հետ տուն չէինք մնար: Անոր մօտ, կաղնեշատ ձորի մը մէջ անակ մը շինեցինք գետնին տակ, ու հոն կ'անցընէինք գիշերները: Երբ օդը տաքցաւ, անտառին մէջ օպա(**) շինելով՝ տունն ալ հոն փոխադրեցին:

Ու ահա զրոյց ելաւ թէ Քուրտերն ալ կ'աքսորեն: Ուտեստ ու գոյք պահեցինք անտառին մէջ, ու կը սպասէինք այդ ահաւոր օրուան: Քուրտերը իրենց տեղերէն ելլելու միտք չունէին: Մենք ի-

(*) Մեր գեղը կ'ըսէին որ՝ մարդ եթէ արագ մաշէ, արագ ալ կ'աշխատի:

(**) Հովոց, եայլա:

րենց օրինակ: Կը պատրաստուէին աշխրէթին լեռնոտ կիրճերը բռնելով դիմադրելու թուրքերուն:

— Լօ, լօ, — կ'ըսէին, — լես կը քաշուինք, ու քարերով, փայտերով ալ ըլլայ, նորէն այդ եղիաներուն կը յաղթենք:

Օր մը փայտ կը բերէի անասունն շալակով, աղբիւրին քով ձայն մը առի: Զէօհրէն էր, որ լուսպք կ'ընէր: Սեւ մազերը կիսաբաց կուրծքէն վար կախ, աչքերը աղբիւրի պէս կը վազէին: Թախթուխ թաց լաթերը թակալ կը ծեծէր, կը յօրինէր ու կ'երգէր.

Լօ, լօ, փատիշահ, քու տիմ պուշի, ի', ի', ի', ի',
Լօ, լօ, քու չըմա քապաախտ դառբէրի', ի', ի', ի'...
Հէրե, լը մընօ, հէրե, լը մընօ', օ', օ', օ',
Տայէ', տայէ', տայէ'...

Թարգմանութիւն. —

Լօ, լօ, քազաուր, դու խեմքեցե՞ր ես,
Լօ, լօ, դո՛ւմ հպատակներդ իմչո՞ւ կը ջարդես...
Ա՛յ, իմծի՛ր, ա՛յ իմծի՛ր,
Մայրի՛կ, մայրի՛կ, մայրի՛կ...

Ինչո՞ւ այսպէս կու լար ու կ'երգէր Զէօհրէն: Որովհետեւ լուր տարածուած էր որ Քուրտերն ալ Հայերուն պէս պիտի արսորուին ու ջարդուին: Պարբերաբար ասանկ լուրեր իրարու կը յաջորդէին:

*
**

Քուրտերը բանաստեղծական եւ զգայուն ժողովուրդ են: Ամէն տուն սազ կայ, եւ եթէ Սէյիտը այցի վայ, սազ պիտի դարնէ ու երգէ: Ան է անոնց կրօնական արարողութիւնը: Սէյիտը հոն մեծ ազդեցութիւն ունի, աւելի քան մեր կղերը: Ան կիսաստուած մըն է հաւատացեալներուն համար: Անոր կ'ենթարկուին բոլորը: Ատոր համար թերեւս երբեմն անոնցմէ ոմանք հարսի ու ազջկան դպած են, մեր մէջ սա կարծիքը տարածելով թէ՛ «Ճվառ»ի^(*) գիշերը Սէյիտը իր ուզած կնկան կրնայ տիրանալ: Անանկ անբարոյական բան չկայ Քուրտին պարզ կրօնքին մէջ: Անոնց կրօնը գողութիւնն ու մարդասպանութիւնն ալ կը պախարակէ: Մէկը որ արիւն թափէ, Սէյիտին չի կրնար ներկայանալ: Ան նզովուած մըն է, ընկերութենէն արտաքուստ: Ան «Ճվառ»ի արարողութեան չի կրնար մասնակցիլ: Սէյիտութիւնը ժառանգական է եւ հօրմէն արու զաւակներուն կ'անցնի:

Քուրտերը նախնական եւ շատ հիւրասէր ժողովուրդ են: Անոնց մէջ բարձրագոյն հագներգուներ կան, կ'ին թէ այր: Մեռելի, հար-

(*) Ճվառ = Քուրտերուն գլխաւոր կրօնական տօնը, որ Սէյիտը գեղ կու գայ, քամմա կ'ըմեն, կ'երգեն, կ'ուրախանան: Սէյիտը կը փշրէ քամման ու կը բամբակ աննան:

սանիքի եւ կռիւի վրայ շեր կը հիւսեն ու կը կանչեն: Որո՛ւ հնարածը որ լաւ ըլլայ, ժողովուրդին մէջ կը տարածուի: Եղանակն ու խօսքերը տարիներու ընթացքին կը փոխուին մասամբ: Առաջին յօրինողին անունը կը մոռցուի, տաղն ու եղանակը կը մնան ժողովուրդին սեփականութիւնը: Քանիներո՛ւ յօրինած տաղերը բոլորին բերանն էին, պատերազմին ու կորսուած սիրելիներու վրայ, որոնց հեղինակները դեռ ողջ էին: Այսպէս ամէն քուրտ Սէյիտ երգիչ եւ տաղասաց է միանգամայն: Եթէ Սէյիտ մը երգել ու նուազել չի գիտեր, ի՞նչ Սէյիտ է ան:

ՂՈՒՐԵՐ ՄԵՐ ԳԻՒՂԻՆ ԲԵԿՈՐՆԵՐԷՆ

Երբ ձմեռը կու գայ, մեր տղաքը երկու խումբի կը բաժնուին լեռներուն վրայ, մէկը՝ տասներկու, միւսը՝ երկու հոգի, Զարմանեց Կարօն ու Քօթանին Գիրգորը: Այսքան մնացած էր անոնցմէ: Շատերը կը սպաննուին, ոմանք ժայռերէ իյնալով կը մեռնին: Մէկը, ձերանեց Մկրտիչը, մատակ առիւծ, կ'իյնայ Քարէն, մէջքը կը կոտրի, չի մեռնիր: Տղաքը զինք քարայրի մը մէջ կը պառկեցնեն ու կը խնամեն: Ուրիշ մը, Մխտեթին Օվինսը, որ բթամաս մը չունէր, կ'իյնայ ժայռերէն, կը ջախջախուի: Երբորդ մը, Ղաղայպան Սուբսյի տղան, Մինասը, Ղաղայքին մէջ ու ժայռերուն վրայ մեծցած, ալիքան հնարաւէտ որ մանրանկար Ղաղայքներ կը շինէր ու կը դարձնէր գաննք ջուրով, մինակը, Քարերուն Ղաղայքին մօտ կը բռնուի ու կը սպաննուի Սառդուցիներէն:

Մնացած երկու խումբը անտառներուն մէջ, ձորերուն խորը եւ ջուրերուն վրայ անակներ կը շինեն ու կը պահուին: Զմբան կէսին քուրտ ճամբորդ մը ծուխ կը նշմարէ ամայի ձորին մէջ ու կ'երթայ իր գեղը լուր կու տայ: Կու գան կը բռնեն տղաքը, 12 հոգի, ու կը կողոպտեն, կը տանին անոնց վերջին ծածկոցը եւ վերջին պատառ հացը, մէկն ալ կը սպաննեն, ձերանեց Մարտիրոսը, Ամերիկայէն նոր եկած:

Գարունը մեր տղոցմէն վեց հոգի, որոնք ամբողջ ձմեռը լեռներն էին, կը բռնուին թուրք զեղացիներու կողմէ եւ Տիվրիկ տարուելով կը գնդակահարուին: Միասին կ'ըլլայ լեռներու ընկերս, Գրիգոր Մարգիսեան, սպայ:

Կիները գեղերէն ժողովելով նախիրի պէս քաղաք կը տանին եղեր, նորէն աքտորելու: Ոմանք կը փախչին: Փնտրելու կ'ելլեն ու տղաքը կը գանեն, որոնք անխոհեմօրէն ճամբու մօտ լքուած տուն մը կը մնան եղեր: Ախգախի տակ:

Ապրիլ էր: Թէմիրենք հաց կ'եփէին: Անտառէն չոր փայտ չալկած տուն դարձայ:

— Լօ, ձեր զեղացի կիներ կան մեր տունը, — ըսին ինձի:

Իրօք երեք հարս էին անոնք, նստած օճախին քով: Երեքը մէկ վրիզ փաթթուեցան ու սկսան լալ, զրիջի, ամօթխածութեան, թշուառութեան լաց մը: Անոնց հեծկատուքները սիրտս կը ծակէին: Անոնց լացը բողբոջ մըն էր ինծի դէմ, — Եթէ դու տղամարդ ես, ինչո՞ւ չես կրնար պաշտպանել մեզ, դերի՛ թշնամիին ձեռքը...

— Արեւուդ մեռնիմ, ընկերդ ի՞նչ ըրիր, — ըսաւ մին, թաթրենց Զարեհին մայրը, արտասուելով ու դուրսը շարժելով:

Ի՞նչ ըրի, լեռները թողի ու հեռացայ: Կ'ուզէր միասին դալ: Մերժեցի: Խելառեր էր արդէն, ու կ'աղաչէր.

— Մա՛նչ, ի՞նչ կ'ըլլայ, իս ալ հետերնիդ տարէք: — Ու մութին, մինակը գնաց, խրեցաւ նախճիրին մէջ...

Մեր հարսները իրենց ձեռքերը ծոցերնին դրած էին, սուգի նշան մեր գեղը, նշան որբութեան եւ լքումի: Տխուր էին, իրենց դէմքը կը մատնէր զարհուրելի բաներ, ու կը հառաչէին անդադար: Կը հարցնէին ինծի թէ ո՞վ ողջ է, որմէ՞ լուր ունիմ: Ես անոնց կը պատմէի Դիտցածներս: Կը հարցնէի անոնց թէ ի՞նչ լուր ունին, ո՞վ ողջ է: Անոնք կը պատմէին ինծի իրենց զիտցածները: Մենք կը խօսէինք: Արթեմիւրենք լո՛ւռ մեր վրայ կը նայէին:

Թէեւ կառավարութիւնը հրամայած էր որ թուրքերը կնուութեան առնեն Հայուհիները, որ ազգը շատնայ, բայց չգտնուեցան Հայուհիներ, որոնք թուրք առնէին, բացի առաջուրնէ ճանչցուած անբարոյսական եւ կաթը դէշ կիներէ: Եւ բացի այն գեղուհիներէն, որոնք անպատուութիւնը նախընտրեցին մահէն: Հայուհին թուրքին մէջ թշնամին ու դահիճը կը տեսնէր եւ կը սոսկար անկէ ու կ'ատէր գայի:

Մեր հարսները եւ Տիվրիկի շրջակայ գեղերու հարս ու աղջիկները՝ փախչելով իրենց գեղերը, հունձքը կը հաւաքէին: Գեղերուն մէջ ժանտարմաներ կային, որոնք ծեծի տակ, բռնի, իրենց ուզած հարսն ու աղջիկը կը տանէին:

Կիները խումբերով քով-քովի կ'ապրէին ու կը սկսէին պոռալ ու ճչալ, երբ ժանտարմաները իրենց գային: Շատ կիներ ու աղջիկներ «ո՛ւյ, մարիկ» պոռալով կը մարէին, գետին կ'ընկնային: Իրենց ակառանքերը կը կողպուէին, տեսնելով որ զիրենք պիտի տանին այդ գիշեր: Ժանտարմաները անոնց երեսին պաղ ջուր կը լեցնեն, որ ուշքի գան եւ կ'առնեն կը տանին...: Շատ անգամ ժանտարմաները գանոնք լեռները կը հանէին եւ ժամանակ մը ետք այլակերպուած մի՛ճակի մէջ երեւան կու գային կիները...: Տիվրիկի մէջ ցայլատօն ու գինարբուք կը սարքեն ամէն գիշեր, կը մերկացնեն, կը դիտուցնեն ու պարել կու տան աղջիկներուն եւ կիներուն... մինչեւ լոյս: Քանի՛ մայրեր իրենց սրտին կսկիծէն կը մեռնին, իրենց աղջիկներուն յափշտակուելէն վերջ:

Աշնան՝ հայ կիները թուրք գեղեր կը ցրուէին ու կը կարծէին թէ պիտի մնան այլեւս: Ոմանք անչափահաս տղաք ունէին իրենց

Հեա: Մարտ մէկին յանկարծ բոլորը կը ժողվեն Տիվրիկ, կը բանտարկեն, ու նորէն կ'աքսորեն: Բենկայի կամուրջին վրայ անչափահաս տղեկները կը խլեն մայրերէն ու Եփրատը կը նետեն անոնց աչքերուն առջև: (*) Մեր կիները նորէն կը փախչին եւ կը դառնան Տիվրիկ ու շրջակաները: Թուրք գեղացիները զանոնք կը բռնեն, կը կողոպտեն, մօրէ մերկ ձգելով:

Րիզան ալ ինծի պատմեց որ հերու, աշնան, երկու ժանտարմա իրենց տան տակը, գետնին վրայ կրակ կը վառեն ու կը մնան հայ երիտասարդ կնոջ մը հետ՝ մինչեւ լոյս: Հարսները պատմեցին նաեւ հարազատ քրոջ՝ Վարդանուշի մասին, երկու փոքրիկներով Տիվրիկէն քշուած, որ լալով կ'ըսէ եզեր.

— Մ'իս, եղբայր, ա'իս, հօրքուր, դուք որ լեռ փախաք, ինչո՞ւ զիս չիչեցիք ու միասին չտարիք...

Երկու զաւակ ունէր ան, Վարդգէսը՝ 4 տարու, եւ Զապէլը՝ 2 տարու: Ան գամբիկի պէս ձեռք չի դար: Մինչեւ որ ժանտարմաներ զաւակները կը նետեն աղբանոցի վրայ ու զինքը կ'առուանգեն...

**

Հովիւ Քրմանճն է որ փախստական Պէյ Տաղիի վրայ, լեռները կը շրջի: Գլխուն հին ու իւղտ Փէս մը, անոր վրայէն Աբ Թէմիրին հին եագւնները: Կարճ ու թուխ սալքա մը, հազար կարկտաններով տարատ մը հազած, որուն բուն կտորը յայտնի չէր: Քուրտի դոյն-դոյն դուլպայ ու մագստ տրեխներ ոտքերուն, ձեռքը հաստ կաղնիի բիր մը: Տիուր ու գլխիկոր, հովիւ Քրմանճ լեռները կը շրջի... Զգոյշ-զգոյշ քար ու թուփ կը մանէի, որ յանկարծ չսպաննուիմ: Անձրեւն ու ցուրտը անհամ էին: Յերեկները նախիրը կ'արածէի, զիչերները դուրսը կ'անցընէի Թուրքերու վախէն: Թէմիրեւնք կ'ըսէին որ եթէ Րիզան բռնեն՝ զօրք կը տանին, իսկ եթէ քեզ բռնեն՝ մեզ ալ քեզի հետ կը սպաննեն: Ատոր համար զիս շատ քիչ իրենց տունը կը թողուին, ան ալ ամէն բողէ փախչելու պատրաստ վիճակի մէջ: Հովուութիւնը աւելի դժուար եղաւ նախիրին աւանելու ատենը, որուն քրտերէն «ւոզլ» կ'ըսեն: Նախիրը աւանած, պոչը վեր, խենթի պէս կը վազէր անտառներէն եւ իրիկուան զովի'ն միայն կը հանդարտէր:

**

Քուրտերը աւանդամուլ են: Անոնց մէջ ալ մեր գեղին նման

(*) Անոնց մէջ էր գարմիկս, Միքայէլը, 12 տարեկան, Տօզան հովիւ: Կուգէի Րիզայիմ հետ երթալ գայն փախցնել, բայց լեռները հաւկիթի պէս էին... կը սպառէի ճիւղալիք: Բայց այդ հալքը մեր կողմը աւելի շուտ կը սկսի, ու Թուրքերը ինձմէ աւելի մարպիկ շարժեցան: Ու գնա'ց, Եփրատի հասանքն ի վար, «ք'ւյ, մայրիկ» պոռուով, որ Ուսիսպէս տղան ձգելով փախած էր, իրբեւ Սրապեան Մաւուկ աղայի հարազատ քոյրը...:

սուրբի առատութիւն կար: Միայն թէ անոնց սուրբերը աւելի վսեմ, առանձնայատուկ ու բանաստեղծական էին: Անոնք իրենց սուրբերուն եւ ուխտաստեղիներուն «գիշարէք» անունը կու տային: Կուլապիներու տունին քով հնադարեան ամբարձուղէշ կաղնիներուն տակ ագրիւր մը կար, որուն ջուրը կաթի համ ունէր: Ան Կուլապիներու զիյարէթն էր: Թէմիրին տունին քով ագրիւր մը կար կաղնիներուն մէջ, անոր հօրենական հողվորտիքին կից: Ան Իպի Պալեյեանց (Թէմիրենց մականունը) զիյարէթն էր: Սակայն ատոնցմէ դուրս կան զիյարէթներ, որոնք ամբողջ գեղին սեփական են եւ մեծ զիյարէթներ, որոնք ամբողջ աշիրէթին եւ աշիրէթներու սեփական են: Այսպէս, բարձր դադաթի մը վրայ, շէյխի մը գերեզմանին քով, երկնասլացիկ կաղնիներով զիյարէթ մը կար, որոնց ճիւղերէն ուխտաւորները քուրջի կտորներ կախած էին: Աւելի հեռուն, ձօնի գեղին մէջ ձօնիի զիյարէթը կար, շուրջը հսկայ գիեր, որուն անունով բոլոր Քուրտերը երգում կ'ընէին, «Սըզըրէ ձօնի պի» ըսելով: Մէջուտի անտառներուն մէջ փօքր լճակ մը կար, անունը «Պնազ Կօլ» (անյատակ լիճ), զիյարէթ մը: Թէմիրենք քամմաներ (կլոր) եփեցին եւ ուխտի դացին հոն: Իրենց դարձին ամանով ջուր բերած էին անկէ, տուին քիչ մը՝ խմեցի, կտոր մըն ալ քամմա կերայ, ու իրենց ուխտին մասնակից էի:

ԹՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՒԱՆՔՆԵՐ

Մայիսին երեք Քուրտեր Օվաճըզ թուրք դեղը գողութեան կ'երթան եւ վերադարձին կ'իջնան կը քնանան լերան վրայ: (*) Օվաճըզցիները զանոնք կը պաշարեն ու կը կրակեն: Քուրտերէն մին կը սպաննուի, միւս երկուքը կը յաջողին փախչիլ, մէկը վիրաւոր: Յիսուն ժամաորմա լեցուեցան Մէջուտ եւ վիրաւորը տարին, միւսն ալ, Ստօճ, պահանջելով, ի հարկին սպանուալով ամբողջ դեղը փճացնել: Բայց Մէջուտցիները Ստօն չյանձնեցին:

Ար Թէմիր իր սունն ու նախիրը Պէյ Տաղի հանեց, ուր շատ Քուրտեր օպա ելած էին: Պէյ Տաղին մեծ, խոտուտ, օրհնեալ լեռ մըն է: Գազաթին վրայ ծանծաղ լիճ մը, որ Քուրտերուն ամենէն մեծ զիյարէթն էր, — Սըզըրէ Պէյ Տաղի: Եայլաները լերան վրայի հարթ մարգագետիններուն վրայ էին, որոնց «Արէ Զայիրան» կ'ըսէին: (Կրակի Մարդեր), որովհետեւ ժամանակին գողերը հոն ապաստանելով կրակ կը վառեն եղեր: Տեղին անվարժ, անասուններս կորսնցուցի ու փնտռելու ելայ: Ո՛ր հովիւի, եւ ո՛ր օպայի որ հարցնէի զանոնք, ինձի կը պատասխանէին.

(*) Մէկը Թօփալ Ալի պէյի տղան էր, որ Պոլսէն գալով պահուած էր հօքը գոմը: Ատոր համար Ալի պէյ, խոստումին հակառակ, զիս չկրցաւ գոմ դրելով պահել:

— Լօ՛, դու Փլա՞յ ես, վա՛յ հրաշք, ինչպէ՞ս ողջ մնացեր ես...:— Յետոյ միայն ըսելու թէ անասուններէն լուր չունին:

Թուրքը, հարստահարելու վարժ, մեզ փճացնելէ յետոյ Քուրտերուն սկսած էր, ու այս վերջինները շատ յաճախ կ'ըսէին.

— Ափսո՛ս, չգիտցանք. թէ որ Հայերուս հետ միանայինք, այս անօրէններուս անունը մէշտեղէն վերցուած կ'ըլլար:

Ժանտարմաներուն խժոժութիւնները Մէջուտը սարսափի մատնեցին ու կ'ըսուէր թէ լեռներն ալ պիտի խուզարկեն եւ եայլաները դան՝ Պտօն փնտռելու: Մինչ Պտօն, նոր մաւզէր մը կ'ունակը, սարէ սար կը թափառէր՝ արագ տեղ փոխելով: Ան նիհար, տժգոյն եւ վատոգի երիտասարդ մըն էր: Ես այս ժանտարմաներէն առաւելապէս կը վախնայի անոր համար որ, անոնք Տիվրիկի շուներն էին եւ եթէ զին բռնէին՝ պիտի ճանչնային, ու այն ատեն, սպաննուելը հոգս չէր, որքան սպաննուելու ձեւը: Տաղել հրաշէկ երկաթով, միւսերը փրցնել, եղունգները քաշել, ահանջ ու քիթ կտրել, օրեր շարունակ, թէ ի՞նչպէս ազատեցար, ընկերներդ որո՞նք էին, ո՞ւր են, ըսէ թէ ո՞ւր դեռ ողջ Հայեր կան, քեզ ո՞վ պահեց, ո՞վ ազատեց, եւայլն, եւայլն:

Քուրտ փախստականներն ու ես օպանները ձեռքինք ու լերան խորերը քաշուեցանք, ուր մնացինք օրերով: Կիները մեր հացը կը բերէին: Գիշեր մըն ալ լերան ամենէն բարձր դադաթը ելանք, որ զիյարէթ էր: Հոն Քուրտերը քարերը համբուրելով ըսին.

— Ես հազրէթը Պէյ Տաղի, թու մէ խէլասֆէ ժը տէստէ քեա֊
ֆիրան: (*)

Նոյն բանն ու խօսքերը ըսի նաեւ ես:

Լեռնէն կ'երեւէր Սվազ, հեռուն, մշուշներուն մէջ: Չարա քաղաքը, յստակ առջեւնիս, եւ լերան բոլորաթիքի դեղերը, Ղոռխուս, Կիրիտ, Վէնք եւ Ղզլլալէ: Կ'երեւէին ուրիշ քուրտ աշիբէթներ, Չէնկէլլի եւ Ֆըսըլ լեռները, մեր Ախտազի սուր դազաթը եւ Տիվրիկի շրջակաները: Ես կը նայէի շուրջս, խելքիս կու դար եւ աչքերս կը պոռթկային: Ամէն տեղ հայ անունը ջնջուած, Թուրքը հանգարտ իր ոճիբին արդիւնքը կը վայելէր: Հեռուն կ'երեւային դեռ Տէրսիմի լեռներուն ձիւնապէս ու խրոխտ գազաթները: Միակ տեղը, ուր Հայը ջարդուած ու աքսորուած չէր, եւ ուր կրնար ապաստանիլ ու փրկուիլ:

Անգամ մը օպաններուն մօտակայ ժայռերն էինք, երբ ժանտարմաները երեւցան: Քուրտերը տարօրինակ խուճապով փախան: Օր մը ետք կիները մեզի հաց եւ լուր բերին՝ թէ մեկներ են անոնք: Ժանտարմաները հոն ուլ մորթեր եւ ուրախութիւն են ըրեր, իւր ու կաշի են կողոպտեր, գիշերն ալ պահակ կենալով եայլաներուն շուրջ եւ մինչեւ լոյս չեն քնացեր իրենց վախէն:

(*) Ո՛վ սուրբ Պէյ Տաղի, դուն մեզ ազատէ անօրէններուս ձեռքէն:

Ամիս մը հազիւ եղայ այդ չքնաղ ու վայրի լերան վրայ, որ
ցաւերս մոռցուց ինծի: Լեռը, ձորերն ու տափաստանները ամայի
էին, որոնցմէ շատ—շատ հովիւի մը ձայնը եւ բոժոժներուն կանչերը
կը լսուէին: Լեռը զիս կը գրկէր մօր պէս ու ցաւերուս բալասան կ'ըլ-
լար: Հովերը գոլ ու դաշնաւոր, ջուրերը կարկաչուն, խոտերը պէս-
պէս ու առատ, լայն ու կլոր հորիզոններ շուրջը: Եւ նախնական ու
պարզամիտ Քուրտերն ալ, որոնք հետաքրքրութեամբ վրաս կը նա-
յէին, գործանալով որ Փրան ալ իրենց պէս մարդ է...: Անասուննե-
րուն եւ իմ մէջ սէր մը ստեղծուած էր, եւ ես կը դուրգուրայի անոնց
վրայ: Երբ որ կշտանային, կը կենային շուքի մը մէջ ու կը սկսէին
իրար լիզել, այսպէս մէկը միւսին կեռացած տեղերը քերելով փո-
խադարձաբար: Թէեւ անլիզու, բայց կը հասկնային իրար շարժու-
մով ու բնագրով:

Բոլոր օպաներուն անասունները կ'արածէինք երկու խումբի
բաժնած: Իմ ընկերներս էին հսկայ Ալլին, միամիտ ու բարի, լերան
խորերը ածող եղեւիններուն պէս թիկնեղ ու վայրի: Պրիկը, արաբ
ուղտապանի դոյնով, դիմազծով ու տարազով պատանին: Չաղզօն,
տարիքը առած դաճած սողեկ մը: Ու փոքրիկ աղջիկ մըն ալ, որ ճշա-
լով կը փախչէր ինձմէ,— «կը վախնա՛ամ, Փլային հետ չեմ արա-
ծեր» պոռալով...: Այդը ցուրտ էր լերան վրայ, ցուրտ իրիկունը եւ
գիշերն ալ: Օպային դուռը, շուրջու մէջ պլլուած, մինչեւ լոյս կը
դողայի հովերէն:

Արեւէն շատ առաջ կովերը կը կթէին ու հօտն ալ արձակելով
ցանկապատերէն խոռն կ'արածէին լերան վրայ, ուր ամէն տեղ աղ-
բիւր, խոտ ու ծաղիկ էր: Բառաչներն ու մայրենները ձորերը կը լեց-
նէին: Անասունները կը սեւցնէին ձորերը, եւ իրենց ուղղութիւնը
կը փոխէին՝ երբ քար նետէինք ու սաստէինք «տիտի՛շ»: Ու հանդարտ
կ'արածէին՝ երբ «Տէ՛յ, Տէ՛յ» կանչէին, որ հովիւին գոհութեան
նշանն է: Կէսօրէն առաջ կովերը դատելով օպա կը տանէին կթելու,
յետոյ անոնք շուքերը կը մտնէին ու կը մնային մինչեւ իրիկուն, օ-
րը դովանալուն պէս նորէն ելլել—արածելու համար: Կէսօրին ալ այ-
ծերը օպա կը տանէին կթելու: Ու իրիկուան, երբ աջծերը արօտէն
օպա բերէինք, կովերն ալ կը հաւաքէինք ու միասին կը տանէինք:

Յրուած նախիրը ես կը հաւաքէի իրիկունները եւ եթէ անոնց-
մէ պակասէր՝ դրացի Քիսոսներուն եւ Քուսուրի նախիրին մէջ փնտե-
լու կ'երթայի: Անոնց նախիրը լերան միւս երեսէն անո՛ւշ բառաչե-
լով օպաները կը դառնար ծաղկաւէտ արահետներէն յամբ գնացքով:
Ու ծաղկատի, չքնա՛ղ ու քնքոյշ հովուուհիները դանոնք կը քչէին
կալուղ ճիւղեր բռնած ու խողեր կանչելով, անմեղ ու փայլուն աչ-
քերով: Երբ իրենց հարցնէի թէ իմ նախիրէս իրենցինին խոռնուա՞ծ
է, անուհման քաղցրութեամբ կը պատասխանէին:

— Չենք գիտեր, մտիք նախիրին մէջ ու փնտռէ...

Մինչեւ ուշ իրիկուն ցուլերը կ'արածէին մարդերուն վրայ: Եղջիւրներով ու առջևի ոտքերով գետինը կը փորէին ու սո՛ւր կը բառաչէին, ք մօ՛օ՛օ՛օ՛օ՛: Անոնց բառաչը մինչեւ հեռուները կը հալէր գիշերին մէջ: Ու կը սկսէին իրարու հետ խոչուռտիլ ու դարնուիլ ջլապինդ:

Լերան վրայ «Տէշտէ Կէլէրէն» անուն լեռնադաշտ մը կար, ուրիշ պաղ եւ առատ ջուրեր խորխորատէ մը գոռալով կ'երթային: Հոն կանանչը ծովացիներ էր եւ այնքան բարձրացիներ, որ արածող նախիրին կոտոշնէրը միայն կ'երեւէին: Երբ հով փչէր, խոտերը կը պոռկէին ու կը վէտովէտէին ալիքներու նման: Ու երբ դարունը ամէն տեղ վերջանար, հոն յաւէտ դարուն էր: Անոր ձորերուն մէջ հսկայ եղեւիներ կային հաստ ու ծերունի բուներով, որոնց վրայ կանանչ ճիւղերը ծոեր էին: Հոն կարծես արեւը, հովն ու ջուրը միակ ըլլային ու երբեք մարդ ոտք կոխած չըլլար: Կը պատմէին թէ հովիւ մը այնտեղ ծառի մը մեծ բունին մէջ այնքան մեղր կը գտնէ, որ կաթսաներով գեղ կը փոխադրեն: Կէլէրէնի դաշտին Զարայի կողմը փրած պատեր կային, որոնց Կոմեֆլան^(*) կ'ըսէին, ուր ժամանակին Հայերուն հազարաւոր մաքիները կ'արածին եղեր:

Հոն Քուրտերը թուրք դասալիք գինուոր փնտռած ատեն, որոնք ճահապէն կու գային դէնքերով ու լեռնէն կ'անցնէին, երեք խեղճ մարդ կը գտնեն ձիւներուն տակ ու ինչ պէտքի բան որ ունէին կ'առնեն ու թող կու տան որ երթան: Թէեւ անոնց կը հարցնեն թէ Հայեր են եւ անոնք կ'ուրանան, բայց անոնց խեղճութենէն դատելով կը հետեցնէին թէ անպայման Հայ ըլլալու էին:

Մայիսի վերջերը մինչեւ հեռու գեղերէ բազմաթիւ հօտեր Պէյ Տաղիի սուրբին ուխտի եկան: Մեր գեղն ալ, գրեթէ նոյն ատեններուն, բոլոր հօտերը Վերի Ռաքը, Ախդախի ամենէն բարձր տեղին վրայի սուրբին ուխտի կ'երթային ու հօտի տէրերը այդ առթիւ մէյ-մէկ մատաղ կը մորթէին այնտեղ: Ինչպէս կը տեսնուի, մեր երկու ժողովուրդները հոգիով ու աւանդութիւններով իրարու կ'եղբայրանան, ետքէն եկած ու գիրենք բաժնած օտար արտադրութիւն կրօններու՝ քրիստոնէութեան ու իսլամութեան դրսերեւոյթին տակէն: Քուրտ ուխտաւորները իւզոտ հացեր ու կլորներ (ֆլօմպէ) բերած էին իրենց հետ: Հօտերը լերան գաղաթի լճակը կը գտնէին, որ լողալով գիմացի ափը անցնին: Սուրբ լիճը անոնց մէջէն իր մատաղը կ'ընարէ: Անոր ընտրածը պէտք է գոհուի: Այդ գոհը ա՛յն այժն է, որ յողնած կը մնայ ջուրին մէջ: Հովիւը անոր ահանջը կ'արիւնէ հոն, ետքէն գոհելու համար: Կը պատմէին թէ մարդ մը չէր գոհած ա՛յն այժմը, որ սուրբ լիճն էր ընտրեր, որովհետեւ ան իր սիրած մէկ այժն

(*) Կոմեֆլան = Հայերու գումեր:

է եղեր: Այս մարդուն հօտը բորտեր ու ամբողջովին սատկեր է ատր վրայ:

Այդ օրը Պէյ Տաղին կը շէննար ու կը թիծաղէր ու լերան սուրբը դոհութեամբ մօրուքը կը շոյէր: Հօտերը իրարու հասել դալով կ'անցնէին անոր կողերէն, որոնք կը թնդային բոժոժի երգերով, մայրեններով ու հովիւներու կանչերով: Այս տօնին պերճութիւնն ու խանդավառութիւնը մեր Լուսաւորչայ վանքին ուխտադնացութիւնը կը յիշեցնէր ինծի: Իրիկուան օպաներուն մէջ զոհեցին ու խաչեցին մատաղները: Մէկզմէկ կոչունքի կը հրաւիրէին եւ իրարու մատաղ կը զրկէին ու կը շնորհաւորէին իրար: Ամէն մէկը զիս ալ հրաւիրեց ու կահուղ հաց, միս ու միսի ջուր կերայ: Որովհետեւ ես մէջերնին օտար, տարագիր ու զրկուած էի, կ'ըսէին թէ ամենէն աւելի ընդունելին ինծի արուած մատաղն է (նիազ):

Խոտքաղ էր եւ ջարդերուն տարեդարձը: Օր, ամիս ու թուական մոռցած էի շատոնց: Օպաները լեռնէն դեզ իջան խոտերը քաղելու համար: Կեանքը սկսու քիչ մը համոյնալ: Կաթերը առատացան եւ հունձքը ելաւ: Թէմիրին տունը Պէյ Տաղիի ճիշդ տակը, Մէզիրէ մնաց՝ իր եղբօրը քով: Հոն քանի մը օր ոչխարներն արածեցի: Եւ օր մը, հօտին քով, սկսան ծունկերս ու մարմինս դողալ, ու ես շուք եւ պաղ ջուր կը փնտռէի: Ժանտարմաներէն փախած ատեն լերան վրայ հազուատներով արեւին տակ կը պառկէի, արեւը զիս զարկեր էր. արեւահար էի եղեր: Սակայն ինչպէ՞ս չպառկէի տաքնալու համար, քանի որ մերկ էի: Իսկ այդ լեռը օրուան մէջ վեց ժամ հազիւ կը տաքնար: Գեղին մօտ, թուփերուն տակ մտած կը դողդղայի: Ֆաթիման ինծի կահուղ հաց եւ թարմ կարագ զրկեց, բայց չէի կրնար ուտել: Գաճաճ թուփերը շուք չունէին: Գեղին քովի ուռիներուն տակ չէին թողուր զիս, կը վախնային: Ուստի Աբ Թէմիր որոշեց զիս վարի տունը, Մէջուտ տանիլ: Անտառի կանանչ թուփերէն մարող նայուածքներով կը նայէի հնձուորներուն ու անոնց ուրախ կանչերը կը լսէի: Անհուն գիշեր մը կ'իջնէր կողերուս վրայ ու չէի ըմբռներ թէ ինչո՞ւ կ'ապրիմ: Անձնասպանութեան ձեւեր կը փնտռէի, բայց նորէն կեանքին կը դառնայի: Կ'ուղէի ապրիլ: Գլուխս կը դառնար ու նայուածքս ազօտ էր: Կը դողային ծունկերս: Չով տեղ, պաղ ջուր կը փնտռէի: Չէի կրնար աշխատիլ: Թէմիր կը բարկանար ու կը վռնակէր զիս, ըսելով որ գլխուն փորձանք եղեր եմ: Մայրը կը բարկանար՝ որ հաց կ'ուտեմ, ու չեմ աշխատիր: Ինչի՞ս հիւանդն եմ: Ստիպուած չոր (փայտ) կը կրէի որ հաց եփէ Բիրէն, որպէսզի ինծի ալ պուտ մը թան ու թուշ մը հաց տայ...

Եկաւ ամառ: Հունձքերը կէս եղան: Հովուական կողմի ընթացը նորէն ձեռք առի: Քանի օրերը գովացան, դէպի աշուն, ասպքի նեցայ ու առողջացայ: Կ'ըսէին թէ ուսական բանակը Բաբերդէն

առդին կը քալէ : Թուրք դաղթականները շարան-շարան կու գան-կ'անցնին եղեր : Կը փախչէր Տիվրիկն ալ : Ես կը կասկածէի որ Թէմիրենք իրենց թուրք զերվան Տիվրիկէն բերեն պահէն :

Իրիկուն մը, կըր նախիրը արօտէն տուն տարի, Թէմիրի անտառին մէջ սեւ համազդեհատով, վրան փայլուն կոճակներով մարդ մը տեսայ : Ան ձեռքը հրացան ունէր :

— Հոս ի՞նչ կ'ընես, — հարցուց թուրքերէն :

— Կը տեսնէք որ հովիւ եմ :

Հօր ու հեռացայ : Սպառնալից էր անձանոթը : Թէմիրին հարսին հարցուցի .

— Ո՞վ է այս մարդը :

Չպատասխանեց : Կրկնեցի .

— Ո՞վ է այս մարդը : Թո՞ւրք է :

Ան խնդաց :

— Զեր Տիվրիկցի թուրք զերվան չըլլա՞յ :

— Ան ա՛լ աւելի խնդաց : Կասկածը զիս անաւ : Երբ նախիրը տեղ հասաւ, ցից զառիվերին վրայ, ինքզինքս անկէ վար նետեցի : Եւ սկսայ փախչիլ : Թէմիրենց մէջ շփոթութիւն ինկաւ : Ետեւէս կանչեցին :

— Քրմանձ, ո՞ւր, բան չկայ, մի՛ վախնար, է՛տ եկուր, Քրմանձ . . .

Բիզան թուա ետեւէս : Անոնք կը կանչէին ձորամէջի մէկ տունին, որ զիս բռնեն : Անհար : Ես փախայ-հեռացայ : Մթնեց : Մնացի թուփերուն մէջ մինակ : Ու գացի . Ժանտարմա Կոզէլի տունը, պատմեցի անոնց թէ Թէմիրին թուրք զերվան զիս զարնել կ'ուզէր, փախայ : Անկէ դիչերով Ախսու Սլոյին անտարը գացի : Առտուն Բիւզանդը հօտին հեռ հոն եկաւ : Անոր երեւցայ ու իրողութիւնը յայտնեցի : Բիւզանդ զիս յուսադրեց ու ցերեկին միասին Սլոյին տարաւ : Մինչ այդ Մէջուտի մէջ լուր տարածուեր է թէ Թէմիրին հովիւը, Քրմանձ, կորսուեր է : Սլոն Աբ Թէմիրին գնաց եւ լուր բերաւ որ այդ մարդը ոչ թէ թուրք, այլ Թէմիրենց Բիրէն, Շէյխ Ալին է եղեր : Բարի մարդ, որ ուղեր է ինծի խաղ մը խաղալ, հետս կատակ ընելով : Յետոյ սակայն զղջացեր եւ շատ իղճահարեր է : Ու հարսը յանդիմանելով տխրօրէն ըսեր է .

— Ախո՞ս, խեղճ տղայ, արդեօք ո՞ւր մնաց հիմա :

Թէմիրենք ալ շատ ուրախանալով որ ես կորսուած չեմ, խնդրեր են Սլոյէն, որ նորէն զիս իրենց զրկէ : Անոնք ինձի ցաւած էին, որ իրենց վրայ վստահութիւն չեմ ունեցեր . . . Եւ սակայն լեռ ելլելէ առաջ, դեղին մէջ դեռ, ջեռայրս կ'ըսէր բոլորին, — իր կաշին փրկողը նաւապետ է :

Կէսօր մը Բիրէն տունը մինակ էր, այժերը բռնեցի որ կթէ : Երբ իրեն «տայ» ըսէի (մայրիկ), շատ կ'ուրախանար ու ինք ալ ինծի Քրմանձ կ'ըսէր : Հօտ ու նախիր կը մտկադէին ցերեկուան սօ-

Թին, մենք ալ սօսիներուն շուքը կը նստէինք: Բիրէն բուրդ կը մանէր, խաղ կը կանչէր ու կու լար: Ես կը հասկնայի անոր խօսքերը: Ան իր վազամեռ թուր, երիտասարդ Սիւլէյմանը կ'ողբար:

— Մի' լար, տայ, մխիթարուէ որ թուր ձեր աչքերուն առջեւ, հանդիստ անկողնի մէջ, գլուխը բարձին մեռաւ: Մինչդեռ իմ ազգս ի'նչպէս կոտորեցին, ահա իմ վրաս նայէ, ու կը բաւէ որ մխիթարուիս արդէն: Ի'նչ վիճակ ունէի առաջ եւ ի'նչ սարսուռներէ ետք ձեր դուռն ինկայ, ուր խեղճուկրակ վիճակի մէջ հովուութիւն կ'ընեմ:

— Ի'նչպէս ազատեցար ու մեղի եկար, — հարցուց ինծի:

Եւ պատմեցի անոր ջարդերն ու իմ անցուցած սարսափներս: Բիրէին աչքերը նորէն լեցուեցան: Ան քարմանին ուժով դարկաւ, դարձուց գայն ու ոլորելով բուրդերը մատին ծայրերովը, ըսաւ.

— Խեղճ մարդ, դուն քա՞ր էիր, ինչպէ՞ս դիմացար, — եւ աւելցուց, — դեռ գլխուդ ինչե՛ր ալ պիտի դան:

Ցնցուեցայ: Կը կարծէի որ Թէմիրին տունը իմ փրկութիւնս էր: Եկաւ լեռներու աշունը: Կաղնիները դեղնեցան: Լեռան պտուղները հասան: Անտառներուն մէջ հովե՛ր, հովե՛ր, հովե՛ր: Սոտ ու մարդ գունաթափ: Երկինքը սեւցաւ: Ու ցուրտը, լեռներու ահաւոր ու սարսուռիկ ցուրտը սկսաւ նորէն:

Այդ օրերուն Քուրտերը 40 հոգինոց ժանտարմաներու ջոկատի մը հետ կուտելով, անոնցմէ դերի ու հրացան վերցուցին: Զինուած խումբեր լեռ ելան կուտելու: Մնացած Թուրքերը հեռացան աշիրէթէն:

Աշունը կէս էր: Աշունը կ'ծու՝ լեռներուն վրայ: Հեռուն, Ֆառլ Լեռան ձորերուն մէջ գաղի կ'երթայինք, Թէմիրին տղան, հարսներն ու աղջիկները եւ ես, այդ բազմաթիւ նախիրին ձմրան կեր ամբարելու համար: Քանի՞ ուրիշ լեռներէ ու ձորերէ պէտք էր իջնել ու ելլել Ֆառլ ստորոտը հասնելու համար, ուր իտշոր դաղեր կային: Բրգային հետ կը փորէինք գաղերը: Կիները կը խանձէին ու շալակ կը դնէին: Իրիկուան դանոնք շալկած գեղ կը դառնայինք: Լեռան տխուր ու անհատնում գառիվերներէն, ուրկէ մինակ քալելը դիւրին չէ: Ա՛հ, Ֆառլ ձորերը, կողերն ու ջուրերը: Անտառներ՝ նախամարդկային շրջանի նման կոյս: Մարդու ոտք այնտեղերը բնաւ դացած չըլլար կարծես: Հոկայ պառեխներ: Ու անոնց վրայ կաղնիներ հպարտ, լեռներն ասպատակող դողերու պէս յանդուդն: Ու կաթի համով ջուրեր, որ կը վազէին՝ կոյս անտառներուն մէջ կորսուելու համար: Ու դմայլելի դոյնով ջրային թռչուններ, որոնք ջուրերուն վրայէն ու անտառէն կը ձայնէին՝ հաղար նուրբ սրինգներու փափուկ շեշտերով: Ամէն ինչ կոյս ու անձեռնմխելի: Ու ոսղարթններուն տակ չոր ծառեր, կմախքներու նման դիզուած իրարու վրայ: Ինկած ծառեր, որոնց կմախքէն նորեր կը ծլարձակին: Ու վայրի կենդանիներ, որոնք ազատ բնութեան մէջ ազատ կ'ապրին ու կ'աճին: Հոն, ես կ'ու-



Ընտանեկան խմբանկար (1908ին լուսանկարուած)

դէի փայտ կորիւ, ծառ դառնալ, աղբիւր բլալ, քարի փոխուիլ, ու
յաւիտեա՛ն մնալ ու գլալ... Զուրերուն կանչերը, հովերուն կանչե-
րը, ձորերուն կանչերը, աշունին կանչերը, ո՛վ ցաւերու հոգիս...

... Յետին ցուրտ աշուն էր: Ամբողջ օրը լեռներն էի անա-
սուններուն հետ: Մերթ կ'երթայի Ախսուի անտառները, Բիւզանդն
ու Գառնիկը տեսնելու: Անասունները համախմբելով կը խօսէինք
միասին: Գառնիկ, ամուսնացած, շատ տխուր էր ու յոռետես: Ու
կ'ըսէր շարունակ.

— Մենք դաթը ըս ցաւէն ազատելիք չունինք:

Երբեմնի կանանց կողմիններուն տեղ լերի ցախեր միայն կը
մնային, որոնց մէջէն հովը վհուկի պէս պոտալով կը թռչէր:

Այդ օրերուն Թուրքերը փոխվրէժի համար ջոկատ մը զօրքով
Մէջուտի վրայ պիտի քալէին (ալինի քապուրի): Նախիրը Պէյ Տաղի
փախցուցիւնք: Ես՝ անոնց քով: Հոն ցուրտը աւելի անտանելի էր:
Հովիւներս կը մտնէինք քարերուն տակ, անտառ չկար լեռներուն
վրայ, ու կը դողալինք: Խե՛ղճ լաճեր: Երբ իրիկուն դար ու ցուրտը
սասականար, կ'ըսէի.

— Տղա՛ք, գո՛մ տանինք անասունները, ա՛լ կը բաւէ, իրիկուն է:

Փորձ հովիւ, կը նայէին անոնք լերան ու տուներուն շուքին ու կը պատասխանէին.

— Դեռ կանուխ է, ⁽¹⁾ Քրմա՛նճ, արեւը դեռ լինն է, մարը չէ մտեր, թող արածին դեռ:

Օր մը, հովիւ ընկերս, դաճած Չագղուն պատմեց թէ հայրը Տիվրիկ դացեր—եկեր է: Մարդիկ հոն հագուստ ունին վրանին եւ կուշա ու հանգիստ կ'ապրին եղեր:

— Տիվրիկն ի՞նչ է որ, — ըսի իրեն, — Չագղո, դուն Պուլխը տեսնէիր: Ես հոն պէյլատէի նման կ'ապրէի:

Յիշեցի: Պատմեցի: Լացի: Լացաւ բարի Չագղուն ալ: Լացաւ ու աւելցուց.

— Կու՛նաք, Քրմանճ: ⁽²⁾

Թօփալ Ալի պէկ լուր տուաւ թէ Վարդան Շահպաղի խումբը Տէրոթմ անցեր է Եփրատէն, այժի մորթէ տիկերու վրայ: ⁽³⁾

Կիլիկիլի Ալին մեզմէ տղայ մըն ալ սպաննած էր: Տամարենց Շմաւոնը, խարտեաչ եւ ուշիմ: Ան Տօղան էր, ու իր անտառը չամի դացած: Հոն հրէշը բռներ—զարկեր էր դայն:

Բացի Մէջուտէն, ուր մանր, մեծ, եօթը Խառնալուլցի էինք, լեռներն ալ մինակ չորս հոգի մնացին, երկու խումբ: Չաթալ ամին տղաքը, Հայլն ու Արմէնը մէկ խումբ, Քոթանին Գրիգորն ու Զարմանենց Կարօն, առանձին խումբ: Անոնք տարուան բոլոր եղանակներուն լեռները կը մնային:

Տղայ մըն ալ ունէինք հոն, Տէրտէր ամին Մկրչը, որ Բիծայէն գարատաղ մը սենէր նուէր: Կը փախչի—կու գայ եւ մեր լեռները կը մնայ մինակ: Օր մը հոն ժանտարմայի մը կը հանդիպի տղուն հետ միասին: Պաղարիւնութեամբ կը մօտենայ անոր: Կը քաջէ դարտաղը ու դայն շանստակ դետին կը տապալէ: Մովզէրն ու փամփուշաները կ'առնէ վրայէն: Տղուն բան չ'ըներ:

Յողնած միւսակութենէ՛ կ'երթայ Գոմշուլանք թուրք դեզը: Ան Տիվրիկի դիմաց, բարձր սարին վրայ պզտիկ ալէվլի դեզ մըն էր: Գեղացիները կը պահեն դայն: Բայց իրենցմէ տղայ մը գինուոր կը զրկեն: Տղան կը բարկանայ որ կեափուրը կը պահեն եւ զինք մեռնելու կը զրկեն: Կ'երթայ քաղաք, կը մտանէ: Թուրքերը քաղաքէն դալով Մկրչը կը տանին: Զինուորացուն ալ ատով կ'աղատի: Որովհետեւ ով որ Հայու մը զլուխ տանէր քաղաք, մշտնջենապէս գինուոր

(1) Հիմի գու է:

(2) Մեզի Բրմաննիին:

(3) Վարդան Շահպաղ լեռներն էր, գիտեմք: Ես երանի կաւ տայի իրեն: Փորձառու: Ձիմուած: Բայց ան չկրցաւ արգիլել Տիվրիկի հարաւային գեղերուն (???) Հայերուն ջարդը:

բուժենէ կը փրկուէր: Եթէ զինուորի տարիք չունենար, հինգ մէծիտ վարձատրութիւն կը ստանար: (*)

Տիվրիկի Քարը (քերդը) բաւական Հայ պահուած է եղեր: Թուրքերը անոնց տեղը դտեր են: Ըսեր են որ բան չկայ, ջարդը անցաւ, եկէք յանձնուեցէք: Չեն յանձնուիր: Պաշարեր են գանոնք: Գիչեր մը Հայերը փախեր են թաքստոցէն, լեռներն են ելիր: Հաւանաբար ետքէն բոլորը սպաննուեցան:

Գէպի ձմեռ «որսորդ գումարտակ»ը քալեց Մէջուտի եւ միւս աշիրէթին (Չիթի) վրայ, աշնան փոխվրէժը առնելու համար: Մենք փախտտական ձիւնոտ լեռներն ինկանք: Թուրքերը քանի՜ աշիրէթներ քանդեցին, դեղեր ու տուներ կրակի տուին: Մէջուտի մէջ Թօփալ Ալի պէկի տունը այրեցին:

Մենք օրերով լեռները մնացինք: Բուքի բռնուեցանք ու շուարած՝ ձիւներուն մէջէն քալեցինք: Աշիրէթ գտնուող մեր դեղացի հարսներն ալ միասին էին: Անոնց հետ իմ հարսաս, Կուլիգարը, որ գիւ կը վոնտեր, չէր ուզեր որ փախչիմ, ազատիմ: Քուրտ մը անոր բաս որ իրաւունք չունի վրաս խօսելու: Եթէ գիւ տեսնել չ'ուզեր, ինք կրնայ միասին չգալ: Թուրքերը գիւ կը սպաննեն, բայց զինքը ոչ: Մնացինք քարայրներու մէջ, մինչեւ որ Թուրքերը կորսուեցան մէջտեղէն:

Քուրտ ընկերներով հարուստ Քիսօներուն գոմը դացինք: Քիսօ երկրագործ դեղ էր, ունեւոր: Հոն առատ ցորենէ հաց կար: Քիսօները ինձի մեղքցան եւ իրր հիւր պատուեցին: Իրիկուն մը հօտը դոմ դարձաւ: Այդ օրուան հովիւը դիւղապետին տղան էր: Երթաաարդ լաճ մը, որ կ'երպէր:

Քէշկէ պու տիւնեայա
Կէլմէգ օլայարմ,
Կէլմէգ օլայարմ,
Եար սէնի պու հալտէ
Կէօրմէգ օլայարմ,
Կէօրմէգ օլայարմ:

Թարգմանութիւն —

Երանի քէ աշխարհ
Եկած չըլլայի,
Եկած չըլլայի,
Քեգ այա վիհակով եար,
Տեսած չըլլայի,
Տեսած չըլլայի: (**)

(*) Մկրտչի կինը, սիրարանելով Գոմշուվանէցիի մը հետ, իր ամուսինը սպաննել կու տայ:

(**) Հիշդ այս շերիմ իմաստով պոռթկում մը ունի նաեւ Կէօթէ, ՅԱՌԻՍ-

Ան զիս տեսաւ ու հարցուց ո՛վ ըլլալս: Իմացուցին թէ Փլայ (Հայ) է: Անտեղեակ քրտերէն հասկնալուս, քոյս ըսաւ անոնց.

— Ճամբեցէ՛ք, աղէկութիւն չի բերեր...:

Քիսօսները իմ պապերուս քերվաններն են եղեր ժամանակին: Մեր տունն ու անեցիները լաւ գիտեն եղեր: Սաւայն ո՛չ ես զիրենք կը ճանչնայի, ոչ ալ իրենք այնտեղերը կ'ըլլային:

Վտանգէն ետք տուն դարձայ: Թափուկով^(*) փայտ կը բերէի: Կը հողայի նախիրը: Թէմիրին հետ ջաղացքը կը դարձնէի: Ամէն գործ՝ ուսերուս: Գիշերները Սէյիտ Ալի մեղի կու գար: Անոր ընտիր ուտեստ կը հրամանէին: Ուրախ ժամանակ կ'անցընէինք: Ան Տէրսիմ եղած էր, ու կը պատմէր թէ Տէրսիմի Հայերը ինծի պէս գերի չեն:

Տէրսիմ Ակնցի մը կայ եղեր, որ Ակն ձերմակ ձի ունի: Տէրսիմցիները կ'երթան Ակնայ գիմաց դիրք կը բռնեն եւ Հայուն ձին կը պահանջեն: Թուրքերը բնական է կը զրկեն:

— Ելլ'ր սպիտակ ձիդ հեծի՞ր, տեսնենք,— կ'ըսեն անոր Տէրսիմցիները:

— Հեծէք, հեծէք, ձեզի հէլալ ըլլայ,— կը պատասխանէ Հայը:

— Ատանկ բան չկայ: Զին քո՛ւկդ է: Դո՛ւն ես անոր տէրը:

Սէյիտը երբեմն ինծի հարցումներ ալ կ'ընէր.

— Գիացի՛ր, ո՛վ դուն, որ կ'ըսեն թէ իմաստուն ես, եօթը դիրքերէն ո՞րն է ճշմարիտը...:

Ու կ'ուրախանար, ու կը պարծենար իր հմտութիւնով:

Ես այդ հարցումին չէի կրնար պատասխանել: Բոլորը վրաս կը նայէին անով-տեղով: Այն ատեն Սէյիտը, յաղթական, ձեռքերը դէպի զիս երկարած՝ պոչեց.

— Կը տեսնէ՞ք, կը տեսնէ՞ք, որ չի զիտեր:

Ու բոլորը ուրախացան որ Սէյիտը դերագանց մէկն է ու շատ բան գիտէ:

Ձմեռը դժնդակ էր: Իմ չարչարանքս ալ: Անտառէն փայտ բերել: Գաղ ջարդել: Ախոս պողել: Դերութիւն: Իրիկուն մը դաղ կը ջարդէի կիսամութին, դարկի եւ բթամատս խորունկէն կտրեցի: Օրերով ան կոտտաց ու կոտտաց: Ա՛խ, ճար մը եւ փրկութիւն կը փնտռէի: Բայց ի դուր: Լսեր էի անուանի Եշգիյա Հէմոյի մասին: Թօփալ Ալի պէկ կ'ըսէր թէ ան Հայեր ունի քովը: Հայ կը հաւաքէ ու զանոնք Եփրատի հուններէն Տէրսիմ անցընելով կ'աղատէ: Իմ միտքս զբաւուած էր Հէմոյով: Կ'ուզէի զէնք շարկել: Կ'ուզէի քիչ մըն ալ ես հրամայել: Քանի՛ անգամ զայն երագս տեսայ: Յայտնեցի միտքս թէմիրին: Ան հաւանեցաւ:

Տիմ մէջ, երբ բանը կոտրիմ կ'այցելէ.— «Օ, վայրը ին նախ զիս» (օ՛, երանի ծնած չըլլայի):

(*) Թափուկ քրտերէն է եւ կը նշանակէ բալիփր: Թափուկ եւ դանուկ նոյն բանն է:

ՀԷՄՈՅԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ ՔՈՒՐՏ

ԱՇԻՐԷԹՆԵՐՈՒ ՄԷՋԷՆ...

Փոքր Ասիա հինէն աւագակներու հայրենիքն է: Մեր մամերը աւագակի դրուագներով կը դարձարէին մեր մանկութիւնը: Տէրտիմոցիները ամէն աշուն «ասդին կ'անցնէին», մեր լեռները, (Յփրատէն): Ու կեանքը կը քարանար լեռներուն վրայ: Անոնք կը քշէին հօտ ու նախիր: Կը խլէին փայտահատներէն էշ ու ջորի: Մեր գեղացիներն ալ թուրք պէյերու հօտերը յափափելով կը խզվողէին՝ սովահար չըլլալու համար: Ամէն շրջան ունէր իր մեծ աւագակը, որ քանի մը ասարի կը պտըտէր փառքով: Մինչեւ սպանուելը: Մինչեւ իրմէ աւելի յանդուգնի մը երեւիլը:

Հիմա, պատերազմի ընթացքին, սակայն, ամէն կողմ դող էր: Զինուոր փախտտականներ, նախապէս աղաա ձրուած, Հայ որսալու համար, զէնքերնին դարձուցին կառավարութեան դէմ, երբ իրենց ազատութիւնը ետ առնել ուզեց: Անոնք տարուէ տարի ուժեղ եւ յանդուգն կը դառնային: Առաջ մանգաղաձեւ կեռ սուրերով ու կայծքարէ հրացաններով, հիմա ամենանոր մաւղէրներով, փախտտական զինուորներէ խլուած, զինուեր էին: Մեծ աւագակ էր ձալլօն: Սակայն ամենէն նշանաւոր անիշխանականը (Էշգիյամ) մեր կողմերը Կիլիկիացի Հէմօն էր: Գեռ պատերազմէն առաջ մարդ սպաննելով լեռ ելած՝ անունը ամէն կողմ վախի համանիշ էր հիմա:

... Փետրուարի կէսը՝ 1917: Գաղջ միջօրէ: Մէկէն Քուրտերը Արթիմիւրի տունը փախան գեղէն: Ի՞նչ է պատահեր: Հէմօն իր խումբով Մէջուտ մտեր է: Ասկէ լաւ առիթ ինծի համար: Բթամասու գեռ իրիկուրնէ կը կսկծար: Հոգիս բերանս էր եկեր:

Աննչմար հեռացայ Թէմիւրին տունէն: Ուղղակի Հէմօնին դայի վազանի:

Սենեակի մը մէջ խնջոյքի նստած էր ան գեղին մեծերուն եւ խումբին ընտրանիին հետ, երբ ներս մտայ: Ալի պէկ գլուխովը նշանըրաւ որ ձեռքը համբուրեմ: Ես առաջացայ դէպի Հէմօ ու ձեռքը համբուրեցի, Ալի պէկ զիս ներկայացուց ժպտելով.

— Տասներկու լեզու գիտէ: Ծա՛ռ իմաստուն Փլա է:

Հէմօ գլուխէս մինչեւ ոտքս սուր աչքերով չափչիւկէ ետք՝

— Ես ալ քարտուղարի մը պէտք ունէի: Հետս կու դա՞ս: Ինծի քարտուղար կ'ըլլա՞ս, — ըսաւ:

— Այո, հաճոյքով, — պատասխանեցի քրտերէն, որ Հէմօն թէ՛ դարմացուց, թէ՛ ուրախացուց: Ես կը խօսէի անսխալ քրտերէն:

Այդ պահուն Մէջուտի հիւրն էի:

Թօփալ Ալի պէկ յորդորեց որ չերթամ:

— Հիմա ժամանակները դէշ են: Կացութիւնը անպատա՞ Հէ-

մոյի: Մինչև զարուն սպասէ: Այն ատեն ես ինքս քեզ անոր կը յանձնեմ:

Ես գիտէի Ալի պէկի ձրի խորհրդատու մը ըլլալը: Բայց թէ գերի պէս կ'աշխատէի աղքատ Թէմիրին տունը, այդ հոգը չէր:

— Ո՛չ, — ըսի, — Ալի աղա, ես պիտի երթամ, ինչ կ'ուզէ ա'ն ըլլայ:

Հէմօ միջնահասակ, ջղուտ, նիհար, 45 տարեկան մարդ մըն էր: Քիթը խոշոր, արծուեռունդն: Նայուածքը սուբ: Կրակոտ: Արագ: Վճռական: Անվախ: Գլխուն փխսկիւղով տալֆէս դրած: Վրայէն եւրոպական ժաքէթ: Տակէն կապոյտ կերպասէ լայն շալվար մը: Այս շալվարը Փոքր Ասիոյ մէջ հարուստ եւ էշրաֆ դասակարգը կը հագնի: Ոտքերուն քրտական դունաւոր դուլպայ ու արեխ: Վիզէն ու անութին տակէն կ'անցնէր փսկը, ուրկէ կեռ սուրը կախուած էր, միշտ քովը, ձախին: Զայն երբեք չէր հաներ վրայէն: Քովինները կը պատմէին թէ երբ Հէմօն այդ սուրը պատեանէն հանէ, արիւն կը կաթի...

Հոն էր մեր գեղացի Զարմաննից Կարօն: Նոր միտցած անոր խումբին: Զարմանալի բան: Հո'ն, երկու զարացի երիտասարդներ: Ու Արմատանի Թուղուտ գեղէն Գէորգ (Սէլիլ) անուն պատանի մը: Հայ տղաք իրարմով ուրախացանք: Ծուռ կը նայէի մաւզէրներուն: Ե՞րբ այդ իւրոտ փոկը ուստ պիտի անցընէի:

Ուսմբը 25 հոգի էր: Ծառը կիլիճէքցի երիտասարդներ, Հէմօնի գեղէն: Ան սակայն Հայերուս վրայ աւելի վստահութիւն ունէր՝ քան իր մարդերուն: — «Ամէն բան կարանցուցած, թշնամի Թուրքին, եթէ բռնուին՝ ինծի պէս պիտի սպաննուին: Անո'նք միայն նեղ օրիս պիտի չբաժնուին ինձմէ ու մինչև իրենց վերջին վամփուշը կրակէն ինծի հետ»: Կ'ըսուէր թէ Հէմօ իր ազգականներէն մէկը զարկեր ու լեռ ելեր է: Մանրամասնութիւնները մարդ չէր գիտեր: Ան իր խումբով կը շրջեր գեղէ գեղ: Ուր որ երթար մատաղներ կը մորթուէին իրեն համար եւ Աստուծոյ չափ յարգ ունէր: Անոր շնորհիւ մենք ալ ուսերու վրայ ելանք մէկէն:

Գեռ իրիկուան արեւը գեղին վրայ էր, երբ մեր խումբը ճամբայ ելաւ՝ Զամուրճիները երթալու: Զիւնին մէջի բարակ արահետներէն ետեւէ ետեւ կը քայլէինք: Հէմօն առջեւնուս: Հրացաններուն բերանները վար կախուած էին ուսերէն: Կռուի դացող ջոկատի մը կը նմանէինք: Զէ՞ որ ամէն բոպէ կռուելու պատրաստ էինք՝ չփախալով թէ ե՞րբ կրնայ այդ առիթը ներկայանալ մեզի:

Վերի Զամուրճիի դիմաց, պնդացած ձրեներուն վրայ կեցանք: Հոն բոլոր բնկերները ինծի բարի գալուստ մտղթեցին եւ ճանչցուցանք: Հասանք Միջին Զամուրճը եւ տուները ցրուեցանք: Ես Հէմօնի հետ գեղապետին տունը հիւր եղայ: Բարի ծերունի մըն էր ան եւ ունէր երկու երիտասարդ տղաք: Անունն էր Կուլոյէ Սուլմոզուր: Ակութին մէջ անխուսափելի առատ կրակը, որուն դէմ մեր դուլպաները կախեցինք որ չորնան: Գետին ձգուած օթոցներուն վրայ

նստանք: Հիացող դեղացիները հոն եկան տեսնելու Հէմօն: Ան դեղացիներէն դէնք կը հաւաքէր: Կանչել տուաւ Գարատէրէի Գուլազսրպին Իսմայիլը եւ անկէ ալ գէնք ուզեց: Ձէնքի տեղ անկէ վեց այծ նուէր առաւ: Իսմայիլ քերվան էր մեր դեղացիներուն: Ան հետս անուշ-անուշ խօսեցաւ: Այս ա'յն մարդն էր, որ մեր դեղին Օվկոնց տղոցը արիւնը խմած էր: Ատոր համար զինուորութենէ ազատած էր: Ուզեց երկու անգամ մեղ սպաննել, երբ Սէնոյին հետ լեռն էինք: Ձիս գովեց Հէմօյին՝ աչքիս հաճելի երեւալու համար: (Իրենք ալ քաջ աւազակներ էին, սարսափը իրենց շրջանին, բայց Հէմօյին առջեւ կը դողային): (*)

Տանտէրը մեզի այծ մը մատաղ ըրաւ եւ համեղ ճաշ մը պատրաստեց: Այծին իրանին երկարութենէն փայտէ ձող մը անցընելով՝ գայն կրակին դիմաց կարմրցուցեր էին: Եփեր էին քաւիս, գայն փշրեր ու վրան թան, յետոյ հալած իւղ լեցուցեր խոշոր պնակի մը մէջ: Այս վերջինին սիք անունը կու տան: Հաներ էին դեռ խաւ չէօֆէլիկ, սրուն կէսը իւղ էր: Չայն կը պատրաստեն ուլի մազոտ մաշկին մէջ, կաթի փրփուրէն, մածունէ եւ հասարակ չորթանէ եւ կնարազ իւղէ: Երդեցինք: Ուրախացանք: Սուեցանք: Հանգիստ անկողիններու մէջ քնացանք:

Առտուն դեղին երկրորդ հարուստն ալ մատաղ ըրած եւ մեր խումբը խնջոյքի հրաւիրած էր: Գացի տեսայ Ղեւոնդին նշանածը, Մադրը եւ ամուսինը, Բազօն: Անիկա այլեւս իր ճակատադրին համակերպեր էր: Ուրախ էր իմ նոր դերքովս: Եւ կը յուսար փրկութիւն, միշտ կը սպասէր... Դեռ կը սպասէ ան, քուրտ լաճերու մայր եղա՞ծ...

Առտուն ձիւնոտ անտառներէն Եկար դեղը բարձրացանք: Հոն Կարոյին ու քուրտ ընկերներու հետ Մենկուշի տղոցմէն Փաշիքի տունը հիւր եղանք: (***) Մենկուշ Կարոյին քերվան էր: Ան դեռ ողջ էր, 90 տարեկան, ու դեռ ալ կայտառ: Գիշերը երդեցինք բոլորս: Կարօ սքանչելի ձայն ունէր: Լաւ կ'երգէր նոյնպէս մեր ընկերը Սիամէտ: Աչնան Հէմօյի մէկ մեծ կօփէին ատեն կ'իյնայ անոր գէնքի ընկերը, անուանի Ղարալին: Սիամէտ Ղարալիի վրայ ողբ մը հիւսած էր ու կ'երգէր գայն: Անոր եղանակն ալ ինք յարմարեցած էր: Ան դեղին պէխերով, հասակաւոր, կտրիճ ու շատ բարի արպեցի երիտասարդ մըն էր: Կօրէն վերջ, որ իրենց դեղին մօտ էր եղած, միացեր էր Հէմօյին, սրովհետեւ թուրք ժանտարմաները, Հէմօյին յաղթուած, իրենց վրէժը անպէն դեղէն առած էին, կողոպտելով ու այրելով գայն: Գեղացիները տնաւեր, ամէնը մէկ կողմ էին սպաստանած: Սիամէտ ալ միացեր էր Հէմօյին, իր դեղին վրէժը առնելու համար:

(*) Վերջը իմացայ որ մեր գեղէն, Վերի Թաղին 25 տղոց գլուխը ա'ն է կեքեր: Ատա'ր համար գօրք տարուած չէր հրէշը:

(**) Ան որ զիս բռնած էր երկու տարի առաջ:

Մեր խումբին երգելն էր ան: Կ'երգէր Ղարալիի երգը:

Վի ֆեաֆիբի դրոշումն լը մէ պարանա
Վի ֆեաֆիբի դրոշումն լը մէ պարանա
Գատէր իխպլամէ հէպուամա,
Էշրէթի սարան իմաստէ սը կեշտ:

Հէյվա՛լիս, հէյվա՛լիս, Ղարա Ալի,
Հէյվա՛լիս, հէյվա՛լիս, մով էպանօ,
Թու իքշմի սէտ սուարօ:

Արպէ տըպեն ցիֆի մարիս է
Լէ տըչերի գառ ու պերիս է,
Հէսպէ դայմախամէ բշասի բըխտ է:
Հէյվա՛լիս, հէյվա՛լիս, Ղարա Ալի, Եւայլն:

Արպէ տըպեն մառիս ու մագի,
Լէ տըչերի ջէյլանա դագի,
Ղարալի՛ մեպիսանէ քավաֆրի է,
Լօ՛օ՛, լօ՛օ՛, իմաստէ տու իսագի:
Հէյվա՛լիս, հէյվա՛լիս, Ղարա Ալի, Եւայլն:

Թարգմանութիւնը.—

Այդ անօրէնը մեր վրայ գնդակ անձրեւեց:
Բայց եթէ մենք բախտ ունենայինք,
Սարան աշրէթը օգնութեան կը հասնէր:

Աւա՛ղ, աւա՛ղ, Ղարա Ալի,
Աւա՛ղ, աւա՛ղ, այն առիւծին,
Դու հակառակորդ ես հարիւր ձիաւորի:

Արպէ որ կ'ըսեն մարխոս(*) տեղ մըն է,
Այնտեղ կ'արածին ուլեր ու գառներ:
Գայմագամին ձին իր վրայ է քեֆեր:
Աւա՛ղ, աւա՛ղ, Ղարա Ալի, Եւայլն:

Արպէ որ կ'ըսեն զի է ու կաղնի,
Կ'արածին այնտեղ երէները մերկ,
Ղարա Ալի հատցուցեր է իր փանփուշտները,
Լօ՛օ՛, լօ՛օ՛, օգնութիւն կ'ուզէ, Եւայլն:

*Կը վերջացնէր Սիամէա իր երգը յուզումով թրթուռն: Եւ ա-
մէն անդամուն ալ արցունքով կ'աւարտէր զայն: Հարիւր ձիաւոր զափ-*

(*) Մարխ = եղստ փայտ, չըբա:

Թիլէի դէմ, մինակը կուուեր է Ղարա Ալի եւ շնորհիւ անոր Քուրտերը յազթեր են: Փամիուշաները հատեր են ու ինք ալ սպաննուեր է:

Եկարի կռնակը եղեւիններու մեծ անտառ մը կայ: Անունն է Բէֆէնթէր: Անտառին մէջ կան դռներ ու աղբատիկ դեղ մը: Յաջորդ կէսօրին այդ դեղը հասանք: Աղբատիկ հիւղակներ: Աղտոտ ցնցոտիներով ծածկուած՝ մարդերը: Կին մը, որ կիսամերկ էր, իր շորերով երեխան կը փաթթէր օրրանին մէջ: Անոնք հաց չունէին: Հող Հէմօն առաւ դեղացիի մը մուգէրը: Մարդը աղաչեց ու ոտքերը պագաւ: Անօգուտ: Իջանք Գար Տէրէ: Այդ ձորին մէջ Սլազի նահանգին աղի աւաղանները կան: Հիմա ձմեռ էր, գոց էին անոնք: Հասանք Սէօյիտ Եիւզի ջուրտ դեղը: Խուճրը գիշերելու համար դնաց մօտիկ դեղ մը: Հայերս հոն նշանաւոր ու հարուստ Թիթա էֆէնտիին տունը իջանք: Մեր դեղէն հարս մը, Տնաւերենց Վարդանուշը հոն էր: (*) Ան մեր լաթերը լուաց ու շորցուց: Կը խնդար, կը խնդար մեզ տեսնելուն: Արեւ ցաթեցինք վրան: Գիշերը Մանասէ եւ Գէորդ Վարդանուշին դացին: Մենք Կարոյին հետ կը լսէինք անոնց սիրուածիւրը ու կը հայհոյէինք անոր:

Առտուն հասանք խումբին: Միասին ճամբայ ելանք ու մասնք Քօրճատուղլա դեղը: Լերան վրայ մեզ բռնողները հօրաքրոջս հետ Նորանհօրի մէջ այդ դեղացիներն էին: Բայց հիմա անոնք ալ անուանի չէթէներ եղած էին ու տունը չէին կենար բնաւ: Գեղը այդ մարդ չկար:

Նոյն օրը հասանք Կէօլ Աղըլը դեղը, լերան մը լանջին, կաղնիներու անտառին մէջ: Գեղը, իրարմէ ոչ շատ հեռու, երկու մասի բաժնուած էր: Վարի մասին մէջ տեսանք Կարոյին քենին, Կօշկրենց Պօղոսին (**) կիներ, Մարանը: Նետուեցաւ երկուքիս վիզը եւ աղբիւրի պէս լացաւ ան:

— Զեր արեւուն մեռնիմ, ո՞ւր ըսանկ ըսոնց հետ: Զի տանի՛ն գլինուղ ջուր մի դնին, — կ'ըսէր:

Մեզ ատանկ Քուրտերուն հետ տեսնելով, ան կը յիշէր դեղին երիտասարդութիւնը, երբ ժանտարմաներ օր մը տարին ու ա'լ չգարձան:

Հոն կ'աշխատէր Քուրտի մը տունը: Մեղի հետ իր բոլոր կորուստները եւ տէրը տեսած եղաւ: Գնաց ներսէն հաց բերաւ: Կը պլորէր գանոնք ու մեր դօտիներն ու ծոցերը կը դնէր:

— Ա'խ, ես ձեր արեւուն մեռնիմ, ես ձեզի մատաղ ըլլամ — կ'ըսէր շարունակ:

Մարան, եթէ չեմ սխալիր, Խաչկոնց ազգական Ներսէս ամին աղջիկն էր:

(*) Օյմիշենց Սերօթիմ կիներ:

(**) Կօշկրենց Պօղոսը 1895ի ջարդին մեր գեղը պաշտպանող կերասներէն մին, կը գտնուէր Պոլիս, ուր դեղարան մը կ'աշխատէր: Բէկցի խափիէ Վահան Աւրանեանի մատնութիւնով գայն կը բշեն Անատօլու ու կը սպաննեն:

Մենք բաժնուկեցանք իրմէ ու դացինք վերի Կէօլ Աղլըին: Մեր աչքերն ու երեսները կը պահնէր ան անկուշտ կարօտով: Գեղին ծայրը կեցած, կը նայէր մեր ետեւէն եւ կու լար անկուշտ: Վերի գեղը Տէլի Իսմայիլին Ալլիք ծերունկին տունը հիւր եղանք: Ատենին, ու այսօր ալ, այդ գեղը զողերու անկողինն էր: Ալլիք ծերունին գողերու կնքահայր եղած է ատենին: Ամէն մէկը գողի ասպարէզին սկսելէ առաջ անոր քով կ'երթայ ու անոր ձեռքը կը մարզուի եղեր: Իր այս հանգամանքով, ինչ գողութիւն որ ըլլայ՝ հեաքը կը պանէ եղեր ան, եթէ ուզէ: Հիմա իր տեղը անցած էին երկու կարիճ տղաքը: Անոր տունը կը մնար մեր գեղացի Կօշկրենց Սուգոյին կինը, Հոսօբ: Հա՛, հա՛, հա՛, հի՛, հի՛, հի՛, խնդայէն մեր քով եկաւ ան ու մեր ձեռքը սեղմեց:

— Մարի՛կ, սըւոնք նէյէ, սըւոնք նէյէ: Մա՛նչ, ըսանկ ո՞ւր կ'երթաք:

Առանց խնդալու խօսք չունէր ան: Կը կարծէի թէ այդ գեղը հարսանիքի եկած է: Աշունը Խարալուի մէջ Կարոյին ու Գէորգին հողի տակի անակը հիւր կ'ըլլայ այդ կինը: Կու գայ իր ընկերներուն կը պատմէ: Ալլիքի տղաքը կ'երթան կը կողոպտեն խեղճերը: Կարոյին վրայի վարատաղ ատրճանակը կ'ստնեն ձեռքէն: Ալլիքի տղան այդ ատրճանակը կախած էր մէջքէն:

Յաջորդ օրը Չէնկէլի լեռը ելանք: Ան Հէմոյին որջն էր: Լեռան ստորտաի իօրէն Տէրէի անառիկ ձորին մէջ կը բնակէր Հէմոյի եղբայրը, Պէկէ: Կտարին վրայ հոգերը փոշխացած ձիւները մեր երեսներուն կը փչէին ճիչերով: Իջանք ստորաւ, ձօնի գեղը: Անցանք քէֆէ մը եւ հողվրաիք մը: Հոն ձիւնը հալած էր: Մտանք գեղ մը, որ ժեռուտ բլուրներուն կառչած էր: Կիլիճէկն էր ան, Հէմոյի գեղը:

Հէմոյի տունը հարուստ էր: Պղտիկ տղայ մը սնէր ան, իրեն պէս ճարպիկ: Ան հիմա՛ իսկ առաջնակարգ նշանառու մըն էր: Ունէր երկու կին, մին ծեր, միւսը երիտասարդ: Կիները լաւ հագուած էին ու մագերէն սակիներ կախած:

Հոն տուները ցրուեցանք: Գեղացիները մեզ աղէկ պատուեցին: Առտուն Հէմօն մատաղ առաւ ու գեղին վրայի կաղնիի սուրբերուն ուխտի դացինք: Փոխակ, դիտակով, գեղին պուլսը պահակ կը կենայինք մենք:

Երբ մթնեց, ձորին վրայ, դետակն ի վար Պուղանագ այլժիթուրք գեղը դացինք: Անոնք Կիլիճէկցիներուն հեա ծանօթ ու քիրվան էին: Կոյր մը հոն օճախին մօտիբը կը խաննէր: Մեր աղմուկը առաւ:— «Ո՞վ են ասոնք», հարցուց: «Եշգիւաներ են», ըսին:— «Կիլիճէկցիներն են», յարեց:— Յրուեցանք տուները: Ու Հէմոյին աներձագ Ալըշիրն ալ մխտին գեղին ծայրը: Հարուստ Մուսթաֆա քէհեայի տունն իջանք: Մեզի ցորենէ մաքուր հաց հանեցին ու ձղեցին մաքուր անկողիններ: Քուրտերուն մէջ այս երկուքն ալ կը պակսէին: Չիւն չկար հոն: Գեղը նման էր մերինին: Աճօներ՝ պատուղի ծառե-

րով: Տուները՝ կոկիկ ու ծեփուած: Բուխերիկները խոշոր, օճախները մասնաւոր հողէ կոկիկ շինուած: Տուներուն մէջ փայտէ եւ հողէ ամբարներ՝ ցորենի եւ ալիւրի համար: Գեղացի կիները հազած էին բուրդէ ճերմակ տալալս ու տրեխ: Զգեստները նոր ու մաքուր: Իրենց դիտուն մեր գեղին հարսներուն պէս ճերմակ ու նուրբ շարքէ ներքնակներ (ճերմակ նուրբ կտաւ) կապած էին: Նիստուկացը՝ մարդափայել: Կերուխումը մաքուր, հարուստ, առատ: Ունէին գեղեցիկ ու լաւ խնամուած անասուններ: Ու գետափին շուրջ ալ սօսեստաններ: Այդ գեղը ճիշդ մեր գեղին էր նման: Անկէ քուրտ գեղերը երեք քայլ էր, սակայն երեք հարիւր տարուան տարբերութիւն կար իրենց միջեւ:

Հոն շատ ուրախ օր անցուցինք: Արեւ էր: Տանիքներէն նշանառութիւն բրինջ դիմացի բլուրներուն վրայ: Մեր ընկերներէն մէկը, Թուրք (ալէվի), տաքուկ ախոտին սեմին վրայ աղուոր հարս ու աղջիկներուն հետ զուարթ կը սիրաբանէր...

Իրիկուան մեր ընկերներէն մէկը-քանին իրենց տուները դացին: Նորեր աւելցան անոնց տեղը: Գիշերը Պուզանագի մօտ դացինք՝ ուրիշ Թուրք ալէվի գեղ մը: Հոն Պախթիար մեծ ու հարուստ սիւննի թուրք գեղէն, որ զինուորական կեդրոն էր, սպայ մը պիտի դար ու տեսակցէր Հէմոյին հետ: Գիշերը մահուան չափ մութ էր: Պահակներ դրինք կալերուն վրայ ու տուները մտանք: Մեր տանաէրը մեղի հաւ մորթեց ու եղինձ եփեց: Սպան Հէմոյին հետ պիտի ճաշէր: Ի՞նչ շողշողուն ճաշ եւ ուտեստներու ի՞նչ տեսակներ: Կերուխումը իրապէս Թուրքերուն յատուկ է:

Տանիք ելայ՝ իմ կարգիս պահակ սպասելու: Կ'անձրեւէր ու հովեր կային: Մջէն, ընկերս, բուխերիկի մը ետին մտեր կը գողար: Ես զինքը պիտի փոխանակէի.— Հա', կը տեսնե՞ս, ըսաւ ան ինծի: Երբ հեռուէն եկող մը ըլլայ՝ կ'աղղարարես որ կենայ:— Մէ'կ, երկո՛ւ, երե՛ք: Զկեցա՞ւ՝ կը կրակես:

Մջէն զինուորութենէ փախած էր եւ մարզուած զինուոր էր:

Ուշ առն Հէմոյին սենեակը դացի: Երիտասարդ սղան նստեր էր հոն եւ ուրախութիւն կ'ընէր Հէմոյին հետ: Լեռ ելլելէն ասդին առաջին անգամ էր որ Թուրք զինուորականի կը հանդիպէի: Պոռթկացին աչքերս ու դուրս ելայ: Ան Գէորդը ճանչցեր եւ հարցուցեր է անոր — Դուն Հա՞յ ես... Հէմօն վերջէն Գէորդին սաստիկ բարկացաւ՝ ինքզինքը մատնել տալուն համար:

Այդ գիշերը մեզի միացան երկու Պէսնիցի Հայեր, Ալօզ եւ Հասան Չափուչ: Անոնց հետ էր ուրիշ Հայ մը, Սիլագցի Փալանճը Մարտիրոս: Անոնք բանուորական խումբերէն փախած էին: Եկած էին ա'յն յոյսով՝ թէ Հէմօն Հայերը Տէրսիմ կը տանի:

Դարձանք Պուզանագ: Հոս մեզի միացաւ բարձրահասակ երիտասարդ մը, Հէմոյին Պէկէ եղբօրը տղան, Պէկօն: Սաղը Թաշ Թուրք

գեղին մէջ ոստիկաններ կը պաշարեն զիրենք: Ան կը ձեռքէ անոնց շղթան ու մեզի կու գայ: Քսան Քուրտեր են եղեր հոն:

Ամենէն քաջը, մեզ կողոպտողներէն Մէմոյի տղան(*) սրունքէն կը զարնուի կ'իյնայ: Ոստիկանները իրեն կը կանչէ:

— Եկէ՛ք: Գօտիս 200 կարմիր ոսկի ունիմ: 800 փամփուշտ եւ մատէլ մաւղէր: Ես կը մեռնիմ: Առէ՛ք զանոնք:

Թուրքերը վրան կ'երթան ուրախ: Երկու զնդակով անոնցմէ հինգը կը սպաննէ: Միւսները կը փախչին: Եշգիլյան քուրտ գեղերը կ'երթայ-կ'ազատի:

Զին-ձմեռ գիշեր մըն էր: Գացինք Մէօհիւալի: Հոն կ'ամուսնանար մեր ընկերներէն Կիւլազան: Անոր տղան ալ մեզի հետ էր: Այդ տղուն մայրը ձգած, հիմա ուրիշ կին կ'առնէր հայրը: Առաջ գեղին հարուստն է եղեր: Հիմա սիւննի Թուրքերը ամէն բան տարած էին: Ինք ալէվի Թուրք էր: Ան հարսնիքի կանչեց խումբը ու մեզի հարուստ ճաշ մը տուաւ: Տղան կը նայէր մօրը վրայ ու կու լար:

Հոն Թրքուհի մը եկաւ մեզ, հայ տղաքս տուն տարաւ: Գաղթի կարաւաններէն հայ աղջնակ մը առած էր քովը եւ կ'ուզէր ցոյց տալ մեզի: Աղջնակը տունը չէր: Կինը ըսաւ թէ ան հայերէնը մոռցեր է ու իր նախկին անունն իսկ չի յիշեր: Պիտի մեծցնեմ զայն ու դուկիս կին ընեմ, կ'ըսէր...


Մէօհիւալիէն անցանք Արպէ: Հո'ն, ուր աշնան կոռուեր էր Հէմօն: Արպէցի Քուրտերը կողոպտուեր ու աղքատացեր էին: Անկողին ունէին, բայց անկողնի երես ու սաւան չկար: Աշունը Թուրքերը առեր-տարեր էին զանոնք: Չորս օր այդ գեղը մնացինք: Անկէ կրկին իջանք Պուլզանապ: Զինարձակութեամբ ու աղաղակներով օդը կը թնդացնէինք: Պուլզանապի մէջ Թուրք ժանտարմաներու հետ մէկ սենեակ հիւր եղայ: Ֆէսերը իջեցուցեր էին իրենց աչքերուն վրայ այդ լիբբերը ու հպարտ էին: Անոնց հետ լեզուի ընդհարում մըն ալ ունեցայ: Ընկերներս գիս առին-տարին:

Մեր ընկերներէն ձոկեցի Ճաֆէր եւ Իպէ անուն Քուրտերը Մաղըր Թաշի կոռուին վերաւորուեր էին: Անոնք պառկած էին լերան վրայ, Օրթապ գեղը: Անոնց այցելեցինք ու մխիթարեցինք զիրենք: Թուրքերը աշնան հոս ալ քանի մը սուներ այրած էին: Այս գեղն ալ Հայ չէր մնացած: Գեղին հարուստն էր Տիապ աղա: Ան իմ պապերուս քերվան, բարեկամը եղած էր ատենօք:

Վէրքերը թարմ կարագի եւ մեղրի խառնուրդով կը բուժէին:

Օրթապէն գացինք Զիման, որ Արմտանի ու Խօրէնէկի կողմերն էր, դէպի Տիփրիկ: Զիմանցի ժանտարմա մը, Սլօն, մեր գեղին մէջ կը հսկէր շարունակ: Զիման դեռ զարհուրելի ձիւն ու ձմեռ էր: Զիմանի մէջ մարդերը կ'ըսէին թէ հացին անունն ալ մոռցած են: Ի-

(*) Առաջին անգամ Նարսնիօր, հօրփուրիս հետ մեզ կապապողը, որ հօրփուրս իր գեղը տարած ու յետոյ զարկած էր:



Тузмагумуд-хүдхүд

րիկուան Ձէնկէլլիի ստորաւը, Տարածըք դեղը դացինք: Գեզն այ-
րած էին թուրքերը: Նորաչէն հիւզակները կորսուեր էին ձիւնին տակ:
Այս գեղացիները ո՛չ անկողին, ո՛չ աման, եւ ոչ ալ զգեստ ունէին:
Հաց՝ արդէն ոչ: Օճախին դէմ կը նստէին, կը մտմտային: Այս խեղ-
ճութիւնները տեսնելով յուսահատութիւն կու դար մեր վրայ: Անոնց
մէջ մենք ալ անօթի էինք:

Օր մը Կարոյին կարծիքը հարցուցի այս կեանքին վրայ:
«Ձղջացեր եմ ու փախչելու միջոց կը փնտռեմ», ըսաւ ան: Ձղջացեր
էի ես ալ ու թէմիւրին տունը կը փնտռէի:

Տարածըքէն Խորէն Տէրէսի, Հէմոյին եղբօրը գոմը դացինք:
Հոն իմացանք թէ Նոկաս մը զինուոր մեզ հետապնդելու ելեր է: Քա-
նի մը ընկերներ այս լուրին վրայ հեռացան մեզմէ: Տխուր էր Հէմօն
ու մենք բոլորս: Կուուելու սյօ չունէինք: Ո՞ւր կրնայինք ապաստա-
նիլ այդ ձիւն-ձմրան:

Սկսանք աւելի ստէպ տեղափոխուել ու աւելի շատ թափառել:
Գիշերով Կիլիճէկ, Հէմոյին տունը դացինք: Անոր կիները, աղջիկը՝
Թիւրքմէն եւ տղեկը մեզի հանդէպ հոգածութիւն ցոյց տուին: Յա-
ջորդ օրը գեղին բոլորն անցուցինք: Իրիկուան լուր եկաւ թէ Կիլի-
ճէկ պիտի պաշարուի գիշերը: Անցանք Պատուն (մէկ ժամ Կիլիճէկէ):
Սկսաւ ձիւնել: Զիւնին տակէն քայեցինք ու հասանք Կոււտէ Ջուհա,
որ Ձիթի գեղերէն էր, հարուստ: Գեղացիները մեզ շարաթ մը հիւր
ըրին ու ամէն օր մատաղ կը կտրէին: Հոն մօտ էր Իմրանիյէի, զի-
նուորական կայան ու միւսխարլըք:

Կիլիճէկի գոմերը դարձանք: Գիշերը ճամբան նշմարեցինք ու-
տիկաններ ու անկարգ նահանջեցինք: Ջուրերն յորդեր էին: Մենք
թրջուեր էինք ու կը մտէինք: Հոն գոմերը կը քակէինք ու կը վառէինք:
Շուրջի բարձունքներուն վրայ գիշեր-ցերեկ պահակ կը սպասէինք:
Մեր սնունդը կը հողային Կիլիճէկցիները՝ առանց արտունջի:

Հէմոյին ձիւրը պահողը գանոնք դարձուց վախէն: Կառավա-
րութիւնը մեզ լրջօրէն կը հետապնդէր: Մասօ անուն Հէմոյին հա-
կառակորդ քուրս հրոսապետը 150 մարդով մեզ կը փնտռէր:— «Գա-
ցէ՛ք, կորսուեցէ՛ք մեր դիւխէն», կ'աղերսէին Հէմոյին կիները, իրենց
ամուսնին ու մեզի: Զապիթիյէները Կիլիճէկ լեցուեցան: Հէմոյի կե-
ները փախեր էին: Կը ծեծեն անոր մեծ եղբայրը եւ Հէմօն կը պա-
հանջեն: Կը դիտնան մեր տեղը, բայց չեն համարձակիր վրանիս դալ:

Մեր ընկերները դեռ կը հեռանային մեզմէ: Հէմօն ձեռքս
տուաւ անոնցմէ մէկուն անագտարիլ մաւգէրը: Ան եւ քուրս ընկեր-
ները զիս աւելի կը սիրէին, որովհետեւ հայ տղոց մէջէն ե՛ս միւսկս
քրտերէն կը խօսէի:

... Ու ձորերուն մէջ, ու գոմերուն մէջ, ու լեռներուն վրայ:
Անքուն, յողնած, անօթի: Հագուստ հանելը մոռցանք: Անկողին
պառկիլը շատոնց ու շատոնց: Կը յիշէի թէ մեր ծերուկ մայրը, լու-
սահողի Ռիրէն, օր մը ըսած էր ինձի, արկածներս լսելէ վերջ:

— Հիմնը ժը դեմ սերեդէ... (*)

Գիշեր մը ձիւնոտ սարն ի վար դլորուեցաւ մեր ընկերը, Հասան Չափուշ: Խուսքը դինքը ձգեց ու հեռացաւ: Ան ձորէն կը կանչէր սղորմուկ, — Ալլօ՛շ, Ալլօ՛շ, Ալլօ՛շ... Ալլօշ դինքը բերաւ խումբին հասցուց: Օր մը նորէն լեռը պահուէր էինք, աղուէսները սկսան իրար սիրել, կատակել ու պոռալ: Հէմօն կ'ուրախանար զանոնք տեսնելով: — Աղուէսն ու ուրուրը բարի են, կ'ըսէր ան: Վտանգը անցաւ: Պիտի փրկուինք...

Մենք փառք տալով մեզ ուրախացնող բարի աղուէսներուն, լերան վրայ մեծ ու հարուստ, մենաւոր նահապետական տուն մը իջեալեցանք: Ան տուն չէր, այլ դղեակ, հովերուն ու բնութեան հետ միմակ: Գարնան առատ աղբիւր մը տունին քով, հնչեղ ձայնով, կը վաղէր գուռին մէջ: Կարծէք հոն կեցեր էր, «բարի եկաք, բարի երթաք» ըսելու եկող ու դացող հիւրերուն: Լուացուեցանք: Տանը լայն բակին մէջ երկու հովիւ դամփոնները զսպելով էին զբաղած, որ մեզի չդային: Մենք լեցուեցանք ձերմակ կիրով ծեփուած մաքուր հիւրասենեակը: Մենեակին անկիւնը երկու մարդ կծկուէր էին մեր վախէն: Մեծը ճամբորդ չէյի մըն էր իր փոքրիկ գաւիին հետ: Տեղաւորուեցանք կրակին շուրջ՝ մոռնալով օրերու խոնջէնքը: Տանտէրը առոյգ ծերունի մըն էր: Ունէր հարսներ, թոռներ եւ երիտասարդ զաւակներ: Ոչխարներու մեծ հօտ մը եւ բաւարար հարստութիւն: Ան մեզի երկու մաքի մատաղ ընկ տուաւ: Մառանները ներսի տան մէջ զանոնք կը քերթէին ու կը մաքրէին: Մենք մեր մէջ բաժնեցինք դամակները եւ անոնցմով մեր դէնքերը կը մաքրէինք: Մենք բարի ընկեր մը ունէինք՝ Ալի անունով: Անոր քերվային տունն էր այս: Ալիի դեղը անկէ կէս ժամ հեռու էր: Ան մեզի լուրեր բերելու համար տուն գնաց: Գարձին ըսաւ թէ ձալլօ, ուրիշ նշանաւոր աւագակ մը, Հէմօյին պէս, Թուրքերուն յանձնուէր է ու կը պատրաստուի եղեր մեզ հետապնդելու: Հէմօ սոյն լուրին չհաւատաց, բայց շատ տխրեցաւ:

Մեզի երկու խոշոր սեղան դրին ճաշի համար: Վրան լեցուցին առատ հաց ու շորքով բերին եփած մատաղները, եղինձ, պահածոյ միս (զաւուրմա), չորթան, եւայլն: Մենք փառաւոր կշտացանք: Մեր ընկերը Ալիի սեղանին կը ծառայէր ու ձեռքերնու ջուր կը լեցնէր, որ լուացուէինք: Ան կ'ըսէր— «Աս ի՞մ տունն է, պէտք է ծառայեմ ձեզի»:

Հէմօ սազը տուաւ չէյիին, որ նուագէ: Շէյիը սազ նուագել չէր դիտեր: — Դուն ինչացօ՞ւ ես, բարկացաւ Հէմօ, չէյի մը, որ երգել չի դիտեր: Ի՞նք ձեռք տուաւ սազը, եւ սկսաւ նուագել ու կանչել: Զուռգաւրին (սազ) ձայնը բարակ, Հէմօյինը հաստ, յուզեցին մեզ: Հէմօն կ'երգէր իր ետրը—

(*) Դեռ ինչե՛ր ալ պիտի գամ գլխուդ:

Եարիմ օր-ուրմուշ փումարքն պաշընտա, պաշընտա, պաշընտա
Եիւզէր ալթուն հէր պիրիհին գաշընտա, գաշընտա, գաշընտա :

Թարգմանութիւնը .—

Եարս նստեր է աղբիւրին գլուխը,
Հարիւր ոսկի ամէն մէկուն մագին վրայ :

*Մեզմէ դուրս ուրիշներ երնէկ կու տային մեզի: Մինչդեռ մեր
ցաւը մե՛նք գիտէինք: Յուսահատ կեանքէն, ամէն անգամ որ մերին-
ները յիշէինք՝ մեր աչքերուն արցունքը ջուրի պէս կը վաղէր: Գի-
շերը հոն մնացինք: Առտուն Ալին մեզ տառջնորդեց ամայի բուռի
բլուրներուն մէջ: Յուրա էր: Չոր խոտերով խարոյկներ վառեցինք
հոն ու հայ ընկերներս սկսանք իրարու պատմել մեր քաջածները:*

*Քրմանճի պատմութիւնը գիտէին՝ սկսած Հէմոյէն ամենայն-
տին ընկերը: Նախ սկսաւ Չարացի Գէորգ երէցեան: Ան Չարացի
կօշկակար Մանասէ Հայրիկեանի հետ եկած էր: Ան փախեր է Կա-
րինէն՝ Չարդերու ընթացքին, իբր Թուրք: Փախուտի ընթացքին իր
մէկ թուրք ընկերը կը սպաննէ, անոր համխախէն ու զէնքը կ'առնէ
ու իբր Թուրք կը դառնայ՝ դադտնի՝ աւերակ Չարան:*

*Իսկ Մանասէ կը տարադրուի ընտանիքին հետ, ծառուած
կնկան տարազով, մինչեւ Տիվրիկի: Կը տեսնէ աչքովը սարսափելի
եղեռնը ու կը փախչի: Տէլի Տաղ կ'երթայ: Կը թափառի երեք օր:
Կը բռնուի: Կ'երզնու թէ ինք իսլամ է: Կը քննեն զինքը լուսնի լոյ-
սով ու ազատ կը թողուն: Քանի մը շարքի ամայի Չարային շուրջ
կը թափառի: Կը գտնէ Գէորգը ու կու դան Հէմոյին կը մխանն:*

— Մենք Պէսնիքի եմք Հասան Չալուշին հետ եւ իրարու ալ
քննեկալ,— ըսաւ Ալլօշը, առնական սրտին տակէն տխուր հառաչե-
լով:— Պէսնի շատ վար է այստեղէն, հարբերդէն դէպի հարաւ: Եւ
եթէ ոտնով երթալ ուզեմք, ութ օրուան մամբայ է այստեղէն: Մեր
երկիրը տաք է: Մենք հոն ցարեմ չեմք մանչնար: Կ'ապրինք մեր այ-
գիներով: Հոն սար-ձոր այգի է: Մենք խաղաղը կը չորցնեմք ու գայն
կը տանինք հեռու տեղեր ծախելու: Եւ երկու կտրին ջորիներովս
պետութեան սուրհանդակ էի: Լոզալով կ'անցնէի Եփրատէն: Եւ սուր-
հանդակը գարնել ուզող աւազակներուն հետ կռուիլը ինծի համար
խաղալիք էր: Երբե՛ք սուրհանդակը գարնել տուած չեմ: Պատերազ-
մին ջորիներս առին եւ զիս զինուոր ըրին: Զինուոր էինք Հասան
Չալուշին հետ, երբ մեր բռնները քանդեցին: Մեր ընտանիքները տա-
րին եւ մենք լուր չունինք անոնցմէ: Բանուոր-գօրք էինք: Եղանք հա-
գարապետի մը հովէրները: Երբ Ռուսերը սկսան յառաջանալ, մենք
Կարին էինք ու նահանջեցինք: Անոր կողմը անցնելու պատենութիւն
ունէինք, բայց, ա՛յ գլուխ . . . Այս աշնան Հէմոյի համբաւը լսեցինք:
Կ'ըսէին թէ ան Հայերը կը հաւաքէ ու Տէրսիմ կը տանի: Այդ յոյսով
լիցցինք մեր հանդարտ կեանքը ու եկանք կրակը մտանք:

— Իսկ եթէ դուք Պէսնի երթա՞ք, — հարցուց անոնց Կարօն :

— Ա՛, Թուրքերը մեզ վայրկեա՛ն մը իսկ պիտի չապրեցնէին մեր այգիներուն համար, — հառաչեց :

Փալանճի Մարտիրոս ալ, որ դեռ դուրդուրանքով քանի մը ստեղ պահած էր, ըստւ :

— Հերու, աշնան, խելքս փչեց եւ ելայ մեր տունը գացի, Սվազ : Հայերու տեղ Թուրքերը մտեր էին, փոխուած եւ հարստացած : Իմ վրաս մայրդ եւ գիւ հարցնող չեղաւ : Մեր տունը աւերարբեր-տարեր էին, բան մը չկար : Պատուհաններէն քանի մը ապակի հանեցի, որ տանիմ ծախեմ եւ հաց առնեմ, ուտեմ : Շուկան գիւ բռնեցին, ապտակեցին, ձեռքէս ապակիներս առին : «Հայտէ սակէրէ», ըսին ու գունդս դրիեցին գիւ :

Ո՛հ էիլ (Գէորդ) թարմ պատանի մըն էր, Արմատանի Թուրուս դեղէն : Հէմոյի դոյրերը փակեղեթով միշտ ուսը կը կրէր : Իրենց դեղին կէ՛սը Հայ, կէսը Թուրք է եղեր : Ինչպէս կը պատմէր, իրենց դեղը եւ տղաքը ճիշդ մեզի պէս են եղեր : Հայրը յեղափոխական : Թուրքերը զսոյն բռներ ու սպաններ էին սմենէն առաջ : Ան շատ խորունկ կը հառաչէր, վերջիչելով իր զլիւնն անցածները : — Մէվլու՛տը, Մէվլու՛տը, կ'ըսէր, եւ այդ անունը տուած ատեն միշտ ալ անզուտոյ կ'արատուէր :

Վաթսունամեայ այդ հրէշը քանի՛ հատ ութ տարեկան եւ անկէ փոքր աղջիկներ պղծեց, որոնք յետոյ մեռան արիւնահոսութենէ : Մէվլուտ իր ըրածները պարծանքով կը պատմէր զեղացիներուն :

«Երթա՛նք, կ'ըսէր, տղա՛ք, դարունը կը մօտենայ, օգերը կը տաքան : Չկենանք այս շուներուն քով : Ձէնքերը առնենք, մեր սարերը երթանք : Անկէ Տէրսիմ կ'անցնինք ու կ'աղատինք : Տղայ չմնաց լեռները : Բոլորը հեռացան Տէրսիմ : Բենկացիներ, Արմատացիներ ու մեր զեղացիները, ամէնքն ալ այժի մօրթերով անդին անցան :

Կ'ըսէր թէ Կարնոյ առման ժամանակ իր հօրեղբայրը այնտեղ կամաւոր է եղեր : Ան լսեր է իր տղջ ըլլալը ու Թուրուտցիի մը պատուիրեր : — Գնա՛, Գէորդին հո՛ւ գտար, որ չսպաննուի, մենք չենք ուշանար, կու դանք :

Ան ուրախ էր, որ իր վրէժը առնող մը կայ :

Իրիկուան հօվը մեր խարոյկներուն հետքերն իսկ սրբեց-տարաւ : Մթնշաղին դեղ մը իջանք, ուր կշտացուցին մեզ : Դարձանք նորէն Կիլիճէկի գոմերը : Քանի մը հօգի հացի համար զեղ պացին : — Մեր զլիւտն փորձանք եղաք, ըսեր էին զեղացիները : Գեմերէն Արպէ, Օրթազ ու Չիման անօթի զեղերը թափառեցանք նորէն :

Առտու մը, չեմ դիտեր ինչո՞ւ, Հէմօն Ձէնկէլլիի վերելքը բռնեց : Ժամեր ձիւներուն մէջ տապլակելէն ու չարչարուելէն դադարէր ելանք : Հեռուն ձիւնոտ ու սեւ տարածութիւններ, զեղեր, զեակեր ու անտառներ, ու դա՛րձեալ, ու դա՛րձեալ : Իջանք լեռան Տիվրիկի երեսը, դամերու մօտ : Քակեցինք դանսնք, խարոյկներ վառեցինք ու

տաքցանք: Իրիկուան Մէրէնտէ թուրք զեզն ուղղուեցանք: Գեղին շուրջը դէրք բռնեցինք վերի կողմէն ու քանի մը աղայ հոն զրկեցինք: Երբ իմացանք թէ գաղթիկներ չկան, իջանք հոն: Գեղապետը մեզ տուները ցրուեց: Տանախրուհիս հասուկ աղջիկը կ'ամչնար ու կը փախչէր ինձմէ:

— Եկո՛ւր ըտի, քո՛յր, միւսլիւման շէ՞նք բուրս:

Մայրը ըստւ.

— Տե՛ս, ինչ անուշ կը խօսի եղբայրը, եկուր:

Աղջիկը արեխներս հանեց ու շորցուց զուլպաներս: Արիւնի կապը, կրօնի կապը...: Երնէկ կու տայի անոնց: Կը ճաշէի ու կը խօսէինք, երբ այլայլած դրացուհի մը ներս մտաւ.

— Մատաղ ըլլամ քեզի, մէջերնիդ կեալո՞ւր ալ կայ:

— Էլ համտուլաս, ի՞նչ է որ:

— Կարմիր պէխերով ու մազերով մէկը կայ տունս: Ան անպաճառ կեալուր է:

Կարօն էր ան:

— Բնա՛ւ, քնա՛ւ, դնա՛ եւ ներում խնդրէ իրմէ: Հոս ամէնքս ալ ուղղափառ միւսլիւմաններ ենք:

Մոլեռանդուհին ուրախացած դուրս ելաւ:

Հազիւ հաւրուն մը եղած էի: Զոյներ առի: Սումբը կը մեկնէր: Շահեցի մաւզերս ու դուրս նեաուեցայ: Հասանք Զէնկէլիի մէջ գլգլուն ջուրով զեղեցիկ ձոր մը ու խարոյկներ վառեցինք: Երբ լուսցաւ, Գէորգին զեղին մօտակայ բլուրները քաշուեցանք: Լուիճը եւ ձիւնձագիկները(*) բուսեր էին հոն:

Գէորգ զիս խումբէն անջատ թուփի մը տակ տարաւ: Մատով ցոյց կու տար իրենց զեղը: Կը պատմէր գլխուն եկածները, իմինիս նման: Ու կու լար զիւրայոյզ: Կը ջանայի միխթարել զինքը հաղար անուշ եւ համոզիչ խօսքերով: «Ա՛խ, անդամ մը մեր վրէժը առնե՛նք», կ'ըսէր: Այդ խօսքին մէջ իր վառվռուն հոգիին թափը կը զնէր:

Գիշերը լեռներուն վրայ քուրտ զեղ մը դացինք: Լեռնային: Զմեռ: Յուրտ: Տանտէրս թրքատեաց էր ու կու լար անոնց զուլումներէն: Զարմացոյ, երբ ան ողբաց մեր զեղը:

— Այդ զեղը կը ճանչնայի՞ք, — հարցուցի:

— Տանս պէս:

— Ես այդ զեղէն եմ...

Լոյս իջաւ մարդուն վրայ, որ Տիապ տղան էր, ու ինձի ի՛նչ պատիւ տալը չզիտցաւ: Ու պատմեց թէ տարիներ առաջ մեր զեղէն երիտասարդ մը ձի մը կը գողցնէ: (**)

(*) Քրդու բաւպոս:

(**) Այս միև գողցողը ա՛յն Մատոն էր, որ Հէմօն եւ մեզ 150 մարդով հետապնդիլու հլած էր:

կու դայ : Ինք կ'օգնէ անոր եւ ձին կը դանէ : Այնուհետեւ իրենք ջիր-
վա կ'ըլլան : Ան ինծի բացատրեց գեղին մէջ, աղբիւրին քով, այդ
մարդուն սունն ալ : Աչքերս լեցուեցան ու լալ սկսայ : Այդ մարդը
իմ հայրս էր, որմէ լուր չունէի, զոր տեսնելու յոյս չունէի այլեւս,
բնա՛ւ, բնա՛ւ : Լալս հարցուց, իմացաւ :

— Ա՛խ, Թուրքերուն սունն աւրի, — կ'ըսէր, — ձե՛զ ալ, մե՛զ
ալ մոխիւրի նստեցուցին :

Ու պատմեց թէ իր երկու աղոցմէն մէկը գինուոր տարեր էին
կանխաւ, լուր չկար : Ու միւսն ալ յաջորդ օրը պիտի երթար յանձ-
նուէր :

Գիշերը կէս էր, երբ հեռացանք գեղէն : Մենք մեզ կատարները
գարկինք ու ձինսակոյտերուն մէջէն քալեցինք երկար : Իջանք ձորեր :
Անցանք յորդ ջուրերէ : Չառիվերներ ելանք ու քալեցինք անտառնե-
րէն : Խիտ ու ամալի անտառի մը մէջ խարոյկներ վառեցինք ու տաք-
ցանք : Երկու օր վերջ իմացանք թէ մասնուեր ենք ու պիտի պաշա-
րուինք հոն : Իրիկունը ձգեցինք անտառը ու քալեցինք մինչեւ լոյս :

Կ'երթայինք վաղն ի վազ, ջրագարներու նման, հալածուելով
ինչեր ու ինչերէ : Լեցուն հրացանները պատրաստ բռնած կը թա-
փէինք գետին, դիրքի, երբ ազմուկներ առնէինք : Թշնամի՞ թէ հո-
վեր՝ ուժգնօրէն ճչող մացառներու մէջ : Ու վազը անդադար, ան-
դադար . . .

Գետէ մը անցանք ու գեղի մը մօտ ձոր մը մտանք : Լուսցաւ :
Կ'անձրեւէր : Ցուրտ : Ու անօթի՞ մենք : Մթնեց : Ելանք մեր ձորակէն
ու գեղ մը մտանք : Գուռերը կը գոցէին մեր դէմ ու կը հայհոյէին .

— Ձեզ հետասնդող ջոկատը հի՛մա սակէ անցաւ : Գուր ի՞նչ
համարձակութեամբ հոս եկաք, — կ'ըսէին մեզի :

Հրացաններուն կոթերով դուռերը կը դրդեցնէինք, որպէսզի
բանան ու հայ տան մեզի : Հոն կշտացանք : Ու ճամբայ : Ու ճամբայ :
Ու ճամբայ : Ուրիչ՞ : Բարձր անտառներէ ու խոր ձորերէ : Անձրեւ,
ջուր, ցուրտ : Հողը թաց է : Կը սահինք : Կը կառչինք մացառներուն :
Չուրի մը ափը կը հասնինք : Հէմօն հրամայեց որ բոպիկնանք : Կը
թափինք ջուր : Ու ձորն ի վեր, ջուրին մէջէն : Պէտք էր կորսնցնել
մեր հեռքերը : Կը քալենք անընդհատ : «Հողի վրայ չկոխէ՛ք», կը
սասաէր Հէմօն : Վերը, ժայռերէն թուլցած հողի շերտեր ու ժայռի
բեկորներ ահապին ազմուկներով ձորերը կը թափէին : Չուրերը սառ :
Ձիւներն էին որ հալած, կու դային : Պաղը մեր սրտին զարկաւ : Կա-
պուտցանք :

Սկսանք դողալ եւ ակռաներն ու ծնօտները իրար դարնել : Մեր
ոտքերը բզբտուեցան սուր-սուր քարերէն : Հէմօն կ'երթար :

— Ո՞ւր կը տանի մեզ այս յի՛մարը, — կը մուտայինք :

— Եթէ կ'ուզէք վաղը բռնուիլ ու բզբտուիլ, ե՛տ մնացէք, —
կ'ըսէր ան :

«Եթէ կ'ուզէք» . . . :

Ու կը շտապէինք առաջ, իրար հրելով:

Ձորը բաժնուեցաւ երկուքի: Հագանք տրեխները եւ մեզ վրայի անտառը զարկինք: Մեր մէջ տոկուն ու քաջ չէր մնացեր: Բոլորը պիտի ուղէին այդ պահուն իսկ փչել իրենց շունչը: Կ'անցնէինք դոմէ մը: Կ'ուզէինք հոն խուժել:

— Ով որ կ'ուզէ սատկիլ, թող հոն երթայ, — կը ձայնէ Հէմօն: — Այդ դոմը լուսադէմին պիտի պաշարուի:

Կը մտնենք ուրիշ մեծ ձոր մը: Գարնան յորդահոսան ջուրերը կը մոնչեն ու դրդանք տալով ժայռերուն առջեւ կը մըրկին: Մութ են անոնք հիմակ եւ անհուն ձայնով սարերը լեցուցեր են: Քիչ մըն ալ տոկանք, կ'ըսէինք մենք մեզի: Ու կ'ուզէինք վազիլ, թռչիլ, հասնիլ որոշ տեղը, եթէ այս դնացքը տեղ ու նպատակ ունէր:

Գէորդին փորը կը ցաւէր: Միրտը կը խոցաւէր: «Ո՛ւյ, մայրիկ, մեռայ», կը պաղատէր ան: Ինքզինքը կը զարնէր գետին. — «Ա՛լ չեմ դար: Հո՛ս կը մեռնիմ: Ա՛լ չեմ կրնար»: Լալով ու աղաչելով կը հանէի զինքը ու կը հասցնէի խումբին:

Ոոր ու մութ ձոր մը հասանք, որուն բոլորտիքը ուղիղ բուսած երկար սարեր անկուեր էին: Անտառները՝ շղթայած բոլոր կողերը:

— Յրուեցէ՛ք թուրերուն մէջ, — հրաման տուաւ Հէմօն:

Փաթթուեցաւ իր ետնըն ու գետին ինկաւ: Կրա՞կ, ըսի: Բնաւ: Գէորդ կոնակի վրայ գետին փռուած կը ճչար. «Ո՛ւյ, մարիկ, մեռայ, ո՛ւյ, ո՛ւյ, մեռայ...»: Ե՛րէն Հէմօնի դացի: «Տղան կը մեռնի, կրակ մը...»: Հրամայեց որ վառեմ: Հէմօն Գէորդը շատ կը սիրէր, զաւկի նման: Ամենէն կրտսերն էր ան մեզմէ:

... Սարոյկը փրփրեցաւ ու լեզուն երկարեց գիշերն ի վեր: Գէորդ սկսաւ տաքնալ ու կեանքի դալ: Տղայ էր ան դեռ: Հիմակ ալ կը խնդար ու կ'ամ չնար:

Միւս ընկերներն ալ վառեցին խարոյկներ: Տաքցանք-չտաքցանք, լոյսը ծայրը տուաւ: Յրուեցանք սարերուն դազաթները ու մնացինք մինչեւ իրիկուն:

Գիշերը կրկին ձոր իջանք:

— Աս կեանք չէ: Ասկէ ազատում չկայ: Տէրսիմ երթալու ենք, — ըսաւ Հէմօն: — Փոխանակ ամէն գիշեր տանջուելու, մէ՛կ անգամ կը տանջուելիք ու հո՛ն կ'անցնինք, կ'ազատինք: Հո՛ն կը կենանք մինչեւ ձիւները հալին, ու դարնան նո՛րէն այս կողմը կու դանք: Այս Հայերն ալ կը տանինք Երզնկա եւ իրենց ազգակիցներուն կը յանձնենք:

Մեր աչքերը լոյս իջան ու սկսանք համոզել զինքը: Հէմօնի աներձազը, Ալիշէր, դէմ էր այդ դազափարին: Արդէն Ալիշէր թոյլ ու փտած մարդ մըն էր եւ միակ արժանիքը աղուոր քոյր մը ունենալն էր, որ կրցեր էր Հէմօնին միանալ:

Գլխէր լեզուադարութիւն: Շատ ուտել ու ծխել: Պարծենալ չարունահ չունեցած արժէքներովը:

— Եփրատի հուներէն անցներու անկարելիութիւնը մէկ կողմ, ան հիմակ յորդած է արդէն ու մեզ կը քշէ—կը տանի: Անդին տակաւին երեք ժամ ունինք քալելու, մինչեւ որ փրկուինք թուրք պահականոցներէն եւ բանակին ցանցերէն (թուրք ընդհանուր բանակատեղին հող էր այդ տուն, Անի ամրոցէն ասդին, (Քէմախ), քանի որ Ռուսերը հոն հասած ու կեցած էին): Անկէ անդին ալ 19 ժամ անդադար Տէրսիմի ձիւնոտ լեռներէն պէտք է քալենք առանց հիւղակ մը տեսնելու, մինչեւ հասնինք Տէրսիմի մէկ դեղը: Դեռ անկէ անդին ալ վեց ժամ պէտք է բուն Տէրսիմ հասնելու համար: Երեք դիւշեր ալ պէտք է ասկէ Գուրուշայ երթալու: Դուք չէք գիտեր այս ամէնը, երթանք կ'ըսէք: Այս դիւշերուան պզտիկ մէկ յոյճութենէն, բոլորիդ լեզուները կէս—կէս արշին բերաններէդ դուրս կախուեցան: Այդ ճամբա՞ն ինչ պիտի ընէք: Ձեզմէ մէկը Տէրսիմ չի հասնիր: Դուք բոլո՞րդ սարերը կը մնաք:

— Քանի մը անգամ ուրիշներ տարաւ՝ ջուրին տուաւ ու լեռները թողուց, հիմակ ալ մեզ տանիլ կ'ուզէ: Ձեք երթար, — կ'ըսէին քովի Քուրտերը:

Հէմոյի տրամադրութիւնները փախան:

— Մեզքը ձեր վիզը: Վերջէն հոս մնաք, թուրքերը ձեզ բռնեն, դիս ճեղադրէք, — ըսաւ ու մեզ ճամբայ հանեց:

Լուսնկայ լոյս էր: Հոյերը անուշ, ձորերը անուշ, ջուրերը անուշ: Կը խօսէինք: Կը խնդայինք: Կ'երգէինք: Ես կանչեցի հոն «Կուսնիկ»ը, սրտիս թեկերը փրցնելու չափ յուզումով: Մտանք դո՞մ մը: Ու մեր ընկերը, մէկէն,

Տէրսիմ պիտ սաղ իչիմտէ,
Կիւլի վար պաղ իչիմտէ.
Ալլահ սախլա Տերսիմի,
Պիտ եարբ վար իչիմտէ:

Հովիւները իրենց քունէն ելան ու կրակ վառեցին: Երնէկ կուտայինք անոնց, որ հանդարտ կը քնանային խնճիկին մէջ: (*) Անոնք դեղ դացին ու մեղի հաց բերին: Չլուսցած դոմին վրայի սարերը ելանք:

Արեւ ցաթեց: Հողը չոր էր: Ուրախ էինք: Հոն Հէմոյի վրայ ներքող մը դրեցի՝ անոր փափաքին համաձայն: Բոլորը հաւանեցան ու գովեցին:

— Մազէրը ծանր է քեզի, վարժապետ, դուն փափուկ մարդ ես, — ըսաւ Հէմոն: — Երբ մեր հանգիստը դտնենք զոյգ մը լաւ զգեստ

(*) Գոմին մէջ հովիւիմ յատուկ մասը:

ճարեմ քեզի ու ստորճանակ մըն ալ՝ որ մէջքէդ կախես : Հերիք է ան քեզի, իբրեւ քարտուղար :

— Ուր որ երթայինք, անոնք կը դովէին զիս իբրեւ 12 լեզու գիտցող Հայր : Համբարը մնաց հոն, մինչ ես հեռացայ . . .

Իրիկուան Ձէնկէլլիի միւս մէկ երեսը Քոխպնիկ քուրտ գեղը գացինք : Հէմոյին ծանօթ էին անոնք : Ուրախութեամբ մեզ ներս առին : Ալլօշին հետ Մուզուր անուն Քուրտին տունը հիւր եղայ : Իրիկուան Մուզուր իր նորածին դառները կը ծծցնէր : Մայրենով լեցաւ տունը : Կինը կաթ կը կթէր ու լածերը կ'օգնէին անոր : Կարօտով անոնց նայեցայ ու աչքերս լեցուեցան : Տուն չունէինք, չունէինք տեղ եւ դադար ալ չմնաց :

Մուզուրէն խնդրեցինք որ մեզի վազուան պաշար ալ տայ : Կծծի կինը գոկամակութեամբ քանի մը հաց բերաւ : Գիչերը ելայ դադարի տունին մէջ պտըտեցայ եւ կարգ մը իրեղէններ հաւաքեցի, — թել, իւղ, եւ այլն : Լուսադէմին գանոնք միասին սուր ու մեկնեցանք անկէ : Թող Մուզուրին կինը կծծիութիւնը դիտնայ . . . :

Այդ օրն ալ Ձէնկէլլի գեղը հիւր եղանք : Խոշոր գիեր ու ահագին գազեր կային հոն : Իջանք լեռնադաշտերը : Տաք էր : Խոտերը կանանչ : Ծորենիները ծաղկած : Բամպոսները սիրուն-սիրուն բուսած : Անցանք Սաղրտաչ թուրք դեղի մօտերէն : Իջանք մեծ ձոր մը : Անկէ յորդած, սեւ, պղտոր, լայն ու աղմկալի դեռ մը կ'երթար :

Մէջուտէն եւ Պէյ Տաղիէն եկող ջուրերն էին անոնք, որ Եփրատ կը վազէին : Մութ էր : Ջուրերը կը Փշային ու կ'սոնային : Իմաց կ'ուզէինք անցնիլ : Ո՞վ կը համարձակէր չափուել անոր հետ :

— Իսն կ'ըսէիր թէ Եփրատ քեզի համար բան մը չէ : Տեսնենք քաջութիւնդ : Աս Եփրատի մէկ կաթիլը չէ գետ, — ըսաւ Հէմօն Ալլօշին :

Խեղճ Ալլօշը ակամայ հանուեցաւ ու մէջը մտաւ : Քիչ կը մնար որ ջուրերը տանէին գինքը : Իմաց անցաւ ու ետ եկաւ նորէն պարծենալով : Շարակով անցուց Հէմօն ու Պէկօն : Հանուեցանք, շալկեցինք զբեռները եւ գէնքերը վեր բռնեցինք : Ձեռք-ձեռքի տունք՝ անցանք գոտարաւ : Քիչ մնաց ջուրը մեզ քշէր :

Գացինք Քոխպնիկի գոմերը, ուր գեղ կար բաւական տնուոր : Կշտացանք ու ժայռերը քաշուեցանք : Հոն քոս էր :⁽¹⁾ Վառեցինք խորոյկները : Սկսանք առատ բամպոսները ժողկել եւ ուտել : Մտոզուն թուրք գեղը մեզմէ գատուած էր լեռով մը միայն : Այդ լեռը ծածկուած էր հոշկիներով :⁽²⁾

Կէսօրէ վերջ Հէմօ ձորի մը մէջ մենաւոր տուն մը դնաց եւ խումբն ալ հոն կանչել տուաւ : Հոն մեզի հաց պատրաստել տուած էր : Տանտէրը ունէր երկու կին եւ դուստիներու շարք մը ամէն հա-

(1) Քոս = կապոյտ քարով տեղ :

(2) Կաղթիի ընտիր տեսակ մը :

սակէ :⁽¹⁾ Ան թարմ երեսով, հեղահամբոյր ու ժպտուն այր մըն էր : Կը նշմարէի որ այդ ժպտող աւելի կը պայծառանար, երբ անոր ակնարկը հանդիպէր իմինիս : Կը թուէր թէ ան կ'ուզէր ինծի բան մը հասկցնել : Իրիկուն եղաւ : Խումբը մեկնելու կը պատրաստուէր : Այդ մարդը դուրս կանչեց զիս ու Կարօն եւ երկար-բարակ մեր վիճակէն հարցուց :

— Անունս Գարաման է, — ըսաւ :

— Գարաման... դուն մեր գեղէն Արզենց Քիրվա՞ն ես, — ըսի :

— Այո, — պատասխանեց ան :

— Քու քրովաներէդ քովդ ո՞վ պահեր ես, — հարցուցի :

Գարաման կարմրեցաւ :

— Խաչոն եկաւ, — ըսաւ, — յետոյ լսեցի որ զինքը վարկեր են Ախտախ : Գանիէլը եկաւ, ա՛ն ալ վարկեր էին իրենց գոմին մօտերը :

— Գարաման, — ըսի իրեն, — քովդ Հայ չունի՞ր :

— Այո, ոչ, կմկմաց ան ու յայտնի էր թէ ունէր : Անունները չըսաւ՝ հակառակ Կարոյին պնդումներուն : Ու երբ իրմէն կը բաժնուէինք, հին ծանօթի պէս ողջագուրեց մեզ եւ ըսաւ :

— Իմ տղաքս փոքր են դեռ : Անոնք լեռը կը մնան ու ինձմէ կու դան հաց կ'առնեն—կ'երթան միայն : Ամա՛ն, կ'աղաչեմ, երբ լեռը անոնց հանդիպիք՝ զնդակ շարձակէք, մեզք են, կը վախնան :

Երբ այս խօսքերը աւարտեց, տեսայ որ Գարաման անհուն գորով ունի այդ տղոց հանդէպ : Կարօն կ'ըսէր թէ անոնք մեր գեղին Չաղացական Չաթալին կտրիճ տղաքը ըլլալու էին, Արմէնը եւ Հայկը : Արմէնը Գուլաքսրգներու քով էր ու նամակս առնելուն պէս փախեր էր անկէ : Իսկ Հայկը զինուոր էր ու զինուորութենէ փախած : Անոնք բարձրահասակ, կտրիճ կորիւններ էին, ոչ թէ մանուկ : Առատ դրամ ունէին, ու Գարաման կ'օգտուէր անոնցմէ, թէեւ պարկեշտօրէն :

Արմէնը այնպէս : Իսկ եղբայրը, Հայկը, ամէլիյէ քապուրիի մէջ, Տիվրիկի հարաւը գանուող հայ գեղի մը արտերը կը քաղէ եղեր : Օր մը իր թուրք ընկերը կ'ըսէ իրեն :

— Այս գիշեր քեզ պիտի վարնեն : Նայէ որ փախչիս :

Կը փախչի ու կը հասնի Գարամանին քով ու հոն կը գտնէ իր եղբայրը՝ Արմենակը :

Գարձեալ ճամբայ, դա՛րձեալ... : Այդ ճամբաները վերջ չունեցան, ոչ ալ մեր համբերութիւնը : Իջանք նոյն հեղեղը : Հիմակ լոյսով ան աւելի հոյակապ կ'երեւէր մեզի՝ քան գիշեր ատեն : Գիմացը Վէնք թուրք գեղը հանդիպեցանք : Անկէ անդադար, մէկ շունչով Մէրէտէ, ու անկէ ալ Չէնկէլի :

Չէնկէլին կախարդած էր Հէմօն : Ան առանցքն էր Հէմօյի շար-

(1) Գարաման 12 գաւաի ունէր :

Ժուճներուն: Ո՛ւր ալ որ երթար, անդամ մը կը դառնար հոն, կարծես անոր մեծութենէն ներշնչուելու: (*)

Ժայտերուն մէջ իրիկուն: Ագարակ գեղին բարձունքը իջանք: Անկէ հովեր կ'անցնէին ու մենք կը մսէինք անօթի ու տառապած: Գեղեցիկ ու առատ ջուր մը անկէ վար կ'իջնէր: Մենք կը փորէինք խոտի արմատներ, կը լուսայինք ջուրին մէջ ու կ'ուտէինք: Անուշցած էր Հէմօն: Կը սիրէր խօսիլ ու խնդալ: Հարցուցի իրեն անիշխանահան ըլլալու պատճառները: Ան պատմեց.

— Հինգ տարի առաջ արտի մը քումրին վրայ վիճեցանք հորեղորս տղոցը հետ: Զիս բարկացուցին: Մալգբա քաղեցի, մէկը գարկի: Գնդակը ֆիշոյ կուրծքէն մտաւ ու կռնակէն ելաւ: «Վա՛յ, մայրի՛կ» պռագ, ինկաւ: Ես փախայ: Գեղին դիմացի անտառներէն կ'ելլէի: Միւս եղբայրը ետեւէս կը վազէր: Ես կը փախչէի, ան կը հալածէր զիս: Բարկացայ: Լօ', մի՛ գար, քեզ կը զարնեմ, ըսի: Վախցաւ, ետ դարձաւ: Փախայ: Ետ նայեցայ որ նորէն կու գայ: Լօ', մի՛ գար, քեզի կ'ըսեմ կը զարնեմ, ըսի: Մտիկ չըբաւ: Կը վախնար եւ ետ կը դառնար՝ երբ սպառնայի: Յետոյ նորէն յամառօրէն կը հալածէր զիս: Այն ատեն կեցիք բու ալ փափաք տամ, ըսի: Ետեւ դարձայ, գնդակ մըն ալ անոր կուրծքին գարկի: Ան ալ վա՛յ, ըսաւ, ինկաւ: Զանոնք քաղեր էին ու զիս կը փնտռէին: Քանի մը ամիս պահուեցայ ու բնաւ երեսն չելայ: Յետոյ ընկերներ նարեցի, ձի ու զենք, ու սկսայ բացէն պարտիլ: Կառավարութիւնը գործ հանեց ետեւէս, օգուտ չըբաւ: Առջի տարի, աշնան, ես ալ, խաբուելով Հանի Պէկրաշէն, Սվազ գացի ու զենքերովս յանձնուեցայ: Զիս բռնեցին ու իբր մարդասպան բանուր դրին: Լօ', ըսի, կեցէք որ ձեզի ցոյց տամ: Ինքզինքս հիւանդ ձեւացուցի ու հիւանդանոց փոխադրուեցայ: Գիշեր մը տեսայ որ շուրջս մարդ չկայ: Շապիկով ու վարտիկով փողոց ցատկեցի հիւանդանոցին բարձր մէկ պատուհանէն ու փախայ: Երեք գիշեր վերջ տուն հասայ: Առի նոր զենքեր ու կրկիթ լեռ ելայ: Ես անկէ առաջ ալ քանի անգամ մարդ զարկած, բռնուած, փախած, Տերսիմ գացած ու վերջապէս ներուած եմ: Մնաց աս անգամը...»:

Երբեմն ե՛ս ալ կը պատմէի իրեն իմ դպրոցի կեանքէս ու կը տխրէի: Այն ատեն Հէմօն կ'ըսէր.

— Քրտա՛նն, երբ դուն դպրոցական էիր ու ծնողքիդ բով, ես ալ գեղապետ ու Հէմօ աղա էի: Ամէն անգամ որ ներսակ ձիս ջուրք քաղէի՝ զիս մատով ցոյց կու տային: Ա՛յ իմ ներսակ ձիս, ի՞նչ քալուածք ունէր ան: Զիս տեսնողները բարեւի կը կենային քամբուս վրայ ու երանի կու տային ինձի՝ որ այդպէս փառքով կ'ապրիմ:

Յետոյ կ'աւելցնէր.

(*) Թուրք բարտէսի մը համաձայն՝ Զէնկէլլի 2600 մեթր բարձրութիւն ունի:

— Մաղթե՛նք, ֆրմա՛նք, որ դուք աղջամբ տունդ դառնաս,
ես ալ հասնիմ ներմակ ձիուս :

Իջանք ազարակ : Հոն աղքատ ֆրուուհիի մը տունը հիւր եղայ :
Հարցուց թէ ո՞ր տեղացի եմ : Ըսի Մէջուտցի, Թէմիրբին աղան :

— Անո՞ւնդ :

— Ճանօ :

Ան զիս դրկեց ու համբուրեց :

— Քեռի՛ն տղան, — ըսաւ, — ասանկ ո՞ւր : Այս քեզի մեղք
չէ՞ որ ասոր հետ կ'երթաս ու կը շարձարուիս :

Չգետններս հանել տուաւ ու մաքրեց : Գառնուկ մը մորթեց
ու ինծի պաշար դրաւ : Ան զիս իրօք Թէմիրբին աղան նկատեց :

— Ճանօ, կը յիշե՞ս, — կ'ըսէր, — 15 տարի առաջ Մէջուա ե-
կայ ու քեզի հետ կ'ըսուած ոչխարները փնտռելու գացինք . . .

Գիշերը Ալարաիկէն ելանք ու լեռ կ'երթայինք, Հէմօն նկա-
տեց որ Գէորդը կը պահի մեր մէջէն : Սուլեցինք, կանչեցինք, ձայն
տուող չեղաւ : Գեղ դարձանք, փնտռեցինք, մէջտեղ չկար ան : Հէ-
մոյին փակեղէթն ալ առեր փախեր էր : Ան յաճախ կը խօսէր մեզի
փախուստի մասին, բայց մենք զինքը կը յորդորէինք, սրպէսզի սպա-
սէ, մինչեւ որ ասենը գայ : Քուրտերը լարուեցան մեզի դէմ : Հէ-
մօն յուսախար եղաւ մեզմով :

— Լօ, — կ'ըսէր, — ասոնցմէ կը վախցուի : Ասոնք օր մը կ'ուռի
մէջ իմ կռնակէս կը դարնեն :

Գիշերը իջանք Օրթաք ու անոր ետեւի դռները գացինք : Հոն
գեղացիները, Քուրտ, իրենց ամօթոյքը ծածկելու չափ զգեստ չու-
նէին, ա'լ ի՞նչպէս ունենային դոյք, անկողին կամ սնունդ : Անկիւն
մը պարկով վրի դրեր էին՝ իբր վարնան սերմնոս : Եւ խաբելու հա-
մար իրենք-զիրենք, մերթ կ'ազնծեն եւ կ'ուտեն եղեր անկէ : Առատ
կրակը կը վառէին օճախին մէջ ու անոր դէմ նստած կը մտմտային :
Հոն անտառներուն մէջ փոքրիկ խրճիթ մը քաշուեցանք մենք : Կ'անձ-
րեւէր անդադար :

Կ'անձրեւէր անտառին մէջ : Խրճիթը կը կաթկթէր ու ջուրերուն
մէջ էր : Հոգ Հէմօն բոլոր Հայերուս ճամբայ տուաւ : Կարոյէն ու
ինձմէ դատ մնացածները կու լային, որովհետեւ երթալիք տեղ չու-
նէին : Ալլօշը, Հասան չափուչն ու Մարտիրոսը թուրք ընկերոջ մը
հետ Գանդալ գացին : Հէմօն Մանասէն ու Գէորդը նորէն քովը պա-
հեց : Կարօն եւ ես ամենէն առաջ գէնքերը յանձնեցինք, համբուրուե-
ցանք ու բաժնուեցանք բոլորէն : Չէնկէլի բարձրացանք : Քանի մը
գիշերուան տաժանքէ վերջ, հասանք Քուշիլի աշիրէթը :

ԴԱՐՁԵԱԼ ՀՈՎԻՒ ՊԷՅ ՏԱՂԻՒ ՎՐԱՅ

Առտուն կանուխ Մէնոյին դացի: Գոմին շուրջ նոր այժերը արձակեր էր ու կ'արածէր ան: Երբ դիւ տեսաւ՝ ուրախութենէն կը խնդար, կը խնդար: Որովհետեւ մինակ էր մնացեր: Համբուրուեցանք: Ան լսեց Կարոյին դարձն ալ: Ես պատմեցի իմ քաշածներս Հէմոյին հետ: Ան բացատրեց ինծի աշխրէթին ու Մէջուսոյիներու վիճակը:

— Հէջ մէկին տունն ալ հաց չկայ, պիթուսն անօթի կու ստահին:

Ինծի կաթ կթեց ու կտոր մը բազարջ հրամցուց:

Անկէ յետոյ կամաց—կամաց Թէմիրին տունը իջայ: Ակութը կը ծխար, բայց շուրջը լուսթիւն էր: Թայեր հաջեց ու վրաս վազեց: Զայնէս ճանչցաւ դիւ: Սկսաւ հստոտել ու սուչը երեքցնել, մինչ ես անոր ճակատը կը շոյէի: Ներս մտայ: Թէմիր մինակը տունն էր:

— Լօ՛, — բացազանչեց ան ուրախութեան ճիչով մը, — Լօ դուն ո՞ւր մնացիր, եկ'ուր տեսնեմ: Ատանկ բան կ'ըլլա՞յ. լուր չտուած կ'երթա՞ն: Գոնէ սաքերուդ զոյգ մը տրեխ տայի: Հէմոյին ալ պատուիրեցի որ աս իմ ազատ է, հո'գ տար հա՛, վերջէն քեզմէ կ'ուզեմ:

Ես համբուրեցի իր ձեռքը, ինք ալ երեսներս: Ան պզտիկ սառ մը դրած էր կրակին վրայ, սրուն վրայ կը թափէր ջրոտ, թոյլ խմորը: Երբ խմորը եփելով քիչ մը կը թանձրանար, Ար Թէմիր կը դարձնէր զայն աղիչով ու այսպէս խնայողական հաց մը կ'եփէր:

Այդ հացին անունն կու տար «Յանէ արկէ» (ջրահաց): Հրամցուց ինծի անկէ: Տեսայ որ անոր կարողութիւնը հատեր է: Ան ալ անօթի է այլեւս: Տիրութիւնը ճնշեց վրաս:

— Ո՞ւր են, Տաթիման խաթունը, պզտիկները, — հարցուցի:

— Անոնք հիմակ Մէղիբէ են, տունը վեր փոխադրեցի, — ըսաւ: — Կեցիր քանի մը օր քոյս, հանդէ: Յետոյ քեզ ալ կը տանիմ հոն, կ'երթաս նորէն հօտ կ'արածես:

Ապրիլի սկիզբը ըլլալու էր, երբ հովիւ եղայ նորէն: Գլխուս պաղ ջուր մը լեցուցին, այնքան դէշիս դնաց ան: Լեռներու վայրի երազը, հրացանի ծուխով ու կողոպուտով, այնքան տիրեր էր մտքիս, որ անկէ զուրս չէի ուզեր հաշտուիլ ուրիշ ամէն վիճակի հետ: Հրացան մը կոնակիս, ու ես մինակ, ո՛ւր որ ալ ըլլամ, իմ փափաքս ա՛յդ էր: Ինծի կը թուէր թէ այն ատեն ես լեռներուն իշխանը պիտի ըլլայի: Հիմակ ա՛լ վախ չկար մէջս: Վարժուեր էի անոր: Մահէն չէի վախնար այլեւս, կ'արհամարհէի զայն: Ծանօթներս բոլորն ալ կ'ընէին թէ ճարպիկցեր ու փոխուեր եմ: Քրտական ատածը իւրացուցեր էի. «Մըրըն մըրըն է, թամըն լի չի՞ է»: (*)

(*) Մեռնիլը մեռնիլ է, աղաչա՞նքն ինչ է անոր:

Աշխրեթը փոխուեր էր : Սով, գողութիւն ու անիշխանութիւն, խաղաղ կեանքի հետք չէին թողուցեր հոն : Տուներէն հարիւրին հինգը հաց չէր գտնուեր : Ամենուն կեանքը իրենց անասուններուն ծրծերէն կախուած էր : Կաթ, մաժուն, թան եւ իւզ էր անոնց սնունդը : Իսկ չունեւորները մինչեւ իրիկուն դաշտերը կը շրջէին՝ բանջարեղէններ հաւաքելու : Կը խաչէին այդ խոտերը, կը քամէին ու վրան ալ ցանելով կ'ուտէին : Թանի հետ կը խոտնէին ու կ'ըլլար թանապուր : Կաթի հետ կը խոտնէին ու կ'ըլլար կաթնապուր : Սովը միշտ կը սաստկանար : Որովհետեւ տաք օդ չէր ըներ այդ լեռան վրայ, որպէսզի խոտերը աճին ու մարդիկ անոնցմով սնանին : Անասուններն ալ լաւ չէին արածեր, որպէսզի առատ կաթ տային :

Անիշխանութիւնը հմայեր էր բարքով աւազակ այդ լեռնականները : Զեռքը ծակ երկաթ մը անցընողը լեռ կ'ելլէր ու կը դառնար՝ դրացի գեղերէն գողօն մը հետը բերած : Զիս, իբր Հէմոյի աշկերտ, «վարպետ չէթէ» կ'անուանէին : Կը հրաւիրէին որ մասնակցիմ բոլորին գողութիւններուն : Ես կը մնայի չէզոք : Կը պարսաւէի գողութիւնը ունեւորներուն առջեւ. կը գովէի դայն գողերուն մօտ : Նախորդ տարիներու չէթէները գերաւիչիւ եղած էին նորերուն վրայ : Մինչ նորերը կը կողոպտէին միայն, հիները, աւելի յանդուգն, կը սպաննէին ալ : Հոն կառավարական աչք չկար : 90 քիլոմեթր տարածութեան վրայ, Տիվրիկէն Զարա, մնայուն ստիկան չկար բնաւ : Դիմագրաւելու համար այս վիճակին, ցրուած գեղերը եւ տուները մէկտեղ կը համախմբուէին պաշտպանութեան համար : Իրենց տեղերը կը մնային մի'այն վկայուած ու հանրաձանօթ դարձած աւազակները : Դերերը շրջուած էին : Պատիւը գողին, ոյժ ու գէնք ունեցողին էր, ո՛չ՝ հարուստին : Ու Քուրտերը կ'ըսէին .

Սուտակ հէսպէ լը ֆէրէ սօսպուն,
Սուարէ ֆէրէ լը հէսպէ սօսպուն :

Թարգմանութիւն .—

Ձիաւորները էշերը հեծան,
էշ հեծնողները ձիաւոր դարձան :

Շրջակայ գեղերէն ու տուներէն շատերը համախմբուեցան Մէզիրէ, որ Պէյ Տաղիի տակ, ձորի մը անկիւնն էր : Անտիկ ու արօտներուն մօտ : Անոնց անասունները անցեալ տարուան օգաններուն պէս իրար խանոնուած, խոշոր խումբերով կ'արածէին : Ցուրտ էր լեռը : Անձրեւը անպակաս : Մշուշը կ'իջնէր մինչեւ գեղ : Ես մերկ : Անօթի : Ուժասպառ : Այնքան որ կուրծքէս շո՛ւնչ մը կ'ելլէր միայն : Ու եօթը տունի անասուններուն ետեւէն կը վաղէի մինչեւ իրիկուն ցից լեռնի վեր : Մերթ ցուրտէն փախած՝ ժայռերուն տակ կը մտնէի, ու կուլայի եւ օրս կ'անիծէի :

Մովէն ու թշուառութենէն, մեր տղոցմէն մին, Արդենց Գառնիկը, մեռաւ: Հէմոյին քովէն դարձիս անգամ մը տեսայ զինքը: Անօթութենէն ոսկորներն էին մնացեր: Թին ձեռքը, արեւին տակ, արտին մէջի աղբերը կը ցրուէր:

— Ինձի հաց չեն տար, վրաս ուժ ու կարողութիւն չմնաց, — կ'ըսէր:

Յուսահատած էր կեանքէն:

Հերու՝ աշուն էր: Մեր լեռներէն գէշ լուրեր եկած էին: Մեր տղոց մնացորդներն ալ բռնուէր ու սպանուէր էին: Գառնիկ այդ բօթերէն ա' յնքան ազդուած էր:

— Մենք գաթի ըս տէրտէն ազատելիք չունինք, — կ'ըսէր: — Ո՞վ զիտէ մենք ալ ե՞րբ պիտի դարնուինք: Ապրինք որ ի՞նչ օգուտ: Մենէ զատ ուրիշ մարդ չմնայէն ետքը: Մեռնինք ըսկից ազէկ է:

Գառնիկի կինը ողջ էր: Ան տանն մը եկաւ ու ամուսնին քով մնաց: Տղայ մը ունեցան: Քիրվաները կինը չպահեցին: Ան դրկեց աղան ու նորէն Թուրքերուն մէջ գնաց:

Ախտուի մէջ, ծորենիներու եւ կաղնիներու քով, Ալթօղլընե—րու հողվորտիքին ձերմակ քարերը կան: Անոր մէկ անկիւնը Գառնիկը թաղեր էին: Գացի հոն: Ծոռեցայ վրան ու լացի: Սալ քարի մը վրայ դրեցի ուրիշ քարի մը ծայրով:

Գառնիկ Արգեան + 1917:

Դրի գայն հողաթուժբին վրայ ու սարսուռով հեռացայ անկէ:

Մխիթարութենէ ու ընկերէ զուրկ, Պէյ Տաղիի վրայ օրը իրիկուն կ'ընէի թշուառօրէն: Մթներ էր աշխարհը ու ես մէջը մնացեր էի: Կատարներէն կը զիտէի հեռուն, հեռուն, Պոլսոյ կողմը գլորող ու կորսուող արեւը, եւ յուզումը, արցունքն ու կսկիծը կը խռովէին զիս:

Անգամ մըն ալ պիտի տեսնէի՞ ծնողքս եւ քոյր-եղբայրներս: Կարօտը հալած երկաթի պէս սիրտս կը վազէր ու կը վառէր գայն: Կ'ազերսէի հովերուն, կ'ազերսէի երկինքի թռչուններուն, որ լուր մը տանին եւ բարեւ մը բերեն անոնցմէ: Սա լեռներուն սօր անկիւնը պիտի մնայ իմ անթաղ դիակս, կը մտածէի: Իմիներս լուր պիտի չունենան բնաւ, բնա՛ւ, քաշած կեանքէս ու մահէս: Ու հեռուն, Մտամպուլի կողմը կործող ու մարմրող արեւին պէս, կը մարմրէի լեռներուն վրայ ու կը հատնէի ես ալ...:

Կ'ուղէի հեռանալ լեռնէն ու նախիրէն եւ տանելի կեանք մը գտնել ինձի: Պէյ Տաղիի Չարա գացող կողմը, վարը, ձորին մէջ, Գըզլը Գալէ գեղէն, քուրա Մահմուտ պէյի պալատը կար: Անոր կղմինարէ կարմիր տանիքը զիս իրեն կը քաշէր: Քանի անգամ ձգեցի անասուններն ու ճամբայ ինկայ հոն, նո՛րէն ես դարձայ:

Մնունդ չէի տունիւր այլեւս. կը կերցնէին ինձի խաշած խոտը թանով ու աղով: Կը իմէի սուտ լերան ջուրերը ու այծերուն հետ

ես ալ կ'արածէի: Կը ժողովէի մաթութ (բանջարեղէն մը) եւ վայրի
ոտեպղին լերան մարգերէն ու կ'ուտէի զանոնք: Մարած աչքերով
կը տատանէի կեանքին մէջ ու կը սպասէի հանգարտ անոր վախճա-
նին:

Իրիկուն մը յողնած ու թրջուած, ահուժին քով վրաս կը չոր-
ցնէի: Եկան զիս Թէմիրին եղբոր Կէնճոյին տունը կանչեցին: Կէն-
ճոյին դիմաց ճերմակ փաթթոցաւոր մը նստեր էր:

— Դուն այս մարդը կը ճանչնա՞ս, — հարցուց ինծի Կէնճոն:

— Չէ, — ըսի:

— Ան թուրք է, — ըսաւ:

— Է, ի՞նչ կայ որ:

— Քեզ պիտի առնէ տանի:

— Թող տանի, — ըսի, — ես ալ մեռնելու ճամբայ մը կը

փնտռեմ: Աւելի աղէկ:

— Ո՞ր տեղացի ես, — հարցուց ինծի անճանօթը:

— Քեզի՞ ինչ:

Կէնճոն միջամտեց.

— Աս փաթթոցաւորը Հայ է, — ըսաւ: Հետը հայերէն խօսէ:

— Ես հայերէն չեմ զիտեր որ խօսիմ, — ըսի:

— Իրա՛ւ կ'ըսեմ, Հայ է:

Անճանօթը սկսաւ ի՛նք հայերէն խօսիլ հետս:

— Ես Հայ եմ, — ըսաւ, — մի՛ վախնար: Եւ հարցուց, թէ
ո՞ր տեղացի եմ:

— Նախ դուն ըսէ քու ի՞նչ ըլլալը:

Ան յայանեց թէ Կասմնցի է: (*)

— Ես ալ Խուսնապիլիցի եմ, — ըսի:

— Խուսնապիլիէն Դաւիթ պատուելին կը ճանչնա՞ս:

— Հօրեղբայրս էր, — ըսի:

Անճանօթը երբ լսեց Դաւիթ պատուելիին եղբորը տղան ըլլալս,
չստ համակրեցաւ ինծի եւ սկսաւ փութփութ զարմանքով վարուել հետս:
Դարձաւ Կէնճոյին եւ ըսաւ.

— Աս տղան մեծ ընտանիքէ է ու հարուստի զաւակ է: Անոր
արդի վիճակին մի՛ նայիք դուք եւ հո՛ւ պ տարէք իրեն:

— Գիտեմ, — ըսաւ Կէնճոն: — Հայրը Պոլիս է ու ինք 12 լեզու
գիտէ: Հէմոյին քարաուղարն էր:

Այդ Հայը, Տիվրիկի Կասմնա ղեղէն Մարտիրոս Կոուտեան,
սկսաւ սիրաւ բանալ ինծի: Ու փոխադարձաբար պատմեցինք մեր
վիճակը: Ան բարձրահասակ, ղեղեցիկ, ղեղին մօրուքով երիտասարդ
մըն էր, 30 տարեկան ու քիչ մըն ալ աւելի: Ուշիմ ու աշխոյժ էր:
Կը խօսէր մաքուր թուրքերէն, թուրքի շեշտերով: Լաւ հաղուած էր:

(*) Գարբիլ Էֆենտի Նարառուկեանի գերպատանը Կասմնա գեղէն է:

Անոնց գեղին կէսը Թուրք, կէսը Հայ էր: Ան այսպէ՛ս պատմեց իր թաշածները.

— Կաամնայէն տասն ընկերներ լեռ բարձրացանք տարագրութեան մախօրեակին: Ամիս մը լեռը մնալէ վերջ, Արմտանի քարը գացինք ու գտանք անոնց տղաքը: Շրջակայ թուրք գեղերէն գողութիւններով կ'ապրէինք: Որովհետեւ խումբը շատուոր էր, բաժնուեցանք իրարմէ: Բազմաթեամբ պահուիլը դժուար կ'ըլլայ: Կ'ապրէինք Ախտախի փեշերուն վրայ: Հոն, էֆէնտի մեծ ձորին մէջ պաշարուեցանք խուժանէն, *ղափթիէ*ներէն, 1916ի գարնան: Մի'այն ես գիմուած էի: Ինքզինքս պաշտպանեցի ու ազատեցայ, երեք տեղէ վերաւոր: Կորսնցուցի ընկերներս: Մինչեւ աշուն միմակս քափառեցայ: Ձմեռը գացի գեղ: Հայկական դպրոցին կտուրի կզմիներուն տակ քնակութիւն հաստատեցի: Անգամ մը գեղացիները եկան դպրոցին առջեւ լեցուեցան: Կը լսէի գիրենք: Տիվրիկի այդ տեսակ կտուրներէն շատ մարդ գտեր են, կ'ըսէին: Ու կ'ուզէին նայիլ իմ տեղս: Ձէնքս բռնեցի, որպէսզի քանի մը հասը ուտեմ ձեռք իյնալէ առաջ: (*) Յետոյ չեկան բնաւ: Ջաղացներէն առատ ալիւր ու ցորեն գողցայ եւ հոն տարի: Հիմակ դեռ հոն ալիւր ունիմ ես: Կտուրէն կզմիներ մը հաներ էի՝ իբրեւ ծխան: Գեղացիներուն հաց եփած օրերը ես ալ բարակ շիւղերու վերածուած չոր փայտերով կրակ կ'ընէի ու սանի վրայ իմ հացս կ'եփէի: Եկեղեցիին պատուհանէն, որ կից էր դպրոցին, շատ մը գոյժեր տարի ու պահեցի կտուրին տակ: Գոյժերս դեռ հոն են: Այս գարնան ալ ձանձրացայ միմակութեմէ: Մտաբերեցի Գըլլ Գալէ, Մահմուտ պէկը, որ ատենուան բարեկամս էր: Դերձան, ասեղ, օճառ, կերպաս առի ու ինծի շալակ մը շինեցի անոնցմով: Գիտէի թէ այդ միւրքերը պատերազմի հետեւանքով սուղ են ու չեն գտնուիր: Գիշեր մը շալակս շալկեցի, հրացանս ձեռք առի, ու գլուխս այս ներմակը փաթեքած նամբայ ելայ: Ինծի հարցնող չեղաւ թէ ո՞վ ես, ո՞ր կ'երթաս: Ձէին նանչնար գիս: Թուրք կը կարծէին: Գար Տէրէի քով (ազահանքերը) Սէօյիւտ եիզի գեղը հասայ: Տեսայ որ ժանտարմաներով լեցուն է: Հարցուցի ժանտարմաներուն թէ հոն ի՞նչ կ'ընեն: Ըսին թէ գեղապետ Ֆէթ-ա էֆէնտիին սպաննուած է *էշքըյան*ներուն կողմէ, քննութեան են եկեր: (**)

(*) Այդ տեսակ հերոսութեան դեպքեր պատահեր են շատ անգամ: Սկզբի գեղերէն մէկուն մէջ փախստական մը զինուորի մը կողմէ կը տեսնուի: Ջեռքը սասնոց մը ունի եղեր: Կը կրակէ զինուորներուն վրայ ու կը փախչի: Կը սպաննէ քանիները ու տան մը վերնայարկը կ'ապաստանի: Տակը կը պաշարեն, որ վտան: Պատուհանէն կը կրակէ նորէն եւ ուրիշներ ալ կը սպաննուին: Վերջին փառփուշտը բերնին մէջ կը կրակէ ու կ'իյնայ:

Ջարմուխիւ տարուած խումբի մը մէջէն ալ երիտասարդ մը ձեռքի կապերը կը փրցնէ ու քարերով, արք'գ ժանտարմա մը կը սպաննէ ու գէնքը կը խլէ: Մնացեալ *ղափթիէ*ները բոլորը մէկ կը կրակեն վրան ու կը սպաննեն զայն: Կ'ըսուէր թէ մեր գեղացի Օվկանց Բարբոզն ըլլայ ան:

(**) Գուրտ չէրէները սպաննեցին զայն:

ցի: Բարեւ, բարեւ: Երգարւմցի գաղթական եմ, ըսի, Սվազ կ'երթամ, ընտանիքիս մօտ: Ինձի երկու ժանտարմա տուէ՛ք, որ զիս լեռնէն անցնեն, գողերէ կը վախճամ:— Դուն գէնք ունիս, ալ ի՞նչ կը վախճա, ըսաւ եւ զիս փամբու դրաւ: Հասայ Մահմաուս պէկին պալատը: Ծանօթութիւն տուի: Ըսի թէ այս բեռը իրեն մուէր բերած եմ: Յայտնեցի թէ դեռ տեղը պահուած շատ բան ունիմ: Պաշտպանութիւն խնդրեցի: Ան զիս շարք մը հիւր ըրաւ: Զէնքս առաւ ձեռքէս, յետոյ զիս հոս կէննայիմ դրկեց, որպէսզի անոր մարդոցը հետ երթանք կասմնա եւ գոյժերս բերենք:

Անոր գէնքը վրայէն առնելը երկուքիս ալ շատ պաղ եկաւ: Ես ծանօթացուցի զինքը քրտական բարքերուն: Ըսի թէ գոյքերը բերել աւելորդ է, քանի որ գոյքերը կ'առնեն ու կը սպաննեն զինքը: Գողեցի որ միասին լեռ երթանք: Ան կ'ըսէր որ եթէ լեռը ըլլայ եւ քովը ինձի պէս ընկեր մը ունենայ, մեր կերածը միայն իւր ու մեզը կ'ըլլայ: Բացատրեցի անոր Գարամանի տան տեղը: Ըսի թէ անոր քովն ալ երկու Հայեր կան: «Եթէ պատահի որ առանց ինձի լեռ երթաս, այն առե՛ն դնա եւ այն տղաքը գտիր»,— ըսի:

Ան կը դուրդուրար վրաս: Հագուստներս կը նորոգէր ու կը գարմանար այնքա՛ն խեղճութեան վրայ: Ինք տարիներու թափառումէն վերջ, նորէն քուրտ պէյերէն անգամ լաւ հագուած էր: Կ'ըսէր թէ վայրենի Քուրտերը աշխարհի խաղաղ առե՛նն ալ առանկ խեղճ են եղեր: Ինձի խորհուրդ կու տար որ այժերը ծծե՛մ, անօթութենէ չմեռնելու համար: Առաջին անգամ ինք, երբ լեռան վրայ բանջարատուրս քովս ընրած էր, կաթնտու այժ մը բռնեց հօտին մէջէն ու պնդեց որ ծծե՛մ դայն: Գրպանէն փոքր մկրատ մը հանեց ու մազերս շինեց: «Երբոր լեռ երթանք,— կ'ըսէր,— վրադ գլուխդ ալ կը նորոգե՛մ:»

Քուրտերը վախցան ու անոր հետը Կասմնա չըացին: Ինք ալ իմ խօսքերէս խրատուած, այդ բանը դժուար յուշուց անոնց: Նորէն Մահմուտ պէկին քով պիտի երթար: Անասուններս գեղին գլուխը դանդաղեցուցի ճամբուն մօտ: Երկու զինուած Քուրտերու հետ եկաւ ան: Այդ տեսարանը ջարդը յիշեցուց ինձի: Քովի Քուրտերը կը նմանէին ա՛յն սօսիկաններուն, որոնք մեր գեղը դէպի մահ տարեր էին: Յուզուեցայ ու արցունքներս պոսթկացին: Հեծկլտալէն կ'երգէի.—

Տառապանքի, սուգ ու սեւի ինձ ընկեր,
Մարդ չմնաց իմ արիւնտ վաթախում,
Լուռ եմ շուրջս լեռներ, ձորեր, ամառաներ...

Երբ քովս հասաւ, տեսայ որ ան ինձէ՛ աւելի յուզուած է ու կ'արտասուէ:

— Հագիւ կըցի Հայ մը գտնել ու ահա կը բաժնուիք: Հոգ մի՛ ընէր, ես երբ վախչիմ, պիտի գամ լեռ ու քեզ ալ հետս առնեմ:

— Եթէ չկրնաս դանեւ զիս, — ըսի, — որ միշտ այս լեռն եմ ու ամէն կէսօր լերան վրայի տախտասանը, յիշէ՛ Գարամանի տունը ու հո՛ն դնա :

Համբուրուեցանք : Իր հտեւէն կը նայէի, մինչեւ ան լեռը կըր-
ծեցաւ : Ինք ալ կ'երթար ինծի նայելէն ու արտասուելէն :

Չեկաւ : Չդարձաւ ան, որպէսզի միասին վախչէինք : Իր հտե-
ւէն տեսաւ-տեսաւ զըսոյցներ ելան : Սպաննուած է, կ'ըսէին : Ուրիշ-
ներ ալ, թէ օր-ցերեկով անցած ու Տիվրիկի ուղղութեամբ դացած
է : Օրերը օրերուն յաջորդեցին : Բայց ան այլեւս բնաւ երեւան չե-
լաւ : Տիուր էի իրեն համար : Ու յաճախ կ'արտասուէի :

Անգամ մը հօտս լերան ներսերը տարի, որպէսզի նոր տեղեր
տեսնեմ ու սիրտս բացուի : Ժեռուտ ու փոս տեղէ մը հօտը խրաչե-
ցաւ ու ետ դարձաւ : Առաջ վաղեցի դայլ ենթադրելով, ու տեսայ
որ գիշակեր արծիւներ խոշոր թեւերնին բացած որոշ տեղի մը վրայ
կ'իջնեն ու կ'ելլեն : Հոն վաղեցի ու ժայռի մը վրայ, կանակը ժայ-
ռին, ձեռքերն ու զլուրը մէկ կողմ դացած ու սաքերն ալ միւս կողմ,
երիտասարդի մը դիակը տեսայ : Գլուխէն զատ, որ դեռ անազարտ
կը մնար, մի'այն բաղուկներու դնդերները կային վրան : Մնացած
մասը ամբողջ կմախք էր : Սեւցած էր արիւնը բերնին մէջ, ուրկէ լե-
ղուն դուրս կախուած էր : Ճակատին վրայ կը կենար դեռ շագանա-
կազոյն մազերու սիրուն ծոպ մը : Եթէ զիակը հին չըլլար, պիտի
դայն Մարտիրոսը կարծէի : Շատ ուշ միայն կրցայ ստուգել թէ Չա-
րացի Ալիքան Սէֆէրեան անուն երիտասարդին դիակն էր ան : Չմե-
ռը, երբ ետ Հէմոյին քով էի, երկու Քուրտեր զինքը հոն տարեր ու
սպաններ էին : Ան Չարայէն քուրտերուն մէջ եկած էր, երթալ Հէ-
մոյին միանալու համար : Չայն սպաննողը թաօն էր :

ՀԱՅ ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԵՏ ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ

Մայիսի սկիզբէն քանի մը ծիսախոտի վաճառականներ մօտա-
կայ Մէրկիզէր քուրտ դեղէն Մէզլիէ եկան : Անոնց հետ էր Մէրկի-
զէրցի նշանաւոր դեղատեղեւ Տլօ պէկին տղան : Անոնք Կէնճոյի տունը
հիւր իջան :

Տլոյի տղան ինծի ըսաւ թէ երկու ամիսէ ի վեր իրենց մօտ
հայ ընտանիք մը կը բնակի : Երկու կին, երկու տղեկ եւ չորս այրեր :
Անոնք արհեստով զինազօրծ են եղեր, անթերի զինուած ու լաւ նշա-
նառու : Ամէն օր լեռը որսի կ'ելլեն :

Նոր կը լսէի այդ բանը : Միտքս դրի որ գիշեր մը երթամ ու
տեսնուիմ իրենց հետ : Ու Տլոյի տղուն ալ ըսի որ անոնց իմ գոյու-
թիւնս յայնչեւ եւ բարեւ խօսի :

Տակաւին մենք այս խօսակցութեան մէջն էինք, կէսօրին, երբ
այծերը գեղ տարած էի կթելու համար, անեցիները մեզ դուրս կան-

չեցին: Մօտէն զէնքի ձայներ կու դային: Անոնք մազգէրի ձայն էին, ես կը ճանչնայի: Լեռ փախանք: Հրացանաձուլութիւնը երկու կողմէ կ'ըլլար: Կռիւ կար: Թերեւս չէքէներ էին, իրար ինկած՝ ոստիկաններու հետ: Կ'ըսէին նաեւ թէ կրնան այդ Հայերը եղած ըլլալ, չէքէներու կամ Թուրքերու հետ ղէմ-ղէմի:

Մէկ ժամ վերջ օդը փոխուեցաւ ու դարհուրելի կարկուտ մը սկսաւ, որ վերջ դրաւ կռիւին: Իրիկունը իմացայ թէ այդ լարուած դաւ մըն է եղեր Հայերուն զլխուն, Տլոյի կողմէ: Արդարեւ Տլօ անոնց ունեցածները առնելէ վերջ՝ ուղեր էր գանոնք սպաննել տալ: Անոնք գործ ունեցած էին ոստիկաններու հետ, Պէյ Տաղիի լանջերուն վրայ, Մէջնուտի եւ Մէրիկզէրի միջեւ, եւ անոնց յաղթած ու նահանջի ստիպած: Կ'ըսէին թէ այդ Հայերը անցեր-գացեր են ուրիշ տեղ:

Յաջորդ առտուն Պէյ Տաղիի վրայ դիշերէն աւելի մութ մշուշ մը իջաւ: Ես հօտիս ընդմիջէր կը դառնայի անդադար ու կը պոռայի, գայերը վախցնելու համար: Լերան ճամբէն ձայներ առի: Մօտ էի անոնց: Քոպէս կ'անցնէին ձիաւոր ժանտարմաներ, բայց զիս չէին տեսներ: Ես կը լսէի անոնց խօսակցութիւնը: «Առանկ կռիւ չէինք տեսած», կ'ըսէին լեղատաառ, ու կը մեղադրէին իրենց զէնքերը՝ պարտուած ըլլալուն համար:

Այդ իրիկունը, կռիւի վաղորդայն, Քուրտերը աչքս լուսեցին թէ Հայերը մեր քով պիտի գան: Տուն մը պատրաստեցինք անոնց՝ Թէմիրիներին կից: Այդ օրերն ալ, ինչպէս միշտ, շարունակ անձրեւ ու կարկուտ կու գար: Իրիկուն մը, թաց ջուրերու մէջ տուն դարձայ: Քուրտերը ինձի ըսին թէ Հայերը եկան: Թէմիրի խորամանկ եղբայրը՝ Կէնճօն, զիս անոնց մօտ տարաւ, սրպէսդի պարծենայ թէ ինքը մարդ պատեր է: Ակութը վառեր ու նստեր էին անոր շուրջը, դորդերու եւ մաքուր անկողիններու վրայ, որոնց տեսքը աչքերս խողտեցուց: Լեռ ելլելէս ասդին առաջին անգամն էր որ այդ տեսակ մաքուր իրեղէններ կը տեսնէի:

Ակութին մէկ կողմը նստած էր ուշիմ ծերուկ մը, դիմացը իր կինը: Տասներկու տարեկան աղջիկ թոռ մը ու 17 տարեկան մանչ թոռ մը ունէին ու անոնց մայրն ալ՝ աղջիկներն՝ իրենց քովն էր: Անոնք Ակնցի էին, Չարա գաղթած տարիներէ ի վեր: Զինագործ ըլլալով գանոնք ընտանիքով ողջ ձգեր էին Թուրքերը: Մերուկին հայկական անունը Ազնաւոր Քէլէկեան էր, իսկ թուրք անունը «Թէմիրիք ուստա»: Ուրախացանք իրարմով: Կը նայէին վրաս ու կը խզճային:

— Աղջի՛, տղուն սուրճ մը եփեցէք, — ըսաւ ծերը:

Ինձի սուտ կու գար թէ աշխարհի վրայ մնացած ըլլան մարդեր, որոնք դեռ այդպիսի սովորութիւններ պահած ըլլան: Աւելի դարմացայ, երբ տեսայ թէ անոնք օճառ ալ ունէին: Մերուկին կինը տեսնելով կոշկոտ կապած եւ պատուտած ձեռքերս, հանեց ինձի օճառ տուտ, սրպէսդի լուամ ու աղէկցնեմ: Օճառը ետ տուի, առար-

կերով թէ Քուրտերը յետադային դիս կը սպաննեն այդ օճառին տիրանալու համար: Անոնք կը զարմանային իմ ըսածներուս, ինչպէս ես կը զարմանայի իրենց վիճակին վրայ:

Օր մը անոնց այրերը գեղ իջան՝ Քուրտերու հրակէրին վրայ, նշանառութեան մրցում կատարելու համար: Մերուկին տղան՝ Պաշատուր (Թալէաթ), ձեռքի վրայ, նետա՛ծ տեղը կը դարնէր: Միւս երկուքը օտարներ էին: Անոնք ծերուկին կ'ընկերանային իբրեւ զինուոր: Մեծին անունը Յակոբ Քէյրէան էր: Հիմակ անոր կ'ըսէին Փէհլիվան: Աղճատազցի եմ, կ'ըսէր ան, Կեսարիոյ Թալասէն: (*)

Միւսը պատանի մըն էր, անունը՝ Քէրիմ: Չարացի էր ան, արհեստով ժամադործ, հայկական անունը՝ Գրիգոր Կիւնէշեան: (**)

Անոնք բոլորը քաջեր էին: Առաւելապէս քաջ էր Փէհլիվան, դեղին մազերով, աւստրիական կանաչ համազրկեստով, լեցուն մարդ մը: Բայց տղէտ էր ու աղղային զրացումէ զուրկ:

Մերուկը Չարա զինագործութիւն կ'ընէ եզեր: Աշնան Կարնեցի թուրք զազթականներէն մէկը իրեն կ'ըսէ.

— Իսլամանալով մի՛ կարծէք թէ փրկուեցաք: Ժամանակ մը մեր պէտքին համար աշխատեցէք, յետոյ մենք ձեզ պիտի սպաննենք:

— Անա՛նկ մեռնելուս, ասա՛նկ կը մեռնիմ, ըսի, ու տղաքն առած փախայ Չարայէն, — յարեց ուշիմ եւ վառվռուն ծերունին:

Մայիս էր, Պէյ Տաղին սունկերով լեցուն: Ամէն օր ես անոնց սունկ կը բերէի: Անոնք միշտ ինծի հաց կու տային: Նորուպեցիին վրաս—գլուխս ալ: Նորուպեցիին վրան—գլուխը քանի մը հայ տղոց, որոնք Մէջուս կը դանուէին:

— Կրնա՞ս զէնք զործածել: Մեզի հետ պտըտիլ կ'ուզե՞ս, — հարցուցին ինծի ու աւելցուցին, — Սպասէ՛, ատենը կու գայ:

Շաբաթ մը վերջ ոստիկանները Մէզերէ եկան եւ անոր սունը տակնուվրայ ըրին: Այդ իրիկունն իսկ ծերունին դոյքերը լեռ փոխադրեց: Գրզլը Գալէ իջաւ, անասուն առաւ ու դոյքերով հոն փոխադրուեցաւ: Շաբակ մըն ալ ես առած՝ միասին դացի: Հոն ճանչցայ Տիվրիկցի Գրիգոր անուն հայ կլայեկագործ մը: Ան իր քով ունէր երկու հայ աշկերաններ: Անունը ինչոքըր ուստա դրեր էին թուրքերը: Քրտական զեզերը կը շրջէր ու առատ վաստակ ունէր:

— Կ'ըսէին թէ Պէյ Տաղիի վրայ տղայ մը կայ, որ խոտ կ'արածի: Դո՞ւն էիր ան, — հարցուց:

Երբ պատասխանեցի թէ այո՛, ես էի, ան պահ մը մտածելէ վերջ ըսաւ.

— Ձինուորի տարիք ունիս եւ պիտիբզ եկած է: Եթէ ոչ քե՛զ ալ քովս կ'առնէի ու կեանքդ կը փրկուէր:

(*) Կեսարիոյ Կեմէրէկի Տիմոսի քէ Տիմաիշ զեպացի:

(**) Գրիգոր 1921-ին Պալիս քովս եկաւ: Ձեմէրով Աւարիս ապաստանած էր կարգ մը ընկերակերով, սուքի տակ առած թուրքիամ: Ամերիկա գնաց:

Յերեկ մը Գրգըլ Գալէ մնացինք: Տղաքը հոն պահուեցան ու դուրս չէլան ընաւ: Յաջորդ դիշերը բաժնուեցանք ընտանիքէն՝ լեռներուն վրայ շահատակութիւններ ընելու: Անոնց աչքին Քուրտերը մազի չափ արժէք չունէին: Երեք Հայեր ամբողջ աշիրէթը կ'արհամարհէին: Եւ իրաւունք ալ ունէին: Անոնք հոն անուն ու համբաւ ձգեցին: Ու մինչեւ վերջ Քուրտերը վախով կ'ըսէին թէ Հայերը եկեր, Հայերը գացեր են:

Գրգըլ Գալէի բերրի դաշտերը Մայիսի այդ օրերուն զմայլելի էին: Հունձքը առատ, խոտ ու ծաղիկ՝ նմանապէս: Օդը տաք էր եւ կարելի էր դուրսը պառկիլ: Եղանակը կը յիշեցնէր հեռաւոր ու տխուր օրը, երբ բաժնուեցայ մեր դեղէն ու լեռ պացի, վերջի'ն անգամ . . .

Գիշերը լուսապայծառ էր: Գետակին մօտ, խոտերուն վրայ, մրափեցինք քիչ մը: Քէրթմ անուշ-անուշ կը խօսէր ու կը ինզպայէր մեզ: Փէհլիվան կոշտ էր մերթ, մերթ ալ քաղցր ու դպուող՝ էպ վազրի մը պէս: Իսկ Թալէաթ մեծ պարոնի հովեր ունէր ու խելքով կ'իշխէր ու կը հրամայէր բոլորիս:

Պէյ Տաղիի ստորոտը քանի մը տուներ կային: Այժերը կ'որոճային դուրսը ցանկերուն մէջ: Ժողովուրդը կը քնանար: Լեռան ջուրերը մեզմ երգ մը ունէին: Մասնք հոն եւ դուռ մը դարկիւնք: Հարուստ Մէյիտի մը տունն էր ան: Ձէին ուզեր բանալ, կը վախնային: Մտիպեցինք դիրենք ու մտանք ներս: Ես անոնց հետ քրտերէն կը խօսէի: Ակութը վառեցին: Լոյսով տեսանք որ երկու զինուորացու տղաք անկողիններուն մէջ նստեր կը դողային:

— Լօ՛, մի՛ վախնաք ըսի, մենք անվնաս մարդեր ենք: Հիմակ պիտի անցնինք-երթանք:

— Ձէ, — կը պատասխանէին անոնք, — դուք ժանտարմաներ էք, եկած էք որ մեզ գլխուր տանիք:

Ու երբ անուշ կը խօսէինք իրենց, քիչ մը վախը անցաւ, ազաչանքով:

— Շիրտ'կը ըսէք, ի՛նչ կ'ըլլայ, դուք ժանտարմաներ չէ՞ք:

Շատ մեղքեայ: Ազաչեցի եւ երդում ըրի որ հաւատան թէ մենք անվնաս ենք: Այն ատեն ցատկեցին ելան ու մեզի փառաւոր ճաշ մը տուին: Անոնք հարուստ էին եւ հաց շատ ունէին: Մեզի պաշար ալ տուին: Փէհլիվան ձորին մէջ մերկ ձի մը դատ. ու հեծաւ: Ելանք Պէյ Տաղի: Լուսցաւ: Հասանք օլաններուն տեղը, ու Թէմիրին տղաքը տեսանք, որոնք հոն կը սլաքէին: Հօտէն Տ ոչխար կորսուեր էր, կը փնտռէին: Գալլերը կերեր էին զանոնք: Թալէաթ կ'ուրախանար:

— Օր մը բացակայեցար, ութ ոչխար վրայ տուին, — կ'ըսէր: — Լաւ եղաւ, որ արժէքդ հասկնան:

Իջանք Մէյիթի: Կէնճօն մեղ պատուախրեց ճաշով: Ես յայտնեցի Թէմիրին՝ թէ տղոցը կ'ընկերանամ այլեւս ու հրաժեշտ առի: Իարի Բիզան, որուն հետ տարիուկէս ազ ու հաց կերեր էինք, մեղ ճամբու դրաւ ու լացաւ ետեւէս:

Լերան լանջերուն վրայ ժայռերու մէջ ելանք: Տեսանք ուր հե-
ռուէն հրացանով մէկը գէպի մեզ կու գայ: Տղաքը ճանչցան, Մէր-
կիղբերցի իրենց ծանօթը, աւագակ Հուսիկն է եղեր ան: Համբուրուե-
ցաւ ան բոլորիս հետ^(*) ու սկսան մտերմօրէն խօսակցել: Գժառուե-
լով իր քուրտ պէնքի ընկերներուն հետ, եկած էր միանալու հայ
տղոց, որոնց վրայ կը հիանար:

Դէպի իրիկուան սուենկեր ժողովելով քայեցինք լեռնէն: Տղաքը
հոն ցոյց տուին մեզի իրենց կռիւի տեղը, ժայռուա ու գառիվար:

— Հոս, — կ'ըսէին անոնք, — ժանտարմաներուն յաղթեցինք:
Անոնց ցոյց տուինք թէ մենք խարուելով ջարդուելու տարուած եւ
ձեռքերը կապ Հայերը չենք:

— Եթէ ես կռիւին ներկայ ըլլայի, քանի մը հատը կը սաա-
կեցնէի, — կ'ըսէր Թալէաթ:

Մէրկիղէրի ասի ձոր մը իջանք, ուր փոքր ու անշուք բնա-
կարան մը կար: Հուսիկի Տղիկի^(**) հօրենական տունն էր ան, ուր
կը մնային քոյրերն ու կիներ, Իգմիրցի Թրքուհի մը:

Հուսիկ մեզի առատ հաց եփել տուաւ: Անոնք միասին ալլւր
գողցած էին: Այդ գողցօնէն էր այս հացը: Մթնշաղին Տլօն ու իր չէքէն
մեր վրայ եկան: Մենք ղերք բռնեցինք, ուր կռուինք: Ես անպէն էի:
Թալէաթի հետ ժայռ մտայ ու շարջը կը գննէի:

Տլօն սարսափած ու խորամանկօրէն եկաւ հաշտուեցաւ:

— Ես չըխօցայ որ դուք էք, ուրիշ մարդ կարծեցի, — ըսաւ:

Անշուշտ եթէ ոյժը հասնէր, այդպէս պիտի չըսէր:

Ճաշեցինք: Մթնեց: Տնակը ձգեցինք: Զորէն վար, դազ ղե-
շերով, կը քալէինք մենք: Կը խնդայինք ու կ'ազազակէինք: Կ'եր-
պէինք ու կը պարէինք:

Մեզի հետ էր Հուսիկի մէկ ազգականը, գիտուոր Մէմօն: Մէ-
մօն կ'երպէր:

Տէ պէտտէ, պէտտէ, պէտտէ,

Քէֆօ տէսքեմքն պէտտէ,

Խալգէ մուրատախէ կըրքք,

Եամրն ու դէ մա տըլտէ:

Թարգմանութիւն. —

Տէ, ք-ն'դ տուր, ք-ն'դ տուր, ք-ն'դ տուր,

Ան'ւշըս, ձեռքս ք-ն'դ տուր,

Բոլա'րն առի՞ն փափաքնի՞ն

Մերը սրտերնիս մնաց:

Այսպէս ուրախութեամբ, ձորի մը մէջ տուն մը հասանք: Ան-

(*) Ուստիսմարտը է անոնց համբոյրը, ողջագործում:

(**) Տըզ = գող (խուրտ): Տըզի = գողութիւն: Տըզիկ = փոքր գող:

տառներով խեղդուած էր ան: Տիրոջը անունն էր Սէյիտ Ալի, տղոցը ծանօթներէն: Սէյիտ Ալիի տունը աղքատ էր, ինք՝ մերկ: Հաց բնա՛ւ չկար: Ունէր բաւական ոչխար ու կ'ապրէր անոնցմով: Երբ լուսցաւ, տեսայ որ ձորին երկու կողերը այնքան մօտ էին իրարու, որ անտառի ճիւղերը իրար կը հասնին: Պայծառ ու առատ ջուր մը կ'անցնէր այդ ձորէն: Տունին դիմաց փոքր ածու մը ունէր ան, ուր կորեկ ցանած էին: Այդ ածուէն բանջար-խոտեր կը ժողվէին՝ սնանկու համար:

Սէյիտին կնոջ ալիւր տուինք, որ մեզի բան մը ետէ: Ան պատ-րաստեց ժառօժուն մը, որուն կռիզ կ'ըսեն, եթէ վրան իւզ լեցուի: Ան թանձր խմորէ կերակուր մըն է: Ծաշեցինք ու լեռ ելանք:

Տունին դիմացի անտառներէն կը քայլէինք: Մտադրեր էինք այժ մը դողնալ: Փէհլիվան կ'ուզէր նախ հաց ճարել ու վերջը միս: Զիս առած դեղ մը իջաւ՝ ալիւր առնելու համար: Ես թէեւ տկարու-թիւն կը զգայի, բայց իրեն բան մը չյայտնեցի, առ ի քաջութիւն, ու հետեւեցայ իրեն: Զիս պահակ թողուց ան դեղին ափը, Իմ ցաւերս սաստկացան ու կը դողայի թուփի մը տակ մտած: (*) Գարձին կատղեցաւ ինձի: Զիս քովէն վանտել կ'ուզէր: Ի դուր թալէաթ ընդ-դիմացաւ անոր: Անօգուտ:

— Կա՛մ ես պիտի երթամ, կա՛մ ան թող երթայ, կ'ըսէր:

Իրիկուան դեղ մը դացինք: Լեռնէն, Թէլսլին մենիկ տունը հոն ապաստանած էր պողերու վախէն: Անոնց բուն տունը Սարճապէլի բարձունքին վրայ մինակ էր: Տանտէրը, Շահապ, թիկնեղ ու բարձրահասակ լեռնական երիտասարդ մըն էր: Ունէր այժերու խոչոր հօտ մը եւ առատ կաթ, մածոն ու իւզ:

Հոն բաժնուեցայ տղոցմէն, դառնալով ճակատագրիս: Իրենցմով այնքան յուսախաբ եղայ: Գացի այդ վիշեր Թէմիրին տունը հիւր եղայ: Աւտուն Գըզըլ Գալէ դացի: Քանի մը օր վերջ տղաքն ալ եկան: Փէհլիվան մնացեր էր Հուսիկի քով: Քուրա չէքէներ զիրենք հետապնդելու ելեր էին: Կը մտածէին Զարա վերադառնալ: Թալէաթ ու Քէրիմ դացին անկէ լաւ լուրեր բերին:

Անոնք եզի սայլ մը վարձեցին, գոյքերը բեռուցին ու դացին: Ուզեցին զիս ալ միտսին տանիլ, բայց ես չըացի: Կը սասկայի ու կը դարչէի Թուրքէն: Կը նախընտրէի մնալ լեռներու վրայ՝ քան թուրքի ձեռքով սպաննուիլ: Անոնք ինձի պատուիրեցին որ երթամ Փէհլիվանը պտնեմ ու համոզեմ, իրենց զրկեմ:

Անոնցմէ վերջ Գըզըլ Գալէ մնացի: Յերեկը զեղացիներէն հաց կը ժողվէի, զիշերը ծերուկին լքած տունը կը մանէի ու կը քնանալի: Այնքա՛ն տխուր կու գար ան ինձի: Մահմուտ պէկին պալատը դացի եւ հոն աշխատելու փափաք յայտնեցի: Պէկը լեռն էր:

Ան կին մը լեռ հանած, հափափած ու բռնաբարած ըլլալով կը

(*) Փէհլիվան կարծեց թէ վախէս կը դողայի: Փոքր կը ցուէր, անվարժ իւզոտ քանձր խիւսիկ, քրմէ շատ կերայ:

փնտռուէր կառավարութենէն ու փոխտտական կ'ապրէր: Կինը, դա-
ւակներն ու մայրը տունն էին: Ծառաներու մեծ թիւ մը: Անհամար
եկող-զացոյղներ: Պէկի տուն էր վերջապէս: Ծառաներէն մաս մը Կե-
սարիտյ կողմերը սայլերով ցորեն պնելու դացած էին:

Պէկին տունը Մինտավալցի հարս մը կար, Շահրիպան, որ կը
դուրսուրար վրաս: Մինիխ ու Մինտավալ երկու քուրտ նշանաւոր
պեղեր են Գարահիտարի կողմերը: Թուրք բանակը երբ ուստական ար-
շակէն կազմարուծուած անկարգ կը նահանջէր, ինչպէս ամէն տեղի
Քուրտերը, այս երկու դեղերը ա'լ աւելի կը սպաննեն զինուորները
եւ զէնքերը կ'սննեն: Ռուս բանակը կանդ առաւ այդ պեղերուն մօտ
ու անոնք մնացին Թուրքերուն: Թուրքերը անոնց այրերը սպաննե-
ցին եւ կիներն ու մանուկները տեղահան ըրին մերիկներուն պէս:
Շահրիպան Մահմուտ պէկի ազգական ըլլալով, այս վերջինը աքոս-
րի կարաւանէն առած ու տուն բերած էր զայն: Անոնց փոխտտական
այրերը զարնելու հրաման կար, ճիշդ մերիկներուն պէս: Շահրիպան
կը պատմէր թէ իրենք քովերին պահուած Հայեր ունին եղեր եւ դա-
նոնք Ռուսերուն կողմը անցուցած են:

— Երբ էրիկս, Տուրսունը պայ, քու մասիդ ալ կը մտածենք, —
կ'ըսէր:

Ճակատապրի եղբայր էինք վերջապէս:

Գեղացիներուն հետ լեռնէն փայտ կը կրէի պէկին: Շատ ան-
տառ չունէին անոնք: Պէյ Տաղիի կողերէն կտրուած դիերու արմատ-
ներ կը փորէինք եւ սայլերով տուն կը տանէինք: Զիս զրկեցին հեր-
կի: Ես արտ վարել անդամ չէի գիտեր, ո՞ւր մնաց պժուար հերկը:
Չորս լուծք եղով կը հերկէինք: Ես խոփս ուրիշի մը ակօսը ձգած,
պարսպ կ'երթայի կու դայի: Այդ դիշեր պէկին տունը փոխուած էր:
Պէկը տուն իջաւ: Քանի-քանի ակութներու մէջ միս ու հաց կ'եփէին:
Մանող-ելլողին, ուսող-խմողին հաշիւը չկար: Անոնք ալ անօթի էին:
Իրենց հացը հատեր էր: Փոխ կ'առնէին, կը դնէին: Առատն եթէ ու-
թը չափ(*) ալիւր թրէին եւ եփէին, մինչեւ իրիկուն հաց չէր մնար:
Քուր անօթիները հօն կը խուժէին իրենց տան պէս, կը կշտանային
ու կ'երթային: Պէկին աղաքը պարզ հաց չէին ուտեր: Կը բարկանա-
յին ու կը նեղէին զայն: Այն ալ այդ սղութեան ու սովի օրերուն:

Անոնք միւս Քուրտերէն տարբեր չէին հագուելը: Իրենց սօքին
անխուսափելի արեխն էր:


Յաջորդ առտուն պեղը պաշարուած եւ ժանտարմաներով լե-
ցուած էր: Ես պալատին քովի բանջարանոցին մէկ անկիւնը չուլ մը
առած կը քնանայի: Այդ անոր համար, որպէսդի եթէ ժանտարմա
զար՝ ելլէի-փախչէի զիշերը: Արթնցայ: Անոնց ձայները տուի: Գե-
ղը իրար անցած էր: Զիերը կը խրխնջէին: Մէկ անգամ զլուխս վեր

(*) Չափ = բարփլավու: Մէկ բարփլավու 12 օխտ է: 16 բարփլավու մէկ
փլիէ (փլակ):

առի, անցնող-դարձող ժանտարմաները տեսայ: Չուլը քաշեցի զլիսուս
 ու մնացի հոն: Իրիկուան տնոնք մեկնեցան: Հրաշքով չգտան զիս:
 Ես ելայ պալատ դայի: Պալատին ամէն մէկ անկիւնը մարդ փնտոեր
 ու գեղը տակնուվրայ ըրեր էին: Ձիերը դարիի արտերուն մէջ ճող-
 նած եւ արտերը կերցուցած էին: Քուրտերը դողահար կը տրտնջա-
 յին: Պէկին կիներ ինծի սպառնաց ու վնասեց զիս:

— Եթէ քեզ բռնեն պալատս կ'այրեն ու մեզ բոլորս կը սպան-
 նեն: Գնա՛, կորսուէ՛, — կ'ըսէր, — փորձանք:

Մահմուտ պէկ տխրահոշակ էր արգէն: Ան եզբայրն էր Ձիթի
 Մուսթաֆա փաշա անուանի Քուրտին, որ նախորդ գէպերուն շատ
 Հայ փրկած էր, այն յսյսով թէ մենք ալ փուլով Պուլիարիոյ նման
 կ'ազատինք: Անոր տղաքը, Հայտար պէկ, Մահմուտ պէկ եւ Իդ-
 պէթ պէկ, այս անգամ հոնդասացուցին յիշեալին ոսկորները: Մահ-
 մուտ պէկ Գարահիսարի պաշարումին դացած էր: Հայերէն գիտէր:
 Առաջնակարգ նշանառու էր: Քանի՛ փախստական Հայեր դաւով ի-



Խուռնափուլցի պաշտօնեաներ Պոլսոյ մէջ

րենց քարայրներէն հանած էր, հայերէն լեզուով զանոնք դուրս կան-
չելով, եւ սպաննած: Անոնք իրենց քով ունեցեր էին զեղեցիկ հայ
աղջիկներ: Չանոնք իրարու նուէր կը զրկէն եղեր Հայտար պէյի հետ:
Յետոյ զրկեր սպաննել տուեր են:

Պէյ Տաղի էի, անոր պալատէն աղջիկ մը ինծի լուր զրկած էր,
որպէսզի իրեն նամակ դրեմ, ծանօթանանք: Լուրը բերող Քուրտին
ըսի:

— Գնա—ըսէ այդ քրոջս, իր եղբայրը այնքան ողբալի վիճակ
ունի, որ թուղթ ու մատիտ անդամ մըն ալ տեսնել չ'երագեր իսկ:
Ինչպէ՞ս դրէ իրեն:

Գլխիկոր հեռացայ անկէ:

Հէմսյին ատենէն վրդէս կախուած ճերմակ պարկ մը ունէի:
Վերջին ատենները լեռնէն ատոր մէջ խոտ կը հաւաքէի ես: Հիմա ան
մուրացկանի պարկ դարձաւ: Տեսայ թէ սովահար կ'ըլլամ: Գաւա-
զան մը առի ու սկսայ մուրալ: Աղաչաւոր խօսքերու մթերք մը չի-
նեցի մտքիս մէջ: Կարծրացուցի սիրտս, որպէսզի ինդրած ժամա-
նակս չարտասուեմ: Մտացայ անցեալս: Գլուխս ծոնցի ներկային:
Թափառիլ սկսայ դեղէ դեղ, ասունէ տուն: Գիշերները կը քաշուէի ա-
մայի լեռները ու ծածուկ տեղ մը մտած կը քնանայի: Յերեկին կ'ել-
լէի թաքստոցէս՝ մարդոց խիղճերը չափելու:

Ոմանք կը խղճային վրաս ու բրդուճ մը հաց կու տային: Ու-
րիշներ թէեւ ունեւոր, իրենց դուռը ճակտիս կը դոցէին: Ոմանք թէ՛
կու տային, թէ՛ կը խղճային: Ուրիշներ կը փափաքէին զիս ծառայ
ատենը, բայց կը ցուէին որ պէխերս բուսած են, մեծ կը ցուցնեմ:

Ես երբե՛մն կ'օրհնէի, երբե՛մն շնորհակալ կ'ըլլայի: Մե՛րթ
կ'անիծէի, մե՛րթ գայլոյթէս կու լայի: Ու միշտ տրտում, երեսս ու
վուրսս կախ, կը պառտէի տեղէ տեղ, խիղճերուն նուրբ կշիռը պառտ-
ցնելով հետս:

Գրզըլ Գալէի մօտ, եղեւիներու խիտ եւ չքեղ անտառի մը մէջ
զեղ մը կայ, չինուած բլրան մը վրայ, անունը՝ Թէմալան: Կանանչ
ու ընդարձակ արտերը հոն ծովերու նման էին: Հովիւներու կանչերը
եւ բոժոժներու նուազը կը լեցնէին անտառն ու շրջավայրը: Գեղին
մեծին անունը Վէլլի աղա էր: Անոր սեղանը գետնէն չէր վերնար,
հացը չէր պակսեր սեղանէն ու եկող—դացող, ուտող—խմող անհաշիւ
էին: Ան հացահատիկ ալ կը ծախէր: Ու նորէն իր ամբարները լեցուն
էին: Անոր քով երկու Հայեր կային: Մայր մը եւ իր պատանի տղան:
Բրիկեաններ, Տիվրիկէն, ատենին Չարսա դաղթամ: Վէլլի աղայի քեր-
վան են եղեր անոնք: Ազնիւ Քուրտը զանոնք ազատեր էր ջարդերէն
ու կը պահէր իր տունը: Ժանտարմաները անոր տունը կ'իջնեն: Կը
տեսնեն Հայերը, սակայն Վէլլի աղայի պատիւին համար ձայն չեն
հաներ:

Գեղացիները զիս այդ հարուստին զրկեցին: Անոր դամբանները
քիչ մնաց զիս կը գզէին: Հովիւը վազեց ու բռնեց: Կոկիկ, մաքուր

էր անոր տունը: Երկու հարսերը դաւթնի կաղաններ ու կարմիր կօշիկ հագած էին: Ասանկ հարուստ ու երջանիկ ընտանիք տեսած չէի դեռ Քուրտերուն մէջ: Հայ կնոջ հետ խօսեցանք երկար-բարակ եւ ցաւերնիս իրարու բացինք: Տխուր էր ան: Տղուն անունը Դահիր զրեր էին:

— Կեցի՛ր, իրիկունը Դահիրս հերկէն դայ, բան մը կը մտածէ թու մասիդ, — ըսաւ ան:

Դահիր դարձաւ.

— Տղա՛ս, քեզի հայ եղբայր մը, — ներկայացուց մայրը:

Ան երէկի խանդավառ դպրոցական՝ այնքան դուրդուրանք ու սէր դրաւ իր վերաբերումին մէջ, որուն նմանը ուրիշ տեղ չեմ յիշեր: Միջհասակ, խարտեաչ, սիրուն, նահատակ դասընկերոջս Տիվրիկցի Արսէն Սուքիասեանին կը նմանէր: Կը կարծէի թէ Արսէնն է, հոգ եկեր է:

— Եկո՛ւր, դաշտ երթանք, — ըսաւ:

Գացինք իր ցանած արտերուն քով նստանք: Հարցուց ո՞վ եւ ուսկի՞ց ըլլայս, ի՞նչպէս երթալ հոն իշնալս: Պատմեցի բոլորը: Տխրութեամբ լսեց: Աւաղեց: Հոռաչեց: Խօսեցանք ցեղին ճակատագրէն: Ազատողը օր պիտի տեսնէ կ'ըսէինք: Երանի՛ր անոր որ կարենայ ազատիլ: Իսկ մեր լեզուով՝ այդ անկախ հայրենիք բսել էր: Մենք բոլոր բեկորներս, ամէ՛ն կարգի մարդեր, այդ միակ յոյսով անկարելի կեանքին էինք փարեր: Ունենանք մեր անկախութիւնը: Գեախնը չթողունք մեր անհուն վրէժը:

Խօսեցանք ցեղին մտաւորականներէն: Ակնունին Ռուսիա անցած է: Զարդարեան փախած Պուլկարիա: Եարճանեան Իտալիա կը գանձուէր, ուստի փրկուած է: Իսկ Վարուժան Գոնիայի ամայի լեռները տարեր ու չԻքէներուն ձեռքն են տուեր, որ սպաննեն: Այս բոթին վրայ ինձի թուեցաւ թէ դանկս կը սլայթի: Խորունկէն հեծեցի ու սկսայ արցունք պոսթիլ: Ես Վարուժանը հին ու նոր աստուածներէն աւելի կը սիրէի: Այդ օրերուն շատ մը հողեր մտացայ ես, մի՛նակ Վարուժանի կսկիծն ունենալու համար: Ու կը շրջէինք արտերուն թումբերը, հոս-հոն: Անոնք կանա՞նչ էին, մեծցա՞ծ: Հագիւ կը տեսնէի:

Խօսեցանք մեր գրացի ցեղերէն ու թշնամիներէն: Ան ինձի յայտնեց ա՛յն գեղերը, ուր կրնամ հանդիպիլ, եւ անո՛նք, որոնցմէ պէտք է ղզուշանամ: Փափաքեցաւ որ իրենց տունը մնայի:

Այն գիշերը հոն մնացի: Վէլի աղա չուգեց զիս երկար վար գնել: Պարկիս մէջ Վէլի աղայի կիներ ալիւր դրաւ: Յետոյ Դահիր առաջս ինկաւ ու զիս գեղին քանի մը տուները պարտացուց: Բոլորը գինքը կը սիրէին զակի պէս: Բոլո՛ր տուներն ալ ունեւոր էին: Ան ինձի համար ազգականս է ըսաւ ու ալիւր ժողվեց: Ու կը պատմէր թէ քանի մը Հայերու հաց տուած է՝ շաբաթներով զանոնք անտառը

պահելով: Վէլի աղայի տղան, Տխապ, տեսաւ մեզ: Ան Դահիրի բարկացաւ:

— Գործդ ձգեր, եկեր աս մա՞րդը կը հոգաս, — սաստեց:

Դահիր ինծի վերջին ճար մը մտածեց: Կլայեզործ Գրիգոր եզրօրը նամակ մը տուաւ, որպէսզի ինծի չափ մը ալիւր տայ՝ անով կարենալ մինչեւ հունձք ապրելու համար:

Դարձայ Գրզլ Գալէ: Մնացի հոն քանի մը օր: Դահիրին նամակը Գրիգոր եզրօր տուի եւ աղաչեցի որ օգնէ ինծի: Ան շարունակ պէյերուն, ժանտարմաներուն ու միւտիւրներուն կաշառք եւ խնջոյք կու տար՝ կաշին փրկելու համար: Քուրտերուն հետ միշտ խնջոյք կ'ընէր ու կերածը եղ ու մեզը էր: Մերժեց զիս: Վստահ չէր թէ յօրդ օրը սղջ է եւ ունեցածները՝ իրը: Սակայն եւ այնպէս մերժեց զիս:

Ոնդրեցի որ այդ դիշերը իր աշկերտներուն քով մնամ ու ատուն ելլեմ-երթամ: Այս ալ մերժեց: Բռնի մնացի հոն: Գիշերը աշկերտները կը քնանային: Ելայ տաշտին հացերը հաւաքեցի: Տիկերով լեցուն իւզ կար քովը: Առատ իւզ լեցուցի հացերուն մէջ: Դեռ չէր լուսցած՝ աւարովս հեռացայ:

Պէյ Տաղիի ստորտը ձոր մը մտայ: Ինչքան ատեն հագուստներս հանած չէի վրայէս, ոչ ալ տրեխներս: Հագուած կը պառկէի: Հոգ հանեցի, լուացի լաթերս: Զանոնք արեւը ձգեցի որ չսրնան: Շուք մը մտայ ու կ'ուզէի քնանալ:

Իրիկուան նորէն լերան ճամբան բռնեցի: Կրկին Գոչկիրի կ'երթայի:

Գրզլ Գալէ ծերունի շէյի մը կար, Սէյիա Ապտուլլահ: Ան երկար հասակ եւ բոց ու երկար մօրուք մը ունէր: Սիրուն դէմքը Պղատոնի դէմքին կը նմանէր: Անոր գոմը Պէյ Տաղիի կողին վրայ էր: Հոն կը կենային այծերն ու հովիւները, եւ իր աղան, զինուորական փախստական, կնոջը եւ զաւակներուն հետ: Գոմին Սէիտը կը դուրդուրար վրաս, ամէն անգամ որ իրեն երթայի: Ես բերանս չբացած, խոխոյն կնոջը կ'ըսէր. — Քէչէ, միմ ուիմ, լաուֆ պուչի է: (*)

Նորէն հոն դացի: Ան զիս կրկին հիւրասիրեց: Ինծի չուլ մը տուաւ, գոմին մօտերը ձոր մը մտայ, պառկեցայ անոր մէջ: Առտուն, երբ կը հեռանայի գոմէն, ան ըսաւ ինծի.

— Եթէ ամէն յոյս կորսուի քեզի համար, վերադարձիր, ինծի՛ եկուր: Ես քեզ լեռներուն մէջ կը պահեմ զաղանի, մինչեւ նոր հունձք: (**)

Քանի մը օր Պէյ Տաղի անցուցի, մինակ, ջուրերուն վրայ, ձորերուն մէջ: Վայրի լերան վրայ ձանձրացայ մինակութենէն: Իջայ Քուժսուրի կայլաները: Հոն էին մեր քերվանները, որոնց դացինք

(*) Ա'ղջի, հա'ց բեր, աղամ անօթի է:

(**) Վահանիմ երազը:

Ղեւնդին հետ եւ մեզ ճամբու դրին վերջէն: Կիւլիզար հարսաս ա-
նոնց տունն էր միշտ: Շտկուեցայ որ ջիւլիային եայլան երթամ, հար-
սաս առջիս վաղեց: Երեսը կախած էր ան: Զիս տեսնել չէր ուզեր:

— Գնա՛, օղուլ, հոս մի՛ դար, — ըսաւ ու զիս ետ դարձուց:

Զհարցուց լիճակս: Կոպտօրէն զիս սաստեց ու ետ դարձաւ:
Այս հարսաս մեր դեղին մեծաւոր Քէհենց Մանուկ աղայի քոյրն
էր... Ան իր դաւակներն ալ թողած—փախած էր ու Թուրքերը զանոնք
Նփրատ թափած էին...

Նորէն լեռ կ'երթայի, Քուրտ մը զիս հիւր ըրաւ այդ օրը: Ան
ըսաւ ինձի թէ Թէմիր լսած ըլլալով իմ լեռները ըլլալս, եկեր զիս
փնտուեր, զացեր է: Նորէն լեռ դարձայ: Ու օր մը գեղ մը իջայ, Քուր-
տուր: Թէմիրին աներօրդի բարի Սրմային տունը դացի: Սրման բա-
րի Քուրտ մըն էր: Անոր քոյրն ալ, Թէմիրի կ'ինը, նոյնքան բարի
էր: Ան օ՛ր մը ընա՛ւ գէշ խօսքով մը սիրտս կոտորած չէր: Այդպէս էին
դաւակներն ալ: Անոնց յանցանքը աղքատութիւնն էր:

Սրմա հաց չունէր: Կարագը հալեցուցած կը լեցնէին մածու-
նին վրայ ու կը դալալէին դայն: Այդ էր անոնց սնունդը: Այդ տեղե-
րը ստկայն սնունդին առանցքը հացն է: Առանց հացի ինչ որ ուտեն՝
համ չեն առներ ու չեն կշտանար:

— Մարդուն օրէնքն ու հաւատքը հացն է, — կ'ըսէին:

Սրման ինձի իր դոմը մաքրել տուաւ: Կը փորէի աթարները
ու զանոնք թիով դուրս կը նետէի: Ոյժերէս շատ վեր էր այդ դործը:
Արիւն—քրտինք կը մանէի ու դժուարաւ կը տակայի: Իէպի կէսօր ան
եկաւ աշխատանքիս նայելու:

— Տղայ, դուն առիւծի կտոր ետ եղեր, աս ի՛նչ շահանի աշ-
խատանք: Քու երկու հասակդ ու տասն ոյժդ ունեցող մը ասանկ
չ'աշխատիր: Ա՛լ քեզ ընա՛ւ չեմ ձգեր որ ուրիշ տեղ երթաս: Միշտ
իմ քովս կեցիր, — ըսաւ:

Գոմը աւարտեցի: Տան բոլորի արտին թումբերէն խոտ կը քա-
ղէի: Կեանքիս մէջ դեռ մանդաղ բռնած չունէի: Կը քաղէի սակայն:

Այդ օրերուն Քուրտերուն մէջ կրկին դէպք մը պատահած էր:
Աւագակապեա ձալլօն, որ յոնձնուած էր Թուրքերուն, փախեր էր
նորէն: Տիվրիկի կատարած ժանտարմաներուն հետ կռիւի բռնուած էր
ան: Երկուտեք մարդ ինկած էր: Ինկած էր ինքը, ձալլօն ալ: Ժան-
տարմաները նորէն աշիրէթը դրկեր էին ու կը նեղէին դայն: Լուր
եկաւ թէ անոնք Քուրտուր կու դան: Նետեցի մանգաղս ու դեղին ե-
ղերքը քաշուեցայ: Գեղացիները անկէ անցնելով լեռ կը փախչէին:
Կիւլիզար հարսաս անոնց հետ էր: Գեղապետը, Մէմօն, զիս տեսաւ
ու բարկացաւ:

— Գնա՛ սա տեղերէն, կորսուէ, ա՛յ փորձանք Փլա, — ըսաւ
ինձի: — Գան քեզ բռնեն, քու երեսէդ մեր տունն ու տեղը կը քան-
դեն եւ մեզ կը սպաննեն:

— Էյ, Մէմօ՛, — պոռացի անոր, — բերանդ քեզ ժողովէ ու դնա՛

կորսուէ : Լեռ է հոս , հօրդ տունը չէ , լեռը իմս է : Քու սուլթա՛նդ չի կրնար դիս անկէ հանել :

Կիւլիզար հարստս մէջ ինկաւ : Աղաչեց որ լռեմ : Անպիտան Մէմօն քթին տակէն մուրապով կ'երթար :

Մէջուտի կոնակի բլուրներուն վրայ , բարեկամիս , Թօփալ Ալի պէկի դամբ վացի : Զիս տեսան , վրանին լոյս իջաւ : Հայր ու զաւակներ կը սովէին դիս՝ թէ այլեւս քաջ ասպատակ մըն եմ :

— Ո՞ւր ես , մէջտեղ չկաս , միասին պաշտինք ,— կ'ըսէին :

Ալի պէկ դիս շատ կը սիրէր : Ան երկա՛ր խօսեցաւ ինծի հետ : Անկողին ձգեցին , պառկեցայ : Ինծի ըսին թէ Թէմիրի մեծ տղան , ձանօն դիս կը փնտռէ ատենէ մը ի վեր : Ան քիչ մը ալիւրի համար իր հօրեղբայրը , Կէնճօն սպաննած ու հօրը Մէջուտի տունը ապաստանած էր : Ի՛նչ բախտ էր որ հօն չէի այն ատեն : Զի՛ս պիտի մեղադրէին :

Առտուն կանուխ , երբ աչքերս բացի , տեսայ որ մէկը , մաւղէրը կոնակը՝ կեցեր է անկողնիս վրայ , ինծի կը նայի եւ ուրախութենէն կը խնդայ :

Ձանօն էր ան :

Ձանոյին հետ տուն դացինք ու վիշերպնայ (չղջիկ) եղանք : Իմ ունեցած աի մը ալիւրս շարաթ մը կերանք ամբողջ ընտանիքով : Անկէ սկսանք գիշերները շրջիլ ու սովութիւն ընել : Կը բերէինք եղ , ուլ , այծ : Թէմիր ամէն օր ջաղացքն էր : Անկէ կու վար տուն , իր բաժինը կ'ուտէր , կը սովէր մեղ ու կ'երթար : Այսպէս էին Թէմիրին տան բոլոր անգամներն ալ :

Օր մը Ձանոյին հետ Փէհլիվանը փնտռելու դացինք , որպէսզի թալէաթի եւ հօրը պատուէրը յայտնեմ անոր : Զինքը գտանք Հուսիկի Տղիկի ձորամէջի տունը : Փոխուած էր ան : Ուքին գեղեցիկ , երկար գուլպաներ , գլխուն նոր Ֆէս ու եագմա : Հուսիկէն դատ ուրիշ ընկեր ունէր ու միասին կողոպուտի կ'երթային : Ան շատ գոռոզ էր : Քուրտերը իրեն «փաշա» կ'ըսէին : Ի՛նչ լաւ բան , մտածեցի , կը թողուն որ հարստանայ , որպէսզի վերջէն սպաննեն ու կողոպտեն , նման մտացու անասունի մը , զոր մորթելէ ատաջ կը պարարտացնեն :

— Մեր մէջ քեզի բնաւ վտանգ չի հասնիր , ոսկին աւրէ , բայց հաճոյքդ մի՛ աւրեր , Փէհլիվա՛ն փաշա ,— կը շողոքորթէր դինք Տլույի աղան :

— Իմ նպատակս է փառքով ապրիլ , քա՛ջ ապրիլ ու քա՛ջ մեռնիլ ,— կ'ըսէր ան :— Մահէն վերջ գիակս թող շունե՛րը ուտեն : (*) Ի՛նչ փոյթ : Հերիք է աչքս չտեսնէ :

Իրեն հասկցուցի Քուրտերուն ի՛նչ դաւադիր բլլալը : Ան շատ

(*) Փէհլիվանի այս խօսքերը մարգարէութիւն եղան : Գիակը յետագային իրօք որ շուները կերան :

խօսք լսել չէր ուզեր ու կը բարկանար: Տղէտ մարդ էր: Կ'ուզէր որ իրեն փաշա ըսուի, անկէ անդին ի'նչ կ'ուզէ ա'ն ըլլայ:

— Ծերուկը եւ տղաքը Չարա դացին: Ինձմէ խնդրեցին որ քեզի իմացնեմ — դուն ալ երթաս, ըսի: Մեղքը վերդ: Կ'ըսեմ քեզի: Գնա': Քեզ կ'ուտեն:

Ան պահ մը մտահոգ խորհելէ վերջ,

— Քիչ մը դրամ շահիմ, վերջէն կ'երթամ, — ըսաւ:

— Մինչեւ դուն դրամ շահիս, անոնք կաշիդ կը հանեն, — ըսի: Ծուռ-ծուռ նայեցաւ:

Մեզ պանիրով հիւրասիրեցին հող: Բաժնուեցանք:

— Երբ որ կողոպուտի երթանք, — ըսաւ մեզի Փէհլիվան, — ես ձեզի լուր կու տամ, միասին եկէք: Քիչ մը բան ալ ձեր ձեռքը թող անցնի:

Ճանոցին հետ տուն դարձանք:

Տիվրիկը տաք է: Հունձըը հոն կանուխ կը հասուննայ: Մէջուացիները կ'երթային քաղաքէն ու շրջակայ դեղերէն հասած արտերուն հունձքին գլուխները(*) կը քաղէին ու կը բերէին հաց կ'ընէին: Քանի մը Քուրտի հետ մեր դեղին կողմերը հասկ դողնալու դացի:

Չորս ընկերներ էինք մենք: Աստուծոյ ելանք Մէջուտէն ու իրիկուան Տիվրիկի դեղերէն Ձնսկի հասանք: Արտերու մօտ, բարձունքի մը վրայ, կանդ առինք, մինչեւ մթնեց: Դաշտը իջանք ու արտ մը մտանք: Արաղ-արաղ հասկերուն գլուխները կը փրցնէինք ու մեր սլարկերը կը լեցնէինք: Կը թնդէինք արտերը ու կ'անցնէինք արտէ արտ: Հեռու, գեղին շուները կը հաջէին: Մեր ի'նչ հողը: Պարկերը լեցուցինք, շալկեցինք ու ճամբայ ելանք:

Կէսօրին Նորչէն թուրք դեղին դամերը հասանք: Հոն Քէօր Ապտուլլահ Թուրքին տունը առանձին ձորի մը մէջ շինուած էր:(**) Ծուրջը դեղեցիկ անտառ ու պողատու ծառեր կային: Քէօր Ապտուլլահ դող ելած մեր առջին վազեց ու մեզ տուն հրաւիրեց: Մեզի առատ մածուն, պանիր, կարագ, թան եւ իւղ հրամցուց: Հաց չունէր:

Գիշերը Մէջուտ հասանք: Չորցուցինք հասկերը, հատիկները դատեցինք: Աղացինք ու հաց ըրինք: Թերմակ, աղուօր հաց մը եղաւ: Ատեն մըն ալ ատով ապրելէ հօքը ելանք Ճանոցին հետ Փէհլիվանին դացինք:

(*) Այդ գլուխիմ կ'ըսէինք խալամ:

(**) Քէօր Ապտուլլահ, հայուքեմէ դարձած այդ նորշէնցի խարտաշ, գեղահասակ ու սիրուն Հայ մըն էր: Միա'ի նորշէնցիմ, որ տեսած ըլլամ:

ԴԱՐՁԵԱԼ ԱԻԱԶԱԿ

Փէհլիվանի համբաւը աշխրէթին մէջ տարածուած էր այլեւս : Նոյնիսկ անոր մասին անիրական առասպելներ կը պատմէին՝ իր քաջութիւնը դրուատելու դիտումով : Ան Տղիկի միացած, տասներհինգ հազիւոց խումբի մը զլուխը անցած էր : Մենք դանոնք դասնք փոքրիկ դեղի մը մէջ : Յաջորդ օրը կողոպուտի պիտի երթային :

Առաուն էթոյին դեղէն ճամբայ ելանք : Բարձրացանք Սարձաղէլի ժեռուտ մէջըր : Հորիզոնին հետ կ'անցնէինք անկէ ու հեռուէն դիտողին, ամէնս մէյմէկ շարժուն եղելիններու կը նմանէինք : Հրացանները արեւին տակ անոնց կանախներուն վրայ կը փալիւլէին :

Անոնցմէ՛ միայն կարելի էր հասկնալ թէ ո՞վ էինք մենք : Լեբան տեսքը մեզի կարծես թեւեր կը բուսցնէր : Մեր քաջութիւնը աճած էր : Մենք մեզ աշխարհի տէրերը կը կարծէինք : Ինչո՞ւ չըլլար այդպէս, քանի որ պատանքնիս միասին կը պառացնէինք : Կը կատակէինք ու կը խնդայինք : Իրար կը ծաղրէինք եւ ուրախ-ուրախ, կամաց-կամաց կը քալէինք : Քանի՛ բարձրանայինք, հորիզոնները կը լայննային հեռուն : Անտառներ ու դեղեր, արտեր ու բլուրներ, ձորեր ու գետակներ, ու դարձեալ, ու դարձեալ... Լեբան հովերը մեզի կու տային ի՛նչ համբոյրներ ու կը փսփոային ինչե՛ր, ինչե՛ր...

Լեբան վրայ Թուրքի մենիկ տուն մը հասանք : Ան թէեւ հարուտ էր, սակայն կողոպտուած : Մաքի մը մորթեց ու մեզի հոյակապ ճաշ մը տուաւ : Կէսօրէն վերջ ճամբայ ելանք ու ժեռուտ կածաններէ բարձունք մը հասանք : Վարը, ձորէն, դետակ մը կ'անցնէր : Շուրջը հասուն արտեր ու կաղնեստաններ : Բլուրի մը վրայ լայնահաս խոշոր տուն մը :

— Ահա ա՛ն է մեր աւարը, հո՛ն պիտի երթանք կողոպուտի, — ըսին ընկերները մեզի, ցոյց տալով այդ տունը :

Փութով խումբը երկուքի բաժնուեցաւ : Կէսը ժայռերուն մէջ դիրք գրաւեց, մնացած կէսը խոյացանք վար : Փէհլիվանը, ձանօն, Խտօն, ես եւ ուրիշներ : Խտօն այդ տան հետ հին հաշիւ ունէր : Ան վարպետ դող էր : Երբ տունին մօտեցանք, Փէհլիվան փոխուեցաւ : Ան սկսաւ դարհուրելի երեւալ : Մոնչեց ու ցատկեց, մենք իր ետեւէն : Պաշարեցինք տունը առանց ճանճ մը փախցնելու : Մարդերը վախցան, աժդուեցան, ու սկսան դողդալալ : Տանիքին վրայ դրինք երկու պահակ : Ես կեցայ դուռը : Ձանօն ու Փէհլիվանը մտան ներս : Փէհլիվան մեզի պատուիրեց :

— Արթո՛ւն կեցէք : Ներսէն մա՛րդ չիխախի : Դուրսէն ալ եկ՛ող չըլլայ :

Մենք ներսէն կը լսէինք աղաչանքի ու ողբուկոծի ձայներ : Քիչ վերջ թեւերէն բռնած դուրս բերին դեղեցիկ ու վախէն տփուրնած երիտասարդ մը : Անոր մանկամարդուհին կ'աղերսէր լալազին :

— Ձեր արեւին, ձեր արեւին, մի՛ սպաննէք դանի, մի՛ սպաննէք :

Մայրը կու լար ու մագերը կը քաշէր :

— Աս ի՛նչ բան եկաւ մեր գլխուն, աս ի՛նչ բան եկաւ մեր գլխուն :

Պատն աւանջիս փոփոսց սր յայտնեմ իր ինքնութիւնը անոնց : Երբ լսեցին թէ ան Պատն է, անոնց դարհուրանքը կատարեալ եղաւ : Տղան կալին վրայ, խուրճերուն մէջ սրահած իր գէնքը յանձնեց : Ներս դացին միասին ու սակարկութեան սկսան : Ես դուռը թողուցի, կաթնատուն մտայ : Քառատուն կոյլակ կաթ մակրդեր էին : Պանիրները մաշկերով անկիւն մը դրեր ու նոր քաշուած կակուղ սերերը սերէ աւելին վրան շարեր էին : Ժողովեցի կակուղ սերերը ու աղոցը տարի : Ներսը սկսեր էին մեզի համար հաց եփել : Ներս մտայ հաց առի եւ կեղարը (մառան) մտայ եւ իւղերուն բերանները կը բանայի, տանտիկինը եկաւ ու աղաչեց :

— Մեր տուններն ալ ասանկ չէն չէի՞ն, որ աւերեցիք, շունե՛ր, — ըսի :

Ան դուրս ելաւ ու Փէհլիվանին կը վանդատէր : Փէհլիվան մաղէրը քաշեց ու ետեւէս եկաւ : Ծանօն զինքը շախեց ու ան ետ քաշուեցաւ :

Տունին դուռը կեցած անոնց խոշոր փեթակնոցը կը դիտէի : Մեղունները անուշ-անուշ կը աղղային : Վար նայեցայ, ձորին մէջ, ջուրերուն վրայ, անհամար նախիրը կ'արածէր : Կը մտածէի, արդեօք այս հարստութիւնը իրե՞նցն է, մեզմէ կողոպտած չէի՞ն : Անոնց կոկիկ վրայ-գլուխն ու տարազը մեր դեղը կը յիշեցնէին :

Առատ ուսեստ առած տանը գլուխի աղբիւրը ելանք անտառին մէջ : Հոն մեր բնկերներն ալ եկան ու մեզի միացան : Գրաւուած գէնքի կոթին վրայ տղան մօրը սնտուկին փայլուն դամբրով ծաղիկներ բանած էր : Փէհլիվան ու Տղիկ իրարու հետ վիճեցան այդ գէնքը ունենալու համար : Հրացանը Տղիկին մ'ոսց : Հող առիթէն օգտուելով մեր Փէհլիվանին նորէն յիշեցուցի Քուրտերուն ի՛նչ դաւադիր ըլլալը :

— Եթէ զիս գաղտնի կոնակէս չգարնեն, — կ'ըսէր ան, — առաջ Աստուած ես անոնց քանի մը հատը չկերած չեմ իյնար :

Իրիկուն : Ստուերներ ու հովեր անտառներուն մէջ : Մենք մտանք ժայռուտ կիրճ մը ու կէս ժամ թուխ ու բարձր աղառափներու մէջէն քալելէ վերջ, ժայռերու բերդի մը մէջ շինուած առանձին տուն մը հասանք : Ան աւելի բերդ էր՝ քան տուն : Անոր տէրն էր Քուրտ Հիւսէյին : Այդ բարձունքներուն վրայ արծիւներ ու շահէններ միայն կը թառին : Կը պարտին սարի եղնիկներ : Ու Քուրտ Հիւսէյինի աղաքն ու թռուները անոր անհամար հօտերը կ'արածէն :

Քուրտ Հիւսէյին ծագումով Տէրսիմցի էր : Միջուհասակ, մօրուքը բոց, յօնքերը առատ, սուր, զննող ու անվախ աչքերով ծերուկ մըն էր ան : Մինչեւ այդ օրը կ'ըսէր, ոչ ոք կրցած է դեռ իր տունը

սաք կոխել առանց ինքդինքը բարեկամ համարելու: Հերու ամա՛ռ միայն թուրք ժանտարմաներ մինչեւ կիրճին կէսերը եկած էին: Տղան իմացաւ, հասաւ ու քանի մը գնդակով զանոնք ետ դարձուց:

Տունին քով պղտիկ արա մը ունէր ան, ուր դարի ցանած էր: Այժերուն ցանկապատը ահագին բակ մըն էր: Քուրտ Հիւսէյիւնի այժերը անհաշիւ էին: Գառներն ու սւլերը նմանապէս: Այսքան շատ ոչխար առաջին անգամ կը տեսնէի ես:

Ան իր տղոցմէ մէկուն թուրք Համպէր Օղլուին աղջիկը առած էր: Այն տունը, որ քիչ առաջ կողոպտեցինք: Կանչեցինք աղջիկը, որ դայ ու իր եղբորը գէնքը տեսնէ: Ան ճանչցաւ այդ հրացանը: Ու հպարտ-հպարտ անոր վրայ նայեցաւ:

— Քուրտ Հիւսէյիւն, դուն ալ գէնք ունի՞ս, — հարցուցին անոր աւագակապեաները:

Ան կտրուկ՝

— Հա՛տ մը միայն ունիմ, մեծ տղատ առեր՝ սարն ելեր է: Ահա հոն է, մատով ցոյց տուաւ: Եթէ կ'ուզէք առնել եւ դուք ձեր վրայ կը վստահիք, դացէ՛ք, առէ՛ք:

— Քա՛ւ լիցի, եթէ հարկ ըլլայ, մե՛նք ձեզի գէնք կու տանք, չէ թէ քուկդ կ'առնենք:

Անոր միւս տղան մեր չոր տրեխները ջուրը կը դնէր, որպէսզի անոնք կակուղնան: Ես տրեխներս անոր տուի եւ ըսի.

— Ասոնք աւագակապեալնն են, ամենէն տակը դիւր, որ լու կակուղնան:

Ան ծուռ-ծուռ երեսս նայեցաւ ու հարցուց.

— Ո՞վ է պետը, — ու մինչ ես մատով Փէհլիվանը ցոյց կու տայի, ցուցամատը կուրծքին տանելով ըսաւ, — Դուն գիտե՞ս թէ ես ալ պետ եմ . . .

Մենք զով ձորին մէջ անկողիներու եւ մուշտակներու վրայ նստած, կ'ուրախանայինք: Մերթ աւագակապեաները նշան կ'առնէին քարերուն ու ժայռի բեկորները փշրուելով ձոր կը թափէին: Քուրտ Հիւսէյիւնի զուր աղաչեցինք որ իր տղան սարէն իջնայ եւ հանդիստ ընէ: Ան այդ նիւթին վրայ խօսի՛լ անգամ չէր ուղեր: Ու կտրուկ՝

— Թող սարերուն մէջ կենայ, ան վարժ է ատոր, — կ'ըսէր:

Իրիկուան մեզի առատ եղով ժառժուն, մածուն ու թան բերին: Անոր տղաքը, հարսներն ու թոռները դեզի մը բնակիչ ըլլալու չափ շատ էին ու սեղաններու շարքն ալ նոյնքան երկար եղաւ:

Առտուն արթնցանք ինոցիներու անուշ ձայներէն, որ Քուրտ Հիւսէյիւնի կինը եւ հարսները դուռը կախած կը հարէին: Անոնք այս անգամ մեզի բերին կարագ, պանիր ու մածուն, ա՛յնքան առատ, որ մեր կշտանալէն յետոյ կէսէն աւելին սեղան մնաց:

Մենք շնորհակալութեամբ հրաժեշտ առինք քաջերու օրրանէն:

Այդ օրը Քուրտ Հիւսէյիւնի կունակը ձոր մը անցուցինք: Մեզի հետ քառորդ չափ ձաւար ունէինք: Ընկերոջ մը հետ Համպէր Օղ-

լուի տունը գացինք: Ծառային շալակը տուինք կաթնայ, պնակ, դալ, իւղ, աղ ու ձոր դարձանք: Կաթնան լեցուցինք ջուրով ու դրինք խարոյկին վրայ: Եփեցինք եղինձ ու վրան ալ առատ իւղ լեցուցինք: Բոլորս ալ կշտանալէ վերջ եղինձին շատը տեղը մնաց: Ծառան շալկեց ու գոմ դարձաւ:

Իրեկուան լերան ժայռուս ճամբաներէն թուրք դեղերու մօտ ձոր մը իջանք: Հոն կային լուացքի աղբիւրներ: Խոտն մեղի լուսթէ շարթուան մէջ երկու օր թուրք կիները հոն իրենց լաթերը կը լուան: Ու եթէ հանդիպինք այդ օրերուն, կրնանք առատ աւար վերցնել: Մենք ոստիկանի հովեր առած՝ աստեղազարդ հովիտէն հանդարտ-հանդարտ կը քալէինք: Անվերջ արտերէն յետոյ տուն մը հասանք ու պաշարեցինք դայն: Կողոպտեցինք ու ճամբայ ինկանք: Անոնք մեզ ժանտարմա կարծեր էին ու մեր ետեւէն կ'ըսէին.

— Մեր այրերը գինուոր են, ի՞նչ իրաւունքով դուք մեղի շարիք ըրիք:

Երբ մթնեց, բլուրի մը կողին վրայ դեղ մը նշմարեցինք: Մօտեցանք անոր: Փէշլիվան մեզ կը սաստէր, վաղեցէք, կ'ըսէր, այրերը բոլոր փախան մեր դանդաղութենէն: Մանչեց ու հրացանը բռնած խոյացաւ ան դէպի գեղ: Գեղացիք կալերուն վրայ էին, իրենց անկողիններուն ըով: Իրօք այրերը փախեր եւ սղաք ու կիներ կը մնային հոն: Տանիքներուն վրայ պահակ կեցանք մենք, մինչ աւագակապեաները մէկիկ-մէկիկ տուները կը շրջէին: Այս դեղը Հայոց անդահանութենէն շատ օգտուած էր, իրենց պատմածին նոյնով: Մենք կողոպտեցինք անկողինի երեսներ եւ անոնց հաղուստներն իսկ: Գուռները կը փշրէինք, մինչ անոնք իրենց վախէն կը ճչային: Կաթերն ու մածուանները կը թափէինք:

Աւագակապեաները սուլեցին: Թողինք դեղը, մեր աւարները շալկած: Անոնք մեր ետեւէն կու լային ու կ'անիծէին մեզ:

Կը քալէինք դժուար ու վայրի տեղերէ: Սօսիներով ձոր մը հասանք՝ ջուրի մը ափը ու գետին թափեցանք մրափելու: Երբ լուսացաւ, ամէնս մեր աւարները մէջտեղ դրինք: Աւագակապեաները մեղ խուզարկեցին, որպէսզի դաղտնի բան չպահենք մեր ըով: Մենք առեր էինք կիներու գգեստեղէն, ճերմակեղէն, օղեր ու դարդեր, գուլպայ, ֆէս, մատանի, հաց, իւղ, մինչեւ անդամ ուրաղ ու կային:

Բաժնեցինք զանոնք մեր մէջ: Ես միայն գգեստներս նորոպեցի. ուրիշ բան չառի: Որովհետեւ կը վախնայի թէ ֆուրտերը յետազային ինձի վնաս կը հասցնեն՝ ունեցածներէս շահալով:

Սկսանք նորէն ուրախ-գուարթ Սարճապէլ լեռը բարձրանալ: Մերթ կը հանգչէինք՝ յոգնութիւն առնելու եւ մեզմէ ամէն մէկը գէշերուընէ գէպը մը կը պատմէր: Կատար հասանք, Թէլլոյի տան մօտերը: Խուսբը ցրուեցաւ: Մեր ընկերներէն շատերը իրենց տունները դացին: Անոնք նորէն կը հաւաքուէին, երբ աւագակապեանը կանչէր գիրենք: Ես ու ձմնօ աւագակապեաներուն հետ Էսհայի տունը

զայցինք: Հոն կը պահուէին աւագակապեաներուն գողօնները: Ճաշեցինք ու լերան վրայ ջաղացպան Մահմուտի տունը դայցինք Ճանոյի հետ: Տանտիկինը Ճանոյի գողօններուն կը նայէր ու կը խնդար: Դարձանք տուն: Հոն էր Ճանոյի քոյրը, Կիւլիզարը, որպէսզի անոր կիներ մինակը չի մնար: Կիւլիզար ջուր բերաւ ու մեր ստեղծը լուաց: Ես անոր յանձնեցի զոյգ մը դուլպայ, որոնք Փէհլիվանը իրեն նուէր զրկած էր: Փէհլիվան սիրահարուած էր Կիւլիզարին ու հարսնիքի կը պատրաստուէր:

Քանի մը օր վերջ Փէհլիվանին դայցի՝ հասկնալու համար թէ ե՞րբ երթալու էր իրենց աւարին համար: Զվերադարձայ այլեւս ու հոն մնացի իր քով: Միտոն հաճոյքի եւ զուարճութեան լաւ օրեր անցուցինք: Գեղէ դեղ կը հրաւիրէին, ուլեր մատաղ կ'ընէին ու կոչունքը՝ անպակաս: Քանի մը օրուան մէջ դեղեցկացայ եւ ուժովայ ես: Զդեսաներս ալ նոր էին: Ուստի այլեւս ես ալ սկսայ մարդու կարգ անցնիլ եւ յարգուիլ շատերէն:

... Էտհոյի դեղը, անտառաշատ ձորին մէջ, խնջոյքի: Մեզի համար երկու ուլ մորթած էին: Մեզի միացան երկու անձանօթ երիտասարդներ, որոնք Փէհլիվանին ծանօթ կը թուէին: Գիշերը, ընթրիքէն վերջ, աւագակապեաները մեզմէ չորս հոգի առին ու սկսանք քալել առանց բան դիտնալու: Նորեկները մեզի հետ էին:

Գեղ մը հասանք: Պաշարեցինք Թէմիր անուն ձերուկին տունը, որուն տղան, Ալի, մեզ մատնել ուզեր էր: Աւագակապեաները սկսան Ալին անխնայ ծեծել: Մերկ եւ աղքատ երիտասարդ մըն էր ան: Ես այնքան կը մեղքնայի՛, բայց չէի կրնար բան մը ընել:

Յետոյ տուն մը մտան եւ հարսի մը ճիշերը հանեցին: Առին զայն, տանիք, քովս բերին: Սուր կը ցուցնէին անոր ու անխնայ կը զարնէին: Ան կը պաղատէր ու կը ճչար: Անտէր կին մըն էր: Կով մը եւ երկու փոքր զաւակներ ունէր, բոլորովին մերկ: Կովին իւղը հաւաքած էր, որպէսզի ծախէ ու անով զգեստ ընէ իրենց: Այդ պահած ի՛ւղը կ'ուղէին իրմէ: Զինքը քովս թողին, իրենք ներս դայցին փնտռելու պահուած իւղը: Ան կու լար ու կ'աղաչէր ինծի: Ես կը մեղքնայի եւ սիրա կու տայի, որպէսզի չվախնայ: Կրկին ներս տարին ու ծեծեցին զայն, մինչեւ որ իւղը առին ձեռքէն:

Ելանք դեղէն: Ընկերոջ մը հետ իւղը էտհոյի տունը տարինք լուսադէմին, յետոյ անտառ դառնալ եւ զիրենք դանկու համար: Էտհոյի կնոջ առատ իւղով քավա քէօւպէտի (պիշի) եփել տուինք ու զարձանք խումբին մօտ:

Եղեւիններու գեղեցիկ անտառ մըն էր, դեղի մը վրայ: Ծիւղերը իրարու էին հիւսուեր: Ստուերոտ, զով: Խոտերը կանանչ ու բարձր: Մասրենիներ ու խնձորենիներ: Հոն առատ մէկտիք(*) կար: Կակուղ ջուրերով աղբիւր մը կարկաչելէն կը վազէր: Աղբիւրին մօտ,

(*) Երկար խոտ մը, որուն ծոցը կը կեղուեմ եւ կ'ուտեմ Գուրտերը:

ծառերուն տակ, նստեր էին ընկերները, կը քնանային ոմանք: Պահակ մը մեղի կը սպասէր:

Մեր ընկերներէն երկուքը այդ գեղէն էին: Չափահաս ու ընտանիքի տէր մարդեր էին անոնք: Կէսօրին մեղի բերին «սառն քավաւը»: Մաճին գոգ կողմին վրայ, իւզի մէջ կարմրցուած դառնուկ մը: Իրիկունը այդտեղը լքեցինք ու դացինք ուրիշ անտառ մը դիշերեցինք: Առտուն, լերան վրայ, սուրբ դիերուն քով բարձրացանք: Բոլոր գեղերը կ'երեւէին անկէ: Կէսօրին բլուրի գեղերէն քանի մը կիներ երես դառնուկներ առած Տղիկի կնոջ, Խէճէ խաթունի տեսութեան եկան: Կը հիանային անոր զգեստին, զարդերուն, լեզուին ու ոսկիներուն վրայ:

Այսպէս, օրերով, գեղերը կը չըջէինք հիւրասիրուելով անոնցմէ: Օղը տաք էր: Վախ չունէինք: Հէմոյի չըջանէն նուազ փառաւոր, բայց աւելի հանգիստ էր այս կեանքը:

... Տիվրիկի չըջակայ թուրք գեղերէն, սրոնք կողոպտել սկսած էինք մենք, Փէնտիք գեղին հարստութիւնը առասպելական էր: Խոս, իբրեւ հին ու աղբեցիկ դոց, շարունակ կը գոգէր զայն մեղի: Անոնց սակիները քարիւղի թիթեղներ կը լեցնեն, կ'ըսէին: Կիներու զգեստները սնտուկ-սնտուկ: Արծաթէ կոթերով ատրճանակներ, մատանիներ եւ դեռ ինչե՛ր ու ինչե՛ր: Անոնք Հայերէն կողոպտար էին այդ բոլորը: Աւագակներէն իւրաքանչիւրը յոյսը գրած էր այդ գեղին վրայ, մէկէ՛ն հարստանալու համար: Բայց սրովհետեւ ան մեղմէ հեռու էր եւ վտանգները շատ, կանչեցին Մէջուտի չէքէներն ալ միատին վարնելու դայն:

Օր սրոչեցին, սրպէսզի Մէջուտի չէքէն Տէվէ Եաթաղը գեղին մօտ Ֆարլ լեռը դայ: Երբ իմացանք թէ անոնք հոն հաւաքուեր էին, իրենց քով դացինք, միացանք անոնց: Թօփալ Ալի պէկ, զինուած, խուճրին զլուխն էր անցած: (*) Մէջուտցիներուն բոլոր անուանի մարդերն ալ հոն էին: Ողջագուրուեցանք բոլորին հետ: Ալի պէկ սկսաւ մտերմօրէն խօսակցիլ հետս: Ուրախ էր որ զիս այնտեղ հագուած ու լաւ կը տեսնէր: Խօսեցաւ քաղաքականութենէն ու պատերազմէն լուրեր տուաւ ինծի: Վարչաւ՝ գրաւուած, Պուլկարիա՝ Գերմանիոյ կողմն անցած: Համաձայնականներու դիրքը՝ գէշ: Այդ լուրերը տխրեցուցին զիս: Քովը թերթ ունէր, ԹԱՍՎԻՐԸ ԷՖՖՅԱՍ: (**)

Հանց ու ինծի տուաւ զայն: Չեռքս առի եւ արցունքներս սկսան հատիկ-հատիկ վրան կաթիլթիլ: Ինծի այնպէս կը թուէր թէ ես ողջ-ողջ թաղուած եմ, ու այդ թերթը վրաս դրուած քարն է:

(*) Խե՛ղմ բարեկամ, Թօփալ Ալի պէկ: Զայն Սվազի բաճախ մէջ խնդրած եմ Թուրքերը՝ Զիմադադարէն յետոյ:

(**) ԹԱՍՎԻՐԻ ԷՖՖՅԱՍՐ քրէիքն օրաքերք մըն էր, չափազանց հայտնաց, որ իր հակահայ հրատարակութիւններով թուրք հասարակաց կարծիքը մեղի դէմ դարձուց ու մեծ շուքով 1915ը պատրաստիւն ստարեց:

Ալի պէկի բացատրեցի հողեկան վիճակս : Ան զիս կը հասկնար
ու կը ջանար մխիթարել :

— Գէշ օրերը կ'անցնին, — կ'ըսէր, — զէջ երազի պէս...

Լեռնէն մեզի կ'երեւէին Թուրքերուն դեղերը, մշակուած ու
հասուն արտերու եւ մարդերու մէջ : Մնճան, Ձնակի, Էրուկլի, Օվա-
ճըզ, մինչեւ հեռակայ Չամչըզի կողմերը : Մենք կը նայէինք անոնց
ամենուն, ու կը թուէինք անոնց հարստութիւնները եւ զանոնք կո-
զուպտելու յարմարութիւնները : Խտօն, Քուրա Ալիպազն ու Մատօն,
երիտասարդ ու անուանի լեռնականներ, ախորժակով կը նայէին այն
տեղերուն ի՞նչ ու ի՞նչ երազներով : Խումբը յիտուն հողի եղած էր :
Ան լերան վրայ ազդիւր մը դնաց : Մենք վեց հազի, հիներէն, իջանք
Տէվէ Եաթաղը դեզը՝ խումբին հաց ճարելու : Մեզի հետ էր Փէհ-
լիվան : Ան Տզիկի հետ այդ դեզը դեռ նոր կողոպտած եւ անոնց սար-
սափ աղւած էր : Մենք կրակի պէս լեռնէն վար իջանք ու հարուստ
Սէյտօյի տունը մտանք : Փէհլիվան մեզ զատ-զատ տուները ցրուեց,
որպէսզի առանձին գործ տեսնենք : Ներս մտայ տունէ մը սուրս
բռնած, աղջիկ մը վիզս փաթթուեցաւ ու պրոաց — հօրեզրայր :
Ան զիս իրեն գինսուր հօրեզրօրը նմանցուցած էր : Տնեցիներն ալ
խաբուեցան ու եկան շուրջս լեցուեցան : Այլեւս չկրցի վերենք նե-
զել : Գոհացայ իրենց կամաւոր տուածներովը :

Հասանք խումբին : Ճաշեցինք միասին : Լերան մէջ Սէյտօյի
դամը պացինք քնացանք : Առտուն անկէ ելանք ու Օվաճըզ դեզին վրա-
յի բարձր անտառները մտանք : Հոն սպասեցինք մինչեւ իրիկուն :

Հոն արտերը աւելի մօտ էին մեզի : Հոնձքերը դեզին ու սո-
կի էին այլեւս : Քաղուորները խումբ-խումբ արտերուն երեսները
կ'ածիլէին փութով : Խուրձ կը կապէին ու անասուններով զանոնք կը
փոխադրէին դեզ : Ես կը նայէի այդ բոլորին կարօտով ու իմ գեղս
կը յիշէի :

Իրիկունը Օվաճըզի Թուրքերուն Թիլքի անուն դամբ չորս աղայ
դրկեցին արկածախնդիրներէն՝ հաց բերել աալու համար : Անոնք ու-
շացան : Տեսան որ դամբ ժանտարմաներով լեցուն է : Սկսան կրակել
անոնց վրայ : Անոնք պատասխանեցին մեզի : Փէհլիվան կը կրակէր
ու կը խոյանար մոնչելով : Գնդակները կը սուլէին մթնշաղին մէջ,
զլխուս վրայէն ու ականջներուս տակէն : Մթնեց : Կուրը վերջացաւ :
Կորսնցուցինք զիրար :

Քովս մնացին չորս մէջուտցի անփորձ աւազակներ : Իրենց վա-
րէն կը դողային անոնք շարունակ ու ինծի կը հարցնէին թէ ի՞նչ
պիտի ըլլայ : Ես անոնց վրայ կը խնդայի քրքջալիւր : Անոնցմէ մէ-
կուն ձին Տէվէ Եաթաղը էր : Կ'ուզէր երթալ փախցնել գայն, բայց
կը վախնար : Առաջն ինկայ ու զինքը հոն տարի : Սարի կողին, ան-
տառներու մէջ, ուլերու հօտ մը տեսանք մակաղած : Ուլարածները,
աղայ ու նշանած, զլախ-զլախ թուփ մըն էին մտեր : Իրենց հետ ա-
ռատ իւղ ունէին : Հրացանի ձայներէն հող էին ապաստաներ, իւզն

ալ միասին փախցնելով: Ինծի կ'ազաչէին դողալով, որպէսզի զիրենք չզարնեմ: Ես բաւակահանացայ առատ իւղ վերցնելով, ինչ որ սիրով տուին: Տէվէ Եաթաղըյէն ձին առինք: Ֆուրլի կատարն հասանք: Տէրը կը դողար շարունակ ու շուրջը կը նայէր: Իմ մէջն վախ չկար: Ես, մեր դեղին հողագործ հարսներուն ըսածին պէս, հովերուն հովեր, ցրտերուն կոկեր էի: Յուրա իրիկուն մը, երբ անոնք կը դառնային դաշտն եւ ես իրենց կը հարցնէի թէ չե՞ն մտիք, անոնք ինծի այդ պատասխանը կու տային՝ «Սուրպա՛ն, մենք հովերուն հովեր, ցրտերուն կոկեր ենք»: Թոայ ձին հեծայ ու կատարի հովերուն չափ արագ կը քշէի դայն երգելով: Մէջուտի մօտերը տարի զինք, ձին յանձնեցի ու դարձայ մեր անառու: Մեր որջը, աւազակապեա Տգիկի կնոջ ու պահակներուն քով: Հոն, կաղնիի ճիւղերէն մեզի ապաստան շինեցինք ու կեցանք օրերով: Իսհոյին դեղէն կաթնայ բերինք ու լուացք ըրինք անառուին մէջ: Հացը եւ իւղը առատ էր իրենց քով եւ մենք հոն պարարտ կ'ապրէինք:

Գանի մը օր վերջ Փէհլիվան ու Տգիկ աւազակապետներն ալ դարձան: Փէհլիվան իմ փախչելու համար զիս աչքէ ձգած էր ու ծուռ նայիլ սկսած ինծի: Իրիկունը Մէրկիզէր վացինք ու հոն դիչերեցինք: Աւազակապետները իրենց սիրողներն ունէին այնտեղ, դեղեցիկ հարսեր, ու անոնց տուները վացին: Առտուն դեղապետին տղան մեզ ճաշի հրաւիրեց ու պատուեց երկիւղածաբար: Տգիկի ձորին տունը կը դառնայինք: Խուժքը ստուարացած էր: Սոս, Մսոս եւ Ալիպաղ աւազակները սկսած էին միշտ մեզի հետ շրջիլ: Փէհլիվանի պետի հանդամանքը կտորեցին անոնք, աւելի քաջ անկէ:

Ձորն ի վար կ'երթայինք, Փէհլիվան մօտեցաւ ինծի:

— Կը խօսին թէ խումբին մէջ Հայեր կան: Վնասարեր է այդ մեզի: Դուն որ չըլլաս՝ զիս չեն ճանչնար: Գնա՛ թէմիրին: Հոն իմ վախէս քեզի բան ըսող չ'ըլլար: Ես կը զրկեմ հագուստ եւ սնունդ ու քեզ կը հոգամ այնտեղ: Կիւրիզարին ալ հո՛գ տար եւ բարե՛ւ ըրէ:

Թէեւ սասկալի տխրեցայ, բայց ի՞նչ օգուտ: Գլտէի թէ անոր խօսքը մէ՛կ անդամ բերնէն կ'ելլէ: Ես ինկայ: Մալդէրը շալկած, գլխուն ալ Փէս, աւստրիական ժանտարմայի կանանչ համազրեատով ու կաշիէ լայն դօտին մէջքը, գլուխը քիչ մը կախ ու ցրուած ու մտածկոտ, կ'երթար ան խումբին ետեւէն: Անգամ մըն ալ ետ դարձայ ու իրեն նայեցայ: Եւ այլ՝ զինքը վերջին տեսնելու եղաւ: Վե՛րջը միայն հասկցայ թէ ինչո՞ւ անոնք զիս ճամբեր են: Որովհետեւ չեն ուղած զիս ալ սպաննել Փէհլիվանին հետ: Ճամբան արտէ մը վրիկ քաղեցի եւ հատիկները դատելով կ'երթայի: Թօփալ Ալի պէկի տղան հասաւ ինծի:

— Մի՛ մտածեր, լաւ՝ որ հեռացար, — ըսաւ, ու բաժնուեցաւ Մէրկիզէ զնաց:

ՓԷՀԼԻՎԱՆ ՍՊԱՆՆՈՒՄՑ

Խուճբին մէջ վերջերս շատ կը խօսուէր Սրմայի տունը կողմագտելու մասին, որուն ես դէմ արտայայտուած էի: Այդ բանը պատրուակ ընելով Թէմիրին դարձայ, որ ջաղացք ալ ունէր: Բարի ծերուկը ջաղացքին մէջ կեցեր էր մարդերու հետ, քարը կը դառնար ու ինք անոր կը նայէր: Բարեւէն վերջ, զիս տխուր տեսնելով.

— Խե՞ր է, լօ՛ւ, — հարցուց:

— Այս գիշեր աւազակները աներձադիզ Սրմային տունը պիտի թալլեն: Ի՛նչ որ ըսի՝ օգուտ չըբաւ: Կոտեցայ ու հեռացայ եւ եկայ սր քեզի լուր տամ: Փէհլիվան ալ իմ կողմէս է: Ծուռով Սրմային լուր տար:

Թէմիր անչափ ուրախացաւ իմ հաւատարմութեանս համար: Քլխով ըբաւ ու զիս ասն զրկեց: Կալին վրայ վիկ կը հանէին: Ես սկսայ կամենել վիկը: Յաջորդ իրիկուն ձանձն եկաւ:

— Երէկ ըու մեկնելէդ վերջ ինչե՞ր են եղեր, — ըսաւ ան: — Խուճբը կէսօրէն վերջ կրկին Մէրկիզէր է դարձեր: Հոն Տղիկ Տլոյին հօրեղբայրը սպաններ է՝ հակառակ Փէհլիվանի ընդդիմութեան: Իրիկուն, Տղիկ Փէհլիվանը որպէս թէ հացի կը գրկէ Մէրկիզէ, Մէհմէտի Ջէրոյի տունը, Խասյի, Մասոյի ու Ալիպաղի հետ: Երէկ իրիկուն մթնշաղին էր, զէնքի ձայներ եկան, դուն հոս չլսեցի՞ր: Թուճաներու տան մօտի ճամբուն վրայի խոշոր սուրբ տօռախին(*) տակ ուս վերջինները Փէհլիվանը դարկեր են:

Ամենէն տառջ Ալիպաղ, ան սր առջի ձմեռ ինծի կու լար թէ երգրում զինուոր եգած ասան ախամայ հինգ կլխամեռ Հայեր գնդաւահարած է, ետեւէն, Փէհլիվանի զլխուն գնդակ մը կ'արձակէ: Փէհլիվան կատղած, ետեւ կը դառնայ, ծունկի կու դայ, կը շոկէ մովզէրը, սր զանոնք գործէ, ճակտին արիւնը աչքերը կը գոցէ ու չի տեսներ: Անոնք շուարած, սահմոկած կ'ըլլան: Երեք անգամ արադօրէն կը սրբէ արիւնը ու զէնքը կը շոկէ, նո՛րէն անօգուտ: Արիւնը աչքերը կը գոցէ: Մինչ ալ անոնք երեք հրացանները մէկ վրան կ'ուզէն ու կը փռեն գայն գետին: Տեսայ անոր ինկած տեղը, ամիսներ վերջ: Կատաղութենէն հողը խածեր էր եւ լայն տարածութեան վրայ հերկեր գայն:

Առտուն Մէրկիզէի հակառակօրդ Քուրտեր կու գան ու հաղուստները կ'առնեն կը տանին: Ծուները դրացի դեղերէն կը վաղեն դիակը յօշոտելու: Աղբիւր մը կար հոն, քովը, ձորին մէջ, որուն ջուրերը ամառէն ցամբած էին: Գիշակեր շուները անոր թաց հողը ծծելով, նորէն ջուր էին բերեր անկէ:

Հողը խածնելու կարգը իմօ էր: Օրերս կը համբուէին:

— Քեզ բնաւ ողջ պիտի չլթողուն, — կ'ըսէր ինծի ձանձն, —

(*) Տօռախ = քրտերէն մարխ, դի կը ճշմանկէ:

ու հո'ն ուր քեզ ձեռք անցընեն՝ կտոր-կտոր պիտի բզկանն Տղիկի մարդերը :

Թէ՛միր կ'ուզէր զիս քանի մը օր տունը պահել գաղտնի, մինչեւ աւարակներուն ինծի հանդէպ ունեցած տրամադրութիւններուն յայտնուիլը : Ծանօն կ'ուզէր որ երթամ կրկին հասկ գողնամ-բերեմ : Ես նո'րէն հասկ գողնալու կ'երթամ ըսելով չուան ու պարկ, կրակ ու դանակ առի եւ հեռացայ տունէն : Մտայ անտառները, սրպէսզի իրիկուն ընեմ օրը :

Գիշերը խոշոր լուսնկայ մը կար : Անոր լոյսով ուղղակի Քումսուր, Սրմային տունը դասցի : Գեղին շուները զիս յամառօրէն հետապնդեցին : Ներս մտայ ու տեսայ որ ուշ գիշեր անոնք շտապով հաց կ'եփեն :

— Օճախիկ'ր, Տղիկը հոս է, քեզ կը սպաննէ, դուն ինչպէ՞ս չվախցար ու հոս եկար, — ըսաւ Սրման ինծի :

— Թո'ղ սպաննէ, հոգս չէ : Մեռնիլը մէ'կ անգամ է : Հիմակ Փէհլիվան ա'լ ցաւ չ'զրար, — պատասխանեցի անոր :

Հուսիկի Տղիկի խումբը տունէն փախեր էր՝ շուներու ձայները առնելով : Սրման դուրս ելաւ ու կանչեց զանոնք տանը գլուխէն, «Բան չկա'յ, բան չկա'յ, եկէ՛ք» պոռալով : Ես չփախայ : Կեցայ հոն : Տղիկը, Խտօն ու Ալին ներս եկան : Անիջապէս որ զիս տեսան,

— Լօ՛, դուն հոս ի՞նչ դործ ունիս, ողջ մնալու ի՞նչ իրաւունք ունիս, — ըսաւ Խտօն ու սուրբ բռնած վրաս եկաւ :

Անիջապէս Ալին անոր դէմ վազեց, «Ձդէ՛, մի՛ դպչիր» պոռալով : Անոնք նստան ու Ալին պատմեց թէ ի՞նչպէս ես Փէհլիվանի անխորհուրդ սխրագործութիւններուն դէմ էի : Եւ թէ ի՞նչպէս օր մը, երբ Փէհլիվան մաւզէրը քաշած կ'ուզէր Ալին դարնել, ես դէմ էի եկեր անոր, «Խե՞նթ ես դուն, այս խեղճէն ի՞նչ կ'ուզես» ըսեր եմ ու Փէհլիվան գէնքը առած իմ ետեւէս ինկած է՝ զիս դարնելու համար, թողլով որ Ալին փախչի :

Այս խօսքերուն վրայ Խտօն ինքզինքին եկաւ ու Տղիկ ալ ինծի սիրտ տուաւ որ չվախնամ : Ես ուսերս թօթուելով՝

— Ի՞նչ պիտի վախնամ : Կ'ուզեն թող գարնեն, ես արդէն փրկուելիք չունիմ : Այսօր մեռնիմ աւելի աղէկ է, — ըսի :

Անոնց ճաշին ստեն, ես մէկ կողմ քաշուեցայ-կեցայ : Ի՞նչպէս անոնք աչքերուս սոսկալի կ'երեւէին : Տակաւին քանի մը օր ստաջ Փէհլիվան անոնց հետ էր : Հիմակ անոր սուրբ մէկը առած, գէնքը ուրիշ մը : «Ասիկա կը ճանչնա՞ս», ըսաւ ինծի Խտօն, ցոյց տալով Փէհլիվանի կաշիէ բօտին : Անոնք հացէն վերջ դացին :

Սրմայի հետ մենք ճաշի նստանք : Սրման սկսաւ .

— Անօրէնները, Քրմանճ, ինծի լուր բերին, երէկ գիշեր, ու գէնքը ձեռքս կը սպասէի, եկող չեղաւ : Այս գիշեր ալ հակառակը, քունս տարեր էր, արթնցայ որ տունս լեցուեր են :

Սրմա տանը դուռը անկողին ձգեց ինծի ու պահեցայ : Յան-

կարծ մէկը պտուց ու դիւ արթնցուց : Տեսայ որ ան սուրը ձեռքը դիւ կը հանէ, որ տանի քիչ անդին սպաննէ : Միսս կը միտէր դայն : Ես պտուցի : Սրման վազեց եկաւ ու սկսաւ չախել դայն :

— Մտտո՛, ի՞նչ է աս, լօ, դուն իմ տունն արի՞ւն պիտի ընես, — կ'ըսէր անոր : — Ձեմ ձգեր հոս : Ուրիշ տեղ որ հանդիպէիս իրեն, ուղածդ ըրէ :

— Քալէ : Հետս երթանք, — կ'ըսէր ան, — տեսնենք Փէհլիվանի դրամները ո՞ւր պահած ես :

Սրմա նորէն չթողուց : Անո՛ր ալ դուռը անկողին ձգեցին եւ իրարու մօտ պռոկեցանք : Մտտոն մազկէրը գլխուն տակը դրաւ :

Ուզեցի դայն առնել-փախչիլ, չհամարձակեցայ վախէս, Ձարեհի ճակատագիրը մտարեբերով :

ՄԵՐ ԼԵՌՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՍԵՆՈՅԻՆ ՀԵՏ

Առտուն Մտտոն մեկնեցաւ : Ու Սրման սկսաւ ինծի խորհուրդներ տալ :

— Եթէ դուն իմ անկեղծութեանս կը հաւատաս, անցի՛ր-գնա՛ աշիրէքէն, քեզ հոս այլեւս ողջ պիտի չթողուն, — ըսաւ ան : — Գնա՛ լեռ, Կարօ՛ն գտի՛ր, ի՛նչ կ'ընես ըրէ :

Ես հաւատացի անոր : Բայց ինչպէ՞ս մինակ երթալ : Մտածեցի Սէնօն ալ հետս տանիլ : Մէջուտ, Սէնոյին աշխատած տունը դացի : Տան մեծը բարեկամս էր, ինծի տարեկից երիտասարդ մը :

— Լեռնէն ուզողակի քեզի կու գամ, — ըսի անոր : Հոն մեծ եղեմ մորթեր, քերթեր ու միսն ու կաշին քարկտոցի(*) մը մէջ պահեր եմ : Ահագին եղ մըն է, կաշին շատ տոկուն : Թէմիբին չըսի, որովհետեւ ան կ'առնէ ու ինծի բան մը չի տար : Քեզի կը բերեմ, փոխարէնը ինծի քիչ մը ալիւր տուր :

— Գարի, ցորեն, իւղ, ալիւր, հաց, ինչ որ ուզես ան կու տամ, — ըսաւ ան :

— Պէտք է Սէնօն հետս գրկես, որպէսզի այս դիչեր երթանք դայն բերենք : Սէնոյին տուր դանակ, աղ, կրակ, պարկ մը եւ չուան :

— Ազն ու կրակը ի՞նչ պիտի ընես, — հարցուց ան :

— Կ'անօթեանք ու միս կ'եփենք :

Ես Մէջուտի մօտ, անտառին մէջ տեղ մը որսչեցի, որպէսզի Սէնօն հոն գրկէ, երբ ան կէսօրին հօտը տուն բերէ : Անտառն էի : Իրիկուն կ'ըլլար : Ուշացաւ Սէնօն : Թուփերէն անցայ որ մինակս լեռ երթամ : Տեսայ որ Սէնօն քիչ անդին կը սուլէ ու կը պտրտի : Ձիւ կը փնտռէ :

(*) Քարկտոց = արտիճ փարք տեղ մը հաւաքելով վրայէ վրայ կը լեցնեն քրգածի : (Փար-կոյտ-ոց) :

— Քիչ մնաց որ յուսակտուր ետ երթայի, — ըսաւ ան :

Նստանք ծածուկ թուփերուն մէջ :

— Քուրտերը Փէհլիվանը զարկին : Մեզ ալ մէջտեղէն սլտի վերցնեն, — ըսի անոր : — Լեռ կ'երթամ : Եկո՛ւր հետս : Թէ ոչ կը սպաննուիս հոս : Երէկ գիշեր դիտ քանի՛ անդամ բռնեցին որ սպաննեն :

Ան համոզուեցաւ, քիչ մըն ալ դող ելաւ : Գիշերը թուփէն ելանք ու Մէջուտի քով զարիի արտ մը մտանք՝ հունձք քաղելու : — Պո՛ւմ, մեր վրայէն դնուակ մը անցաւ : Հոն տափեցանք : — Պո՛ւմ . . . հատ մը եւս : Ելանք սողալով անտառ մտանք : Սկսանք փախչիլ անտառներն ի վեր : Սարերէն մեր լիռները կ'երթայինք :

Կրկին թափառական, լեռներուն վրայ : Գէշ բախտով մը, որուն հեռանկարը կը ծածկէի Սէնոյէն :

— Ես, — ըսի անոր, — որպէս չէ՞ք, ծանօթ եմ չըջակայ գեղերուն եւ ամենէն ալ դիւրութեամբ հաց կ'առնեմ : Հիմակ կ'երթանք Ճարլ, Տէվէ Եաթաղը, Սէյտոյին տունը : Անկէ կ'երթանք Օվաճըզի մօտ, Փալադեային դոմը : Կ'երթանք Գարամանի, որուն քով կը յուսամ թէ երկու տղայ կենան, Կամմնացի Հայ մըն ալ : Հիմակ հացը ելած է, անօթի չենք մնար մեր կողմերը : Իսկ եթէ չկարենանք Գարամանի քովի տղոց միանալ, այն ատեն պազանի Թէմիրլին կը գառնանք : Կացութիւնը կ'իմանանք : Անկէ կը վարնենք Զարա կ'երթանք, ուր ինծի ծանօթ Հայերը մեզ երեսի վրայ չեն թողուր :

Գիշերը անտառն անցուցինք : Առտուն, Ճարլի վրայ ժողված հասկերն ու հատիկները խարեցինք եւ սլարկերը լեցուցինք : Ես հան կը ցուցնէի Սէնոյին իմ պարտած տեղերս, երբ աւաղակ էի : Տէվէ Եաթաղի քով, գեղին վրայ, աղբիւրին մօտ նստել էինք իրիկունը, երբ ձայներ առի : Թուփերը սողացինք : Յածուկ չէ՛ք մնեքը^(*) վեր առինք եւ անոնց տակ մտանք : Տղիկի աւաղակներն էին անոնք, գեղը հացի պացոզ :

Մեզ չտեսած անցան անոնք : Հակառակ պարագային հոն մեր արիւնը դիւրութեամբ կը խմէին :

Մթնոց : Մեր գործի ատենն էր : Երկար դուլպաներս մինչեւ ծունկերս քաշեցի : Թաղնայիս^(**) վրայէն հազմայի երկար սուշ մը թողուցի՝ պատկառելի ըլլալու համար : Ու Սէնոյին առաջն ինկած խիզախ մտայ դեղ : Գացինք Սէյտոյին տունը :

— Ո՞ւր է տանաէրը, ձեր այրերը ո՞ւր են, — հարցուցի կնոջը (անոնք իրենց մաւզէրներով անտառ փախած էին մեր ձայներէն) : — Մեր ընկերները իրաւ է թէ քիչ առաջ եկան հաց տարին խումբին, սակայն հիմակ նորեր աւելցան ու այդ հացը քիչ եկաւ : Ծո՛ւտ, խմո՛ւր թխէ, հա՛ց եփէ, չուշանանք եւ աւազակապետը չբարկացնենք :

Կծծի կինը մեզի «կոխք» եփեց եւ վրան թան լեցուց : Մենք բար-


(*) Տեսակ մը գի :

(**) Դերձամէ շինուած տեղական ներմակ քրքակաճ գլխանոց մը :

կացանք: Թաները թափեցինք եւ ստիպեցինք որ իւր բերէ: Ալիւր ա-
սինք անկէ եւ տարինք ուրիշ տուն մը հաց եփել տալու: Սէնօն հա-
ցին վրայ հսկիչ դրի ու ես դուռը հոտայ՝ մագէ կարճ չուլի մը վրայ
(կապերտ): Մտածեցի թէ մենք լեռ կ'երթանք, ինչի՞ մէջ պիտի պառ-
կինք: Անմիջապէս չուլը տարի գեղին քով թուփերուն մէջ պահեցի
ու դարձայ հորէն տեղս, նստայ գետնի վրայ: Շատ վերջ երբ մենք
հացերը առած ճամբայ ելանք, լսեցինք որ անոնք իրարու չուլ կը
հարցնեն: Ես Սէնօն կեցուցի գեղին քով, չուլը բերի թուփերէն ու
քալեցինք:

— Ամու, առ ուսկի՞ց է,— ըսաւ Սէնօն:

Երբ իրեն հասկցուցի ուրկէ՛ ըլլալը, կը խնդար ու զիս կը դո-
վէր:



Խնկեց Գարօն
Բեռնակիր Պոլսոյ մէջ
1910 Պոլիս
դրկուած երբօրը Սղիայի կողմէ

Գեղին տակը, Ֆարլի ժեռուսա ձորերէն իջանք: Լերան ջուրերը
 ժայռերուն մէջէն գոչիւնով կ'երթային: Մեր գեղին քարին կը նմա-
 նէր ան: Ճամբայ չկար: Վար չեղելով մենք մեզ գարկինք ձախ ու
 ձորին մէջ քնացանք մինչեւ լոյս: Առաւօտուն տեսանք որ էրիկլու
 թուրք գեղին անտառներն ենք: Հոն, անտառներուն մէջ, ժայռերէն
 առատ լերան սխտոր ժողկեցինք: Անուշ էր ան ու մէկ ծղօտի տակէ
 քանի մը դլուխ կը հանէինք առատ-առատ: Սէնոյին պարկը կտրե-
 ցինք ու անկէ շինեցինք երկու փակեղեթ՝ երկուքիս համար: Չանոնք
 լեցուցինք սխտորով ու լեռնէն վար, ամայի ձորը, պաղ ջուրերուն



Միմա եւ Երուանդ Քոչեան
 Պոլիս 1919

վրայ իջանք: Մորենիները պլլուեր էին ջուրի ավերուն: Վայրի ծոթ-
րինները կը խնկէին օդը: Հոգիքը դաղջ էին ու միջատներու պէս
նուրբ եւ սկեղոճ թռչուններ մասրենիներէն խուճրերով կը ճլվլային:

Նորէն իրիկուն: Պարզը ետեւ թողուցինք ու անտառներէն դէ-
պի մեր լեռները քալեցինք: Լեռնագագաթին վրայ էրիկլուցի հարուստ
Փալազեաներուն դոմբ նշմարեցինք: Երբ դոմին մօտն իջանք, մութ
էր արդէն: Քոպի պոստաւը մտանք: Առաս վարունդ ու սեխ ժողվե-
ցինք անկէ: Մեր ամանները լեցուցինք ու դեռ զրպաննիս ու ծոցեր-
նիս ալ կը թխմէինք, երբ Մէնօն՝

— Ամ'ու, լոյս կու գայ,— մրմնջեց ցածէն:

Արդարեւ, մարդ մը ձեռքը վառած գշկուրներ^(*) բռնած՝ պոս-
տաւին ծուխ տալու կու դար: Զայն նոր ջրած էին ու ծուխ կու տա-
յին, որպէսզի ծաղիկները բեղմնաւորուն ու շատ բերք ըլլայ: Ա-
ռանց նշմարուելու մարդէն, մենք կամաց մը պոստաւէն դուրս թանք
ու պատին տակ, ծառերու ստուերներուն մէջ կեցանք: Լուսնկան ցե-
րեկի պէս էր, չէինք կրնար անկէ շարժիլ:

Երբ մարդը հեռացաւ, մենք մեր բեռները պոստաւին մօտ,
քարերուն մէջ պահեցինք ու չիտակ դոմ դացինք: Հոն մանկամարդ
հարս մը ու պառաւ մը սեղան նստած թանապուր կ'ուտէին՝ երեք-
ցնելով օրբան մը, ուր մանուկ մը կը ճչար: Բարեւէ մը յետոյ՝

— Մեր ընկերները, Տգիկի չէքէն, որ դուք իմացած էք, քիչ
անդին կը սպասէ եւ մեզ հացի զրկեց: Շուտով ձեր այրերը դատէք ու
մեզ ճամբեցէք:

— Մենք այր չունինք,— կմկմացին անոնք եւ աղաչելով ըսին
որ հաց ալ չունին, դեռ կալ հանած չեն:— Գողերը այս տարի մեր
հասկերուն գլուխները տարեր են, անանկ որ մենք ալ հաց պիտի
չունենանք:

Այդ դողերէն մէկը կ'ու էի, միւսը՝ ձանօն:

Ես պնդեցի եւ ուղանացի որ իրենց էրիկմարդիկը կանչեն եւ
մեզի հաց տան: Անոնք նորէն կ'աղաչէին եւ ապուր կը հրամայէին:
Բարկացած՝

— Հիմակ շատ բան կը հանեմ մէջտեղ — ըսի:

Մտանք դոմ: Մանկամարդ կիներ դուռը մեր վրայէն ախլեց
(կողոպեց), տանիք ելու ու սկսաւ պոսալ:

— Մեզ կողոպտեցի՞ն... հասէք, հա, հասէ՛ք... երկու հոգի
են, երկու հոգի՛...:

Մենք փութով դուռը փշրեցինք, սարկ մը ես առի, կարպետ
մըն ալ Մէնօն, մեզ բռնել ուղող պառաւը ցնցեցինք, դարկինք՝ զինքը
դեռն ձգեցինք, ու սկսանք փախչիլ արտերու մէջէն: Մեզի շատ
մօտ մազկէրի մը դռնիւնը, ու հատ մըն ալ, ու հատ մըն ալ: Քոպ-
լի, հեւալէն, առանց ետ նայիլ համարձակելու մենք կը վազէինք:

(*) Գշկուր (Շգիւր):

Չոր մը հասանք ու ճամբուն վրայ թուփերը մտանք ուժասպառ: Ու-
ժեղ կը հեւայինք: Տունին դուռը, դէպի լերան կողմը, անոնք մեզ
կը հալածէին սոտուար խումբով, անդադար փամփուշտ վառելով: Մեր
սրտերը կը զարնէին: (*)

Հալածողները մեզ երկար մնտոնեցին անտառներուն մէջ: Կէս
դիշեր եղաւ: Աղմուկները դադրեցան: Մենք կամաց-կամաց նորէն
դամին մօտ դացինք, մեր սրահները վերցուցինք ու հեռացանք:

Ճամբուն վրայ էր Բէօր Ապտուլլահի տունը: Իեռ ան այս դէպ-
քը չլսած՝ այդ դիշերն իսկ հոն դացինք, իրմէ ուտեստ առինք ու լեռ
եղանք:

Տողանի վրայի՝ անտառն էինք մենք: Յաջորդ օրը Տողանի հօտը
ճիշդ մեր վրայ եկաւ: Հովիւներուն մէջ էր մեր գեղացի Բէհենց
Մէրգոյին պղտիկ տղան, Սաչօն: Մենք ա՛յնքան անճարակ էինք, որ
ա՛յ կրցանք Սաչոյին հեռ տեսնուիլ դադանի, եւ ոչ ալ Տողանի հօտէն
մասցու մը վերցնել:

Գիշերը Մէնօն ուղեց Տողան երթալ: Կեանքի մէջ սրեւէ իրա-
կան մխիթարութենէ զուրկ, երեւակայական տուեալներու էինք ա-
պաւիններ մենք այդ օրերուն: Ես փորձեք էի որ եթէ իմ ձախ աչքս
խաղայ՝ բարի է այդ: Ձախ սաքս կեռայ՝ բարի ճամբայ է երթալիք:
Ձախ ախանջս կանչէ՝ պատաստութիւն պիտի դաննեմ: Ու բոլոր ա-
ջերը՝ չար: Այդ իրիկունը իմ բարի աչքս անդադար կը խաղար: Մէ-
նօն ապաւինելով աչքիս ճշմարիտ գուշակ մը ըլլալուն, համարձակ
դեղ իջաւ: Անոր առաքելութիւնն էր իբրեւ Թուրք հաց առնել անկէ:
Գաղտնօրէն տեսնուիլ հոն գանուող մեր հարսերուն հեռ, որպէսզի
անոնք մեզի լեռը դադանի հաց բերեն, եւ անոնցմէ իմանալ Կարոյին
ու Գրիգորին տեղը, սրտնք տարիներէ ի վեր լեռն էին:

Ես կեցայ դեղին գիմացի կազնեստանին մէջ ու կը լսէի անոր
խօսակցութիւնը:

Մէնօն իրար խառնեց Տղիկ, Սաօ, չէթէ, անտառ, սոլասել,
սպաննալ, հաց բառերը: Թուրքերը համարձակ՝

— Ի՛նչ, ի՛նչ, Ի՞նչ — կ'ըսէին: — Կեցիր ժանտարմաները կան-
չենք, անո՛նց հասկցուր:

Գեղը ժանտարմաներով լեցուն է եղեր: Թուրքը Մէնօն բռնեց
եւ ժանտարմաները կանչեց: Մէնօն փախաւ: Ետեւէն՝ «Կեցի՛ր, ըեզ
կը զարնենք» կը պոռային: Ես անտառէն՝ «Ուշադրութիւն ըրէք որ
դո՛ւք չզարնուիք» պոռացի ու ելայ-փախայ: Անոնք սկսան մեր ետե-
ւէն կրակել անդադար: Մէնոյին հեռ իրար կորսնցուցինք: Սակայն,
կանուխէն, իմ եւ Ղևուռդին պէս յաւիտեան իրար չզտնելու վախէն

(*) Հալածողները անբերի զինուած վարպետ մարդեր, դէպի բարձունք ար-
շակեցին, առանց ենթադրելու որ մենք, համբակ տղամ, վարք, արտերուն մէջ կը
մնանք: Իսկ երբ կիները իսկապէս այդ մարդիկը կանչած ըլլային, ի՞նչպէս մենք
կը հրամայէինք...

ու փորձառութենէն՝ խօսեր էինք որ նման պարագայի մը իրար Տընկովիկի դոմին գլուխը, ծորենիին տակ դանկնք:

Գիշերը՝ միմալ, անտառներն անցուցի: Առտուն, զգուշութեամբ որոշուած ծորենին յառաջացայ: Չայն չկար հոն: Արդեօք Մէնսօն բռնուած էր: Տեսայ զինքը՝ թուփերուն տակ կծկուած: Իմ շուկներս առեր ու վախէն կը դողար: Երբ զիս տեսաւ՝ դրկեց, սկսաւ լալ:

— Ամո՛ւ, ես գիտցայ քի դուն զարնուեցար, — ըսաւ:

Մեր լեռներուն դարձանք նորէն՝ կտրած սրտով, անորոշ ճակատագրով: Հեռուէն կ'երեւէր ամայի գեղը, լռութեամբ ժայռին դիրկը քաշուած: Արտերը, դաշտերն ու արահետները խոպան ու վայրի խոտերու մէջ խեղդուած: Հեղեղները շատ հեռքեր ու շինութիւններ քշեր-տարեր էին: Արտերը խոպան բնութենէ ինչո՞վ էին տարբեր: Կը թուէր թէ արօրը դար մը կայ զիրենք չէ հերկած: Կազնիները կատգեր էին եւ անտառները երկիրքն ի վեր փրփրեր: Գոմի հեռք չկար, օսայի հեռք չկար, հունձքի ու արօտավայրի հեռք չկար: Լերան գոմերը քակեր եւ փայտերն ու գուռերը տարեր էին: Ինչպէս հոն, դեղին հողվրտիքն ալ քակեր ու արտ են ըրեր, կ'ըսէին:

Տխուր ամայութիւնը հոն, ամէն ինչ նոյն քուրային մէջ էր ձուլեր: Պատառատ մարդագետիներ քաղուեր էին Թուրքերուն կողմէ եւ Քարին արտերուն Արջեց ու Քէհեց գոմերուն պարարտ արտերը ցանուած էին: Անոնցմէ մաս մը քաղեր-տարեր էին: Միւսները արտերուն մէջ ոսկիի պէս առեր-կեցեր էին:

Ելանք անտառներուն մէջ պտըտեցանք՝ ոգեկոչելով բոլո՛րը, բոլո՛րը: Ու ձորին մէջ, խոշոր ծորենիին տակ, հոն ուր երկու տարի առաջ Դեռնոլին հետ փորեր ու շիներ էինք, ինկանք-քնացանք փոսին մէջ: Հայրենի հօլը, սր կ'անցնէր թուփերէն, մեզի անուշ քուն կը բերէր:

Իրիկուան իշունք Տընկովիկի դոմը, ուր երկու տարի առաջ Մէնսոյին հետ միտին միս եփած էինք: Անցանք Քարին արտերը՝ ցորեն հանելու համար: Պապերուս դոմին շրջակաները, Ախմինչատ եւ ամէն տեղ, միշտ կազնիները անհունօրէն փրփրած: Յորենները քաղած ու դէզ դրած էին: Փշրեցինք հասկերը, կերանք ու խուրձեր շաղկած Տընկովիկի ծորենիին դարձանք: Մինչեւ լոյս քանի մը անդամ խուրձ կրեցինք անկէ: Դէզը արտին երեսը ցրուեցինք ու դաւապաններով փշրեցինք հասկերուն գլուխները: Արշալոյսը կատարները հինայեց, մենք մեր բոյնին դարձանք:

Քաղուորներն եկան առտուն: Իրար անցան ու սկսան ոզբալ: Կը հայհոյէին ու կ'անիծէին մեզ: Մենք զիմացի թուփերէն կը տեսնէինք զիրենք եւ անոնց ձայները կը լսէինք: Անոնց մէջ մեր դեղացի հարսեր ալ կային: Չանոնք ճանչցանք իրենց տարազէն:

Օրեր ամբողջ, ծորենիին տակ ու ձորին մէջ, ուր կը մնան դեռ ծղօտները, մենք խոպանները փշրեցինք ու ճմլեցինք ձեռքերով, կա-

պերտին վրայ: Հովին տուինք զանոնք՝ ցորենը յարդէն դատելու համար: Մեր միակ սնունդը ան էր, չոր ցորենը: Բայց ան համով կու դար մեզի իւղէն եւ ամէն համադամէ աւելի: Մեր ձեռքերը քիստեւէն վիրաւորուեցան ու արիւնեցան: Յորենները ծամելէն մեր լինտերը ուռեցան ու սկսան ցաւիլ:

Մենք մեր ջուրը կը խմէինք մօտակայ ձորի մը աղբիւրէն, կաթի նման կակուղ ու համով: Ամէն անգամ որ հեռանայինք անկէ,

— Ա՛խ, հա՛տ մըն ալ խմենք հայրենի աղբիւրէն, հա՛տ մըն ալ կ'ըսէինք, դուցէ վերջինը ըլլայ...

Մենք հանեցինք բաւական ցորեն: Մաս մը թուփերուն մէջ պահեցինք: Մաս մըն ալ առած Գարամանի դայցինք, անոր ձեռքով աղալու համար: Կը քալէինք անտառէն: Մայնճախի ձորին մօտ, արտի մը թուփը, Կարոյին ու Գրիգորին ստորերկրեայ տնակը գտանք: Անոնք զայն շիներ էին երկու տարի առաջ: Հոն Գուրտերէն կողողտուելէ եւ իրենց տեղը դիպուելէ վերջ, լքեր էին զայն: Թռչուններու պէս, որոնք կը թողուն իրենց բոյները, եթէ մարդ դպի անոնց: Ու կ'երթան կը հաստատուին ուրիշ տեղ: Փլեր էր տնակը: Խարխուլ՝ պատերը: Տանիքին հողը մէջը թափած, ուր քանի մը ուռիի ճիւղ պտուկած կը մնային: Գուռը վերկ մը ցախ մնացած ու չորցած էր: Քիչ անդին մոխիրներ դիպուած:

Մէնօն դիտէր մեր լեռները իր մասներուն պէս: Գիտէր թէ ո՞ւր լաւ աղբիւր մը կամ պաղատու ծառ ու թուփ մը կայ: Հայրերուս դոմին ձորը հասանք: Անոր Տանձուն Մմակը անունը կու տային: Լեռան կողին էր այդ հովիտը: Աղբիւրներու ջուրերը մարդերու մէջէն կը վաղէին: Մասրենիի ու մորենիի թուփերը իրար սերտօրէն զրկեր էին: Երկու հսկայ վայրի խնձորենիները պտուղներով բեռնաւոր, ճիւղերը կը ծռէին: Անոնք թթու եւ ահաս էին: Ժողովեցինք, դանոնք արեւին տակ փռեցինք ու միասին առինք մաս մըն ալ:

Գիշերը Գարամանի անտառն անցուցինք եւ երբ լուսցաւ անոր տունն իջանք: Անոր կիսամերկ լաճերը կալին վրայ դէզերուն հոգ կը տանէին: Անոնք մեզի յայտնեցին թէ տունը օպա դացած է, ձորն ի վեր անտառներուն խորերը: Մենք հոն դացինք: Մենք մեզ ծանօթացուցինք Գարամանի կիներուն, եւ հարցուցինք թէ անոնց քով դանուող Հայերը ո՞ւր են: Անոնք ուրացան նոյնիսկ՝ թէ իրենց քով Հայեր կան: Գարաման ջաղացք դացեր էր դարի աղալու: Կէս գիշերին աղունը առած դարձաւ: Մեզի հետ շատ սիրով տեսնուեցաւ ու պատուեց: Ըսաւ թէ այդ Հայերը լեռը կը մնան: Մենք անոր տղէն իմացանք այդ Հայերուն ո՞վ ըլլալը: Անոնք երեք էին: Կասմնեցի Մարտիրոսը եկած-միացած էր անոնց: Միւսները մեր դեղէն ջաղացպան Չաթախին կտրիճ տղաքը՝ Հայկն ու Արմէնն էին, երիտասարդ, երկայնահասակ, անթերի դիմուած ու քաջ: Հիմակ անոնք լեռներու վրայ փոխուեր, մէյմէկ առիւծ էին դարձեր: Գողութիւն, կողոպուտ, մարդասպանութիւն կ'ընէին:

Այս դարնան, երեքը մէկ գեղ կ'իջնեն զինուած եւ ուղղակի դպրոց կ'երթան, ուր կը մնար գեղը պահող ժանտարման, Չիմանցի քուրա Սլօն: Սլօ մեր գեղէն հարս մը կը պահէր իր քովը, իբրեւ հարձ: Միջադին, իրիկուան, մէկը դպրոցին դուռը կը բանայ անոնց:

— Չիմանցի Սլօն դո՞ւն ես, — կը հարցնեն:

Ան կը պատասխանէ.

— Այո:

Կուրծքին դնակ մը կը սեղմեն: Ան կ'իյնայ, իրենք կը հեռանան: Կ'երթան դպրոցին քով, Չարմանենց տունը, ուր կը բնակէր Հանայի Աղիզ քուրտը: Աղիզ տղուկի նման ծծած էր գեղը: Չայն անկողնին մէջ սրախողտող կ'ընեն ու կը բացուին:

Մեր գեղը կը նստէին այդ ատեն Քէմախի Մէզկէպ գեղէն դադթական թուրք ընտանիքներ: Անոնք բոլորը զինուած էին սուլտանի պերտաններով եւ շարունակ Ախախ վայրի երէ որսալու կ'երթային: Մէզկէպցիները այդ օրը կը սարսափին ու հարիւր զինուած մարդերէն մէկը չի կրնար դուրս ելլել դանոնք հետապնդելու: Շարաթ մը վերջ արդէն բոլոր Մէզկէպցիները սարսափահար կը հեռանային գեղէն: Կը հեռանար Ագիզի ընտանիքը: Ա'լ ժանտարմա չէր զար գեղը ապրելու:

Հոն կը բնակէին երեք քայերը, աւերակներու հետ մինակ: Յառաջիկայ ձմեռը անոնք հոն պիտի անցընէին: Ու դարնան, նո'րէն, անոնք Չիթմէ գեղին ճամբուն վրայ մարդադայլ մը քերթեր, Չայն աղբւրին քով պահպնեցուցեր ու քովը թողոթ մը դրեր էին: Հոն կը կարգացուի եղեր քանի մը լսօսք սնրադործներու պետութեան հասցէին, հոն ասպարէզ կը կարգացուի եղեր անդէն բնակչութիւններ փճացնող Տիվրիկի զինուորական վարչութեան, որպէսզի լեռներու վրայ երթայ չափուի իրենց հետ: Անոնք օր-ցերեկով կը կոխէին Սարդուն, դող հանելով վատերու դանդուածները:

Ճամբաներու վրայ անցորդներու առաջը կը կտրէին, կը զարնէին պետութեան սուրհանդակը ու դայմադամին լուրեր կը դրկէին: Լեռներուն վրայ անոնց վախէն ճանձ չէր թոներ:

Գարաման հպարտ էր անոնցմով:

— Անոնք, — կ'ըսէր, — առիւծ են, առի'ւծ: Իրենց վիզերը այնքան հաստ են եւ բազուկներն ալ նոյնքան:

Մէ'կ երանութիւն կ'ուզէր ճանչնալ այսուհետեւ իմ հորիս, — Տղաքը դանկ: Գարամանին երկատոյ մը ձգեցի, որ երբ դառնան՝ անոնց յանձնէ ու Մէնոյին հետ դարձանք մեր լեռները:

Կ'ուզէի նորէն հունձք բերել արտերէն, սակայն Մէնօն կ'ընդդիմանար: Անոր աչքին նորէն սկսած էին անուշ երեւիլ Մէջուան ու հովուութիւնը:

Ատեն մը վերջ նո'րէն Գարամանի դարձանք: Ան տունը չէր: Կինը կը արանջար:

— Զեզի համար էրիկս տարին: Մատներ են թէ քովը Հայեր ունի: Եթէ դուք երէկ այս ատեն եկած ըլլայիք, այս ձորերը ժամատարմաներով լեցուն պիտի գտնէիք:

— Բայց, տիկին, — ըսինք անոր, — այս երկրորդ անգամն է որ մենք ձեզի կու գանք: Ինչէ՞ն մեզի համար կ'ըլլայ քու էրկանդ տալուիլը:

Իրիկուան Գարաման դարձաւ: Զինքը շատ ծեծեր էին ժամատարմաները: Ան մաքի մը եւ երկու ոսկի կաշառք տալով կրցեր էր ազատիլ:

Ան նորէն պատմեց մեր տղոցը շահատակութեան մասին: Տակաւին շարաթ մը առաջ անոնք պտուղ ուտելու համար Եփրատի վրայ Զնդունթ քուրտ գեղը կ'երթան դիշերով: Անոնք հոն յաճախ կ'երթան եղեր: Այդ դիշերը հինդ գեղացիներ կը լրտեսեն ու կը հետապնդեն զանոնք դադանորէն: Կը լուսնայ ու մեր տղաքը ձորի մը մէջ կանգ կ'առնեն:

Քուրտերը զանոնք կը պաշարեն ու կը պոռան որ յանձնուին:

— Վա՛յ, — կը բացադանչեն մեր տղաքը, — ձեռքերը կապուած մարդ սպանելու՞ եկած էք՝ թէ կաքաւ որտալու... Թափեցէ՛ք ձեր գէնքերը ու յանձնուեցէք:

Կը բռնեն ու կը կապեն զանոնք: Ու օր-ցերեկով կը սկսին դանոնք կտրտել: Ականջ, քիթ, լեզու, բազուկ, եւայլն: Շրջակայ քոչուորները կը լսեն անոնց աղմուկները: Մեր տղաքը կը թողուն դանոնք ու կը հեռանան: Քուրտերուն հինգերորդը ողջ կը մնայ ու կը պատմէ եղելութիւնը: Քառասուն հոգիէ բազկացած ոստիկանական ջոկատ մը զանոնք հետապնդելու կ'ելլէ: Կը քչեն անոնց հետքը մինչեւ Ախալսի, մեր լեռները, ու այլեւս չհամարձակելով անկէ առաջ երթալ, ետ կը դառնան:

Գարաման դեռ դիրենք չէր տեսած, իմ նամակս չէր տուած: Մենք անոր տունէն սափոր մը փոխ առինք եւ լեռ մեկնեցանք: Գարամանի անտառին մէջ Քողբնիկցիք եայլա էին ելած: Այդ գիշեր ուղեցի երթալ անոնցմէ հաց առնել: Յամառ ու վախիտ Սէնօն չէր ուղեր դալ: Զինքը մօտակայ անտառը թողուցի ու ետ եայլաները դացի: Լայն ու հարթ տարածութեան մը վրայ իրարմէ անջատ-անջատ կը կենային սեւ մազէ վրանները: Սմեհուն մէջ ալ հիւանդներ կային ու կը աքային: Գացի մէկուն դուռը եւ այրերը հարցուցի: Գուրտ եկաւ հոկայ մարդ մը եւ սկսաւ վախէն դողալ:

— Մենք, — ըսի անոր, — չէթէներ ենք, հոս, լեռան վրայ բոյն դրած: Զեր օպաները պաշարած ենք, որ դուք չփախչիք: Եկած եմ հացի: Շուտ, առջեւ ինկիր ու հաւաքէ:

Ես ուժեղ սուլեցի ու Սէնօն անտառէն պատասխան տուաւ ինձի: Մարդը համոզուեցաւ թէ իսկապէս պաշարուած են: Ես պատմեցի անոր դարման Հէմոյին հետ իրենց երթալս: Ան հաւատաց չէ՞ք ըլլալուս: Հաց, իւղ, չորթան հաւաքեց ու ինձի բերաւ: Ուրտ-

խութենէս աչքերս կը փայլէին, երբ Սէնոյին մօտ հասայ: Բարձրաձայն խօսելէն հեռացանք անկէ ու ձոր մը մեզի բոյն ըրինք: Գարամանի ամանով ջուր տաքուցինք ու լուացք ըրինք: Յետոյ անոր մէջ ցորեն կը խաշէինք շարունակ:

Ատեն մը վերջ նո՛րէն այդ օպաները դացինք՝ ոչխար գողնալու համար: Տեղափոխուած էին անոնք: Անտառներուն մէջ փնտռեցինք երկար, մինչեւ որ գտանք անոնց նոր տեղերը: Սէնոյին աչքերը սուր էին ու ինք հեռախուզութեան մէջ վարպետ էր: Նշմարեց անոնց խարոյկները ու յուշիկ եայլաները իջանք: Սպասեցինք որ անոնք քնանան: Անոնք մարեցին խարոյկները ու ձայները դադարեցան: Մենք գո՞մ մտանք մութին մէջ: Հօտը խրտչեցաւ աղմուկով ու փախաւ դէպի անտառ: Հովիւները վախցան, իրենց անկողիններէն չելան: Անոնք պառկած տեղերնուն «հո՛յ, հո՛յ» կը պոռային՝ գայն հանդարտեցնելու համար: Ոչխարներու մակադատեղին դատարկեցաւ այծերէն: Հոն մենք երկուքս մնացինք միայն: Բնաւ մէկը ուշադրութիւն չըրաւ եղածին վրայ: Մենք իրարու — «դողցէ՛ք, դողցէ՛ք, կ'ըսեն մեզի» կ'ըսէինք ու կը խնդայինք, հոն գետինը կպած:

Չկրնալով այժ բռնել, սկսանք եայլաներու դուռները պտըտիլ՝ բան մը գողնալու համար: Սէնօն զնաց քնացած մարդու մը գրեստները, որ իբր բարձ գլխուն դրած էր, գգուշութեամբ առաւ-բերաւ: Անհետեթ մարդը արթնցաւ յետոյ, ելաւ անկողինին մէջ կեցաւ ու պառկեցաւ կրկին: Մենք անոր վրանին քովէն լաւ ուլ մը յափշտակեցինք, տարինք գայն, օպաներուն մօտ մորթեցինք: Տեղաւորեցինք մարդուն շարվարին մէջ ու թուփի մը տակ պահեցինք: Հողով մեր արիւնտա ձեռքերը լուայէ վերջ գո՞մ դարձանք ու գեղապետին վրանին դուռը կեցանք:

— Բարեկամ, արթնցիր, մարդ է եկեր, — ձայնեցի ու ոտքով դարկի մօրուսաւորի մը, որ կնոջը քով կը քնանար:

— Ամա՛ն, կ'աղաչեմ ձեզի, — ըսաւ ան քնաթաթախ, — մի՛ մօտենաք ինձի, ի՛նչ կ'ուզէք տամ, — ու դողալով հագուեցաւ:

Ըսի որ հայ չէքէներ ենք եւ հաց ուղեցի: Ու դառնալով Սէնոյին՝ տասնոցը քօ՞վդ է կը հարցնէի եւ անոր կողերը կը խառնէի: Մարդը մեզի սեղան դրաւ ու ինք ելաւ օպաներէն ուտեստ հաւաքեց ու մեզ ճամբու դրաւ:

Մեր աւարները առինք ու կրկին ձոր դարձանք: Քերթեցինք ուլը: Ոսկորները խաշեցինք ու կերանք հացով: Յետոյ միւսը կրակին վրայ դրինք սափորով՝ որ եփի: Յերեկին կ'ընէինք այս բոլորը: Գիշերը անհնար էր այդ, քանի որ խարոյկը կը նշմարուի ամէն տեղէ: Մինչ միւսը կ'եփէր, մենք Սէնոյին հետ գուարթ-գուարթ կը կատակէինք ու կը խօսէինք: Սէնօն աղուորցի էր քանի մը շաքաթուան մէջ: Երեսները կլորցիւր ու կարմրեր էին:

— Հետս լե՛ս չէիր դար, — ըսի իրեն — աղայիդ տունը ասանկ համով բաներ կերած եւ այսպէս ուժովցա՞ծ էիր: Արդէ խաթունիդ

ձեռքը պիտի նայէիր, որ քեզի կտոր մը դարիի հաց տար եւ դուն ուտէիր :

— Իրաւ անանկ է, իրաւունք ունիս, ամուսնացաւ ան ուրախութեամբ :

Այդ ձորին դուրսը անտառներուն մէջէն լերան ճամբայ մը կ'անցնէր, ուրիշ կարաւանները կը բանէին : Մենք թէեւ հոն կրակ կը վառէինք, սակայն մեծ զգուշութեամբ ծորենիի չոր ու բարակ



Ընտանիք Պոլսոյ մէջ
Ռաֆի վրայ ձախիմ՝ մօրեղբայրը .
Ռաֆի վրայ աջիմ՝ հօրեղբայրը :

փուշերով, որ ո՛չ հոտ, եւ ո՛չ ալ ծուխ ունի: Կէսօրէ վերջ ուժեղ հրացանածուլութիւն մը սկսաւ մեր վրայէն: Չայները կը մօտենային եւ որոտները կը սաստկանային: Ըսինք որ ա՛լ այս անգամ փրկութիւն չկայ մեզի: Անշուշտ գեղացիները դիշերը մեզ հետապնդած եւ մեր տեղն իմացած էին ու հլոմակ սատիկանները մեր վրայ կու գային ուղղակի եւ մեզ պաշարեր էին: Կրակը մարեցինք, սակորները թաղեցինք եւ միւր մէջտեղ թողած՝ մէյմէկ թուփ մտանք: Կ՛ուզէինք ելլել-փախչիլ, սակայն փորձառու էինք թէ ատանկ պարագաներու տեղէն շարժելու չէ: Եթէ մօտենան, խորհեցանք, կ'ելլենք կը փախչինք, թերեւս փրկուինք: Առաջին շուարուսէն վերջ՝

— Տղայ, բե՛ր ատ միւրը, ուտենք, ինչո՞ւ շունները թէ՛ մեզ սպաննեն, եւ թէ՛ մեր եփած միսին տէր ըլլան, — ըսի:

Մէնօն միւր բերու. եւ մենք տաք-տաք դայն կերանք-հասցուցինք ամբողջ: Բարեբախտարար պէնքերը լեցին ու եկող-գացող չեղաւ: Թերեւս հայ չէքէները կարաւան մը կողոպտեցին հոն:

Այդ դիշեր մեր ցերեկուան վախին վրէժը տոնելու համար նո՛րէն օպանները դացինք, որպէսզի անոնց գլխուն փորձանք մը բերենք: Հոն շատ էջ կար: Անոնցմէ մին վրանի մը տակ կապուած էր: Թուփերուն մէջ պահուած, քաշեցինք անոր երկար շուանէն ու էջը դէպի մեզ տարինք: Չայն թուփերը քաշեցինք ու էջն ալ, շուանն ալ տոնելով փախանք: Մեր գոյքերը նետեցինք իշուն վրայ ու ճամբայ ինկանք՝ մեր լեռները երթալու համար: Բոյլը կը փալփար: Քէվրան գրքան(1) եւ ուրիշ ծանօթ աստղեր կըլծ էին: Մէնօն դանոնք ցոյց կու տար ինծի, անուները կը թուէր ու անոնցմով դիշերուան ժամը կը ճշգէր՝ թէ ի՞նչըն ատեն կայ լուսնալու: Ան իր հովուութենէն գիտէր այդ բարբը:

Անտառներու խորքէն, կամաց-կամաց, իշու քայլերով, մենք նսրէն Մէջուտ գացինք, թէ՛միբին: Խելացի թայիբը մէ՛կ անգամ հաջեց, ճայն ճանչցաւ ու սկսաւ հոտտել զիս: Դուռը զարկի, անոնք՝ «Ո՞վ է», հարցուցին: Իմացան թէ ես եմ, ու բացին դայն: Ես էջը հեծած դուռնէն ներս մտայ: Ար թէ՛միբ ուրախանալով հարցուց.

— Լօ, լօ, գէ չը՞ գըր:(2)

— Ձը՛ պգըմ, փիա շու՛մ սըւար հաքըմ, ըսի:(3)

Անոնք մեզ սպաննուած կարծեր էին: Այնպէս տարածայնութիւն ելեր էր աշիրէթին մէջ: Բայց այդ տարածայնութիւնը քանի՞-քանի՞ անգամ: Ու ի՞նչ յարութիւններ իրական եւ վերջնական

(1) Քէրվան գըրան - կարուան կոտորոջ: Լուսաստղին շատ նման աստղ մը, որ կէս գիշերին շուքը կը ցափի: Անգամ մը, կարաւան մը գայն լուսաստղը կարծելով՝ կը բեռնի: ու համբայ կ'ելլէ: Մութին ժայռերէն կը գահավիժի ու կը խորտակուի: Անոր համար ամուրը այդպէս ցրեր են:

(2) Տգա՛յ, ի՞նչ ըրիք:

(3) Ի՞նչ ընեմ, ոտմով գացի, հեծեալ դարձայ:

մահերէ : Ամէն օր ողջ արթննալը ինքնին յարութիւն մը չէ՞ր մեղի այդ օրերուն : Ու ամէն օր իրիկուն ընելն ալ նմանապէս . . . :

Քանի մը օր պաղտնի պահուեցանք հոն՝ դեղէն ու մարդերէն :

Նտրատակս էր գէնք մը ձեռք ձգել : Զէնք մը, ամէն դնով, ու լեռները պտրտիլ : Էջը բերի անո՛ր համար, որպէսզի Թէմիրը զայն ծախէ ու մեզի գէնք մը գնէ : Էջը ծախեց, բայց գէնք չընեց :

— Գացէք հա՛ւ մըն ալ բերէք, որ դրամը գէնքի բաւէ, հիմակ պակաս կու գայ, — ըսաւ :

Իրիկուն մը նորէն Սէնոյին հետ ճամբայ ելանք՝ լեռ երթալու համար : Կ'ուզէի անպայման տղաքը դտնել ու կէս մնացած բաղձանքներս իրենց լրտմին տանիլ : Ողջ մնալը յայտնի էր թէ անհնար է : Ես կ'ուզէի ապրիլ ու մեռնիլ ա՛յն ձեւով, որ հիմա մեր լերան տղացը կեանքն էր :

Գիշերը անտառներէն կ'երթայինք մենք : Իբր գէնք խոշոր սուր մը ունէինք՝ Զարացի Հայերէն մնացած, եւ մէյմէկ դաւազան : Առանց սուրի սր այնքան բաներ բրինք, կը մտածէի, սուրով ինչէ՞ր պիտի չընենք : Տխուր էինք սակայն՝ ճնշիչ կանխադրացումով մը : Մեր ջիղերը թուլցեր էին : Քալելով անգամ ոչո՛ք չունէինք :

— Ամու, եկօր ետ երթանք : Ինծի կու գայ քի ըս տըպու (այս անգամ) զարնուինք պիտի, — կ'ըսէր Սէնօն :

Թէեւ ես զինքը կը չախէի իբր վարկոտ ու կը համոզէի որ կորովը դայ եւ ոչո՛ք առնէ, սակայն անոր խօսքը իմ վրաս ալ կ'ազդէր ճշմարիտ դուշակութեան պէս, ու ներքնապէս ես ալ նոյնքա՛ն վհատ էի : Ինծի կը թուէր թէ հիւանդ եմ :

Կը քալէինք միմակ՝ անտառներէն, բախտին, ճակատագրին ձգուած երկու որբեր : Կ'երթայինք քաւելու սեւը այդ ճակատագրին, առանց զիտնալու ս՞րբը եւ ինչպէ՞սը : Միջին Չամուրճի մեր Մադրին տունը դայինք : Հոն մեզի բօթը աուին թէ Կարօն ու Գրիգորը, Տօղանի անտառներուն մէջ, Զիմանցի Սլոյին աղուն կողմէ սպաննուած են պաշարուելէ վերջ : (*) Մեր Տօղանի հարսները դայեր առանց դիակները տեսեր ու իրենց մազերը փետտեր ու լացեր են : Այս բօթով մեկ սաբինը(**) ղրին հանեցին :

Մեզի սեղան դրին : Ես հիւանդ էի ու բան մը չկրցայ ուտել : Միասին հաց առինք ու ելանք պեղէն : Գեղին տակ մարդ մը տեսայ : Հարցուցի թէ ի՞նչ կ'ընէ հոն : Սն կասկածելի թուեցաւ :

— Չաղացքէն կու գամ, — ըսաւ ու անցաւ պեղ դնաց : Գետափին, Չաղացքին կռնակէն կ'անցնէինք, մուշաներուն մէջէն շշկոցներ առինք ու կեցանք : Չայն մը մեզի հարցուց :

(*) Ըստ Քոբանեանց Գրիգորին կնոջը, որ հոս, Փարիզ է, 1979ին, մեր կարուները գարնի սուտք են տղաքը, որպէսզի իրենց քաղաքը Թիւրքիաները Տօղանցիներուն հետ մեամ գալուի : Տօղանցիք գաղկեր են :

(**) Սաբին = Մորթը կը մոխրեն ու գուք մը կը դնեն, որպէսզի հոն հասի ու մազերը քափի :

— Կեցէ՛ք հաւ: Ո՞վ էք դուք: Այտակո ի՞նչ գործ ունիք:

— Հայեր ենք, — ըսի, — բարեկամ, խեղճ մարդեր, որ աշխարհի մրայ բան մըն ալ չունենալով, լեռները կը թափառինք թուրքին վարէն: Երբեմն զեղեր կ'երթանք, բարեկամներու մօտ, հաց առնելու, ու կրկին լեռ կը դառնանք: Եկանք հոս, հաց առինք մեր քերվայէն ու կ'երթանք լեռը:

— Լեռն ի՞նչ կ'ընէք, — կրկնեց ձայնը:

— Ոչինչ, խոտ կ'ուտունք եւ անասուններու պէս թշուառօրէն կ'ապրինք:

— Ձէնք ունի՞ք, — երրորդեց ձայնը:

— Ո՛չ, — ձայնեցի:

Այն ատեն մշաներէն դուրս ելան երկու դիմուած մարդեր, ու կը մօտենային մեզի, հրացանները մեր վրայ շտկած: Երիտասարդ մըն էր մէկը, միւսը՝ մօրուսաւոր մը: Անոնք զննեցին մեր կեցուածքը: Մօրուսաւորը ըսաւ.

— Լօ, լօ, լե՛խքն: (1)

Մագդէրները մեր կուրծքին դրին, որպէսզի պարպեն զնդակները: Մենք կը ծռէինք, կը շարժէինք ու տեղ կը փոխէինք, խուսափելու համար այդ հարուածներէն: Անձայն ճիչի ու կսկիծի տեսակ մը կայ, որ այսպէս զնդակի բերան եկողները միայն կը ճանչնան: Մենք այդպէս կը թնձկայինք ու կը սպառառէինք, օգուտ չունէր: Այն ատեն ոստիւնով մը մօրուսաւորին հրացանին բերնէն բռնեցի ու կ'աղաչէի անոր իր անուետվը, որպէսզի չսպաննեն մեզ: (2) Ան Գուլպաւորըններուն իսմայիլն էր: (3)

Ս'ը իսմայէլ, մ'էքքէ: (4)

Անօդուա:

— Բացուէ՛, պիտի դարնեմ, — կ'աճապարէր ան ու կը կրկնէր.

— Լօ, լօ, լե՛խքն, լե՛խքն, — ու կ'ուղչր հրացանը վախցնել ձեռքէս ու կրակել:

— Ա՛խ, — ըսի անոր, — մերկանամ, ա՛ն զգեստներս ոտքէս զլուխ, միայն մի՛ սպաննեք մեզ:

Ի՞մ հազուատներս նոր էին:

Ամէն աղաչանք անօդուա էր: (5)

Այն ատեն զէնքը հրեցի ետեւ, ու դեռ ան նորէն նշան առնելու ատեն չունեցած՝ սուրովս անոր գանկին հասա մը իջայ: Ան զէնքը

(1) Տգա՛յ, գա՛րկ:

(2) Հէմոյիմ շրջանին գլումալով որ եթէ հրացանին փողին բերանը գոց ըլլայ ու կրակեմ, փողը կը պայթի: Անոր համար չէր կրնար կրակել ան:

(3) Այս մարդը, ինչպէս ըսիմք, մեր Օվկանց չորս հերոս Բաքերան գլուխը ուտողն է: Անոր համար ազուտած էր զինուորութեմէ:

(4) Մի՛ ըմեր, իսմայէ՛լ հօրեղբայր:

(5) Իսմայիլ խնամիմ էր Տէվէ Եաթաղի Սէյտայիմ, որուն շատ նեղութիւն տուած էին Փէհլիվանն ու Տգիկը եւ սուրը կողպատած: Ան լսած էր այդ բոլորը:

դէմ բերաւ եւ սուրս մէջտեղէն կէս եզաւ : Կէսը թաւ աղմուկով գետին, ես մ'ըս կէսը ձեռքս, ի՞նչ ենք կեցեր, որ սպաննե՞ն, մտածեցի, դարձայ Սէնոյին,

— Մի՛ կենար, փախի՛ր, — պոռացի, ու մխրճուեցայ գիշերին մէջ :

Ես քանի մը քայլ հեռացեր էի արդէն, երբ ետեւէս առաջին զնդակ մը սուկեց : Գլխուս վրայէն, բարձրէն անցաւ ան : Ուրիշ մը անցաւ ականջիս տակէն, տզալով : Հաս մը եւս, հա՛տ մը եւս, ու սկսան վայրի ձորերն ու անտառուս կողերը անոնց ձայներով զոռալ : Ես մտայ շամբերուն մէջ, պահուրտեցայ աւելի հեռուն : Անոնք ազաղակելով ու կրակելով անզաղար դէպի գեղ վազեցին : Շուներն սկսան աղմկել ու գեղն իրար անցաւ : Ինծի կը թուէր թէ Սէնոն այդ կողմ փախաւ ու գայն հալածեցին, գեղ տարին : Այլեւս վստահ էի թէ գայն սպաննեցին կամ պիտի սպաննեն : Լուսնկային յոնքը կը խայտար վերերէն : Վարէն ի՞նչ տխրութիւններ եւ ի՞նչ պաղատանքներ : Ինծի կը թուէր թէ ամէն մէկ թուփ ինծի պէս կը սարսռայ ու սուգ կը բռնէ :

Գիշերը դադրեցան բոլոր աղմուկները : Ես ելայ թաքստոցէս եւ մտայ գեղին վրայի անտառը : Անտառի ճամբէն, լուսաղէմին, անհեթեթ խշրտուքներ ելան : Ա՞րջ, կամ Աբ Իսմայիլ՞, որ կ'ուզէր զիս հալածել մինչեւ Թէմիրին տունը :

Լուսաղէմին Թէմիրին տունը վացի : Պատիկները տեսայ հօտին քով : Անոնք երբ զիս նշմարեցին, ապրանք դատած զոռ դարձան :

— Ա՛, հապա Սէնոն ըսաւ թէ դուն զարնուեցա՛ր, — ըսին :

— Ուրեմն ո՞ւր է Սէնոն :

— Տունն է, հոն նստեր քեզի համար կու լայ :

Իմացայ թէ տունը ուրիշ մարդ չկայ, ուղղակի հոն դացի : Անոնք ալ մալ գտած կէս-գոզ եզան : Կ'երեւակայեմ թէ պէտք է մեղքեցած ըլլան մեզ, բայց լաւ չեմ յիշեր . . . Սէնոն կանչեցին, զիս զրկեց, ու կու լա՛ր ու կը զոզա՛ր սրտագին :

— Ա՛խ, ես գիտցայ քի դուն զարնուեցար, — ըսաւ :

— Ես ալ քե՛զ ատանկ կարծեցի . . .

Շարաթ մը հոն պաղտնի ապրեցանք, Թէմիրին տան քովի փոքրիկ կապոյտ ձորը, Սուրբ Կաղնիններուն ու Սուրբ Աղբիւրին տակ : Կը մտածէինք Զարա երթալ : Մահայն Աբ Թէմիր Սէնոն նորէն իր հին տեղը տուաւ, ես ալ իր քովը մնացի :

Նորէն հովիւ եղայ, ահով ու վախով : Ողջ պիտի չմնայի : Զերէները իրենք երեսիս կ'ըսէին այս բանը : Արտերը հասած, քաղուած, ու կայերը եղած էին : Թէմիրի տղաքը բռնուեցան, զինուոր տարուեցան : Յորենի մեքենայ մը ունէր ան : Ես սկսայ դարձնել գայն, կալէ կալ, գեղէ գեղ : Ղպախով ու եզներով կը փոխադրէինք գայն : Ես մեքենան կը դարձնէի Մէզիրեցի Զէրօ անուն Քուրտին հետ :

Աբ Մէհմէտի տղան, երիտասարդ էջօն էր կողոպտեր ու հագեր Փէհլիվանի գրեհատները : Գնդակներուն տեղերը կուրծքէն ու

կոնսակէն, յայտնի էին, թէեւ կարուած: Փէհլիվանի սուրն ալ մէջ-
քէն կախեր էր ան: Կը սոնքար ու ձեւեր կ'ընէր աչքիս առջեւ, զիս
զրզուելու համար:

— Հո՛ն, այն ձորին մէջ կը հանդէի քու մարդդ, — կ'ըսէր ին-
ծի:

Մեքենան օր մը անոնց կաշն էի տարեր, տեսայ որ անոնց շնի-
կը, ընկերներով, գեղէն դուրս կ'երթայ: Երբ պատճառը հարցուցի՝

— Զորին Փլան ուտելու կ'երթան, — պատասխանեցին:

Մեքենավարութիւնը թէեւ դժուար, բայց հաճելի էր: Ո՛ւր որ
երթայինք, մեղի մեծ պատիւներ կու տային, ընկերօջս անշուշտ, ու
կը հրամայէին լաւ ուտելիքներ: Անգամ մը Տգիկի չէքէն գեղ մը ե-
կաւ, ես հոն մեքենայ կը դարձնէի: Լսեր էր իմ հոն ըլլալս, կանչեց
քովը, գացի:

— Լօ՛, — ըսաւ ան, — քեզի համար ըսին թէ այսինչ լերան
վրայ, այնինչ քարայրին մէջ է Ղիսկը: Դուն ե՞րբ ողջնցար:

Ու մեղքացաւ ինծի այդ վայրի, գիշակեր անասունը եւ յանձ-
նարարեց խումբին, որպէսզի չսպաննեն զիս: Մեծցեր էր անոր խում-
բը: Անունը իրմէ մեծ: Թուրք գեղերը կողոպտեր էր կարգով ու ջո-
րիներ յափշտակեր: Հիմակ աշխրէթին մէջ անոնք ջորիներով կը
սլալտէին: Կառավարութիւնը անոնց սկսած էր ուշադրութիւն դար-
ձնել, կողոպտուած թուրք գեղերու բողոքին վրայ:

Ինծի համար տիտուր օրեր էին ատոնք, ուր ամէն մարդ զիս
տեղ մը սպաննուած կը կարծէր: Ես ինքս ալ վատահ էի թէ այդ
ձմրան ձիւնը իմ Ղիսկիս վրայ պիտի գայ: Անգամ մը մեքենան գե-
ղէ մը ուրիշ գեղ մը կը փոխադրէինք, ճամբուն մօտ մարդկային
ծնօտ մը տեսայ, զոր շուները տարեր էին հող: Ինծի ըսին թէ փէհ-
լիվանի ծնօտն էր: «Ձէնկէ փէհլիվին է» — ըսին:

Անգամ մը ծերուկի մը կալը կը հանէինք մեքենայով: Իր
խրճիթին մէջ մինակ էր ան եւ կիսով ողորմութեամբ կ'ապրէր: Ը-
սի, սա մարդը ծեր է, հարցնեմ իրեն թէ կեանքը ի՞նչ է:

— Գալօ՛, (*) ահա ծերացեր ես, եկեր ես ու կ'երթաս: Ըսէ՛
ինծի, դուն սա կեանքէն ի՞նչ հասկցար, կեանքը ի՞նչ է:

Ծերունին խորունկ մը մտածեց, գլուխը կախ, ու զայն վեր-
ցնելով ըսաւ ինծի.

— Ի՞նչ հասկնամ: Թշուառութիւն, քաշէ ու քաշէ: (**)

Ես ալ տարեր բան չէի հասկցեր կեանքէն: Եթէ աղէկ օր տե-
սած իսկ էի, հիմակ մտոցեր էի գանոնք: Քիչ կը մնար որ մտոնայի
անունս ալ ու անունները իմիններուս: Աշխարհի՞նն էի արդեօք՝ թէ
ուրիշ աշխարհէ մը: Այդ օրերուն աւելի քան ճշմարիտ՝ այս հար-
ցումը:

(*) Ծերուկ:

(**) Քօթուլիկի, հա՛ պրզիմ, հա՛ պրզիմ:

Նորէն աշուն եկաւ: Լեռներու անման գունաւեղ ու սիրաղեղ աշունք: Կալերը հասան ու բիրտ ձեռք առած՝ անտառները չափել սկսայ անասուններուն ետեւէն: Կը տեսնէի Քուրտերուն խառուտիկ, երգեցիկ ու մայրց հօտերը, որոնք օրհնութեան եղանակի մը պէս անտառներն ի վեր կ'ելլէին: Կը լսէի ձայները հովիւներուն, հօտերուն, շուներուն, մարդերուն, հովերուն: Կը լսէի միշտ կախարդ ձայնը մահուան, որ ուրիշ աշխարհէ մը դիտ իրեն կը կանչէր...

Աշուն էր լեռներուն վրայ: Տերեւաթափ, դեղին ու դալուկ: Զուրերը՝ ախուր, մարդերը՝ ախուր, թուփերը՝ ախուր ու հովերը՝ խառնաձայն: Անտառին ներսերը կ'երթայի՝ ձմրան համար չոր փայտ կրելու: Մոռցեր էի թէ ձեռքերս երբեւեցէ պրիչ բռնած են: Ի՞նչպէս ընտանեցեր էի այդ կենցաղին ու այդ սովորութիւններուն: Կացին շարժել սորվեցայ, արտ վարել ու ցանել, հօտեր արածել ու դանոնք ջրել ատենին: Կարծր եւ դազան բարձր լուրացուցի: Կողովակ, դողալ, սուր շարժել, հրացան բռնել: Հոն ուրիշ աշխարհ էր: Մեր գեղին մէջ խա՛չ բռնելու սովոր էինք: Հիմա սորվեցանք խաչի տեղ հրացան բռնել: Սորվեցայ թէ կիսափայրենի Քուրտին ծակ երկաթը հազար ու հազար անդամ աւելի զօրութիւն ունի՝ քան քրիստոնեայ Հայուն արծաթէ խաչը: Հրացանի մը ձայնը աւելի անուշ կու դար ինձի՝ քան մեր գեղին կոչնակին հազար մեղեդիները:

Աշուն էր հողի՛ս: Ու ես կ'ըսէի մնաք բարով բուր, բուր մարդերուն ու դաշտերուն:

Գեախնները շող կ'իջնէր, ու լեռներուն վրայ անսահման ցուրտ էր: Նօրէն գազի կ'երթայինք: Կ'երգէին Քուրտերը կատարներուն վրայ:

ձիւնտա մէտէ, միյա պը դըու է,
ձիւնտա մէտէ, միյա պը դըու է,
Լօ, Լօ, դարիպ, Լօ, Լօ, մէգան,
Թու քը չույի էգ փեշտիքըմ,
Լօ, Լօ, Լօ, Լօ, կա ու բէգան:

ձիւ պըլըմտէ պէտֆ տը պարի
ձիւ պըլըմտէ պէտֆ տը պարի
Լօ, Լօ, դարիպ, եւայլմ, եւայլմ:

Թարգմանութիւն —

Լեռնէն մ'ե'րքար, լեռն է վախուտ,
Լեռնէն մ'ե'րքար, լեռն է վախուտ,
Լօ, Լօ, անգէտ, Լօ, Լօ, պանդուխտ:
Դուն որ գացիր, ի՞նչ ընեմ ես,
Լօ, Լօ, Լօ, Լօ, այծեր ու եգ:

Լեռք բարձր է, ձիւն կը տեղայ,
Լեռք բարձր է, ձիւն կը տեղայ,
Լօ, լօ, անգէտ, լօ, լօ, պանդուխտ:

Կ'երգէին անոնք հազարումէկ խողեր, որոնք նոր էին հաներ պատերազմին ու մահացողներուն վրայ: Անոնց երաժշտութիւնը մեղամաղձոտ, յուզիչ ու երկա՛ր, հեծեծազին շեշտերով, հողիս արցունքի աւազանի մը մէջ կը մկրտէր:

Յետի՛ն, յետի՛ն աշնան ձիւները դալու վրայ, քանի մը վարպետ Քուրտերու հետ նորէն մեր լեռները կողոպուտի դացիներ: Մեր մէջ ամենէն յանդուզնը էս էի, սլառանքս հազած եւ հողիս ակունքերու ծայրովը սեղմած: Քանի՛-քանի անցորդներու առջին մինակս կարեցի ու անսնցմէ հաց եւ դոյք կապտեցի: Իմ տարապս, լեզուս ու ձեւերս այլեւս բուն քրտական էին: Քանի մը օր մնացինք լեռներուն վրայ, ու այդ խումբին պետը էս եղայ, անշուշտ խեղճ խումբ մը:

Գիշերները կատարներուն վրայ ցուրտ էր, մարդկութեան խիղճէն աւելի: Մեր խարոյկին թեւերը ձորէ ձոր կ'երկարէին: Ու կը յիշէի ակրոսիցի աւազակներու մասին պատմուածները դեղին մէջ, երբ տակաւին մանուկ էի: Ամէն գիշեր պարարտ մաքի մը կը հալեցնէինք խարոյկին դիմաց ու զայն կը բղկտէինք ու կը լափէինք առանց աղի:

Գացի Գարամանին ու տղոցմէ յոյս կտրեցի:

— Հիմակ անոնք իրենց ձմրան պատրաստութիւնները տեսեր ու ներս քաշուեր են, — ըսաւ ան, — իրենց անձանօթ բոյնէն: Անկէ դուրս կու դան անդամ մըն ալ զարնան: Եթէ ոչ՝ թաց հողին վրայ կը քէնք անոնց հեռքերը ու կը դտնենք զիրենք: Գարնան եկուր, — ըսաւ ան:

Յուսահատ, լերան վրայ հօտ մը դարձուցի: Մէկ-մէկ մաքի պատեցինք անկէ, ստերջներէն: Մորթեցինք ու մաքրեցինք ու միսերը շալկած՝ դիշերով Մէջուտ դարձանք: Անդամ մըն ալ երթալու չեզանք, քանի որ քուրտ գեղացիք մեզ հալածեցին, եւ հապիւ կրցանք ճողոպրիլ անոնց հետապնդումէն:

Օրեր ամբողջ հովեր փչեցին, ու ձիւնը սկսաւ ու տեղաց ա՛յնքան, որ ծածկեց ամէն դի:

Զմեռը նորէն թաւուկով^(*) փայտ կը բերէի լեռնէն: Կէսօրէ վերջ թէմիբին հետ ջազացքը կը դարձնէի: Սառած էին ջուրերը: Սառ կը կտորէինք ու ձիւն կը քերէինք առուին ափին վրայէն: Դէպի զարնան սովը սկսաւ Քուրտերուն մէջ: Ամենէն հարուստը անօթի էր: Անցեալ տարուան սովին նման չէր այս: Զիւները տակաւին

(*) Թաւուկ = բալիսիի ձեւով գործիք մը, որուն մարդ ինքը կը լծուի: Թաւակը ձիւններուն վրայէն կը քոչի, ու երէ վարդը անվարժ ըլլայ, շուտով կը սպաննուի:

գետնի վրայ էին եւ խոտի ու բանջարի յոյսը շատ հեռուն: Մենք ջաղացքը կը դարձնէինք՝ ափ մը ալիւր ձեռք բերելու համար, թէեւ մեր աղացածը խոտի արմատ մըն էր յաճախ, որմէ դեղացիք հաց կը շինէին: Մենք մեր իրաւունքէն դուրս յաճախորդներէն կը գողնայինք ալ: Գիշերը երբ ալիւրը շալկած կը դառնայինք տուն, ճամբան, վարնան համար, ես կը դողնայի թէ՛միբէն, ու հաւաքած ալիւրս ժայռերուն մէջ կը պահէի: Սոյին հեռանկարը չափելը կարելի չէր:

Քուրտերը սկսած էին արտերուն մէջէն ձիւնը փորել ու անոր տակէն սէղ խոտերը ժողվել, գայն եփել ու չորցնել, աղալ ու հաց ընել: Սէզը ցորենի պէս չի մանրուիր: Ալիւրով խառն հաց կ'ըլլար ան, սակայն առանձին, խոտը խաշելէն վերջ, մօխրագունդի պէս կը փշուռէր: Ան ո՛չ համ, ո՛չ սնունդ ունէր, եւ ոչ ալ առանց ջուրի կարելի էր ուտել գայն՝ խեղդուելու վտիտէն:

Պատերազմի սկիզբը լսած էի թէ Գերմանացիները յարդէն հաց կը շինեն եղեր: Լուրը հաղորդեցի թէ՛միբին, ու դործի սկսանք: Շինեցինք սեւ բան մը: Թէ՛միբին բաւական համով եկաւ:

— Լօ, իշտէ կերէ՛ք, — կ'ըսէր, կը բարկանար աղջիկներուն, — Լէլէ, իշտէ կերէ՛ք, — կ'ըսէր, — նայեցէք ես կ'ուտեմ, ի՞նչ համով է:

Բայց իր կերածը չունը չկերաւ: Թայրի նետեցինք անկէ, հոտտեց ու հեռացաւ:

Թէ՛միբին տանը ձորին մէջ եղէգներ կային: Սկսանք անոնց արմատներէն հաց շինել փորձել: Կը մանրէինք արմատները, զանոնք ծեծելով, ճմլելով: Կը չորցնէինք սաճի վրայ, ու կ'աղայինք: Անօդուտ: Ձէր մարսուէր ան ու վիճակինիս գէշ էր: Ես աչքերս նորէն ուրիշ կողմեր յառեցի: Թէ՛միբը ի՛նք անօթի կը մեռնէր, զիս ի՞նչ պիտի ընէր:

Թէեւ ձիւն-ձմեռ, բայց դաւազան մը առի ու հեռացայ անոր տունէն: Ես զիտէի որ Թէ՛միբենք երբեմն ձեռք անցուցած ալիւրը ինձմէ զաղտնի կը ճաշակէին: Մեկնումի պահուն Թէ՛միբ տունին տակը պուրճ^(*) կը ջարդէր նախիրին համար:

— Մազիդ մէ՛կ թելէն պիտի չանցնէի, — ըսաւ, — եթէ վիճակս այս չըլլար:

Ու լացաւ ան, լացի ես ալ, ու ձիւններուն վրայէն ճամբատ քոնեցի:

Մենաւոր, լերան մը վրայ հարուստ տուն մը կար, որ չէր կրնար չէթէներու կողտուտէն գլուխ փրկել: Երկու երիտասարդ եղբայրներ էին անոնք, ամուսնացած: Իրենց մայրը միտասին էր: Ունէին անթիւ հօտ ու առատ հաց: Հոն գացի, եւ վնասեցին զիս: Բացտորեցի թէ իրենց հասկցնելիք ունիմ ես եւ թէ իրենց օգտին հա-

(*) Պուրճ = ամբամ, ուտի ամտիբու ճիւղերը, գոթս կը քարդեմ իբրեւ ամատուճներում կեր, սնունդ (գաւառակամ):

մա՛ր հոն զացած եմ: Ըսի թէ իրենց կը տանիմ՝ տունը կողոպուտէ
փրկելու դարձանք:

Քուրտ հօճաները(*) Գուրանի միջոցով գուշակութիւններ
կ'ընէին ու նաեւ մոգութիւն: Ես անոնց ըսի թէ իրենց հօճաներէն ա-
ւելի՛ լաւ կարգացող մը ըլլալով, առաջնակարգ մոգութիւն գիտեմ
ու եթէ մինչեւ այդ օրը դարձածած չէի գայն, անո՛ր համար էր, որ
իրենց հօճաներուն նախանձէն վախցեր էի: Ու յետոյ, պէտք ալ ու-
նեցած չէի ատոր: Տանտիրուհիին ըսի թէ իրենց պիտի չինեմ քլըսքլմ
մը ու գայն դնեմ դուրսի դրան շեմին՝ տակը: Ո՛վ որ այդ տունէն
նէրս մտնել ուզէ՝ առանց ինքզինքը բարեկամ համարելու, հոն պի-
տի իյնայ մեռնի: Անոնք խանդավառուեցան ու ինծի աղաչեցին, որ-
պէսզի գիրենք փրկեմ:

Տանտիկինը խոչոր տապալիով իւղ հալեցուց, ինծի սքանչելի
ուտեստ մը պատրաստեց: Դպալը առաջս քշեց ու

— Կե՛ր, մատա՛ղ ըլլամ քեզի, կեր, — կ'ըսէր:

— Զեր շունին ետեւի ոտքին եղունդէն ինծի քիչ մը բերէք, —
ըսի:

Անոնց դամբոնները ահեղ էին, չէին թողուր: Անհնար եղաւ
իմ ուզածս ինձ բերել: Այն ատեն բաւականացայ շունին ստեւովը:
Ու քանի մը օր շարունակ աղօթեցի ու պատրաստեցի քալիսմանս:
Կինը խոստացաւ ինծի բաւական ալիւր տալ: Ես յետագային գայն
առնելու մտքով աչքերս յառեցի նոր սրսերու վրայ:

Աշունը, հարուստ Քուրտ մը, որուն զաւակը գինուոր էր եւ
ինք անկէ լուր չունէր, ինձմէ խնդրեց իրր ամենէն անուանի հօճան,
որպէսզի գուշակութիւն մը ընեմ իր տղուն մասին: Ես խոստացայ
օր մը դինքը գոհացնել ու այդ օրը հասած էր: Այդ Քուրտին փեսան
բանաստեղծ(**) Սլօէ Քէքօ, մօտերը գեղ մը կը բնակէր: Սլօ իմ բա-
րեկամս եւ հիացողս էր: Անոր դացի, միտքս յայտնեցի ու միասին
իր աներսըը գացինք:

Մարդը, Հիւսէյինի էլէքէ անուն, Քուրտուր գեղացի, հիւանդ
պառկած էր: Անկողնին մէջէն մեղ սիրով բարեւեց: Մեզի ակութիւն
քով անկողին ձգեցին ու նստանք: Այդ գեղին հօճան, այսինքն գրել-
կարգալ գիտցողը, լսելով իմ այցելութեանս նպատակը, գիտ փոր-
ձելու համար քովս եկաւ: Ան չէր հաւատար թէ ես կրնայի գուշա-
կութիւն ընել: Ի վերջոյ

— Լաւ, — ըսաւ, — ես քեզի մեր Խամայիլին մասին հարցնեմ.
Թէ որ գիտնաս, ուրեմն ամէն բան դիտնալու կարող ես: Ան երեք
տարի առաջ գինուոր դնաց ու մնացածը չենք գիտեր: Ըսէ թէ ի՞նչ
եղած է:

Ներսէնս զող մը սկսաւ, ու թէեւ ինքզինքս չէի տեսներ, սա-

(*) Գրեյ-կարգալ գիտցող:

(**) Աշուղ, սաղիք յօրինող ու երգող:

կայն կ'ենթադրէի որ բաւական տեղունած ըլլալու եմ: Թէեւ հանեցի թուղթի կտորներ եւ սկսայ անոնց վրայ գիրեր ու հաշիւներ տեղալ, սակայն այդ ամէնը նեղ զրութեանս ելք մը գտնելու համար էր: Վերջապէս ապաւինեցայ յանդրնութեան, հարցուցի անոր տարիքը ու բոլոր պարագաները, եւ աւելցուցի.

— Այդ մարդը զինուորութեան մէջ երեք ամիս տպրած է, ու անկէ վերջ... ու անկէ վերջ... չեմ գիտեր... չեմ ըսեր...:

— Մենք գիտենք, մենք գիտենք, ըսէ, մի՛ պահեր, — աւելցուց Տօճան, — ու անկէ յետոյ մեռաւ: Կեցցէ՛: Մարդը գիտցաւ, — վճռեց Տօճան ու կռնակս ծեծելով դուրս ելաւ:

Հիւանդը ուրախացաւ ու Սլօն հիացած վրաս կը նայէր:

— Ի՞նչպէս կը գիտնաս, ի՞նչպէս կը գիտնաս, — հետաքրքրուած կը հարցնէր Սլօն:

— Ես քեզի վերջը կը սորվեցնեմ, — ըսի անոր, — հիմա զիս հանդիստ ձգէ:

Ինչքա՛ն ուրախ էի ես: Անմիջապէս տանտէրը հրաման տուաւ, որպէսզի մատաղ կարեն: Ելանք Սլոյին հետ հօտին մէջ դացինք ու մեր նախընտրած ոչխարը ուղեցինք որ մորթէ: Ես լուսոցուեցայ զոհին արիւնով ու մաղթանքներ ըրի տանտիրոջ աղուն համար:

Ի՞նչպէս իմացեր էին գեղացիները: Ո՞րը կորուսած մարդ չունէր այդ օրերուն: Անունեցան դէպի ներս ու իրար կը հրէին կիները: Յաղթանակ տեղն էր: Ես պայման գրի իւրաքանչիւր գուշակութեան մէկ քաշ ցորենի ալիւր, որովհետեւ սնեւոր էր այդ գեղը: Ու բոլորին կորուստները երեւան բերի: Եզիպտոս, Պաղեստին, Կովկաս, Սիպերիա, մինչեւ Փրանսական ճակատ ցրուեցի անոնց փնտառները: Ի՞նչ անխմանալի տեղերու անուններ կու տայի ես: Հարկաւ ճշմարիտ էին ըսածներս: Եթէ ոչ, ես ուրիշ⁶ լսած պիտի ըլլայի այդ անունները, քանի որ իրենք լսած չէին: Այս տրամաբանութեամբ կը հաւատային ինձի:

— Բոլորը ողջ են, — ըսի ես, — ու օր մը տուն պիտի դառնան...:

Մերթ կը խղճահարէի: Արդեօք հիմա իմիներս ալ գուշակի մը կողմէ անանկ խօսքերով չէի՞ն խաբուեր իմ մասին: Ու կը տխրէի:

Գեղը տօնի, ուրախութեան մէջ էր: Ու ամէնը իրար կը շնորհաւորէին ու բարի լուրեր կու տային իրարու: Ինչքա՛ն երջանիկ էին անոնք...:

...Գիշեր: Գուռները զոց: Ակութը կաղնիով ճարճատուն: Միւսը կաթնայով ակութին վրայ: Անգին հարսերը խմոր կը թրեն ու հաց կ'եփեն: Գուբերէն ծլած մեղր դուրս կը հանեն մեզի համար: Սլոյին սիկարի թուղթերը հատցուցի, անոնց վրայ ընելով իմ հաշիւներս: Երկար մտածեցի, գլուխս հակած այդ թուղթի պատառիկներուն վրայ ու ծանր լրջութիւնով տանտիրոջը ըսի.

— Տղադ փախուստի ճամբան է, չ'ուշանար ու կու դայ դուռդ
կը գարնէ :

Խեղդուկ հոռու մը փրթաւ հիւանդին կոկորդէն : Ակումները
կճրտեց : Վեր առաւ վրուխը, բարձին գարկաւ : Անկողնին մէջ դար-
ձաւ : Անհանդիստ էր : Ըսել կ'ուզէր՝

— Ձէ, ալքքան բախտաւոր չեմ ես, չե՛մ հաւատար... .

Հոյակապ ճաչէ մը վերջ, ինկանք-քնացանք : Աստուծն ելայ ի-



Օվկենց Բարդոյիս կինը՝ Կեմակ (առփի)
եւ գոքանչը՝ Եղսա հարսան, որ մեռած է արդէն :
Քոստայետոյեց — Քոչեան Նշանիս կինն ու ազգիկը :
Նկարը զրկուած է Տիգրանակերտէն (1934) :

բաւուներս հաւաքելու: Բաւական ուլիւր եղաւ: Գեղացիներուն ըսի թէ դարնան նորէն կու գամ եւ իրենց սիրելիներուն մէջմէկ Աուսխա կը շինեմ, որպէսզի անոնք անխորձ տուն դառնան:

Մօտը, ուրիշ գեղ մը հասայ: Իմ յաջողութենէս ես խանդավառուեր էի: Արեւ էր ու տանիքին վրայ քանի մը հողի նստած էին: Անոնք փափաքեցան որ իրենց ալ կորուստները գտնեմ: Մայթաքեցայ: Մէկը իր եղբայրը հարցուց, ըսի թէ ողջ է:

— Տո՛ւնդ քանդուի, երեք տարի է անոր ոսկորները փտտեցան, ձեռքովս թաղեր ու եկեր եմ, դուն ինչպէ՞ս ողջ է կ'ըսես:

Պոռաց, վրաս յարձակեցաւ:

— Առէ՛ք սա խաբեբային ալիւրը ձեռքէն: Զինքը կապենք, Բուժաւոր տանինք, նայինք ի՞նչպէ՞ս այդ սուտերը խօսեցաւ:

Ես փախայ ալիւրս առած: Մինչ ան ետեւէս կը վազէր, իսկ ես կը սպաննայի անոր՝ Թէմիրին ու իր տղոց անունով, որոնք բաւական ազդեցիկ էին: Թէմիրին ծանօթներէն մէկը միջնորդեց ու մարդը ետ գարձուց:

Ես լեռներէն սարսափահար փախչելով Թէմիրի անտառը դարձայ: Ալիւրս ժայռերուն մէջ պահեցի ու տուն դացի: Այդ գիշերը հոն հիւր եղայ: Յաջորդ առտուն գեղացիները եզներով Զարա կ'երթային՝ ուտեստ բռնցած եզներուն, բանակին համար: Թէմիրին եզները առած՝ անոնց խումբին խառնուեցայ: Ու ոտականներու ընկերակցութեամբ, առանց ճանչցուելու անոնցմէ, կ'երթայի Զարա:

ԶԱՐԱՅԻ ՄԷՁ

Մարտի վերջերն էր: Զմեռը սաստիկ՝ Քուրտերուն մէջ: Ամբողջ ձմրան հանգստութիւն չունեցայ, գիշերը չքնացող մէկուն պէս: Մեր լեռներուն կը նայէի ու կը սպասէի որ անոնք սեւնան, որպէսզի երթամ նորէն տղաքը փնտռեմ: Սակայն Քուրտերուն մէջ կացութիւնը այնպէ՛ս էր, որ պէտք էր հեռանայի՝ աշիրէթէն չսպաննուելու համար: Որովհետեւ, Յունուարին, Թէմիրի տղոցը հետ լերան դամէ մը երկու այժ գողցանք: Վերջէն գեղացիները եկան միտերը գտան Թէմիրին տունը ու մեզ կը մեղադրէին իբրեւ գող, ու Թէմիրին տունը դողի օճախ: Ի՞նչ ընել ոտակայն: Ասլիբ'լ պէտք էր: Ու ատոր համար պէտք էր դողնայի ու յափշտակէի եւ Թէմիրն ալ աղբիցնէի, զի՛ս ալ: Գեղացիները ձմեռը զիս հրապարակաւ սիրտի ստակեցնէին շան պէս, եթէ Թէմիր տէր եղած չըլլար: Վարկս խախտեցաւ գեղին մէջ: Պէտք էր հեռանալ:

Աբ Թէմիր լաւ ջաղացպան չէր: Ալիւրը խոշոր կ'աղար ու իբրաւունքէն դուրս կը գողնար: Անոր համար ջաղացքը լաւ չէր աշխատեր: Այդ տարին զայն բարի եւ ազնիւ կիլիկի վարձու տուաւ: Կիլիկ զիս գեղին մէջ առաջին անգամ հիւրասիրելով՝ Թօփալ Ալի

Պէկին տանողն էր : Բայց կ'ըսէին թէ էղիզ արգար համեմատութիւնով իրենց իրաւունքը չի տար : Ո՞ր կապեցին անոր եւ որոշեցին վրէժ լուծել : Օր մը, ձանձոն մեղի եկաւ : Գիշերը Բիզան ու ձանձոն զիս առած ճամբայ ելան : Գացինք դամբ, ուր այծերը կը ձմեռէին : Գոմը լրտեսելով տեսանք որ հովիւները կը քնանան : Զիս դուռը թողին ու ներս մտան : Պահ մը յետոյ դէր ու ստերջ այծ առած դուրս ելան : Առիւծի պէս քաշքշեցին զանոնք ձիւնին վրայէն : Տուն հասնելով իսկոյն մորթեցին, քերթեցին : Փաթիման շա՛տ բարկացաւ ու երեսը առած լուսադէմին Տիգրիկի դնաց : ձանձոն իր բաժին միսերը սուպրակ մը լեցնելով՝ շալկեց իր դեղը զնաց : Մենք թէ՛միրին սուներ խնջոյքի մէջ էինք, առատ միսերով : Գեղը յաջորդ օր կ'իմանայ դողութեան լուրը : Կիւլ Հասան ամբողջ օրը բլուրի մը վրայ նստած թեմիրին տունը կը լրտեսէ : Քանի որ էղիզին այծերն էին դողցուեր, թէ՛միրէն կը կասկածին : Մեզմէ մէկը շարունակ դուռ ելլելով դէպի գեղ կը նայէր, որ երեւութապէս հանդարտ կ'երեւէր : Կէսօրէ վերջ Ար թէ՛միր գեղ զնաց, կացութիւնը տեսնելու, ու ըսաւ թէ՛ վախ չկայ, մեր մասին չեն կասկածիր :

Իրիկուան դէմ Զէօհրէ դուռ ելած էր : Յանկարծ պոռալով ներս վազեց .

— Հայրի՛կ, կու գան, ամբողջ գեղը մեր տան վրայ կու դայ :

Իսկոյն միսերը, տաք թէ՛ սլաղ, ախոռին մէջ հորերը իջեցուցին ու վրան հողով գոցեցին : Գեղացիներու ստուար խումբ մը մեր տունը կոխեց : Թէ՛միր, հանդարտ, «հրամայեցէք, խուզարկեցէք», ըսաւ, «մենք բան մը ըրած չենք» : Բայց տապիւում միտի հոտը մէջտեղն էր : Իմ ձեռքերս մտաւ ու ճարպոտ էին : Մէկը զանոնք բռնելով պատճառը հարցուց : Ըսի որ «ցուրտէն մորթն ճաթած ըլլալուն՝ ճարպ քսեցի որ բուժուի» : Բայց անօրոտ : Հետքեր դասն : Ախոռին յատակը ոտքով զարնելով հորերէն հանեցին միսերը ու բերին :

Հիմա՞ :

Թէ՛միր յայտարարեց որ էղիզ ջաղացքէն իր իրաւունքը դողցաւ, ինք ալ անոր այծերը բերաւ : Ի՛նչ կ'ուզեն եւ կ'ընան՝ թող ընեն : Ինք բանէ՛ մը չի վախնար :

Ամենէն տկարը ես ըլլալուս, դեղացիք զի՛ս մեղադրեցին :

— Հա՛, այնպէ՞ս ուրեմն : Մենք քեզ կը պահենք եւ կեանքդ կը փրկենք, դուն մեր այծե՞րը կը դողնաս : Եկո՛ւր մէկ կողմ տեսնենք :

Ես լուս էի : Կրնայի՞ք ըսել որ ի՞նչ կ'ուզէք ինձմէ, եղբայրներս ըրին, ձանձոն ու Բիզան : Բայց Բիզայէն կը վախնային : Ու երբ զի՛ս միտն դատի կը քաշէին՝ սատկեցնելու համար, Ար թէ՛միր մարմինը ոստումով մը առջիս նետելով՝ իր կուրծքը լմինիս սուպրա դարձուց, ու ըսաւ .

— Ի՞նչ կ'ուզէք արայէն : Ի՛մս է մեղքը : Ան յանցանք չունի : Ծառայ է զովս ու գերի : Երբ զինքը դողութեան զրկեմ, պէտք է

հնազանդի: Երբ սպանութեան զրկեմ, նո՛յնպէս: Կ'ուզէ՞ք զայն սպան-
նել: Լա՛ւ: Այն ատեն պէտք է որ նախ զի՛ս դարնէ՞ք: Երբ ես ինկայ,
անկէ՛ յետոյ կրնաք զայն ալ հարուածել, անկէ տաջ ո՛չ, երբե՛ք:

Ու սկսաւ իր պղտիկ ու բոցալաւ աչքերով աջ ու ձախ զննել
ու հպարտօրէն բոլորին վրայ նայել, առջիս կեցած: Ոչ ոք չհամար-
ձակեցաւ ալլելս ձեռք վրաս զնել: Գեղացիք սմբեցան: Մինակ է-

— Ի՞մ հիւրատիրութիւնս եւ տունս կերած հացը մոռցար, եւ
ապերախտօրէն իմ այծերս պողցար: Սպասէ՛, ասնելի՛քդ թող ըլլայ:
Քեզի պիտի ցուցնեմ:

Ու մեկնեցան:

Այդ օրէն իմ հատա՛տ մահափճիտ արձակուած էր: Ան ժա-
մանակի խնդիր էր, մինչեւ ձիւնը հալէր ու ես անտառ մտնէի մի-
նակս: Իսկ ես մի՛շտ անտառներն էի մինակս:

Ու կը նայէի մեր լեռներուն անձկութեամբ, որպէսզի սեւնան
անոնք: Կատարները դեռ հաւկիթի պէս ձերմակ էին ու հալելու ալ
յոյս չէին տար: Ուղեցի երթալ Զարա, հայ բարեկամներու շնոր-
հիւ զէնք մը ձարել, ու դառնալ մեր լեռները:

Ձիւնի ճամբաներէն եզներով ու ընկերներով ճամբայ ինկանք:
Քանի՛՜քանի տեղեր ժանտարմաները մեզ խաչածեցին: Երեսս դար-
ձուցի ու անցան անոնք: Թուրքերուն հաճոյքէն բան մը պակաս չէր:
Ձին հեծած, շահատակութեան կ'երթային զեղերը, կառայարու-
թեան ու օրէնքի անունով:

Գեղ մը իջանք: Քուրտ ընկերներու հետ տուն մը հիւր եղանք:
Փշրանք մը ուտեստ չունէի միասին: Տանտիրուհին քիչ մը վիկ խա-
չեց, դալաչեցի ու պառկեցայ: Յաջորդ օրը ձիւնէն հողի սահմանը ան-
ցանք: Իէպի Զարա ձիւնը հալած էր ալլելս: Ճամբուն տակ կիտուեր
զեղ մը իջանք իրիկունը: Ծամ էի: Ինձի փշուր մը հաց տուող չկար:
Այնտեղ բակի մը մէջ կրակ վառեցինք, փլատակէ մը փայտեր ձա-
րելով: Բակին տէրը ժանտարմաներով մեր վրայ բողոքի կու դարձ-
նել, առանց ծածկոյթի, խոնաւ բակերուն մէջ:

— Բոլոր յանցանքը սա Հայունն է, — սկսան Քուրտերը: — Աս
դաւաղիւր մարդերն են ամէն տեղ խոսվութիւն հանողը: Անգամ մը
սա ժանտարմային ձեռքը տանք, տանի քիչ անդին չարցնէ, ամէն
ինչ կը հանդարտի:

Սպառնացի անոնց որ տեղերնին ծանր նստին:

— Ձեզ ալ հետս մահ կը տանիմ, զգո՛յ՛, հա՛, — ստատեցի:

Պօսք չէին հասկնար: Յարձակեցան վրաս, որպէսզի բռնեն ու
յանձնեն: Մութ էր: Մէկ-քանիին երեսները ճանկեցի, ուրիշները
զարկի եւ մէկ կողմ ձգեցի ու փախայ: Գիշերը, նորէն հոն դարձայ,
Աւտօ անուն բարեկամս դատայ: Աւտուն ան թուրքէն ետ մնաց, որ-
պէսզի միասին երթանք Զարա:

Խուճբէն անջատ ու ետ մնացած, Աւտոյին հետ եզները կը քշէինք խճուղիէն:

Գողջ դարուն էր: Բոժոժաւոր կարաւանները անդադար կ'անցնէին ճամբաներէն: Ի՞նչ էր պակսեր այդ հողերէն: Ճամբաներուն վրայ ու ամէն տեղ մարդ լեցուն էր: Մերիններուն պակսիլը երեւոյթէն յայտնի չէր ըլլար:

— Փա՛ռք Աստուծոյ, փա՛ռք Աստուծոյ,— կ'ըսէին Թուրքերը իրարու: Անպիտան Թուսը ետ կը քաշուի: Յաղթական բանակը կը քալէ ու կը դրուէ անոր թողած տեղերը: Էրզրում կը հասնինք շուտով: Ա՛լ աղէկ ենք: Լուրերը աղէկ են:

Խելքս չէր հասներ թէ եղներով ու շալակով ուտեստ զրկելով դինուորին, զիչեր-ցերեկ լեռներէն-ձորերէն փախստական ժողովել ու զանոնք ձեռնակապով ձակատ զրկելէ վերջ անոնք ինչպէ՞ս աղէկ կ'ըլլային ու «աղէկ ենք», կ'ըսէին...

Բլուր մը հասանք ու տեսանք դեռի հովիտ մը, լայն ու բերրի դաշտերով: Ուռիներ, ծառեր, կանանչ, կանանչ: Կարմիր տանիքներ ու ճերմակ շէնքեր, հեռո՛ւն կ'երեւէին: Ծուրջը բուռէ ճերմակ բլուրնէր կային: Բուռերուն տակը փոքրիկ քաղաք մը կ'երեւար: Չարան էր: Ճամբուն մօտ քէֆէէ մը կար: Քիչ անդին վանք մը, Հայոց: Դաշտը ընդարձակ էր, կը քալէինք դանդաղօրէն, տակաւ կը մօտենար քաղաքը: Պարտէզով սիրուն տուներէն վերջ, շէնքի մը առջեւ կեցանք: Կառավարական շէնքն էր ան:

Գողջ ու անուշ օդ մը կար: Արեւը ձայլ սուր էր հոն: Արքայութեան պէս զեղեցիկ էր հոն: Եռուղեւ: Խճուղեւ: Անցուզարձ: Մարդեր, կոկիկ հագուած: Մոյկեր ու մուշտակէ վերարկուներ: Օձիք ու փողկապ դրած: Իրենց ձեռքերուն մէջ թուղթեր կամ գուռագան: Մարդեր սարարտ, ուրախ, ծիծղուն: Մարդեր կարմիր երեսներով ու դահուճակ աչքերով: Չայնե՛ր, աղմուկ, խճուղեւ: Կառավարական շէնքը հոյակա՛ւ: Հրապարակին վրայ, կաղնիի բլրիս կռթնած, կը դիտէի բոլորը: Իրակա՞ն էին տեսածներս: Տեսածներս երազ մը չէի՞ն: Այդ բոլորը իրա՞ւ էր: Կեանքը ուրիշ տեղեր դես այսպէ՞ս է եղեր: Ուրեմն իմ մեղքս ի՞նչ էր: Հապա լմիններս ո՞ւր են: Ո՞ւր է, Հայեր ալ կա՞ն հոս: Ո՞ւր եմ... Աչքերուս ազօտ կ'երեւէր բոլորը: Քօղուած էին անոնք: Կծկտեցայ պատի մը տակ, եղի մը ետին: Կու լայի... Աչքերս լեցուեր էին վրէժի, ցաւի ու մօլեղնութեան արցունքներով:

Աւտօն շուկային մէջ գտաւ մեր գեղացի պատիկ տղայ մը ու գայն քովս զրկեց: Ան ինձի հետ Քուրտերու մէջ էր ու հերու դարնան Չարա եկած էր: Միմոն, — ա՛յս էր անոր անունը, — զիս առաւ ու զինազորձ բարեկամներուս տարաւ: Երկաթագործներուն շուկային քով, փոքրիկ կրօպակի մը մէջ, սեկէ(*) վալաներ(**) կապած,

(*) Կահուած մարք:

(**) Կրծկալ:

հայր ու դաւակ զէնքերու վրայ ծռած կ'աշխատէին : Ուրախութիւն եկաւ իրենց հողիին՝ երբ զիս տեսան : Ու ընդունեցին սիրով, դրկաբաց :

— Կամուրջէն ինչպէ՞ս անցար, — ըսին :— Եթէ կամուրջին վրայ բռնուէիր, քեզ հո՞ն կը դարնէին : Բայց կամուրջէն ասդին անցնողներուն բան մը չկայ : Ա՛լ ազատեցար, հոգ մի՛ ընէր : Թշուառութենէն չէի՞ր կշտացեր դեռ, ինչո՞ւ կանուխ չեկար : Նախնական Քուրտերուն մէջ ալ մարդ կրնա՞յ սպրիլ եղեր : Անոթի չըլլաս, — հարցուցին :

— Անոթի եմ, — ըսի — երեք օրէ ասդին :

Թալէաթ շուտով վազեց քրոջը տունէն հաց բերաւ ինձի :

Մտածեցին թէ զիս ի՞նչ ընեն, որպէսդի զինուոր չըլլայի : Վտանգաւոր առարկայ մըն էի եւ ինձի հետ խաղ չէր ըլլար : Պէտք էր զիս տանիլ կառավարութեան յանձնել : Կառավարութիւնը պիտի հարցնէր թէ ո՞ւր էի այսքան տարիէ ի վեր : Ո՞վ կը պահէր զիս : Ինչո՞ւ փախեր էի սպանդէն, ի՞նչ իրաւունքով եւ յանդիմութեամբ : Այդ բոլորը դժուար բաներ էին : Անոնք Մուխլիս անունով ազդեցիկ թուրք բարեկամ մը ունէին, որ զինուորական հրամանատարին թիկնապահն էր :

— Ջարդերէն առաջ անոթի շուն մըն էր, — ըսին, — հիմա ունեցածին հաշի՛ւը չկայ : Սպաննեց ու կողոպտեց : Ան հիմա ընդարձակ հողեր ունի եւ անոնց համար ծառայ կ'ուզէ : Քո՛վը կ'առնէ, կ'երթաս, կ'աշխատիս :

Մուխլիս երիտասարդ թուրք մըն էր : Եկաւ տեսաւ զիս ու հաճեցաւ քովը առնել, անշուշտ ճրի, պայմանաւ որ իրենք երաշխաւոր ըլլան ինձի : Անոնք զիս դսիկցին ու երաշխաւոր եղան :

— Մեծ ընտանիքի դաւակ է, — ըսին :— Հիմակուան վիճակին մի՛ նայիր : Երեք տարի լեռները մնացած է, Քուրտերուն մէջ, ի՞նչ պիտի ըլլայ :

Մուխլիս կը նայէր ինձի՝ զննող նայուածքներով, ինչպէս մտադործը, որ անասուն մը ծախու կ'առնէ :

— Շա՛տ աղէկ, տո՛ւն զրկեցէք, — ըսաւ ու անցաւ ւնաց :

Իմաստուն ծերուկը սկսաւ ինձի իրատներ տալ .

— Գողութիւն չընես, հա՛, վերջը մեզ ամօթով կը ճգես : Նայէ որ երեսներս ձերմակ հանես : Քուրտերուն մէջի սովորութիւնները մտայիր :

Գացինք թուրքին տունը : Ան զիս ախտը տարաւ : Հոն հաց զրկեց ինձի : Այդ ախտը իմ բնակարանս եղաւ : Կապերտի մը մէջ, հոն մտուր մը կը պառկէի : Քիչ մը վերջ ձերմակ փաթթած մարդ մը ներս եկաւ ու սկսաւ հարցաքննիչ դատաւորի նման քննել զիս : Ո՞վ էի, ո՞ր տեղացի, ուրի՞չ կու գայի, եւ այլն : Անունս կը հարցնէին, անունս Ալի է կ'ըսէի : Այդ փաթթոցաւորը ըսաւ թէ ինք Հայ է, ու սկսաւ հայերէն իօսիլ : Ան զնաց, ուրի՛չ ձերմակ կապած մէկը ե-

կաւ, կտղ, դաւապաններով: Ան ալ զիս հարցաքննեց ու ըսաւ թէ
ինք տեղացի իսլամացած հայ կօշկակար մըն է: Մուսլիսի կողմէ
կու դային անոնք:

Իրիկունը պացի թաւէտթի տունը: Միտքս յայտնեցի թէ ղէնք
գնելու եկած եմ:

— Կեցի՛ր, — ըսին անոնք, — հօրդ դրենք անպամ մը, Պոլլա,
հասկնանք թէ ո՞ղջ է՝ թէ մեռած: Կարելի է քեզ քովը կը տանի: Լեռ
երթաս ի՞նչ պիտի ընես: Կը սպաննուիս նորէն:

Ու ա՛յլ օրն իսկ հօրս դրեցին:

Ես Մուսլիսի հովիւ եղայ: Անոր զոմէշները, եգներն ու կո-
վերը կ'արածէի Ալիսի դասը ափերուն վրայ: Ամէն քայլափոխիս
կմախքի կը հանդիպէի: Գետափը, չըջակայ ձորերն ու բլուրները
լեցուն էին մարդու կմախքներով: Զարհուրելի էր տպաւորութիւնս
այդ օրերուն: (*)

Լերան վայրի տեսիլն վարժ աչքերս հիմա ի՞նչ կը տեսնէին
հաս: Թուրքերը զինուած եւ ուրախ, ձիերով կը պտըտէին: Ու կը
պատմէին իրենց ըրածները շատ մեծ պարծանքով: Ու կը սպասէին,
սրպէսզի մնացող Հայերը ուրախանան այդ բոլորը լսելով: Չէ՞ որ
մեռնողները կեալուր էին: Մինչդեռ հիմա, մնացողները իսլամ են:
Ճերմակ կապած են: Մզիթ կ'երթան: Ու կը խօսին իսլամնա, այ-
սինքն թուրքերէն:

Օր մը Մուսլիսին արտն էինք՝ ցանքի, անոր Նիքոլա յոյն ծա-
ռային ու Քեամիլ անուն բարեկամին հետ: Քեամիլ թթու թուրք,
հասարակ հոգիի տէր իսլամ էր:

— Օլա՛ն, — ըսաւ ինծի ան, — դուն անկե՞ղծօրէն եկեր-յանձ-
նուեր ես: Իրաւէն, սիրով, իսլամ եղած ես, թէ ոչ երբ օգերը տաք-
նան, նորէն պիտի փախչիս, լեռ երթաս:

Քեամիլէն առաջ ընաւ մէկը զիս փորձած չէր այդ կերպով:

— Քեամիլ՛, — ըսի անոր, — հօ՛ր ըրէ եւ սերմ նետէ: Իմ ի՞նչ
ընելիքս քեզի չէ մնացեր:

— Օլա՛ն, — ըսաւ ան, — ես քու աչքերէդ կը վախնամ: Դուն
սոսկալի ես: Անպատճառ պիտի փախչիս, նորէն լեռ երթաս: Ի՞նչ
կ'ընես լեռը: Թուրք կը սպաննեն՞ս . . .

Նիքոլան ինծի ըսաւ.

— Օլա՛ն, աս ձեզմէ է, Հայ է, մի՛ վախնար, — տեսնելով որ
դոյնս նետեցի:

— Ես, — հաստատեց Քեամիլ, — առաջ կեալուր էի, փա՛ռք
մարդարէին, իսլամ եղայ:

Չհաւատացի: Յետոյ սակայն հաստատեցի թէ այդ մոլեռանդ
թուրքը նախկին Հայ մըն է: Կինը թրքուհի է ու զաւակներ ունի: Ան
կը խօսէր հիանալի իսլամնա . . .

(*) Սուկը քերթուածս հո՛ն գրեցի:

Իրիկուն մը անասուններս խճուղին ձգած ախոռ կը դառնայի : Քանի՛ դարձողներ ճամբէն : Նաեւ մէկը, էշ հեծած, կին մը ետեւէն : Այլ օրերը, Ապրիլի կէսերը, կը լսէինք Հայոց նահանջը Երզնկայէն եւ անոնց վրիժառուիւնները : Բարեւեցի մարդը :

— Ուրի՞ց՝ բարով, դէպի ո՞ւր, էմի՛, — հարցուցի իրեն :

— Երզնկայէն, տղաս, Երզնկայէն :

— Հը՛՛մմ... վերջը՞...

— Ութ օր դեանին տակը պահուեցայ ու դժուար ազատեցայ : Անօրէնները մեզի ինչե՛ր ըրին : Բոլո՛ր այրերը դատեցին ու բանտերը լեցուցին : Անկէ զիշերը զանոնք կապեցին ու տարին ձորերը լեցուցին : «Ձեզի հետ երթանք, նայիմ Հայերը ո՞ւր տարիք-լեցուցիք», կ'ըսէր անոնց Մուրատ փաշան ու զանոնք կը տանէր, կը սպաննէր : Ինչե՛ր ըրին մեզի, ի՛նչ բռնութիւններ, անօրէնները : Գացին-կորսուեցան վերջապէս, ազատեցայ ու անցայ, իմ երկիրս կ'երթամ...

Մարդէն առաջ անցայ : Աչքերս ուրախութենէս թրջեցան :

— Ա՛խ, — ըսի, — ա՛լ հոգս չէ թէ մեռնիմ, մեր վրէժը կ'առնեն անդին :

Լուրը տարի թալաւթին : Ուրախութենէն շուարեցաւ ան ալ :

Ապրիլի գաղջ օրով, նորէն Սվազի կողմերէն բանուորական վաշտ մը եկաւ ու կ'երթար Կարին : Բոլորը Հայեր էին :

— Աղջի՛, մեր տէրտէրը մէջերնին եղեր է, օղջ է եղեր, — կ'ըսէին Զարացիները իրարու : — Տեսեր, ճանչցեր են : Ան մտաւ չրթուեցին տարեր, չէ խօսեր ու անցեր պացեր է : Զինուորները եկան տավալ վաւանայով եւ ուրախութեամբ, ինձմէ քանի մը օր վերջ : Զարան անոնց ազադակներով կը թնդար, աչքերուն առջեւ հեղնո՛ղ երկնքին : Ինձի կը թուէր թէ անոնց երաժշտական գործիքները իրենց իններուն ոսկորներէն եղած ըլլային, ու անոնց ոսկորներուն քունը խոռվելու համար վարձուած խրտուխիակներ : Զոււելի՛, գոուելի՛ : Բանականութիւն ու խղճմտանք չկար հոն : Մէյմէկ ընտանիքի ցաւոտ մնացորդներ, յիմարի եւ խելազարի տղանցը չէի՞ն կատարեր այլ մարդերը, սիւսուած ակամայ սուղի ու մահուան մռայլ քառուղիներուն վրայ : Երբ անոնք մերիներուն նշխարները տեսնէին, անոնց սրտերէն յուզում եւ արցունք չէ՞ր դար : Ուրեմն ինչպէ՞ս այլ ուրախութիւնը կեղծել : Մակայն այն օրերը հաշիւի ու տրամաբանութեան չէին դար : Այդպէս էին անոնք...

.. Մուսլիխի հաւատարիմ ծառան շատ կը վախնար իր պաշտօնէն եւ ատոր համար ինձի աչք բանալ չէր տար : Կը սիրէր զիս բամբասել ազային առջեւ : Ան ուրիշ հոգի էր, ես՝ ուրիշ : Ան կը սողար, ես բարձրէն ու ծուռ կը նայէի : Կը կռուէինք : Օր մըն ալ զիս շատ բարկացուց : Գնաց հանրմին ու աղային լացաւ, որ զիս հանեն : Հանրմը սուներն ներսն էր : Նիւրոյս երկու տարի է հոն էր, ու դեռ մէկ անգամ, տրեխները հանած ու խոնարհելով անոր ներկա-

յացած էր: Երկրորդ անգամ զնաց ըսելու թէ ինձմէ կը վարնայ, զինքը կը խեղդեմ: Հոնեցին զիս անկէ՝ երկու շաբաթ վերջ: Հայեքէն անոնք որ այս բանը լսեցին, տխրեցան ու սկսան հայհուակել Հոսամին: «Շանը կաշին մուշտակ չըլլար, Յոյնը Հայուն բարեկամ չըլլար» կ'ըսէին առածի ձեւով: Ու կը արտնջային այդ սոսկալի Հայկչցիներէն (Ջարայի մօտ յունարնակ շրջան մը), որոնք իրենց ձեռքը ինկած հայ փախստականները չուննով խեղդած են:

Մուխլիս կամուր զինուոր արձանագրել տուաւ զիս: Ինձի ամէն օր փոքրիկ հաց մը (քայիմ) կու տային, բայց բնակարան ու ծածկոց չունէի: Վիճակս պէշ էր: Նօգքային մէջ, որ զինուորական կեդրոնն էր, փաթթացուոր մը ինձի շատ կը մեղքնար: Կը ջանայի համոզուել թէ Թուրքն ալ կրնայ բարի ըլլալ: Այդ Թուրքը գլխուն ձերմակ դոյն ու դեղին ծաղիկներով լաթ մը կապած էր: Ան նամագին շատ խիտ էր: Ամէն անգամ որ իրեն հանդիպէի, միշտ կ'առնէր մուշտակը, կ'առանձնանար ու կը վճարէր (կ'ազօթէր)... Անոր անունը Մատրդ ազա էր: Ան Ջարայի զինուորական հրամանատարին սրճապեան էր: Զինուորական մթերանոցներուն բանալիները իր քովն էին: Անոնցմէ ինձի ծածկոց եւ խոտ տուաւ, որպէսզի անկողին պատրաստեմ ու պառկիմ: Ծանօթ Հայ մը իր բակին մէջ կը հիւրասիրէր զիս, ուր կը պառկէի զիշերները: Անգամ մը Մատրդ ազա Յօգքայի չափուններուն ու պաշտօնեաներուն ըսաւ.

— Դուք այս մարդը չէք հասկնար: Դուք չէք գիտեր թէ ան ինչե՛ր քաշած է եւ ինչ է: Բայց ըսեմ. եթէ անոր կրածներուն հազարէն մէկին առկաք, առաջնակարգ քով մը եղած կ'ըլլաք դուք:

Մատրդ ազա երբեմն ինձի սուրճ ալ կը հրամայէր: Ու օր մըն ալ երբ իրեն հետ առանձին մնացինք, լացաւ ու հայերէն սկսաւ... մինչ պարմացած երեսին կը նայէի: Հայ մըն էր ան՝ ... իսլամացած: Միրտը իսկական Հայ: Կարօտ էր ա՛յն օրուան, ուր պիտի կրնար աղատ երկիր մը շունչ առնել: Անոր մեծ տղան մէտրէտէն նոր ելած հօճայի կը նմանէր՝ գլուխը ձերմակ կապած...

Զինուոր էի: Արտ կը վարէինք պետութեան: Արտերը Հայոց էին: Բրզնիկցի Հայ մը կար մեզի հետ եւ ուրիշ քանի մը Հայեր ալ: Մալիհ ուսքա մը, Գոչհիսարցի (Հաֆիք) արձանագրած: Բարձրահասակ ու հոյակապ երիտասարդ մըն էր ան: Արձանի մը շինութեան համար կառավարութեան հետ պայմանաւորուեալ էր կանխաւ: Ջարդերու ընթացքին արձանը կիտաւարտ ըլլալուն իրեն խնայեալ էին: (*) Այնպէս մնացեր էր: Այդ արձանը Գոչհիսարի պողոտային վրայ, քաղաք մտած տեղը բարձր կը կենայ, արեւելեան կողմը: Մալիհ ուսքա Թուրքերը շուն կ'ընէր իր ներկայութեանը ու շատ ազդեցիկ էր: Ժանապանակի հիւանդութեամբ մեռեր էր վերջէն:

(*) Ջարայի մէջ ալ իսպրտեալ Հայ մը կառավարութեան հետ կ'զմիտրի պայմանագրութիւն մը ունեցաւ: Ինչպէս որ նախքան քաղաքը զգուշացնէր: Յետոյ Հայաստան գացած է ընտանիքով:

Գոմէշները հեծած յորդ Ալիսէն կ'անցնէինք: Ես վարել չէի
ուզեր: Խոշոր քիթով ու մեծ հասակով շիւ չափուչ մը ունէինք մեր
վրայ, որ նայած տեղը չէր պիտեր: Անոր կը դանդաւատէի, որպէսզի
զիս այդ դործէն հանել տայ: «Սորվէ՛», կ'ըսէր: Խոփիս սուր ծայ-
րերը տուրի դոմէշներուն ետեւի ոտքերուն ու դանոնք արիւնեցի: Իմ
դոմէշներս հիւանդ, ախոռը մ'նացին: Ազատեցայ:

Գացի նօգքայի կեդրոնը ու խնդրեցի որ զիս պարտիզպան ը-
նեն:

— Պարտիզպանութիւն դիտե՞ս, — հարցուցին:

— Գիտականօրէն դպրոցը սորված եմ, — պատասխանեցի:

Արձանագրեցին զիս ու ձեռքս թուղթ մը տալով պետական
պարտէզը դրկեցին: Պարտէզը քաղաքին դուռը, ճամբուն վրայ,
երեք ձորի բերան, հովերուն ճակատն էր: Հայոց ամենէն լաւ ար-
տերն էին անոնք: Երկու թուրք պարտիզպաններ կային հոն, վրա-
նին տակ: Սկսան ինծի ծուռ նայիլ: Շուտով կուռեցանք: Մուկիլիս
անոնց պատուիրեց որ ինծի հող տանին, թէ իր մարդն եմ: Բարե-
կամ եղանք: Կ'աշխատէինք միասին: Այսինքն հաց ու ապուր կ'առ-
նէինք պետութենէն, մենք ալ բանջար կ'եփէինք ու կ'ապրէինք հոն:

Ապրիլ էր: Վրանին դուռը, արեւին տակ պառկեր էի խոտե-
րուն վրայ: Խաչատուր-Թալաւաթ դործի գլխտաներով քովս եկաւ:
Ձեռքը թուղթ մը ունէր: Կը խնդար շարունակ: Ողջ է եղեր հայրս
ու հեռագիր տուած: Լուսանկարս եւ ստորագրութիւնս կ'ուզէր հա-
յերէն լեզուով: Ձէր հաւատացեր իմ ալ ողջ ըլլալուն: Ծռեցայ եւ
արատաուեցի երկար: Տակաւ սկսանք թղթակցութեան: Ան ինծի
գրամ կը դրկէր միշտ եւ իրենց լուսանկարները: Ես ջարդերը եւ
դիլուսու եկածները տեղեկացուցի իրենց, որպէսզի պիտան քաշած-
ներս, եթէ ես չփրկուիմ:

Միտքս, սակայն, ստէյլ լեռ կ'երթար, որ զիս իրեն կը քա-
չէր: Թուրքերուն վատահուժիւն շունէի: Հապա եթէ մէկէն մեզ նո-
րէ՛ն զարնէին: Կ'ուզէի հօրս զրկածներով մալգէր մը ճարել ու եր-
թալ մեր տղաքը գտնել:

Անգամ մը դանոնք երազս տեսայ:

Յուրտ ձմեռ էր: Կարօն ու Գրիգորը, որոնք կը դողային ցուր-
տէն, ինծի ըսին թէ ժանտարմաները բռներ էին աղաքը ու անոնց ե-
ղունգները քաշելով ու ճշայնելով տարեր: Տիրեցայ: Յետոյ Սէնօն
ալ Ձարս քովս բերի Քուրտերէն: Առաջին առթիւ աղաքը հարցուցի:
Սէնօն սկսաւ լալ:

— Ա՛լ աղաքը չկան, — ըսաւ: Մեր դեղին մօտ, ձորի մը մէջ,
դանոնք դատեր են քուրտ չէթէները ու պաշարեր ու կուռեր: Տղաքը
գիմազերել է եւ իրենց փամփուշտները հատնելէ վերջ սոյանուեր էին:
Իրենց քոյրը միասին է եղեր: Մագերը բռներ են ու վիրաւոր մէկ
եղբայրը մորթելէն վերջ աչքին առջեւ, զինքն ալ վրան մորթեր

են... Անոնց անակէն ալիւր, իւղ, մեղր, կերպաս եւ ուրիշ անպանքներ են տարեր :

Լերան երազին թեւերը փրթան այս բոթով : Բերդս փլեր էր : Ո՞ւր պիտի երթայի : Լքեցի լուսափարփառ երազը ու ցելսը մտած՝ սողալ սկսայ : Ինծի միակ ընկեր Սէնօն կը մնար : Երբեմն գինքը կը փորձէի :

— Սէնօ՛, քեզի ալ ղէնք ճարեմ, հետս լեռ կու գամ, — կը հարցնէի :

— Երուանդ, ո՛ւր որ երթաս՝ ետեւդ կու գամ, — կը պատասխանէր :

Օղբեր կը տաքնային հեղհեռէ : Պարտէզին աշխատութիւններուն ատենն էր : Մենք ահագին տարածութեան վրայ գետնախնձոր ցանեցինք : Կ'աշխատցնէինք զինուորներ ու զործաւորներ : Պարտիզպաններս վերակացու էինք անոնց : Թուրքերը Հայէջը աւերեցին ու անկէ հարիւրէն աւելի յոյն զինուորի փախստականներ բերին : Կ'ըսէին թէ Յոյները այդ կողմերը քանի մը թուրք զինուորներ սղաններ են : Այդ Յոյները կ'աշխատցնէինք միշտ : Թուրքերը կը ծեծէին դանոնք : Ես կը մեղքնայի ու հող կը տանէի : Ինծի «Շէֆէր, շէֆէր, սոյբնը չէֆէր, — կ'ըսէին :⁽¹⁾ Անոնց կիները զիրենք տեսնելու կու գային եւ ուտեստ կը բերէին : Թուրքերը կը հիւանային անոնց նիւսուկացին եւ կերուխումին վրայ : Յոյները սեւ բուրդէ գրգռ⁽²⁾ ու վրայէն կրկին բուրդէ կարճ վերարկու⁽³⁾ հագած էին : Այդ անոնց տարազն է : Ոտքը տրեխ, զլուխը՝ Փէս :

Չանոնք դատեր ու դատապարտեր էին Թուրքերը, իւրաքանչիւրը 30-150 դաւազանի : Հրամանատարն ու բարձրաստիճան Թուրքեր նստան հրապարակի մը վրայ, շրջապատուած ոտաիկաններով : Յոյները բերին : Մէկը կը կարգար անոնց անունն ու դաւազաններուն թիւը : Գատապարտեալը կը ներկայանար : Կը սղանէր : Երկու մարդ, մէկը գլխէն, միւսը ոտքերէն վար կը սեղմէին : Ուրիշ երկու Թուրք կահուղ ճիւղերով կը սկսէին զարնել : Խեղճերը կը կսկծային ու կը ճչային, օգուտ չէր ընէր : Կ'ելլէին կու լային ու կը ծոճուկէին : Ոմանք կորսվով ու արհամարհանքով կը ծաղրէին Թուրքերուն վայրադուժիւնը : Խուժանը հոն խոնուած՝ կ'ուրախանար ու կ'ոռնար կեցցէներով...

...Չարայի մէջ 70 իսլամացած հայ ընտանիք մնացած էր : Քիչէ՛րը այր ունէին : Այրերը արհեստաւոր էին ու պէտքի համար թողուած : Կիները լլկուած էին, շատեր հիւանդութիւններ առած : Խոշոր տան մը մէջ կը մնային պտուտ մը եւ աղջիկ թոռնիկ մը : Պառաւը բուրդ կը մանէր, ու պարսպ տունին նայելով կու լար շա-

(1) Ծախար է, շախար, իր ցեղին պէս :

(2) Նեղ տարատ :

(3) Մալթա քեւերով, ապա :


բունակ : Կիսամերկ աղջնակը կ'երթար անոր ստգերուն առջև կը նստէր ու երեսն ի վեր կը նայէր : Վարժուած էր այդ լացին ու չէր հասկնար զայն :

Վարդանեաններու հոյակապ ընտանիքէն կիներ ու քանի մը պատանիներ կը մնային : Անոնք իրենց այդ վիճակին մէջ նորէն ազնուականութիւն ունէին : Գետափին վրայ, հարուստ Չօպանեաններու տունը եօգքա գումախաւսըն կը նստէր : Չօպանեաններու տան դէմ մեծահարուստի մը սպարանքը կար : Երկուք են եղեր անոնք : Թուրքերը մէկը սրբանոց էին ըրեր, միւսը քակեր-վառեր : Որբերը տարիէն աւելի այդ տան ամբարէն են սպրեր : Անոնց կերպաները ղեռ կնքուած կը մնային հոն : Ձինաղաղարէն վերջ Թուրքերը այդ կերպաները վերցուցին եւ իրենց տուները տարին :

Այդ հարուստ տունէն հարս մը ազատեր էր, ծիծը իր երախան, ու տուն դարձեր : Ան կը սնանէր խոտով ու մանուկին արցունք ծծել կու տար . . . Նիհար, մանկամարդ կին մըն էր ան, մանկիկ մը թեւերուն մէջ՝ կուրծքին սեղմած, սր սրբանոցին դրան առջև կեցած ներս կը նայէր, ուզելով հոն մտնել : Որբերը անորգանքով կը հրէին ու կը վռնտէին զինքը անկէ : Պառաւ հայ խոհարարուհին բերաւ փշուր մը չոր հաց տուաւ անոր ու ճամբեց :

— Գնա՛, օգու՛ւ, հոս մի՛ կենար, գլխուդ փորձանք մը կը բերեն :

Վարժուած նման երեւոյթներու, բնականաբար կարեւորութիւն չտուի : Բայց այս կնոջը հոգիին մէջ շատ խորունկ ցաւ մը կար :



Կակոյեանց Քոչեան
Մամասէ հորին ազատած է
միբիլիտիբուան միչին գուրտերէն գիտեպուան համար
Կարապետ Կարապետյան անուանով



Հայկ

Հերոս մը՝ անճառներու մէջ
ապաստանած եւ երկար
գիմադրութիւն ցոյց տուած

Ան կու լար, արցունքները կը թափէին երախային երեսին վրայ,
ու չէր ուզեր բաժնուիլ տունէն: Իր հօրը տունը՝ որբանոց...

Յե՛տոյ միայն պառաւը զիս կանչեց ու հարցուց.

— Տղա՛ս, տեսա՞ր ան կնիկը, որ դուռը կեցեր կու լար:

— Այո՛, ի՞նչ կայ որ:

— Ան Հայ էր, սա տանը տիրոջ աղջիկը, ա՛խ, ես թող կ'ու-
րանամ: Աքսորէն դարձեր ու փողոցներն է մնացեր հիմա՝ երախա-
յովը միասին ու կը մուրայ... Խո՛ւտ կ'ուտէ, խո՛ւտ, հաց չի գտներ:

Բոլոր Հայերը ահամայ իսլամացած էին: Անոնք կը կոչուէին
«մէօթ-էտի»: (*) Ինձի ալ մէօթ-էտի կ'ըսէին, հակառակ անոր որ
ես նախապէս ալ կրօն չունէի, հետեւաբար ի՞նչս փոխած պիտի ըլ-
լայի:

Հայոց թաղը աւերուած էր: Թուրքերը կառավարութենէն կը
զնէին Հայոց դեղերն ու տուները եւ զանոնք կը քակէին՝ փայտերը
փառելու համար:

Գարնան, սայլերու ճոխնչը սկսաւ պողոտայէն ու տեւեց մին-
չեւ աշուն: Թուրք զաղթականներ էին անոնք, որ ետ, դէպի Կարին
կ'երթային: Գիշեր-ցերեկ անոնց ձայները չըպզրեցան ճամբանե-
րէն: Ու դեռ կ'ըսէին թէ մեծամասնութիւնը տարրեր ճամբով կը
վերադառնայ: Անոնց մէջ կային հարուստներ: Կային հափափուած
հայ կիներ ու աղջիկներ, որոնք միասին կը տանէին: Շատերը աղ-
քատ եւ ուժասպառ էին: Կ'երթային ետ: Ու անգամ մըն ալ Ռու-
սիա չէ, սատանա՛ն ալ արշաւէր իրենց տեղերը, զաղթելու միտք

(*) Կրօնախիս:

չունէին: Որոշեր էին մնալ ու մահանալ հոն: Տխուր օրեր էին վերապրողներուն համար: Մենք կը սպասէինք որ հիւանդ մարդը թաղեն, ան կրկին շունչ ու հոգի կ'առնէր:

Այդ օրերուն միութարուեցայ անս'վ որ գաղթականները, որոնք պարտէղին քով կ'իջնէին գիշերները, հոն բանջար հաւաքելու կամ գողութեան կու գային, ամէն առթիւ սքանչելի կը ծեծէի ու կը վռնտէի:

Մայիսի վերջերը, Ռօքքան, ուր ախմայ կամաւոր արձանագրուած էի, փոխադրուեցաւ ՕՓ:(*) Ես կանոնաւոր զինուոր չէի, զիս միասին չտարին: Ինձի «ո'ւր կ'ուզես գնա» ըսին ու հացս կարեցին:

Վարդապետին վեղարն էր ան: Ատենին վարդապետ մը, որ զղջացած է եզեր կրօնաւոր ըլլալուն ու առիթ կը փնտռէր կարգաթող ըլլալու, վեղարը զլուխը անտառէ մը կ'անցնի: Մացառները վեղարին կը կառչին ու ան զլուխէն կ'իյնայ հոն: Վարդապետը ուրախութեամբ ետին կը դառնայ ու կ'ըսէ վեղարին.

— Աղէկ որ դո'ւն զիս թողիր, եթէ ոչ ե'ս քեզ պիտի նետէի:

Այդ օրերուն, առտու մը, շուկայէն ջոկատ մը զինուոր կ'անցնէր: Երեսս դարձուցած անոնց քովէն կը քալէի ես: Չայն մը զինուորներուն մէջէն զիս կը կանչէր.

— Քրմա'նձ, Քրմա'նձ:

Հին ծանօթ էր ան, քանի որ քրտերէն անունս կու տար: Ետեւ դարձայ... ու ի՞նչ տեսնեմ, Խէլիլ-Գէորգն էր ան, Հէմոյին հետ ընկերներէն, որ գիշեր մը փախած էր խումբէն: Զինուոր էր եղեր: Կ'երթար Երզնկա: Զիս հարցուց ու հայ ընկերներս: Ըսի բոլորը: Ինք ալ պատմեց թէ Զարացի Գէորգն ու Մանասէն Հէմօն սպաննած է Քէմախի ճամբուն վրայ, քաղաք մտնել ու յանձնուելէ առաջ: Գէորգ ինձի այս բօթը տուաւ: Մնաս բարսով ըսինք իրարու ու գնաց ան: Մեր վերջին տեսակցութիւնն եղաւ այդ:

Գէորգ, լեռները եղած ատեննիս տակաւին թոյլ աղայ, հիմա մեծցեր, եւ զինուորական համազգեստին մէջ սեղմուած, լեցուն, բարեձեւ երիտասարդ մըն էր եզեր: Թուրք բանակին մէջ, Հայաստանի դէմ կռիւի կ'երթար... Գէո'րգը, որ վրէժ կանչած ատեն աչքերուն արցունքը կը պսոթկար:

Յունիսի վերջերը թուրք որբանոցը ծառայ առին զիս: Տեսուչին, Գարահիսարցի Հիւսէյին Հիլմիին Փրանսերէն դաս կու տայի: Հետո Տիվրիկէն ծերուկ Հայ մը կար հոն, Գրիգոր աղա Վարդապետեան: 1915ի աշնան 60 հազարնոց բանուորական բանակի մէջ է եղեր ան: 60,000 կոտորելու տարեր են, ան լացեր, պաղատեր, պաշտպանութիւն դաեր ու հոն մնացեր է: Զերմեռանդ քրիստոնեայ էր, բողոքական: Սպիտակ մօրուք մը ձգած էր: Նոր անունն էր Մօրուք:

(*) Սեւ ծովու վրայ փոքր նաւահանգիստ մը:

Անոր համար որ իր կրօնին բերումով իսլամ անուան չէր կրնար հանդուրժել: Քանի՛ անգամ թուրք ուսուցիչներու եւ հօճաներու հետ կը վիճէր, ջանալով ապացուցանել թէ իր կրօնը, քրիստոնէութիւնը, իսլամութենէն բարձր ու ճշմարիտ է: Անոր սեւեռեալ դադափարը կրօնն էր: Կ'աղօթէր անդադար... Կեցած որբանոցի իր սենեակին մէջ, Ալլիսի վրայ նայող պատուհանին առջեւ, անթաղ սուկորները դիտելով: Կ'աղօթէր, որպէսզի աղօթքով փրկուի... այդպէս կը հաւատար:

Որբանոցի խոհարարուհին պառաւ Հայուհի մըն էր: Սպասաւորը Հայուհի մը: Պառաւին թոռն ալ, Թէվֆիքը, անուշ մանուկ մը, որբանոցն էր: Քանի մը տղոց համար ալ կ'ըսուէր թէ Հայեր են: Պառաւին զեղեցիկ հարսը թուրք մը առած ու շուտով ձգած էր: Տղան զինուոր էր: Եօթնէն մէկը, որ ողջ մնացեր էր, պէկի մը դուռը ձրի ծառայ: Տունը հաց չունէր: Ծուկային մէջ մեծ ու հոյակապ խոն մը կար: Առջին աղբիւր: Աղբիւրը չէր վազեր: Պառաւին խոնն էր ան: Գրաւեր էին:

— Աղբիւրն ալ ո՞վ պիտի կապէ, որ այլեւս վազէ, — կ'ըսէր...: Երբ միտարէէն միւլէզգիւնը հրդէր, պառաւը զիս իրեն կը կանչէր:

— Տղա՛ս, — կ'ըսէր, — լսէ՛, կատուն ծառն է ելեր:

Իսլամ էր ան...: Միւս հայ սպասաւորը մանկամարդ էր: Քոյրը թուրքի մը քով: Անոր համար միշտ կու լար ան:

Թուրք որբերէն հայրենասէրներ կը պատրաստուէին: Հայու մը պալատին մէջ նստած, կ'երդէին շարունակ հայրենասիրական երգեր: Մօրուքն ալ անոնց հետ կ'երդէր: Ականջ կու տայի իր ըսածներուն: Ան կ'երդէր թէ «ե՞րբ պիտի կործանին, ե՞րբ պիտի կործանին վայրազ թուրքերը...»:

— Կեցցէ՛, Մօրուք, — կ'ըսէին տղաքը: — Խալիս Օսմանցի է: Կ'երդէ մեզի հետ:

... Խե՛ղճ Մօրուք: Ընտանիքի ու գաւազի կսկիծը ունէր: Կ'ըսէր թէ տղայ մը ունի Ամերիկա, ուրիշ ոչինչ: Իրեն հետ Հայու մը տունը քակելու դացեր էինք, որպէսզի որբանոցին փայտ տանինք: Մեծ, հարուստ, հոյակապ տուն մըն էր: Յայտնի էր թէ նահապետական ու բաղմամարդ եղած է ան: Ի՞նչպէս քակել: Մօրուք նստաւ մեծ ու զոյգ փեղկերով դրան առջեւ: Նայեցաւ լայն դաւիթին: Ու ըսաւ:

— Յայտնի է թէ ի՞նչ հարուստի տուն եղած է: Նայէ՛ ու մի՛ յուզուիր: Քանի՛ հիւրեր հոս իջած ու անոր սեղանէն կշտացած են: Սա գաւաթին մէջ մանուկներ խաղացած են: Սա աղութին մէջ հանին կերակուր եփած է: Սա պատին տակը հարս ու փեսայ սիրաբանած են: Ներսի մեծ ամբարները դատարկ: Սիւները ինկած: Ծէնքը աւեր ու կիտափուլ: Օր ըլլար որ մենք հոս հիւր դայինք: Մեզի ի՞նչ պատիւներ պիտի ընէին: Չէ՞ որ Հայեր էինք մենք ալ: Հիմակ դայն

քակելու եկած ենք... Հիմակ դայն պէտք է քակենք... սկսէ՛ տեսնեմ, ձեռքերդ կը բռնե՞ն... :

Եւ սկսաւ լալ... :

... Թուրքերը ատեն մը լաւ յափրացած ինչքերով, մոլութիւններու ետեւէ էին: Ամէն գիշեր աղջիկ կը խաղցնէին եւ կ'երգէին ու կը գինովնային մինչեւ լոյս: Բարոյական ու նկարագիր մնացած չէր: Սեռային հիւանդութիւնները մեծ համեմատութիւն առեր էին: Ընտանիքի ու տասնեակ գաւաիներու տէր տարեց ու անուանի Թուրքեր Սփազ բուժուելու կ'երթային սեռային ախտերէ: Քանինե՛ր, այլեւս փճացած, կը քալէին՝ իրենց սոքերը բացուած կարկիւնի ձեւով փոխելով: Կին, օղի ու հաճոյք: Հայուհիները առատ էին անոնց համար: Ու շատերը, լոյսի պէս աղջիկներ, վարակուած: Ամէն Թուրք գինուոր ժամանակաւորապէս հատ մը ունէր անոնցմէ: Երբ փոխադրուէր, կը ձգէր դայն ու կ'երթար: (*)

Ամէն դասակարգի Թուրք նոյն նկարագիրը ունէր: Ամենամեծ Թուրքը, որուն ենթակայ էր նահանգը գինուորապէս, ևոգքա գումանտանը, օր մը ինչոյք ունէր տեղին հարուստ ու բարձր դասակարգին հետ: Կը սպասուորէի հոն: Լսեցի իրենց խօսակցութիւնը մինչեւ վերջ: Ջարդեր, կողոպուտներ ու նման պատմութիւններէ վերջ կարգը գեղեցկութեան եկաւ: Ո՞ր ազգի մէջ էին ամենէն գեղեցիկ կիները: Ի՞ վերջոյ ամենէն հարուստը իրաւունք շահեցաւ, թէ՛ Հայերուն մէջն են... :

Հայերուն արտերը, տուները եւ ունեցածները իրենց ափին մէջ, նորէն իրենք Հայերէն անօթի էին: Հոն մեծ սով կար: Անօթիներ կանչելով փողոցները կը շրջէին.

— Ո՛վ գթատասներ, անօթի ենք, փշուր մը հաց... :

Պետութեան փուռին աւլուքը երբ փողոց նետէին, անօթիները շուններուն հետ անոր վրայ կը թափէին: Անոնք փուռը պաշարման տակ էին առեր միշտ ու կը սպասէին փշրանքի: Օր մը փռապանը գայրացած պոռաց.

— Ես կը գարմանամ, այսքան մուրացկաններուն մէջ կեալուր մը չկայ: Անոնք իրենք-գիրենք կ'ապրեցնեն: Բոլորը մեր շահ ցեղէն են... :

Շուկային 40 խանութներէն 30ը դեռ Հայերուն ձեռքն էին: Շուկան չէն էր Հայերով: Անոնք բանջարեղէններ կը հացնէին ու կը ծախէին: Անոնք հաց կը պատրաստէին ու կը ծախէին: Անոնց ձեռքն էին արհեստները: Թիթեղագործ երկու պատանիներ կային: Ծնողք, տուն, բան մը չէր մնացած: Նորէն հարստացեր էին փութով: Եթէ հայ դարբինը, հիւանը, որմնագիրը չըլլային, Թուրքերը բոլորովին կը դառնային քարի շրջանին: Թուրքերուն մեծամասնու-

(*) Հայ գինուորներ ալ Հայուհիներու կանդէպ նոյն ընքացքը ունեցած են:

Թիւնն ալ իւրացուցած էր քրտական ասացուածքը, թէ՛ «Հայը երկրին ծաղիկն էր, ա՛ն գնաց, պէրէֆէթն ալ հետը տարաւ...»:

Բոլոր արհեստաւորներուն մէջ ամենէն կարեւորները դարբիններն էին: Անոնք սեբաստացի առաջնակարգ վարպետներ էին: Փուքին առջեւ, մրոտ խանութին մէջ, կ'երդէին ու մուրճը կը զարնէին: Կ'աշխատէին շարունակ, գլխիկոր: Տուն ու տեղ կը յիշէին, ու իրենց սրտերն ալ այնքան կ'առկայծէին՝ որքան քուրան:

— Ոսկա՛ն, Կարապետ, փուքը փչէ՛:

Թուրք անո՞ւնն ինչ: Իրենք Հայեր էին: Ու այդ Հայութիւնը ուրացած չէին բնաւ: Գիտէին թէ իրենք պէտքի համար ողջ թողուած են: Ու առանց ատոր, ո՛ր մը չէին կրնար մնալ: Հա՛յ էին ու Հա՛յ կը մնային: Ու չէին ստորնանար, բնա՛ւ, բնա՛ւ:

Երկուքը իրարու եղբայրներ էին: Սարտեաչ մազ ու կասոյտ աչք ունէին: Մէկը պատանի էր, շատ թարմ գեռ, միւսը տարեց մարդ: Մէկտեղ կ'աշխատէին ու մէկտեղ կը պառկէին:

— Մէկտեղ ալ պիտի մեռնինք, — կ'ըսէին: — Ի՛նչ կայ որ: Կը մեռնինք, կը մեռնինք, անկէ անգի՞ն...:

Իրենց քով պահէր էին աչքի նշան մը, որ իրենց վարպետին, Ոսկանինն է եղեր: Ոսկան վարպետ չկար այլեւս: Չայն կը զարնէին գմելիներու վրայ: Կը շինէին աղնիւ ու ընտիւր գմելի ու դանակներ: ... Ու կը փչէին փուքը, ու կը կայծկլտար քուրան: Շէկ երկաթը կը հանէին դուրս. «Չարկէ՛ք, շո՛ւտ», ու կը կռանէին... Չէի գիտեր անոնց սրտե՞րը աւելի շատ կը վառէին ու կը կայծկլտային, թէ այդ արուեստական քուրան...:

Վիպական էր նաեւ Հայ դիմուորին կեանքը: Բայց հերոսական միշտ: Քանի՛ տարի էր անոնք ողջ էին: Ու չէին գիտեր թէ ե՞րբ պիտի գարնուին:

Կոչկակարը ուղտապան ըրած էին ու վաճառականը՝ հօտաց: Ուսուցիչը դերձակ եղած էր ու սոկերիչը՝ ծառայ: Ամէն բան շրջած էր այդ օրերուն: Հառաչանքի մէջ թրծուած, խորշոմած, տխուր էին անոնք: Այդ բոլոր տարտամութեան մէջ մէ՛կ բան գիտէինք բոլորս, — վրէժն էր այդ: Մենք անդրշիրիմեան ուրուականներ այլեւս՝ այս կեանքին համար...: Ո՛չ ոք, ո՛չ ոք պիտի կրնայ ըսել թէ անոնք ինչպէ՞ս շարձարուեցան, մեռան: Կը պատմէին անոնց մասին տխուր վէպեր, որոնք մոռացումը առաւ-տարաւ: Կը գովուէր Զարայի մօտ Քէչէ Եւրտ հայ գեղը իր հերոսութեան ու քաջութեան համար:

Քաղաքին բոլոր ջաղացպաններն ալ գրեթէ Հայեր էին, Սվաղի Դուրա գեղացի: Թուրքերը այդ գեղին խնայեր էին, որովհետեւ ան ամբողջութեամբ արհեստով ջաղացպան էր: Անոնք քիչ կորուստ ունէին: Իրենց ընտանիքներով միասին էին: Աղէկ կ'ապրէին:

Սէնօն անոնցմէ մէկուն քով կ'աշխատէր: Հիւանդացաւ հոն:




Յտիգուլէի Ազգային Դարմանատուն
Որբանոցի Գ. Եւ Դ. Կարգ
նկարուած 30 - 3 - 1923

1. Նրուանդ Քոչեան, 2. Գ. Պալգնեան, 3. Ա. Տէր - Գեորգեան, 4. Վերժին Պորժակեան, 5. Հայկա-
նուշ Քիւթնէրեան, 6. Աշոտ Պողոսեան, 7. Յովի. Քեա-
թիպեան, 8. Հայկազ, 9. Անդրանիկ
Անդրանիկեան, 10. Սեդրակ Գեորգեան, 11. Սարգիս
Յափունեան, 12. Սեդրակ Գալինեան, 13. Արշաւիր
Աւագեան, 14. Յարութիւն Գալուստեան, 15. Սարգիս
Ղնկոսեան, 16. Շարամ Սաղրբեան, 17. Պայծառ Զա-
տրեան, Կայծակ Դանիէլեան, Բարունակ Պետիկեան,
Նշան Նշանեան, Ազատուհի Պրն. Վարդանեան :

Ու մեռաւ այնքան եղերականօրէն: () Զինքը տարին ու նետեցին
Հասարակաց փոսերուն մէջ: Քսաներկու տարեկան Հազիւ կար ան:
Նշանուած էր վեզը, բայց դեռ չէր ամուսնացած:*

*Զաղացողանները թրքացած էին: Իրականին մէջ Հայ: Զարա-
ցի Հաղացղան մը կար, անունը Ալի աղա: Եզրօրը շատ երիտասարդ*

(*) Հիւանդանոց տարիներ զինքը, դուրս նետեցին: Զարս ամուսնացած մեր
զեղացի կնոջ մը տունը տարիներ, դուրս վաճակեցին: Վրանս տարի, նորէն վաճակե-
ցին: Ազրանոցներուն վրայ մնաց ու ամուսն էր մը պէս դուրսը մեռաւ:



Նտիգուլէի Ազգային Դարմանատուն
Որբանոց – Աչքերու Ա. Կարգ
Վէջտեղը՝ Նրուանդ Քոչեան
Յիարուած 1922-ի ամառը

այրի կիներ քովն էր: Գիշերը գուռները կը զոցէին ու կը սկսէին հա-
յերէն խօսիլ:

— Նղբայր, մենք նորէն Հայ պիտի չըլլա՞նք, եկեղեցի պիտի
չերթա՞նք: Մենք ասանկ Թո՛ւրք պիտի մնանք: Լոյս մը պիտի չծա-
գի՞նք:

Կը գուրգուրային վրաս ու կը խնամէին դիս: Ինչքան սէր ու
գորով ունէին: Կը մտնէին Թուրքի տարազ ու հացերը շուկան կը
տանէին ծախելու: Ո՞վ կընար ըսել թէ իսլամներ չեն անոնք...

Կը պատմէին ջարդը, կը պատմէին իրենցիններուն տարուելը:
Դէպի բանտ: Ու գիշերով, գէպի մահ: Թուրքերը այդ սպանողը տօն
կը կոչեն ու մասնաւոր շուքով կ'երթան անոր: Տալուլով, զուրնա-
յով, երգով: Գիշերը իրար կը կանչեն՝ «հաւաքուեցէ՛ք կեալուրնե-
րու սպանդին... Ի՛նչ հաճոյք է ան... աղօթող, լացող, հայհոյող,
պաղատող... հողը կը խածնեն ու կը փակին անոր»: Գիշերները գէն-
քի ձայներէն քաղաքը չի քնանար:

Այդպէս էր եղած Սփյառն ալ: Յերեկը՝ կը փորուէին փոսեր,
շուրջի դաշտերուն մէջ, գիշերները կը լեցուէին անոնք: Բանտերը
ցերեկները կը լեցուէին, գիշերները կը պարպուէին: Պո՛ւմ, պո՛ւմ,
պո՛ւմ... ձայները քաղաք կու գային:

Կը պատմէին, կը կրկնէին ու կու լային:

— Գեապփի ոսկորները կը տեսնե՞ս, անոնք Հայու ոսկորներ են: Յերեկին, միշտ, ամէն տեղ, կը մորթէին ու դեաը կը ձգէին... Մեր գեղին գինուորներն ալ անկէ անցուցեր էին: Գեաէն անցած ատեն Սաչկոնց Գալօն ջուր խմել կ'ուզէ: Չեն թողուր: Կ'երթայ խմելու: Հոն կը սպաննեն զայն: Մնացածները կը զնդակահարեն քիչ անդին: Մէկը, յիբաւոր Քօսապետոյեց եղբան կը փախչի, քաղաք կը դառնայ: Չայն կը տանին հիւանդանոց ու կը խեղդեն: Ան իր աղաղակով քաղաքը կը ցնցէ...

... Այսպէս էր կեանքը: Ամպերը շատ սեւ էին: Դէպի աշուն հայրս սկսաւ յուսատու նամակներ գրել: Ամբողջ Չարան սկսաւ հետեւել այդ նամակներուն ու անոնցմէ լաւ բաներ յուսալ:

Օր մը Թալաթ-Պաշտուր ինծի հայերէն թերթ մը երկարեց եւ աչքս լուսեց: Կովկասահայ պատուիրակութիւն մը Պոլիս հասած էր: Անկախութիւն, հանրապետութիւն ունինք: Թուրք գինուորներն ալ կը դբէին Կովկասէն, թէ «Անդրանիկ, անօթութենէ նեղուած, Երեւանի լեռներն է քաշուած, կը կռուի իրենց դէմ: Գալըոցի տեսուչն ալ ինծի հաղորդեց թէ Մէքքէն ու Մէտինէն զբաւուեր են: Անգլիա իրենց յաղթեր է Հալէպի կողմը: Ան մետաղէ հրէշ մը հնարեր է, որ մարդ կ'ուտէ: Այո՛: Այս հրէշը դէպի մեզ կու գայ: Ո՞ւր պիտի փախչինք», կ'ըսէին Թուրքերը...

Ամպերը ճեղքուեցան մէկէն, ու ծիրանի լոյս ցաթեց...

Թուրքերը գինաթափ: Թուրքերը մտածկոտ: Անոնց համար դատաստանի օրը կը հասնէր: Մեզի կ'ըսէին թէ այլեւս փրկուած ենք ու ազդովին լաւ ապագայ ունինք: Հայոց եկեղեցին մաքրել տուին ու յանձնեցին Հայերուն: Տուն, արա, ետ պիտի տրուին կ'ըսէին: Մեր տեսուչն ու վարժապետը կը չքմեղանային ինծի՝ թէ իրենք Հայերուն բարիք ըրած են: Վարժապետը, Կարնեցի, կ'ըսէր.

— Մենք Հայերը փափկութեամբ, իրենց բոլոր ունեցածներով, կառքերով, նոյնիսկ կատուներով ու շուներով ճամբայ հանեցինք...

Կը խօսուէր թէ քննիչ խումբեր պիտի ելլեն Հայոց կորուստներն ու վնասները ճշդելու: Աշուն էր, դեղինով, տրամութիւնով, դեղին աշունին մէջ յոյսեր կը ծլարձակէին մեզի համար...

Աշնան իրիկուն մը: Քաղաքին մէջ լուր տարածայնուեցաւ թէ գինուորները արձակելու հեռագիր եկած է:

Ձիմադադար էր:

Ուրախութիւն մը սկսաւ քաղաքին մէջ: Ալիսի ափերուն սօսիները կը սարսռային ձայներովը գէնքերուն, գոբ ժողովուրդը կ'արձակէր: Աս այն գէնքերն էին, որոնցմով սպաններ էին մերինները:

Որբանոցի աշակերտները թափօր կազմելով սկսան փողոցները չրջել՝ դրօշակ պարզած: Բոլորը իբարու աչք կը լուսէին ու քաղաքը անսահման խանդավառութեամբ կը խայտար:

Որբանոցի սենեակս ելայ, ու Ալիսի նայող պատուհանիս առ-

Ղեւ սկսայ լալ անդուսպ պոռթկումով մը: Մեռելներն ու փլատակ քաղաքները կու գային աչքիս առջեւ:

Լացի՛, լացի՛ ու աչքերս կարմրեցան:

— Աչքերդ լո՛յս, — կ'ըսէին թուրքերը ինձի: — Բայց դուն լացեր ես, զարմանալի, ինչո՞ւ...

*
**

Ծանօթ ու ազդեցիկ թուրքեր ինձի ըսին թէ ազատ էի այլեւս եւ կրնայի տունս վերադառնալ:

Բարեկամս, Սաչատուր-Թալաթ, զիս իրենց տարաւ: (*)

ՎԵՐԱԴԱՐՁ ՄՈՐԹՈՒԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԷՁԷՆ...

Նոյեմբերի վերջին օրերն էին: Ձիւնը իջեր էր լեռներուն վրայ՝ մինչեւ անոնց լանջերը: Աշունը ցուրտ էր ու տրտում: Քուրսի պէյի մը քով աշխատող գարահիսարցի հայ կօշկակարներ Չարայէն անցնելով Սվաղ կ'երթային՝ ապրանք գնելու: Չարացի անդամաւոյժ կօշկակար մը եւ հայ տիկին մըն ալ պիտի երթային Սվաղ: Քուրսի մը ձին վարձեցի ու գիշերով ճամբայ ելանք Չարայէն:

Մեր պղտիկ կարաւանը երգելով կ'անցնէր պողոտայէն: Դէպի աջ, ձորերուն մէջ, Չարայի կռնակը, անդամաւոյժ կօշկակարը ինձի ցուցուց ձոր մը, եւ ըսաւ.

— Հոն կոտորեցին Չարացիներուն այրերը ու շատ մը հայ գիտուորներ: Կմախքները հոն, բացը կը մնան տակաւին...

Պողոտան դաշտային էր ու թուրքերուն հօտերը կ'արածէին անոր մօտերը: Բլուրներու ետեւէն, Ալիս, մեզի հետ ընկերովի, մերթ արտում ու մերթ ծփուն, կ'երթար Սվաղ: Իրիկունը Գոչհիսարի մեծ դաշտը մտանք: Չէր հատներ ան: Քաղաք մտած տեղը, գետին վրայ, հայ Սալիհ ուսթայի շինած արձանը կը կանգնէր:

Քաղաքին մէջտեղը բարձր ու ժեռուտ բլուր մը կար, ուր մագլցեր էին տունները: Շուրջը ունէին մարգեր, ջուրեր, բլուրներ ու գետեր: Մենք բլրան վրայ Հայոց թաղ բարձրացանք: Սաթենիկ քոյրիկ Հայուհիին ու անդամաւոյժ կօշկակարին հետ հայ մամիկի մը տունը հիւր եղանք: Հաց չգտանք շուկան: Հայեր չկային հոն, որ չինէին ու ծախէին: Իսկ մեզ հիւրասիրող մամիկը պղտիկ աղջիկ թոռ մը ունէր եւ օղիի առուտուր կ'ընէր: Ընկերակիցս չիշերը տնկեց ու սկսաւ քաշել օղին:

Հոս ալ կային քանի մը տուն Հայեր, Չարայէն շատ քիչ: Գի-

(*) Զինագաղարի գինովութենէն յետոյ, թուրքերը հաչատուրը կը բանտարկեն եւ սաստիկ կը ծեծեն: Հայրը մեռած էր: Մայրը խեղճ կը մնայ: Ան յետոյ Պոլսէն անցնելով կը գալթէ Յուսաստան, ուր կը մեռնի հիւժախտէ:

չերը դիտեցի որ այլ անդամալոյժ կօշկակարը առանց դաւադանի դուրս ելաւ՝ ջուր թափելու։ Դարձին սանդուղներէն թռչելով կ'ելլէր։ Զարմացայ։ Ան ինձի ըսաւ .

— Մի՛ գարմանար։ Եթէ ես այս կեղծիքը չընէի, հիմակ իմ ալ սոկորներս փտտած էին... Քուրտ գեղի մը մօտ ասորճանակով ես զիս վերաւորեցի։ Սվազ գացի գործողութիւն եղայ։ Անկէ ասդին ինքզինքս այսպէս կը ցուցնեմ...

Գիշերով կարաւանը ճամբայ ելաւ։ Գոչհրաարէն ժամ մը հեռու հայ գեղ մը մտանք։ Լոռութիւն, լոռութիւն։ Զարացին ըսաւ .

— Գիտե՞ս այս գեղը։ Ասկէ բնաւ մարդ փրկուած չէ։ Հողադործ էին, հարուստ, պանդխտութեան չէին երթար բնաւ։ Մէկ տան մէջ իրարու աղջիկ կու տային, այնքան ընտանիքները բազմանդամ էին։

Գեղէն ոչ շատ հեռու գառիվեր մը կ'ելլէինք։ Մութ էր դեռ։ Զախը ձոր մը կ'երկարէր։

— Ահա ա՛յլ ձորին մէջ, — ըսաւ Զարացին, — սպաննուածներուն հաշիւը չկայ։ Հող շատ մարդ կերած են Թուրքերը։ Հող գարնուած են այդ գեղացիները...

Դաշտերէն աղատ խճուղին կ'երթայինք։ Զախը Ալիս սկսաւ փարիլիլ։ Դաշտը ընդարձակեցաւ։ Տանիքներ ու ծխաններ սկսան երեւիլ։ Ընկերակիցներս ըսին թէ Կոլտունն է։ Ճերմակ մեծ չէնք մը կ'երեւէր։ Ան Մուրատի շինել տուած դպրոցն էր։ Կոլտունի մէջ Թուրքեր կը բնակէին։ Դիմացը, Ալիսի միւս ափին վրայ բարձր բլուրներ կային՝ վանք մը դրկած։ Աջերնիս Պանդառ հայ գեղը։

Աւելի առաջ Սվազ սկսաւ երեւիլ։ Այլբերի մը վրայ ճամբորդ հայ տղայ մըն էր նստեր։ Հեռաքրքրուեցայ թէ ի՞նչ լուր ունի կացութենէն։

— Սվազ հայերէնը ազատ կը խօսուի, — ըսաւ։ Հոն 10.000 հայութիւն կայ։ Հիմակ անկախ Հայաստան ալ ունինք։

— Հապա մեր զոհերուն մասի՞ն ինչ կ'ըսեն։

— Ի՞նչ պիտի ըսեն։ Կը մեղադրեն թէ դացին ոչխարներու պէս կոտորուեցան։ Անոնց համար բան մը չկայ։

... Սվազ նորէն ընդարձակ ու բազմամարդ էր։ Հայոց թագերը աւերակ։ Ո՞ւր էր առջի Սվազը՝ չէն ու ծիծղուն։ Ասիական բարբարոս ամբոխի ու աղբերու խառնարան մըն էր հիմա։ Այն քիչ մը արեւմտեան ճաշակը, որ մտցուցեր էին Հայերը հոն, հիմակ անոնց հետ մեկններ, հեռացեր էր։ Հինայուած մօրուքներու եւ փաթթոցաւոր դւլոխներու ցուցահանդէս մըն էր շուկան, ուր ծալապատիկ նստած էին անոնք։

Հին բարեկամներէ ու ազգականներէ բան մը չէր մնացեր հոն։ Զինուորներ ու զինուորի ընտանիքներ։ Արհեստաւորներ ու արհեստաւորի ընտանիքներ։ Հոն մնացած ընտանիքներուն թիւը Զարայէն աւելի էր։ Երիտասարդ բարեկամ մը զիս ճաշի հրաւիրեց, որ ինձի

հետ զինուորութիւն կ'ընէր Զարայի մէջ: Դեռ կռիւի ու զարգարուն էր անոնց տունը:

— Երնէ՛կ ձեզի, սր չէք թալանուած ու այսպէս կը մնաք,— ըսի:

— Մեր ունեցածին հարիւրէն մէկն է սա,— ըսին:— Բայց մեզի պէս քանի՞ ընտանիք կայ սր: Վարժուհի մը, քանի մը մեծատունի փչրանք:

Սուրբ Նշան անուանի վանքը կողողտած ու Սենեքերիմի գահը յափշտակած էին Թուրքերը: Մայր եկեղեցին զինուորական մթերանոց եղած էր: Պահակներ կը սպասէին: Աղբիւրները գուռերուն մէջ կը շողշուղային եկեղեցիին պաւիթին մէջ: Այդ եկեղեցին ալ չկայ: Թուրքերը ետքէն Խիւսաֆքոյլ օդը հանած են զայն: Ս. Նշան վանքը կայ, բայց թրքական դօրանոց եղած է:

Միս կը կտրուի անուն միսիոնարուհին հայ աղջիկներ փրկած էր ու կը պահէր: Այցելութեան գացի իրեն: Գերման զինուորներու խնջուց մը կու տար այդ օրը: Տօնի մէջ էր: Շատեր կը զանդատէին անկէ՛ թէ ջարդի օրերուն իրենց յանձնած զրամները չէ վերադարձուցեր: Ուրիշներ ալ կ'ըսէին թէ լեռը մնացած փախստական տղոց կ'օգնէր, զազանի:

Քիչ կեցայ հոն: Կառք մը վարձեցինք քանի մը Հայեր: Պուսեցի գերձակ մը եւ Օրտուցի Հրանտ Խօքսիւզեան պատանին ու քոյրերը: Բարեկամներս եկան զիս ճամբու պնելու: Համբուրուեցանք, լացինք ու բաժնուեցանք:

Խօքսիւզեան հարուստ ընտանիքի մը պաւակն էր: Քոյրերը առած էր Թուրքերու քովէն ու կը դառնար տուն: Կը դառնային բոլորն ալ տուն: Տունի ու հողի կարօտը այս ցեղին մէջ: Մահերու տեսակները եւ տառապանքներու անվերջ կրկնումը այդ սէրը աւելի սրած էին անոնց մէջ:

Ամէն Հայ իր բակերուն կը դառնար:

Մակայն բակերը չսր էին ու խեղճութիւնը անհուն:

Ճամբան Հրանտի պզտիկ քոյրը Գուրանէն կտորներ կ'արտատանէր բերնուց: Եղբայրը կը բարկանար:

— Սորվեցուցին ինձի, եղբայր,— կ'ըսէր,— թող որ ծաղրեմ:

13 տարեկան էր ան:

Այդ քոյրը Օրտուի մէջ Թուրք առած է: Միւս քոյրը Մարսիլիա Հայ առած է: Հրանդ, սքանչելի երիտասարդ, Պուլիս մեռած է ետքէն: Ասոնք ետքի լուրեր են:

Գիշերը Եէնի Պան իջանք: Պանդոկին մէջ Ամասիայէն արձակուած հայ զինուորներուն ծանօթացանք: Ընտանիքով տուն կ'երթային: Իրենց քով 13 տարեկան աղուոր հայ աղջիկ մը ունէին: Թուրք մը զայն կին էր ըրեր: Հիմակ առեր էին ձեռքէն ու կը տանէին:

Եկնի Խան ալ քանի մը տուն մնացած էր : Առտուն երբ հաց գնեցինք, տեսանք որ փուռին աշխատաւորները հայ վարպետներ են :

Չամբուպէլ^(*) մեր մէջ յիշատակներ արթնցուց : Անոր ստորոտի Ձերքէզներուն դեղը նմանապէս : Արթովա հասանք (Ձիֆթլիք) : Աջը, դաշտին մէջ, հեռու, հայ աւերակ գեղ մը կ'երեւէր : Հոն 30 տուն հայութիւն կայ եղեր : Սամսոնի հայութեան կառավարատն էր եղած ան :

Սամսոնի Հայերը կոտորածի առաջին նշանները տեսնելով՝ ուղեր էին ապստամբել ու նաւակներով Ռուսիա անցնիլ :

Առաջնորդը համամիտ չէր եղած : Երիտասարդութեան պնդումին վրայ ան կը սպառնայ հեռաձայնով քաղաքապետին իմացնել անոնց դաւը :

Հոս, Արթովա, երբ գիրենք բոլորը ձոր մը կը տանին ու կը սկսին սպաննել, Առաջնորդը կը սարսափի : Կը խնդրէ որ զինքը միւտիւրին տանին : Կը խնդրէ որ արտօնեն Պոլիս հեռագրել : Կը խնդրէ շատ բաներ ու գոնէ իրեն խնայել : Ամէնը անօգուտ : Զինքն ալ, ամենէն վերջ, կը սպաննեն :

Յաջորդ օրը այգիներու եւ բոյրերու հայրենիքը, Եւզոկիա հասանք : Կիսաւեր էր ան : Ծուկան Թուրքեր ու Հրեաներ կային միայն : Այնքան շէն ոստանը իր կողմ հայութեամբ ինչպէ՛ս դատարկուեր էր :

Աշունի ու ջարդի սարսուռը միշտ արցունք կը բերէր : Ո՞ւր էր մեր պիտցած ու ճանչցած Եւզոկիան :

Ձիերը լծել տուինք ու հեռացանք անկէ փութով : Հասանք Տէվ Ղուլուսը անուն չէրքէզ գեղը, ուր գիշերեցինք : Հոն թուրք պէյ մը Հայուհի մը կը խոցոցէր գեղացիներու ներկայութեան : Այդ աղջիկը ստքով իրեններուն կ'երթար Պուլկարիա :

Անցանք Թուրխալէն, լեռներէ, դաշտերէ : Գիշերը լերան վրայ կայան մը անցուցինք : Անոր աւազ զինուորականը Յոյն մըն էր : Մեզի հետ հոն հայ ղեկավար մը գիշերեց : Չամբուլ էր ան : Սպայի մը ապրանքները կը տանէր : Ան պատմեց իր այնքան վիպական կեանքը : Սակայն մոռացումը առաւ-տարաւ դայն . . .

Վերջապէս Ամասիա հասանք : Հոն տեղացի երկու երիտասարդ դտայ միայն : Հայոց թաղն ու եկեղեցին վառուած էին : Յոյներ շատ կային :

Ժայտերուն պարն ու պարտէզներու երեսուն քլլումեթր երկայնութիւնը Իրիսի ափերուն վրայ՝ հոյակապ էին : Յիշատակներ, յիշատակներ, հոն ալ, որոնցմէ բան մը չէր մնար հիմակ : Այցելեցի Իբրանոսեան վաճառատան վարիչին : Երկու եղբայր էին անոնք : Տունը կը մնար կրկ ու շէն, անձեռնմխելի : Ունէր դաշնակ ալ : Անոնք Հայ էին :

(*) Տե՛ս Դամիէլ վարուժան, Յե՛ղի՛ն Սի՛րՏԸԻձ մէջ, «Եփկիս Տօնէլ» :

Օրտուցի Օհանջան Լազեան քաջ Հայը 200 Օրտուցիի գլուխն անցած՝ զանոնք քաղաք կը տանէր: Շատերը սեւ հագած մանկամարգուհիներ էին: Մէջերնէն զոյգ մը նշանած էին: Անոնց փոխադրութիւնը կառավարութիւնը կը հսկար: Միւրքէտարնֆը դժուարութիւն էր հաներ սայլ դանելու: Օհանջան անոր բարկացեր ու սաստեր էր զայն: Գիշերը, պանդոկ, անոնց այցելեցի: Կը նուազէին, կը խմէին, կ'երգէին ու կը պարէին: «Մեր եղբայրն է եկեր», կ'ըսէին ինծի համար:

Սմասիայէն յոյն ընտանիքի մը հետ ճամբայ ելայ: Լավգայէն ու Չապալլը լեռնէն վերջ, ուր կատարուած կողոպուտներուն համար զապրիէներ լեռը կը սպասէին, հասանք Սամսոն: Ճամբան, զապրիէները ինծի ճամբու արտօնագիր հարցուցին: Բան մը չունէի: Դրամ առի եւ փրկուեցայ: (*)

Սամսոն ապատութիւն տեսայ: Գլխարկաւորներ, Յոյն եւ յոյն եկեղեցի: Հայերը հոն Սվազէն աւելի աղատ էին: Գաղթականներով ու վերադարձող զինուորներով լեցուն էր ան: Հայերէն սմանք եկած խանութ բացած էին ու յաջող գործ ունէին: Հայոց եւրոպական մաքուր առևտրուն մէջ աղտոտ թուրք գաղթականներ կը բնակէին: Անոնք մէկ կողմէն կը քակէին ու կը վառէին: Վերադարձողները սկսած էին զանոնք դուրս նետել:

Հայուհիի մը մօտ հիւրասիրուեցանք հոն, քանի մը օր պանդոկ մնայէ վերջ: Պանդոկին մէջ դեղեցիկ հիւանդ Հայուհի մը կար: Թուրք ամուսինը մեռեր էր ու մնացեալ Թուրքերը իրեն յաճախելով զինքը այդ վիճակին էին հասցուցեր: Կը թքնէր, կը թքնէր, կոթնած փետուրի բարձերուն: Մահը մօտ էր: Պանդոկին սրճապան Պարսիկը կը հսկէր անոր վրայ, սրպէսզի ունեցածները խլէ: Անտէր ու ցրուած էինք այսպէս: Վայրենացած անտէր պատանիներ տեսայ ճամբուս վրայ, անշուշտ հայ սրբեր, որոնք Թուրքերը կ'անարգէին ու կը վռնտէին հանրային վայրերէ, ինչպէս սրճարան, եւայլն: Գողահար ցուրտէն ու անօթութենէն, փողոցներն էին ինկած անոնք:

Սամսոնի մէջ երիտասարդութիւնը օգնութեան դօրծ մը կազմակերպած էր: Իսլամացած հարուստ ծխախոտի գործարանատէր մը կար, որ մզկիթ մը շինել տուած էր, անկէ դրամ կ'առնէին (Վահան էֆէնտի):

Շովափին վրայ երկար՝ նաւի սպասեցի: Ան չէր գար ու չէր դար:

Գերման զինուորներ այ հոն խոնուած նաւի կը սպասէին: Զրահաւոր մը հանդիպած էր հոն ու Հայերը խնամած: Ամենուն աչքը լոյս կ'իջնէր: Իմիներս սակայն աղօտեցան: Օգէն, ջուրէն ու սնունդէն հիւանդացայ: Նորէն թանջքս ետ եկաւ: Հայ երիտասարդներ

(*) Յոյնք տեսաւ որ զիս բռնեցին, ետ կեցաւ, միևնչեւ որ Թուրքերը զիս ազատ չբողին, չհեռացաւ բովէս:

այցելեցին ինձի: Դրամս հատեր էր: Դրամ տուին ու խոստացան բժիշկ բերել: Տանտիրուհին կը խնամէր զիս զաւելին պէս: Հարուստի կին եղած էր ան: Հիմակ տղան մտադործութիւն կ'ընէր ու կ'աւարէին անով:

Վերջապէս նաւը եկաւ: Բոլորը հոն վազեցին: Ինձի նայող չեղաւ: Ելայ մինակս, սողալով նաւ դայցի: Հոն կային հայ բժիշկներ: Անոնցմէ մին քանի մը հայ աղջիկ ունէր հեաւը, հարէմի պէս: (*) Բժիշկները ինձի խրատներ կու տային: Նաւին մէջ խցիկ մը գտայ: Քովս ուրիշ հիւանդ մը կար: Հայ բժիշկ մըն էր: Խցիկը, մարդերով լեցուն, զսց զազաղի մը կը նմանէր...

...Սեւ ծովը կ'ալեկոծէր, կ'ոռնար, ու կը ցնցէր նաւը եւ մեր հոգին:

...Վտոփոր կը մտնէինք: Ելայ նստայ նաւին ցռուկին վրայ: Ծուրջս ամբոխը կ'երգէր ու կը կատակէր: Ես կը աքայի ու կը նայէի ծանօթ տեղերուն անհուն, անհուն կարօտով:

...Որոշեցի մեր տունին թաղը, ջուրերուն վրայէն, բայց չհրցայ տունս ճանչնալ...

Մտեցանք քաղաքին: Եքեզ գրահաւորներ կապոյտ ջուրերուն վրայ կեցեր էին՝ թնդանօթները շտկած ու դրօշադարձուած: Նաւը բացը կեցաւ: Մարդերը չուաններով կ'իջնէին: Պլլուեցայ ես ալ չուանի մը ու նաւակ մը նետուեցայ: Մեզ զահլիճ տարին:

Քարափին վրայ մաքսի պաշտօնեաներ եկան ու սկսան ուրիշներուն զոյքերը զննել: Ցամաք թոտայ: Վրաս ո՛չ մէկ ինքնութեան թուղթ ունէի: Դուս մը բաց գտայ, դուրս նետուեցայ ու փողոց ինկայ:

Հարցնելով հօրս խանութը դտայ: Մեր ամենամօտ բարեկամը, հոն նստած էր զաւելին հեա:

— Մտվախս էֆէնտին ս՞ւր է, — հարցուցի:
— Ի՞նչ պիտի ընես... հիմակ կու դայ... — ըսաւ ու չէր ուղեր վրաս նայիլ: Իր սրտխտութիւնը հարցուցի: Կը զարմանար: Ծանօթութիւն տուի: Բարեկամս զիս զրկեց ու սկսաւ արտասուել:

Հեռաձայնով փնտռեց ու կանչել տուաւ հայրս: Սիրտը դող երած ու վաղելով խանութ եկաւ ան: Նստեր էի ես: Ձէր ճանչնար զիս: Կը հարցնէր.

— Ո՞ւր է տղաս, եկեր է...
— Ահա, նստեր է, — ըսին:
Զիս զրկեց, նստաւ ու լալ սկսաւ:
— Տղա՛ս, պզտիկներ ես, — ըսաւ...
Կառքով տուն գացինք:
Իրիկուն էր:

(*) Տօֆ. Քէֆլիկեան, որ յետոյ բուժարան բացաւ սեւայիմ հիւանդութիւններու յատուկ:

Մերինները առջիս կը վազեն: Ահա պզտիկ եղբայրս, որ մեծ-
ցեր, հասակ նետեր է: Գեղեցիկ երիտասարդ է այլևս...: Կը գրկեմ
ու կը համբուրեմ:

Ահա պզտիկ քոյրս, որ ազջնակ եզեր է: Ան ալ մեծցեր ու զիս
մոռցեր է: Կը գրկեմ ու կը համբուրեմ, մինչ ան պիշ-պիշ վրաս կը
նայի:

Կու դայ ծերունի մամս:

— Գառնո՛ւկ... — կը ճչայ... զիս կը գրկէ եւ յուշերը կը
փնտռէ: Կը յիշէ՛, կը յիշէ՛... ու կը պոռթկայ անհուն արցունքով...
Եւրոպական Նոր Տարիի իրիկունն էր, 1919ին:

Նստայ: Փոխեցին զգեստս: Հիւանդ էի:

Վառեցին լոյսերն ալ: Հօրս տունը ինչքան ճոխ, շքեղ ու փայ-
լուն կ'երեւէր աչքերուս: Խոշոր ժամացոյցը ի՞նչ անուշ կ'երգէր՝
երբ ժամերը կը զարնէր: «Բարի եկար» կ'ըսէր ինձի:

Հայրս սնտուկէն դունաւոր լաթ մը բերաւ, կարմիր, կապոյտ,
նարնջագոյն: Հայ դրօշակը:

Առջիս բռնեց զայն ու դոյները բացատրեց:

— Կարմիրը վրէժն է, — ըսաւ ան, — կապոյտը՝ արդարու-
թիւնը եւ նարնջագոյնը՝ համերաշխութիւնը:

Ու բանալով այդ նուիրական լաթը, որ կը սարսուար համբոյր-
ներէս, գլխուս վրայ ձգեց, ուզելով երկրորդ կեանքս հայ անկա-
խութիւնով մկրտել եւ ըսաւ.

— Տղա՛ս, բոլոր քաջածներդ այս դրօշակին համար էին...

Տառապանքի հովիտէն ու մահուան շուքի ձորէն ճողոպրած՝
աղատութիւնը գրկեցի, վերջ տալով հալածական ու թափառական
կեանքիս:



ՎԵՐՁԻՆ ԽՕՍՔԵՐՍ

Հայոց պատմութիւնը այս բաներուն պէտք ունի: Հայոց պատմութիւնը այսպիսի բաներով պիտի կերտուի: Հայոց պատմութիւնը այս բաներուն երախտապարտ պիտի ըլլայ: Այս բաները գրուած են Հայոց պատմութեան համար: Իսկ անոնք որ կը լռեն, կը պահեն այս եւ նման բաներ, թէեւ Հայ, բայց թերեւս կոչուին գաւաճան: Թերեւս նաեւ միայն ջարդի խեղճ, խեղճ աւելցուք, որ այլեւս ո՛չ ըսել, ոչ լսել կրնան այդ մասին:

Եթէ պատմութիւն չըլլայ, Ազգը ի՞նչ բանէ դաս պիտի առնէ: Ու դանէ իր կեանքի ուղին: Պատմութիւնը անոր ճամբան լուսաւորող ջահն է: Ազգին յիշողութիւնը: Անոր կենսապրականը: Եւ ասանկ բաները այդ ջահին մէջ իւր կը լեցնեն, որպէսդի ան աւելի պայծառ շողայ:

Որովհետեւ մենք եկանք ու անցանք ահա: Բայց Ազգը եւ իր պատմութիւնը յաւերժական են: Եւ մենք կ'ըսենք անոր այս գործով:

— Նայէ, տե՛ս, իմ գլխուս այս սարսափելի ոճիրը եկաւ: Զգո՛՛յշ, չկրկնուի ան: Իս'ս առ ինձի պատահածներէն:

Ի՞նչ բաներ ասոնք, ընթերցող:

Ընթերցո՞ղ:

Ես գառն փորձով գիտեմ որ դուն չկաս: Թերեւս մութ անկիւններն ու խզօաները մտած կու լաս: Կամ կը ծախես հիւսուածեղէն, գորգ ու աղամանդ Փարիզի, Նիւ-Յորքի, Հոնկ-Քոնկի շուկաներուն վրայ: Մոռցած մօրդ կաթը, կամ գուցէ տխուր՝ անոր կորուստին համար, բայց՝ անգոր այլեւս:

Այս բաները ուղղուած են ա՛յն մարդոց, որոնք տակաւին հարազատ հայ հողերու փշրանքի փշրանքին վրայ կը գանուին ու կը ջանան ապրիլ իբրեւ հարազատ Հայ, քէեւ այդ հետզհետէ շատ աւելի դժուար ըլլայ նաեւ հոն: Ծարունակողները Հայոց պատմութեան: Որոնք բարեբախտաբար ասանկ բաներ քիչ տեսան: Բայց ի՞նչ բաներ են ասոնք: Տակաւին հարազատ Հայ, դուն, քիչ վերջը կ'իմանաս, երբ աչք մը նետել հաճիս այս գործին վրայ: Որպէսդի դառնաս զգուշաւոր: Եւ դուն ալ մեր օրին չհասնիս: Մեր վախը...:

1958, Աշուն, Փարիզ

ՌԻՐԵՄՆ ԱՅՍՊԵՍ...

Լեռներու գոգը, գեղի մը մէջ, գետակի մը ափին, աղբիւրի մը քով, հօրենական տունս կար: Ան որ հիմա այլեւ գոյութիւն չունի, ինչպէս գեղը ինք:

Կոխ եր այն տարին: Մեր տղաքը զօրք տարին ու սպաննեցին: Այրերը քջեցին սուտ ու փուտ խօսքերով ասոյն-անոյն ու փձացուցին: Մենք ալ հաւատացինք ու գրոխները կախ՝ քաղցինք սպանդ: Կին ու մանկիկ ալ յետոյ աքսորեցին, ըսելով թէ քանի մը օրուան համար է միայն, նորէն ետ պիտի գան: Ատոր ալ հաւատացինք: Ու դեռ պիտի գան: Ու տարին, ողջ-ողջ թափեցին ԽԱԶԱԶ ՌՌԹԱՆ, անդունդներ քուրս գեղի մը մօտը, Տիգրանակերտի քով, ճամբան իրենց ուլածը վառելով յափշտակելէ յետոյ: ճամբան իրենց ուլածին պէս անոնց հետ վարուելէ յետոյ: ճամբան մօրը բազուկը կտրելով՝ աղջիկը քաշել-տանելէ յետոյ: ճամբան ու անոր հատած տեղը՝ ԽԱԶԱԶ ՌՌԹԱՆ...:

Ես այն ատեն քսան տարու էի ու լեռ փախայ:

Ի՞նչ կ'ուզէք որ ընէի: Հայրս, Պոլիս, մեծահարուստ, զենքի մը դրամը խնայեց ինձի: Քեռայրս, որուն տունն էի գեղը, այսինքն ինք մեր տունն էր, «իմ այս գաւազանս զենքի մը համալօր է» ըսաւ ու չչարժեցաւ: Արզենց Խուլյուն, որ Ամերիկայէն եկած ունեւոր էր, որսորդ, նշանառու, քաջ աւազակ ու մարդասպան, մերժեց, երբ իրեն խրատեցի որ մօտենն զենք մը գնէ: Ան ալ բնական է գնաց-յանձնուեցաւ ու դեռ կ'երթայ:

Անցան օրերը: Գացին դարերը: Չեով մը իբրեւ թէ փրկուած, գուցէ կենդանի, կը գտնուիմ օտար երկիր մը հարկաւ: Հարկաւ հայրենիք չունիմ, քանի որ մարդ չմնաց հոն: Իրենք-զիրենք չպաշտպանեցին: Գացին գրոխները կախ, յանձնուեցան Թորքին ու այդպէս ալ ինկան: Հիմա ուրեմն ծերացած եմ, հիւանդ ու միմակ: Ո՞վ կ'ուզէք որ ունենամ: Կը մտածեմ...: Բայց ի՞նչ օգուտ խորհելէն:

Գերդաստանս շատ էր, մեծ էր: Աման քառասունըհինգ հոգի մէկ յարկի տակ: Բան մը չմնաց անկէ: Տարեց հօրեղբայր մը կայ Հլուխ-սային Ամերիկա, ուր գաղթած էր դէպքերէն շատ առաջ: Հիմա կուրացած է ու ծերանոց մը կը պատասպարուի: Ուրիշ հօրեղբայր մը, նոյնպէս ութսունը անց, հոն, երբեմն կ'այցելէ իրեն: Այս ուրիշը ունի տղայ մը եւ երեք թոռ: Բայց ի՞նչ կապ կայ այլեւ անոնց ու ազգին միջեւ:

Ես ամուրի մնացի:

Ուրիշ մը Ամերիկա ամուրի:

Ուրիշ մը Պոլիս երկու տղայ ունի, իրաւ է: Աս ալ այնքան ապահով տե՞ղ մըն է հայաճումի համար այլեւ...:

Բնա՛ւ երբեք: Ահա այսպէս...:

Ուրեմն ազգ մը կար Անատոլու եւ ՀԱՅԱՍՏԱՆ՝ մինչեւ 1915, որ փձացաւ: Իմ գերդաստանս անոր մանրանկարը միայն: Ու դեռ ալ բախտաւոր, որ Պոլիս ու Ամերիկա մարդ ունէր ու անոնք մնացին:

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ

ԵՐՈՒԱՆԻ ՔՈԶԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

Հարապատներէ կրկուած, բաժնուած, հեռու ապրողներէն, շատ քիչերուն բախտը ժպտած է ունենալ զաւառակից մը, այս պարագային ապնիւ Տիկին մը, որ տարիներով, ծերութեան օրերու քմահաճոյքներն հանդուրժելէ յետոյ, վաւկի մը հոգածութեամբ, տեղն ալ յայտնի՝ գերեզմանի մը կը յանձնէ վինքը:

Ազգային վերապարթումսի մը հպօր թափով տարուած ճիգերէն հոգի ու միտք դրոշմուած, Եղեռնին գրեթէ չափահաս, անոր համը առած, մօտ ինը տասնեակ տարի վտարանդի կեանքէ փրկված, Երուանդ Քոչեանն ալ դարձաւ օտար հողին:

Ու ինքն է արդարեւ, որ ստորեւ դրուած յանգաւոր տրտունջով, կը շեշտէ «Օտարի հող»ի պարագան իբրեւ վերջին բողոք՝ կարդացուած իր դագաղին վրայ:

Ո՛հ, մեր գիւղն ալ մարդ չըմնաց
Ու մեր արտերն, արտերը մեր,
Ո՛հ մեր արտերը անմոռաց,
-- Որոնց մէկուն թումքն են ծներ --
Հիմա խոպան են ու անտեր:
Ու ես խորերն Երոզայի
Թափառական յար, յարատեւ,
Կը փնտռեմ տեղ մ'ամայի,
Ուր գտնեմ հող, հանգիստ, արեւ,
Մինչ մնացին հողերը մեր,
Աւա՛ղ, մեզմէ ո՛րքան հեռու.
Ու վանոնք ա՛լ չեմ տեսներ,
Ո՛չ իսկ իբրեւ լոկ այցելու:
Ո՛հ, ա՛լ այնտեղ մարդ չըմնաց
Ու մեր արտերն, հողերը մեր,
Ո՛հ մեր հողերը անմոռաց,
Թշնամիին են մնացեր:

Որքան ալ աստ-անդ, մեկուսի ապրած անծանօթ մըն է Քոչեան, իր մտքով, գրական աշխատանքներով գեթ, մնացած է իր համայնքէն անբաժան, անոր հոգերովն ալ տառապած:

Շրջանաարտ Պոլտոյ Ալգ. Կեդրոնական վարժարանէն, Քոչեան գրած է բանաստեղծութիւններ, ունի անտիպ գրութիւններ, հրատարակած է նորավէպեր պարունակող հատոր մը:

Քայքայուած հոգեվիճակով, ան խնայած է նաեւ գումար մը, իր ծննդավայր **Խուռնավոլ** գիւղի (Տիվրիկի շրջան) պատմութեան համար, տոհմիկ բարբառով համեմուած:

Աւելի քան տարի մը առաջ, անոր հրատարակութեան սկիզբ տուած էր, կ'ուզէր վայն ողջունել իր կենդանութեան: Ուշացումը անոր, հետեանք է անբարեխիղճ արարքի մը, ու այդպէս **Երուանդ Քոչեան** հեռացաւ անոր կարօտը չառած, ինչպէս իր նախնեաց սրբազան հողերուն:

ՎԱԶԳԷՆ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ

ՎԵՐՋ Բ. ՄԱՍԻ

Գ. ՄԱՍ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

1914ի ամառը գեղ դացի արձակուրդի, կարօտս յադեցնելու եւ բառեր ու շերեր հաւաքելու: Լեռ ելլելէ առաջ՝ զանոնք, նաեւ գեղի անցուղարձերուն մասին բռնած Օրագիրս մեր տան դառձեկներուն տակ պահեցի:

Բայց մեր տունը վառեր են, 1915ի ձմեռը, հոն իջեւանած կարաւաններ, եւ բոլորը կորսուեցաւ:

Յետոյ, Պոլիս, կրկին հաւաքեցի մեծ մօրս բերնէն, մայրս մեռած էր, որոնց պատկերները հոս դրած եմ:

Ուրեմն մօտաւորապէս եօթանասուն եւ աւելի տարիներէ ի վեր կ'աշխատիմ այս բառերուն ու շերերուն վրայ, մերթ քունէս ընդոստ արթննալով՝ բան մը նշելու համար:

Լսելով մեր գեղացոնց խօսուածքը, Եղիշէ Գուրեան, բանաստեղծ-գիւանագէտ Պատրիարքը, ուսուցիչս Պոլսոյ Կեդրոնական վարժարանի մէջ, ըսած է թէ ամենաընտիր ու հին հայկական հնչումն է ան:

Ա՛յդ է որ մեր գեղացիք չէին կրնար տառասխալ ընել: Հիմա եթէ ես ու հօրեղբայրս կը սխալինք, պատճառը ա՛յն է, որ մեր գեղի հնչումէն հեռացած ենք երկար տարիներէ ի վեր:

Ահաւասիկ այդ հին հայկական գաւառաբարբառէն քանի մը փշրանքներ: Աւա՛ղ, փշրանքնե՛ր միայն, վասնզի այդ ժողովուրդը իր լեզուն ալ հետը անդունդ տարաւ, ԽԱԶԱԶ ՌՈՒԹԱՆԻ հորերը:

ԵՐՈՒԱՆԻ ՔՈԶԵԱՆ

ԽՈՒՌՆԱՎԻԼԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

(Ուղարկում Ներսէս Խաչիկեանի)

Գրեց՝ Երամ Արապեան-Քէյհեան
Խուռնավուրցի

Անիի աւերումէն յետոյ բնիկները խումբ առ խումբ վաղթած են օտար ափեր, ինչպէս Մոլտավիա, Հունգարիա, Հնդկաստան, եւ այլն: Այս արտագաղթը սկսած է 1234 թուականին:

Արտագաղթողներէն խումբ մըն ալ անցնելով պարսկական սահմանէն, եւ իրեն հետ առնելով Գարատաղի շրջանէն պարսիկ լուծէն ազատած խումբ մը՝ կը յառաջանան դէպի Բարձր Հայք: Բայց հոս իրենց համար ապահով վայր մը չկարենալով գտնել՝ կ'իջնեն աւելի վար եւ կը հասնին մեր գիւղին շրջակաները:

Այդ թուականէն շատ առաջ Պոնտոսի բիւզանդական խլրտումներէն ազատած խառնածին տարրեր եկած հաստատուած են Սեբաստիոյ շրջակաները, եւ իրենց համար ապահով վայր ըլլալով մեր գիւղը նախընտրեր են: Արդարեւ անոնք հոն հաստատուած են, եւ իրենց տուները շինած են Բերգին Գարին ու Մամուն Գարին ստորոտը:

Այդ խառնածին բեկորները, սակայն, երկար չեն կրնար մնալ հոն, որովհետեւ գիւղին մօտէն անցնող վաղթախումբերու տեւական յարձակումներուն ենթակայ կ'ըլլան:

Երբ Անիէն եկած կարաւանը մեր գիւղը կը հասնի, հոն մի'այն կիսաքանդ խրճիթներ կը գտնէ: Մեր այդ նախնիքները ըլլալով արիասիրտ ու ռազմիկ, մանաւանդ Գարատաղի շրջանէն եկածները, (*) իրենց արքենի հասակով, թիկնեղ մարմնով ու անհունօրէն արիասրտութիւնով, կ'որոշեն հոն հաստատուել, այդ շրջանակը գտնելով իրենց համար շատ աւելի ապահով՝ քան այլուր:

Կարաւանին գլուխը կը գտնուէր Անեցի Սարգիս Օշին անուն ազնուական անձնաւորութիւն մը, որուն շնորհիւ շատ կարճ ժամանակի մը մէջ գիւղը կը շէնհայ, ունենալով երկյարկանի տուներ:

(*) Արապեանք են: Իսկ շըլլօյեանք Բաշեանք են: Գիւղը շատ տուներ աւելորդ անուն կը կրէին:

Տուներու շինութեան հետ զուգընթացաբար կը շինուի նաեւ եկեղեցին (Մեր դիւղին առաջին եկեղեցին շինուած է Գանան Կարոյին տունին տեղը) :

Սարգիս Օշին կ'ընտրուի գիւղապետ, եւ այս պաշտօնը կը վարէ աւելի քան 30 տարի : Իր պաշտօնավարութեան ընթացքին յարաբերութիւններ կը հաստատէ շրջակայ գաւառներուն հետ : Գիւղը օրըսօրէ կը շէննայ, կը բարգաւաճի : Բայց դժբախտաբար շատ երկար չի տեսեր այս խաղաղ ու անդորր բարգաւաճումը : Եւ օր մը գիւղը կ'ենթարկուի «Ալաէտտին»եան աշիրէթին աւազակներու յարձակումին : Թէեւ գիւղացիներուն դիմադրութիւնը բուռն կ'ըլլայ, եւ սակայն յետուայիներուն թիւի առաւելութիւնը պատճառ կ'ըլլայ որ այդ կտրիճները քաշուին իրենց հօտին գտնուած քարերը, եւ այնտեղէն շարունակեն իրենց դիմադրութիւնը : Յետուայիները տեսնելով որ չպիտի կարենան անձնատուութիւն պարտադրել՝ կը քանդեն շատ մը տուներ, եկեղեցին, եւ ամէն ինչ թալանելով կ'անցնին—կ'երթան :

Գիւղին այս մասնակի քանդումը շուտով կը վերաշինուի :

Այս առաջին ու վերջին աւերումը կ'ըլլայ մեր գիւղին : Անկէ յետոյ ան դարձեալ կը շէննայ եւ խաղաղ աշխատանքը կը վերսկսի :

Մինչեւ Պոլսոյ զբաւումը (1453), մեր գիւղացիները շրջակայ այլադան ցեղախումբերու հետ բարեկամական յարաբերութիւններ կը մշակեն : Իրենց գլխաւոր զբաղումը կ'ըլլայ երկրագործութիւն, խաշնարածութիւն ու դուարի առևտուրը :

Գիւղի բնակչութեան օրըսօրէական աճումը կը ստիպէ գիւղացիները արտագաղթի : Այս արտագաղթը կ'երկարի մինչեւ Սեւ ծովի ափերը :

1600ական թուականներուն մեր գիւղէն դէպի Պոլիս առաջին դաղթողը կ'ըլլայ Փիլիկ «չէլէպի» եւ իր փոքր եղբայրը «Գայ» Եղիկ : Այս երկու եղբայրները «ձըլլոյենց»մէ են եւ իրենց մականունը «ձէլլանեան» եղած է, ինչ որ աղաւաղուելով «ձըլլոյ»ի վերածուած է :

Հոս պէտք է յիշատակել որ գիւղապետ Սարգիս Օշինի (որ նախահայրն է «Ուփկոնց») մահէն յետոյ իրեն կը յաջորդէ իր երեցադոյն գաւակը՝ Յովակիմ :

Մինչեւ Օսմանեան Կայսրութեան տարածումը դէպի Սեբաստիա՝ մեր գիւղը ինքնավար կը մնայ : Այնուհետեւ կուսակալութեան եւ ա՛յլ նահանգային բաժանումներու հետեւանքով մեր գիւղն ալ կ'իյնայ Սեբաստիոյ Կուսակալութեան ենթակայ գիւղերու շարքին մէջ : 1675 թուականին մեր գիւղին առաջին «միւտիբը» կ'ըլլայ ձըլլոյենց Փիլիկին աղան՝ Սեղբակ, մականանուանեայն «Սարը Չէլէպի» : Գիւղին առաջին «գարատունը» կը շինուի Գարատաղցի (յետոյ վերածուած «Քէհենք»ի, այսինքն Քէհեանք) Պաչիկի (Պաչատուր) սեփական գետնին վրայ (Վերջը Քէհենք այդ տեղ հիւրանոցի

վերածած են, երբ դպրատունը փոխադրուած է իր այսօրուան տեղը) :

Առաջին դպրատան շինութեան թուականը որոշ կերպով յիշատակուած չէ, բայց կ'ենթադրուի թէ 1400ական թուականին կը գուզադիպի :

Գպրատան շինութենէն առաջ ուսուցումը տուներու մէջ տեղի ունեցած է՝ Անեցի Եգնիկ քահանայի հովանաւորութեան ներքեւ :

Գիւղին միւտիրութիւնը Ճըլլոյնցմէ յետոյ փոխանցուած է Գարատաղցի Գարաքէհեա Եգիկի Եղիայի (վերջէն մականուանուած են Քէհէնք) :

Յաջորդաբար Նորհատենք, Ճերանենք, Ովկոնք եւ վերջապէս Խաչկոնք : (*)

ՍԵՐԱՍՏԻՈՅ ԳԱԻԱՌԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՒ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՂՄԵՐԸ (**)

Այս տեղերն՝ ինչպէս ըսի, Ստոյ Աթոռոյն կը պատկանին, եւ ունեցած են շատ մը փոփոխութիւններ. այժմ անուամբ երեքի, այլ իրօք երկուքի կը բաժնուին. ա. Տիվրիկ, բ. Կիւրին Մանճըլըք եւ Տարանդա. ըստ այսմ եւ ես կը բաժնեմ դանոնք երկու մասի միայն :

Ա.— Տիվրիկ ԳԱՁԱ

Թէպէրք կամ Տիվրիկ դաւառակին կեդրոնն է դաշտաձեւ հովտի մը մէջ շինուած Չալթա-Չայ վտակին աջ եզերքն. երկայն եւ լայն հովիտը զարդարուած է պարտէզներով ու այգիներով : Ոմանք կարծեցին որ ասիկա հին Տուրքան ըլլայ. բայց ստոյգ չէ, զի Տուրքան մօտ է Այնթապ քաղաքին : Թերեւս աւելի իրաւունք ունին անոնք, որ կը համարին զանիկա Պոմպէոսի շինած Նիկոպոլիսը : Միջնաբերդը կը դանուի արեւելեան կողմը, բարձր բլուրի մը վրայ կանդնուած, դարաւոր հնութեամբ : Այս ամբողջին մօտ է Բերդաթաղն, որ նոյնիսկ հին քաղաքն է, ուր բազմաթիւ էին Հայք, բայց տեղը քարուտ ու անջրդի ըլլալով, այժմ մեծազոյն մասը Այգեթա-

(*) Այս տեղեկութիւնները քաղած եմ ձեռագիր մատնանէ մը, որում հեղինակը եղած է Ալեհայ Ապուշի ցիւղէն պատուելի Վարդանը : Այս ձեռագիր մատնանը յետոյ յրկուած է Երուսաղէմ՝ տպագրութեան համար, բայց դժբաղդաբար Երուսաղէմի Մեսրոպ Պատրիարքի օրով կորստեան մատնուած է առանց տպագրուելու :

Ըստ Երուսաղէ Բռնիանի, «Անպայման Լոնտոն յրկիւղով ծախած եմ...» :

(**) ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ԱԿՍՆԱԻՈՐ ՔԱՂԱՔԻՆ ՍԵՐԱՍՏԻՈՅ, Գերպ. Անդրէաս Վ. Արեւմանդրեան, Վեներտիկ-Ս. Ղազար, 1911 :

ղը կը բնակին, կէս ժամ հետո: Ունի երկու եկեղեցի՝ վարի եւ վե-
րի, իրարմէ քանի մը վայրկեան հետո: Վարինը՝ Ս. Երբորդու-
թիւն, քարաշէն, միջակ մեծութեամբ. վերինը՝ Ս. Աստուածածին,
նկուլի նման՝ հին եկեղեցւոյ տեղը, քարաշէն հսլակապ երեք խո-
նկեղեցիներու տներակներ, ինչպէս են Ս. Աստուածածին, Ս. Գէ-
որգ, Խնդրակատար եւ Ս. Յակոբ: Բնակչաց թիւն ունի շատ մը
տարբերութիւններ: Հնուց կը կարծուի եղեր 2000 տուն Հայ, որ ի-
ջած է ապա մի'այն 100 տան, որ չափազանց կը թուի: Ժամանակ մը
կ'ըսէին 250 տուն, եւ մօտ ասեններս՝ իբր 500 տուն. իսկ վերջապէս
4000 անձ. եւ Տաճկաց թիւը կրկնապատիկ, որով բոլորը մէկէն կ'ը-
լայ 12,000 անձ: Կան նաև բողոքականք:

Ալիս գետը կը բղիի քաղաքին հիւսիսակողմն ու մօտերը. բայց
տեղը ցած ըլլալով՝ երկիրը չ'ոռոգաներ:

Ս. Լուսաւորիչ վանք, ուր կը նստի Տիվրիկի առաջնորդը, քա-
ղաքէն 2:50 ժամ կամ 3 ժ. հեռու, լեռներով, կիրճերով գատուած
ցած բլրակի մը վրայ շինուած է. յառաջադոյն կ'անուանէր «Կիրզի
անապատ», եւ Խոռնտովուլայ մօտն ըլլալով՝ բտուած է նաև «Պուռ-
նախուլայ վանք». 8-900 տարի առաջ շինուած կը կարծեն սմանք,
բայց անշուշտ սկզբնաւորութիւնը շատ աւելի հին ըլլալու է, եր-
բորդ-չորբորդ դարու դործ, կամ ճգնատուն միանձանց, որ բազմա-
թիւ էին Կապադոկիոյ եւ Փոքր Հայոց մէջ: Դիրքը սքանչելի է,
բնութեան ամէն բարութեամբ զարդարուած: Երեք կողմէն պատած
է հեղեղատով. խիստ յարմար տեղ է կրօնաւորաց համար. յառա-
ջադոյն ունեցեր է բաւական թիւ մը կրօնաւորաց, որոց գործն է
եղեր դրճեր գաղափարել, իսկ այժմ չկայ ո՛չ կրօնաւոր, ո՛չ ժամա-
սաց, եւ ոչ աղօթող: Շէնքերն անշուք են, սաճարը ցած եւ անլոյս,
Ունի գրախօ մը թթեհեաց եւ մրդարեր ծառերու: Վանքին եկամու-
տը կը կազմուի գեղերու պտուղներէն, արտերու բերքերէն եւ ուխ-
տաւորաց նուէրներէն:

Տիվրիկէն 1 եւ 2 ժամ հետո կը գտնուին Բալամդա եւ Կրա-
տոն գիւղերը: Բալամդա փոքր գիւղը կը դոնուի դետադաշտի կամ
հովտի մը մէջ. իր պզտիկութեամբն հանդերձ փոքրիկ Տիվրիկ մը
կը ձևացնէ 18-20 տնով, որոնք բնկերասէր են, հողատործ եւ հիւ-
արտերը ջրարբի՝ Հաքմա վտակէն, որ կ'իջնայ Չալթա-Չայ գետա-
կը: Զրին առատութեան համար Բալամդացիք կը ցանեն ցորեն, դա-
րի եւ բրինձ:

Կրատոն լայն հովտի մը մէջ է, ունի եկեղեցի եւ վարժարան.
բնակիչք՝ Հայ 50-60 տուն, հողագործ են, պարտէզներ ունին եւ
աղնիւ խնձոր:

Նոյն Հաքմա վտակին եղերքն են Կրասն, Արմըթաղ, Օտուր, Արշուշէն, Բարդամ եւ Ս. Յակոբ գիւղերուն ծառատանները :

Տիվրիկի շուրջը, վերը յիշուածներէն զատ, կը գտնուին բաւական թուով գիւղեր՝ տաճկարնակ, հայարնակ եւ խառն : Ոմանք կը նուագեցնեն անոնց թիւն, ոմանք կ'աճեցնեն, շէն մինչեւ 120 ըսոյ կայ : Ես այժմ պիտի գրեմ հայարնակ եւ խառն եղողները, մէկալնոնց վրայ ամբողջ տեղեկութիւն մ'առած չըլլալով :

Խուրնավու. ունի եկեղեցի՝ Ս. Լուսաւորիչ, եւ վարժարան՝ 50 աշակերտով :

Տաճիկ. Արմտան կամ Արմաքաղ. Չալթա-Չայի աջակողմն, եկեղեցին՝ Ս. Գէորգ. ունի վարժարան. Հայք 150-200 տուն. իր շուրջը կան հայ եւ տաճիկ գիւղեր ու գիւղակներ : Հայարնակ են Ծիկիմ, Փալանկա, որ ունի եկեղեցի՝ Ս. Գէորգ, Արտամէտ, որուն ինձորը լաւ է, եւայլն :

Մրուանայ. եկեղեցին՝ Ս. Աստուածածին :

Սիմնան, եկեղեցին՝ Ս. Գէորգ :

Աշուշէն, եկեղեցին՝ Թագաւոր Մոգուց, կայ վարժարան :

Օտուր կամ Օդուռ, եկեղեցին՝ Ս. Թովմաս Առաքեալ. ունի վարժարան : Ասոր մօտը կայ աւերակ վանք, որ կը կոչուի Փայլեփանք :

Բարդամ. եկեղեցին՝ Ս. Աստուածածին. բնակիչք՝ Հայք 30 տուն, 500 անձ :

Ս. Յակոբ աւերակ վանք, որուն եկեղեցին կանգուն է. Հայք 15-20 տուն են, որ վանքին հողերն իրենց սեպհականեր, արտերը բաժներ եւ փոքրիկ գիւղ մը ձեւացուցեր են : Ուխտաւորներ կը յաճախեն եկեղեցին, եւ հաւաքուած եկամուտը գիւղացիք կը վայելեն :

Կիւրէսիմ. ունի եկեղեցի՝ Ս. Երրորդութիւն, եւ վարժարան : Այս գիւղին մօտ է Ս. Թորոս կիսաւեր վանքը :

Կասմա, Գասմա կամ Քէսմէ. 5-6 ժամ Տիվրիկէն հեռու, եւ 10 ժամ Ակնէն : Հոս կը բնակին 100 տուն Հայ, եւ 50 տուն Տաճիկ. եկեղեցին՝ Ս. Աստուածածին, ունին վարժարան : Գիւղին գիրքը գեղեցիկ է, ջրաւէտ ու ծառազարդ. իր տներն Տիվրիկի տներէն աւելի ձեւաւոր են : Կասմա ունի երկաթի առատ հանք : Այս գիւղէն Պոլիս զաղթած է Նորաստուկեան աղզատոճմը : Կասմա այս գաւառակին նշանաւոր գիւղերէն մին է. իր մօտը կայ աւերակ եկեղեցի եւ Բազրատուն անուն գերեզմանոց, ուր առաջ կար համանուն հայարնակ գիւղ մը :

Տիվրիկի նշանաւոր գիւղերէն մին է նաեւ Զիմառա, կը գտնուի Կասմայի արեւելեան կողմը, բարձր լեռան լանջակողմն, որ կ'իջնէ

մինչեւ եփրատ : Օղբ մաքուր եւ սքանչելի է . դեբբը դեղեցիկ , շրջապատուած է պարտէզներով : Բնակիչք Հայ են , 100-110 տուն , ժրջան անձինք , հորպործ , կօշկակար , երկաթագործ , հիւան , եւայլն : Երկիրը կը բերէ ցորեն , դարբի , լուբիա , ընկոյզ , եւայլն : Գիւղին մէջտեղը կայ եկեղեցին՝ Ս . Երրորդութիւն , շինուած է 1873ին , նոյն կողմերուն պեղեցիկն է , բայց կարօտ նորոգութեան , եւ անոր մօտ է դպրոցն , որ կը կոչուի Նալեան , Կ . Պոլսի Յակոբ Պատրիարքին մականուամբը , զի նա Ձիմառացի էր : Գիւղէն մէկ ժամ հեռու է Վերի պատուական , զոր դետնի տակէն նախնիք դիւղը բերեր են , եւ հոն աղբիւր մը շինած : Ասոր մօտ է Սաչի Կէօլ ըսուած լճակն , որուն ջրով կ'ոռոգուին պարտէզներն : Ինձ կը թուի որ Վերի վանքն է , կամ անոր եկեղեցին , որ կը կոչուէր Ս . Բրիտտափոր , եւ կամ արդ

Բենկան կամ Բենկեան . եփրատայ օժայտոյտ եղբրքը բարեբեր դիւղ , պարտէզներով զարդարուած է : Վերեւը կայ Միջնարկի բլուրն , որուն ստորտէն կը սահի դեռակ մը՝ Ձիմառայէն գալով : Ունի թուփ , ծիրան , բալ , տանձ , խնձոր , եւայլն , անանկ որ բերոց առատութեամբ Բենկայ պիտի ըլլայ փոքր Մալաթիա մը : Վերը յիշուած պտուղներն իրեն բաւելէն դատ , շրջակայ դիւղերու եւս կը վաճառեն : Ունի լաւ այգիներ , այլ իր մեծատարած արտորայքը ջրարբի չեն . եթէ բաւական ծախք ըլլայ՝ եփրատ դեռն ու Կիւտէ վտակն կրնան ոռոգանել զանոնք : Բենկան ունի իբր 80 տուն բնակիչ եւ աւելի , այս դիւղէն ելած են ականաւոր եւ երեւելի անձինք : Եկեղեցիներն են՝ Հրեշտակապետ , Աստուածածին եւ Երեք Մանկունք . կողոս , Ս . Սաչ , Ս . Յակոբ եւ Խընակտար (Խնդրակտար) եկեղեցեաց աւերակներն , որով յայտնի կ'ըլլայ թէ յոռաջագոյն նշանաւոր Սենեքերիմ Թագաւորին իշխաններէն Բենիկ անունով մէկը նորոգելով այս դիւղն՝ անուաներ է Բենկան կամ Բենկայ . տեղն առաջ Ռատեղ կը կոչուի եղեր , ինչպէս մինչեւ հիմա մերձակայ տաճիկ դիւղը նոյն անունը կը կրէ , որ իբր առանձին թաղ բլրին ստորտն է :

Տիւրիկէն մէկ ժամ հեռու վանք անունով դիւղ մը կայ , այժմ բնակիչները Գրգըլպաչ են :

Իսկ չորս ժամ հեռու կը դանուի Արախայ դիւղն , որուն բնակիչքն հիմա տաճիկ են : Գիւղին մօտը Նարեկացւոյն անուամբ վանք մը կայ , եւ անոր մէջ՝ Սենեքերիմ Արծրունի Վասպուրականէն գաղթած ժամանակ , կրօնաւորք Նարեկացւոյն մարմինը բերած եւ ամփոփած էին երբեմն : Մատուռն եւ քանի մը սենեակներ դեռ ամբողջ կեցած են մինչեւ հիմա :

ԽՈՒՌՆԱՎՈՒԼՑՈՆՑ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

- 1.- Արգենի, 4 տուն: Մէ'կ աղջիկ մը ազատած:
- 2.- Գալլեոնի, 8 տուն:
- 3.- Զէմաննի, 4 տուն:
- 4.- Թաքրբենի, 5 տուն:
- 5.- Իսախենի, 4 տուն:
- 6.- Խամպարենի, 13 տուն: Նոյիրաունի Խամպարենցի էն:
- 7.- Խաչըլոնի, 4 տուն:
- 8.- Խնկենի, 5 տուն:
- 9.- Կէտըլոնի, 6 տուն:
- 10.- Կոշկըբենի, 4 տուն:
- 11.- Մամըլոնի, 5 տուն:
- 12.- Նագըլոնի, 7 տուն:
- 13.- Շըտոյենի, 4 տուն:
- 14.- Պալենի, 10 տուն:
- 15.- Պետենի, 4 տուն:
- 16.- Սրապենի, 22 տուն:
- 17.- Օվլոնի, 6 տուն:
- 18.- Տամարենի, 4 տուն:
- 19.- Քոչենի, 26 տուն:

Այս տուներէն շատերը կը կոչուէին նաեւ ա՛յլ անուններով, թէեւ պատկանէին յերի մականուններէն մէկուն: Ղափտանենք, Պէնպէտենք, Թուճճարենք, Քօթանենք, Նանուֆարենք, Ուտօյենք, Չարմանենք, Մըջոյենք, Ճըճըխենք, Պազամենք, Այլըզենք, Տնաւերենք, Փէփոյենք, Բարնակենք, Տուրիկենք, Կըլկըլենք, Կոճանենք, Քասոյենք, Հաճիկենք, Տօռուխենք, Ճերանենք, Քէյճենք, Մխտեթենք, Կալոյենք, Կօլիկենք, Քիպոյենք, Քէլէյենք, Կիրէյենք, Ճըլլօյենք, Մէնդէրենք, Ղապախճենք, Քօսապետօյենք, Գարօյենք, Ղապայենք, Մառտամենք, Օխմիլենք, Չաթալենք, Օպէյենք, Տօմօյենք, Եախանենք, Նոյճրատենք, Քաքնան Կարօյենք, եւ այլն:

Մեր գեղը, Պոլիս, Սվազ, Մարզուան, Պուլկարիա, Ամերիկա, Տիբրիկ դաղթած 15 ընտանիքներն ալ հաշուած, ունէր 148-150 տուն եւ 1200 երկսեռ բնակիչ, զո՛ւտ Հայ: Թուրք չկար մեր գեղը:

ՄԵՐ ԳԵՂԸ ԿՐՍԵԻՆ...

Կատու կիշէնող Օվկոնք
Փոկէ Ախլանք Մամըկոնք
Անծեղ կոծող Տուրիկենք
Հաւ կլլող Ձէմանենք
Սըլիկ-Մըլիկ Կօշկըրենք
Իշու գող Տամարենք
Շան փին կիշէնող Տնաւերենք
Շուն հեծնող Տնաւերենք
Դանակ սրող Սրապցիք
Շատ խերերարըն(?) Պալենք
Մաղէ փալաս, մաղէ չուան Պետենք
Անծոտ-Մանծոտ Պետենք
Մաղէ չուան Արզենք
Շատ ինաս ըն Բօթցիք
Պէտք է ուրիշ ալ ըլլայ, բայց չենք յիշեր:

Երբ նոր ձի կամ անասուն մը գնէին, ճակտին հաւկիթ
մը կը կտորէին: Բարտ կը բերէր:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Գեղացիին իր դաշտին ու արօտին ի՞նչ անուն կու տար —

Զարմանարտինձոր	Եգի
Վերիձոր	Մոյսան
Կաֆուրտանձոր	Զէնոն
Զընըսձոր	Ծովառ
Քաղքըձոր	Բոշինհողքը
Զխձոր	Կոսկանփոս
Ցամքըձոր	Առշուն Փոսը
Կարմըրձոր Խանակին ձորը	Տըբընկովիկ
Քարձոր	Սալըննախ
Սըգոտձոր	Պոռջուր, Բոբջուր (?)
Գոնով Ախպուր	Աղպեց Արտերը
Խոտակ Ախպուր	Բարնակեց Արտը
Մամուն Ախպուրը	Բարակ Արտը
Սըղիկ Ախպուր	Տանձուն Ծմակը
Ծակխար	Շարուկները
Բերդին Քարը	հարալլու
Ճննդխար	հուքլու
Դաշտ	Արեգի
Բռակ	Ծըմակ
Կըփուլ	Ախմինշատ
Գարուռ	Գոհանամ Լէռ
Քաշտակ	Տէլուտազ
Փստիկ	Ախդախ
Սակրփոս	Ճերմակ Տեղ
Հարեգսար	Ճերմկուկին Դարը
Դալնդուր	Շամպիֆ
Իշքքէնիֆ	Իրեֆախքրհակատ
Վերի Ուտ	Զաքայ Աղբուր
Ճէպանեփողար	Աղէկին
Կապուտչաք	Թէֆիք
Կոստիկկալ	Կարմիր Զոր
Վարի Ուտ	Խանակին Զորը
Աստուածամար	Խաչըկան Դարուերին

Կալուկը
Ըն Երեսը
Ընդի Կաշան
ԲՈՐԱՂԲՈՒՐ
Շապկան Չայ
ԿՕՊԷՔԼՈՒ
Հանոց Ծառ
Շըլօտին Քարը
Գողում Յիցը
Էշկէլ Աղբւ
Տեւոց Տակ
Բազէին Քարը
Ակօյին Մաղբրան
Գոչանը
Շառափները

Հաւուրին Ձորը
Քարէ Կարմունն
Ագուրտի՛քը
Քարշառ
Ջրիկ Ձոր
Հողար
Ուլուն Փուղարը
Մամուն Քարը
Ախդխու Ետի
Շօպկանու Տափա
Շօպկան Աղբուր
Շօպկան
Գառնլուայ
Լովարին Ետերը
Կանձորակ

ՄԱԼ ԹԷՓԷ, որուն անունով կը կոչուի դեղը հիմա :

Կարծեմ բոլոր կարեւորները, լաւ ծանօթները արձանագրեցի, մնացեալներուն պէտք չկայ: Ամէն իրիկուն կէս ժամ կ'աշխատիմ ամիսէն աւելի է, իմ ու ջու անո՛ւշ դեղին սիրուն: Երկու տարուան մէջ ես այսքան բան գրած չունէի, Աստուած ուժ տուաւ:

ՆԵՐՍԻԿ

Քանի մը տեղերու անուններն ալ թուրքերէն էին: Ես միշտ հակառակ եմ թուրքերէն ունէ բանի արձանագրութեան մեր Պատմագրքին մէջ: Թող բացառութիւն կազմեն քանի մը հատը՝ Տէլուտաղ, Կութլու, Խարալլու, Մալ Թէփէ...

Աղաղային թերեւս Խուսնալուլցիներու սերունդները պէտք ունենան այս անուններուն:

ՆԵՐՍԻԿ

ԵՐՈՒԱՆԴ ՔՈԶԵՆՑ

ԽՈՒՌՆԱՎԻԼԻ

ԳԱՒԱՌԱԿԱՆ

ԲԱՌԵՐԸ

(Հոս մոր բառեր աւելցած են)

Ա

- ԱԲԱԹ - Ափով, մէկ ձեռքին մատներով բռնուելու չափ բան, խոտ, ծաղիկ, եւայլն: Օր. աբաթ մի սոյս բերի:
- ԱԲԱՇԸ չփաշել - Չխնայելով ծեծել, անդադար ծեծել:
- ԱԳ - Ագապի. Ագ մի դնիմ, ճագ մի քոցնես: Քեզի կից մը տամ, որ ձաղ ծնիս:
- ԱԳ ՆԵՏՏԵԼ - Կենդանիին ետեւի սաքերով զարնելը:
- ԱԳԸՌՄԷՁ - Երկու սրունքներուն մէջտեղը:
- ԱԶՈՒԸՏԻՔ - Ածու, ածուք, ածուին յոյնակին: Իբրեւ եզակի կը դործածէինք՝ ածուք, փոխանակ ածուի: Թերեւս անոր համար որ ածուները բոլորը համախումբ քով-քովի էին, ուռ-դելու դիւրութեան համար:
- ԱԹԻԿ - Ճարպիկ, ճարտար, դիւրաշարժ:
- ԱԼԱԺԱՐ - Թանապուրին թանը, երբ քիչ ըլլայ, ալաժար:
- ԱԼԱՃ - Սեւ ճերմակ գոյնի գոյնով խառն:
- ԱԼԱՃՊՈՒՎԱՃ - Սեւ ու ճերմակ, կտաւ, անասուն:
- ԱԼԱՖ - Յարդ, խոտ միասին. անասունի կեր, սնունդ. Ալափնիս հաստ:
- ԱԼՈՃ - Խոշոր ծառի մը պտուղը: Ընտէնի ալոն, ընտանի ալոն: Ռջու ալոն, արջի ալոն, կարմիր ալոն: Ծառը՝ ալոնենի:
- ԱԽԼԱՆՔ - Դուռը գոցելու երկաթ գործիք, որ ուրիշ ծակ երկաթի մը վրայ կ'անցնի, ուրկէ կ'զգանքը կ'անցընեն:
- ԱԽԼԵԼ - Ախլանքը անցընել, ինչ որ կ'զգելը չէ: Դուռը ախլեցի՞ր:
- ԱԾ - Այծ:
- ԱԾԱՆ - Ածող հաւ: Ածան հաւը կագրեան կ'ըլլայ:
- ԱԿԻՇ - Քիթը կեռ, պոչը եռանկիւն, բաւական երկար երկաթ ձող, թոնիրին կողը քերելով անկէ հացը հանելու համար:
- ԱԿՆԱՂԲԵՐԱԿՈՒՆՔ - Աչքերուն եւ քթին միացած տեղը:
- ԱՂԲՏՈՅ - Աղբիւս, աղբանոց:
- ԱՂԻՆԱԿ ըլլալ - Շուարիւլ, լալկան դառնալ: Աղինակ էդեր է, այսինքն ընելիքը չի գիտեր:
- ԱՂԼԵՁ - Սալեր, որոնց վրայ աղ կը լեցնեն, որպէսզի հօտը լցէ:
- ԱՂՃԱԿՈՏՈՐ ընել - Սաստիկ ծեծել. Հի'մա քեզ աղնակոտոր կ'ընիմ. աղնակոտոր ըլլաս:
- ԱՂՈՒ - Թոյն:
- ԱՃԱՌԵԼ - Լաթը լուալու համար ճմռքել, օճառել: Փոխարեւաբար ծեծելու ալ կ'ըսէին. Հի'մա քեզ կ'աճառիմ:

ԱձՈՒԿ – Ոտքին եւ սրունքին իրար միացած տեղը: Անուկս կու ցա-
ւի: ՀԱՅԿԱԶԵԱՆ ԲԱՌԱՐԱՆԻՆ մէջ կայ այս բառը, բայց մեր
գեղը դործածական էր:

ԱՄՈՒԻ Երես – Չամչցող, անամօթ:

ԱՄՊԳՈՂ – Ամպոտ, հեղձուցիչ տաք օդ:

ԱՄՊ ԳՈՌԱՄ – Վայրի աղցան մը:

ԱՄՊՈՒՃԱՆ – Ապարանջան:

ԱՅԱՆ – Անլեխի, հին կաշիի կտոր, որ սոմուած տրեխին մէջ կը
դնեն, ծակերը դոցելու համար:

ԱՆԱՍԻԱԾ – Անկրօն:

ԱՆԲԱՐՏԻ – Ամբարտաւան:

ԱՆԴԱՆԱԿ ԵՄԵՂ – Անասունին սատկելը: Անդանակ ելած կենդանիին
միտը չեն ուտեր:

ԱՆԹԱՌԱՄ – Դեղին ծաղիկ մը՝ չթառամող ու անուշահոտ: Թէյը
քնարեր է:

ԱՆԺՈՒԻ – Առանց լուղի ապուր:

ԱՆԻԾ – Գլխու պզտիկ, նորածին ոջիւ. Գլօխդ անծուտեր է, Եկօ
քթուիմ:

ԱՆԼԵՆ – Տիկ անձենիի կեղեւով կարմիր ներկուած:

ԱՆԼԻ – Առանց աղի. ապուրը անլի է:

ԱՆԾԸ անցընել – Հազնիլ. Շապիֆդ անձդ անցուր:

ԱՆԾՂՁԱԳ – Անձեղի ձագ:

ԱՆԿ – Ամանի մը երկու կողմէն բռնուելու յատուկ ականջները:

ԱՆԿԵՂ – Ամանին անկ անցընել. Բզուկը անկեցի՞ր:

ԱՆԿԹՈՐԹ – Ականջին ետեւի կողմը, վարը, դանկին միացած նուրը
եւ զգայուն տեղը. Անկթորթիդ հա՛տ մի դնիմ:

ԱՆՃԱՐ – Շատ, առատ:

ԱՆՃՈՒՌ ԿԱՐԱՐ – Առանց եղի, միայն ջրով ու աղով եփած. Ապուրն
անհուտ է:

ԱՆՇԱՅՀ – 1. Որկրամուլ. Անշայի շուռ:

ԱՆՇԱՅՀ – 2. Շատտակեր, դէր, շատ գէր մարդ, ազահ:

ԱՆՎԱՐՏԻ – Առանց վարտիքի մարդ. անվարտի, սուերը բարտի:

ԱՆՕԹԻ ՇՈՒՆԸ ԶԻ ՀԱՋԵՐ

ԱՆՕԹԻ փորուց – Անօթի փորով առտուն, չնախաճաճած:

ԱՇԵՐՔԻՆ – Շատ, առատ: Աշխրֆին ցարէնը համեց առ տարի:

ԱՇՈՒԻՍ ձեռքս ինկան – Աչքերս տկարացան:

ԱՇՔԸ ԵՂԷ, ԱՆՈՒՆԸ ԶԵՂԷ:

ԱՉԻԿ – Աջ. աջիկ ձեռքդ տուր:

ԱՊԱ – Կարճ վերարկու:

ԱՊԸԼՈՒ – Այլակերպուած:

ԱՊՐՊԱՍ – Կալերուն վրայ, պատերուն ծայրը, վրայէ վրայ, ցած-
ցած շարուած միաձեւ թրիքի կոյտեր, որպէսզի չորնայէ ետք
վառելանիւթ դառնայ:

- ԱՊՐՏՈՒՔ - Մանուկներու խաղ, որոնք խոհանոց կը սարքեն եւ իրենք-իրենց իրրեւ թէ ապուր կ'եփեն քիչ մը ալիւրով, կրիճներու մէջ. Ապրտո՞ւք կու խաղաս, ի՞նչ է:
- ԱՊՐՅՈՒ - Պըղուր, կորկոս, սըմճոս, եւայլն, որոնցմով ապուր կ'եփեն:
- ԱՌԻՔ - Առատաղ:
- ԱՌՈՒ ՀԱՆՅԷԼ - Առու փորել:
- ԱՌՏՈՒՆ - Վաղը:
- ԱՌՔԵՆԻ - Մեծղի, քաջառողջ:
- ԱՐԵՒԷՂԿԻԿ - Արեւին շերմութենէն եղկցած, տաքցած ջուր. Զուրբ տաք չեմ ուզեր, արեւեղկիկ:
- ԱՐԵՒԷԿ ԿՈՐԾԵՑԱՐ - Արեւը մարը մտաւ:
- ԱՐԷՆԻ ԲՈՒՆ - Խոր քուն, վիրաւորուածի, սպաննուածի պէս քուն. Արէնի քուն ըմ էղեր. խոր, չարթննալու չափ քնացեր եմ:
- ԱՐԻԼ - Սթափիլ, կեանքի դալ:
- ԱՐԻԻՆՆՈՒՄ - Արիւն խմող, կատաղի:
- ԱՐՍՈՒ - Այսօրուան, արդի, ժամանակակից:
- ԱՐՏՈՐԱԼ - Աճապարեւ, շտապել. Արտորա քիչ մի:
- ԱՐՕՏԱ - Գիի ճիւղեր՝ շինութեան մէջ գործածական:
- ԱՐՕՐՁՈՂ ԿԱՄ ՀԱՐՈՐՁՈՂ - Արօրին ձողը, որ կ'երկարի ուստամէն մինչեւ բռնիչ:
- ԱՒԱՇԱՆ ԿԱՄ ԱՒԱՇԱՂ - Մաքիի հիւանդութիւն. կը հեւան, քիթերնին կը վազէ, փայծաղնին կ'ուռի, կը մեռնին տաքէն:
- ԻՂՈՒՔ - Ալրուած փոշի:
- ԻՇԱՐ - Շատակեր, աչքը ծակ:

Բ

- ԱՎԱՐ - Դրան վրայի մասը. Բալլին բալավարն է, միսն ալ օճախին վրայ է:
- ՕՃ - Միմիտի նման կլոր հաց:
- ԲԱՌԱԿ - Կատակախօս. Բամբառակ մարդ է:
- ՊՈՍ - Գարնան ծաղիկ մը, հիրիկ:
- ՂԱՅ - Բակլայ:
- ԱՊՕՃՈՒԿ - Վայրի աղցան մը:
- ՂԷԼ - Աշխատիլ. Էջս բանուկ է:
- ՍԱՐ - Ծակնդեղ:
- ԻԿ - Աշխատող, աշխատասէր:
- ՂՔԱՏ - Քիչ բառ դիտող, գործածող:
- ԿԱՆ - Ծիչդ բղկէ մածուն, մինակ աղած: Ապուրը՝ բասական ապուր, դաղձով եփուած:

ԲԱՐՅԻՆԵԼ – Թեթեւ քնանալ, երբ մէկը նստուկ կը ներհէ ու գլուխը
ասդին-անդին կը շարժէ, բարեւ տալու պէս. Կու բարեւէ, կը
նիրհէ :

ԲԱՐՅԻՈՒՔ – Մըսփ, քուն :

ԲԵՃ – Ուս : Տավրբառիսը բեմը, Զոքը ջաղացքը – վիճակի խաղ :

ԲԵՐՆԵԼ – Ծնիլ : Հարսը տղայ բերաւ : Ընտանի անասուններուն կ'ը-
սէին՝ ծնիլ. կովը ծներ է. վայրենիներուն՝ ցյնիլ. Շուկը ցյներ
է, ձառք բերեր է :

ԲԵՐՆՍՎԻՎԱՐ – Երեսի վրայ. Բերեսկիվար ինկաւ :

ԲԵՐՆՏԵ – Ճիւղէ ու մտրատէ շինուած կողովիկ, որ եզներուն բերա-
նը կ'անցընէին, որպէսզի կամ կամեկու ատեն մալամդան,
տրորուած հունձքը չուտեն :

ԲԻՐ – Գաւազան :

ԲՂԿԵ ՄԱԾՈՒՆ – Թանը կը լեցնեն բղուկը, որուն կողերէն ջուրը կը
սուզուի-կ'երթայ. Թանձր Թանը կը մնայ հոն. կը թթուի. Ե-
ղաւ բղկէ մածուն. Երկար կը դիմանայ :

ԲՂԿԵՍՈՒՆԿ – Բղուկի ձեւ, սպիտակ, մեր միակ սունկը, ծառի սուն-
կէն դաս : Մինակ դարունը կը բուսնի :

ԲՂՈՒԿ – Գուր : Կարաս :

ԲՈՒԹՄԱՏ – Բթամաս :

ԲՈՒՇՔԸ ԵՐՔԱԼ – Մանուկին չորս ոտքի վրայ քալելու սկսիլը :

ԲՈՒՌ – Ճերմակ, կաւիճի քար ու քարոտ տեղ : Հոն դեղին ծաղիկ
կը բուսնէր, անկէ ելած ջուրը լեղի էր :

ԲՈՒՍՆԻԼ – Յանկարծ երեւան դալ, մէջտեղ ելլել. Լուսուցկան լե-
ռանը վրայէն բուսաւ : Ո՞ւրկիէ քովս բուսար :

ԲՈՒՇԻԼ – Յարձակիլ. Վրաս բոզեցաւ :

ԲՈՒ ԾՆՃՈՒՂ – Բուռերուն մէջ բոյն շինող խատուտիկ ճնճողակ :

ԲՈՒԿ – Մպիտակ, շատ ճերմակ. Բոխի է, այսինքն կարմիր ու ճեր-
մակ երեսներով չէկ մարդ է :

ԲՈՒՆՁ – Ժայռերու մէջ բուսնող, տակուն փայտով ծառին պատուր,
մանր, բայց անուշահամ :

ԲՈՒՆՁԷՆԻ – Բոխիջի ծառ, որ հսկայ է :

ԲՈՒՍՏԵԼ – Բուռ-բուռ առնել :

ԲՏԵԼ – Կենդանին դիրցնել՝ մորթելու համար : Շո՞ւն պիտի բռնի,
կը նշանակէ այդ անպէտ մարդը ինչո՞ւ կերակրեմ :

ԲՐԴԱՆ – Մէջը հաց փշրուած կաթ, մանուկի կերակուր :

ԲՐԴԵԼ – Փշրել : Հացը ապուրիմ մէջ քրդել :

ԲՐԴԱՆ – Մաղոտ, բրդոտ, առատ մազ ունեցող :

ԲՐԴԱՄԻԿ – Բուրդ մանելու պարզ դործիք :

ԲՐՏԻ – Բիրտ :

- ԳԱՌ - Ընդհանի տերեւները :
- ԳԱՌԱՆՔ - Դուռ հորիզոնական, բացուող առաստաղին մէջէն, սանդուխի վրայ, որ երբ դոցես, առաստաղ կը դառնայ : Հին Հոռմի մէջ ալ կայ եղեր, Փերմի մը համեմատ :
- ԳԱԳԱՅՏԵԼ - Մէկուն դիտուն զարնել անընդհատ, վրան շատ խօսիլ : Ի՞նչ գլխու կու գազայես :
- ԳԱԹԱ - Կորեկէ շինուած կլոր հացիկ :
- ԳԱԼՆԹԻՍ - Գայլի թիւ : Զուածեւ սունկ :
- ԳԱՂՏՈՒԿ - Գաղտնի, թաքուն :
- ԳՐՌՅԸՆԵԼ - Գրբբո-գրբբո եփ հանել. Ապուրը կու գրառայ :
- ԳԵՂԱԻԵԼ - Անունին ճիշդ հակառակը : Փշոտ, բաւական բարձրացող խոտ, որուն թարմը աղցան կ'ըլլայ :
- ԳԵՐԱՄ - Կերան :
- ԳԵՐՐ - Մաքիի բրգով մորթի կտոր, ալիւրի աւել :
- ԳԵՐԳՍԱԼ - Զգայուել :
- ԳԶԻՐ - Գեղին մունետիկը :
- ԳԸԼԽԸՅԱԻ - Գլուխի ցաւ :
- ԳԻՇԵՐ ԳԻՇԵՐԱԿՈՒՆՔ - Խոր դիշերին, զիշերը խոր :
- ԳԻՏՆԱԼ - Կարծել : Ես գիտցայ էի. կարծեցի թէ...
- ԳԼԼԻԼ - Գլորիլ : Փոխաբերաբար մեռնիլ, այլադիներու համար զործածելի. Հասանք գլխի է :
- ԳԼԽԸՎԱՐ - Գլուխը վար ծած, ծռելով. Գլխըվար գրծկընալ :
- ԳԼՄԼՏԿԻԼ - Գլորիլ քալած տտեն. Գիճով է, կու գլմտկի :
- ԳԼՆԴՈՐ - Նոր քալել, զլորիլ սկսող երեխայ :
- ԳԼՕԽՑԱՒՈՒԹԻՒՆ - Անհանդատացնել :
- ԳՆՏԵԼ - Գնդել, գունդ շինել, խմոր դնդել : Նազըկոնցը հաց գնտելու կ'երթամ : Խմորը լաւաչ հացի բաւելու չափ գունդերու վերածելով կը շարեն քովէ քով, կարպեաներու վրայ, եւ կը ծածկեն : Յետոյ մէկը գունդերը օխլաւուկով տախտակի մը վրայ կը բանայ, հաց բանալ. ուրիշ մը դանոնք բաւաւտի վրայ թոնիքը կը կողէ, թոնիքին տաք կողը կը վակցնէ. երբ ան եփի, կողով տանտիկինը ախիշով կը հանէ ու քովը կը շարէ : Լաւաչը եփած է : Ճմուռ ընիճէ :
- ԳՇԿՈՒՐ - Պնակածեւ կլոր թրիք, զոր կալերուն վրայ կը շարեն քովէ-քով որպէսզի չորնայ ու վառեն. Կէս մէջքէն վերի մասը ծռել դէպի վար :
- ԳՈՐ - Գխոտ՞ր : Կաղնիի տերեւներուն վրայ կը դոյանայ : Գորը խաղալ :
- ԳՈՐԲԱՆ ԱԶՈՒԻ - Խոշոր, դրբի պէս աչքերով մարդ. սուած, դուրս ցցուած աչքերով մարդ :
- ԳՈՋ - Կայուն շուրերու վրայ դոյացող կանանչ, որ խոտ չէ :

- ԳՈԹՏԱԼ – Կոտտալ :
- ԳՈԼԳԼԱԼ – Քթին տակէն խնդալ :
- ԳՈՐՏԱՆՁՈՒԹ – Գորտնձիւթ, ձթնուկ բոյսէն կը հանէին :
- ԳՈՐՏՆԵՐՈՒՐԳ – Վրան քիչ մը բամպակ փակածի տէս տանձաձեւ տե-
րեւներով բոյս, որ ջուրի ակերուն կը բուսնի :
- ԳՈՒՐՈՒՐՏԱԼ – Անդադար շարժիլ, մէկուն վրայ դուրդուրա՞լ :
- ԳՈՒԲԱՆԱԼ – 1. Գոռոզնալ, հպարտանալ. 2. Հնդկահաւին, թուխին
ուռենալը. 3. Կերակուրին եփ ելլելով թափիլը : Ա՛ղջի, ապու-
րը գոբացալ :
- ԳՈՋԱ – Գաճաճ կաղնի, դիւրաբեկ ու դիւրաձառ. Գոգա փառ :
- ԳՈԺՊՏՈՒՆ – Թանձր խիճ, եփ ելլելէ յետոյ :
- ԳՈՏՈՒՔ – Գոյք, մանր-մունր բաներ :
- ԳՏՄՁԵԼՈՒԿԱՆ – Գանողչէք : Գումչելուկանս ի՞նչ է :
- ԳՕՏԵԼՏԵՂ – Մէջք :

Դ

- ԴԱԼ – Երկրորդ բերան կթուած կաթը եփես, կ'ըլլայ դալ. անասու-
նին ծնելէն անմիջապէս ետք երկրորդ անգամ կթուած :
- ԴԱԼԱՄԱ – Նոր շինուած պանիր, իր ջրով միասին :
- ԴԱՂՁ – Դաղձ, դաղ. մանթ, ուրկէ թէյ կը շինեն :
- ԴԱՃ – Շայհնային կնիքը, խոշոր փայտէ :
- ԴԱՃԵԼ – Կնքել. Տոբեմի շեղջը դառնել :
- ԴԱՅՀ – Ծեր, տարիքոտ անասուն. Դայի եզ, դայի կով :
- ԴԱՅՀԻԼ – Կենալ. Տեղ մի չես դայիիր :
- ԴԱՌՁԵԿ – Շինութեան փոքր գերաններ, որոնք հեծանէ հեծան կ'եր-
կարին :
- ԴԱՐԱՏԱԿ – Մինչեւ տակը, թափ տակը. Մինչեւ դարաւակը :
- ԴԱՐՎԱՐԻ – Ջառիփար :
- ԴԱՐՏԱԿ – Պարապ. Գլխը դարաւակ է :
- ԴԳԱԼՆՈՅ – Պատէն կախուած փայտէ աման, ուր դգալները կը
դրուէին : Մեր դեղին ամենէն դործածական բաւերէն մին :
Մի՛այն դգալով կ'ուտէինք :
- ԴԳԱԼԵԼ – Դգալով բան մը ուտել :
- ԴԵԻԴԵՒԱՐ ԸԼԼԱ – Խիստ վախնալ. Դեպքեւար էգայ, այսինքն դեւ-
դիւահար եգայ :
- ԴԵՔ – Կենդանիին ծնելէն ետք արգանդէն կախուած մաշկը : Կ'ըսէին
բաբ դեբ, բաբէն դեբէն, ոչինչի իմաստով :
- ԴԵՌՕԿ – Դեռօք, քիչ սառջ. Դեռօկ Մամուկը հոս էր :
- ԴՂԱՍԿԱՆ – Տղաձդան, ծննդաբեր կին, որ նոր դաւակ ծնած է ու
դեռ կը պառկի ծննդաբերութենէն ետք. Դղաւկան է :

ԴՆՆԵԼ – Ծեծել, զարնել մէկուն. Մա՛նչ, դի՛ր, դի՛ր, զա՛րկ, զա՛րկ :
 ԴՈՋԱԼ – Ետեւը գրկելով ք. նեւու պէս ընել. Շու՛նք կու դոգայ :
 ԴՈՓԿՆԵԼ – Եփեւուն չափը անցընել. չափազանց շատ եփել. Ապուրք
 դոժկեր է :
 ԴՈՒՄ – Թոնիրին փայտէ կափարիչը :
 ԴՈՒՐՈՒԿ – Տափարակ, հարթ. Ըս արար դուրուկ է :
 ԴՐԴՐԱԼ – Բարկանալ, սաստել. Վրաս կու դրդրայ : Ի՞նչ կու դրդրաս :

Ե

ԵԳՏՈՒ – Մուրիկ :
 ԵՂԵՐ, ԷՂԵՐ – Մափքա էգեր է այս, շատ դքամ ունի :
 ԵՏԻՌՈՒՅՑ – Կանակի վրայ, Խաիրուց ինկայ :
 ԵՏՆՈՒԿ – Յորեններուն մանր, ցած մնացած մասերը :
 ԵՏՆՏՈՒՔ – Քաղուելու համար ետքը թողուած մանր արտեր :
 ԵՐԴ – Յարդ :
 ԵՐԴԻՔ – 1. Կալ, տանիք :
 ԵՐԴԻՔ – 2. Տանիքին մէջտեղը բացուած ծակ, լոյսի համար :
 ԵՐԵՍԿՈՒԿ – Մանձաղ, ոչ խորկեղեւի մը հաստութեամբ :
 ԵՐԵՍԵՍ – Երես տեսնել, մէկը առաջին անգամ տեսնել, աղջիկտե-
 սի երթալ. Երեստես ի՞նչ կու տաս :
 ԵՐԷԹԻ – Թոյլ, լաւ չչինուած. Ըս տունը երէքի է :
 ԵՐԿԱՆԹԱԹԻԿ – Առանց հրամանի ամէն բան առնող :
 ԵՐԿԱՆԹԱԹԻԿՈՒԹՈՒՆ – Գողութիւն :
 ԵՐԿԻՐ – Օտար. երկիրի տղայ է, ի՞նչ պիտի բլլայ : Երկիրի ինչո՞ւն
 պէտք է այս. օտարին հո՞գն է :
 ԵՐԿԻՐԻ աղջիկ – Օտարի աղջիկ, հարս :
 ԵՐԿՈՒՄԱՏԷՆ – Երկու մատով, երկար կոթով, մալամզան խառնե-
 լով դարձնելու գործիք փայտէ :
 ԵՐՆԵԼ – Կալը, խուրձերը քակելով համաչափ տարողնել՝ կամնելու
 համար : Երթանք երնեմք : Կալը երնեցի՞ր :
 ԵՐՈՒԻՇՏԱ – Տունը շինուած մաքսոսնիի նման խմորեղէն, դղման :
 ԵՐՏ – Վառած փայտի կտոր, սրուն մէկ ծայրը կը վառի, միւսը՝
 ոչ : Գնա՛ դրասնէն Ե՛րտ մի բեր, կրակը վառիմք :
 ԵՔՏՈՒ – Մակաչք, սլքտալով ուրիշին ունեցածին աչք անկող մու-
 րացկան : Եփաու է, ի՞նչ պիտի բլլայ :

Ձ

- ՁԱՂԸԼ - Անիրաւ, անառակ :
- ՁԱՄԽ - Ծառի, գաղի խէժ :
- ՁԱՊՈՒՆ - Նիհար, անասունի յատուկ : Եզբ գապուն է :
- ՁԱՏԻԿ - Թիթեռնիկ :
- ՁԱՏՈՒԻԼ - Եզրայրներուն իրարմէ զատուելով առանձին տուն կազմելը : Խնկեմք գատուեր ըն :
- ՁԷՆԵԼ - Մատաղ ընել :
- ՁԸՊԸՌՏՈՒՔ - Մանր կարկուտ :
- ՁԻՏԱՌ - Չարածճի, անառակ :
- ՁԻՏԱՌՈՒԹԻՒՆ - Անառակութիւն :
- ՁՆԿՈՏԱԼ, ՁԸՆԿԸՌՏԱԼ - Յուրան սաստիկ դողալ : Կու գնկառայ :
- ՁՈՒՅԸ - Չուտ, մաքուր : Ձուլը ցորմէ հաց է :
- ՁՊԱՆՏՈՒՏ, ԸԶՊՆՏՈՒՏ - Չափէն աւելի խոշորակազմ, կռտ մարդ : Ըգպանտուտ է :
- ՁՌՄՏԱՆԾ - Թարչամած, թոռած : Ձումեր է, ծերացիր է :
- ՁՕՁՕ - Բարձրահասակ, երկար մարդ : Ձօգօ է :
- ՁՕԼԼՕ - Երկար, չափէն աւելի երկար :

Է

- ԷԿԻՐՄԱՄ - Մեղրամոմ :
- ԷՂՈՒՇ - Կարծր կեղեւ կապած ձիւն, որուն վրայ կը քալուի, առանց խրելու : Ձումը էղուշ է :
- ԷՆԵԿ - Խաղալու վէպին մեծը եւ զլխաւորը : Էնէկս քուլա մի :
- ԷՐԻՆՃ - Էպ մողին յաջորդ տարին էրիմզ կ'ըլլայ եւ միւս տարին ալ կընայ ծնիլ :

Ը

- ԸԽՇԻՆ - Խաւարծիլ. դարին մէջէն կ'ելլէ :
- ԸՂԻՆ - Ձիբիչի պէս բոյս մը, որ բարձր սարերուն վրայ կը բուսնի ձիւնհալքէն անմիջապէս ետք եւ ամենէն համով աղցանն է :
- ԸՆՏԵՂ - Այնտեղ : Խուփը ընտեղ է :
- ԸՌԱՏ - Առատ :

- ԸՌԱՓԱՏ - Հաց եփելու գործիք, մէկ զին լաթ, ետեւը ուռիի ճիւղերով հիւսուած. անով կը կողէին հացը:
- ԸՌՁԱԿ - Եղջերաւոր խոշոր կենդանիները, — եղ, կով:
- ԸՌԸՏՆԱԼ - Ապաքինիլ. Մարդը բարացա՞ւ. մատդ բարացա՞ւ:
- ԸՌԸՓԼԱՎՈՒ - Դոյլի նման ցորենի փայտէ չափ. մէկ ըռփլաւուն սասնեղկու օխա կը կշռէր:
- ԸՌԻՆՏ - Աղէկ: Ըռինտ բրիր: Քրտերէն եւս Ռքնա կը նշանակէ թէ՛ լաւ, թէ՛ գեղուհի:
- ԸՌՈՎԻԼ - Պարփակել, բանի մը մէջ տեղ գտնել: Պուտուկը գուրիմ մէջ կ'ըռովի՞, այսինքն մէջը կը մտնէ՞:
- ԸՌՈՒՆՔ - Ուռիք, ջիւ:
- ԸՍՏԵՂ - Այստեղ:
- ԸՎԵԿ - Շատ մաշած: Շապիկը ըվեկ-ըվեկ էղեր է: Ըվեկ կը գործածուի ուրիշ իմաստով մըն ալ. ըվեկ-ըվեկ բրի չգտայ:

Թ

- ԹԱԼԱԹՈՇԵԼ - Գործը դէշ ընել: Կար չէ, քալաքոշել քուլ տուեր ըս:
- ԹԱՂՆԱ - Արախչի, մի'այն բաց դայն:
- ԹԱՆԻՐ - Թոնիր:
- ԹԱՆՏՐՉՈՐ - Հաց եփելէ վերջ սաք թոնիրը ղիզուած փայտ, որ-պէսզի չորնայ:
- ԹԱՌԵԱՆԱՅ - Թթու թանով եփած թանձր ապուր, լափայի պէս:
- ԹԱՐՃԱ - Պատի մէջ չինուած տեղ, պատուհանի չափ, առանց փողոցի վրայ բացուելու, ուր գոյքեր կը դնէին:
- ԹԱՓ - Ոյժ: Թեխա քափը կըյեցաւ:
- ԹԱՓՑԻ - Պնակ:
- ԹԷՆ - Շունի պուց:
- ԹԹՈՒ - Թթուած բանջարեղէն՝ կաղամբէ, բանջարի բաղուկէ, տակէ:
- ԹԹՈՒԸՇԱՂ - Թթուահամ:
- ԹԹՈՒԿԻՉ - Ծանօթ թթու բոյսը:
- ԹԻԹԵՌՔ - Թթուներու եւ բղէ մածուների երեսը կապած ճերմակ փրփուր՝ նետուելիք:
- ԹՆԿԱԼ - Կաղալ, չկրնալ քալիլ. Քալէ՛, ի՞նչ կու քնկաս:
- ԹՈՒԼԻ - Գարնան դառը աշունը կը կոչուի թոլիլ. յաջորդ տարին չուշակ:
- ԹՈՂՈՒԻԼ - Ամուսնալուծուիլ. Թողուեր է, կինը ձգեր է:
- ԹՈՐԹ - Վայրի աղցան մը:
- ԹՈՐԹՈՐԱԼ - Դանդաղօրէն իջնել. Չուք կու քորքորայ, հանդարտօրէն կը ձիւնէ:

ԹՈՒԼԱ – Վէպ խաղալու ատեն գլխաւոր խոչոր վէպը, որուն անունը
էնէկ է. եթէ ցից կողմը վրան դայ, էնէկը թուլա է, շահե-
ցաւ: Եթէ դող կողմը վրան դայ, կը կորսնցնէ: Վէպը նետելէ
առաջ կ'ըսէինք, Էնէկս թուլա՞ մի, յետոյ կը նետէինք: Թու-
լա՛ է, թուլա՛ է կ'ըսէին, եթէ փոս կողմին վրայ պառկէր:

ԹՐՔԱԼ – Փայտէ փոքր դործիք, զոր եզան ոտին տակը կը բռնեն,
երբ ան կամ կամհելու ատեն թրքէ, որպէսզի թրիքը չխառ-
նուի մարմնային. քրիֆկալ ըլլալու է:

ԹՐՔԵԼ – Եզի, կովի թրիք արտադրելը: Ուրիշ անասունի համար
տարբեր բառեր կը գործածէինք:

ԹՐՔԸՆՈՅ – Որոշ փոս տեղ՝ թրիք հաւաքելու, արտերը աղբելէ ա-
ռաջ: Թրիքով կը շինէին նաեւ գշկուր եւ ապրպաս՝ փայտի
տեղ վառելու համար:

ԹՕԹՈՒԸՎԻԼ – Նիհարնալ. Թօթուրվեր ըս, նիհարցեր ես:

ԹՕԼՕՇ – Պլորուած լաւաջ հաց, մէջը եղ, պանիր, չորթան, զավուր-
մա:

Ժ

ԺԱԺԷ – Շարժէ:

ԺՄՆԵԼ – Հասնիլ, մեծնալ: Զի ժմնես, չի մեզմաս:

ԺՄՆՅՆԵԼ – Երեխան սըլլմէլ, մեծցնէլ: Զի ժմնես, աղնակոտար ել-
լես:

ԺՈՂՎՈՂՔ – Մուրացկան: Ժողվոգֆ եկեր է կիմէ:

ԺՈՒՄ – 1. Ատեն, ժամանակ. Մեր ժումը, մեր ատեն, մեր ժամա-
նակ:

ԺՈՒՄ – 2. Կերակուր ուտելու ատենները. Օրը քանի՞ ժում կ'ուտես,
քանի՞ անգամ կ'ուտես օրը:

Ի

ԻՄՈՒՔՈՒԿ – Կողմնակից:

ԻՄՈՒՔՈՒԿՈՒԹՈՒՆ ընող – Կողմնակցութիւն ընող:

ԻՆԸ ըլլալ – Ի գորու ըլլալ. Ինն է, Ինը չէ, Ի գորու է, Ի գորու չէ:

ԻՆԿՁՄԷՁ – Ընկոյզի միջուկ:

ԻՆՃՈՒՂ – Որձ մողին յաջորդ տարին կ'ըլլայ ինճուղ:

ԻՆՁԱՆ – Այն ատեն. Ինչախ որ եկի:

ԻՆՁԵՆ – Այնպէս, անանկ. Ինչիխ զարկի որ...:

ԻՆՏՈՐ – Ինչպէս:

- ԻՍՏԸԿԵԼ – Ձատել քարը ցորենին մէջէն :
 ԻՍՏԸԿԻԼ – Պղտոր ջուրին յատկանալը :
 ԻՅՑՈՒՆ ԷՌՍՈՒՆ – Ութսուն : Մամս այսքան դիտէր համրել ու այս
 բառով (50 + 30 = 80) :
 ԻԲԻՍԿԻՆ – Քահանայի կին :

Լ

- ԼԱԿ – Շան կերակուր՝ թեփով ու թանով եփուած :
 ԼԱԿԸՄԱՆ – Շան լակի ամանը : Փոխարեքարար՝ բերան . Լակըմանը
 քաղցիմ , այսինքն բերանդ . . . :
 ԼԱՓՍՏՐԱԿ – Նապաստակ : Ակուել Բակունց դործածած է զայն :
 ԼԲՌՑԵՆԵԼ – Աղմուկով ուտել . Ի՞նչ կու լրացնես :
 ԼԵՍԵՓ – Կտոր , շերտ . Լեւեփ-լեւեփ պանիր :
 ԼԷՂԱՊԱՏԱՌ ԸԼԼԱԼ – Սաստիկ վախճալ . Լէպպատաւ եղայ :
 ԼԷՂԻՆ պառռիլ – Շատ վախճալ . Ը՛նչափ վախցայ օր լէղիս պառռե-
 ցաւ :
 ԼԷՌԱՆ – Լեւնային վայրի պտուղ :
 ԼԷՌՃԵԼ – Մորթը հազիւ սկրթելու չափ վերաւորել :
 ԼԷՌՃԻԼ – Մորթին քիչ մը սկրթելը՝ տանց արիւնի :
 ԼԷՌՆԹՈՒԹ – Ցած , վայրի բոյս , որ թուփի նման պտուղ կու տայ :
 ԼԷՓՈՒԿ – Հարթ , սափարակ : Մէկը կար , որուն Լէփուկ աղբար կ'ը-
 սէին :
 ԼԸՂ – Խիստ ջրոտ ցեխ :
 ԼԻՐԿԱՄ – Երեկամունք :
 ԼՂՊՈՐ ԲՆՆՈՒՄ – Հաւկիթէն նոր ելած ձառ :
 ԼՃԵԼ կալը – Կամ կամներու համար կալը կը լեցնեն բարակ հող ու
 ջուր , եւ զայն կ'ողորկեն կամ կամներու համար : Կալը լեցնի՞ր :
 ԼՄԱՆ – Լեցուն , ամբողջ . Լման խօսքը իշում կ'ըսին . . . :
 ԼՈՂ – Կալ լողելու կլոր քար : Ռուբէն Չարգարեան դործածած է :
 ԼՈՂԵԼ – Կալին հողը լողով պնդացնել՝ երբ անձրեւէ :
 ԼՈՂԼԻԿ – Բալոճ :
 ԼՈՂԿՏԱԼ – Լողալ , ցելի , լըլի մէջ մխրճուած քալել :
 ԼՈՂՃՈՐԳ – «Ճ» դրի ձեւով փայտ , զոր լողին երկու կողմի փոսերէն
 կ'անցընեն՝ զայն քաշելով լողելու համար :
 ԼՈՌ – Եփած կաթը որ կտրի , անոր պանիրը լոս է :
 ԼՈՎԼԱՍ – Չոր լուբիա :
 ԼՈՎԼԸՍԵՆՑ – Լուբիա ցանուած արտ . Լովըմնոցը ջրէ՛ :
 ԼՈՒԱՅՈՒԲ – Աման լուալէն մնացած աղտոտ ջուրը :
 ԼՈՒԻՃ – Խիստ ծանօթ ու օշտակար վայրի աղցան՝ արջին սիրածը :
 ԼՈՒԾԲ – 1 . Արտ վարել , հերկել :

- ԼՈՒԾՔ – 2. Իրարու լծուած գոյգ մը եղ :
 ԼՈՒԾՔ մի – Մէկ վար . արտին մէկ օրուան մէջ վարեւու չափ տեղը . Բանի՞ լուծք վարեցիր :
 ԼՈՒՍՆՏԵՐ ԵՒ ԵՆԻ – Լուսնածեւ տերեւներով վայրի ծառ : Փրնս . Սօր-պիէին մէկ տեսակը . պտուղը՝ լուսնտերեւ :
 ԼՈՒՍՆԵԼ – Պայտել , նալել :
 ԼՍԱՆ – Լաւ լսող , սուր ահանջ ունեցող :
 ԼՕԹ – Տաք : Հալիւն շատ լօթ է :
 ԼՕՊԱԶ , ԼՕՊԼԷ – Անդէտ , անմիտ :
 ԼՕՌ – Կարած կաթ :
 ԼՕՏԱ – 1. Կորքում , տեսք , կերպարանք ? :
 ԼՈՏԱ – 2. Գաղիչ , խոտի դէղ , օրայ , փայտի դէղ :
 ԼՕՏԱՅ – Խոտի դէղ ? :

Խ

- ԽԱԲԼՕԶ – Ջուրերուն ափը բուսնող խոտ՝ կողովագործի յարմար :
 ԽԱԶՆԱԿԻԶ – Վարդցին , մասսային ծալքը անցուած աղիչ՝ մաճը հողերէն մաքրելու յատուկ :
 ԽԱԹԱՐԵԼ – Իրար կապել անասունները , մէկը միւսին ետեւէն ու զէկ զանոնք կարաւանի պէս . Խաթար ջորի :
 ԽԱԹԵՆ – Հացին հետ ուտուելիք բան՝ եղ , վարունդ , չօղալիկ , եւայլն :
 ԽԱԹԽԱՆ ապար – Քանապուր . Ապարը խաթիտ :
 ԽԱԼԸՍԻԼ – Լրանալ , աւարտիլ գործը . Արտը քաղեցանք , խալքեցանք :
 ԽԱԼԹ – Սխալ . Խալք բրի : Խալք մըն էր բրի , յանցանք գործեցի :
 ԽԱԼԾ – 1. Բուրդէն քաշուած թել , մանած :
 ԽԱԼԾ – 2. Մազէ մանած :
 ԽԱԼԿԻՆ – Կաթսայ :
 ԽԱԾՈՒԽՈՒՄ – Ուտել պատառ մը հաց , վրան իմել ումպ մը թանկամ կաթ , կ'ըլլայ խածուխում : Կովերնիս ծնալ , քիչ մի խածուխում ունեցանք :
 ԽԱՂԿՆԾՈՒԿ – Կերակուր մը . ալիւրը տապկէ եղով , խիւս մը կը գոյանայ , եղաւ խաղկնծուկ :
 ԽԱՂԿՆԾՈՒՔ – Տես՝ ԱՊՐՏԱՆՔ :
 ԽԱՅՀԱՆ – Սրթիին , ալիւրն զի փայտը եփելով ստացուած մածուցիկ , սեւ , ռեանային հիւթը : Ջայն այծերուն կը խմցնէին , երբ անոնք բորոտէին : Ու երբ որդնոտէին անոնց վէրքերը , որդերը մաքրելէ յետոյ , տեղը խոյհան կը լեցնէին ու կը բուժուէր : Ամառը , օպաներու դեղն ու հականեխականն էր խոյհանը : Հովիւները անանաբոյժ . . .

- ԽԱՆԾԵԼ – Մաղ կամ բուրդ վառել :
 ԽԱՆԾՐՀՈՏ – Վառած մաղի կամ բուրդի հոտ :
 ԽԱՆԿԱՌ – Թերի կոտուած ընճուղ, որ կը մնայ ցուլ : Եզը խանկառ :
 Է :
 ԽԱՆԿՈՒԻԼ – Ծուլանալ, չաչխատիլ :
 ԽԱՆՃԱՆ – Շալվարի, վարտիքի կապ մէջքէն :
 ԽԱՇԱ – Թամբին վրայ ձուած մաղէ ծածկոց՝ թամբը չմաշեցնելու համար :
 ԽԱՇԿՈՒԿԷՄ – Հին մաշած, ա՛լ չհաղնուելիք տրեխ, ուրկէ կը քաշեն սլոխիմ :
 ԽԱԶՈՐ – Երգում՝ թէ խօսածը ճիշդ է : Խաչոք Արամը տեսայ : Խաչոր իբաւ բւմ :
 ԽԱՊ – Քանի մը :
 ԽԱՊՈՒԽԱԶ – Երբ կաթը խապ տան իրարու, փայտէ ձողով կը չափեն ամանին խորութիւնը ու փայտէ ձողիկի մը վրայ նշան մը կը տաշեն, թէ ո՞րքան կաթ տրուած է, ետքը նոյնքան կաթ ետ առնելուն համար, որ կ'ըլլայ խապ ու խաղ :
 ԽԱՌԸՔՏՈՒԻԼ – Իրար անցնիլ, իրար խառնուիլը խալճերուն : Ստամոքսին աւրուիլը : Միտէս կու խառնքառի : Ստան երազներ տեսնել : Երաժս խառնքառուեցայ :
 ԽԱՌԽԸԶԻՆ – Վառելով հաշեցուած դմակին ու մօի եղին տակը մնացած մասերը :
 ԽԱՌՏԱԼ – Մանանեխ : Զայն ծեծելով խիտի կը վերածեն ու կը ծեփեն գլուխը, ցաւը անցընել տալու համար : Հինային ալ կը խառնէին :
 ԽԱՌՏԱԼԱՇ – Կռուարան, անկիրթ, անառակ :
 ԽԱՄՆԱԽ – Փայտէ շրջանակ, զոր կովին վիզը կ'անցընեն, որպէսզի ինքզինք բծծէ(?) :
 ԽԱՏԱՄ – Բուրդէ հիւտուած օղակ, զոր հորթին ու կովին վիզը կ'անցընեն, անկէ բռնելով քաշելու համար կենդանին :
 ԽԱՐԱԿՈՒԿԻԼ – Բոյսի կլոր արմատ, կոխակոյէն պզտիկ, վրան թուխ, միջուկը ճերմակ :
 ԽԱՐԱՊԱԹԻ – Շառլ :
 ԽԱՐԱՐ – Մաղէ հիւտուած հսկայ պարկ՝ յարկ փոխադրելու յատուկ :
 ԽԷՂԵԲ – Երես առած, շփացած : Տղաք խէզեր է :
 ԽԷՂԵԲՆԱԼ – Երես առնել : Ի՞նչ կու խէզերմաս :
 ԽԷՃՃԷՃՈՒՃԱՄ – Համով աղցան մը. կը տարածէր սղոցի բերնի պէս տերեւները դեանի վրայ : Գերմ. լէովընցանի պէս, բայց անկէ պզտիկ :
 ԽԸԼԷՊԸԼԷ – Ծրծաղելի, տղայական. Ի՞նչ խըլէպըլէ բամ է ատ :
 ԽԸԽԻԼ – Փուշին տեղ մը խրելը. Ռոխս փուշ մի խըխեր է :
 ԽԸԽՄԻԼ – Զափաղանց թրջուիլ. Օգրեւէն խըխմեր է : Լուացքի լաթը չուրիմ մէջ խըխմած է :

ԽԸՃԵԼ – Քերելով հանել, ամանին տակը փակած ուտելիքը տակէն
խըճել հանել:

ԽԸՃԵՊԱՆԻՐ – Երբ խիճը եփ հանես, կ'ըլլայ խըճէպանիր:

ԽԸՆՃԻԿ – Լեռնային այծի գոմերու մէջ հովիւին բնակած առանձին
սենեակը:

ԽԸՆՏԱՊԱՏԱՌ ԸԼԿԱ – Պայթելու, պատռելու աստիճան խնդալ չա-
փաղանց:

ԽԸՇՏ – Մասայի ծայրի սուր երկաթ՝ եզները մշտելու համար:

ԽԸՊԸԼԻԿ – Ծիծաղելի, սպորմելի ոչինչ:

ԽԸՌԱՆՔԵՇԱՆ – Գէշ-աղէկ. Ընի՞նտ բա. խրոսմեշան կ'երթանք:

ԽԸՌՏՈՒԿ – Կոկորդ. Խոսուկդ ք...նիմ:

ԽԻՃ – Նորածին, այսինքն նոր հորթ ծնած կովին ու ոչխարին տուած
առաջին կաթը, սրմէ դալ կը չինեն:

ԽՈԶԻԹ – Արտերը բուսնող փշոտ խոտ մը, հունձքին ու բուսիկ սո-
քերուն սարսափը, սրոնց մէջ կը խրի:

ԽՈԼՈՐՁԻՈՏ – Արտերուն մէջ բուսնող ընտիր բանջարեղէն:

ԽՈԶԵԼ – Եղջերաւորին կոտոշերով դարնելը. եզը իս խոչեց:

ԽՈԶՈՒԸՏԻԼ – Եղջերաւորներուն կոտոշերով կուռլը:

ԽՈՌ – 1. Ծայրը բթացած, չկտրող սուր, գմելի, եւայլն:

ԽՈՌ – 2. Մաքիներուն վիզէն կախուած բուրձ ձայնով գանգակ:

Ծանօթ. — Արեւմտահայերը չեն կրնար այժ եւ ոչխար բառերը
գամագանել: Ոչխար կ'ըսենք այժերուն ու այժ ու մաքի խառն
հօտիմ: Բարդ սուռղը ո՛չ ոչխար է, ո՛չ այժ, մաքի է: Մշե-
ցիմ գիտէ:

ԽՈՌԽԸՇՏԱԼ – Ծան սպանական ձայներով ցածէն հաշելը, յարձա-
կելէ առաջ սպանակիքը. Ի՞նչ շան պէս կու խոռխոշաս:

ԽՈՍՏՈՒԿ – 1. Խոր ցաւ, կոտտացող ցաւ. Մասս կու խոստէ: Փոքս
խոստուկ մ'իմկաւ: Օսկոքս կու խոստէ: Ազուէսը խոստուկ
ըրեր է— երբ ազուէսները դիշերը պոռան, անթուրթենէ կամ
խրենց հիւանդութենէն:

ԽՈՍՏՈՒԿ – 2. Հայհոյութեան համահաւասար. մէկուն կը հարցնես,
Մարա՛ն, Խո՛ւ եկօ, կը պատասխանէ, Խո՛ւտուկ, Ի՞նչ է նորէն:

ԽՈՏԳԱՐ – Մարդ, մարդագետին, սրուն խոտը կը հնձուի:

ԽՈՐԾԸՆԱՅ – Սոխազդի մը՝ անուշ, համեղ արմատով:

ԽՈՐՇՈՒՔ – Մաքիի հիւանդութիւն, զիթը կը վաղէ:

ԽՈՑԻԿ, ՔԱՐԽՈՑԻԿ – Բուսիկ սաքին քարերուն դարնուելով ու շիուե-
լով կարծր ուտեցք մը դոյացնելը, սր կը ցաւի եւ շատ ուշ կը
բուժուի. Ուխտ քարխոց էրեր է:

ԽՈՒԼՈՒՃԻԿ – Սոխի մը մէջէն եօթը փետուր անցնելով երդիքէն կը
կախեն Մեծ-Պահլին. եղաւ խուլուծիկ: Ամէն շարաթ անկէ
փետուր մը կը քաշեն, սր պահլին քիչնալը յայտնի ըլլայ:
Խթման իրիկունը սա սոխը ջարդելով եղի մէջ կը կարմրցնեն
ու կը լեցնեն եղինձին վրայ:

- ԽՈՒՇԿԵՆԻ - Իրիկուան կերէն յետոյ անասուններուն տակ խուշկի փռել. Ա'ղջի, գնա', ախոռը խուշկի' :
- ԽՈՒՇԿԻ - Թրիքն ու սրպըրտուքը ախոռին մէջ դէպի կը վերածեն, որ մէջէն կը վառի ու կը չորնայ, կ'ըլլայ խուշկի :
- ԽՈՒՓ - Ամանի կափարիչ :
- ԽՈՒՓՈՒԵՆԻ - ձիւղը ծառէն, ծառը արմատէն քաշել-փրցնել՝ առանց կոտրելու :
- ԽՊՆԻՎ - Ամ չնալ :
- ԽՊՆՈՒԿ - Ամ չկոտ. Հարսը խպնուկ է :
- ԽՈՒՆՏԱՏ - Մեծ, լայնատերեւ բոյս, որուն փոշին աչքը կը լեցուի :
Ֆրնս. մօլեհն :
- ԽՓՆԵՆԻ - Խուշիով ամանին բերանը պոցել. Պուտուկը խփնէ' :
- ԽՕՐԱԹԱ - Խօսք-խօրաթա, խօսակցութիւն :
- ԽՕՐԱԹԵՆԻ - Խօսիլ :

Ծ

- ԾԱԿԸ ԿՈՒԵՆԻ - Բանաարկել :
- ԾԱՄՊԱԿ - Յետոյքին վրայ գօտիին փունջը :
- ԾԱՄՊԱԿ, որ ըլլալու է ԾԱՄԿԱՊ - Թեթեւ, ծոպաւոր, կանանց մէջքի դօտի, կապ՝ հիւսուած թելերով, մազերուն ծայրին հետ հիւսուած կապ :
- ԾԱՄՊԸ ԿՀԸԼՈՒՆ - Ծամպակի վրայի հլուն, յալունք :
- ԾԱՌԶԱՐԴԱՐ - Ծաղկազարդ, տօն քրիստոնեաներու :
- ԾԱՍՔ կամ ԾԱՅՔ - Ծածկուած տեղ, որուն չորս-բոլորը բաց կ'ըլլայ, պատ չ'ունենար :
- ԾԱՐՈՒՐ - Կարմիր տաքչեղի (տախտեղի) բարակ փոշի :
- ԾԵՂ - 1. Ծղօտ : 2. Ծրածանին տակէն որ անցնիս, սեռք կը փոխուի. տղան աղջիկ կը դառնայ, աղջիկը՝ տղայ :
- ԾԸԾՈՂԱԿ - Սողուն մը, որ մաքիները կը ծծէ. քարերուն վրայ, ճնճղպաշարներուն՝ կը պարտի խէզի պէս :
- ԾԸՅՎԻ - Ծունկեր. եղակին ծունկ է :
- ԾԸՆԿԸՎԱՐ - Ծունդի եկած. Ծընկըվար չոգէ, ծունդի եկուր :
- ԾԻՂ - Ծղօտ :
- ԾԻՆ - Ոչխարին կոտորին վրայի դիծերը, որոնք անոր տարիքը կը յայտնեն. ո'րքան ծին, նո'յնքան տարի, փայտի պէս : Ծնած ըլլալու իմաստով : Ոչխարը ամէն տարի կը ծնի :
- ԾԻՐՏ - Հաւի, թռչունի աղբ :
- ԾԾԵՆԻ - Երախային մօրը ծիծը ծծելը. կու ծծէ՞ տղան :
- ԾԾՅԸՆԵՆԻ - Մօր մը երախային իր ծիծով կաթ տալը. Տղան կու ծծցնէ, հի'մա կու գայ :

- ԾՂԻ - Ուտելիք, հաց. Ծղի չուսի: Ծղի չկայ:
- ԾՆՆԻԿ - Խիստ պզտիկ, դեռ ծաղիկը վրան պտուղ:
- ԾՈՅՅԸ - Ծանր:
- ԾՈՐԾԱԿ - Ծոծրակ:
- ԾՈՅՈՒՈՐ - Յղի. Մեր հարսը ծոցուրեցաւ:
- ԾՈՅՈՒՈՐԻԼ - Յղի մնալ:
- ԾՈՒԵԼ - Արմտիքը տեփուրով երերցնել, յարզ ու աւազ ցորենէն դա-
տելու համար. Յորեմ ծուել: Ապրցու ծուել:
- ԾՌԿԱՄ - Զուգելով ուտել, քիթ ու բերան ընել:
- ԾՐԻԼ - Եղին ծծուելը թուղթէ, հացէ:
- ԾՐՏԵԼ - Թռչունին ծիրտ արտագրելը:

Կ

- ԿԱԹՆԻԿ - Վայրի աղցան մը:
- ԿԱԹՆՁԱԿ - Աշնան ճակ(?):
- ԿԱԼ - Տանիք:
- ԿԱԼԼԵԼ - Փոցել, փակել, թխել բանով մը. Ծակը կալլել:
- ԿԱԼՈՒԿ - Պզտիկ կալ. տեղանուն է. մեր լեռան, Ախախու վրայ, դու-
րուկ, կանանչ տեղ մըն էր:
- ԿԱԾԼԿՐԱԿ - Անառակ, կրակոտ, չարաճճի. պզտիկութեանս ինծի
տրուած... անականը:
- ԿԱԾՈՒԻԿ - Փոքր ուռեցք. շիւս կածուռիկ ելեր է:
- ԿԱԿԱ - Անուշեղէն, շաքար՝ մանուկներու. Եկ՛, քեզի կակա բերի
քմ:
- ԿԱԿԱՌԱՁ - Թռչունի բրուկ, հաւի, աքաղաղի:
- ԿԱՂԱԼԿԱՆ - Տղոց խաղ մը, ուր որոշ տեղի վրայ մէկը կը փախչի,
միւսը մէկ ոտքի վրայ կաղալով գայն կը հալածէ, որ բռնէ.
Եթէ ձեռքը փախչողին դպցուց, խաղը շահեցաւ. հիմա պէտք
է շահողը փախչի ու կորսնցնողը կաղայ՝ գայն բռնելու հա-
մար: Տեսայ Փրանսացի մանուկներ, որոնք մեր դեղի ծանօթ
խաղ մը կը խաղային:
- ԿԱՂՇՆԱ - Բոյս. կաղչնայի կաթը ջերմի դեղ է: Ռուբէն Զարգա-
րեան գայն դործածած է:
- ԿԱՂՈՒԱԾ - Յուրտէն կարկամած, կարկամ. Ձէռուիս կաղուեցաւ:
- ԿԱՂՈՒԻԼ - Անգամներուն չկրնալ բռնելու աստիճան մսիլը:
- ԿԱՄԸՆՏԷ - Զողիկ, որ կամը լուծին կը միացնէ:
- ԿԱՄՎԱՐ - Կամ վարող, կամ կամնող տղեկ:
- ԿԱՆԱՅ - Անասուններուն փակչելով՝ անոնց արիւնը ծծող մլուկ:
- ԿԱՆԿԱՌ - Փշոտ, խիստ համեղ բանջարեղէն:

- ԿԱՆՏ - Կեղուրած խոշոր, թաց ճիւղ. Հիմա կանա մի առնիմ, գլխուդ գարնիմ:
- ԿԱՊ - Նախուռն, լայնքը քանի մը մատ, կլններու բուրդէ դօտի. կը վերջանայ անոնց յետոյքին վրայ, ուրկէ երկու ծոպ վար կը կախուին:
- ԿԱՌՇԱ - Փայտի շարք, վրայէ վրայ շարուած փայտէ դէզ. Փատի կառչա:
- ԿԱՌՈՒԿ - Քիչ եփուած. Ապուրը կառուի է:
- ԿԱՎՈՒԿՈՒԻԼ - Իր սլոթերէն վեր բանի ձգտիլ. Կառուն կու կապուիվի, որ միւր վար առնէ:
- ԿԱՏՈՒԻ ԳԼՈՃ - Բոյս մը, որ կ'ուտուի, արմատը, եւ կը նմանի կատուի զլխու:
- ԿԱՐԿՏԱՆ - Կարկանդակ, նորոգել կտորներով:
- ԿԱՐՄԻՐ ԲԱՆՁԱՐ - Աղցան մը վայրի:
- ԿԱՐՄՆՃԱԿ - Զաղացքի եւ ձեռքով ձաւար ազալու քարերուն մէջտեղը դրուելիք երկաթի կտորը, որ քարին փոս մատը մանեկով եւ հորիզոնական երկաթին մէջ անցնելով քարը կը դարձնէ:
- ԿԱՐՔԱԿ - Զգեստին վրայ քակուած կար. վալալից կարգալը կարէ: Շապիկս կարգիկը է:
- ԿԱԻԱՌ - Ոռոգման տոռուներուն անկիւնադարձ տեղերը, ուրկէ ջուրը կը դարձնեն ուրիշ ակօսներ ու տոռուներ:
- ԿԱՖՏԱԼ - Սպառնալ. Ի՞նչ կաֆ կու տաս, կըյի՞ն քս նը, եկօ':
- ԿԵՃԿՈՒԿ - Ցորենի հատիկին վրայ վերջին յարդէ ծածկոցը, Խամոնք, Սղմոնք(?):
- ԿԵՌ, ԿԵՌ - Ծայրը է դրին նման կեռ, երկար երկաթ դօրծիք, ետեւը սուր ու բարակ եռանկիւնաձեւ. ծայրով եփած լաւաշը թոնիրին կողէն կը քաշեն, ետեւով թոնիրին երեսը մնացած փշրանքները կը քերեն:
- ԿԵՑՈՒԿ - Կեցած, կայնած:
- ԿԶՈՒԸՆԱԼ - Կծուանալ, կծու համ ստանալ. Եղը կգուեր է:
- ԿԷԾԷՌ - Ունելի, կայծառ:
- ԿԷՂԱՐ - Մտան:
- ԿԷՂՎՈՒՆԾ - Կեղեւ:
- ԿԸԹՆՈՑ - Կթելու դոյլ՝ ունկով, կոյլակ:
- ԿԸԼԿԸԼ - Եղիպտացորեն, լազուի:
- ԿԸԿԸԼԻԿ - Փշատիին պտուղը:
- ԿԸՌԸՆԾԷ - Տեղը նստէ (արհամարհական). Կըռընձէ՛ տը տեղը:
- ԿԸՌԸՆԾԻԼ - Շան պէս նստիլ: Շուքը կու կըռընձի:
- ԿԸՌԶ - Մանր, դրուր փայտ: Երկու կը'ոչ բեր, վառի՛նք:
- ԿԸՏԻՄ - Գուլպայի ծորենիի փայտէ շինուած շիշին մէկ դարձուածքով շինուած մատը. Կըտիմս փրքալ:
- ԿԸՏՏԵԼ - Շապիկին երկար թեւը խաթ ընել, կտրել՝ որ կարճնայ:

- ԿԹԵԼ – Խաղի մէջ շահիլ: Կթուեցար: Քեզ կքեցի:
- ԿԹՈՒԻԻԼ – Խաղի մէջ տարուիլ:
- ԿԻԾ – Քթին մէջ չորցած խլինք. քնքին կինձը կ'ուտէ, ազահ է:
- ԿԼԿԼԱԼ – Գըլ-գըլ խնդալ. գըլալով խնդալ. Ի՞նչ կու կլլաւ:
- ԿՂՄԻԼ – Ոտքին թմբիլը, երբ արիւնը հոն խուժելով կը ծանրացնէ
զայն ու չենք կրնար շարժել. Ոտքս կզմեք է:
- ԿՀԱՍ – Թի, սրուն երկաթէն մաս մը կը պակսի. կարճ մարդ:
- ԿՀԻԿ – Փոքր գուր:
- ԿՆԻԿԱՐՄԱՍ – Կին, կնիկ: Ձէին ըսեր կնիկարմասս՝ սեփական կնոջ
համար, կը գործածէին ընդհանուր առումով. Կնիկարմատ է,
մագն եքկամ, խելքը՝ կարն:
- ԿՆՏԵԼ – Խուզել, մաղերը կարել: Ոչխարը կմտել:
- ԿՈԶԿԼՏԱԼ – Կայծկլտալ, կայծակ գարնել:
- ԿՈԶՈՆՆԱԿ – Ուղտի ձագ:
- ԿՈԹԻՆՔ – Երբ հունձը կալերուն վրայ կը կամենն, յետոյ յարդը
ցորենէն կը դատեն մեքենայով կամ թիով հովին դէմ վեր նե-
տելով, սրուն կ'ըսեն հուսել, կալը հուսել, մաս մը կը մնայ
տեղը, խալամ, աւաղ, յարդի յօդ, դորս կրկին կը կամենն,
մնացած ցորենը ստանալու համար: ԿՈԹԻՆՔԸ այդ մնացորդն
է՝ դեռ չկամնուած: Կալը օրնել կը նշանակէ խուրձերը քակե-
լով ցրուել, կամնուելու համար:
- ԿՈԹԼՈԶ – Լաւ չաճած, պզտիկ մնացած վարունդ. կարճ մարդ:
- ԿՈՒԼՈՒՆԿ – Խորունկ. Կոխուանկ գուշ:
- ԿՈՒՍԵԶ – Ցանքին մէջ աճող խոտ՝ դեանախնձորի նման արմատով,
որ կ'ուտուի, արմատը միայն: Բարերոզցիք կ'ըսեն կոխէժ:
- ԿՈՄԻԾ – Մորթին վրայ գոյացող պզտիկ ուռեցքներ անշան:
- ԿՈՅԱՆ – Ողորկ, կլոր քար, սրով գուրերը կ'ողորկացնեն: Ամէն գե-
ղացի կին իր բրուտն էր:
- ԿՈՂԵԼ – Հաց կողել, թոնիրին կողը փակցնել, որ եփի. թրիք կողել,
թնդելով խմորի վերածուած ջրախառն թրիքը մեր անձեփ պա-
տերուն կը փակցնեն շերտ-շերտ, չորնալէն ետք վառելու հա-
մար, ապրպասէն, դչկուրէն ու աթարէն գատ:
- ԿՈՃ – Կոճղ:
- ԿՈՃՈՒԿ – Ոտքին ու սրունքին միացած տեղին աջ ու ձախ ցցուած
կոնածեւ մասերը:
- ԿՈՅԼԱԿ – Փայտէ դոյլ:
- ԿՈՌՊԵԿՈՌ – Խորթլամբ՞ շ...:
- ԿՈՎՐԾՈՒԾ – Մեծ ու կանանչ խլէղ:
- ԿՈՏԵՐՏԸԻԻԼ – Խեղեղնալ, հպարտանալ, նաղիլ: Սըւո՛ր անյէ, ին-
տո՛ր կու կուտըտըրի:
- ԿՈՏԻԿ – Մնօտ, դունչ:
- ԿՈՏԻՄ – Կծուահամ խոտ մը՝ համով:

ԿՈՐԻ – Արտի ստորարժանում: Մէկ լծվարը, որ օրուան մը մէջ վարուած տեղին անունն է, կը բաղկանայ շատ մը կորիներէ, սրոնք ջրելը եւ քաղհանքը կը դիւրացնեն, որովհետեւ կորին կորիէն կը բաժնուի խորունկ ակօսով մը, որ ճամբայ կը բանայ արտին մէջ:

ԿՈՐԾԻԼ – Իյնալ: Եջը բեռը կռնակը, կործեցաւ, դետինն ինկաւ:

ԿՈՐԿՈՏ – Ճերմակ ցորենէ շինուած ապրցու: Անկէ, կորկոտ ապուր: Կորկոտապուրին մէջ եթէ թան լեցնես, կը կոչուի խաթխանապուր, որ է թանապուր:

ԿՈՐՄԱՍ – Տաք կաթին պաղ թան խառնես, կը թանճրանայ ու կը կոչուի կորմաս, մեր կերակուրներէն մին:

ԿՈՐՏԵԼ – Արաւ վարելէ յետոյ կորիներու վերածել:

ԿՈՐԲՈՒՄ – Տեսք, կերպարանք: Կորբուսք սիրիմ:

ԿՈՒԽ – Քիչ մը քուն: Իրուսն, իրիկունն, կուխը քնուալ, քիչ մը քնանալ:

ԿՈՒԿՈՒՌԻԿ – Ծայրը վեր դարձած, ոլորուն, չարօխ, եւայլն: Վա- յելուչ, լաւ հազուած, երբ հազուատը վրան կը նստի:

ԿՈՒՆԾ – Ապուրի մէջի հատիկ, պղուր, եւայլն: Կնծով ապուր, թանճր ապուր, ինչ որ յաճախ չունէինք...:

ԿՈՒՆՆՈՒՑ – Կտուց:

ԿՈՒՆՏ ԳՐԺՍ – Մաքերը խոր, տակէն կարուած գլուխ:

ԿՈՒՌԻՍ – Պղտիկ ականջ ունեցող կենդանի: Կուրխ մաքի, այժ, եւ- ալլն:

ԿՈՒՌՆԱՇ – Մաքի երամ: Գլուխը կը դնէ մէկը միւսին դժակին տակ ու մէկ զիծով շարուած իրարու ետեւ, կը քալեն: Մաքիքը կուրառ կապեր քն:

ԿՈՒՏԸ ՊԱԿԱՍ – Յիմար, անխելք:

ԿՈՒՏՈՒԼ – 1. Կոթը կիսով կոտորած թի, փետտոտ, եւայլն. իսկ կճատ՝ տե՛ս ԿՃԱՏ:

ԿՈՒՏՈՒԼ – 2. Գաճաճ, կարճահասակ մարդ. կուտուլ պօշոյ ք... իմ:

ԿՈՒՏՈՒԿ – Շան ձագ դեռատի:

ԿՈՒԸ – Մարդի ձեւով թունաւոր միջատ:

ԿՈՒՑՑ քնել – Երկու հոգիի գլուխները ճակտէն թեթեւ իրարու զար- նել. կուցց կ'ընին կու:

ԿՈՒԵԼ – 1. Ջաղաջքի քարը կը հանեն տեղէն, մուրճով կը ծեծեն, որ ողորկութիւնը կորսնցնէ ու լաւ աղայ ցորենը:

ԿՈՒԵԼ – 2. Ջարնել: Հի՛մակ հատ մի կու կոխմ, հա՛:

ԿՈՒՇՔ, ԿՈՒԶՔ – Սպիանալու մօտ եղող վէրքին կեղեւը:

ԿՈՒՏԵԼ – 1. Մարմինն վրայ տաք ջուր թափել՝ այրելու աստիճան:

ԿՈՒՏԵԼ – 2. Ընծուղին կոկովը դարձնել, որ դառնայ եղ ու չտերնդա- գործէ:

ԿՍՄՈՒԻԼ – Շան զուգաւորութիւնը: Շունքը կամուեր քն:

ԿՏԱԻՈՐՁԻ – Այրող կտու, բամպակի հոտ:

- ԿՏՆԱՌՌ - Թուշուների ստամոքս :
- ԿՐԱԿԻՈՐԻԼ - Խիստ շատ տաքնալ, սաստիկ բարկանալ, Նագրկոնց
Մամուկը նորէն կրակուորեր է :
- ԿՐԻՃ - Կաւէ ամանի փշրանք :
- ԿՐԿՈՒՏ - Մանր ու բարակ փայտի փշրանքներ :
- ԿՕԿԱՐԹՄԱ - Աչընցան :
- ԿՕԿԻՇ - Մագերը կապոյտի եւ աւելի կանանչի խառնուրդ գոյնով
այծ : Ածը կօկիշ է : Փոխարեբարար կ'ընէին կնոջ մը, Տնաւե-
րենց Կօկիշը, որովհետեւ չէկ էր, թէեւ մեր գեղին կէսը բլլար :
- ԿՕՌՕՓ - Գունա թուքի, թրիքի : Կօսօփ մի բուխ : Կօսօփ մի քափ :

Հ

- ՀԱԲԲ ԸՅԵԼ - Ուտելը մանուկներու : Հաբբ քրէ, գառս :
- ՀԱԼԿՕԼ - Արմտանի բառով խարակօկիլ :
- ՀԱԿԿԱԼ - Փայտ, որուն կը կռթնցնեն անասունին բեռցուած մէկ
կողմի բեռը, որպէսզի գեաին չիցնայ, մինչեւ որ միւս կողմն
ալ բեռնան : Մնձուրի գործածած է :
- ՀԱՅԱՍՍՈՒԶ - Լիտի, լպերշ, լիրբ, անամօթ : Հայաստազ շուն :
- ՀԱՅԼԱՎՈՒ - Ահազանդ. Աստուած սիրողդ, հաւե՛ք, օշխարը տա-
րին :
- ՀԱՆԿՈՒՍՏ - Հանգոյց :
- ՀԱՆԿՈՒՍՏԵԼ - Հանգոյց ընել, երկու թել իրար կապել :
- ՀԱՇԱՐԻ - Ուժեղ, ուժով, ճարպիկ, կարիճ, ամէն բան :
- ՀԱՊԻԿԱ - Բակեղաթ, հէյսլէ :
- ՀԱՏԻԿ - Ջրայի խաշած ցորեն, Մեծ-Պահքի կերակուր : Աս փոր-
ձանքն ալ պէտք էր մեր գլխուն, իբրեւ թէ տարին տասներկու
ամիս, կերածնիս ապուր... չըլլար, իր տեսակներովը :
- ՀԱՐՍԱՅ - Հօրեղոր կին, որ գրեթէ մօր տեղ էր :
- ՀԱՐՍՆԵՄԱՏՈՒԿ - Վայրի աղցան մը :
- ՀԱՐՕՐ ԶՈՒՆԿՈՒԼ - Մանկական խաղ : Դարձել մը կը դնեն բարձր
քարի մը վրայ ու անոր երկու ծայրերուն կը նստին երկու մա-
նուկ : Երբ մէկ ծայրը վեր ելլէ, միւսը կ'իջնէ վար : Մէկը կը
պոռայ Հարօ՛ր, միւսը կը պատասխանէ - Զունկո՛ւլ : Ու վեր
վար, կը պոռան ու կը խնդան : Կը խնդայի՞ն... : Ո՞ւր են այ-
սօր... :
- ՀԱԻԿԸԹԷ ՊԱՏԱՌ - Ծըմուռ՝ վրան հաւկիթ կտարած :
- ՀԱԻԿՈՒՏ - Հաւի կուտ. քարոտ, անպէտ ցորեն, եւայլն :
- ՀԱԻԿՈՒՏԷՆԻ - Պզտիկ ծառ, փոքր, համով, կարմիր պտուղներով,
փայտը շիտակ ու տօկուն, բիրի յարմար :

- ՀԱՒԿՈՒՐԻԿ** – Աչքի հիւանդութիւն, երբ մէկը մթնշաղէն յետոյ ա՛լ
 չի տեսներ: Հաւկուրողին վիզը մանկուռ անցընելով գետակ
 կը տանէին–կը բերէին, որպէսզի աղէկնար: Մեր գեղը աչքը–
 ցաւ ու ջերմ շատ կար: Ամէն մարդ ամառը ջերմ կու բռնէր:
- ՀԱՒՈՒ ԴՄԱԿ** – Վայրի աղցան մը:
- ՀԵՄԱՆ** – Գերան, մեծ, որ տան մէկ սլառէն միւսը կ'երկարի:
- ՀԵՏԵԿ** – Մեր դեղին դահուկը: Փայտէ կըր շրջանակ, շուանով կամ
 թէ սըռիմով հիւսուած մէջը, որ սաքը կը կապեն ու առանց
 խրելու կը քալեն ճիւղին վրայէն:
- ՀԵՐԸՆԿՅԵԼ** – Մեղմանալ, քիչնալ, թափը կորսնցնել: Օգրելը հերքն–
 կեց: Փոքիս խոստուկը քիչ մի հերքնկեց:
- ՀԵՐՄ** – Բարկութիւն:
- ՀԵՐՍՈՏ** – Բարկացոս:
- ՀԵՐՍՈՏԻԿ** – Բարկանալ: Ի՞նչ կու հերսոտիս:
- ՀԵՊՂԵԹ** – Որքան որ, ինչքան որ: Հէգդէք արտս քաղեց բմբ... թէ–
 պէտեւ...:
- ՀԵԼԵՔ ԸՈՒՅ** – Խիստ, չափազանց յուզել: Աշխատող մը կ'ըսէ. Ա՛լ
 հէլլէք եղայ:
- ՀԵՌԱՔՈՒՑ** իյնալ – Ուժ, կարողութիւն կորսնցնել: Հէռաբուց ին–
 կայ, բնչափ փորեցի ածուքը:
- ՀԸՅԵԼ** – Աւազն ու ցորենը իրարմէ դատել, դայն տեփուրը լեցու–
 ցած: Յորէն կու հրչիմ:
- ՀԸՆՆԱ** – Ան: Ես չէի, հըննա էր:
- ՀԸՆՆԸՀՈՆ** – Այն տեղը:
- ՀԸՆՆԸԻՈՐ** – Անոր:
- ՀԸՆՏԸԻՈՆՔ** – Անոնք, ատոնք:
- ՀԸՆՏԱ** – Այդ, աս: Հընտա վէ՞վ է:
- ՀԸՍՍԱ** – Այս: Հըսսա մարդն է գողը:
- ՀԸՍՍԸՀՈՍ** – Այստեղ:
- ՀԸՍՍԸԻՈՆՔ** – Ասոնք:
- ՀԸՍՍԸԻՈՐ** – Ասոր:
- ՀԸՏՏԱ** – Աս, այդ:
- ՀԻՍ** կամ **ԻՍ** – Միտտ բոց եղեւինի ճիւղի, չամ, կամ առանց շէշի
 ճրագի, որ կը սեւցնէ հասած տեղը:
- ՀԻԻԸՆԳՏԵՍ** – Հիւանդի այցելութեան երթալը:
- ՀՄՈՒԿ** – Հմուտ աշխատող:
- ՀՆՏԱՅՈՒ** – Վարունգ, սեխ, եւայլն կը թողուն որ ցողունին վրայ
 լաւ մը հասուննայ, յետոյ մէջի հունտերը իրը հունտ ցանն–
 լու համար կրկին:
- ՀՈԳՈՒՍ ՔԱՐ ԸՐԱԻ** – Ա՛լ դիմանալիքս չմտաց:
- ՀՈՂԴԱՐ** – Աղնիւ հողի հանք, որուն հողով աման կը շինեն: Աւա–
 դանման մանր հողի տեղ, որուն հողը երեխաներու օրօրոցին
 մէջ կը փռեն:

- ՀՈՎԱՀԻԼ – Զովանալ: Յաւէ, անհանգստութենէ հանդարտիլ:
 ՀՈՎԶՈՒՔ – 1. Պաղ ջուր, որ տաք ջուրի կը խառնեն, լողնալու հա-
 մար: Արեւեղկիկ ջուր, որով երկրորդ անգամ կը լողնան,
 վրայի օճառը թափելէ յետոյ:
 ՀՈՎԶՈՒՔ – 2. Յանդիմանութիւն: Հովձուխ առի, յանդիմանուե-
 ցայ: Հովձուխ առի՞ր, լաւ յանդիմանուեցա՞ր:
 ՀՈՒԼՈՒՍ – Մեղձ հով: Հուլուս-հուլուս հով մի կայ:
 ՀՈՒՄՈՒՈՐ – Քիչ մանուած թել: Հումուր դերձաք:
 ՀՈՒՆԱ – Հոն: Հո՛ւնա ելէ:
 ՀՈՒՆՅԻՐ – Հնար, հնարաւոր: Էմմէն հէլու հուկէ՞ր է:
 ՀՈՒՍԱ – Հոս:
 ՀՈՒՍԵԼ – Կալը, մալամդան թիով վեր նետել հովին դէմ, որ յարդը
 հեռու կը տանի ու ցորենէն կը դատէ:
 ՀՈՒՍԵԼ ապուրը – Երբ ապուրը եփ ելլելով ամանէն դուրս հոսի,
 չերեփով մաս մը կ'առնեն անկէ ու նորէն ամանը կը թափեն,
 որ դուրս չհոսի: Ա՛ղջի, ապուրը հուսէ, եփ ելեր կու վազէ:
 ՀՈՒՍԵԼԻ – Գործիք, որով մալամդան կը հուսեն հովին դէմ:
 ՀՈՒՏԱ – Հոգ:
 ՀՊԿԻԼ – Միրա աւնել, խիստ յուզումով ու պոսթիւմով լալ. Հպկե-
 ցաւ, հի՛մա պիտի լայ:
 ՀՕՔԲԸԼԱՃԻԿ – Ոտքերը վեր, դուխը դետինը, գլխուն վրայ մէկ
 կողմէն միւսը դառնալ: Հօրքըլաքիկը վերնալ կ'ըսէին:
 ՀՕԹԼԷՎՈՒԿ – Տղեկ թռչուն մը: Հընտը հօրվա՞նկը, — ըսաւ մա-
 մաս հասցէին ա՛յն աղջկանը, որուն սիրահարուած էր եւ ինք
 չէր հաւնած:
 ՀՕՇԿԻ – Ընտիր կաղնի մը, տերեւները լայն, փայտը յարկի:

2

- ԶԱՆԶՈՒՆ – Ոչ մէկ ձայն. Զանձուն չկայ հոս:
 ԶԱՆՈՒԿ – Լաւ ձայն ունեցող:
 ԶԱՐ – Զիու պոչին թելը:
 ԶԱՐՄԱՂ – Զարէ շինուած բարակ մազ՝ ալիւր մաղելու:
 ԶԵՆԵԼ – Խնջոյքի հրաւիրել:
 ԶԸՎԱԶԵՂ – Զուհացեղ, հացով, իւրով ու հաւկիթով շինուած տա-
 պակին կլորութիւնը առած հաստ, համեղ ուտեստ, տապ-
 կուած:
 ԶԹՆՈՒԿ – Ժայտերու վրայ բուսեող, վրան աղուամազ, ճերմակ, տու-
 կուն բոյս, որուն կաթէն ու արմատէն սեւ ձութ կը հանեն:
 Օպէյենց նէնէն գայն կը բերէր Ախգալսէն ու կը փռէր կալին
 վրայ՝ չորցնելու: Ընտիր ալաֆ է:

ԶՈՂՏԵԼ - Նախիրին կաշին ձողերու պէս մասերու վերածել՝ արեխ
կարելու: Կաշին ձողտեցի՞ք:

ԶՈՂՏԵԼ կաշին - Մոխիրի խիւսը թաթխուած թելի մը երկու ծայ-
րերէն պինդ քաշելով կը բռնեն ըման կաշիին վրայ ու անդամ
մը կը թրթռացնեն դայն, որ պիծ մը կը թողու կաշիին վրայ:
Գիծերը կաշիին մէկ ծայրէն միւսը կ'երկարին եւ իրարմէ
արեխ մը ըլլալու չափ լայնք կ'ունենան: Այդ պիծերէն կը
կտրեն կաշին, որոնց ձող կ'ըսեն: Աւելին ձողէ մը կը կախեն
որ չորնայ:

Ղ

ՂԱԼԻԶ - Հաստառուն. կռակալո զալիգ է:

ՂՕՌՂՕՌ - Գայճ, ծեր անասուն: Մարդու համար ալ կը պործածուի:

Ճ

ՃԱԹ - Կորեկի հաց, մանր, հաստ, կլոր, քանի որ կորեկի ալիւրը
ցորենի ալիւրին նման խիւսի չի վերածուիր:

ՃԱԹԱԿ - Գուլթ(?): Աւած իս քու մաքակդ չձգէ: Կարօտ, գուլթի
կարօտ:

ՃԱԹԱԿԸ ԻՅՆԱՎ - Մէկուն գուլթէն, շնորհէն կախում ունենալ: Իր
հարսին մաքակը ինկեր է:

ՃԱԽԻՆ - Յեր, հոտած ցեխոտ տեղ: Լոգնալու գուրս հոտած ջուրը,
որ կը հոտի լոգնալու տեղէն մինչեւ փողոցը:

ՃԱՂՊԵԼ - Ասոր-անոր բաժնել, տալ: Էմմէնը մազպեցիր, մեզի ի՞նչ
մնաց:

ՃԱՆԸՎԱՐ - Գայլ:

ՃԱՇԿԵՐԻ - Ապուր ուտելու հողէ պնակ:

ՃԱՌԻՄ ԸԼԼԱՎ - Բանի մը ճարը չըսնել: Խայտառակուիլ: Ճառիս է-
դայ:

ՃԱՌԻՆԵԿ - 1. Սեւ ծղրիթ, որ տան մէջ կ'երդէ:

ՃԱՌԻՆԵԿ - 2. Գործիք, որուն մէջ քալել չբխացող երեխաները կը
սորվին անոր եզերքէն բռնելով կայնիւր:

ՃԱՐԻ - Ճարպիկ, գործունեայ:

ՃԳՏՈՒ - Թիչ, աղաղակ, ճանձուն: Մայրը տղան ծեծելէ ետք անոր
կ'ըսէ. Ճգտու չիամես, մորէն կու ծեծիմ:

ՃԵԿՈՏ - Անկիւն:

ՃԵՆՃ - Մտի, իւզի մասնիկ:

- ձԵՆՃՈՏ - Իւղրոսած, աղտոտած :
- ձԵՐՄԿՈՒԿ - Հողաբային բերուած ճերմակ հող, որով տան պատերը
կը ճերմկացնէին դարնան :
- ձԸԼՊՈՒՐ - Սոխ, եղ, փաթաթէս, լոլիկ, ջրալի, կերակուր յարդի :
- ձԸՄՈՒՌ - Հաց, փշրուած հալած եղի մէջ, մերթ հաւկիթով :
- ձԸԻԷՂԻԿ - Նիհար, բարակ, տկար, անոյժ, վատառողջ :
- ձԹԿԻԼ - Շան պէս ուտել : Իշտը քիչէ՛, անարգական, փոխանակ ը-
սելու՛ կե՛ր :
- ձԹՂԵՐԷՆ - Հոյժենքու լեզու, որոնք չհասկցուելու համար վանկե-
րը հակառակ կողմէն կ'արտասանեն, օր. Սահակ կերաւ, Հակ
սա քաւ կի : Վարժուողը սահուն կը խօսի :
- ձԹՎՈՐԴ - Ածունեքուն մէջ բանջարեղէններուն արմատները ուտող
ճճի :
- ձԻՏ - Կոկորդ : Հացը քիսս մնաց :
- ձԻԻ - Ուր :
- ձԼՊՈՒՐ ապուր - Ապուր, ճլպուր յիշեցնող :
- ձԵՄԵԼ - Զղմէլ, ճմլէլ : Հակիքը քիսնեցաւ : Զեռքը քիսնեք է :
- ձՂԷ թքու - Ժակնդեղի տերեւներուն մէջի եփած երակներով չի-
նուած թթու : Կերածնիս կա՛մ ապուր էք, կա՛մ թթու :
- ձՂԼԱ - Շաւիղ, բարակ ճամբայ, արահետէն ճղուած :
- ձՃԻ ԽՈՒ - Վայրի աղցան, որ փորի ճճին կը թափէ : Թէեւ իմ երկզս
հանելու համար անօթի փորուց կերցուցին մեզրով ծեծուած
դղումի կուտի միջուկ, որուն ուտելը շատ դժուար եղաւ :
- ձՄՈՒՌ ԶՄՈՒՌ ԸԼԼԱՅ - Յաւիլ, սիրաւ ճմլուիլ, կսկծալ : Սիրսս
մնուա-մնուա կ'ըլլայ :
- ձՄՊԻՔ - Օճախին վերի երկու կողմերուն տափարակ տեղերը, ան-
կիւնները :
- ձՆՃՂՊԱՇԱՐ - Ժայռերու վրայ բուսնող հատիկով խոտ, ուտելիք :
- ձՇՈՒԸՌՏԵԼ - Ժչալ, մանուկին լացը օրօրոցին մէջ :
- ձՈԳԳՈՒՐ - Կարճահասակ, դաճած :
- ձՈԹ - Ծայր. Լաթիմ անթը :
- ձՈՂԻԼ - Երկննալ պառկել. ձոզեցաւ :
- ձՈՎ - Չով, արմատ :
- ձՈՐՄԱՐ - Յորենի տեսակ խոտ մը, շատ դիմացկուն :
- ձՈՒԼԻԿ - Տեսակ մը ուրուն, որ կը սիրէր ցորենին հողին հանել :
- ձՈՒԿՈՒԹ - Ժկոյթ մասը :
- ձՈՒԿՈՒՄՈՒԿ տալ - Ծուռումուռ դարձուածքներով փախչիլ. ձու-
կումուկ տուաւ փախաւ, չկրցի բռնել :
- ձՈՒՆՈՒՏ - Ժահիճ(?) :
- ձՊԼԻԼ - Ուրին դառնալով տեղէն ելլելը(?), չբանելը(?) : Ուխտ քալե-
ցաւ :
- ձՊԼՏԿԻԼ - Զօրաւոր մէկու մը տակը ինկած, չարչարուիլ՝ անկէ ա-
զատելու համար : Ուժերէն վեր բանի ձգտել :

- ՀՊՌԹԱԹԱԽ - Ճպոտա, Թարախտա աչքեր: Քաճկնիմ նպոթաթախ ա-
շուիդ:
ՀՌՏԻԿ - Ջուրը նուազած: Հռաիկ աղբուր:
ՀՏՆՈՑ - Մանեակ: Վիդէ կախուած որեւէ բան:
ՀՐԱԳԿԱԼ - Սիւնին վրայ ճրագ դնելու յատուկ տեղ:
ՀՐԱԳՈՒ - Ճարպ:
ՀՕՂԼԿՅԻԼ - Յօրանջելով ձեռքերը տարածել:
ՀՕՇ, ՀՕՇ - Այծերը կթելու ատեն զանոնք կանչելու յատուկ ձայն:

Մ

- ՄԱԶՄՌՈՒՏ - Տակը մալ մնացած:
ՄԱԹՈՒԹ - Աղցան մը:
ՄԱԼԱՄՂԱ - Կամոուած հունձք:
ՄԱԼԷՁ - Ալիւրով, եղով, ջրով եփուած կերակուր:
ՄԱԽԻՐԹԱԽԹ, ՄԽՐԹԱԽԹ - Բոյս վայրի բանջարի նման, որուն
պղտիկը կ'ուտուի:
ՄԱԿԱՐԳ - Մէկ կողմ դրուած մածուն՝ կաթը մակըդելու, որ մա-
ծուն դառնայ:
ՄԱԿՐԹՈՑ - Մածուն մակըթելու դոյլ՝ ցածլիկ, առանց ունկի:
ՄԱՂՄԱՂ - Մէջը մոծիրով խառն տաք մոխիր:
ՄԱՅԱ - Հորթի ստամոքս. մեղր, չամիչ եփէ, կաթը կը կարէ, կը
չինէ պանիր, պանիրի մայր:
ՄԱՆ - Եփ ելած կաթին երեսի իւզոտ խաւը, կամ եփ չելած աւելի
ճիշդը:
ՄԱՆԻ - Խաղ, երգ:
ՄԱՆԿՈՒԹ - Անասուններուն վիզը անցուելիք կիսակլոր փայտ:
ՄԱՆԿՈՏԷ - Փայտ, հում նիւթ, ուրկէ մանկուս կը շինեն: Մանկու-
սիմ կապը:
ՄԱՇԱՐԱ - Ածուքի մաս: Ածուքը մաշարաներու կը բաժնեն ու ամէն
մաշարա զատ բան մը կը ցանեն:
ՄԱՌՈՏԻԼ - Մորթը եղունդին փակած տեղէն կը չորնայ եւ ետ կ'ո-
ւորի: Մառներս մառտոեցան:
ՄԱՍՍԱ - Ծայրը մօտուրով երկար դուազան, լուճքի ատեն եւայլն.
Եղին մշտելով քչելու համար:
ՄԱՍՐՁՈՒԹ - Մասուրի օշարակ:
ՄԱՏՆՍՈՒՆՁ - Վիրաւոր մատը ջուր առնելով կ'ուռենայ:
ՄԱՏՈՒԼԱԽ - Մաթուի, Արմատանի բառ:
ՄԱՐԱՍ - Մաղէ կամ բուրդէ շինուած տրեխի կապ, եւայլն:
ՄԱՐԳԱՐԵԿ - Խուրճ կապելու կարճ փայտ, որ կը ծառայէ կէմին
ծայրը խուրճին մէջ խոթելով զայն կապելու:

- ՄԱՐԴԱԿ – Տանիք շինելու փայտ, որ դարձեկէ–դարձեկ կ'երկարի :
 ՄԱՐՄԸՆՃԵԼ – Մատնեքուն մտելէ վերջ ասղնտուելու պէս ըլլալով
 ցաւիլը : Մատներս կու մարմըննին :
 ՄԱՐՄԲԻԼ – Խրստ ցաւիլ : Մատս կու մարմրի . նուաղիլ :
 ՄԱՐՈՒՔ – Կաթը վաթեկէ վերջ կոյլակին ջուրով ցողուըը :
 ՄԱՅՌ – Բաւարար, շատ : Մափռ ալուր ունինք տախա :
 ՄԵՅՀՄԱՆ – Երկար ատեն հիւանդ եղող :
 ՄԵՐԵՐ, ՄԵՐԵՐԵՆՔ – Իրարմէ զատուած եղբայրները իրարու տան
 կ'ըսեն մերերենք :
 ՄԷԿՏԵՂԵԼ – Եղբայրներու զատուած տուները կրկին միացնել :
 ՄԷՆ – Միայն, մինակ . Մէն դո՞ւն ըս :
 ՄԸԺԻԿ – Կաղամբին դուրսի սեւ տերեւներով շինուած թթու :
 ՄԸԼԸԺԵԼ – Քիթ–բերան պլլիլ . Խմո՞ր ըս շաղուեր, քիթ–բերան ըս
 պլլեր :
 ՄԸՌԵԼ – Հնազանդիլ, խօսք մտիկ ընել : Դուն մըռուկ տղայ ըս, ջո՛ւր
 մի բեր աղբըրէն, խըմիմ :
 ՄԸՌԸԼ – Նօսք, ջրոտ ցեխ :
 ՄԸՌԵՍՄ – Մէջը մուր մտած : Ապուրը մըռխած է :
 ՄԸՌԵՒԿ – Ոջիլին մանրուըը, անիծ(?) :
 ՄԸՌԵՈՏ – Մուխ հոտող :
 ՄԸՌՄԸՌԱԼ – Մեղմօրէն ցաւիլ :
 ՄԸՌՈՒԿ – Հնազանդ, խօսք մտիկ ընող :
 ՄԸՐԿԻԼ – Քիչ այրիլ, այնքան որ կարմրի այրած տեղը : Շապիֆս
 մըրկեցաւ : Աս յաճախ կը պատահէր, քանի որ հազուստը ու
 ջիւներէն մաքրելու համար թոնիրին կրակին վրայ կը թօ-
 թուէին, ուր ոջիլները կը . . . ճարճատէին :
 ՄԹՆԵՆ աշուի – Մթին, սեւ աչքերով մարդ : Տէրտէրաւեց Մկրչը
 մթնեխ աշուի էր :
 ՄԻԱՔԱԹԱ – Խեչափառ :
 ՄԻԼԹԱՆ – Մէջը բամպակ կարուած երկար վերարկու կիներու :
 ՄԻՆԱԻՈՐ – Առանձին, մինակ :
 ՄԻԻՌՆԹԱՓ – Եկեղեցական անօթ մը :
 ՄԽԼԱՄԱ – Եղով ու հաւկիթով եփուած զաւուրմա :
 ՄՆԱԼ – Յոգնիլ : Մնացի, յոգնեցայ : Մնաց, յոգնեցաւ :
 ՄՇՏԵԼ – Հրել՝ փայտով կամ ձեռքով : Էշը մշտէ որ ֆայէ :
 ՄՈՁԻ – Ձմեռը ծնած հորթը աշունը կը դառնայ մողի :
 ՄՈԼԱՅ ապլ – Մոլորեցնել : Առանց լուր տալու մէկը խարել ու քովէն
 հեռանալ, փախչիլ, Լքել :
 ՄՈԾԻՐ – Մաղմաղ, մեղմ կրակ :
 ՄՈՄՈՒԵԼԱ – Հովանոց :
 ՄՈՅԸ, ՄՈՅՅԸ – Մանր :
 ՄՈՇԻ – Ջրերուն վրայ բուսնող վայրի ուռի :
 ՄՈՏՈՒԼ – Խթան : Սուր դամ, գոր մասսային ծայրը կ'անցընեն :

ՄՈՒԹԸ մնալ - Անօղ, անապատան, թշուառ մնալ:
 ՄՈՒՐ - Ածուխ:
 ՄՌՄՌՈՒԿ - Կծու:
 ՄՌՋԱՄ - Մըջիւն:
 ՄՏՕՔՆ Ի ՎԱՐ - Մտքով, մտօք:
 ՄՐԵՂ - Յարդի փոշի՝ զտանգաւոր աչքերուն:
 ՄՐՈՒՐ - Մրեղ:
 ՄՕՅՅՈՒՔ - Մանրուք. Մօյյուք փարա ունի՞ս:
 ՄՕՐ - Տղմուտ, ջրտ աեղ:
 ՄՕՐԷ ՄԵՐԿ - Բողբոզիկն մերկ:
 ՄՕՐԷ ՄԷԿԻԿ - Մօրը միակ զաւակը:

Ն

ՆԵՏ - Գլուխը կըտր ու փշտա բոյս, ջուրերը սիրող, որուն ցօղունէն
 նեա կը շինէինք ու նեա կը խաղայինք:
 ՆԵՐՔԻ - Որպէսզի դուլպան չմտչի, որմէ տարին մէկ գոյշ կար մարդ-
 զլուխ, ներքան մը կը հիւսէին, զոր կ'անցընէինք դուլպայ հա-
 զած ստքը:
 ՆԵՐՔՆԱԿ - Սպիտակ, բարակ լաչակ, բուն, գունաւոր լաչակին տա-
 կէն: Հայաստան ուրիշ իմաստով կը գործածեն, զոր չեմ հայ-
 կնար: Իրե՞նք ինչպէս պիտի հասկնան ու մէջէն ելլեն այս բա-
 սերուն...
 ՆԵՐՔՆԳՈՐԾ - Սորամանկ, նենդամիտ:
 ՆԸԻՈՐ - Անոր: Նըւոր մէյեցէք:
 ՆԻԳ - Գաղը արմատով հանելու փայտ: Բրտերը գազին արմատը չեն
 հաներ:
 ՆՆՏԼ - Հաստ(?): Ննտլ փայտ:
 ՆՇԱՆԱԿ - Ծիածան:

Շ

ՇԱԼԿԸՒՈՐ - Շարկիով բեռ տանող, որոնք կ'իներն էին միայն: Շակը-
 տրները եկիմ, կ'ըսէին:
 ՇԱՄԱՐ - Սիւլէ, ապտակ:
 ՇԱՌԱՓ - Ջրվէժ:
 ՇԱՎՈՒ - Պիտանի, օգտակար:
 ՇԱՎՈՒՁԷ - Բանի չի դար, տակուն չէ, դէշ է, տկար է:
 ՇԱՐԱՍՏՂ - Վեց եղբայր ասողերը:

ՇԱՐԻՏՅԵԼ – Կասկել բեռները :
 ՇԱՐՄՂՈՒՆ – 1. Կոկիկ, առանց փոսի սիրուն դէմք :
 ՇԱՐՄՂՈՒՆ – 2. Շատ բարակ ալիւր :
 ՇԱՐՈՑ – Տաքեղ, սակոր՝ թելերու վրայ շարած կը չորցնեն :
 ՇԱԻԱՂԻՆ ՀԵՏ (առտուն) – Շատ կանուխ :
 ՇԱԻԱՌ – Աչնան թափած չոր տերեւ :
 ՇԱՓԸԼԱԽ – Ապտակ :
 ՇԱՔԻԼ – Աչնան դեղնելով թափող տերեւները :
 ՇԵՂԻ – Գանակի, դմելիի սուր բերան :
 ՇԵՂԻԼ – Գազանի փախչիլ, կծիկը դնել :
 ՇԸԼԼԵ – Երանի թէ :
 ՇԸԼԼԻ – Վիզ :
 ՇԸԼԼԻՆ գրկել – Ողջադուրել :
 ՇԻՐՈՑ – Դողամի, սեխի, վարունդի, ձմերուկի, եւայն ցօղուն :
 ՇԻՐՎԱՆՏ, ՇԸԻՕՏ – Հրէչ մը, որ մանուկները գողնալով անոնց ա-
 րիւնը կը խմէ :
 ՇԻՐՏԱՆ – Հորթին ստամոքսը, թէ ուրիշ մաս, զոր պանիրի մայա-
 յին մէջ կը դնեն :
 ՇԻՓ, ՇԻԲ – Փութկոտ : Ուտելու շիք ըս ըմբ բանելու չէ :
 ՇԼՈՒԱՐ, ՇԱԼՈՒԱՐ – Բուրդէ տաբատ, լայն, սան գործուածք :
 ՇՂՎՂՑԸՆԵԼ – Սուլել :
 ՇՆԹՈՒԿԵ – Պառկէ, արհամարհական : Շուքը կու շնքակի :
 ՇՆԹՈՒԿԻԼ – Շան պէս պառկիլ :
 ՇՈՌԹ – Բերնէն աղտոտ :
 ՇՈՐ – Երախտներու տակի լաթ : Շորերը կու լուամ, երախային լա-
 թերը կը լուամ :
 ՇՈՒՇԱԿ – Գարնան դառը մէկ տարեկանին կը կոչուի չուշակ :
 ՇՈՒՇԱԿ – Ա՛յն մաքին, որ առաջին անգամ կը ծնի :
 ՇՈՒՄԱՆ – Միզափամփուշտ :
 ՇՎՈՏԱՆ – Վրայ-գլուի շուտ մաշեցնող : Շվատան շուռ, արիւս քա-
 նի՞ օր էդու շապիֆդ կարկտելու :

Ո

ՈՃ – Ակօսին հատած տեղը, ուրիշ լուծքը կը դարձնեն, նոր ակօս
 սկսելու համար, վարելու ստեն անշուշտ :
 ՈՍՏԸՌՈՒՏ – Ոստտ փայտ :
 ՈՐՄԸՆԾԵՂ (հնչել օրմընծեղ) – Որոմի ծղօտ :
 ՈՒԼՊԱ – Մասնաւոր դոյլ, ուր չոր սերը կը դնեն. ունկ չունի, կոյ-
 լակ մըն է :
 ՈՒՂՈՒԵԼ (հնչէ ԸՂՈՒԵԼ) – Ուղեւորիլ : Ըզուեր ո՞ւր կ'երթաս :

- ՈՒՇՏՈՒՐ – Այծերուն իրենց առջի սաքերը թուփերուն վրայ դնելով
տերեւ արածիլը :
- ՈՒՌՒՔ – Քիւ : Տանիքին պատէն դուրս երկարած մասը :
- ՈՒՌՒՔԸ ԵԼԼԵԼ – Խրտո, սաստիկ բարկանալ : Ուռիքը ելեր է, շատ
բարկացեր է :
- ՈՒՍՈՒԼ – Կամաց :
- ՈՒՐ – Այծի, կովի ստինք (կենդանիներու) :
- ՈՒՐՄԻՇԵԼ – Վայել, յարմարիլ : Սայադ քեզի չ'ուրմիշիք, չի յար-
մարիր :
- ՈՒՐՄԻՇՈՎ – Վայել, չնորհքով, յարմար :
- ՈՒՐՈՒՐ – Գիշակեր թռչուն, որ գեղին վրայ յածելով յանկարծ կը
սուրբար վար, ու հօ'փ, վառեկ մը առնելով կ'անհետանար :
Մամս գայն կը հալածէր, բան մը ձեռքը, «Ուրուր, ուրուր»
պտտալով, որպէսզի վախէն փախչի :

Չ

- ՉԱԵՈՒԸՏԵԼ – Դանակով վերաւորել մէկը :
- ՉԱԵՈՒՌ – Շնաղայլ(?) :
- ՉԱՂ – Ատեն, ժամանակ : Ընչադ կ'ընէ ո՞ւր էիր :
- ՉԱՆԿ – Չանդակ :
- ՉԱՇՈՒՅ – Ժայռերուն վրայ բուսնող խոտ, անասունի բու կեր :
- ՉԱՌՓԸՍՏԵԼ – Չառփոտները իրար անցընելով կոճկել :
- ՉԱՌՓՈՍՏ – Մետաղէ կոճակ՝ իրար պալով գոցուող :
- ՉԱՎ ԸՆԵԼ – Տարածել, տարածայնել : Խ՞նչ չավ բերք քս, քը ադ-
բարս փարս խրկեր է ինձի :
- ՉԱՐՈՒՄԱՇ – Մաշած, ծակ-ծակ, հին արեխ, ուրկէ սըռիմ կը քա-
չեն՝ ուրիշ արեխի ծակերը հիւսելու համար անով : Փոխարե-
բարբար... Չարօխմաշ բերում... լայն, տղեղ բերան : Նարէն
չարօխմաշդ բացի՞ր, այսինքն բերանդ :
- ՉԱՓԵԼ – Անխնայ, անզաղար զարնելով ձեծել : Գլխում չափեց, հա՛
չափեց :
- ՉԷՓԻՉ – Քօռիտը յաջորդ տարին կը կոչուի չէփիչ, մեծցած է ա՛լ :
- ՉԸԹԱԵ – Մլացիկ հասակ : Չըթախ պօյ :
- ՉԸՌԹՔԸ ՎԵՐՆԱԼ – Ցատկոտել, վեր վար ցատկել : Չըթկը կու
վերնա ուրախութեմէն :
- ՉԻԹ – Ճիւղերով հիւսուած ցանկապատ :
- ՉԻ ԵՐՊՆԱԾ – Անամօթ : Չի խըպնած շում :
- ՉԻԿԱՅ – Չկայ :
- ՉԻՄ – Արմատն ու հողը միասին հանուած կանանչ չայրի մասնիկ :

ԶՈՐՈՒՈՐ – Շալակով չոր փայտ կրող կիներ: Շալակը կնոջ գործն էր:

ԶՈՒՆԱՅ – Գեղը հիւսուած առանց թելի կիներու բրդէ վերարկու, զոր քթոց կրելու ատեն կը հագնէին, շալակի ալ: Անկէ դուրս, բուրդի եւ մազի առատութեան մէջ, նաեւ մուշտակի, կը սառնէինք ձմեռը, տղէս ու յետամնաց:

ԶՈՒՇՏ – Շուտ, արագ: Վէ՛վ չուշտ, փարք կո՛ւշտ:

ԶՕԼԱՆՍ – Զախ:

ԶՕԿՈՒՐ ԲԻՐ – Բանելու տեղը կորցուած դաւազան:

Պ

ՊԱԼՏԸՐՃԱՆ – Լուրիկ, տոժաթես:

ՊԱՀԱՆԿ – Պատ շարելու ատեն մէջը դրուելիք փայտ, հաւանաբար պատը ուղիղ շարելու՝ թէ հաստատուն ընելո՞ւ համար: Այո, ՀԱՅԿԱԶԵԱՆ անգուղական ԲԱՌԱՐԱՆԻՆ մէջ պահուած է այս բառը, բայց մեր գեղը առօրեայ էր, դործածական:

ՊԱՃ – Լուրբայի, սիսեռի, եւայն հունտ պարունակող մասը. Տափ-դեղի (տախտեղ) պամ:

ՊԱՃԻԿ ԸՆԵԼ – Պառկիլ, քնանալ: Պանի՛կ ըրէ, գառս:

ՊԱՏՏԱԿ (ՊԱՏՏԸԿԵՐ՝ յողնակի) – Պատի տակ: Պատուրկե՛րք մնաս, անէ՛ծք է: Ուշադրութիւն ըրի՞ք որ գեղացին բառերը առանց յողակապի կը շինէ: Որովհետեւ երկարաբանութեան ժամանակ չունի քաղքցիներու պէս:

ՊԱՐԿՈՒԿ – Ծիրան:

ՊԱՐԿՈՒԿԷՆԻ – Ծիրանի ծառ:

ՊԱՐՕՇ – Գորակ, պղնձէ ջուր կրելու աման՝ աղբիւրէն:

ՊԱՔԳԼՈՃ – Պահք չբռնող:

ՊԵԿԻՐ – Բեռնատար ձի:

ՊԵՏ ԸՆԵԼ – Քերոցով, յետոյ ալ մազէ սիլաճակով, անասուններուն մօրթը քերել ու մաքրել: Գնա՛ իշուսն պե՛տը ըրէ: Անասունը խնամք կ'ուզէ, քաղքցի՛ միւսիւներ:

ՊԵՐ – Հօտը մէկտեղ հաւաքել՝ կթելու համար:

ՊԵՐ, ՊԵՐ, ՊԵՐ – Ոչխարը պերդլուխ քշելու յատուկ բացազանչութիւն, իրբեւ թէ անոնք հասկնային այդ բառերը: Բայց ոչխարը վաղելով կու գայ, երբ ուլը կամ դառը բռնած մօրը անունը կանչես, որպէսզի գայն ծծցնէ: Իր անունը կը հասկնայ: Մահադելէ առաջ սոքերով պառկելիք տեղին քարերը կը մաքրէ: Ես հովիւ էի, գիտեմ:

ՊԵՐ, ՊԵՐՏԵՂ – Այծերը կթելու բացօթեայ տեղ:

- ՊԵՐԳԼՈՒՆ - Պերլին ծայրը, ուր տանտիկինները կը նստին կթելու: Հովիւները կենդանիները մէկիկ-մէկիկ առանց վախցնելու կը մղեն դէպի կթուարները:
- ՊԵՐԸ ԵՐՔԱՎ - Տէ՛ դեղէն լերան գոմերը երթալ՝ այծերը կթելով լորիկունը տուն դալու համար, երբ տակաւին օպա ելած չեն:
- ՊԵՐՔԱՐ - Այն քարը, որուն վրայ տանտիկինը կը նստի պերտեղը կթելու համար:
- ՊԷՏ - Տգեղ: Պէ՛տ շուն:
- ՊԷՐԵՈՒՐՏԱՐ ԸՄԱՍ - Գոհունակութեան, շնորհակալութեան արտայայտութիւն:
- ՊԸԶ - Մէջ: ՊԸ՛գ քրէ, տպաւ:
- ՊԸԶԱԼ - Ինքզինքին վրայ կլոր-կլոր, արագ-արագ դառնալը: Գոքի պէս կու պըգայ: Բզգալ(?):
- ՊԸԼԱՍ - Պոչատ: Պոչը կտրած կամ պոչը կարճ անասուն:
- ՊԸԼԸԻԻԼ - Ըմբշամարտի: Եկօ հետք մեյ մը պըլլելիք, մէյիք վէ՞՞վ կու յաղթէ:
- ՊԸԼԻԿ - Երեխայ նորածին, գոր ծրարի պէս կը փաթթեն:
- ՊԸՃԸԼԻԿ - Շատ պրտիկ: Ըս աղջիկը պընըլի բամ մըն է, այսինքն մանրակազմ:
- ՊԸՃԸՌՔԵԼ - Հաւին ոտքերով հողը քրքրել: Փոխաբերաբար՝ տան մէջ բան փնտռել(?):
- ՊԸՄՊԸԶՈՒՆ - Մինչեւ բերանը լեցուն աման: Պըմպըգուն քրի:
- ՊԸՊԸԼԻԿ - Ուռնիի, ծառի կոկոն: Ծառները պըպըլիք քն:
- ՊԸՊԸԼԿԱՄԾ - Նոր բացուի սկսած տերեւ: Ծառները պըպըլիք քն:
- ՊԸՌԿԱՄԾ - Ծառին կոկոնները սուսած(?):
- ՊԸՌԿԸՆԵՐ - Շրթունքներ:
- ՊԸՌԿՈՒՔ - Շրթունք:
- ՊԸՏՈՒԿ - Անասունի ծիծ, ոչ թէ ուրը: Յողնակին՝ պըտկըներ:
- ՊԸՏՊԸՏՈՒՆ - Սեւ-ճերմակ կլոր բիծերով ծածկուած կենդանի:
- ՊԻՆՁ - Բթի ծակ: Կովը պընչերը փաշատեց:
- ՊԻՇԻ - Իւղի մէջ եփուած բոլորակ հացիկ:
- ՊԼՈՒԶ - 1. Կապուտաչուի(?):
- ՊԼՈՒԶ - 2. Փետայութեան կամ հարսնութեան դօտի, թրապուղ:
- ՊՃՈՒՌՔ - Հաւին ոտքերով հողը քրքրելը:
- ՊՈՂԵԼ - Ախտին աղբերը աւելի, մաքրել: Ախտը պոզեցի՞ր:
- ՊՈՂԼՈՏ աղբուր - Գեղին միակ աղբիւրին անունը, տունխ քով կար վերի Աղբուր, բայց դեղէն դուրս էր: Կար Պալաղբուր, կամարը սիրուն, բայց միշտ ցամաք էր:
- ՊՈՅՏ - Պուտուկ(?):
- ՊՈՌՁԵԼ - Բառաչել:
- ՊՈՒԿ - Խռչափող, կոկորդ: Պըկիմ արխմեցի, քիշ մնաց խեղդեյի պիտի:

- ՊՈՒԿԻ – Ծառի կեղեւէ սուլիչ:
- ՊՈՒՂ – Շոպի:
- ՊՈՒՌՅ – Մորճեր, մատղաշ ճիւղեր, զոր ձմեռը, արաֆի (յարդի) պակասէն, կենդանիներուն կը կերցնէինք:
- ՊՈՒՏԿՈՒՔ – Պուտուկին տակը դրուելիք դուրուկ հողէ թափսի, որ պէտքի պուտուկը նտաի ու չկործի:
- ՊՈՒՏՈՒԿ – Կերակուր եփելու հողէ աման՝ անկերով, ձուածեւ:
- ՊՈՒՐՈՒԿ – Տառատող, բարակ քօղ:
- ՊՈՒՐՈՒՌՈՒՐ – Տառատող հազած կին: Պողլոտ Աղբուր ատանկ սուրբ մը կար, որ մթնշաղին կ'երեւար: Մայրս դայն տեսեր էր...
- ՊՈՔ – Սոխին գլուխի կանանչ ճիւղ թէ տերեւները:
- ՊՏՂՈՒՅ – Երեք մտաի ծայրերով բռնելու չափ փոշեղէն:
- ՊՕԹ – Առանց ունկի հողէ աման, որով դաշտերը ջրոտ կերակուր կը տանին աշխատաւորներուն:
- ՊՕՅՏԱԵ – Անգուակ կին:

Ձ

- ՁԱԵ – Տան մէկ անկիւնը լողնալու կամ դուրերը դնելու տեղ, ուրկէ պատին մէջ ծակէ մը ջուրը փողոց կը վազէ:
- ՁԱՂԱՍՔ – Ջաղացք:
- ՁԱՂՁԻՊԱՆ – Ջաղացպան:
- ՁԱՂՓ – Շառ յողնած, ջարդուփշուր: Ջաղի բմ էղեր:
- ՁԱՂՓ ԸՆԵՂ – Կտարակ: Հիմա քեզ ծեծիմ, ջաղը կ'ընիմ կու:
- ՁԵՐՄ – Մալարիա. Ձերմը բռներ է:
- ՁԵՐՄԸ ԲՈՆԵՆԼ – Ձերմէ հիւանդանալ:
- ՁԸՐՈՒԱԹՔ – Մէղ, չէս:
- ՁԸՐՁԸՔՆԵՆԼ – Ամառը դետինը ջուր ցանել՝ զովանալու համար: Աղ-ջի՛, տունը ջրջրբնէ, չարտախը ջրջրբնէ:
- ՁԸՐՎԸՐԱՅ – Հալած եղին մէջ ջուր կը լեցնեն, վրան հակիթ կը կտարեն, հացով կ'ուտեն: Կնի՛կ, ջրբվրայ մի եփէ:
- ՁԻԼ – Մրունք:
- ՁՂԱԵՈՏ – Ջղուտ տերեւներով բոյս, ջուրը սիրող: Դեղ է:
- ՁՈՒԵՏ – Ջոյք:
- ՁՈՒՐ ԶԸՐԸՆՏԱՏ – Ամէն կողմով լաւ թրջած: Ջուր ջրբնատաւ է-դայ:
- ՁՐԱՐԲԻ – Ջրուղ արա:
- ՁՐԻ ՃՆՃՈՒՂ – Ջրերու եղերքները ապրող ճնճուկ:
- ՁՐՄՈՒԿ – Ջրի մուկ:

Ռ

ՌԱՓԱՏ, ԸՌԱՓԱՏ – Հաց կողելու գործիք, շինուած ծառի ճիւղերէ, վրան լաթ անցուած, կլոր, ուսած փորով, եւ կոթ բռնելու:
 ՌԸՏԱՄ – Արօրին ա՛յն մասը, որուն վրայ խոփը կ'անցընեն որ վարեն:

Ս

ՍԱԲԻՆԸ դնել – Կաշին մախրըջուրի մէջ դնել որ հոտի ու մազերը թափին: Փոխաբերաբար, մէկը լաւ մը տփել: Հիմա քեզ սարիւնը կու դնիմ, հիմա քեզ ստակալի կու ծեծիմ, եաթախը կու ձրգիմ:

ՍԱԼԱ – Տափակ դամբիւղ: Հացին սալան: Սալա մի հացը կերաւ:
 ՍԱՄԷԶՈՒԱՆ – Սամին կապելու չուան, անշուշտ մազէ կամ բուրդէ:
 ՍԱՄԻ – Փայտ, որ լուծին մէջէն անասունին վիզը կ'անցընեն:
 ՍԱՄՓԱՏ – Սանտ ծեծելու փայտ:

ՍԱՅԱ – Կիներու վրայի հագուստ, մեր դեղի տարազ. ուղղահայեաց ճերմակ ու կապոյտ գիծերով լաթ, որ մինչեւ տրեխները կ'երկարի: Քղանցքին ծայրերը վեր կը քաշեն ու դօտելտեղը իրարու կը միացնեն: Անոր վրայէն կ'անցընեն ծամկապը, դօտին: Շապիքը մինչեւ սոքերը կ'երեւայ: Առջեւէն կը կապեն միշտ վալայ մը: Ճերմակ չապիկին կարմիր փարուեղները երկու կողմէն կ'երեւան:

ՍԱՆՏ – Կլոր ու մէջը փոս խոշոր քար, ուր ապրցու կը ծեծեն սանտի փայտով: Չորս հողի դէմ-դիմաց: Մէկ փայտը կ'ելլէ, միւսը կ'իջնէ համաչափ:

ՍԱՆՏԵԶԵՔ – Սանտին բոլորտիքը:
 ՍԱՆՏԵՐՔ – Բուրդ դղելու գործիք: Տախտակ, որուն մէկ ծայրը երկու մետաղէ սանտր գետեղուած են՝ իրարմէ քանի մը սանթիմետր հեռու: Բուրդը երկու ձեռքերով կը սանտրեն անոր վրայ, աղէկը դատ կը դնեն, օւձինքը՝ դատ: Չայն յետոյ փիլայի պէս դունտի կը վերածեն ու մէկ ծայրէն կը սկսին մանել բրդլամբիկով կամ քարմանով: Ճախարակ չունէինք:

ՍԱՌԱՏ – Խոշոր-խոշոր ծակերով մաղ՝ հող մազելու:
 ՍԱՌՏԵԼ – Սառառով մազել:
 ՍԱՎԱՆ – Շորիկ, խենթուկ, խելաց պակաս:
 ՍԱՎՐԱ, ՍԱԻԱՌԱ – Սրինդ:
 ՍԱՐԵՎ – Բանած սեկէ խուր՝ ամաններուն բերանը պոցելու, զոր չուանով ալ կը կապեն:
 ՍԱՐԿԱԿ ? – Ընտիր, գատուած, աղէկը: Սարկակ հաց, մաքի, ւծ:

- ՍԵԿ – 1. Գառան կամ ուլի կակղցուած անմաղ մորթի, զոր մանելու
ատեն սրունքին վրայ կը կախեն, սրպէսդի հաղուտոր ջմաշի:
- ՍԵԿ – 2. Մորթէ պատրաստուած կտոր, պօթին բերանը կապելու:
- ՍԵԻՆՈՆՈՒՏ – Թխադէմ:
- ՍԵԼՎԻ – Սօսի, բարտի:
- ՍԷՂԻԿ – Տափարակ. Սէհիկ պնակ:
- ՍԷՆԻ – Սեղան:
- ՍԸԼԵԼ – Սրել աչքերը, տնկել ականջները, լաւ տեսնելու ու լսելու
համար:
- ՍԸԼԸՄԵԼ – Երեխան խնամելով մեծցնել:
- ՍԸԼԻԿ – Կանանչ լուբիա:
- ՍԸԽԸՐԻԿ – Սրածայր:
- ՍԸԿԱՐ – Պատճառարանութիւն:
- ՍԸԿԸԹԻԼ – Մորթին թէթեւ մը արիւնելով ելլելը միտին վրայէն.
Բան մի չէ, մորթին արկըրըւեցաւ:
- ՍԸՄԸՆՏ – Պըլղուրը մաղելէ յետոյ տեղը մնացած նուրբ մասը: Ան
էր առտուան ապուրն ու նախաճաշը՝ հացով: Կը տաքցնէր:
- ՍԸՆԳԸԼՕԽ, ՍԸՆԳԸԼՈՒԽ – Խոյսակ:
- ՍԸՆԻԼ – Վարժուիլ:
- ՍԸՆԿԸՆՈՒԻԼ – Կառչիլ, շուլուելով ծառ բարձրանալ:
- ՍԸՁՍՂ կամ ԸՁՁՍՂ – Այսքան ատեն, այսքան ժամանակ: Սըչաղ է-
ղաւ, տախ հոս բմ: Սըչաղ ո՞ւր մնաց:
- ՍԸՊԸԼԻԿ – Սուր, տնկուած. Սըպըլիկ ակամջներ:
- ՍԸՊԸՐՏՈՒՔ – Այծի, մաքիի, երէի, նապաստակի, եւայն, աղբ,
թրիք:
- ՍԸՌԻՄ – Մաշած արեխէ քաշուած թեւ, արեխին ծակերը սըմելու,
որ է՝ հիւսելու:
- ՍԸՌՄԵԼ – Սըռիմով արեխին ծակերը հիւսել:
- ՍԸՌՄՈՒՆ – Սըմըւած արեխ:
- ՍԸՐԸԽ – Ձող: Երկայնահասակ մարդ:
- ՍԸՐԹԷՂԱՒ – Շառաղոյն կարմրաթեւ խոշոր թռչուն, որ ամառը մեր
երկիրը կու գար ու կ'ապրէր աղբուրներու շուրջ: Թրնա. Փլա-
մինկօն ըլլալու է:
- ՍԸՐՍԸՆԻԿ – Եփելէ յետոյ միւր հէլուայի պէս թափող ընտիը փա-
թաթէս մը: Սըբարիկ փաթաթէս:
- ՍԸՐՏԽԸՂԻԼ – Գանիլ, պժգալ, ստամոքսը խառնուիլ:
- ՍԸՒՈՐ – Ատոր:
- ՍԻԼԱՃԱԿ – Մաղէ կոշտ ձեռնոց, անասունները պետ ընելէ յետոյ ա-
նոնց մարմինը չփելու համար:
- ՍԻՆԿԻՐ – 1. Սրունք:
- ՍԻՆԿԻՐ – 2. Բանջարի տերեւին երակը, տերեւին մէջիլ ցօղունը, զոր
թթու կը դնէին ամառը:
- ՍԼԱՔ – Արաը կորտելէ վերջ մնացած սրածայր կորի մը:

- ՍԵՏՈՐԾԵԾԻԶ – Մխտոր ծեծելու գործիք՝ փոքր սանաթի նման :
- ՍՈՂ – Սրունք : Անվարտի , սուրբը բարտի : Հնգուղն ալ կ'ապրի , բ՛ւր սուրբը բարակ բն :
- ՍՈՅ – Սանտր :
- ՍՈՒԽԱՑ – Իւղի մէջ կարմրցուած , ջարդուած սոխ , ապուրին վրայ շեցնելու : Ապուրին սոսխացը բրի՞ր :
- ՍՈՒԶԷԿ – Բարակ լաթէ սրածայր պարկ՝ կաթ եւայն սուզելու , մէջի աւելորդ բաներէն մաքրելու համար . քամոց :
- ՍՈՒՍՈՒԿ – Սուլիչ : Մենք զայն ճիւղով կը շինէինք :
- ՍՈՒՐՍ – Անպայման տորոնը ըլլալու է : Արմատը կու տայ կարմիր ներկ , որ ա՛լ չ'ելլեր : Անլեխները անով կը ներկէին : Գեղին դիմացը լեցուն էր :
- ՍՐՏԿՈՏՈՐ – Սգաւոր :
- ՍՕՌԻՆՆԻՆ – Փրնս . թանառիս : Ջուրերու վրայ ածող ծառ մը , որուն ուղիղ փայտէն լաւ մասսա կը շինուի :
- ՍՕՍԱՄ – Վայրի աղցան մը :
- ՍՕՍԸՆԾԻԼ – Մրկելով , աղնծուելով չորնալ :

Վ

- ՎԱԼԱՑ – Գողնոց :
- ՎԱՅԸ տալ – Այսպանել : Վայս կու տան , դիս կ'այսպանեն :
- ՎԱՆ – Արտ քաղելու ատեն քանի մը հնձուորի վերցրեցած քաղելիք բաժինը : Այսպէս , քաղուորները կը մրցին իրարու հետ : Քաղուորները կիններն են : Գործիքը՝ մանկաղ : Գերանդին անծանօթ : Քրտերը դերանդիով կը քաղէին : Անոնք կը գործածէին նաեւ սայլ : Մենք՝ ոչ : Անոնք չոր խտրը կը դիզէին արտերուն մէջ Եւրոպացիներուն նման : Մենք՝ ոչ : Քրիստոնեայ ըլլալը կը բաւէր մեզի . . . :
- ՎԱՌԵԿ – Վառեակ :
- ՎԱՐ ըլլալ – Ողջ ըլլալ : Մարդ տանա վա՞ր է , այսինքն թէ ո՞ղջ է :
- ՎԱՐԸՍՊԵՂԾԻ – Վայրի ստեղծիչ : Վայրին կար , մշտնուածը՝ ոչ :
- ՎԷՎ – Ո՞վ : Մանչ բտ մարդը վե՞վ է , այսինքն ո՞վ է :
- ՎԷՐՏԵՂ – Ո՞րտեղ :
- ՎԸԼԱԼ – Լուալ :
- ՎԸՂԸՌՏԱԼ – Կատուին մլաւելը :
- ՎԸՌՁԱՆԱԼ – Չափէն աւելի ջրուելով մեծցած բոյս , որ պտուղ չի տար : Նաեւ կաթին թթուելով , փրփրելով ամանէն դուրս թափիլը : Կաթը վըռչացնի է :
- ՎԸՐԴԸՏԱՆ – Ոտքի վրայ կեցած :
- ՎԸՐԹՈՒՈՒՆ վրայ – Ոտին վրայ : Եղած տեղը : Վըրթում վրայ դէս-ձաւ :

- ՏԱԿ - ձափնդեղ :
- ՏԱՂ - խոտ մը :
- ՏԱՂԱՆ - Եռոտանի փայտ , ուրիշ կախելով կը հարեն խնոցին :
- ՏԱՆՈՐԳՈՒՔ , ՏՈՒՆՈՐԳՈՒՔ - Տունով-տեղով , որդիներով :
- ՏԱՏԱՇ - 1. Տատասկ :
- ՏԱՏԱՇ - 2. Տատասկ , տաշուք :
- ՏԱՐԾՈՅ - Հացերը դիզելու տեղ : Հացին տարծոցը , ուր կը տարածեն զանոնք :
- ՏԱԻԼՐՃՈՒԿ - Բանուած , կակուղցուած մորթէ տիկ :
- ՏԱՓԻԼ - Գետնի վրայ պառկել , կծկուել՝ չերեւնալու համար : Տափել՝ , այսինքն պառկեր , ծածկուեր :
- ՏԱՔԴԵՂ - Պղպեղ կարմիր :
- ՏԱՔԱՐՏԻԼ - Միրահարիլ : Խաչըկոնց Գիրգորը Քոչնեց վարդամուշիմ տախըքտեր է :
- ՏԵՅՂԱ - Ահա՛ , ահա՛ւասիկ : Տեյիս հո՛ն է հորքը :
- ՏԵՅՂԱՆԻ , ՏԵՅՂԱ ՆԻ - Ահա հո՛ն է :
- ՏԵՆԱ - Ան , անիկա :
- ՏԵՒ - Կաղնիի տերեւոտ ճիւղեր :
- ՏԵՒՈՅ - Կաղնիի տերեւոտ ճիւղերը աշունը գեղ կը կրեն ու դէզ կը դնեն : Ձմեռը ուլերուն ու մաքիներուն սնունդ : Քրտերն ալ նոյնը կ'ընէին :
- ՏԵՒՈՅՏԱԿ - Տեւի դէզերուն տեղը : Վասնզի բոլոր դեղացիք նոյն տեղը կը դնէին իրենց տեւոցները , քով-քովի : Ձմեռը անոնցմէ է որ գոր կը հանէինք՝ խաղալու համար :
- ՏԵՓՈՒՐ - Կլոր , գոգաւոր , մեծ պնակի ձեւով փայտէ գոգաւոր գործիք՝ ցորեն , ապրցու եւայլն ծուելու համար :
- ՏԷՁԿԷ - Խենթ , շոշորթ , յիմար :
- ՏԷՂԱՆ - Անկողին :
- ՏԸԳԼԱԼ - Տեղէ մը գաղանի նայիլ՝ առանց տեսնուելու :
- ՏԸԶՏԸԶ - Փայտէ փոքր նուագարան մը : Թանթրուենին , որուն մենք աղածի կ'ըսէինք , ճիւղ մը կը կտրէինք , անոր մէջի ծուծը կը հանէինք , մէկ ծայրը կը կապէինք սիկառէթի թուղթ մը , վրան ծակ մը բերաննիս առնելով կը փչէինք , արդ-արդ ձայն մը կու տար : Մանկական խաղ : Ո՞րք են հիմա այդ մանուկները :
- ՏԸԿԷ ԹԹՈՒ - ձափնդեղի թթու :
- ՏԸՊԸՐԿԵԼ - Հրեւ , հրմշակել , տրորել :
- ՏԸՌՏԻԿԸՆԵԼ - Աքացի , կից գարնելով փախչելը իշուն :
- ՏԸՐԸՍԵԼ - Շտկել , ուղղել : Արօրձողք ծուռ է , տրքատէ :
- ՏԸՐՈՒՍ - Շիտակ , ուղիղ :
- ՏԸՐՊԱԿ - Տրցակ , կապոց :
- ՏԸՒՈՒԿ - Տուող կին : Ըս կնիկը տըլուկ է : Սէր կը ջամբէ :

- ՏԻՐՈՒԹԻՒՆ – Պաշտպանութիւն, հոգ տանիլ: Տանը տիրութիւնը բրէ:
 ՏՈՊԱՃ – Եզան, կտիլ վէպ, որ խոշոր կ'ըլլան:
 ՏՈՏՈՋ – Երկար: Խիշարը տոտող կ'ըլլայ: Տոտող պոյգ շո'ւնն ուտէ:
 ՏՈՅՏՈՆ – Կացիներ դուրս, կացիներն բուժ կողմը:
 ՏՈՒԼԼՈՒ – Փոքր սրինդ լեզուակով:
 ՏՈՒՐԲ – Արմատով հանուած բոյս:
 ՏՈՒՐԸ տալ – Դրդեղ: Ի՞նչ տուրք կու տաս, որ հարսը ծեծէ:
 ՏՈՒՐԻԿ – Կոնակի պարկ: Ճիշդ Գերմանացոնց ՌՈՒՔՍԱՔը:
 ՏՕԼԱՄԱՃ – Դարձգարձիկ ճամբայ:
 ՏՕՌՈՒԵ – Գի:

Յ

- ՅԱՄԱՔ ՀԱՅ – Մի'այն հաց, առանց ուրիշ բանի: Յամաք հա՞ց կ'ուտես կու: Խաթելի չուսի՞ս: Վա՛խ ետլրում:
 — Ի՞նչ ընիմ, մարս, քուրս, ֆուխերէ յընք:
 ՅԱՅԵԼ – 1. Ամանը լուարէ յետոյ զայն մաքուր ջուրով ցողուել, կամ լուացուած լաթը մաքուր ջուրէ անցընել:
 ՅԱՅԵԼ – 2. Յուել:
 ՅԱՆ – Յանք:
 ՅԸՅՆԵԼ – Շուներուն ծնիլը: Շունը ցըյներ է: Փոխ. հայհոյութիւն. Շան ցըյնած:
 ՅԸՌՏՈՒՆ – Զաղացքին վարը, ջուրը դուրս ելլելիք տեղը:
 ՅԸՐԴԷՀԱԻ – Թուչուն:
 ՅԸՐԴԷՊՏՈՒՂ – Գիին կոները: Հաղի դէմ դեղ է կարմրածը՝ ուտելով:
 ՅԸՐԴԻ, ՍԸՐԹԻ – Գի:

Փ

- ՓԱԼԱՍ – Հին լաթի կտոր, զոր կը դնեն ստամուած արեխի մէջ, այնին վրայ ու կը հաւնին: Ահա այսպէ՛ս կ'ապրէինք մենք...:
 ՓԱԾԵՂ – Փայծաղ:
 ՓԱԶԱ – Վարտիքին ոտքին վրայ հասած տեղը:
 ՓԱԶԱՏԵԼ – Քաշեղ-պատուել: Հիմա բերանդ կու փաշատիմ:
 ՓԱՍԱ ընել – Ուժով վարնել: Փասա ըրի: Մանչ, փասա՛ ըրէ, սատկըցուր:
 ՓԱՐՈՒԵՋ – Շապիկի մաս մը:
 ՓԱՐՏԵԼ – Շարժել, երերցնել: Տեյիս, ճէռուին փարտելով կու գայ:

- ՓԵԹԱԿ - Խոշոր ամբար ալիւրի եւ ցորենի :
 ՓԷՌԱՏ - Ակոսները նօսրացած , թափած :
 ՓԷՐՓԻՆ - Ծաղիկի դէմ պատուաւոտ :
 ՓԸԶԵՆ - Ծայրը փնջաւոր խոտ մը :
 ՓԸԼԵՆ - Հասուննալով կակուղցած պտուղ : Փլիխ խնձոր :
 ՓԸՆՆԵԼ - Շան քաքնելը : Շուռ փրճներ է հոս :
 ՓԸՆՆԻԶ - Բզուկ շինելու փայտէ գործիք :
 ՓԸՇԵԼ - Ածուքներուն չորջր փշէ պատ քաշել , ծորենի , մասրենի ,
 զոր խեղճ հարսները շալակով լեռներէն կը կրէին :
 ՓԸՌՓԸՌԱԼ - Մորթուած թռչունին հոգեվարքի դալարումները , երբ
 դուրսը կտրելէ յետոյ դայն մէկ կողմ նետեն :
 ՓԸՍՏԵԼ - Մահիլ : Ուխտ փքստեց , ինկայ :
 ՓԸՍՏՈՒԽ - Յետոյք : Փքստուխդ կու կարմրցնիմ , հա՛ :
 ՓԸՍՏՈՒԿ - Մահելիք տեղ :
 ՓԸՍՏՈՒԿ ԲԵՐԱՆ - Անդադոնապահ :
 ՓԸՐՓԸՐԵՄ - Ածունեքը աճող ընտիր բանջարեղէն մը : Թթու կ'ըլլայ :
 ՓԻԼԱԼԱՅ - Ապակիի պէս թափանցիկ բուռ քարի երակ , զոր պատու-
 հաններուն կ'անցընէին ախոս ու մարապ :
 ՓԻԼԱՅ - Խոտը քաղելէ յետոյ կը պլորեն չուանի պէս ու կը դար-
 ձնեն քանի մը անգամ , մէկ մեթրի չափ , որպէսզի տուն կրե-
 լու տան չթափի :
 ՓԻՆ - Շան քաք : Մինակ շուն չէ , գայլ , աղուէս , եւայլն : Բայց ո՛չ
 արջը : Անոր համար քաք կ'ըսէին , քանի որ մարդու աղբի կը
 նմանի :
 ՓՈՂԱՆ - Փողոց : Յողնակին՝ ՓՈՂԸՆՏԻ :
 ՓՈՌՂԱԿ - 1. Զուրի հողէ խողովակ :
 ՓՈՌՂԱԿ - 2. Քիչ սխար ունեցողը , որ դանտնք հովիւ ունեցող տան
 մը կը յանձնէ , անոր փողոզակն է : Օխշարս փողոզիկի տուի :
 ՓՈՐՈՎ - Յղի անասուն : Մեր կովը փորով է :
 ՓՈՐՏԷՆՔ - Փորի վրայի բարակ միտերը : Աս միս չէ , փորտէնք է :
 ՓՈՒՇ-ՓՈՒՇ - Միտս վրաս փուշ-փուշ կ'ըլլայ : Յուզումէն :
 ՓՈՒՐ - Կեղեւ :

Ք

- ՔԱԼԱՄ - Կաղամբ , պարսկերէն է :
 ՔԱՄԱԳՈՒ - Միջօրէն եփել շողիով : Կրակին ալ կ'ըսուի քամազով
 կրակ :
 ՔԱՄՄԱ - Կովին ծննդական դործարանին դուրսի մասը :
 ՔԱՄՄԱՅՈՏ - Վաւաչոտ , կնամուլ : Քաւմայոտ շո՛ւն :
 ՔԱՐԷՔԸՆՈՇ - Վայրի բանջարեղէն մը :

- ՔԱՐԻՇՔ - Ցորենին մէջէն գատուած խիճերը, որոնց մէջ շատ քիչ ցորեն մնացած է, զոր կու տան հաւերուն :
- ՔԱՐԻ-ՋԼՐԻ ԸՆՆԷԼ - Աստին-անդին հակածելով ու փախցնելով փճացնել : Քարի-ըրի էղանք : Թուրքերը մեզ քարի-ըրի բրին :
- ՔԱՐԿԸՏՈՑ - Քարերու գէջ, արտերուն մէջէն գատուելով անոնց թումբերը դիզուած, զոր մեր կարճ խելքով հին շէնքերու մնացորդ կը կարծէինք :
- ՔԱՐՄԱՆ - Քառաթեւ բուրդ մանելու գործիք :
- ՔԱՓՇԱՔԱՐ - Խարամ . քարը վառելով երկաթը մէջէն հալեցնելէ յետոյ մնացորդ աւելին անպէտ :
- ՔԱՔՄԵՋԸՆՆԷԼ - Աւրել, աղտոտել : Ածուք քաֆ մեջ բրբր է :
- ՔԱՅ - Եփ ելած միսին վրայի փրփուրը :
- ՔԵՇՆԵԼ - Գետնին քսելով քաշել-տանիլ :
- ՔԵՇՆԸԻՒԻԼ - Գետնին քսուելով առաջ երթալ առանց քալելու :
- ՔԵՐՈՑ - Երկաթէ գործիք կենդանիներուն պետը ընելու, անոնց մարմինը քերելու :
- ՔԵՔ - Աչքըծակ : Ուտող ու չդոհանալով անօթի մնացող :
- ՔԷԼԷՓ-ՔԷԼԷՓ ԸԼԼԱԼ - Բանէ մը ազդուելով սաստիկ տանջուիլ : Սիրաս քէլէփ-քէլէփ էղալ :
- ՔԷԼԷՔ - Սեխ :
- ՔԷՎԷՔ - Թոթովախօ՞ս թէ թեթեւամի՞տ :
- ՔԷՔԷՃ - Թոթովախօս :
- ՔԸԲՊԸՐՈՒԿ - Փոքր, շնորհալի :
- ՔԸԹՆՈՑ - Պախուրցին քթին վրայ նստող մասը :
- ՔԸԹՈՑ - Ճիւղերով հիւսուած կողով՝ կոնակի վրայ աղը կրելու համար :
- ՔԸԹՈՒՆԷԼ - Հաղուստին ու մազերուն մէջ ոջիլ փնտռել : Եկօ գօխք քքուիմ :
- ՔԸԹՈՒԸՏԻԼ - Վրան-դլուխը ոջիլ փնտռել : Գնա քքուրտէ :
- ՔԸՌԷԼԱՆ - Ամենէն ժողովրդական խաղը մեր գեղին : Ահա՛ւասիկ : Կալը : Կալին մէջտեղ բաւական խոշոր քար մը : Տղայ թէ երիտասարդ, կը բաժնուին երկու խումբի : Չորս-չորս, վեց-վեց հոգի, նոյնն է : Ըսենք չորս : Չորս հոգին պէտք է քարը պաշտպանեն, որպէսզի միւս չորսը զայն չառնեն իրենց ձեռքէն, եթէ ոչ խաղը կորսնցուցած են : Եթէ չորսէն մէկն ու միւսը յաջողի քարին հասնիլ, պաշտպանողները խաղը կորսնցուցած են : Այն ատեն յաղթողները կը պուան, «Քըռլան», ու իրենք կ'անցնին քարին պաշտպանութեան, միւսները կը փախչին : Հակառակը, եթէ պաշտպանողներէն մին հասնի փախչողներէն մէկուն ու ձեռքը միայն անոր գայցնէ, խաղը կը կորսնցնեն փախչողները : Այն ատեն պաշտպանողները յաղթական կը սրուան «Քըռլան» ու քարը կը յանձնեն նախկին փախչողներուն :

- ՔԸՌԻԿ – Մառնեբուն, մասնաւորապէս կաղնիներուն նոր բացուած մաաղաչ տերեւները: Ուրբուն ալ ջրով քոխի կերցնելու է:
- ՔԸՍՈՒՐ – Կիններուն տնային աշխատանքները: Աւելի, լուացք ընել, ամէն ինչ: Քաւարդ ըբի՞ր, այսինքն տան դործերդ լմնցուցի՞ր:
- ՔԸՍՏԸԼ – Հին, մաշած, անպէտ եէմէնի:
- ՔԸՐԳՈՒՆ ԿԱԼՈՅԸ – Ատ դործը ըլլալիք չունի: Եթէ Քուրաը կալ ունենայ, այսինքն ցորեն հանէ, դուն ալ ատ դործը կը լրացնես: Այսինքն ըսածդ անկարելի բան է:
- ՔԸՐՄԱՆ ՔԸՍՏԻԿ – Կնոջ մը արուած աւելորդ (զեղի) անուն:
- ՔԻՆՃ – Օճախին առջեւի երկու սուր քիթերը:
- ՔՈԶ – Ոջխարներու բնակած տեղը լեռներու գոմերուն մէջ: Ըսինք թէ նոյն տեղը հովիւին բնակած բաժինը կը կոչուի խընճիկ:
- ՔՈԹՈԹ – Արջի ձագ: Առջում քոթաթը, ինչպէս շամ լակոտը:
- ՔՈԼԻԿ – Առանց կոտոչի այծ: Այս բառը նորայր Բիւզանդացին գործածած է իր հռչակաւոր բառարանին մէջ:
- ՔՈՌԻՏ – Գարունը ծնած ուլը աշունը կը դառնայ ու կը կոչուի քոռիտ:
- ՔՈՒԼԵԹԷ – Պաշլըդ (տանկերէն):
- ՔՈՒԼՊԱ – Կարճ կոթով փոքր, թեթեւ փեռատ, ածուքները մշակելու:
- ՔՈՒԼՊԵԼ – Քուլպայով հողը փորել, գաղձերը հանելու, բոյսերուն շուրջ հողը քրքրելու, որ լաւ աճին:
- ՔՈՒՇՄԱՍ – Յորենի արտերուն թշնամի համով եւ շատ տարածուած աղցան մը, որ հում կ'ուտուի: Տանկերէն եէմիք:
- ՔՈՒՔՈՒՐՈՒՄ ԸԼԼԱ – Ջարդուփշուր ըլլալ շատ յոյնէլէն: Քուբուրում էգայ մնացի:
- ՔՕՄՆԵԿ – Քիթը կախ հոս-հոն չըջող: Քօսնեկ-ֆօսնեկ կու պարսիս ըսօր-ըմօր ետեւէն:

Օ

- ՕԳՈՒՆ – Մօրմէն ծնելէն ի վեր, ի ծնէ, ի մօրէ: Տանկերէն՝ անատան: Օգում կուշտ ըմ, այսինքն բնաւ անօթի չեմ:
- ՕԼՈՐ – Գաղտնի, ծածուկ տեղ:
- ՕԼՈՐԸ ԿՈՆԵԼ – Գաղտնի տեղ տանիլ: Օլորը կոխեց, ծեծեց:
- ՕԼՈՐԸ ԿՈՐԾԵԼ – Ոլորել, տեսողութենէ հեռանալ, աներեւութանալ:
- ՕԼՈՐՈՒՆ – Ոլորուն: Ոլորուած թել: Բայց ինչո՞ւ «Ո»ով կը դրենք: Որովհետեւ այդպէս կը հնչէին: Իսկ մեր դեղին հնչո՞ւմը... «Ամենահին եւ հարազատ հայկական հնչումն է» ըսած է այդ մասին բանաստեղծ եւ բանասէր Եղիշէ Արք. Դուբեան:
- ՕԵԼԱԻՈՒԿ – Լաւաչ բանալու կլոր փայտ:

- ՕԶԻԿ – Գլխու անտանելի ցաւ : կիմէ օճիկս բունեց :
- ՕՊԱ – Տաճկերէն՝ եայլա : Կաղնիի ցախերով, տերեւներով շինուած վրան, ուր ամառը եայլածիները բնակելով ոչխարը կը կթեն, եղ, սեր, պանիր կը պատրաստեն :
- ՕՌՁԻՆՔ – Բուրդը սանտրուելէ յետոյ սանտրին բերանը մնացած աղտոտ, կարճ բուրդ, ուրկէ չուան, մարտո եայլն կը պատրաստեն :
- ՕՍՏԸՌՈՒՏ – Ոստոտ, ոստերով լեցուն լիայտ :
- ՕՏԱ – Հիւրասենեակ :
- ՕՐ – Որ :
- ՕՐԱՆ – Որայ, հունձք :
- ՕՐԹ – Որդ :
- ՕՐՀԱՐՍԱԿ – Կէսօր : Օրհարակ էղաւ, հացերմիս ուտիմք :
- ՕՐՃԱԼ – Որոճալ :
- ՕՐՄԸՆԾԵՂ – Ծիղ, որովի ծղոտ :
- ՕՐՆԵԼ – Որան կալին վրայ համաչափ ցրուել՝ կամնուելու համար : Կալը օրմեցանք : Վաղը կու կամնիմք :
- ՕՐՕՐ – Քանի, դեռ, ինչքան ատեն որ, մինչեւ տակաւին :

Յ

ՖԸՌԻԿ – Նոր բացուող, տերեւ տուող կաղնի : Ուկերում ֆռիկ ըրիմք, ախինքն ուլերուն կաղնիի թարմ, նոր բացուող տերեւ կերցուցինք :

Թերեւս յաւելուած մը ունենամ ցիրուցան, գոր հաւաքելու է :

Ախտո՛ս որ այդ յաւելուածը շիրցաւ պատրաստել՝ վերական մահուան պատճառաւ :

ՀԱՅԿԱՌԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՅՈՒԱԾՔՆԵՐ

Աղի՛մ որ չի հոտիս : — Պոյն երկան , խելքը կարճ : — Ուզողին մէկ երեսը սեւ , չի տուողին երկու երեսը սեւ : — Իմ քաշածս սեւ օձը ծակը չի քաշեր : — Շո՛ւն ըլլամ օր (երդում) : — Խենթն ըսաւ , խեղօքն ալ հաւտաց : — Անօթի շունը չի հաջեր : — Ածան հաւը կազրճան կ'ըլլայ : Մուրա՛մ , գուրամ : — Պիտի խէզզուիս նը ջուրին խորունկ տեղն ընարէ : — Սակաւապէտ դեղացի մը ուրիշին հիւր գացած ըլլալով՝ պայթելու աստիճան կ'ուռէ : Տուն դարձին կը հիւանդանայ : Տնեցիք կ'ըսեն իրեն . «Երգը ուրիշինն եր նը , մարապը մերն եր : Ինչո՞ւ ըտքան կերար» : — Կ'ըսէին . «Եկօր քուանը խաղանք : Եկօր հարօրդունկուը խաղանք : (Միշտ «ը»ով : Երբեք չէին ըսեր , քոյան խաղանք , հարօրդունկու խաղանք) : — Իչուն բէնն օր ծօյլը չըլլայ նը , դարուերին չ'ելլեր : — Խլլտտին ցուրաը մուհանա : — Վէ՛լ շուշտ , փորը կուշտ : — Ապուրը ինքիք քմոցը թող եփի : — Բերնովս ուզիմ , օրո՞վ ուտիմ : — Ըզունկ սենեցողը դլօխը կու քերէ : — Անօթի փորուց : — Արեւը կործեցաւ : — Արեւը մարը մտաւ : — Կեսօրէն ետքը բարիբրկուն կ'ըսին : — Ժամուն չեն ելլեր տեյի խաշը պուտո՞ւկը պիտի մնայ : — Նորէն ի՞նչ աղնձելիք կտաւտա ունիս : — Գլխուս արեւուս , առ ալ մարդ էղեր է : — Բա՛ր ճաթի : — Շատ շատ : — Շատ խաղ դիտիմ , ճանս չ'ելլեր : — Բարեւը բարսանց անցնի , ինք ցածանց անցնի : — Հէ՛ուս քէնէ , սուրը երեսէտ : — Օղջը բարի , էմմէն մարդ ինք իր տեղը : — Խենթը գազին վրայ անգամ մի կու քաքնէ : — Սուտը ուռէ՞ հացին կուտը : — Խոտտո՛ւկ կեր : — Անօթութունը հօդուն քար ըրած է : — Աստծու սիրուն : — Մա՛ս պատարապ : — Խա՛չ օր : — Հաւն որ հաւ է նը ջուր խմած տեղը Աստծու վեր կու նէյի : — Օձն օր օձ է նը ջուր խմած տեղը չ'աղույեր : — Կատուն կու լուսուտի . . . (ծափօթ՝ մը նամակ պիտի գայ) : — Օձը աղուն խլեզէն կ'աննէ : — Ջունը թեպուր-թեպուր թափի կու : — Շո՛ր հազնի , շար կ'երեւայ : — Երբ մաքիին սիրտը հանես՝ ձեռքտ աննես , ամբողջ հօտը մայելէն ու վզոտալէն ետեւէդ կը վազէ : — Հօդուս քար ըրաւ : — Դրսանց քահանայ , ներսանց սասանայ : — Ասուած մեկ աչքը մեկալին կա-

րօտ չընէ : — Երկու ծիծն ալ մեկ կուրծքի վրայ իրար կու գարնուին :
— Սուրբ տերը կ'ընէ գօրաւօր : —

— Սարինը կու գայ ,

Սալինը չի գար :

— Գնա՛ մէտիբ , եկօ՛ սիրիմ : — Նորէն ածերը քարը ելան (բարկացաւ) : — Գոված եչը տըտըտուն կ'ելլէ : — Ես ըսօր բերդ ըմ : — Սըրըխին ծարը կու հանին : — Կառուկ-կառուկ խօսեցաւ : — Շառշառ կու վաղէ : — Դուք կարկուտը գարկած մարդիքը գատեր ըք : — Վէրը նալին կու գարնէ , վէրը մըխին : — Իմմէն մարդ դլխուն փշածը կ'ընէ : — Ըսօր կանք , վաղը չիկանք :

— Թուչ մի հաց կու տայ , հացը բերնէտ վար չգացած պկիտ կու սխմէ , կու խէղդէ :

— Դգալ մի ապուր կուտայ , ապուրը բերանտ հասած չհասած թեւիտ կու գարնէ , կու վաթէ : — Կարմի՛ր կով , կարմի՛ր կով , կոյլակ մի կաթ կու տաս , աքով մի կու վաթես :

— Եկանք ինկանք ըս չոքակը , ա՛լ չենք կանար դուրս ելլեր : Ինտո՞ր ելլինք :

— Հայ բոսժտ ճամբու վրայի խոտ է , հասնողը թնդեր է :

— Ըտ մարդուն պոչը վրան ըրի (նամբեցի , վռնտեցի) :

— Եւելը փօր չի ծակեր :

— Մալ գասժ գող դէտճայ :

— Ես ըտելը սատանին կու վայլէ :

— Ծնճուղն ալ կ'ապրի , սուերը բարակ ըն :

— Բար նետեր՝ թե՛ւը ցաւցեր է :

— Քէտու նէ՞ քի պուտու նէ՞ օլա :

— Մարի՛կ անա , հա՛ց կ'ուզիմ ,

Կէտղին դուռը բաց կ'ուզիմ :

— Գողը գողէն գողացաւ ,

Ատուած տեսաւ , գարմացաւ :

— Լեգուն չըլլայ նը , շունը դլօխը կու տանի :

— Ա՛լ տուր : Օվկանք մանուկ մը ունէին , որ մօրմէն միշտ աւելի հաց կ'ուզէր , «Մարիկ , ա՛լ տուր» , այսինքն աւելի տուր ըսելով : Անունը մնաց Ալտուր : Մահմանագրութենէն առաջ , երբ դեղը սով կար , Ալտուր հեռացաւ գեղէն ու կորսուեցաւ : Չենք դիտեր ի՞նչ եղաւ :

— Սուտ խենթ էղեր , վանքին հաւերը կ'ուտէ :

— Չայը կ'երթաս , ծարաւ ետ կու գաս :

— Երկու անձեղ գայ , մէկը պարապ կ'երթայ (շատ նիխար է) :

— Քնթին կինձը ուտող է :

— Հարը ինչ , որդին նման :

— Պոչը վրան ընել (նամբել , վռնտել) :

— Աղքատ հողու դուր տանջանք :

- Խեր ընողը խերաւորի,
- Շատ ընողը սգաւորի (փոնգտալու ատեն կ'ըսուի) :
- Վերջը լացաւ, աղէքս կոտրեցաւ (սաստիկ գքացի, մեղ-
ֆցայ) :
- Վայն ի վրաս :
- Լացիք, լացիք, մեր դռան պօծուկը դէռձիք :
- Մօրս փորը ինտօ՞ր դայճեցար (անհամբեր) : — Զրիվար
տամ, ջրիվեր փրոռիմ : (Բանի մը օգտակար չեղող) : — Բերնովը
ճնճուկ կու բռնէ (շատ հարպիկ է) : — Բերանը բան չի դահիր (ան-
գաղտնապահ է) : — Մօրը մանածը ծախող է (հսկած-վարած է) : —
Զրիվային մեյն է (յեղիեղուկ է) : — Զարոխաջ բերան (բերնին կա-
պը թուլցած, թուլբերան) : — Պորաը կըյեր՝ դուրս ըն նետեր (տուն
մտնել չ'ուզեր) : — Փստուկ բերան (գաղտնիք չպահող) : — Օխաը
ծովէ դուրս նետուած (աղտոտ արարած) : — Մենք հովերուն հովեր,
ցրտերուն կովեր ընք (չարքաշ դարձած եմք) : — Երեսը մէտոն չէ
մնացեր (անխիպ, անամօքին մէկն է) :
- Զուրը տեսնէ, ձուկ է,
- Ծակը տեսնէ, մուկ է (երկերեսանի) :
- Վէ՛ ընես, լէղին կու պտոռի (շատ վախկոտ է) : — Օձը ծա-
կէն կու հանէ (լիզուանի է) : — Աշուրնօ՞ւս հաւատամ՝ թը քեղի :
- Մուկը ծակը չէ ընօվեր, ցախուէլն ալ պոչը խաթարեր է :
- Ծարպիկ դողը տանտէրը զող կու բռնէ :
- Օխաը դեղէ դուրս նետուած :
- Եչ կու փրոռէ՛ օր հեծնէ :
- Հին երգերը (յարդ) չի հուսինք (հովին տալ, հին բաները
չփրփրեմք) :
- Շատ անուշ մարդ էր, հոտած ջուրերուն հեա խմուէլիք մարդ
էր :
- Մեղք է :
- Մեղքը պատին ճեղքը (պատուումք, բացումք) :
- Խնամի, մեր եչը քեղ նմանի :
- Փստք քեղ, Տէր, մեծ ու պղտիկ կարդես, Տէր :
- Լուսնկան կալ ունի (լուսինը շուրջը շրջանակ ունի, կամ-
նուած կալի պէս) :
- Անվարտի,
- Մոլերը բարտի,
- Զախուոք քովրտ պտուկի :
- Էմմէնը, էմմէնը թուր ու թափ էլան :
- Արմէնակը իմ թեւովս կու թոչի :
- Աղիքս կարտեցաւ (սաստիկ գքացի վրան) :
- Առջը մօրին ըն թող տուեր (թնդ, անխնայ տրորող) :
- Սատկած շան խելք կայ դլօխը (շատ խելացի է) :

- Ասուած մեկ օրտ հազար ընէ :
- Յաւ ցեց չտեսնես :
- Ասածու աշուին վրատ ըլլա :
- Օրերտ կանանչ մնայ :
- Քար ըռնես՝ օսկի դէռնայ :
- Պէրխուրտա ըլլա :
- Ասուած հետտ ըլլայ :
- Ասուած բանխա-դործխտ աջողութիւն տայ :
- Ասուած մուրատխտ հասցնէ :
- Տառօր քեզի ըլլայ :
- Արեւուտ մէռնիմ՝ արեւուտ :
- Պօյխտ պօսխտ խուրպան ըլլամ :
- Օտքխտ տակը հող ըլլամ :

ԱՆՔԾՔՆԵՐ

- Աղճակատոր ելլես : — ձղակաստ՝ ըլլա : — Սատկի՛ս : — Մանուկ, Մանո՛ւկ կտարտխտ : — Մարտ բիթերտ կապէ, հո՛ղը դնէ :
- Չի ժմնես, ճա՛ղը վերնատ : (Մեր գեղը դագաղ չկար, մեռելը պատանքի մէջ անդի վրայ կը տանէին հողվրտիք) : — Չի ժմնես, չի ժառանդես : — Մարտ պաղ մէռելտ պաղնէ : — Երկու աշուխ քօրնայ, սի-սի արօս ձդես : — Հինատ ձէ՛ռքրտ մնայ : — Երկու աչի՛ չտ դտնես : — Սեւ թագ, սեւ պրակ ելլես : — Չի հասնի՛ս սրտխտ մուրատխտ : — Մուրատրտ փո՛րրտ մնայ : — Սեւ թո՛ւղթը դայ :
- Ետխտ հող ըլլայ,
- էռջխտ ծով ըլլայ :
- ձի՛տրտ մընայ պիլեքիմի : — Տառօր քեզի՛ ըլլայ : — Բիթերտ կապիմ, հո՛ղը դնիմ : — Շա՛ն ցըյնած : — Ձըղակատոր ելլեք : — Շան ետ թողած : — Ձարդուիք, հատնիք : — Վեր չեւէ, վեր չի բանի : — Գանկը շունը փրննէ : — Շան բով՛ր : — Շա՛ն փրճեր : — Չի ժմնեք : — ձա՛ղը վերնաք : — Վայբերա՛ն շուն : — Վայն ի վրատ : — Վայն ի վրան :
- Ուռենատ, սատկիս :
- Պատտըկիրը մնատ :

ՀԱՅ Հ Ո Ց Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

*Զորս դու պատուիրեցեր : Անոնք ամենէն հարազատ կերպով
կը պատկերացնեն , կարծեմ , ժողովուրդի մը կըթական մակարդակը :
Զուգորդը թող չկարգայ : Բայց մի՞թէ տակաւին հայերէն կարգացող
մնացած է . . . :*

- Քաֆ հօ՛ր գանկի տղայ :
- Շա՛ն մէռելի աղջիկ :
- Շան հօ՛ր գանկի տղայ :
- Քա՛ճ շուն :
- Պապայիտ մէռելը ք . . . նիմ :
- Ելիտ ու տիրիտ ք . . . նիմ :
- Անկի՛րք շուն :
- Կըլքի՛ս քամը :
- Շա՛ն ցըյնած :
- Քաֆ մէռելի տղայ :
- Շան մէռելի աղջիկ :
- Օխտը գէղէ դուրս նետուած :
- Մարի՛կ :
- == Ղառնախի՛ ի՞նչ է :
- Ծակաչֆ շուն :
- Խոստուկը փորը մտեր է :
- Խոստուկը ընօր փորը չի մտներ :
- Շանը միսը կոծես :

ՀԱՆԵԼ ՈՒԿՆԵՐ-ՎԻՃԱՅԻ ԽԱՂԵՐ

*Վերէն ի վար պալած ըմ ,
Գօտեկըս թուլ կապած ըմ ,
Քանի ձեր գեղն ըմ եկեր ,
Սեւ-սեւ դառղա ղէռձած ըմ :*
(Հեծան)

*Քուրդը պառկեր ծըմակը ,
Զոր փատ էղեր զըմակը :*
(Խոնոսա)

*Ճընկըլիկ վըստիկ ,
Տեղ չկայ նատինք :*
(Տումերուն կաթիլը)

Կըլոր ածուք,
Բոլորը փըչուկ:
(Աչֆ)

Երկու գըռնակ,
Մեջը սըռնակ:
(Քիք)

Կըլոր-կըլոր Փաշանի,
Օսկի ջըրով նալչանի:
(Նոր հարս)

Բըռնիմ բըռովըս,
Թող տամ աշխըքովըս:
(Արեւ)

Քուրդը ձորը,
Բիրը օտը:
(Սունկ)

Տավըրճուխը բեճը,
Զըռթը ջաղաչքը:
(Քուրդ)

Քընի բէւըս ծանյընայ,
Ընքան ճամբաս կարճընայ:
(Մոցուոր)

Մըթին քարայր, լուսեղ քարայր,
Սեւ հացիկը մեջը խաղար:
(Անթեղ)

Թախթախն երգիքը,
Չայնն արեգիքը:
(Կոչնուկ)

Անձինը անձինին բեռցուցինք,
Տանիքէն անցուցինք:
(Կամուրջ)

Երկինքն է վար նէյեցայ,
Մարըս հինը հանէ, նորը գընէ:
(Թոմրաչոր փայտ)

Բան մի կայ, լէռները կու պտըտի, պտըտի, կու դայ դուանն ետին
կու կէնայ:
(Բիք)

ԽԱՐԵԼԻՔՆԵՐ

Դիմացիւնիդ բառ մը կ'ըսես, խնդրելով որ դայն կրկնէ: Այն ատեն դու կը պատասխանես խեղճին, ինչպէս կը շարունակուի:

- Ըսէ, բըխերիկ:
- Բըխերիկ:
- Խպօն մօրդ երիկ:

- Մախիր:
- Թըցցիւ՛մ, փախիր:

- Ած:
- Նէմէիս փըսաուխը խա՛ծ:

- Զախու:
- Քնէֆիմ նանները փախո՛ւ:

- Ըռա: (Ռ գիրը):
- Պոչդ վեր առ, զըռա՛:

- Զէ:
- Զէփչիմը փչէ:

- Ադա:
- Հեռ քարտ խաղայ:

- Ըսէ՛ չոքքան:
- Դընիւմ նայտիտ օքքան:

- Ըսէ՛ անա:
- Կեր բուռ մի կանա:

- Ըսէ՛ ե՛ջ:
- Քընծ եշը գեշ:

- Ըսէ՛ խնամի:
- Մեր եշը քեզ նմանի:

- Ըսէ՛, քէռի:
- Տըռռիւմ, մէռի:

- Տըքքի:
- Խլլուս քիմքտ փըքքի:

- Բարե՛ւ, Թաղո՛ւ, դո՞ւն ըս:
- Հա՛:
- Ես գիտցայ քը շուն ըս:

Շրուս'ն, շրուս'ն,
Ջաղջի կրուսն:

Մին.— Սուտը ուտէ՞ հացին կուտը:
Միւտը.— Խաչ օր, մասս պատարադ, իրաւ ըմ:

Մարը կերեր թթուկիչ,
Տղայ բերեր Մկրտիչ:

Ըսօր այիս, վաղը մայիս,
Ամուսն օրթան օրդնոտիս:

Ազուէսը փորուտ,
Խոստուկը օտուտ:

Երբ փոնդտաս, մէկը քու մասիդ կը խօսի այդ պահուն:
Ո՞վ:
Բթամատդ թրջելով յօնքերուդ քսէ ու անուն մը տուր:
Ո՞ր անունին վրայ որ մազ մը մնայ մատիդ վրայ, ա՛ն է խօսողը:

Քալէ երթանք օլօրը,
Ջըրիմ բերնիս բոլորը:

Հացի՛ր, լացի՛ր,
Մեր դռանը պոճիկը դէռճիր: (Պոճիկ = շնիկ)

Ուլին լիրկամն ես կերայ,
Դուն ալ կօյլընին կեր:

Հիմա քեզի տգ մը դընիմ,
Չազ մի թոցնես:

Մարան, Մարան մարմըրիս,
Թանիրն իննիս կարմրիս:

ԲՃՇԿՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԳԵՂԻՆ ՄԷՋ

ՁԱՐ ԱԶՔԻ ԴԵՄ .- Կին մը աղը ճանկը կ'առնէ, կ'աղօթէ: Կու
լայ, բերանը կը փաշտափ: Կը դերդասայ: Վերջը այդ աղը ջուրի մէջ
կը հալեցնէ ու աչքի եկած հիւանդին մարմնին վրայ կը քսէ:

*
**

ՄԵՅՀԼԱՄ .- Բալասանն է: Կարագ, մեղր, եւայլն կը խառնեն
ու վէրքին կամ վիրաւորուած տեղին վրայ կը դնեն, կ'աղէկցնէ:
Կարծեմ ուրիշ բաղադրութիւն ալ ունի, բայց դեռ չգտայ ցիրուցան
թղթերու մէջ:

*
**

ԽԱՅՀԱՆ .- Գիին ճիւղերը կը խաշեն ու անոր սեւ հիւթը կ'առ-
նեն: Ոչխարին սրղնոտած ոտքերուն որդերը կը մաքրեն, վրան այդ
խայհանը կը լեցնեն, կ'աղէկնան վէրքերը: Հականեխիչ ըլլալու է:

*
**

ԱՄԼՈՒԹԵԱՆ ԴԵՄ .- Երբ որ կին մը գաւակ չկրնայ ունենալ,
մէջքը վեր կ'առնեն, վրան եախու կը ձգեն ու գաւակ կ'ունենայ:

Երբ էրիկ մարդը գաւակ չունենայ, չամիչ, թուղ, ընկոյզի մի-
ջուկ եւայլն կը ծեծեն, ընտիր մեղրի մէջ կը խառնեն, ամէն առտու
անօթի փորուց անկէ կ'ուտէ եւ գաւակ կ'ունենայ:

*
**

ՄԱՅԱՍՈՒԼ .- Լուիճը մայասուլի դեղ էր: Կը խաշեն, ջուրը
կը թափեն, յետոյ աղցանի պէս կ'եփեն, մէջը քիչ մը թթուկիչ դնե-
լով ու քիչ մըն ալ ձաւար:

Լուիճը կը չորցնէինք ալ: Չեմ դիտեր Քրանսերէն անունը,
բայց երբ Հայուհիներ Թուրուզի կողմերը լուիճ կը ժողվեն եղբր,
Գաղղիացի մը տեսեր ու ըսեր է. «Դեղարանը ծախելու՞ն կը տանիք»:

*
**

ՍԵՏՈՐՈՎ ՈՒ ԹԹՈՒ ՄԱԾՈՒՆՈՎ ԲՈՒԺՈՒՄ .- Ծմակի խոտե-
րը կը դպչին կօվերուն: Մանաւանդ Խութլուի ծմակին խոտերը:

Որպէսզի աղէկնան, սխտորով խոտն թթու մածուն կը լեցնեն
անոնց բերաններէն վար:

Մաքրները աւաշաղ կ'ըլլան տաքէն, քիթերնին կը հոսի: Դեռ
չգտայ թէ ի՞նչպէս կը բուժուին:

*
**

ԿՈՏՐԱԾ ՈՏՔԻ ԲՈՒՓՈՒՄ — Երբ այծերուն ոտքը կոտրէր,
կոտրած ոտկորը տեղը կը ձգէին, շուրջը տափակ ձողիկներ դնելով
կը կապէին դայն: Վրան չկրնալով քալել, կ'աղէկնար:

Այս բժիշկը Գարոյենց-Քոչենց-Օվակն էր մեր օրերուն:

*
**

Երբ եղին կապէին որ մորթեն, կու լային անոնք:

*
**

Գառը կամ ուլը բռնէիր, մօրը անունը կանչէր քանի մը ան-
գամ, մայելով կու դար ու ծիծ կու տար անոր: Ամէն անասուն ա-
նուն ունէր ու իր անունը կը հասկնար:

*
**

Ձմեռը հօտերը կը տանէին անտառներու մէջ գտնուած գոմե-
րը, ուր անոնք ծառի ճիւղերով կը սնանէին: Գարունը կ'ըլլային հի-
ւանդ այծեր, սնունդի պակասութեան հետեւանքով, որոնց կ'ըսէինք
պուքա: Ասոնք գարունը գեղին շուրջ կ'արածէինք:

Կանանչ խոտէն աւելի կը տկարանային ու ոմանք կը մեռնէին:

Միւս բոլոր անասունները, մաքիքն ալ, գեղը գոմերն ու ա-
խոռները խոտ, դաղ, քուշնայ, դարի, առուոյտով ձմրան տակէ
կ'ելլէին:

*
**

Ձմեռը ուռիներուն ճիւղերը կը կարէինք, կը կեղուէինք ու
կէզվունձը էջերուն կու տայինք, որոնք շատ կը սիրէին նաեւ փշոտ
խոտերը:

*
**

Երբ մէկուն ձայնը մարէր, թարմ, հում հաւկիթ կը խմցնէին:

ՄԱՆՐԱՎԷՊԵՐ ԽՈՒՌՆԱՎԻԼԵՆ

ՊԱՂՏԱՄՈՒՆ

Զէմանննց Պաղտամուն երկայնահասակ, նշանաւոր երգիծարան մը եղեր է: Զեմ տեսած: Ծնունդէս առաջ մեռած է:

Մեր գեղը Մեծ-Պահլէն առաջ լաւ կ'ուտեն, կը խմեն: Պահլը սկսած օրը ամանները աղբիւրը կը տանին, կը լուան, որպէսզի չըլլայ թէ կաթիլ մը իւր մնայ անոնց մէջ ու մեղանչեն:

Պաղտամունք աղբատ եղած են:

Պաղտամուն Պողոտ աղբիւրին քովէն անցած ժամանակ երբ կը տեսնէ աման լուացող կիներու բանակը, քթին տակէն կը խօսի.— Մեր Հարսներն ալ արօրճողերը կը լուան...:

**

Պաղտամուն Տիվրիկ մէկուն տունը հիւր կ'ըլլայ:

Ընթրիքին ակրախ-տօլմա կը բերեն: Քաղցրիք ակրախը մանարտիկ կը փաթթեն:

Մեր Պաղտամուն, աչքը սիրեմ, թուչը լեցուելու, ակոսային տակը բան դալու համար, ջուխտ-ջուխտ կը վերցնէ դանոնք:

Տանտիկինը կը հարցնէ.

— Պաղտամո՛ւ, ձեր գեղը մեռելները ջո՞ւխտ կը թաղեն ի, քի թէք-թէք:

Պաղտամուն կը պատասխանէ պաղարիւնութեամբ.

— Էկէր խոչոր ըլլան, թէք-թէք: Էկէր պզտիկ ըլլան, ըն տենը ջուխտ-ջուխտ:

**

Ուրիշ օր մը հիւր կ'ըլլայ Տիվրիկ, տարբեր բարեկամի մը տունը: Նորէն գիշերը հոն կը մնայ:

Ընթրիքին սեղան կու դայ ապուր: Կորկոտ կամ ձաւար:

Պաղտամուն ի դուր դգալը խորունկէն կը դարնէ: Կը մխէ լսականին մէջ: Կունծ մը, հատիկ մը չի դար դգալը: Թէեւ հացով խած ու խում կ'ընէ: Ըստ մեր երկրի սովորութեան:

Անգամ մը հացը կ'ուտես, վրան դգալ մը ապուր, եղաւ խածուխում:

Պաղտոն դգալը կը դնէ սեղանին վրայ ու կը սկսի դուլբանները հանել:

— Ատ ի՞նչ է, Պաղտամո՛ւ, ինչո՞ւ չօրապներդ կը հանես ի, կը հարցնեն:

Պագատմուն կը պատասխանէ առանց ինքզինք աւերելու .

— Ի՞նչ ընիմ , ախպար , դժբախտ կուսնձ մի չըտայ , չորասղներս հանիմ , մեջը մանիմ , պէլքի բան մի գտնիմ :

**

Մեր գեղացի կին մը տաղանդաւոր երգիծաբան էր :

Նաղըկոնց Հայկը գիտէր անոր անունը : Ըսաւ ալ , բայց դրի չառի այն ստեն : Հայկին ալ նոր մեռաւ :

Ամէն մարդու անուն մը կը կախէր , անոր արտաքինին , դիրքին , բարոյականին յարմար : Պանդխտութենէ դարձողները մանաւանդ անոր լեզուին տակ կ'իյնային , եթէ անոր նուէր մը բերած չըլլային : Ուստի սովորութիւն եղած էր ամէն պանդուխտի համար , դեղ դաբուն առ կնոջը նուէրը չմոռնալ , անոր խայթոցէն ազատելու համար :

Անոնցմէ չէր Տօտոյեց Աստուրը , որ Պոլսէն նոր վերադարձեր էր հայրենիք :

Գեղացիք կնոջը կ'ըսեն թէ Աստուր իրեն բան մը բերած չէ :

— Հինար քօլիկ թէնճիրէ՞ն ,— կը պոռթկայ մէկէն :

Աստուրին կեղծանունը առ օրէն մնաց Քօլիկ Թէնճիրէ : Գեղին մէջ զայն ուրիշ անունով չէին կանչեր այլևս : Բայց Աստուր ունէր լայն , տափակ վրուխ , իրաւ ալ ճիշդ քօլիկ թէնճիրէ :

Քօլիկ կը նշանակէ կոթ չունեցող աման , կոտոջ չունեցող այծ :

Նորայր Բիւզանդացի այս բառը դրած է իր հռչակաւոր բարանին մէջ :

**

Կակոյեց Կարամուն թաղելու կու տանին : Աղջնիկը ետեւէն լալով կը պոռան .

— Ամ՛ու , ս՛ւր կ'երթաս , մե'նք ալ կու դանք հետդ ,— կու կանչին :

Գալըկոնց Մանամուն , Մանուկ .

— Ա'ղջի , ան ձեր երեսէն փախեր կ'երթայ , դուք ալ հետէն՞ երթալ կ'ուղէք :

**

Կին մը կալ կ'օրնէ : Ակնցուն Աղօն կ'անցնի :

— Աղօ' , եկօ' , օղնէ' , օրնի'նք :

— Ես կալ օրնող մա՞րդ ըմ' :

Մուտուար կու լսէ վերէն .

— Ան կալ օրնող մարդ չէ , ան Շապկան Չայը Բուրտերը կոդպտող մարդ է :

Ալթօղլուները զինքը անգամ մը կը բռնեն լեռը: Ջուր թափելու ատեն, մէկուն հսկողութեան տակ, կը յաջողի փախչիլ:

Ապօն քաջայանդուզն որսորդ էր: Անոր աւագակ ըլլալն ալ միւտիւրը կը հաստատէ:

*

**

Պանդխտութենէ դարձողներուն բարի պալուստի կ'երթայ Չատիկ ամուսն, որպէսզի ճշարտ մը տան, ծխէ: Թշուառութիւն:

Մամբկոնց նշանաւոր Կոստոն՝ Պոլսէն դարձած է, Չատիկ ամուսն կ'երթայ քոյրը: Բարի՛ ըս եկեր, ինտո՞ր ըսէն ետք, կը տեսնէ որ բան չկայ:

— Կո՛ստօ, ճշարտ մի տուր, խմիմ, — կը խնդրէ:

— Չատի՛կ ամուս, թարկեր ըմ, — կը պատասխանէ Կոստոն:

Չատիկ ամուսն, յուսախար, քիչ մը ետ կը նստի ու կ'երթայ: Ճամբան Մամբկոնց Թուրչը կու հանդիպի իրեն.

— Չատի՛կ ամուս, ուրկէ՞ կու դաս, — կու հարցնէ:

— Ձեր ինքը քունիմէն կու պամ: Քօրցեր է ալ բան թարկելուն, ճրդարան թարկեր է:

*

**

Սառտօն Ամերիկայէն դրամ կը ղրկէ: Եղբայրը, Մանկասար, դեղը լաւ կ'ապրի: Չատիկ ամուսն, անոնց ղոնէն անցնելուն.

— Բարե՛ւ, Մանկասար, ի՞նչ կ'ընես:

— Կեանքիս հօ կ'ընիմ:

Ատեն մը ետք Ամերիկայէն դրամները կը դադրին: Մանկասար կը խեղճանայ, վրան պլուխը թափթփած: Չատիկ ամուսն նորէն անոնց ղոնէն անցնելուն,

— Բարե՛ւ, Մանկասար, ինտո՞ր ըս նէյիմ:

— Չատի՛կ ամուս, իշտը հալերնիս կայ ու կ'երեւայ:

— Կեանքդ քունեցի՞՞ հիմա:

ՇԵՐԵՐ ԽՈՒՌՆԱՎԻԼԵՆ

ՀԱՐՄՆԵՐԳ

Առաւօտուն կանուխ, կանուխ,
Հարսնուկին սիրտը պուլանուխ:

Օղբեր մօյձէն կու ցողայ,
Հարսնուկին սիրտը կու դողայ:

Քալէ՛, հարսնուկ, խալուն վըրայ,
Քալէ՛ ու մանարախի քալէ,
Ալուխ փէշերըդ վեր ծալէ:

*
**

Եավրում, Մարիամ չափը զարկեր Մըրդա լեռները,
Մէյդին սուրուն կ'արծի, մէյդին դառները.
Մօրերնուն դասեցին քօսքա դառները,
Վար կու տանին, վեր չեն բերեր մարերը:

*
**

Առաւօտուն ծաթեր կարմիր Արեւը,
Ինջեր պաղչան, քաղեր վարդին տերեւը.
Աղջի, եկօ՛ տեսնիմ աղուոր երեսըս,
Տերը պահէ քու նիշանձուտ արեւը:

ՀԱՐՄՆԵՐԳ

Ժամէն ելան շուխտ մի Ֆիտան,
Երթանք տեսնինք մեզի կու տա՞ն.
Առնինք, ելլինք վերի օտան:
Հարսը պաղչան վարդ կու քաղէ,
Շաքար մաղէ, թող կու հանէ,
Շաքրին թօզը ինք կու թաղէ,
Թագուորի՛ մար, դուն դո՛ւրս եկօր,
Քեզի հարսնուկ մըն է եկեր,
Օտքին հետ բարիք է բերեր:

Ասոր մէկ փոփոխակն է .-

Ժամէն ելան ջուխտ մի Ֆիտան ,
Երթանք նէյինք մեզի կու տա՞ն ,
Առնինք , ելլինք վերի օտան :
Թաղւորի՛ մար , դուն դո՛ւրս եկօր ,
Քեզի հարսնուկ մըն է եկեր ,
Օտքին հեռը բարիք բերեր :
Քալէ՛ , հարսնուկ , խալուն վըրայ ,^(*)
Քալէ ու մանորտիկ քալէ ,
Ալլուխ փեշերըս վեր ծալէ :

Հարսը պողչան վարդ կու քաղէ ,
Շաքար մաղէ , թօղ կու հանէ ,
Շաքրին թօղը ինք կու թաղէ :

Օղբեւը մօյլէն կու ցօղայ ,
Հարսնուկին սիրար կու դողայ :

*
**

Գլօխս դընիմ , դու դաս երածս ,
Տորեկը պըրաւիմ չես ելլեր մըտացս .
Հարամ ըրիր կերածըս ու խմածըս ,
Հալալ ըլլայ կերածըս ու խրմածըս :

*
**

Լուսունկան բոլբեր , աղերը վառեր ,
Իմ հարիս դացած վէզանն է աւրեր .
Վէզանդ ալ աւրեր է , ելի՛ , տո՛ւն եկօ ,
Արմուզատ չեմ ուզեր , արեւտ ա՛ն , եկօ՛ :

Ասոր մէկ փոփոխակն է .-

Լուսունկան բոլբեր , ախտերը վառեր ,
Իմ հարիս դացած վաթանն է ալբեր .
Վէթանդ ալ ալբեր է , ելի՛ , տո՛ւն եկօ ,
Արմուզատ չեմ ուզեր , արեւդ ա՛ն , եկօ՛ :

(*) Աս ալ չի կրնար գուտ խուռնավիլակնան ըլլալ , փոխառու-
քիւն , ինչպէս ուրիշ շատ-շատեր , վասնզի մեր գեղը պարզապէս խա-
լի . . . չկար , այլ մագի քելէ հիւսուած հասարակ կարպետ , որուն
կ'ըսէինք . . . չուլ :

*

**

Առնել փախչելու կու դայ,
Առնել պաղնելու կու դայ,
Եկաւ, անցաւ, շա՛ն աղջիկ,
Առնել պառկելու կու դայ:

*

**

Երդիքն ելլելու կու դայ,
Դարուար նէ՛յիլու կու դայ,
Գնա՛, կորէ՛, շա՛ն աղջիկ,
Առնել փախչելու կու դայ:

*

**

Արտը կըկզեր, կէ՛մն է դարի,
Արտի բուռ, ետի բուռ:

Քանի քաղիմ հովը տանի,
Արտի բուռ, ետի բուռ:

Գեշ մարդը գըրողը տանի,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտը ախրուն, տերը չաբխուն,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտը քաղինք, տերը թաղինք,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտը փոս է, տերը հոս է,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտը խոզոտ, տերը խըլլոտ,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտն է խոզան, տերն է խըզան,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտը էնկին, տէրը զէնկին,
Արտի բուռ, ետի բուռ:

Արտն է հօբբալ, տէրն է թօփալ,
Արտի բուռ, ետի բուռ:

Արալը կըզզեր, կեմն է դարի,
Արտի բուռ, ետի բուռ:

Քանի քաղիմ, հովը տանի,
Արտի բուռ, ետի բուռ:

Գեշ մարդը դըրողը տանի,
Արտի բուռ, ետի բուռ:

ԳԼԽԱՒՈՐ ՕՐՕՐԸ

էյ ընիմ, է՛՛՛, օրօր, օրօր, օրօր, օր քունըս տանի՛,
էյ ընիմ է, է, է, դըռսնն ետին նեաիմ, օր շունը տանի:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրօր, օրօր, օրերս օրերուս,
էյ ընիմ, է, է, է, դըլօխըս դեմ բերիմ դալած չարերուս:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրօր, օրօր, օրանըս օսկունն,
էյ ընիմ, է, է, է, օրանս օսկունն, եալըում, դըլանն արծըթուն:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրօր, օրօր, օրերըս շատնայ,
էյ ընիմ, է, է, է, օրըս շատնայ, եալըում, տարիս մեծանայ,
էյ ընիմ, է, է, է, մէկիկ տարիս հազար տարուան մօտենայ:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրօր, օրօր, շատ եզնի եկեր,
էյ ընիմ, է, է, է, եկեր ու մեր վերի կալերն է ինջեր,
էյ ընիմ, է, է, է, եաւրուիս ալ օսկի օրան է բերեր:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրան դընիմ քեզ, քընացընիմ,
էյ ընիմ, է, է, է, նուշ ու շաքար բերիմ, քեզ կիշտացընիմ:

էյ ընիմ, է, է, է, օրօր, օրօր, օրօր, դուն հօրով մօրով,
էյ ընիմ, է, է, է, հօրով մօրով, եալըում, դուն ծառ չըքերով,
էյ ընիմ, է, է, է, ծառ չըքերով, եալըում, կարմիր լընծորով:

*
**

էյ ընիմ, օրօր ընիմ,
Կապատ կըլիմ, շոր ընիմ,
Զատիկը դայ նոր ընիմ:

էյ կանչիմ օր քընանաս ,
Արաին թըմպերը ժուռ դաս ,
Իրկուն ըլլայ նը տուն դաս ,
Իբրաններուն բարեւ տաս ,
Հօրըս մօրըս արեւ տաս :

Մանուկը փունեն արքնալով օրբանէն ելլելէ յետոյ մեծ մայրը կամ մայրը երկու քաթիկներէն բռնած ու երկու կողմի վրայ նորելով գայն՝ երեխան անգա՛մ մը աջ , անգա՛մ մը ձախ ոտքերը կը վերցնէ փախլու պէս : Այն ատեն կ'ըսեն .

Ճոր , ճոր , ճոր , ճորի պար ,
Ամուն եկօ՛ , հօրբա՛ տար ,
Պըճըլիկ է չեմի տար ,
Եբօր մեզնայ հըպա՛ տար :

Հըպա տար ըսած ատենը քաթիկները թող կը արուի ու մաւիկը երկու քեւերուն մէջ առած կը գրկէ ու կը պագնէ գայն :

Պաղչա ունիմ , պար չունիմ (ուրախութիւն)
Հայկա ունիմ , նար չունիմ ,
Ինկեր ըմ դարիպ երկիր ,
Ա՛լ ելլելու ճար չունիմ :

Ե՛ս ալ կ'երթամ , որո՞ւ կ'ընես նազերըս ,
Անմահութեան ջրով լուայ մաղերըս :

Գիշերը քուն կ'ըլլամ , ցերեկը արթուն ,
Աս ի՞նչ անուշ կ'ըլլայ քուրուկը մարդուն :

Չօլախին փոսը փոս է ,
Ի՛նչ խենթ որ կայ՝ հոս է :

Աշխարքը փըլեր է , կ'երթայ պարի պէս ,
Մէյ մի չկայ , խապար բերէ դարիպէս :
Կ'երթաս , դարիպ կ'ըլլաս , կու մոռնան սիլաս ,
Մ'երթար , դարիպ մի՛լլար , մի՛ մոռնար սիլաս :

Կ'երթամ, մարիկ, կ'երթամ, ա'լ հոս չեմ կենար,
Ես ալ ըս ճէրպերուն չեմի դիմանար,
Դիմանալու տէրա չէ, ինտո՞ր դիմանամ,
Ցաւերս չեն թողուր, հօգչիմ, դուրանամ :
Թղթիկ մ'ալ չես դըրեր՝ ցաւերա իմանամ,
Դընիմ եար աչքերուս, պառկիմ քընանամ :

Ասոր մէկ փոփոխակը .—

Փըլեր է Աշխարքը, կ'երթայ պարի պես,
Մե մի չիկայ, խապար բերէ դարիպէս :
Կ'երթաս, դարիպ կ'ըլլաս, կու մոռնաս սիլատ,
Մ'երթար, դարիպ մի'լլար, մի' մոռնար սիլատ :

Կ'երթամ, մարիկ, կ'երթամ, ա'լ հոս չեմ մընար,
Ես ալ ըս ճէրպերուն չեմի դիմանար .
Դիմանալու տէրա չէ, ինտո՞ր դիմանամ,
Քունիկըս չի տանիր, պառկիմ, քընանամ .
Ցաւերըս չեն թողուր, հօգչիմ, դուրանամ,
Դընիմ եար աչքերուս, պառկիմ, քընանամ :

*
**

Պիլպուլ մի եկեր է, վարդին կու թառի,
Երկու ունքին օրթան լուս մի կու վառի :

*
**

Ըս գիշեր եգիին վարդը բասուած է,
Վարդը բասուած, ըրեհանը բուսած է .
Երնե'կ ըն աչքերուն՝ եարը տեսած է,
Ձէռքը սըխմած ու մուրաաին հասած է :

*
**

Աղուսը մի սիրեցի, ելաւ ու գընաց,
Հեա ըն աղուսըին ալ այթերըս մընաց,
Այթերնիս մեկ ըրանք հեա ըն աղուսըին,
Ինչօք ի դատաստան չի դատուելուկան :

Մի' լար, մարի'կ, մի' լար, իս մի' լացներ,
Եկած թըմբուկ, սըրինդ էտ մի' դէռձըներ .
Աչունն ալ օր չիգամ, դարունը դու գամ,
Մատուըներուս մոմեր վառելով դու գամ :

*
**

Հողվրբատուն վերեւը ծառներ անկեցին,
Իմ եարսւկը մեջը եերլու գրեցին:
Իմ հողիկս մօյլը մաղո՛վ մաղեցէք,
Տուչմաններս շատ ըն, խորո՛ւնկ թաղեցէք:

*
**

Բախտին Ածուքն ելայ, զսպլըս զարիս էր,
Անէծք կու տամ, եա՛ր, արեւուտ զարար է.
Իրեք տարին մեկ կըյիճին զէրար է,
Չարս տարին, օր օսնի վաստակն հարամ է:

*
**

Մեր գեղը շերերուն ամէն մէկ սողին բերան կ'ըսէին: Այսպէս,
սող մը շերը մէկ բերան է, երկու սողնոցը երկու բերան, երեք սող-
նոցը երեք բերան, չորս սողնոցը՝ չորս բերան, եւայլն:

Ահա՛ իրեք բերաննոց շեր մի.—

Ուրկէ՞ գու դամ յուշիկ, յուշիկ,
Օտքւտ հաղեր մանտըր կօշիկ,
Դուն կըլորիկ, պաղտ անուշիկ:

Ծընիկ, մընիկ,
Մա՞նչ թը աղջիկ,
Ծընիկ, մընիկ,
Մա՞նչ թը աղջիկ:

Լուսնկան կամար, կամար,
Կը մեռնիմ քեզի համար.
Եղբա՛յր, նամա՛կ մը դրէ,
Աստըծու սիրուն համար:

(Օտուռէն աւ մէկը)

Գարնան պիրպուլի պես պաղչան կ'իջնեյանք,
Թեւ-թեւի կու տայանք, Չայը պըտըտեյանք.
Երկու աղբօր նըման շատ սիրով եյանք,
Բախտը գատեց մեզի, գատուիլ չունեյանք:

*
**

Եկո՛, ծով—ծով աչեր, իս մի՛ լացըներ,
Իս չա՛տ ըն լացուցեր, դուն մի՛ լացըներ.
Շատ ըն տուչմաններս, մի՛ խընտացըներ,
Հասիրէթսո՛ւկ եարուկ, իս մի՛ լացըներ:

*
**

Մի՛ գովեք Ըստամպօլ, երկիրը դատ է,
Տախտակը տօշակ է, չոր քարը բարս է,
Վա՛յ ընոր տիրոջը՝ աչքերը լաց է,
Երկու ձէռքն երեսին, մէնտիլը թաց է:

*
**

Կանանչ—կարմիր կ'ըլլայ վարդին տերեւը,
Կըրակ ըս լեցուցեր սըրտիս վերեւը:
Ես մէռնիմ, չի կըյես սիրուտ բարեւը,
Գընաց կործեցաւ ումրիս արեւը:

*
**

Հալեցան ձըները, լըցվան դետերը,
Բուսան աուուեղրերուն կանանչ խոտերը:

*
**

Ըռեհանը բարձիս մեջ,
Ես չեմ երթար մարդու մեջ.
Ես իմ եարս կու ճօշմամ
Երկու հագար մարդու մեջ:

*
**

Իչնիմ աղբըրին վրայ,
Մէնտիլս քարին վրայ.
Ղուրպէթը չեյի դիտեր,
Ան ալ եկաւ իմ վրայ:

*
**

Խընձար մ'ունիմ խածած է,
Խածած տեղն արծըթած է,
Ախպարս ուզեց չըտըւի,
Ան իմ եարիս խըկածն է:

*
**

Դրանն ետին չամուռ է,
Եարիս սիրտը ամուռ է,
Ի՞նչ ընիմ ընանկ եարը,
Սիրտը քարէն ամուռ է:

*
**

Ընոնք հասան իրենց փափաքին,
Դուն ալ հասնիս քու փափաքին,
Ասուած կեանք տայ Արմենակին.
Պատճառ էղաւ մեր էմմէնուն:

Կ'երգէ ազջիկը որ պիտի փայտցնեն.

Աման, աման, ճլպուրս ուտիմ, կծկիմ,
Աման, աման, շունը գրկիմ, ներս տանիմ,
Որ գաք նը ձեզ չխածնէ,
Որ դիս չալկէք, տանիք:

*
**

Դաշտերն ի վեր չօքեցաւ չողը,
Ահա եկաւ աշըխին հաւկիթին դողը,
Կօյեցաւ աշըխին արօրին ձողը...

.....
(Թաթըրենց աշըգ Պօղոսը)

*
**

Կար խնամիս, Զաւէն աղբօրս աները, բարձրահասակ, Աշխարհ
ուեսած, իմաստուն ու կոյր: Կար եւ իր կիներ, Կուլտուրը: Զէ՞ որ կոյր
էր, խեղճ էին, պէտք էր ծաղրել: Մեր գեղի օրէնք: Անոնց վրայ
հանած են սա շերքը, «Տաշակը տալին վըրայ»ի եղանակով:

Տաշակը տալին վըրայ,
Կուլտուրը տալին վըրայ,
Տանօն Կուլտուրին վըրայ:

Ա՛յս, չիմ գիտեր թէ ՀՈՂԸ ՓԼԱԽն ալ սա գործին հետ պիտի
սպուի՞, թէ ոչ փլչի, ուստի ի՞նչ եղաւ Տանօն: Ինչ եղաւ...: Ա՛ք-
սորին կոյրերն ու քալելու անկարողները տուները թողած էին գեղը,
ամենուն քով չուր եւ ուսելիք: Չանոնք վերի Զաղսցիին առուն զար-
կած էին: Եղբօրս, Դեւոնդին հետ երբ գիշերը գեղ կ'երթայինք, տե-

տանի: Ճանչցանի: Ղեւնոյ դիակի հոտը մանչցաւ: «Մարդու լաչի
հոտ է» ըսաւ: Իսկ Տանօն իբրեւ թէ Սառգումս սիւննի այլազգ գեղը կը
տանիմ: Ճամբան... գնդակ մը, ու կը գլորի: «Ղուրպա՛ն ըլլամ, չմե-
ռայ, հա՛տ մըն ալ զարկէք», կը պաղատի:

*
**

Եկօ՛, աղօ՛ր աղջիկ, հեալտ ջուխտ երթանք,
Տըզաս խօռչուք էղեր, Բըռակն ուխտ երթանք:

*
**

Եկանք ի Բարկենդան, կ'երթանք ի Զատիկ,
Ըհա եկաւ Զատիկ, ա՛լ ինտո՞ր դատուինք:

*
**

Պիլպուլ մ'եկեր ինջեր արնեքնուս վըրայ,
Ըս ի՞նչ ցաւ է եկաւ ճահեքնուս վըրայ.
Նէ՛ եկեր էր, նէ՛ պիտի դայ մեր վըրայ,
Թուրքէն կըրակ մ'եկաւ, ինկաւ մեր վըրայ:

(Մեծ Զարդին յօրինուած)

*
**

Կապուտ Չաթ օր ելայ, ունէի կուման,
Հաճոց ծառ օր հասայ, չոքեցաւ տուման:

*
**

Ուխտ ընք ըրեր, Թէքիրու լէոն ընք դացեր,
Զըզիտնաք թը ուտել-խըմել ընք դացեր,
Օրըս ցաւոտ, օրըս ցեցոտ ընք դացեր:

*
**

Երկան ըս երկնցեր քընծ սէվլուն տալը,
Աղուոր, դուն աղուր ըս, ի՞նչ ընես մալը.
Բարայյ մեջքիտ վըրայ, ի՞նչ ընես բալը,
Քու աղուորութիւնըտ քեզի հերիք է:

*
**

Ածուքն ի վար կ'երթամ, նըռներս հասած է,
Երնեկ ըն աչչերուն՝ եարը տեսած է,
Զէռվին սրխմած ու մուրատին հասած է:

Կանչըներ է դերեղմանին քարերը,
Գացեք, ըսեք, ա՛լ չի բերին մարերը:
Ա՛լ չի բերին, թո՛ղ չի խըրկին չօլերը:

Առաւօտուն ծաթեր կարմիր Արեւը,
Ինջեր պաղչան, քաղեր վարդին տերեւը.
Ա՛ղջի, եկօ՛, աղվոր երեսըս տեսնիմ,
Տերը պահէ քեզ սիրողին արեւը:

Ախրարս պառկեր ը չայիրին օրթան,
Վեր-վերամ էղեր է հայրիկիս օտան,
Եկե՛ք, աղբըտի՛ք, նըստի՛նք, խօրաթի՛նք,
Տուչմաններուս սրբտին ե՛ղն հալեցնինք:

Ճամբաս ինկաւ Աւրորային լեռները,
Կոնակիս ալ բէոցան մէղբիս բէռները.
Մի՛ լաք, մարե՛ր, քուրե՛ր, մեր ոտքը բաց է,
Կերազնիս շաքար ու պղլուրի հաց է:

Ըսօր չես երեվար, ո՞ւր ըս գընացեր,
Բարսը լեռնով ելար, դուրսն ըս մընացեր.
Բարսը լեռան ետին բարսը լեռ մ՛ալ կայ,
Բսլսրը տուման է, մեջը եար մի կայ:

Լուսնակ մի խոռնէն փըրթաւ,
Լուսնա՛կ, դուն լուսո՛վ կեցիր,
Պայ՛հ մըն ալ հուսա՛վ կեցիր:
Չար արմուռնկը իս դիպաւ,
Կըռան գինիս թափեցաւ:

**

Խաթար ջորիք բերեք, բէռներս բէռնամ,
Իննիմ ճամբան ի վեր, ցաւերըս մոռնամ .
Ախգըխու սարերը ծաղիկ կու քաղիմ,
Յաւերուս, տէրտէրուս մէյճլամ կու հանիմ :

**

Ելայ բարսը լէռներ,
Կու կանչիմ մանի,
Քանի քեզ չեմ տեսեր,
Չեմ էղեր բանի :

**

Աղջիկ տանող եկեր դէզին վերեւը,
Փունջ մի ծաղիկ դրբեր դըլխուն ետեւը .
Ելի՛ր, մարի՛կ, ելի՛ր, իս ըղաւորէ,
Քարէ տունե՛ր շինէ, իս տէղաւորէ :

**

Ելեր ըս, կոյներ ըս դուն վըրայ դէզին,
Հագածըս կարմիր է, կ'երեւայ դէզին .
Չարհիր կըրակ տըւիր, կ'երիմ կու վառիմ,
Ծարաւ ըմ, ջուրի պես ճամբատ կու նէյիմ :

**

Պիլպուլ մ'եկեր վարդիտ վըրայ կու թառի,
Երկու ունքիտ օրթան լուս մի կու վառի .
Հաւատով սիրեցի, հաւասրս չառի,
Ետ՛ր, անուշիկ լեզուէտ խօսքուկ մի չառի :

**

Սուրբ Կարապետ ըմ դընացեր,
Ինկեր օտաա ըմ քընացեր,
Մուրաա տըւիր՝ չեմ իմացեր,
Մուրատաաու, Սուրբ Կարապետ,
Դուն էմմէնուս մուրատը տուր :

*

**

Աս Բանի մը հատն ալ ներսիկը դրկած է ինձի, բայց հաւա-
նաբար դասագիրքերէ միտքը մնացած են ու կը շփոթէ մեր շեքերուն
հետ: Ինձի անծանօթ են: Մասն գանձնք բսած չէ: Հետաքրքրու-
եալ համար հոս կը դնեմ:

Ասլաճամար,
Լուսունկամար,
Իս մի' ամանիք
Խաւարտ ի վար,
Իմ չար միտքս
Ինձի մոռցուր,
Բարի միտքս
Ինձի դիտցուր:
Արժողացը՝
Դրոնէն անցուր,
Արքայութեան
Դուռը ցուս տուր:

**

Սուրբ Կարապետ բարս է բոլոր,
Ճամբայ ունի օլոր-մոլոր,
Կ'երթայ-կու դայ շատ ուխտաւոր:
Ճամբայ կու տայ ոտաւորին,
Բարեւ կու տայ ձիաւորին:

Զիակ, ձիակ, իս խաղցուր,
Տար պարանին դուռն անցուր:
Պարանը դուռ կու տաչէ,
Խաթունն հակկիթ կու խաչէ:
Խաթուն ինձ ա փայ պահէ:

Օսկի սանդուխ ըն դրեր, ...
Վա՛յ, ծեծեցէ՛ք ըն կատուն,
Վա՛յ, մի' ծեծէք ըն կատուն:

Առիքը փուտ է, փրթըտայ,
Հարսը ճահել է, դրդրրայ,

Փեսան առեր թուրը վազէ,
Աս ի՞չ կըրակ է, մեզ կ'երէ...:

Վերջ աւ կասկածելիներուն:

ՓՇՐԱՆՔՆԵՐ ԽՈՒՌՆԱՎՈՒԼԻ ՇԵՐԵՐԷՆ

Նէճէիս պատմած շերերէն .-

ՍԻՐՈՑ ՇԵՐԵՐ

*
**

Փչէ՛ , հովեր , փչէ՛ ,
Լէոները ձուն բեր ,
Փունն ու քուրան քակէ ,
Իմ հարը տուն բեր :

*
**

Լէոներուն կաքուկն ըմ ,
Ձորերուն պիլպուլ ,
Մոցուղ նունուֆարն ըմ ,
Գօտեկդ թուլցուր :

Գիշերուն Լուննկայ ,
Յորեկուան Արեւ ,
Ես քէնէ գատուեցայ ,
Ձունիմ օր արեւ :

*
**

Ըսօր հալան մըշուշ է ,
Իմ հարըս աէնկի դուշ է ,
Մի՛ մէղազրեք դըրասներ ,
Սըրաին սիրածն անուշ է :

*
**

Կանչէ՛ , կոռ՛ւնկ , կանչէ՛ , ձանդ բարակ է ,
Եարիս լեզուն թաժա մեղուած կարադ է :

**

Քանի քեզ չեմ տեսեր,
Չեմ էղեր բանի,
Միրուզ չեմ դիմանար,
Կու կանչիմ մանի:

Հավասով սիրեցի,
Հավասըս չառի,
Եար անուշ քու բերեկդ
Խօսքուկ մի չառի:

**

Վարդէնի ըլլայի, դուռըդ բունէի,
Իմմէն առաւօտուն էռջիդ բասուէի,
Ասնէիր դէռնաիր, փեշըդ քրտուէի,
Նրան հաս ըլլայի, ծոցդ լըսուէի:
Ասուածամար, ես մուրտախ հասնէի,
Ձի մէտածտան սիրած եարս տեսնէի:

**

Բերդին Քարը պայիր է,
Չորս բուրբը շայիր է,
Ղայաթ բրէք, աղջըններ,
Հարս ըլլալու տարի է:

**

Աս մէկը իմ մօրս, Օգիկ Քոչեանի հեղինակութիւնն է:

Գարնան ջրբերուն պէս
Ճօշմիչ ըմ էղեր,
Եարս որ միտքս կ'ընենի,
Շաշմիչ ըմ էղեր:

**

Թը նուշ ուտիմ, թը շաքար,
Ղարիպին ձանը կու գար,
Վախնամ թը զարիպ մէտնիմ,
Ո՛չ քուր, ո՛չ աղբար կու գար:

*
**

Բարսը լէռան ետին բարսը լէռ մ'ալ կայ,
Բոլորը տուժան է, մէջը դառ մի կայ:

*
**

Լէռները ժուռ կու դան անտէր՝ վարիքը,
Կորուսեր դառնուկը, կու լայ մ'արիկը:
Լէռներուն դըլօխը, լէռներուն արօտ,
Սիրուդ խեւ ըմ էղեր, երեսիդ կարօտ:

*
**

Լէռներուն դըլօխը կանանչ մորի է,
Ղարիպին մեկ օրը հազար տարի է:

*
**

Բարսը օտան ելայ,
Յուրտ է, կու մըսիմ,
Իմ եարքս սիլայ դայ,
Ես կու հավասիմ:

*
**

Փլեր է Աշխարհը, կ'երթայ պարի պէս,
Մէյ մի չիկայ օր լուր բերէ դարիպէս:

*
**

Եկօ՛ր, ետվրո՛ւս, եկօ՛ր, էմբուկըս հառաւ,
Քեզ իսնէ գասողը Աստուգմէ գըտաւ:

*
**

Տաղլան-տաղլան կ'ընէր Պոլիսի ծովը,
Ի՞նչ բարակ էս անչար զարիպին հովը.
Տերը նասիպ ընէր, երթայի քովը,
Հոս չըրած նագերըս ընէի քովը:

*
**

Ըտամսլօլ բարսը տեղ է,
Բոլորը ծառ ու ճեղ է,
Ջուրը հիւընդի դեղ է:

*

**

Ողորմած Տէր Ասուած, Փռթանատ թարկէ,
Վէրտեղ զարիպ մի կայ, իր տեղը ղրկէ:

*

**

Քէրվան կու դայ, ի՛նչ զուժաշէ բէռներ կայ,
Արաներնիս շատ ծովեր ու լէռներ կայ:

*

**

Պիլպուլը կու կանչէ,
Աղւոր դարուն է,
Աչքերսը արցունք է,
Սիրտըս արուն է.
Մէկ հատ ետվրու մ'ունիմ,
Իսնէ հէռուն է:

*

**

Ձուն է եկեր լէռները,
Շարիտեցին բէռները.
Ելի՛, ետվրուս, տո՛ւն եկօ,
Հարամի կայ լէռները:

*

**

Պիլպուլը կու կանչէ,
Ըսօր դարուն է,
Աչքերըս արցունք է,
Սիրտըս արուն է:
Խոցըս մի՛ փրցըներ,
Եարաս խորուն է,
Մէկ հատ ետվրու մ'ունիմ,
Ան ալ հէռուն է:

Տո՛ւն եկօ, ետվրում,
Տո՛ւն եկօ,
Արմուղատ չեմ ուղեր,
Արե՛ւտ առ, եկօ՛:
Արեւըս առնիմ,
Ելլի՛մ լէռները,
Արունով ըն լըսուեր
Սըրախս դըռները:

*

**

Ես ա՛լ չեմ երթար վարդէնուն տակը,
Կոյեցաւ իմ մատնուս ճէվայճիր ակը:

*

**

Ծառները ծաղկեր ըն, մեյլանին խակ է,
Սըրտիս բերդը փըլեր, վերանա բակ է:

*

**

Վերէն ի վար գու գաս, բարակ ձանով ըս,
Իմ հետըս չես խօսիր, վախճամ քէնով ըս:

*

**

Բարո՛վ չեր բերեր իս բերող մարը,
Բերաւ գերի ձըգեց, ես ինտո՞ր ընիմ,
Կրակն ըմ ինկեր, կ'երբիմ, կու վառիմ:

*

**

Յածացեր է կ'երթայ աչնան Արեւը,
Ա՛լ չեն առներ աղքատ մարդուն բարեւը.
Յուերըս չեն քաշեր լէոներ, ձորերը,
Ի՞նչ հավասներ մընաց սըրտիս խորերը:

*

**

Ըհա եկաւ գարուն, բուսեր է գարը,
Այհուզար ընեկով կըյեր է թափը:

*

**

Կապուռն ձագն օր կ'առնին, մարը կու ճըչէ,
Գիշեր-ցորեկ կասկամ էղեր կու կանչէ:

*

**

Կռունկ մ'եկաւ, օխոր թաւուր խատ ունէր,
Սըրտին մէջ ալ թուռլու-թուռլու տէրտ ուներ:

*

**

Խութլուին ձորտին ձի ու ձիաւոր,
Խաչամուն ալ մեջը մինուկ մինաւոր:

Հարսներ զգալ բերէք, արուն ժողվեցէք :
Բիրերըս կոյցեցէք, ջուրըս տաքցուցէք,
Ղափալըս ճէղքեցէք, ճաղեր կապեցէք .
Խանէն ծախեցէք,
Տուրիկըս ծախեցէք, խունկ ու մոմ վառեցէք :

Ամէն անգամ իր յօրինած այս շերով կը վերջացներ մասն : Երբ
պնդէի որ ուրիշ շեր ըսէ, կը պատասխանէր նոյն այս շերով :

«Ես ալ ըմ ծերացեր,
Գիտածս ըմ մոռցեր,
Ա՛լ մէյլա չի տըւած
Ծառերն ըմ դէռձեր :»

Այս օրօքն ալ հաւաքած է նոյնպէս ներսէս Խաչիկեան, գոր
կ'արտատպիւմ ՀԱՅՐ ԵՆԻՓ ամսագրի 1936ի Հոկտ .ի թիւէն :

էյ ընիմ, է, է, է, է...
Օրօր, օրօր, օրօր, օր քունըտ տանի, ի ի ի ի ի ի,
էյ ընիմ, է, է, է, է, է, է, է, է, է...
Դըռանն ետին նետիմ, օր շունը տանի, ի ի ի ի ի ի ի ի :

Օրօր ընիմ, օրօր, օր քունըտ տանի,
Դըռանն ետին նետիմ, օր շունը տանի :

Օրօր, օրօր, օրօր, օրերս օրերուտ,
Գըլօխըս դեմ բերիմ գալած ցաւերուտ :

Օրօր, օրօր, օրօր, օրըտ շատանայ,
Օրըտ շատանայ, ետվրում, տարիտ մեծանայ,
Մեկիկ տարիտ հազար տարուան մօտենայ :

Օրօր, օրօր, օրօր, շատ եղներ եկեր,
Եկեր է մեր վերի կալերն է ինջեր .
Եաւրուիս ալ օսկի օրան է բերեր :

Օրօր, օրօր, օրօր, օրանըտ օսկուն,
Օրանտ օսկուն, ետվրում, գլանտ արծըթուն :

Օրօր, օրօր, օրօր, դուն հօրով, մօրով,
Հօրով, մօրով, հավրում, դուն ծառ շրջերով,
Ծառ շրջերով, հավրում, կարմիր խրնձորով:

Է՛յ կանչիմ օր քննանաս,
Արտին թընպերը ժուռ գաս,
Իրկուն ըլլայ նը տուն գաս,
Դըրասներուն բարեւ տաս,
Հօրբա, մօրբա արեւ տաս:
Է՛յ ընիմ, օրօր ընիմ,
Կապատ կըլիմ շոր ընիմ
Չատիկը գայ, նոր ընիմ:

Շոր = Տղուն տակը փռելիք հին լաքի կտոր, որուն վրայ կը
վրգէ, եւայլն:

*
**

Ճոր, ճոր, ճոր, ճոր, ճորիպար,
Ամուն, եկօ, հօրբա, տար.
Պըճըլիկ է, չեմ ի տար,
Եր որ մեղնայ, հըպա տար:

*
**

Քէրվան եկաւ, ի՛նչ խումաչի բէռներ կայ,
Արաներնիս շառ ծովեր ու լէռներ կայ,
Լէռներ, լէռներ, խորունկ-խորունկ ձորեր կայ:

*
**

Խաթար ջորիք բերեք, բէռներըս բէռնամ,
Ինիմ ճամբան ի վար, ցաւերըս մոռնամ:
Ախըլսու փեշերը ծաղիկ կու ժողվիմ,
Ցաւերուս, տէրտերուս մէյճլամ կու շինիմ:

*
**

Լուսնակ մի Խոռնէն փըրթաւ,
Լուսնակ դուն լուսով կեցիր,
Պայճ մըն ալ հաւտակեցիր:
Չար արմունկը իս դիպաւ,
Նըռան գինիս թափեցաւ:

Խարալուի պաղուկ, պաղուկ ջրերը,
Հարեզսրբու անուշ, անուշ քրնիքը,
Կոյլըկերըս մընաց Սըզաէ ձորերը:

Կանչէ՛, կըռունկ, կանչէ՛, ձանրա բարակ է,
Եարիս լեզուն թափա մեռզած կարագ է:

Ես Մուշեղն ըմ՝ դարնան չարչի,
Մաս մի հացի կարօտ մնացի,
Նա՛, նա նի՛, նա՛, նանի՛ ճան:

Մեր գեղին շերերը հայերէն էին: Կան որ թուրքերէն կը յօ-
րինէին, գայն նկատելով գրաբար, բարձր լեզու: Այսպէս, Խաչըկոնց
Ներսէս ամին կիճը բանաստեղծուի էր, բայց թուրքերէն կը յօրի-
նէր: Մեռաւ ջարդէն քիչ մը առաջ:

Կը թուի թէ մեր նախահայրերը Անիի մէջ աւելի նոյս ուտե-
լիքներ ունին եղեր: Փա՛ստ, սա պատահիկը.

Մեծ-Պահլըն եկաւ, Անի՛, Անի՛,
Մոխով, հացով, մարդ կու բանի՞ . . . , Նա՛, նանի՛, նանի՛ ճան:
Այրում եմ, երում եմ,
Չեմ գնար, նանի՛ ջան:

Քեզ վառեցի՛ն, Անի՛, Անի՛,
Կրակն ընոնց սիրտը բանի,
Նա՛, նանի՛, եւայլն:

Անիի յիշատակին համա՞ր յօրինուած՝ թէ Կովկասէն ներա-
ծուած, ո՞վ գիտէ:

ՇԵՐԵՐ ԱՆԲԱՍՏԻԱՅԷՆ

Պատմեցին երկու բնիկ սեբաստացի քայրեր

Երկու աղվեր ջուրը կ'երթան,
Մէկը միւսին հարցում կու տան.
— Ե՞ս եմ աղվեր, դո՞ւն ես աղվեր :
= Ե՛ս ալ աղվեր, դո՛ւն ալ աղվեր :

Գեղին վերեւ հերկեր-մերկեր,
Շապիկըս կարմիր եմ ներկեր,
Սիրեր եմ, չեմ կրնար թէրկեր,
Ա՛խ, սիրեր, չե՛մ կրնար թէրկեր :

Գեղին վերեւ արտ մը դարի,
Քանի քաղեմ հովը տանի,
Մէջն ալ երեք կաքաւ բանի,—
Մէ՛կը հարըս, մէ՛կը մարըս,
Մէկն ալ դայէթ աղվեր եարըս :

Դրանն ետին սալորենի,
Սալորն իյնայ, չգլորի,
Քեզ առնողն ալ չալեւորի :

Ա՛ղջի, չիկուկ մաղերդ,
Կ'երեւայ կոր խաղերդ,
Ա՛լ չեմ քաչեր նաղերդ :

Մի՛ լար, Մարո՛, մի՛ լար,
Աչերըդ կ'աւրի,
Քեզ սլգտիկ կարգողին
Տընակը աւրի :

Մազերդ ինկեր պուճիւք վրայ,
Ակուաներդ մանրիկ, մանրիկ,
Աչքերդ են փայլուն ճրագ,
Եւ յօնքերդ կամար լուսնակ,
Երեսներդ կարմիր խնձոր:

Խնձոր մ'ունիմ խածած է,
Չորս բոլորն արծըթած է,
Աղբարս ուղեց, չտուի,
Ան իմ եարիս զրկածն է:

Աղջիկ Հոռոմ, Հոռոմել է եարս,
Արեւ դպել, թառամել է եարս,
Աղջիկ Հոռոմ, Պաղտատը(*) կապել ես,
Աչքով արել, եարօյիդ խարել ես:

Աման երուայ կրակին,
Թէղերակին, քաւորակին,
Թողէք երթամ Հասնիմ
Ես իմ մուրատին:

ԽՈՒՌՆԱՎՈՒԼՅԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ ՄԸ —

ՔՕԹԱՆԵՆՑ ԱՆՆԱՆ

Հիմա 85 տարեկան է ու կը բնակի Փարիզ: Փախուստը ազա-
տեց զինքը շարդէն, մէկ անչափահաս զակին հետ: Յետոյ երկու
մանչ ունեցաւ երկուորեակ, որոնց մէկը լեռը նետեց, միւսը հաս քովն
է: Ամուսինը փախստական էր Տօղան, մեր՝ գեղացի հարսները գայն
գարնել տուեր են Զարմանեցն Կարոյին հետ: Ահա՛ւասիկ իբ մէկ շե-
րը Մեծ-Պահքի վրայ, որ համակ գրական պատկեր է, ուստի տա-
ղանդ: Հոս, Փարիզ գրի առի:

Մեծ-Պահքն եկաւ Անի, Անի,
Կրակն ընոնց սիրտը բանի.
Սոխով, Հացով մարդ կու բանի^օ:

(*) Պաղտատ = կապի մը անուն է:

Շատ շալկեցանք տապուլ, գուռնա,
Լըվիճը շուն ըլլայ օռնայ,
Հավլան ու բաղարջը մարդ կու մսոնա՞յ:

Երկնցեր է Օփնեսը,
Գինովցեր է Ներսեսը,
Գըլեր կ'երթայ փաթաթէսը,
Ե՞րբ պիտ' առնինք պահքին հերսը:

Զապուրը պըտրատ տընէ տուն,
Երկան է ճըզէ թըթուն,
Փեշերով է մըժկէ թըթուն,
Յարութիւն կ'առնէ տակէ թըթուն:

ԱՆՆԱ ՔՕԹԱՆԵՆՑ

Այս հրաշալիքը բացատրելը պժուար պիտի ըլլար: Զայն հասկնալու համար հուռնավուպի ըլլալու է:

Մեր գեղը աշուղ էր հաշըկոնց Ներսես ամին կնիկը, բայց բուրբերէն կը յօրհներ, գայն նկատելով գրարար, բարձր... լեզու:

Մեր գեղացի կիները շատ տեղեր կ'ողբան Անին, անոր յիշատակը աշապէս յաւերժացնելով անգիտակցօրէն: Վասնզի մոռցուած էր թէ մեք Անցիներ ենք:

ՎԻՃԱԿԻ ԽԱՂԸ ԽՈՒՌՆԱՎԻԼԻ ՄԷՁ

Կ'երթան բոերը: Ամէն մարդ խոտ, ծաղիկ, մանաւանդ վիճակի ծաղիկը կը ջաղեն ու աման մը կը լեցնեն: Յետոյ տունէ տուն կը պտըտին, ամէն թաղ իրենը, եւ իւրաքանչիւրը ամանին մէջ բան մը կը նետէ: Յետոյ ջուր կը լեցնեն ամանը ու վար կը գնեն մինչեւ յաջորդ օր: Զուրն ալ ԿՈՒԻՁԵՐԷՆ կը բերեն, խոտն ալ: Մէջն ալ զիչ մը բուռ կը մանրեն ու կը լեցնեն, որպէսզի ջուրը ճերմկի, պղտորի:

Առտուն, երբ Արեւը ցաթի, բոլորը կը հաւաքուին: Միամիտ մէկը կը գնեն ամանին վրայ ու գլխուն լաթ մը կը ձգեն:

Պեյթճի (խաղատաց) կիները կը հաւաքուին եւ մէյմէկ լաղ կ'ըսեն: Ամէն մէկ լաղի բան մը դուրս կը նետէ ամանին վրայ կեցող միամիտը: Թէ որ պէշ ըլլայ, հա', հա', հա', վրան կը ինդան անո՛ր, սրուն կը պատկանի դուրս նետուած բանը:

Վիճակին օրը դար, Աշխարհը մեզի էր:

Հա իրկուհը ամէն մէկը խալամի մը (հասկ) տակէն թէլ մը կը կապէր: Առտուն կ'երթայինք կը նայէինք որ խալամը երկնցե՞ր է, թէլը վար մնացե՞ր է: Այսինքն խալամին ցօղունը անե՞ր է: Որին խալամը երկնցած կ'ըլլար, որինը՝ ոչ: Դժբախդին խալամը նոյնը մնացած կ'ըլլար: Բախդաւորին խալամը քիչ մը անճած կ'ըլլար: Բախդ կը փարձէինք: Ո՛վ որ բախդ ունի, օրը (կեանքը) երկար կ'ըլլայ, խալամը ծղօտ քշած կ'ըլլայ:

Սակայն մի'նակ ԿՈՒԻՋՆՐԻ արտերը կը կապէինք խալամը: Ինչո՞ւ այս ամէնը ԿՈՒԻՋՆՐԻ կ'ընէին: Տեղը սո՞ւրբ կար, թէ ոչ բուռին ու ջուրին համար:

Օրէնքը այդպէս էր, կ'ըսեն: Ելանք, մեծցանք, ԿՈՒԻՋՆՐԻ'ն տեսանք:

Հո՛ն կ'ընէին: Հոն բուռ էր: Առատ ջուր կը բղխէր: Վիճակի խոտը, որ ղեզին ծաղիկ մը ունի, հո՛ն, բուռերուն վրայ շատ կը բուռնէր: Անոր համար ջուրը, խոտը, ծղօտը, ամէն բան Կոլիզեր ու Կոլիզերէն:

«Այն ինչ որ ունիմ, հեռու կը քուի,
եւ ինչ որ չկայ, ինձ պարզ կ'երեւի:»
ԿԵՕԹԷ

ՈՒՐԻՇ ԲԱՆ...

Պետենց Արմենակին մայրը պատմեց, Փարիզ, 13. 7. 1950ին. —

Տիվրիկի ջարդին, Թուրք մը, Սըտիսին, գիշերը տուն կու գայ ու եղբորը, Բեֆիգի կ'ըսէ որ բազուկներս յոգնեցան, ելի՛ր, գնա՛, քիչ մըն ալ դո՛ւն ջարդէ: Եւ արիւնոտ հագուստները կը հանէ, կը պառկի: Բեֆիգ կ'երթայ, ու մինչեւ լոյս ան ալ կը ջարդէ: Հա՛րկաւ Հայեր:

Մամրկոնց ԹՈՒՕՇԻՆ-ՄԱՆՈՒԿ, աղչիկը, Գարնանիկը անոնց տունը եղեր է ու պատմեր է: ԹՈՒՕՇ ՄԱՄՐԿՈՆՅ Արիսի ու վրթա-նէսի հայրն էր:

Վիճակ քաղիմ վըժկընեքով,
Ոտտեր քաղիմ մաըզընեքով:



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՏԻՎՐԻԿԻ ԽՈՒՌՆԱՎԻԼ ԳԻՒՂԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1909 ՄԱՅԻՍ 1ԻՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՏԻՎՐԻԿԻ ԽՈՒՌՆԱՎԻԼ ԳԻՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԵՐԱԿԱԶՄՈՒԱԾ 1909 ՄԱՅԻՄ 1ԻՆ

ՆՊՍՏԱԿ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ՆՊՍՏԱԿՆ է ԽՈՒՆՆԱՎԻԼ ՂԻՂԻ արական սեռի զպրօցին զարդացման նպատակը՝ թէ՛ նիւթապէս, եւ թէ՛ բարոյապէս :

ՄԻՋՈՑՆԵՐ

1.— Ընկերութիւնս իր նպատակին հասնելու համար պէտք է աշխատի անդամ աւելցնել եւ պէտք եղած ջանքն ընել անոր յառաջընթացութեան համար : Նիւթական միջոցներու աղբիւրներն են անդամներու պարբերական տուրքերը, բարեսէր անձերու նուէրները, հանդէսներէ, ներկայացումներէ եւ երեկոյթներէ զոյացած հասոյթները :

2.— Ընկերութիւնս իր նպատակները եւ բանակցութիւնները կ'ընէ զպրօցին վարիչ մարմիններու հետ, եւ իր կողմէն ընտրուած երեք անձէ բաղկացեալ մարմին մը կ'ունենայ Երկրի մէջ, գործելու համահաւասար իրաւունք ունենալով զպրօցին վարիչ մարմիններուն հետ :

ԱՆԴՄԱԿՑՈՒԹԻՒՆ

1.— Ընկերութեանս կրնան անդամակցել 17 տարեկանէն վեր ամէն Հայ՝ առանց կրօնի եւ սեռի խտրութեան, վճարելով 1 տուար մուտք եւ 20 սէնթ ամսավճար, սրմէ աւելի վճարումները շնորհակալութեամբ կ'ընդունուին :

2.— Այն անդամն, որ երեք ամիս շարունակ չի վճարեր իր ամսավճարը, անդամակցութենէ կը դադարի, իսկ ա՛յն, որ բանաւոր պատճառներով չի կրնար վճարել կանոնաւոր, այնպիսին կրնայ կրկին մնալ:

3.— Ընկերութենէս հրատարիլ ուզող անդամն պէտք է որ իր հրատարականը գրաւոր տայ Տեղային Վարչութեան, որ կը ներկայացնէ զայն Անդամական Ժողովին:

4.— Հրատարող անդամը իրաւունք չունի իր վճարումներէն որեւէ բան ետ պահանջելու:

5.— Ամէն անդամ հաւասար ձայն եւ քուէ ունի Անդամական Ժողովներու մէջ:

6.— Քաղաքէ քաղաք փոխադրուող անդամներ, կրնան նոյն տեղի մասնաճիւղին վճարել ամսավճարները՝ նոյնտեղ անդամ ըլլալով, իսկ ա՛յն տեղ, ուր Ընկերութիւնս մասնաճիւղ չունի, անդամը ազատ է իր ուղած տեղը ընել վճարումն:

ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

1.— Որեւէ տեղ նոր մասնաճիւղ մը կազմելու համար առնուազն հինգ անդամ պէտք է:

2.— Այն տեղերը, որ մօտ են իրարու, բայց մէկ-երկու քահան անդամներ կը գտնուին ու իրենց թիւը հինգ կամ ասանի կը հասնի, կրնան զատ մասնաճիւղ մը կազմել, եթէ ուզեն:

3.— Այն մասնաճիւղը, որ արդէն գոյութիւն ունի եւ իր անդամնոց թիւը նուազ է, միջեւ հինգ անդամ՝ կրնայ իր գոյութիւնը պահել, իսկ եթէ հինգէն պակաս է, այն ատեն կը լուծուի մասնաճիւղը եւ մնացած անդամները կրնան ուղած տեղերին անդամակցիլ, իսկ մասնաճիւղին գոյքերը կը յանձնուին Ընկերութեան Կեդրոնական Վարչութեան:

4.— Նորակազմ մասնաճիւղ մը պէտք է Կեդրոնական Վարչութենէն վաւերացուած լինի:

ՏԵՂԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.— Տեղային Վարչութիւնը առնուազն հինգ անդամներէ կը բաղկանայ, իսկ ասիկէ աւելին կրնայ Տեղային Անդամական Ժողովն ուղած թուին բարձրացնել, որք են՝ Ատենապետ, Ատենադպիր, Գանձապետ, Կնքապահ եւ Հաւաքիչ, որոնք կ'ընտրուին Անդամական Ժողովներու մէջ՝ զազանի քուէից երկու-երրորդի առաւելութեամբ եւ

կը պաշտօնավարեն վեց ամիս : Վերընտրելի կրնան ըլլալ յաջորդ չրջանին : Ասոնցմէ մէկը եթէ հրաժարի, յաջորդ առաւել քուէ ունեցողը կը կանչուի, իսկ եթէ կէսէն աւելին հրաժարին, վերստին քուէարկութիւն ընելու է :

2.— Տեղային Վարչութեան անդամ մի'այն անոնք կրնան ընտրուիլ, որ առնուազն վեց ամիս առաջ անդամակցած են Ընկերութեան :

3.— Ատենապետի պաշտօնն է ամէն երկու ամիսը անգամ մը Անդամական Ժողով դումարել, Վարչական եւ Անդամական Ժողովներու հսկել, եւ պաշտօնական դրութիւնները ստորագրել :

4.— Ատենադպրի պաշտօնն է Ժողովներու արձանագրութիւնները կատարել եւ ստորագրել :

5.— Գանձապետի պաշտօնն է Ընկերութեան հասոյթները դանձել եւ Մայր Տոմարին մէջ անցընել, նաեւ դրամական խնդիրներու վերաբերեալ թղթեր ստորագրել :

6.— Իւրաքանչիւր Մասնաճիւղի Գանձապետ իր քով տասը տուարէն աւելի դրամ պահելու չէ, անկէ աւելին միշտ զրկելու է Կեդրոնական Վարչութեան, անկէ ստացազիր պահանջելով :

7.— Կնքապահի պաշտօնն է կնիքը պահել եւ կնքել այն բոլոր դրութիւնները, որոնք Ատենապետի եւ Ատենադպրի ստորագրութիւնները կը կրեն :

8.— Հաւաքիչի պաշտօնն է, անդամներու ամսավճարները հաւաքել եւ Գանձապետին յանձնել՝ անկէ ստացազիր առնելով :

ՊԱՏԳԱՄԱԽՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1.— Պատգամաւորական Ժողովը կը կազմուի իւրաքանչիւր Մասնաճիւղի լիազօր ներկայացուցիչներով, որ կը դումարուի տարին անգամ մը (Մայիս 30ին) . բացառիկ պարագաներու տակ կրնայ Պատգամաւորական Ժողով դումարուիլ :

2.— Իւրաքանչիւր Մասնաճիւղ մինչեւ 20 անդամի համար մէկ ներկայացուցիչ զրկելու է, անկէ վեր տասնին մէկ յաւելումով :

3.— Պատգամաւորական Ժողովը պաշտօնն է ունենալ իր առանձին դիւանը, որ Պատգամաւորական Ժողովի արդիւնքը վաւերացնէ :

4.— Պատգամաւորական Ժողովը Մասնաճիւղերու օրէնսդիր Ժողովն է, որ կ'ընտրէ Կեդրոնը, կը կնքէ Կեդրոնի դործերը, եւ իրաւունք ունի դժել Կեդրոնական Վարչութեան սահմանը :

5.— Պատգամաւորական ժողովի զործն է եռապատիկ ցանկ մը պատրաստել, անոնցմէ եօթը փտասէլի եւ զործող անձեր ընտարել, Ատենապետ, Ատենադպիր, երեք Գանձապահ եւ երկու Խորհրդատու, որոնք պիտի կառավարեն Ընկերութեան գործերը՝ մինչեւ յաջորդ Պատգամաւորական ժողովի գումարումը, երբ լրացած կ'ըլլայ իրենց պաշտօնը:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1.— Կեդրոնական Վարչութեան գործն է Պատգամաւորական ժողովի որոշումները գործադրել, հսկել՝ Մասնաճիւղերու թիւրիմացութեանց տեղի չտալով, Ընկերութեան շահերը պաշտպանել, ըստ օրինի ջանալ համերաշխ պահել բոլոր Մասնաճիւղերը, իսկ կարեւոր խնդիրներու համար դիմել բոլոր Մասնաճիւղերու, լուծելու համար խնդիրները:

2.— Կեդրոնական Վարչութիւնը ինքը կ'ընտրէ իր դիւանը, սակայն Գանձապետները կարողութեան տէր անձնաւորութիւններ լինելու են՝ երաշխաւորեալ:

3.— Կեդրոնական Վարչութեան Ատենապետի գործն է հսկել ժողովներու, պաշտօնական գրութիւնները ստորագրել, եւ բացառիկ պարագաներու տակ եղող Պատգամաւորական ժողովներու ատենապետել:

4.— Ատենադպիրի գործն է ժողովի արձանագրութիւնները ընել, պաշտօնական գրութիւնները ստորագրել, եւ բացառիկ պարագաներու տակ եղած Պատգամաւորական ժողովոյ արձանագրութիւնները ընել եւ ստորագրել:

5.— Գանձապետներու պաշտօնն է Մասնաճիւղերէ զրկուած դրամները պանձել եւ դրամատուն դնել՝ փոխարէնը ստացադիր զրկելով ի գիտութիւն տեղային անդամներու:

6.— Ընկերութիւնս երեք կտորէ բաղկացած կնիք մ'ունենալու է, որոնցմէ մէկը Ատենապետի եւ միւսը Խորհրդատուներու քով մնալու են, որոնք միասին գալով գործածելու են դրամ արուելու եւ հանուելու ատեն միայն:

7.— Ընկերութեանս դրամը մինչեւ որ 300 տուարի չհասնի, չպիտի գործածուի, որմէ յետոյ կրնայ գործածուիլ նպատակին՝ Պատգամաւորական ժողովոյ որոշմամբ:

8.— Եթէ Ընկերութիւնս որոշեալ դրամագումուիչն աւելի նիւթական ոյժ մը զոյացնէ, այն ատեն պիտի բանայ Խուռնափիլ դիւզին մէջ աղջկանց վարժարան մը՝ իգական սեռի կրթութեան համար:

9. — Բացառիկ պարագաներուն եթէ դպրոցին օգնելու պէտքը զգացուի, այդ՝ յատուկ հանգանակութեամբ կրնայ լինիլ, եւ կամ մասնակի հաւաքումներու միջոցաւ :

10. — Խնունավիլի գիւղի մէջ գտնուող Վարչութիւնը ամէն պարագայի տակ Ընկերութեանս Կեդրոնական Վարչութեան հետ միայն յարաբերութեան մէջ գտնուելու է :

11. — Կեդրոնական Վարչութեան տարեշրջանը լրանալէն մէկ ամիս առաջ պէտք է լուր արուի բոլոր Մասնաճիւղերուն, որոնք Պատգամաւորական Ժողովին Չրդ յօդուածի տրամադրութեան համաձայն կ'ընտրեն իրենց ներկայացուցիչները՝ Պատգամաւորական Ժողովի գումարման համար :

ԼՈՒԾՈՒՄ

12. — Ընկերութիւնս ա'յն տանն միայն գոյութիւն ունենալէ կը դադրի, երբ բոլոր Մասնաճիւղերու անդամներուն թիւը հինգէն պակաս լինի, եւ այն տանն բոլոր ունեցածը կը զրկուի իր նպատակին գործածուելու համար :

13. — Անդամոց նուազման առթիւ Կեդրոնական Ժողովոյ անդամները պարտին անդամոց եւ ընդհանուր Ժողովրդին ուշադրութիւնը հրաւիրել յիշեալ Չրդ յօդուածի տրամադրութեան վրայ՝ ինդրելով որ փութան Ընկերութիւնս լուծուելու վասնդէն ազատել :

14. — Ընկերութեանս սեւէ պաշտօնեան պէտք է ՁՐԻ աշխատի :

15. — Կանոնադրութիւնը, բացի իր նպատակէն, կարելի է բարեփոխուիլ Մասնաճիւղերու հաւանութեամբ :

16. — Վերոյիշեալ յօդուածները Պատգամաւորական Ժողովը վաւերացնելով, Կեդրոնական Վարչութեան կ'արտօնէ ի գործադրութիւն :

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստյ Ազգ. Պատրիարքարանի դիւանաթուղթերէն, Փարիզի Նուարեան Մատենադարանին մէջ:

Այս թուղթերէն երկու անուկ երուսաղէմ զրկուած է, ուր իշածին սրիկաներու անհոգութեան երեսէն կորսուած են կամ դէթ առայժմ մէջանդ չկան, որ չեն պատասխաներ մեզի կամ Փարիզի Լուսաւորչականներու Առաջնորդին, որ ազնուօրէն դրեց իրենց մեր խնդրանքին վրայ, երկու տարի առաջ, եւ չիք... պատասխան:

Այս Դիւանաթուղթերը կը կրեն «ՏԻԻԲԻԿ(*) անունը: 1849 - 1876» թուականը: 24 կտոր:

*

**

ՀԻՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՆՄՈՅՇ

17 Նոյեմբեր 1856,
Տիւրիկէ

Վեհափա՛ն Տէր,

Ի Տիւրիկոյ գիւղօրէիցն Խուրմավույցի ձէտէնեան Պօղոսի որդի Տօնիկն մի քանի ինչ ամաց հետէ կայ բնակեալ ի մայրաքաղաքի, եւ որոյ չիք աստ ո՛չ հայր, եւ ոչ մայր, ո՛չ ամուսին, եւ ոչ ա՛յլ ինչ, այլ մի՛այն միանձնական ոմն է, եւ այժմ ըստ բանի դրութեան իւրում եւ ըստ վկայութեան Փենկացի Քոննակիւլեան Գեորգ Աղայի՝ ինդրէ մտանել ի կարգ ամուսնութեան ի մայրաքաղաքիդ: Ուստի բարեհամեսցի բարձր Սրբազնութիւն Ձեր կատարել զհայցառիս նորին կալ մնալ նովին զուլանաւորութեամբ վեհիդ:

Հուսկ ապա՛ մնամ Ձերում կենցաղօգուտ կենաց Ձեր յարատեւութեան փափաքօղ ի սրտէ:

Նու Խո Եպս. Տիւրիկոյ:

Ետեւը դրուած Պատրիարքարանի կողմէ:

«Տիւրիկցի Տօնիկին վկայականը յառաջնորդէ տեղւոյն»:

Գրուած խիստ բարակ, կապտորակ թուղթի մը վրայ, որ դրամեքենայով ընդօրինակութեան համար կը դործածուի ներկայիս: Վրան հին փուլ մը կայ եղեր, որ զողցած են, հետը կարել հանելով թուղթը...:

(*) Տիւրիկ:

Խառնակուլցիք կը գրեն Պոլիս, իրենց պանդուխտներուն

Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանի դիւանաթուղթերէն, սրոնք կը դռնուին Փարիզ, Բարեգործականի Մատենադարանը, օղանաւով դրկուած է Երուսաղէմ եւ մեզի անմտչելի է :

1864 Յունիս 27

Մերո բազմահարազատ սիրելեաց եւ համայն Խուրնակուլցի պէյքեարաց, որք կայք բնակեալ ի մայրաքաղաքդ Կ. Պոլիս, Մեծացդ եւ Փռֆունց ի խոր սրտէ սէր նուիրեմք :

Սի'րելիք, մեր գիւղին բնակչաց պարտականութեան ապահովութեանը համար խրկած էմիւրնամէն թէ՛ Սեբաստիոյ Կուսակալին, թէ՛ տեղուոյ Քաղաքական Ժողովոյն ներկայացնելով, քանի-քանի անգամ անկելեաց տերերուն հետ մուրաֆայ ըլլալին ասկէջ յառաջ ձեզի խրկելով զբարեպաշտ ծանուցիմք ի սրտէ : Այս անգամ վերջին ինքիւրին ձեզի գրել կը հարկադրենք, քանզի այս տեղի այլազգանքը այս գործով թէ ալ՝ մեզի կը հակառակասուեն, բայց միշտ երկիրդ կը խօսին . եւ մենք ալ ամենայն կերպիւ իրենց ըստ կանոնի դիմադրութիւն կ'ընենք . սակայն դուք լաւ գիտէք որ մեր քաղաքի այլազգանքը ամէնն ալ մամէլէճի ըլլալով իրարու տիրութիւն կ'ընեն կար, եւ մեզի ալ անի յաճութիւն կու տան . վասն որոյ հարկ եղել որ ձեր միաբանական ընկերութեանքը տերութեան Բ. Դռնէն Միւստէթի Փէրման մը հանելով շուտով կողմըս խրկել փոյթ տանիք . առաջին էմիւրնամէն մէջ գրեալ է թէ «Սուրհապուլ ահալիսի սոսն թարաֆընտան մէ'տին օլմալարի իջին, մուսա'ատէ լազըմ սըր» . այս խօսքով մեզ կը յաճեցնեն թէ թեաֆֆէնիլտէ մէ'տին տէկըլիլիկ ըսելով մեզի դէմ կերպ-կերպ ըստ իւրեանց լեզուի դաւեր եւ բառեր կը հանեն . անոնց իսէ մեր գիւղի բնակչաց էն աղէկ տուներնին քան ահէն հազար դր . պարտ կ'ելլէ . բաց ի անոնցմէ, որոնք որ պարտական են վաքսուն կամ եօքսնաուն հազարներով . սիրելիք դուք ձեզէն վեց բեռ պարտ հաշուեր էք . մենք հոս Հիւրիմաթի հրամանա թէմէսիկի պարտերը տիրի տէֆթէր շինել տուինք, որ ամէնը ուրք բեռ պարտ եղել . եւ մանր պարտերը դուրս է . ուրեմն այսքան յիսուն տնվոր բնակիչ մը չէ թէ պարտքը, հապա անոր տոկոսիքը հասուցանելու չի բաւեր, ուր թողունք որ տարեկան տոկոսիք վրան դնելէն յետոյ, բոլիցայի անուամբ տոկոսիք մըն ալ վրայ . եւ տեղդ ալ դրամը չի պատկելով ետ գալու ըլլանք վերստին հարիւրին քանակով տիրէր մը ընելու . ասանկով մեր խեղճութիւնը եւ մեր պարտաւորութիւնը օրբսօրէ կը բարդի . եւ կը դիզվի . ո'չ դուք պանդուխտ տեղդ Հիւրիմաթի ըլլալով այսքան պարտքը կըքնաք վնասեր, ոչ ալ մենք հոս գիշեր ու ցորեկ անդու աշխատութեամբ . արդէն մեր պարտականները իրենց մէջ կը խորհին որ Պոլիս մարդ մը խրկեն,

որ կերպով մը *էմիրնամէ* մը հանեն քէ Խուրնավուլլու *Խիւաֆի շէրի էրզուհաւ կէթիւրիւրէր տէյի*. ուրեմն դուք ալ անոնց ընթացիցը առաջին անելու համար փութացէ՛ք որ յառաջ սաստիկ *ժիւտտէյի Փէրման* մը հանելու. եւ եթէ չէ՛ք կրնար *Խէ*, անապարեցէ՛ք դիմել մերս հայրենասէր ազգային վարչութեան, որք իւրեանց իրաւախոհ բնւորութեամբն կը բարեհաճին սոյն հրովարտակը անուլ ի Տէրութենէն. վերստին կը քախանանք սիրելիք. քէ՛ գճե՛ք, եւ քէ ազգին մեր վեհագունները, որ այս յիշեալ հրովարտակին համար ձեր աշխատանքը չի խնայէ՛ք, եւ այս խօսքը քանի որ երեսն էլաւ *էկզիպարնիս* ալ կատրեցաւ. մէկ անձ մը չիկայ որ մեզ *էկզիպար* ընէ. ուրեմն գործին կատարմանը համար եւ մեր պարտեային տէրութենէն ազատութեանը համար հրովարտակին հանելուն մարը նայիք. մնամք կատարելութեան գրելոյս ողջ լերուք:

Ն. Կէտիկեան Եղիկ	Ն. Շըտոյեան Մինաս	Ն. Խաչուցէն Օհաննէս
Ն. Օվիկեան Յօնան	Ն. Սրապեան Եղիայ	Ն. Քոչենց Յակոբ
Ն. Խընկենց Բարունակ	Ն. Քոչենց Աստուր	Ն. Պաղտիկ Մամուկեան

Բուրբը կնիք ունին իրենց անուններուն տակը:
Լուսանցքին վրայ գրուած է.

Սիրելիներ, մեք եւս ինքնին այս գործին յառաջադիմութեանը ջատագով եմք. յիշեալ հրովարտակը ժամ յառաջ առ մեզ փութացնելի ողջ տանիք:

ԱՐՈՒԹԻՆ ԵՊՍ. ՏԻՎՐԻԿԻ:
Կնիք:

«Ի մայրաքաղաքն Կ. Պոլիս պանդխտութեամբ բնակեալ Խուրնավուլլի համայն պեյքեարաց մեծաց եւ փոքունց ժամանեցէ՛ք բարութեամբն Տեառն»:

Տակը երկու տող հայասառ թուրքերէն, գրեթէ անընթեռնի:
Անոր քով գրուած.

Տիվրիկի Գուրնավուլ գիւղացիք իրենց պարտուց եւ զամենայն տակառեաց տակ մնշըվիլը իմացընելով կը խնդրեն որ օրինաւոր կերպիւ հաշիւնին տեսնըվի եւ պայմանաժամ շնորհվի իրենց, որպէսզի մնացորդ պարտեւրնին վճարելու կարող ըլլան:

Սրբազանին հրամանաւ *Թաղբիւրը* պատրաստուեցաւ

Վերի նամակը Տիվրիկի եպիսկոպոսը գրած է, իր դիրն է :

Պոլիս դանուող մեր պանդուխտները զեզէն եկած այս նամակին կցելով հետեւեալը իրենց կողմէ, կը յանձնեն Պատրիարքարան : Երկուքը թելով իրարու կարուած են :

Կ. Պոլիս, 1864 Յուլիս 21

Գրասիրտ Հայր Սրբազան եւ Պատրիարք Ամ. Հայոց եւ ժողովական յարգապատիւ ազգայինն :

Խնդրեմք ի ձեզ բարեսրտութենէդ, որ զայս մեր բողոքագիրս ընդունելով եւ ընդ գամէն յերկրէս մերմէ եկեալ Տիւրիկոյ վիճակէ Յարութիւն Արք. Առաջնորդէ մերմէ վկայեալ եւ հունձնավուր գույրակցոցն ըստորագրութեամբն զխեղճութիւն մեր վկայել որ գնամակն զայն ի ծոց աղերսագրիս ի ունիք իմանալ ի նամակ անտի դառն պարտականուր վիճակնիս. սիսա եւ մենք խղճալի ստորագրեալքս, որ յաժմ Պոլիս կանք, չիք մեզ ուստեք օգնութիւն, բայց միմիայն Աստուծոյ եւ զի Պատրիարքարանի արդարագումար Ազգային ժողովիդ ազաչեմք առ ձեզ, դառցեալ ազաչեմք, օգնեցէք մեզ վասն Աստուծոյ, որոյ իվիք եւ իցէ ծանուցանելով զխեղճութիւն մեր առ Բաճրագույն Մեծագոր Տերութեան Դուռն, զի անտի հանէք մեզ գերօվարտակ վասն *բէտարի մուհաւէպի* կամ թէ ո՛ր նանապարհն որ դուրքին է աստ մեր գործի աջոգութեան գնույնն խնդրեմք ի ձեզ բարեսրտութիւնէդ, Աստուծով դուք խնդրեցէք զօգուտն մեր ի Տեսունէ. դառցեալ կրկնակի աղերսեմք յերկրէն մերմէ եկեալ Առաջնորդ Հայր Սրբազանէն նամակն, որ ընդ աղերսագրիս է, ուշիւ ընդեռնուլ, անտի յիմանալ զխեղճութիւն մեր եւ բարդեալ զպարսան մեր իբր իութեռ եւ ողորմեցարուք առ մեզ սիրով ազգասիրական եւ դուք ողջ լերուք օգուտ եւ պարծանս ազգին հայկազեան ի պատիւ Մեծագոր Տերութեան Օսմանեան առ ի պետս խըղճակեացս համայն ստորագրեցելոցս ի գուղչէն հունձնալով :

Պետրոս Խաչուկանց
Ծառուկ Կոչկրեց
Ասաբել Սիրապեց
Եղիեայ Յովիկոնց
Գրիգոր Թաթորեց

Յունտիկ Սիրապեց
Յօհան Շրտօնց
Ասաբել Կէտուկոնց
Գալուստ Թղտոց
Համբար Ղամպարեց

Յովակիմ Քօչենց
Եղիեայ Քօչենց
Պետրոս Ղամպարենց
Յարութիւն Սրապենց
Գրիգոր Խամպարենց
Մինաս Քօչենց
Պօղոս Յարգենց
Մարտիրոս Խնկենց

Ալիկսան Ղամպարենց
Գարրիէլ Քօչենց
Նիկողոս Քօչենց
Պօղոս Պալենց
Թորոս Քօչենց
Կիրակոս Քօչենց
Առաքել Խնկենց
Յարութիւն Մամուկանց

Ամէն մէկը իր ստորագրութեան տակ կնքած է կնիքով :

*

**

ՀԱՅՐԵՆԻՔԻ մէջ, Պոլիս, 1881 Դեկտ. 23, երրորդ էջին վրայ
կը կարդանք.—

Հաճութեամբ կը հրատարակենք հետեւեալ նամակը.—

...ՀԱՅՐԵՆԻՔԻ Խմբագրապետ, ազգասէ՛ր Տէր,

Մերաստիոյ ցահանգէն Խուռնավիլ գիւղիս Երկամեայ Խաստուած Լուսաւորչեան Ընկերութեան դպրոցին համար նուէր տուաւ Մօսկուա քաղաքն քնակող Մեծ. Մելիքն Գասպարեան փանեանց Էփ. Երեւելի հայ վանառականն 24 կտոր գիրք, դպրոցի դասագրքեր ուսումնարանի համար: Սոյն նուէրներն որ ստացանք, մայրաքաղաքս քնակող Գրիգոր Էփ. Նիկողոսեանի շնորհիւն էր: Սոյն Մեծ. ազգասէր Նիկողոսեան Էփէնտին այնպիսի՝ բարեբարութիւն մ'ըբաւ, որ իր ազգասիրութեան մեք Խուռնավիլցիս միշտ երախտապարտ կը մնամք: Սորին նման եւս Մելիքն Գ. փանեանց Էփ. ի ըրած բարեբարութիւնը բնաւ չպիտի մոռնանք:

Ո՛վ Խմբագրապետ Տէր, տես ռուսարմակ մեր ազգակից ազգասէր Էփէնտիին ազգասիրութեան ջերմեռանդութիւնը, որ այնպիսի հեռաւոր երկրէ իւր ազգասիրութիւնը մեզ ցոյց կու տայ սոյնպիսի նուէրներով:

Նաեւ մայրաքաղաքս քնակող ազգասէր Տօքթ. Փէշտրմալանեան Էփէնտին նուիրեց դպրոցիս 12 կտոր գիրք ուսումնարանի համար, սոյնպէս եւս Մեծ. ազգասէր Արիկ Էփ. Ռենեանն նուիրեց 200 կտոր

օրինակ՝ գետնախնձորի⁽¹⁾ մշակութեան, ափիօնի եւ ծխախոտի մշակութեան համար եւ մարախ ջնջելու համար ամէն տեսակէն 50 օրինակ ըլլալով: Նաեւ Ուննեան էֆէնտին ազգասիրաբար խոստացաւ ափիօնի եւ ծխախոտի հունտերն եւս նուիրել խեղճ գիւղացուցս, որպէսզի սոյն ազգասէր էֆէնտիի խոստացած բարերարութիւնը մեզ հռոտնավիլցուցս օգտակար պիտի ըլլայ նիրբակամապէս:

Ո՛վ ազգասէր, տեաք վերոյիշեալ էֆէնտիններուն տուած նուէրներն մեզ չափազանց միտքարութեամբ ուրախացուցին. եւ մեք հռոտնավել գիւղացիքս սոյն էֆէնտիններուն տուած նուէրները եւ քէ սոցս մման ազգասէր էֆէնտիններն ի՞նչ նուէր տալու որ ըլլան, մեր Լուսաւորչեան Ընկերութեանս մայր տումարին մէջ իւրեանց անմահ յիշատակներն կ'արձանագրեմք եւ ամէն տօնի օրեր դպրոցիս նուէր տուող բարեպաշտ անձանց գերգաստաններուն կենացը համար յատուկ աղօթքներ կ'ընեմք:

Խմբագիր Տէր, հանեցէք մեր սիրոյ երկտող հաւաստին հրատարակելի ձերին ազգօգուտ քերթին մի անկեանը մէջ:

Ի Դիմաց Գործադիր Ժողովոյ

Ատենադպիր
Յարութիւն Նազիկեան⁽²⁾
Խռոտնավիցի

Ատենապետ
Յարութիւն Խամպարեան⁽³⁾
Խռոտնավիցի

1881 Դեկտ. 21
Կ. Պոլիս, Բերս

1. Գետնախնձոր կը մշակէին մեր գեղը, որուն մեք փաքաքէս անունը կու տայինք: Մեր կիները 50-60 օլանոց ջուակները շալկած՝ Տիվրիկ ծախելու կը տանէին, երբէ ժամուան մամբայ, դարուերի, դարուարի: «Խռոտնավիլի փաքաքէսը շատ համով էր», ըսաւ վերջերս Տիվրիկցի մը: Ծխախոտի եւ ափիօնի հետք չկար: Ոչ ալ մարախ ջնջելու որեւէ գիտելիք: Միայն մեր Տէրտէր Ամուն (Բահանայ) տարի մը կանեփ ցանց, որ շատ լաւ անեցաւ, ու գայն Բազաք տարաւ ծախեց: Բազաքցիք անկէ չուան կը շինէին: Նոյն այդ Բահանան, զարգացած մարդ, վերոյիշեալ գիրքներուն պտուղը, քրեմի կը սնկէր իր արտը, Բազաքտը, հովերուն բերանը, որոնք ամէն ձմեռ ցուրտէն կը սառէին: Հայրս եգի տնկած էր, պարկուկն ու որքը տերու կու տային, բայց ոչ պտուղ: Իսկ կեռամները, դեռ ծաղիկը չքափած, գեղին մանուկները աւարի կու տային:

2. Յարութիւն Նազիկեան Պագոյենց Տըգասին հայրն է: Տըգաս 1902ին գեղը կապուտացաւ ու յանկարծամահ եղաւ: Կէպէ էղաւ ըսին գեղացիք:

3. Մեռած է 1906-1907ին Բալանկա գեղը:

**

1911 Մայիս 10, Խուռնախիլ

Մեծապատիւ

Ղազար Աղա Պապեան

Գահիրէ (Եգիպտոս)

Սիրելի եւ անմոռանալի հայրենակից մեր ,

Տեղւոյդ կրթասէր Միութենէն զրկուած տասնեւիմեց Անգլ . Ռսկին , այս շաբթու դեռ նոր հորհուրդիս յամենուեցաւ , զոր առածնուս պէս դասատուներուն ամականները վնարեցինք ամբողջովին :

Զմեռուան սաստկուիք⁽¹⁾ նամապարհներու երթելէկը դադրեցուց : Այս պատճառաւ այս դրամը ժամանակ մը Սերաստիա սպասեց եւ ժամանակ մ'ալ հոս՝ Տիվրիկոյ Առաջնորդարանը մնաց : Հաւատացէ՛ք , սիրելի հայրենակից , բէ եթէ այս դրամը չ'զրկուէր , մենք չ'պիտի կրնայինք այս տարի վարժարանին ընթացքը շարունակել , քանզի ջաղացքը բացառիկ ծախքեր ունեցաւ , օրինակ քարը փոխել , մէջը նորոգութիւններ ընել , եւն . ,⁽²⁾ այս պատճառաւ ցորենէն գոյացած դրամը ստուց ծախսած էինք : Դուք գիտէք արդէն քէ ջաղացէ՛ն զատ ա'լ ուրիշ որեւէ շահու աղբիւր չ'ունի մեր վարժարանը . հետեւապէս ընկերուե՛ք⁽³⁾ այդ դրամը մեր տղայոց դաստիարակուե՛ք⁽⁴⁾ բուն շարժառիթն եղաւ , շեշտակի զարկաւ կրթական Միութեան կանխասիրած նպատակին : Թող ապրի՛ն այդպիսի անհատներ՝ ուր որ ալ կան , որ լուսոյ տան բարեկամներ են , ստուց կեանքը հազար կ'արժէ , արեւ մ'են ստոնք , որ ծագած են , հայ հորիզոնը լուսաւորելու :

Յառաջիկայիս ալ մեր ջաղացքին ամպարը պիտի նորոգենք : Ծախք մը , որ աներածեշտ է , ստանց որոյ կարելի չէ՛ բաց պահել ջաղացքը : Կը խնդրենք դարձեալ յառաջիկայ Սեպտ . մէկին մեր վարժարանին այդ ընկերութեան ստուարել տալու միջոցները խորհեցէ՛ք այժմէն : Անուրանալի է ձեր մեր վարժարանին համար տարած հոգա-

1. Մաստկուիք՝ վրան պատիւով = սաստկութիւնը :

2. Եւայլն :

3. Ընկերուեք՝ վրան պատիւով = ընկերութեան :

4. Դաստիարակուեք՝ վրան պատիւով = դաստիարակութեան :

ծուիր⁽¹⁾ : Եթէ մենք չ'խոստովանինք գայս, այս պատեհ առթիւ, մեղք մը գործած կը համարենք :

Աշխատեցէք, ձեր հայրենիքին է օգուտը, ապագայ սերնդեան համար եթէ մենք ներկայիս չ'աշխատինք ու անտարբեր մնանք, Ածոյ⁽²⁾ առջեւ պատասխանատու ենք : Մեր մախնիք՝ որոնք այսօր գերեզմանի աշխարհի մէջ կը ննջեն, իրենց ուսումնասիրութիւն⁽³⁾ առնվի-րայ մ'եղան մեզ, հաւուսաւի ունեցաւ երբեմն օրինաւոր եւ ձեռնհաս ուսուցիչներ, որոնց տուած կրթութիւնը այսօր չ'կրնար անտես ընել մեր ժողովուրդը : Մենք այն բարի, կրթատեր եւ Ածատեր⁽⁴⁾ մախնեաց գաւակներն ենք : Օ՛րն, անո՛նց նմանինք : Կը սպասենք որ ձեր ուշադրութեան առարկայ ընէք մեր վարժարանական գործը, որուն վրայ անկասկած՝ կը վերջացնենք այս տողերը՝ յայտնելով Ձեզ մեր շնորհակալիքը ու յարգանքը :

Ի սուրբատեան խորհրդակցութեան արդիւնքով

<i>Աւարակ</i>	<i>Գազարեան</i>	<i>Երեւանցի</i>	<i>Երեւանցի</i>
<i>Բաբայան</i>	<i>Արարատ</i>	<i>Բաբայան</i>	<i>Արարատ</i>
<i>Գ. Գրիգորյան</i>	<i>Կենտրոն</i>	<i>Կենտրոն</i>	<i>Կենտրոն</i>
	<i>X</i>	<i>X</i>	<i>X</i>

Ահա չի քոտրիքն ու պարագայն աւարակ

Արարատի քոտրիքն ի սուրբ խորհրդակցութեան արդիւնքով
Կենտրոնի քոտրիքն ի սուրբ խորհրդակցութեան արդիւնքով
Բաբայանի քոտրիքն ի սուրբ խորհրդակցութեան արդիւնքով

1. Հոգաւորիք՝ վրան պատիւով = հոգաւորիքներ :
 2. Ածոյ՝ վրան պատիւով = Աստուծոյ :
 3. Ուսումնասիրութիւն՝ վրան պատիւով = ուսումնասիրութեամբ :
 4. Ածատեր՝ վրան պատիւով = աստուծատեր :

**

1895ի Չարդին գեղը պաշտպանողներէն Քոչենց Կարապետը կը
գրէ:—

Պոսթ-ոն, Նոյ. 25, 1959

Սիրելի եղբորսդդիս, Երուանդ

Սուսցայ նամակդ եւ չեմ մեղադրեր քեզ. պատասխանդ ստիպումս էի ուշացնել. մեր գեղացիներուն մեծամասնութիւնը ջանացի միասին հաւաքել, որովհետեւ յիշողութիւնս տկարացած է:

Որչափ որ կարող եմ յիշելու այն պարագաները մեր գիւղին յեղափոխական կեանքէն: Երեք հոգի էինք, Կոշկարեան Պողոս, Սրապեան Համբար եւ ես միասին մասնակցեցանք մեր քաղաքին Հնչակեան Կոմիտէին: Որոշումս էր որ իւրաքանչիւրս առանձին ամէն ջանք ընել՝ գէնք ձեռք ձգելու ամէն կերպով: Ասիկա սուրբ նպատակի համար էր: Այնպէս պատահեցաւ որ առաջին պատեհութիւնը ինձի հանդիպեցաւ: Անգամ մը Քոչեր եկան եւ դուրսը բաց օդին մէջ գիշերեցին: Կէս գիշերէն վերջ անգամ մը փորձեցի հրացան մը ձեռք անցընել, ամէնքն ալ քնացած էին, հրացան մը տեսայ մէկուն քով, գնացի կամաց մը քաշեցի, բայց զայիչը թելին անցուցած էր եւ արթնցաւ: Անմիջապէս փախայ դէպի պարտէզները: Մարդը ընկերներն ալ արթնցուց, բայց ես արագօրէն հեռացած էի եւ չկրցան զիս գտնել: Սակայն ջանքը անյաջող եղաւ:

Մէկ-երկու ամիս վերջ զինուոր եկաւ գիւղը: Երկերկու զինուոր մէկ տունի հիւր տուին: Ես տեսայ յարմար պարագան այդ գիշեր: Սանդուխէն վար իջայ. մարտինը սիւնին դէմ կեցուցած եւ առջեւը պակած էր մէկ հատը: Այս անգամ յաջողեցայ առնել ու հեռանալ: Աստուած ձայնս լսեց այս անգամ: Անշուշտ ստուտանց մեծ աղմուկ հանեցին, բայց հետքը չգտնուեցաւ: Բայց մէկ տարի վերջ մեր կեանքը ազատուեցաւ այդ գէնքին միջոցաւ:

1894ին մարտին ձեռք անցուցի եւ 1895ին գործածեցի: Կը յիշեմ երբ մեր բուրգ բարեկամները, Մուսթաֆա Փաշային հրամանով մեր գիւղին տարիքոտ մարդիկ եւ ամբողջ կիները հետերնին տարին իրրեւ հիւր: Ես եւ Կոշկարեանց Պողոսը եւ ուրիշ քանի մը հաս երիտասարդներու հետ որոշեցինք գիւղը կենալ եւ տուները եւ քեղարները պաշտպանել: Կը յիշեմ մեր ամենէն մեծ տարիքով Յակոբ Շուսեանը կար, որ մեզի շատ օգտակար եղաւ (Տնտեսներն Կ'ըսէին ա-

նանց) : Յաջորդ օրը յարձակումները սկսան : Առտուանց կանուխ ՓՌՆՁՈՐԷՆ եկան խուճը մը մարդիկներ մեր գիւղին դիմացի բլուրին վրայ եւ սկսեցին շրջանով դառնալ բլուրին ետեւ, որպէսզի մեր աչքին շատուոր երեւնան : Եւ մեզի պռոսցին որ յանձնուինք, թէ իրենք բարեկամ են եւ կ'ուզեն մեզի պաշտպանել : Բայց մենք գիտէինք նպատակին : Ես ու Պօղոսը միասին չայէն անցանք եւ բլուրին ետեւի կողմէն դարձանք եւ պռոսցինք իրենց թէ պիտի պաշարենք, եթէ չփախին : Եւ երբ դժկամակեցան, մարքին պարպեցինք անգամ մը իրենց մօտը եւ անմիջապէս փախան : Բիջ վերջը Սառղու գիւղին կողմէ՛քէրվանի պէս բազմութիւն մը տեսանք, որ կը յառաջանար դէպի գիւղը : Կանչեցին Տնակրենց Յակոբին, որ երթայ եւ տեսնայ թէ ո՞վ են : Անոնց ալ պռոսցինք որ այլեւս մէկ ոտք առաջ չերթան, մինչեւ որ մեր ներկայացուցիչը զիրենք տեսնայ : Սպասեցին, վերջը հասկցանք որ Ղայիշ անունով առագակ մը կար, անոր բազմութիւնն էր, որ քալանի եկած էին եւ կ'ուզէին մեզ փրկել, եւայլն : Ատոնց ալ չխարուսցանք, Յակոբին ըսինք որ անմիջապէս վերադառնայ եւ իրենց ըսինք որ մենք ամէն կերպով պատրաստ ենք, եթէ կ'ուզեն կռուիլ, թող հրամեն : Բաւական հեռաւորութիւն կար մէջերմիս, երբ մարքինը իրենց ֆովի Բոակին ներմակ փոշին հանեց, փախչող փախչողի, վերադարձան եւ Սառղուի մէջ ըսած էին թէ ԽՈՒՌՆԱՎԻԼՅԻՔ շատ մարքիններով զինուած են, մա՛րդ չի կրնար այդ գիւղը մտնել : Այդ իրիկուան մթնած ժամանակ յարձակում մը եւս եկաւ ՆՈՐՇԷՆԻ կողմէն : Անշուշտ մենք ամէն կողմ պահակներ ունէինք : Անմիջապէս մեր գերեզմանոցը դիմեցինք, ատոնք ալ գերեզմանոցին դիմաց բլուր մը կար, հոնկէ կու գային, ատոնք ալ ՔՐԴԵՆՆԻ էին եւ համոզուեցան որ մէկ ոտք առաջ չեն կրնար երթալ ու անհետացան :

Յաջորդ առաւօտուն տեսանք որ երկու հոգի ՆՈՐՇԷՆ գիւղէն ԿՕՇԿԱՐ ԵՆՅ տունը հասած էին քալանի համար : Մենք հաւաքուեցանք եւ ատոնց ձեռք առինք : Սարսափելի ծեծ մը տուինք եւ պիտի սպաննէինք, բայց որ այդ ատեն Յակոբ ՇՏՕՅԵԱՆը մեզի շատ լաւ խրատ մը տուաւ : Թուրքերէն կ'ըսեն՝ «*մ'ւրըն, էօլտո'ւրըն*», եւ հայերէն, «աման, տղա՛ք, մի սպաննէք, վերջը մեծ բանակ կը դրկեն վրանիս» : Վերջը ձգեցինք որ փախին եւ հագիւ կրցան ՍԱՌՂՈՒ գիւղը հասնիլ : Եւ ատոնք ալ շատ արասափով խօսած էին մեզի համար : Հոն մէկ շաբաթ անկողին մնացին :

Սի՛րբելիս, ո՞ր մէկ անցած-դարձածը յիշեմ : Ես տակաւին հագիւ 16 տարեկան էի, երբ մենք խուճրով գնացինք ԲԷՆԿԱ, որոշեցինք զիրարու օգնել : Միայն մերերենց Յովհաննէս Քոչեանը կը յիշեմ մեր հետ, միւսներուն անունները չեմ յիշեր :

Վ. ԵՐՁ Գ. ՄԱՍԻ

ՓՐԱԿԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ԿԸ ԲԱԻԿ՝ . . . ԿԸ ԲԱԻԿ՝

Երբ Փրակայի ուսանողներուն մասին կ'արտայայտուիմ, քառասուն տարի վերջ, ճշմարտութիւնը լսելու համար է, ու բնաւ կիրք չապեցնելու. ու մարդոց վրայ յարձակելու նպատակ չունիմ, որոնցմէ շատերը, աւա՛ղ, սրտնք այն օրերու ընկերներն էին ուրախ ու ծիծաղուն, այսօր ցուրտ հող դարձած են:

. . . Քառասուն տարի առաջ:

Քեմալական հորդանները Իդրիքը ջարդելով հրեհհեղէ վերջ կը քաշէին Մտամպօլի վրայ: Խուճապ էր այնտեղ: Գիտցողները գիտէն: Մահուան ուրուն, որ ամբողջ չորս տարի հալածած էր զիս հայրենի լեռներուն վրայ, Փոքր Հայքի մէջ, կը ցցուէր կրկին դէմս:

Փախայ խուճապահար, չեմ գիտեր ի՞նչպէս, ու շունչս առի Փրակա:

Ծանօթ մը Ուսանողական Տուն տարաւ զիս հոն, ուր աժան կը ճաշէինք:

Բայց ի՞նչ պատկեր է սա:

Նորադատ պետութիւն: Երջանիկ ժողովուրդ: Անհող ուսանողութիւն: Մինչդեռ իմ Կելբոնականի դասընկերներս, ահաւասիկ, որ ինծի նման ցիրուցան եղան, հազիւ ուսման վկայականը դրպան դրած:

Յուզումս շատ մեծ էր, վիշտս նոյնքան: Նստայ, լացի:

Օր մը Ուսանողական Տունը ՀԱՅՐԵՆԻՔ օրաթերթ կը կարդայի, որուն Փրակայի թղթակիցն էի, երբ մէկը եկաւ քովս ու սկսաւ հայերէն խօսիլ:

Չանդեկոյրցի ուսանող մըն էր, հետադային Տօքթ. Չօհրապեանց, բժիշկ, որ դեռ հոն է, ու իր արուեստով կը զբաղի:

Անկէ հասկցայ որ ուրիշ հայ ուսանողներ կան հոն: Անոնցմէ տեղեկացայ որ Զեխ Կառավարութիւնը չորս հազար կրթաթոշակ յատկացուցած է Ռուս դատարանի ուսանողներուն, ութսուն կրթաթոշակ Վրացիներուն, եւ այդ Հայերը վրացական կամ ուսական ցանկին մէջ անցնելով կ'ուսանին հոն:

Վրացիներուն ցանկը պարապ էր, որովհետեւ արտասահման Վրացի չկար, եւ Կովկասահայերը կ'օգտուէին անկէ:

Ի՞նչ ընել: Ո՞վ էր այդ կրթաթոշակները բաշխողը:— Արտաքին Գործոց Նախարարութիւնը:

1922ի ցուրտ ձմեռ: Փրակայի ձմեռ: Գետը սառած: Սիրտս՝ նոյնպէս:

Ելայ, մտածկոտ, թուխ քարէ սանդղամատերէն, որոնք վեր,

Հոռչանի զգեակը կը տանին, ուր հաստատուած էր Զեխօսլովաք Կա-
ռալարութիւնը:

Զիս ընդունեց նախարար Պենեչի փոխանորդ՝ նախկին լեզեո-
նական Կիոքա: Ծրանսերէն կարճ ճառ մը խօսեցայ անոր: Առաջին
ճառս խօսած էի Մէջուս, 1916ի ձմեռը, քուրս ցեղապետ Թօփալ Ա-
լի Պէկի, իր պաշտպանութիւնը խնդրելով Զարդէն:

Նախարարը հրամայեց, որպէսզի քովի սենեակը սպասեմ. իր
որոշումը պիտի հազորդէր ինձի: Յետոյ մօտս գալով, զիս իր գրա-
սենեակը տարաւ Տօքթ. Եառօշ, նախարարի խորհրդական, եւ յայտ-
նեց որ Պրն. Նախարարը ինձի եւ ընկերներուս կը շնորհէ վեց կրթա-
թոշակ՝ չեխական համալսարանը ուսանելու համար:

— Դուք անմիջապէս կրնաք համալսարան մտնել, — յարեց,
ինչ որ ըրի ալ:

Զեխերը ինչո՞ւ կրթաթոշակ կու տային: Զարին ոսկին:

— Սլաւ մեծ ազգին օգնելու: Որպէսզի չեխ մշակոյթը ճառա-
գայթէ:

Թոյլ չտուին որ քանի մը Հայ ազաք դերմանական համալսա-
րան յաճախեն, որոնք, Դաշնակցութեան սաները, Պեռլինէն եկան:

Անմիջապէս գրեցի Պոլիս՝ մտերիմ դասընկերոջս, Արմատնցի
Գեղամ Քէօնէեանի, որ Կեղրոնականի ուսուցիչ ու քարտուղար էր,
միւս դասընկերոջս՝ Կիլիկեցի Պաղտասար Ճերմակեանի, Քօնֆու, որ
չափազանց հանճարեղ մէկն էր: Ու Գեղամին հետ միասին ընտրեցինք
միւսները:— Սասունցի Գարեգին Երէցեան, Սասունցի Մարտիրոս
Բարսեղեան, Ատափազարցի Վաղարշակ Կիլիսեաչեան: Ես իսկոյն Ի-
րաւարանական Համալսարան մտայ:

Համալսարանին անօրէնը հարցուց թէ լատիներէն գիտէի՞:
Ստեցի, «ա՛յո» ըսելով:

— Զեր տեղը Փիլիսոփայութեան Համալսարանն է, իրատեց,
եւ իրաւամբ:

«Սեւ լուրեր եկան Երկրէս», ինչպէս Չօլանեան երգած է:

Հայրս ծանր հիւանդ: Պիտի ժամանէ Աւստրիա: 1923ի Զատի-
կին հոն դացի՝ հօրս օգնելու: Միխիթարեան Վանքը մեղի յանձնարա-
րեց Հէօլլէն պանդոկը, վանքին մօտ, ուր իջեւանեցանք: Պանդոկը
չուտով լեցուեցաւ ուրիշ Հայերով:

Ի՞նչ եղեր է:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը Պատգամաւորական Ժո-
ղով կը գումարէ: Ահարոնեան, Խատիսեան, Զամալեան եւ ուրիշներ
հոն են:

Աւետիս Ահարոնեանէ տեսակցութիւն մը խնդրեցի, զոր ինձի
շնորհեց իր պանդոկին մէջ, Քեթնեռշթոսաէի վրայ պերճ շէնք մը:
Ահարոնեան, իբրեւ Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակու-
թեան պետ, առանձին այդ պանդոկը ընտրած էր:

Սեղրակ Սասունի ամէն օր զայն ժողովի կը բերէր միասին:

Ղարիպը, որուն հանդէպ ամէն Հայ պաշտամունք ունի, իբրև հայ ցաւի երգիչը, ջերմ հայրենասէր, զիս ընդունեց սիրալիր, ժպտուն: Ինչպէս անկէ տասը տարի առաջ ուրիշ մը, Իանիէլ Վարուժան, Պոլիս, Լուսաւորչեան Ուսումնարան, որուն մասին դեռ չեմ գրած:

Իրեն ըսի թէ Փրակա այսպիսի ուսանողական կարեկիռութիւն կայ, ես պարզ տղայ մը, յաջողեցայ վեց կրթաթոշակ ստանալ: Կը յաճախեմ արդէն համալսարան: Ընկերներս ճամբան են, հինգ հոգի: Եթէ Դուք Արշակ Ջամալեանը Փրակա զրկէք, ազգին անունով, անպայման կը յաջողի աւելի մեծ արդիւնք ստանալ:

Ղարիպին զարիպ աչքերը շողացին:

— Ջամալեանը չեմ կրնար զրկել, ան Ամերիկա պիտի երթայ, — ըսաւ, — բայց ուրիշ մէկը կը ճամբեմ, — ու Փրակայի հասցէս առաւ:

Ահարոնեան ինծի յայտնեց թէ գերմաներէն թարգմանչական շարք մը իր մէկ գործը գերմաներէնի վերածած է ու անոր թիւը տուաւ, զոր յետոյ գնեցի ու փորձեցի կարդալ:

Ահարոնեան միջնահասակ, թխաղէմ, սեւ մազերով մէկն էր, նման մեր քուրա հովիւ Ալիին: Ես կ'ամչնայի, կը նեղուէի ու կը քաշուէի անշուշտ այգպիսի հոչակաւոր դէմքի մը ներկայութեան, ու կէս ժամ յետոյ դուրսն էի:

Այն ատեն Պոլսոյ ՃԱՎԱՏԱՄԱՐՏԻՆ մէջ յօդուածներ գրելով ծանօթացուցած էի, իրր հայասէր, չեիս ճամբորդ Բառել Հանզան, արկածախնդիր պնակալէց մը:

Սատիսեան զայն Հայաստանի հիւպատոս կարդեց Փրակայի մէջ:

Յունիսին Փրակա վերադարձայ, հիւանդ հայրս ետև թողած, ու պահ մը վերջ հոն ժամանեց Ալեքսանդր Սատիսեան, Ահարոնեանի կողմէ զրկուած: Ես իրեն հետ չգացի նախարարութիւն, որպէսզի Կիոզա չհասկնայ թէ զործին մէջ իմ մատս կայ, ու Սատիսեանի ընկերացաւ Հանզան:

Ո՛չ մէկ արդիւնք:

Նախարարը զայն խոստումով մը ճամբեր էր ու Սատիսեան Փարիզ վերադարձաւ:

Անկէ գրեց ինծի որ գործը հետապնդեմ, թէ իմ վրաս մեծ յոյս ունի, արդէն անգամ մը յաջողած եմ: Սատիսեան իր նամակները կը վերջացնէր «Ձեզ յարգող» բառերով:

Կիոզա անգամ մը վերէն վար չափեց զիս, ըսել ուզելով, «Մե՞զք գործեցինք քեզի ըրած մեր շնորհին համար, որ մեր գլխուն ուրիշ փորձանք կը հանես:» Ու ղիւանադիտական բան չըսող խոստումներով, «սեանենք, աշունը, եթէ...» զիս ճամբու դրաւ:

Անմիջապէս Սատիսեանի գրեցի թէ կացութիւնը այս է, ու մի'այն իր Հայաստանի Վարչապետի հանգամանքը կրնայ գրութիւնը

փրկել: Բայց, աւելցուցի, «որքերը ուրիշ⁶ պիտի բերէք: Որքերը ուսանողներն են: Փրակայի ապագայ հայ ուսանողները»:

Այս խօսքին վրայ Խատիսեանի զդանցքները կրակ առին ու Փրակա վտղեց: Ինձի ծուռ կը նայէր այս անգամ: Ատ ի՞նչ որք է, որուն խօսքը կ'ընեմ:

Հետը առաւ Հանգան ու Թիֆլիզցի ուսանող մը: Խատիսեան լեզուանի, ճարպիկ մարդ էր: Ան Կիոզան գրպանէն կը հանէր: Եւ հանեց ալ: Ստանալով վաթսուն հայ ուսանողի կրթաթոշակ:

Ոչ մէկ հայ որք անցուց այդ ցանկին մէջ:

Իր մօտ գրկեցի իմ որք դասընկերս, Պաղտասար ձերմակեանը, որ արդէն Փրակա կ'ուսանէր, որպէսզի ինզրէ անկէ չնորճ ընել իր ցանկին մէջ որքեր անցընելու: Խատիսեան բրտօրէն ճամբեց դայն՝ առանց այդ չնորճին: Ու յետոյ ուսանող մը ապտակեց՝ որք... ձերմակեանը, որքերու անունով իր մօտ դացած ըլլալուն համար...

Եկա՛ն ուսանողները: Վաթսունի փոխարէն ութսուն:

Եւ մեծ լեռը ծնաւ տոասպելական մուկը: Ոչ մէկ առեն Խատիսեան կամ ոեւէ մէկը հրատարակեցին ցանկը այդ ուսանողներուն եւ հաշուետուութիւն: Թէ քանի՞ հոգի համալսարան տւարտեցին:

Այն օրերուն, դառնացած, դիմեցի Փարիզ, Պարոն Զօպանեանի: Ինզրելով իր միջնորդութիւնը, որպէսզի եկոզներուն մէջ ըլլան նաեւ հայ որքեր: Ան պատասխանեց, որպէսզի դիմեմ Նախարարին, ինք անկէ ոյժ կու տայ ինձի:

Այդպիսի բան չըրի:

Հաշուութեան Համաժողովին մօտ դոյզ Հայ Պատուիրակութիւններու խայտառակութեան պիտի նմանէր այդ:

Կիոզա կրնար մեր վէճը առիթ բռնելով ամբողջ ցանկը ջնջել:

Հայաստանի Վարչապետի մը այնքան վայել չէր: Բայց եղածը խայտառակութիւն էր: Անընդունակ ու տարեց մարդեր Փրակա լեցանել, որովհետեւ անոնք կուսակցական են, եւ ընդունակ ուսանողներ ու հայ որքերը անտեսել, որոնք Հայկական Մեծ Զարդին ամբողջ ծանրութիւնը տարին, այդպէս ոտքի տակ առնել:

Եթէ ատիկա առաջուց դիտնայի, 1919ին Խատիսեանի ձեռքը չէի համբուրեր Երրորդութիւն Եկեղեցին, Պսիս:

Երբ ուսանողներու ցանկը կը ներկայացնեն Կիոզայի, անունի մը առջեւ կենալով, կ'ըսէ՝ — Ա՞ս ալ ուսանող է, ինձմէ տարեց է:

Պարզ է որ Փրական տեսակ մը դաղթակայան դարձաւ ուսանողի պիտակին տակ:

Սոսիլ այս մասին աւելի, պիտի նշանակէր պայքար, բան մը որ իմ ճաշակս չէ, եւ ուրիշ կը խորշիմ հոգևով մարմնով: Բայց կան երկու կէտեր, որոնք հարկ է վեր առնել: Խատիսեան, ակնարկելով Փրակայի ուսանողութեան, գրած է եղեր իր գրքին մէջ — «Մենք այդ դիտէինք, մենք այդ պէտք է որ դիտնայինք»: Այսինքն մենք ամենապէս ենք...»:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերստուգիչ-հմբագրին կողմէ

— Նկարներու դասաւորումը ոչնչուած էր արդէն, գոր պահեցինք անփոփոխ :

— Գիրքը բաժնեցինք երեք մասի :

Ա. մաս, էջ 11 – 101, ուր կը նկարագրուի Խուռնավիլի ողիսականը այնքան սրտառուչ ձեւով :

Բ. մաս, էջ 102 – 225, որ կրնար Ա. մասին շարունակութիւնը համարուիլ, Եւ շատ բնականօրէն, երէ չըլլար Հեղինակին կողմէ աւելցուած «*Էջեր Հայաջինջ Սարսափներէն*» ենթախորագիրը :

Գ. մաս, էջ 230 – 336, ուր կը տրուի Խուռնավիլի պատմականը իր գանազան երեսներով :

337 – 340 էջերը կը գրաւէ ՓՐԱՎԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ, որ դուրս ձգեցինք Գ. մասէն, որուն հետ ոչ մէկ կապ ունի :

— Կարելիութեան սահմաններուն մէջ հաւատարիմ մնացինք Հեղինակին ինքնատպուքեան :

— Ուղղագրութիւնը անփոփոխ պահեցինք Գ. մասին մէջ ընդհանրապէս, բայց մասնաւորապէս անոր *Բասարանի, Հայկաբանութիւններու, Ասացուածքներու, Հանելուկներու, Երկերու եւ Նամակագրութեան* բաժիններուն մէջ :

— Խիստ վերստուգական արտայայտութիւնները մեղմացուցինք կամ յայտնեցինք, յատկապէս «*Փրակայի Ուսանողները*» գրութեան մէջ, առանց այլափոխելու Հեղինակին ընդվզումները : Անոնք գործին էութենէն ոչինչ կը պակսեցնեն :

— Երէ որոշ սխալներ նկատուին, պատճառը այն է որ բնագրը, յատկապէս մեքենագրուած ու ձեռագիր բաժիններուն մէջ, երբեմն անընթեռնի էր, տողեր ու գիրքեր իրարու վրայ եկած ըլլալով :

— Կարգ մը յատուկ անուններ նկատի չառինք, որովհետեւ անոնք գրուած էին լուսանցքի վրայ՝ առանց անոնց տեղը մատնանշելու :

— Ամբողջութեան մէջ հիանալի գործ մը, որ ամբողջական մեր պատմութեան իրական մէկ պակասը կը լրացնէ : Երանի այս փորձը վարակիչ դատուայ Եւ բոլոր մեր բնագաւառները ունենան իրենց վերական ու պատկերագարդ պատմագիրքերը :

Գ. Ա.

ՅՈՒՑԱԿ ՆԿԱՐՆԵՐՈՒ

	Էջ
— Հեղինակին ծնողքը (<i>Մովսէս եւ Օղիկ</i>)	4
— Փարիզաբնակ Տիրուհի եւ վահրամ	5
— Խուռնավիլա գիւղի ընդհանուր տեսարան	8
— Հեղինակին մեծ մայրը (<i>Վառիկ Քոչեան</i>)	28
— Հեղինակին մեծ մայրիկը եւ հայրը	29
— Տուրիկեց Օվակիմ պապան եւ Կակոյեց Սաղաքելին հայրը ..	39
— Խմբանկար (<i>Երեք Վահանները</i> , եւ այլն)	44
— Պոլսոյ Կեդրոնական վարժարանի ուսուցչական կազմ	53
— Հեղինակին հօրեղբայրը (<i>Պօղոս Քոչեան</i>)	61
— Հեղինակին քոյրը՝ վարդանուշ	76
— Հեղինակը Զարմուհի եւ վարդանուշ քոյրերուն հետ	77
— Վահան Հիւսեան (<i>Շապին-Գարահիսարի հերոսամարտի զեկա- վարներէն</i>)	94
— Ընտանեկան խմբանկար (1908ին լուսանկարուած)	122
— Խուռնավուլցի պաշտօնեաներ Պոլսոյ մէջ	160
— Խնկեց Գաբօն (<i>բեռնակիր Պոլսոյ մէջ</i>)	179
— Մինաս եւ Երուանդ Քոչեան (<i>Պոլիս</i> , 1919)	180
— Ընտանիքը Պոլսոյ մէջ	188
— Օվկեց Բարդոյին կինը՝ Կէնուկ եւ զոհանչը՝ Եղսա հարսան	199
— Կակոյեց Քոչեան Մամասէ (<i>Կարապետ Կարապետեան</i>)	210
— Հայկ (<i>հերոս մը</i>)	211
— Ետիգուլէի Ազգ. Դարմանատուն (<i>խմբանկար, Հեղինակը մէջ- տեղը</i>)	216
— Ետիգուլէի Ազգ. Դարմանատուն (<i>խմբանկար, Հեղինակը մէջ- տեղը</i>)	217
*	
— Քարտէզ (<i>Տիվրիկ-Խուռնավուլ՝ չրջականերով</i>)	134

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

	<u>Էջ</u>
Յառաջաբան — Ռուբեն Բերբերեան	7
Հեղինակին խօսքը	9
Ա. ՄԱՍ	11 — 101
ՀՈՂԸ ՓԼԱԻ ՄԵՐ ԳԼԽՈՒՆ	11
Ընդհանուր Չօրաչարժ	15
Փոթորիկին Նախանշանները	27
Չօրակոչ, Փախստակահաններ	35
Գեղին Աքսորը	39
Մեր Լեռներուն Վրայ	43
Դեպի Քուրտ Աշիրէթներուն Մէջ	57
Մինա՛կ	93
Փախուստ	95
Մէջուտ	98
Բ. ՄԱՍ	102 — 225
ԷՁԵՐ ՀԱՅԱԶԻՆՁ ՍԱՐՍԱՓՆԵՐԷՆ	102
Լուրեր Մեր Գիւղին Բեկորներէն	112
Թրքական Արշաւանքներ	115
Հենոյի Խոււքին Հետ Քուրտ Աշիրէթներուն Մէջէն	126
Դա՛րձեալ Հովիւ Պէյ Տաղիի Վրայ	147
Հայ Փախստակահաններու Հետ Աւազակութիւն	153
Դարձեալ Աւազակ	167
Փէհլիվան Սպաննուած	175
Մեր Լեռներուն Վրայ Սենոյին Հետ	177
Զարայի Մէջ	200
Վերադարձ Մորթուած Հայրենիքին Մէջէն	219
ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԵՐՍ	226
ՈՒՐԵՄՆ ԱՅՍՊԷՍ	227
ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ ԵՐՈՒԱՆԴ ԳՈԶԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ —	
Վազգէն Անդրէասեան	228

Գ. ՄԱՍ	230 - 336
ԵՐԿՈՒ ԽՕՄՔ — Երուանդ Քոչեան	230
Խուռնավիլի Հիմնադրութիւնը — Երամ Սրապենց-Քէլիենց (Խուռնավուլցի)	231
Սերաստիոյ Գառափն Արեւելեան եւ Հարաւային Կողմերը — Գերայ Անդրեաս Վ. Աղէքսանդրեան	233
Խուռնավուլցոց Անուանացանկը	237
Մեր Գեղը կ'ըսէին	238
Տեղանուններ — Ներսիկ	239
Խուռնավիլի Գառառական Բառերը — Երուանդ Քոչենց	241
Հայկաբանութիւններ	283 - 290
Ասացուածքներ	283
Օրհնութիւններ	286
Անէծքներ	286
Հայհոյութիւններ	287
Հանելուկներ-Վիճակի Խաղեր	287
Խաբէլիքներ	289
Բժշկութիւնը Մեր Գեղին Մէջ	291
Մանրավէպեր Խուռնավիլէն	293
Շերեր Խուռնավիլէն	296
Հարսներդ	296
Գլխաւոր Օրօրը	299
Փշրանքներ Խուռնավուլի Շերերէն — Նէնէիս պատմած շերերէն	309
Շերեր Սերաստիայէն	317
Խուռնավուլցի Բանաստեղծուի մը — Քօթանենց Աննան	318
Վիճակի Խաղը Խուռնավիլի Մէջ	319
Կանտնագիր Տիվրիկի Խուռնավիլ Գիւղի Ուսումնասիրաց Ընկերութեան	321
Նամակագրութիւն	327
**	
Փրակայի Ուսանողները	337
Վերջաբան-Լուսարանութիւններ	341
Ցուցակ Նկարներու	342
Բովանդակութիւն	343

Հարգված

DIROUHI et VAHRAM KANTARDJI

8 Rue des Lilas

92370 CHAVILLE (FRANCE)

Tél. 750.97.10

Տողաշարութեան ձեռնարկուած՝ 20 Հոկտեմբեր 1985ին

Թիփոկրաֆիք տպագրութիւնը աւարտած՝ 10 Յունուար 1986ին

Կ. ՏՕՆԻԿԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

Տպարանային բաժնի

Հայտէլպերկ 54×72 մամուլի վրայ

300 տպաքանակով – 21.5 պրակ

Վերստուգիչ-հմբագիր՝ Գ. Ա.

